Հալէպի մէջ նոյնպէս, ինչպէս այլուր, հայ խոճաներն ու վաճառականները աշխուժ մասնակցութիւն ունէին համայնքի ներքին կեանքին: Անոնք էին գաղութին կենսունակութեան, բարգաւաճումին եւ փայլուն իրագործումներուն երաշխաւորները: Ջուղայեցի նշանաւոր խոճաներու՝ Պետիկ եւ Սանոս Չելեպի եղբայրներուն, անձնական նախաձեռնութեամբ եւ հոգածութեամբ հիմնովին կը վերակառուցուի ու կ'ընդարձակուի համայնքի կեանքին մէջ առանցքային դեր ունեցող Ս. Քառասուն Մանուկ՝ երեք խորաններով սիւնազարդ շքեղ եկեղեցին, այլեւ առաջնորդարանն ու յարակից կառոյցները: Լեհացի իր ուղեգրութեան մէջ մեծ դրուատիքով կը պատմէ խոճաներ Պետիկին եւ Սանոսին մեծագործութիւններուն մասին. «*...[հասանք] ի հռչակաւոր եւ մեծահամբաւ մայրաքաղաքն Հալապ. եւ Հոգեւոր Տէրն փարաւ զմեզ ընդ իւր Դարպասն եւ իջաք Եպիսկոպոսարանն: Եւ կայր ...Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Քառասունք. եւ յայսմ ամի նոր նորոգած էր մեծցուցած՝ լայն եւ ընդարձակ, գմբէթաշէն եւ սայլակապ, յոյժ գեղեցիկ եւ վայելուչ, եւ շինօղն էր խոճայ Սանոս՝ եղբայր խոճայ Պետրիկին: Զի էր Պետրիկն մեծ ոմն եւ երեւելի. զի որպէս փաշայ մի շրջէր, երեսուն, քառասուն եասախչով. ունէր ենիչերիք, սբահիք... կօմրուկն, մուխթասիպութիւնն, սուպաշութիւնն, խաներն, համամնին եւ այլն ամենայն նորա ձեռքն էր*»: Լեհացի խօսելով Հալէպի հայ վաճառականներուն մասին, կը գրէ. «*Իմաստունք, փարթամք, գեղեցկատեսիլ, նման Ջուղայեցոց եւ Ամթեցոց՝ անուանիք եւ մեծ վաճառականք, որ մարդ ամաչէր երեսվին հայիլ: Կայր խոճայ Ղանտրիլն եւ այլ համբայք նորա քառասուն հազար, յիսուն հազար բեռան տէր...*»[8]:

Հալէպահայ երեւելի խոճաներ ու իշխաններ եկեղեցական թանկագին սպասքով, ծիսական իրերով, սրբապատկերներով կը զարդարեն նորոգուած եկեղեցին: Պատահական չէ, որ ժամանակի ձեռագիր յիշատակարաններուն մէջ «*երկնանման*», «*յոյժ գեղեցիկ եւ վայելուչ*» այլեւ «*աստուածաբնակ մենաստան*» բառերով կը բնորոշուի Ս. Քառասուն Մանուկը:

Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցւոյ Գանձատունը պահուող եկեղեցական սպասքի եւ զարդեղէններու արձանագրութիւնները, ինչպէս նաեւ Հալէպ գրչագրուած ձեռագիրերու յիշատակարանները լաւագոյնս կ'արտացոլեն հալէպահայ վաճառական-խոճաներու «արդեամբ» ստեղծուած հոգեւոր եւ նիւթական արժէքներու ամբողջութիւնը, այլեւ համայնքին կենսունակ մթնոլորտը: Ի հաստատումն, բաւարար է յիշել, որ Հալէպի գրչատուն-դպրատունը (Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիի կից), իր ամէնէն փայլուն շրջանը կը բոլորէ ԺԶ.-ԺԷ. դարերուն: Ասիկա զարմանալի չէ, երբ նկատի առնենք, որ մեծմասամբ Հալէպի հայ վաճառականներն էին նաեւ գրչութեան ու դպրութեան, արուեստներու եւ արհեստներու հովանաւորները՝ իբրեւ պատուիրատու, ստացող կամ նուիրատու:

Հայ վաճառականներու սեւեռումը Հալէպ, հետեւաբար նաեւ տնտեսական ներուժի կուտակումը վաճառաշահ այս քաղաքում,

ժամանակագրօրէն կը զուգադիպի Սսոյ Կաթողիկոսութեան առժամապէս Հալէպ հաստատուելուն, ուր դարեր առաջ արդէն հիմնաւոր արմատներ նետած հայոց եպիսկոպոսանիստ եկեղեցին ունէր հոգեւոր իշխանութեան կեդրոն ըլլալու նախադրեալներ ու պայմաններ:

Սսոյ Կաթողիկոսութիւնը իր հաստատումէն իվեր, յատկապէս 1375էն ետք, երբ կաթողիկոսական աթոռը զրկուեցաւ պետական եւ քաղաքական յենակէն ու զօրավիգէն, չէր կրնար զերծ մնալ քաղաքական թէ կրօնական ոտնձգութիւններէ ու յարձակումներէ:

Այսպէս, Կիլիկիան նուաճած մոնկոլ-թաթարական աւերիչ արշաւանքներուն՝ ԺԵ.-ԺԶ. դարերուն կը յաջորդեն տարատեսակ թուրքմէնական ցեղերու ասպատակութիւններն ու երկարատեւ պատերազմները: 1467 թուակիր յիշատակարանի մը մէջ կը կարդանք. «*Ի մեծ թուին Հայոց ՋԺԶ (1467), ի բազմանալ մեղաց մարդկան եւ յազդմանէ չարին, Տուլղարցի ոմն Շահ-Սուար անուն՝ եղեալ հակառակ Մսրայ սուլտանին... Եւ յետ այսր ամենայնի խորհեցաւ չարութիւն Սըսոյ քաղաքին եւ բերդին, ուստի բազում հեծելազօրօք խաղաց ի վերայ նորայ ի յունիսի երկրորդ օրին, եւ հրկէզ արարեալ՝ անցեալ գնաց*»: Յիշատակագիրն այնուհետեւ կը շարունակէ, թէ՝ ինչպէս Շահ-Սուար գրաւած է Ատանան, Տարսոնը, Այասը, Անարզաբան, Կովառան, Պաղրասը, Այնթապը, Լեւոն Բերդը, Կոպիտառան ու Բարձրաբերդը՝ «*եւ փիրեաց ամենայն լեռնակողմանցն*»: Այս քաղաքները գրաւելէ յետոյ Շահ-Սուար կը շարժի դէպի Ասորիք, կը հասնի Հալէպ եւ կրկին կը դառնայ Կիլիկիա. «*... եւ դարձաւ մրմռալով ի վերայ բերդին Սըսայ, եւ այրեաց...: Եւ քաղաքացիքս ամէն թողաք զտուն եւ զոզակ. եւ Ֆարսահ թուրքմանն թալնեց զքաղաքն, եւ շատ ըոզակ առաւ. եւ զեկեղեցեաց անօթս կողոպտեցին. եւ զամենայն աւերութիւնն զոր արարին՝ չեմ բաւական ընդ գրով արկանել*»[9]:

ԺԵ. դարու կէսերէն սկսեալ եւ յաջորդող գրեթէ ամբողջ ԺԶ. դարուն Արեւմտեան Հայաստանն ու Փոքր Ասիոյ հայաբնակ շրջաններ պատուհասած ճալալիներու չարիքէն զերծ չմնաց նաեւ Կիլիկիան: Այս շրջանի դէպքերու եւ իրադարձութիւններու ականատես Առաքել Դաւրիժեցի պատմագիրը՝ «*աշխարհաւերք եւ աշխարհակործանք*»[10] բառերով կը բնորոշէ ճալալիներու շարժումը, իսկ ճալալիները՝ գազաններ («*...ի մարդակերպ ճալալոց գազանաց ժանեացն զերծելոյն*»[11]): Այլ տեղ մը կը կարդանք. «*Թ. հարիւր ՀՋ (1527) թվին եկաւ Քաւր Սէֆին Ճէլէլայ՝ ի Սիս քաղաք. մարդն փախաւ, ի բերթն ելաւ. շատ աւերում եղաւ. նայ Աստուած ազատեց զՍիս քաղաքն ի ձեռն անաւրէն Քաւր Սէֆէ*»[12]:

Ճալալիներու կատարած վայրագութիւններուն, աւերածութիւններուն հետեւանքները կու գան ամբողջացնել Կիլիկիոյ սահմաններուն մէջ ծլարձակած ձորապետութիւնները, որոնց հարստահարութիւններուն, ճնշումներուն ենթակայ պիտի ըլլար նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Ատենի (1571) յիշատակարաններուն մեծ մասը կ'աւարտի նոյն՝ գրեթէ

կանոնիկ դարձած բառերու շարայարութեամբ. «...*Անմեղադիր լերուք խոշորութեան գրիս եւ ծաղկիս, զի կար մեր այս էր. զի դառնացեալ սրտիս գրեցաւ ի դառն ժամանակին յորում նեղիմք յայլազգեաց. զի փաճիկն էառ զԿիպրոս եւ զբազումս կոտորեաց, զմարդ, զխաչ եւ զԱւետարան գերեաց եւ բազում ոճիրս գործեաց, զոր ոչ կարեմք ընդ գրով արկանել...*»[13]:

Այս պայմաններուն տակ, հասկնալի է, թէ ինչու՛ Կիլիկիոյ կաթողիկոսներ մերթընդմերթ հարկադրուած էին իբրեւ աւելի ապահով վայր՝ իրենց նստավայրը փոխադրել Հալէպ:

Մասնաւորաբար ԺԵ. դարավերջը եւ ԺՋ. դարասկիզբը՝ Սսոյ Աթոռին ամէնէն խռովայոյզ ու անապահով մէկ շրջանին, երբ Սիսը վտանգուած ու գրաւուած ճալալիներու ասպատակութիւններուն հետեւանքով, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար կարեւոր յենակէտ կը դառնայ Հալէպը, որ հետզհետէ աճած ու բարգաւաճած էր իր՝ Ս. Քառասուն Մանուկ եւ Ս. Աստուածածին եկեղեցիներով, իր 'դարպաս թագաւորական'ով՝ հայոց առաջնորդարանով, եւ յարաբերաբար ապահով վայր կը նկատուէր Կիլիկիոյ սահմաններուն մօտ, ուր տեղի հայ խոճաներն ու վաճառականները՝ ազդեցիկ դիրքեր գրաւած էին, վայելելով համակրանքն ու պաշտպանութիւնը Հալէպի իսլամ իշխանութեան: Վերջինիս ազդեցութեան շրջանակին մէջ էին ամբողջ Եփրատի հովիտը եւ Լեռնային Կիլիկիոյ մեծ մասը:

Պատմական աղբիւրներն ու ժամանակի ձեռագրական յուշարձաններու բազմաթիւ յիշատակարաններ կը վկայեն ոչ միայն Սսոյ Կաթողիկոսութեան նստավայրի Հալէպ հաստատումին, այլեւ լոյս կը սփռեն Կիլիկիոյ Աթոռի եւ անոր գահակալներու Հալէպի մէջ ծաւալած գործունէութեան, պատմական կարեւոր դէպքերու եւ իրադարձութիւններու վրայ, որով Հալէպը հայ կեանքէն ներս գրաւած իր բացառիկ դերով եւ դիրքով հանդէս կու գայ որպէս ժամանակի հայ ազգային եւ եկեղեցական կարեւոր կեդրոններէն մէկը:

Գրեթէ անհնար է ստոյգ թուականներ սահմանել Սսի կաթողիկոսներուն յաճախակի տեղափոխութիւններու եւ դեգերումներուն առնչութեամբ: Ե՛րբ եւ ի՛նչ պայմաններու տակ որոշումներ առնուած են Սիսի Աթոռը Հալէպ փոխադրելու՝ կրնանք միայն ենթադրութիւններ կատարել, հետեւելով պատմական սկզբնաղբիւրներու, ձեռագիր յիշատակարաններու հաղորդումներուն: Տուեալները միահամուռ կը հաստատեն, որ Սիսի Կաթողիկոսութեան կամ կաթողիկոսներուն Կիլիկիոյ սահմաններէն դուրս՝ Հալէպ անցուցած շրջանները համընթաց են՝ Կիլիկիոյ քաղաքական վերիվայրումներուն, «*դառն եւ անհանգիստ*» ժամանակներուն:

Այսպէս, Կիլիկիոյ մէջ ստեղծուած ընկերային, տնտեսական եւ քաղաքական պայմաններուն, իրարայաջորդ պատերազմներու եւ հարստահարութիւններու հետեւանքով Կիլիկիոյ կաթողիկոսներէն ոմանք իրենց գահակալութեան ամբողջ տեւողութեան, ոմանք՝ միաւոժամանակ, իրենց նստավայր ընտրած են Հալէպը: Մասնաւորապէս՝ Յովհաննէս Բ.

Թլկուրանցի (1489-1525), Յովհաննէս Գ. Քիլիսցի (1525-39), Ազարիա Ջուղայեցի (1584-1601), հակաթոռ Պետրոս Կարկառեցի (1601-08), Յովհաննէս Դ. Այնթապցի (1602-21), հակաթոռ Դաւիթ Կարկառեցի (1663-72), հակաթոռ Ազարիա Կարկառեցի (1677-81), նաեւ յաջորդող կաթողիկոսներ, իրենց գահակալութեան՝ Սիսէն աւելի Հալէպ նստած են, ուրկէ վարած են կաթողիկոսութեան գործերը, զբաղելով նաեւ Երուսաղէմի Պատրիարքարանի խնդիրներով:

Այս առումով յատուկ ուշադրութեան են արժանի Լեհացիի հետեւեալ տողերը՝ «*Եւ կաթողիկոսարանն ունէր ներքնատուն, միջնատուն եւ վերնատուն վիմաշէն: Եւ պատրիարգն սուրբ Երուսաղէմայ եւ կաթողիկոս Սսա էր Յովհաննէս կաթողիկոս, որ միշտ Հալէպ նստէր*»[14]: Լեհացի Հալէպի առաջնորդարանը «կաթողիկոսարան» կը կոչէ, անշուշտ նկատի ունենալով անոր կաթողիկոսանիստ հանգամանքը:

Հալէպի ազգային եւ եկեղեցական պատմութեան ամէնէն արդիւնաւոր ու փառաւոր շրջանն է այս, երբ Կաթողիկոսութեան ծանրութեան կեդրոնը Հալէպ փոխադրուած է: Հոգեւոր, կրթական-մշակութային գործիչներու աստղաբոյլ մը կը փայլի Հալէպի Ս. Քառասուն Մանուկ եւ Ս. Աստուածածին եկեղեցիներու հովանիին տակ՝ կաթողիկոս, արքեպիսկոպոսներու, եպիսկոպոսներու, բանիբուն վարդապետներու, քահանաներու բազմութիւն մը, իրական վանք մը, վարդապետարան մը ժամանակի հասկացողութեամբ՝ մշակոյթի, գիտութեան եւ ուսումներու կեդրոն մը՝ համօրէն:

Սսոյ հոգեւոր պետերու աջակցութեամբ եւ հովանաւորութեամբ աննախադէպ փայլք կը ստանայ Հալէպի դպրատունը, որ լայն առումով իբրեւ գիտութեան եւ կրթութեան կեդրոն կը կազմակերպուի յատկապէս Սիսի Կաթողիկոսութեան Հալէպի մէջ հաստատուելէն ետք: Միջնադարեան հայ արուեստի ու մշակոյթի գրեթէ բոլոր ճիւղերը, գրչութեան, մանրանկարչութեան եւ գիտութեան համակարգերը զարգացման որոշակի աստիճանի կը հասնին Հալէպի մէջ:

Այս այն ժամանակաշրջանն է, երբ Կիլիկիոյ նշանաւոր վանքերուն մեծ մասը կա՛մ անշքացած եւ կամ՝ իսպառ դադրած էր գոյութենէ: Բնականաբար, Հալէպի եւ հալէպահայոց տնտեսական բարգաւաճ վիճակն ու պայմանները կը հրապուրէին հայաշխարհի ամէն կողմերէ եւ առաջին հերթին Կիլիկեան Հայաստանի վանքերէ հասնող գրիչները: Հալէպի մէջ, անոնք լայն հնարաւորութիւն ունէին իրենց արհեստը դրսեւորելու: Հալէպի եկեղեցիները այս կերպով կ'ապահովէին այն կենսադաշտը, ուր իրենց գործունէութիւնը կը շարունակէին Ամիդի, Զէյթունի, Հռոմկլայի, Կարկառի եւ այլ հռչակաւոր վանքեր ու անապատներ ներկայացնող գրիչներն ու ձեռագիրեր ստեղծող վարպետները: Հալէպը կերպով մը կը հանդիսանայ կիլիկեան մշակոյթի եւ գրչութեան աւանդոյթներու կրողն ու շարունակողը:

Գրչութեան այս կեդրոնն ու հոն միաոժամանակ թռիչք առած ուսումնարանը վերելքի ծաղկուն շրջան կը բոլորէ յատկապէս Ազարիա Ջուղայեցի, Յովհաննէս Այնթապցի եւ Պետրոս Կարկառեցի կաթողիկոսներուն ու անոնց հետ հոգեւոր մշակութային նշանաւոր գործիչներու Հալէպ հաստատումէն իվեր եւ այս՝ բոլոր առումներով՝ գրչութեան, գիտական եւ ուսումնական ճիւղերուն մէջ: Իմաստասէր, փիլիսոփայ, աստուածաբան րաբունիներու, վարդապետ-ուսուցիչներու ներկայութիւնը դասատունէն ներս, կը հաստատէ թէ այստեղ գործի լծուած էին գիտական բարձր աստիճանի հասած հոգեւոր, կրթական գործիչներ: Ժամանակի ձեռագրական աղբիւրները կը յիշատակեն, որ Սսոյ հոգեւոր պետերը ոչ միայն կ'առաջնորդէին, կը ղեկավարէին ուսումնական դասընթացքը, այլեւ ընդհանրապէս իրենք էին գրչութիւնն ու մատենական արուեստը ծաւալողներն ու զարգացնողները Հալէպի մէջ: Յատկանշական է կաթողիկոսներու, գիտնական վարդապետներու աշխուժ մասնակցութիւնը դասատան բոլոր աշխատանքներուն, ուր անոնք հանդէս կու գան իբրեւ գրիչ, կազմող կամ նորոգող, այլեւ պատուիրատու կամ ստացող:

ԺԶ.-ԺԷ. դարերու Հալէպի հայագաղութը հանդիսանալով հայ հոգեւոր-մշակութային եւ տնտեսական ներուժի կուտակման կեդրոն մը, կը վերաճէր իբրեւ հոգեւոր եւ աշխարհիկ ուժերու մէկտեղում, հետեւաբար նաեւ առիթ եւ հնարաւորութիւն՝ արծարծելու համազգային խնդիրներ, ծաւալելու կրթական, մշակութային գործունէութիւն, յառաջ բերելով համընդհանուր շարժում մը: Այդ շարժման որպէս հիմնական մղիչ ուժ հանդէս կու գան գաղութին կեանքի այլազան բնագաւառներուն մէջ ազդեցիկ դերակատարութիւն ունեցող երկու հիմնական ուժեր՝ եկեղեցին եւ վաճառականութիւնը: Հալէպ, այսպիսով, կը դառնայ հայ գաղթաշխարհի ամէնէն ծաղկուն եւ կարեւոր կեդրոններէն մէկը, զուգակշռելով նոյն ժամանակի հայկական գաղթօճախներ Ղրիմի, Լւովի, Պոլսոյ, Նոր Ջուղայի կեդրոնները:

Պատմական բազում փաստեր կը վկայեն, որ Հալէպը կաթողիկոսական նստավայր դառնալով, յաճախ յայտնուած է համազգային կարեւոր խնդիրներու կիզակէտին, ինչպէս՝ Երուսաղէմի պարտուց վճարման համար Հալէպի մէջ կազմակերպուած համազգային հանգանակութեան, կամ Ազարիա կաթողիկոսի Հռոմի հետ մշակած յարաբերութիւններուն, դաւանաբանական տարակարծութիւններուն եւ առհասարակ, կաթողիկոսական աթոռի շուրջ ծայր առած ներքին անհամաձայնութիւններուն՝ հակաթոռ կաթողիկոսներու ձեռնադրութիւններ եւն.:

Այսպիսով, Հալէպի հայ իրականութեան մէջ միաժամանակ ասպարէզ եկած երկու կարեւոր ուժերու մէկտեղումով Հալէպի հայ գաղութը աւելի կազմակերպուած ու նպատակասլաց բնոյթ կը ստանայ, իսկ հասարակական-մշակութային կեանքը դուրս կու գայ համայնքային նեղ շրջագիծէն, ձեռք բերելով ազգային բովանդակութիւն ու նկարագիր:

ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱԼԷՊԵԱՆ ՇՐՋԱՆԷՆ

Հալէպի գրչութեան առնչուող մէկէ աւելի ձեռագիրերու մէջ պահպանուած յիշատակարաններէն պարզ կը դառնայ, որ Յովհաննէս Բ. Թլկուրանցի կաթողիկոսի (1489-1525)[15] օրով՝ Սիս ոչ միայն անապահով էր, այլեւ ինչպէս դէպքերու ժամանակակից եւ ականատես Դաւրիժեցի կը գրէ՝ ամէնուր անիշխանութիւն, անօրէնութիւն ու աւերածութիւն կը տիրէր. «*...երկիրն անտէր եւ ամայի էր յաշխարհակալ բռնաւորաց*»[16]: Հետեւաբար Թլկուրանցի իր գահակալութեան տարիները Սիսէն աւելի Հալէպ կ'անցընէ, ուրկէ կը վարէ Երուսաղէմի գործերը, ստէպ այցելելով նաեւ Ս. Քաղաք: Հալէպի Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիի թիւ 71 «Գանձարան»ը, գրուած 1479ին՝ «*ի դառն եւ անբարի ժամանակի*», «*ի հայրապետութեան Հայոց Յովհաննէս Թուլկուրանցի կաթողիկոսի*», կը պարունակէ 1500ին գրուած յիշատակարան մը, որ ուշագրաւ մանրամասնութիւններ կը յայտնէ Թուլկուրանցիի օրօք, հաւանաբար նաեւ իր հրամանով Ռէիս Իսայի կառուցած ու շէնցուցած Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիին, ինչպէս նաեւ 'դարպաս թագաւորական'ի եւ ուխտաւորներու յատուկ խուցերու մասին: Ահա անանուն գրչի թողած չափածոյ գողտրիկ յիշատակարանին այդ հատուածը.

Մովսէս վարդապետն եւ ես ծառայն,
Եկայք յաշխարհս արեւմտեան:
Ձի տեսչացաք սբ. Յարութեան.
Եկեալ հասաք փունըս Շամեան,
Հալապ քաղաք ի շահաստան:
Հանդիպեցաք ուրախութեան,
Եւ ցնծացաք հոգով լըման,
Ձի նոր շինեալ էր սբ. խորան,
Յանուն սրբոց Խ (քառասուն) Մանկան[17]:

Եկեղեցիի շինութեան մասին վիմագիր արձանագրութիւն մը կը պահուի թանգարանի վերածուած Ս. Աստուածածին Եկեղեցիին մէջ. «*Յանուն աստուծոյ ի թվին ՋԽ (1491) ի պարոնութեան Իւզտմուռին եւ ի յառաջնորդութեան տէր Յովհաննէս կաթողիկոսին՝ ես Ըռէիս յԻսէս, շինել տվի զեկեղեցիս յանուն Սբ. Քառասնիցն յիշատակ...*»[18]:

1272ին Կեռան թագուհիի պատուէրով Սսոյ մէջ գրուած ու պատկերազարդուած մագաղաթէ բարձրարժէք Աւետարանը (Երուսաղէմ, ձեռ. թիւ 2563) 1523 թուականին գնած է Յովհաննէս Թլկուրանցի կաթողիկոսը եւ նուիրած Ս. Յակոբայ Վանքին, իր ձեռքով յիշատակագրութիւն մը թողլով ձեռագրին մէջ. «*Ձվերջին ստացաւղ սուրբ ոսկիպատ աւետարանիս զՏէր Յոհաննէս կաթողիկոս Թուլկուրընցին աղաչեմ յիշել ի սուրբ յաղաթս ձեր. որ ստացաւ զսա ի յիշատակ անջինջ*

որ կենայ ի սուրբ Յակոբս... Արդ գնեցի զսուրբ Աւետարանս ի թվին Հայոց ՋՀԲ (1523), եւ եդի յիշատակ ինձ ի Սուրբ Յակոբս...»[19]:

Այս յիշատակարանէն, ինչպէս նաեւ աղբիւրներու մէջ տեղ գտած անուղղակի տուեալներէ կրնանք հետեւցնել, որ Թլկուրանցի իր կաթողիկոսութեան վերջին տարիները Հալէպ անցուցած է, ուրկէ եւ Երուսաղէմ մեկնած է իր հետ տանելով Ս. Յակոբին յիշատակ տրուելիք աւետարանը:

Թլկուրանցի կաթողիկոս կը յիշուի նաեւ իբրեւ պատուիրատու եւ ստացող շարք մը ձեռագիրերու, ինչպէս՝ 1597ին օրինակուած «Մեկնութիւն Սահմանացն Դաւթի» (Երուսաղէմ, Ձեռ. թիւ 1088), 1618ին Հալէպ գրչագրուած «Մատենագրութիւնք Ներսէս Լամբրոնացւոյ» (Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, Ձեռ. թիւ 10509):

Հալէպի եւ Երուսաղէմի վերաբերող ձեռագիրերու յիշատակարաններ, ինչպէս նաեւ կարգ մը աղբիւրներու մէջ տեղ գտած վաւերագրեր[20], արժէքաւոր տեղեկութիւններ կը հաղորդեն Թլկուրանցի կաթողիկոսին Ս. Յակոբայ Վանքը պարտատէրերէ եւ վաշխառուներէ ազատելու, վանքին ինչքերը՝ կահկարասին ու սրբազան անօթները իրենց տեղը վերադարձնելու մասին: Այս տուեալները յաւելեալ լոյս կը սփռեն «*անիշխանութիւններու եւ բազմիշխանութիւններու*» արհաւիրքին տակ Թլկուրանցիի կաթողիկոսական գործունէութեան կարգ մը դրուագներուն վրայ:

Ժամանակագրական կարգով յաջորդը՝ Յովհաննէս Գ. Քիլիսցի կաթողիկոս, կը յիշուի քանի մը յիշատակարաններու մէջ, ըստ որոնց, ան նոյնպէս ժամանակ մը Հալէպ կը նստէր: Անոր կաթողիկոսութեան առաջին տարիները կը զուգադիպին սուլթան Սուլէյմանի ձեռնարկած պատերազմական արշաւանքներուն (1526, 1527), որոնց հետեւանքով Կիլիկիոյ գլխաւոր քաղաքները - ներառեալ Սիսը - մեծ վնասներ կը կրեն:

Իրմէ ունինք ինքնագիր յիշատակարան մը գրուած Հալէպի հաւաքածոյի թիւ 4 ձեռագիր Աւետարանին մէջ, ըստ որուն՝ ան 1526ին, այսինքն՝ իր կաթողիկոսութեան երկրորդ տարին, Հալէպի մէջ իր քսակէն 15 ֆլորին վճարելով գրաւէ ազատած է 1511ին Սեբաստիա գրուած Աւետարանն ու զայն նուիրած Հալէպի Ս. Աստուածածին եւ Ս. Քառասուն Մանուկ եկեղեցիներուն. «*Ի թվկնիս Հայոց ՋՀԵ (1526) աւետարանս գրաւական էր ԺԵ (15) ֆլրոյ վերայ: Ես Յովանէս կաթողիկոս փուի եւ ազատեցի՝ եւ եդի յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց հոգոյն, ի քաղաքն Հալապ ի դուռըն սուրբ Ասփուածածնին եւ սուրբ Քառասնիցն...*»[21]:

Յովհաննէս կաթողիկոսի անուան կը հանդիպինք նաեւ Հալէպի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ներսը, մուտքի դռան վերեւ ագուցուած մարմարէ սալիկին վրայ, որով կը հաստատուի, թէ եկեղեցին նորոգուած է Յովհաննէս կաթողիկոսի օրօք՝ 1535ին. «*Ի թվին հայոց ՋՁԴ (1535), ի կաթողիկոսութեան տէր Յովհաննիսին եւ յառաջնորդութեան Խաչատուր*

եպիսկոպոսին, ի թագաւորութեան սուլթան Սուլէմանին վերստին նորոգեաց խաւճայ Մախսուտն զՍուրբ Աստուածածինս յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոյ...»: Նոյնպէս, եկեղեցիի մուտքի արեւմտեան ճակատին ագուցուած մարմարէ սալիկին վրայ կը կարդանք. «*Շինեցաւ երկու դուռս մերոց ի թագաւորութեան սուլթան Սուլէման եւ հայրապետութեան Հովհաննէս կաթողիկոսի, թվին ՋՁԴ (1535)*»: Յովհաննէս Գ. կաթողիկոսը կը յիշատակուի նաեւ Ս. Աստուածածին եւ Ս. Քառասուն Մանուկ եկեղեցիներու նորոգութեան առթիւ, իւրաքանչիւր եկեղեցիի մուտքին վերը զետեղուած արձանագրութեանց մէջ: Առաջինի պարագային կը կարդանք՝ «*Ես եմ դուռն ընդ իս, եթէ ոք մտանիցէ, կէցցէ, մտցէ եւ ելցէ եւ ճարակ գտցէ: Նորոգէցաւ Սուրբ Աստուածածնայ եկեղէցին թիւն հայոց 984ին (1535) եւ ի թագաւորութեան սուլթան Սուլէմանին եւ ի հայրապետութեան տեառն Յովհաննէս կաթողիկոսին, եւս կրկին նորոգեցաւ թիւն 1849-ին, եւ...*»: Իսկ երկրորդին պարագային՝ «*Ի թիւն հայոց ՋՁԱ (1532) ի ժամանակի պարոնութեան Կիլիկիոյ եւ յառաջնորդութեան տեառն Յովհաննու սրբազան կաթողիկոսին երկրորդ շինութեամբ նորոգեալ էր յարեւելից կողմանէ դուռն սոյն Խ (40) մանկանց եկեղեցոյ..., իսկ այժմ ի հարաւ կողմն փոխադրելով սոյն դուռն երրորդ անգամ շինեցաւ... թիւ հայոց 1318 (1869)*»:

Ուշագրաւ յիշատակարան մը կը պարունակէ Հալէպի ձեռագրական հաւաքածոյի թիւ 154 «Յայսմաւուրք»ը, ըստ որուն գրիչը ձեռագրի ընդօրինակութեան ձեռնարկած է 1536ին՝ Զէյթունի բերդին մէջ, բայց աւարտին հասցուցած մղոններով հեռու Հալէպի մէջ. «*...եւ եղեւ գրաւորութիւն գրոյս ի Ջ եւ ՁԵ (1536) թուականին, ի լաւ եւ յընտիր աւրինակէ, որ ասի Ծերենց...: Ի գաւառս Սըսոյ՝ ի բերդն Զէթոն, բայց Ե (5) մղոնաւ հեռի գրեցաւ գիրք այս ի հայրապետութեան Տեառն Յովհաննէս կաթողիկոսին, եւ ի բռնակալութեան Տաճկաց խունդքարին Սուլթան Սուլէմանին*»[22]:

Յիշատակարանին մէջ, գրիչը Յովհաննէս Գ. կաթողիկոսը յիշատակելէ բացի, գրչութեան վայրին մասին սեղմ հաղորդման մէջ անուղղակիօրէն կ'արձանագրէ ԺՋ. դարուն տեղի ունեցող պատմական եղելութիւնները, հայկական բնակավայրերու մէջ տնտեսական եւ քաղաքական անկայուն պայմաններու բերմամբ հայ բնակչութեան դէպի Հալէպ անընդհատ հոսքը, եւ արդէն հարուստ եւ բարգաւաճ Հալէպի միջավայրին մէջ գրիչներու ծաւալած կենսագործունէութիւնը: Ձեռագրի ստացողն է տանուտէր Վարդան՝ ի յիշատակ Հալէպի Ս. Աստուածածին եւ Ս. Քառասուն Մանուկ եկեղեցիներու:

Որոշ ընդմիջումէ մը ետք՝ Սիսի Կաթողիկոսութիւնը դարձեալ Հալէպ փոխադրուած կը գտնենք Ազարիա Ջուղայեցի կաթողիկոսին օրով: Անոր կաթողիկոսութեան տարիները Կիլիկիոյ քաղաքական ամէնախռովայոյզ ու անապահով շրջանը կը թուին ըլլալ: Մէկ կողմէ ճալալիներու աւերիչ

արշաւանքներուն, միւս կողմէ՝ Կիլիկիոյ վրայ իշխող ձորապետերու հարստահարութիւններուն հետեւանքով ամայացած ու աւերուած էին գիւղեր ու քաղաքներ, Սիսը՝ գրաւեալ ու աւերակ, ուստի՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կրկին ապաստան կը գտնէ Հալէպ:

ԺԶ. դարավերջի Հալէպի հայ գաղութը ազգային-հասարակական, հոգեւոր-մշակութային բացառիկ շրջան կը բոլորէ Ազարիա Ջուղայեցի կաթողիկոսի ժամանակ. ան իր նախորդին՝ Խաչատուր Բ.ի կողմէ յաջորդ նշանակուելով կաթողիկոսական գահ կը բարձրանայ 1584ին եւ 17 տարի (1591-92, մէկ տարի ընդմիջումով) կը վարէ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ աթոռանիստ ընելով Հալէպը[23]: Ազարիա առանձնայատուկ տեղ կը գրաւէ ԺԶ. դարու հայ եկեղեցականներու շարքին, ոչ միայն իբրեւ բազմահմուտ հոգեւորական՝ «*քաջ րաբունապետ, փիլեզերալոյս վարդապետ*», այլեւ իբրեւ ազգային, հասարակական գործիչ, իբրեւ նախաձեռնող եւ քաղաքագէտ հոգեւոր պետ[24]:

Իր աթոռակալութեան շրջանին երկու հակաթոռ կաթողիկոսներ կ'օծուին՝ Տիրատուր եպիսկոպոս՝ 1586ին, եւ ոմն Յովհաննէս՝ 1588ին[25]: Դարուն պատմիչը՝ Դարանաղցի մերթ հակասական տեղեկութիւններ կը հաղորդէ Ազարիա կաթողիկոսի մասին. «*...որ յառաջ քան զկաթողիկոս լինիլն երկաթ ագանէր եւ յետոյ թոյլամորթացաւ, փոխեցաւ զգործքն եւ զգեստն, բայց ի քարոզութենէ եւ ի դասասացութեանց ի վարժելոյ զբազմութիւն աշակերտացն ոչ դադարեաց, որ եւ աշակերտք սորին հռչակաւորք եւ պերճականք եղեն...*»[26]: Դարանաղցիի այս դիտարկումները հիմք կու տան մեզի հաստատելու, որ Ազարիա Հալէպի մէջ եւս չէ դադրած «ի քարոզութենէ» եւ մանաւանդ՝ «ի դասասացութեանց», որու վառ ապացոյցն է նաեւ Հալէպի մէջ ծաղկած դասատուն-գրչատունը՝ ուսումնապետ կաթողիկոսին օրօք[27]: Ջուղայեցիի աշակերտն ու յաջորդը՝ Յովհաննէս Այնթապցի կաթողիկոս, իր ընդօրինակած ձեռագիրերէն մէկուն յիշատակարանին մէջ կը խնդրէ յիշել իր ուսուցիչը. «*...յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զհոգեւոր հայրն մեր եւ զլուսատուն հոգւոց մերոյ՝ զվերադիտողն Հայոց զՏէր Տէր Ազարիան*» (Երուսաղէմ, Ձեռ. թիւ 516):

Այս շրջանի Սիսի Կաթողիկոսութեան պատմութեան քանի մը դրուագներ կը նշանաւորեն Ազարիայի կաթողիկոսութիւնը Հալէպի մէջ: Առաջինը՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանքի պարտքերու հատուցման համար կազմակերպուած հանգանակութիւնն է, որ դուրս գալով գաղութի սահմաններէն կը տարածուի հայկական գաւառներուն եւ կեդրոններուն մէջ:

Ջուղայեցիի կաթողիկոսութեան ատեն Ս. Յակոբ դարձեալ ճնշուած է ծանր հարկերու եւ պարտքերու տակ: Դարանաղցի, որ այդ ժամանակ Երուսաղէմ կը գտնուէր, կ'ըսէ թէ խաչ մը անգամ չէր մնացած Ս. Յակոբայ Վանքին մէջ: Դարանաղցի բաւական մանրամասն տեղեկութիւններ կը

հաղորդէ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը պարտքերէ ազատելու համար Ազարիա Ջուղայեցիի ծաւալած գործունէութեան մասին. «*Եւ ինքն Ազարիան նստէր ի Հալապ եւ հովուէր զհոտ իւր, մանաւանդ հոգ տանէր Սուրբ Յերուսաղէմայ, որ ի ժամանակին յայնմիկ խիստ առաւել տագնապի էր եւ ի մեծ վտանգի կայր մեր վանքն հայոց Սուրբ Յակոբն՝ ի յառաջնորդութեանն Դաւիթ եպիսկոպոսին: Եւ այս Դաւիթս անհուն եւ անվճար պարտական էր արարեր զՍուրբ Յակոբն եւ զՍուրբ Յարութիւնն, զամենայն սրբութիւնքն՝ զոսկեղէն եւ զարծաթեղէն, զխաչ եւ զոսկետուփ աւետարանքն եւ զշուրջառքն գրաւ էին եդեալ մօտ յարապ տաճկացն: Յորժամ մեք այլ կացաք Դաւթի ժամանակն, մէկ խաչ չկայր եւ ոչինչ սրբութիւն կամ սպասք զարդուց, մերկացուցեր էր զամենայն*»[28]:

Ջուղայեցի՝ Ս. Յակոբը փրկելու համար, ժամանակի նշանաւոր հոգեւորականները կը հրաւիրէ ժողովի, ուր կ'որոշուի ազգային հանգանակութիւն մը կազմակերպել հայաշատ կեդրոններուն մէջ: Հանգանակութիւնը կը կատարուի չորս ուղղութիւններով. 1՝ Ազարիա իր աշակերտներուն հետ կը ստանձնէ՝ «*զՍեբաստիոյ սանճաքն եւ ...զԵւդոկիա, զԳաղատիա, զՀալէպ եւ զամենայն տունն Կիլիկեցւոց*»[29] (այլ աղբիւրներու համաձայն Ազարիա մինչեւ Բաղէշ հասած է), 2՝ «*զԱմիթ եւ զամենայն Միջագետս*»՝ Սրապիոն Ուռհայեցի մեծ վարդապետ, 3՝ Կարին եւ շրջակայքը՝ Պետրոս Կարկառեցի, իսկ 4՝ Կ. Պոլիսը՝ Գրիգոր Կեսարացի:

Ազարիա 1600ին կը հասնի Բաղէշ «*Արդ գրեցաւ սա ի դառն եւ ի չար ժամանակիս. Զոր անօրէնքն յամէն դիմաց նեղեն զքրիստոնեայս ի հարկապահանջութիւն, որ ի բազում... պարտս անկեալ էր ի վերայ Երուսաղէմայ, եւ Երուսաղէմ կայր ի գերութիւն նոցա: Զոր տեսեալ եւ լուեալ սուրբ վարդապետն Ազարիայ, որ էր յայնմ ժամանակի հայրապետ Սըսայ եւ փղցկայր ի սրտի իւրում, եւ ոչ գիտէր թէ զինչ արասցէ: Եւ ի տրլչութենէ Հոգւոյն Սրբոյ էարկ ըզմտաւ ելանել յերկիրն Հայոց առնուլ ողորմութիւն ըստ Պօղոսի. տանել եւ ազատել զԵրուսաղէմ ի յայլ ազգաց: Եւ եկեալ եհաս քարոզութեամբ ի քաղաքս Բաղէշ...*»[30]: Նոյն թուականին կը դառնայ Ամիդ, եւ Նոյեմբեր 4ին՝ կը հասնի Հալէպ[31]: Հանգանակութիւնը կը շարունակուի երեք տարի. «*...վասն Սուրբ Երուսաղէմայ պարտուցն Գ. (3) ամ հեռացեալ յաթոռն ընդ արեւելս...: Զկնի Գ. (3) ամաց եղեւ գալուստ նորա ի Հալապ*»[32]: Ապա Երուսաղէմ կ'երթան եւ պարտատէրերուն վճարելով՝ «*զոմանս աղաչելով եւ զոմանս տեղաց փաշայովն երկեցուցեալ*», գրաւէ կ'ազատեն ու վանքին կը վերադարձնեն սպասներն ու զարդերը:

Ուրիշ եղելութիւն մը եւս կ'առնչուի Սսոյ Կաթողիկոսութեան հալէպեան ժամանակաշրջանին եւ մասնաւորապէս Ազարիա կաթողիկոսի անձին՝ Հռոմի հետ համարձակ յարաբերութիւններուն: Աղբիւրներու համաձայն, 10 Ապրիլ 1585ին Ազարիա կաթողիկոս Հալէպի մէջ կը գրէ եւ կը կնքէ

պապին ուղղուած նամակ մը՝ «*...հաւատոյ սահմանադրութեանց քաղկեդոնական...*», ուր պատմութենէն օրինակներ բերելով, իր պատրաստակամութիւնը կը յայտնէ ընդունելու դաւանաբանական տարբերութիւնները, հետեւաբար նաեւ կաթոլիկ դաւանանքը:

Նոր Տոմարի հեղինակ Գրիգոր ԺԳ. քահանայապետը (1572-83) լրջօրէն ձեռք առած էր Արեւելքի եկեղեցիները Հռոմին միացնելու ծրագիրը, պատուիրակներ ղրկած Սիս եւ Հալէպ՝ տեղւոյն վրայ հարցը ուսումնասիրելու եւ յարաբերութեան մէջ մտնելու Հայ Եկեղեցւոյ հոգեւոր պետերուն հետ: Ինչպէս կը պարզուի Հռոմ ուղարկուած նամակներէն, Ազարիա հնարաւոր զիջումներ ըրած է Վատիկանին՝ անկէ քաղաքական եւ նիւթական օժանդակութիւն ստանալու յոյսով: Նամակը գրուած է Հալէպի մէջ, ուր ամենայն հաւանականութեամբ հրաւիրուած է ժողով՝ պապին պատասխան նամակը գրելու համար: Կարգ մը աղբիւրներու համաձայն, նամակը կնքած եւ հաստատած են հոգեւոր եւ աշխարհիկ դասի ինը ներկայացուցիչներ: Ուրիշներ՝ որպէս Ազարիայի խօսքերը հաստատողներ, կը յիշատակեն չորս եպիսկոպոսներ միայն: Մինչ դէպքերու ժամանակակից Դարանաղցի կը գրէ, որ Հալէպի առաջնորդ Ղազար եպիսկոպոսն էր, որ Ազարիայէն գաղտնի, անոր անունով կը գրէ այդ նամակը եւ կնիքը գողնալով կը կնքէ զայն: Ղազար եպիսկոպոս իր ստորագրութիւնն ու կնիքը կը դնէ նամակի վերջաւորութեան, որով կը հաստատուի անոր իսկութիւնը. «*Ես Ղազար եպիսկոպոս Հալապ քաղաքի առնեմ վկայութիւն որպէս տէր ազարիա կաթողիկոսն մեր յառաջն քան զգալն ի Հալապայ յեփրին ժամանակս վասն Սիս գնալուն, ընդունեցաւ եւ յայտնեաց զասացեալ դաւանութիւն լուծմամբ եւ հատիր կայք ի յայս յայտնութիւն բազում քահանայիւք եւ այլ եպիսկոպոսիւք, եւ նմանապէս մեք ...վկայութիւն առնեմք, որ ձեռագիրն եւ կնիքն եւ ձեռագիրն ըստոյգ ձեռամբ կաթողիկոսին է, ի վկայութիւն այսմ գրեցի...*»[33]:

Դժուար է այս հարցին առնչութեամբ եզրահանգումներ կատարել: Կը կարծենք՝ մութ եւ անյայտ էջ մը կը պակսի Ազարիա կաթողիկոսին Հռոմի հետ բանակցային գործընթացէն, որ առայժմ առեղծուած կը մնայ: Աւելի կը հակինք Դարանաղցիի տուեալներուն, քանզի Ազարիայի պէս բազմահմուտ եւ խորաթափանց հոգեւորական մը կարելի չէ, որ նման ճամփաներով առաջնորդէր իր եկեղեցին, մանաւանդ, որ գոյութիւն ունեցող վաւերագրերը բաւարար չեն հաստատելու, թէ ուղղակի Հայ Եկեղեցին Հռոմին միացնելու կամ դաւանափոխութեան խնդիր մը կայ: Բաբկէն եպիսկոպոս (ապա աթոռակից կաթողիկոս) այս խնդրին շուրջ իր վերլուծութիւններն ու դիտարկումները կատարելով, հետեւեալը կ'ըսէ. «*անգամ մըն ալ ուշադրութիւն կը հրաւիրենք Լէոնարդոյի (պապական նուիրակ) տեղեկագրին վրայ. վասնզի այս բանգէտ նուիրակը շատ լաւ թափանցեր է հայ ժողովուրդին քաղաքական ահռելի վիճակին եւ Հայոց հոգեբանութեան՝ մատը ուղղակի դնելով վէրքին կամ պէտքին վրայ եւ*

երկու խօսքով բանաձեւած է՝ այս ժողովուրդը կաթոլիկ կ'ըլլայ, եթէ Հռոմ կրնայ ազատել զինքն հարսպահարութիւններէն կամ Ազարիայի բառով՝ 'փնանկութենէն'»[34]:

Ազարիա կաթողիկոս կը վախճանի 1601ին եւ կը թաղուի Հալէպի Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիին մէջ: Ըստ Չամչեանի՝ «*Այլ մինչեւ էր սփռեալ ելուզակաց ի Հայաստան, մին ի նցէ, որոյ անուն էր Սաթըրճի Լէվէնտ՝ յաւարի էառ զՍիս քաղաք Կիւլիկիոյ, եւ կողոպտեաց զկաթողիկոսարանն ընդ որ փխրեալ յոյժ Ազարիայ Ջուղայեցւոյ կաթողիկոսին. Սսոյ անկաւ ի հիւանդութիւն եւ մեռաւ յամի. 1601. ՌԾ ի յունիսի. 2*»[35]: Յովհաննէս Այնթապցի սապէս կը նկարագրէ անոր մահը. «*Այդ միջոցին սաստիկ մահտարաժամ մը կար. յանկարծ հիւանդացաւ Ազարիա, հինգ օր պառկեցաւ եւ աւանդեց իր հոգին: Խաւար պատեց Հայոց փունը, որովհետեւ զրկուեցանք այսպիսի պայծառ արեւէ մը*»[36]:

Ազարիա կաթողիկոսի աճիւնն ամփոփող մարմարէ տապանաքարը (զետեղուած Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիի հին մատռան խորանին վարը՝ աստիճաններու միջեւ), ունի հետեւեալ արձանագրութիւնը. «*Յոր վասն անչափ սիրոյ քոյին բանդ ի կուսէն առէր մարմին աղաչանօք Աստուածածնին, թող ըզյանցանս փէր Ազարիայ կաթողիկոսին, որ եւ հանգեաւ ի մեծ թվին ՌԾ (1601) աւելորդին, յորժամ գայցես աշխարհ կրկին, յարո՛յ ըզսա փառոք քոյին, զիս զմեղօք որդի սորին, զփէր իմ պահեա շնորհիւ քոյին, ամէն*»:

Ազարիայի կը յաջորդէ իր ընտրելագոյն աշակերտներէն Յովհաննէս Այնթապցի: Երբ «*...կաթողիկոսն Սսոյ (Ազարիա Ջուղայեցի) անկաւ ի հիւանդութիւն եւ մեռաւ յամի. 1601 ՌԾ. ի յունիսի 2: Էր սորա աշակերտ Յովհաննէս վարդապետ Անթափցի*», որ կաթողիկոսութենէն առաջ արդէն տարբեր առիթներով կը փայլի Հալէպի մէջ իբրեւ գործակից Ազարիայի[37]: Յովհաննէս Դ. Այնթապցի կրթութիւնը ստացած է նախ Սիս, ապա Հալէպ, աշակերտելով Ազարիա Ջուղայեցիին:

Այնթապցի մէկն է այն կաթողիկոսներէն, որ բազում յիշատակագրութիւններ ձգած է: Ասոնք արժէքաւոր տեղեկութիւններ կը պարունակեն իր կատարած գործերուն եւ ժամանակի անցքերուն մասին: Յայտնի է, որ ինչպէս նախորդներուն, Յովհաննէս Այնթապցիի օրօք եւս, Սսոյ Կաթողիկոսարանն իր մայրավանքով ենթակայ էր ձորապետերու եւ բռնաւորներու յարձակումներուն, ուստի Այնթապցի նոյնպէս ստիպուած կ'ըլլայ ժամանակ մը Հալէպ նստիլ: Անոր անուան յիշատակութեան կը հանդիպինք Հալէպի շարք մը գրչագիրերու մէջ՝ իբրեւ գրիչ, պատուիրատու եւ ստացող, այլեւ կազմող ու նորոգող: Որպէս այդպիսին, ան կը հանդիսանայ Հալէպի դասատան առաջնորդող դէմքերէն: «*Երաժիշտ եւ բարձրաբարբառ քարոզ փիեզերաց*», «*քաջ եւ անյաղթ փիլիսոփայ*» տիտղոսները տրուած են իրեն: Հասցուցած է աշա-

կերտներու աստղաբոյլ մը՝ Խաչատուր Զէյթունցի, Պետրոս Կարկառեցի, Ներսէս Սեբաստացի (ապա կաթողիկոս Կիլիկիոյ), Մեսրոպ Պուղտանցի:

1586ին, Յովհաննէս տակաւին աբեղայ, իր ուսուցիչ Ազարիա Ջուղայեցիի խնդրանքով կ'ընդօրինակէ Գրիգոր Նարեկացիի «*Մեկնութիւն Երգոց Երգոյն*»ը եւ կը խնդրէ՝ անմեղադիր ըլլալ «*ի սխալանաց եւ ի պակասութեան*» գրին՝ «*զի թէ շեշտ եւ թէ կէտ եւ թէ կիտ, եւ ստորակիտ, եւ այլ որ ինչ արուեստ կայ ի սմա դու իմաստուն եւ ճարտար մտաւք քննայ, զի ես խիստ տառապանօք գրեցի. զի ոչ թանաք ունէի եւ ոչ շիքրոն. ի վերայ ծնկիս եւ ի վերայ բարցին նաւտրեցի. Այնոր համար արհեստին փոյթ չեղայ*»[38]:

1601ին Հալէպի մէջ կը ստանայ եւ կը նորոգէ «Եսայի եւ Թուղթք Պաւղոսի» 1356 թուագիր ձեռագիրը (Վիեննա, Ձեռ. թիւ 113), ուր ձգած է չափածոյ յիշատակարան մը.

«*Ընդ առաջին եւ ընդ զմիջին,*
Սպացողաց այս սուրբ տառի,
Եւ ինձ վերջի սպացողի,
Եւ նորոգողի այս սուրբ կտակի,
Ինձ Յովհաննու բանասիրի...»[39]:

1597ին կը նորոգէ Ս. Յակոբայ մատենադարանը պահուող Աստուածաշունչ մատեան մը եւ իր ոճով յիշատակարան մը կը գրէ. «*Ընդ առաջի աշխատաւորացն շարադրողացն եւ շարագրողացն Աստուածաշունչ Սբ. Կտակիս. զիս նուաստ եւ զտառապեալ ոգիս զՅովհաննէս վարդապետս Յանթըպցի, զնորոգող եւ ըստ ժամանակեայ վայելոծ ըսհոգեբուխ աստուածային...*» (Երուսաղէմ, Ձեռ. թիւ 2309)[40]:

Այս շրջանի յիշարժան դէպքերէն է Հալէպի մէջ Պետրոս Կարկառեցիի կաթողիկոսացումը: Ան իբրեւ Կիլիկիոյ կաթողիկոս եօթը տարի Հալէպ կը նստի (1601-08), կաթողիկոս ընտրուելով Հալէպի հայոց կողմէ[41], մինչ Յովհաննէս Այնթապցի Սիս կը նստէր[42]: Դարանաղցի այս դէպքերուն մասին հետեւեալը կը գրէ. «*Եւ հալապցիք հակառակ Յովհաննէսին հարկ եդին ի վերայ Պետրոսին եւ սպիպէին զնա լինել կաթողիկոս յանուն Սուրբ Յերուսաղէմայ, զի դու աւագ մեծ վարդապետ ես ի մեջ ամենայն հայոց եւ բազում աշակերտելոց հայր եւ Հալապս մերձ Յերուսաղէմայ եւ ամենայն հայոց դուռն է: ...Եւ եղեն երկու բանակ եւ պառակտեցան ժողովուրդն, ոմանք ի Պետրոսն դարձան՝ Հալպայ եղած հայքն, եւ այլ ամենայն աշխարհն կիլիկեցւոց ի Յովհաննէս դարձան ձեռագրովք եւ հնազանդ եղեն նմա ասելով թէ՝ մեք մեր հայրենի աթոռ զՍիս գիտեմք եւ ոչ Հալապ*»[43]:

Կը տեսնենք, թէ Հալէպի հայ գաղութը իր իւրայատուկ ու կարեւոր դիրքով հրապարակ կը դառնայ նաեւ կաթողիկոսական աթոռի շուրջ վէճերու եւ պառակտումներու: Աթոռին կը նստին միաժամանակ երկու

կաթողիկոսներ, երկուութեան եւ պայքարի դուռ բանալով Սսոյ ենթակայ թեմերուն միջեւ[44]:

«*Եւ պարտ էր Պետրոսին լռել եւ ոչ լռեաց, այլ երկու ամ մեծ գժտութիւն եւ խռովութիւն եղեւ ի միջին նոցա, եւ յետ երկու ամացն հազիւ կարացին հաշտութիւն առնել երեսօք եւ ոչ սրտիւք*»[45]:

Այնուհետեւ, համաձայնութիւն մը գոյացած է խնդրի լուծման համար, ըստ որուն՝ երկու կաթողիկոսները պէտք է շարունակէին իրենց գահակալութիւնը՝ մինչեւ երկուքէն մէկուն վախճանիլը, որմէ ետք վախճանողին տեղ յաջորդ պիտի չընտրուէր. «*...պայման եդեալ այսպիսի. զի իւրաքանչիւր վարեսցէ զիւր առանձին վիճակ մինչեւ ի մահ. եւ ի մեռանիլ միոյն՝ միւսն լիցի ինքնիշխան կաթուղիկոս. եւ այնպէս կացին անխռով ամս...*»[46]:

Հակառակ այս ամէնի՝ Հալէպի մէջ կաթողիկոսական աթոռի հաստատումը բարիք մը կ'ըլլայ ոչ միայն համայնքի, այլեւ լայն առումով նաեւ ողջ հայութեան համար: Պետրոս Կարկառեցի՝ «*մեծ եւ աւագ վարդապետն*», իր ժամանակի ամէնէն զարգացած եւ առաջաւոր մտաւորական եկեղեցականներէն մէկը՝ նոր փայլք ու շունչ կը հաղորդէ հալէպահայ գաղութին, յատկապէս գիտական, ուսումական, մշակութային ծիրին մէջ: Կարկառեցիի կենսագիր հեղինակներու աշխատութիւններէն կը տեղեկանանք, որ ան մօտ 40 տարի նախ որպէս աշակերտ, ապա առաջնորդ եւ ուսուցիչ անցուցած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սահմաններուն մէջ գտնուող՝ Կարկառի Ս. Տիմոթէոս Վանքին մէջ: Իր «հոգեւոր եղբօր»՝ Սրապիոն Ուռհայեցիի հետ աշակերտած է Մեծն Ղուկաս Կեղեցիին, որմէ ստացած է վարդապետական գաւազանը: Իրեն իբրեւ ուսուցիչ կը յիշուի նաեւ Ամիթի դպրոցի Յովհաննէս Շիրակ վարդապետը: Կարկառեցիի մասին դրուատիքի ջերմ խօսքերով կ'արտայայտուի Դարանաղցի. «*Այս Պետրոսս կարի յոյժ առաքինի էր եւ կարի հմուտ գոլով Հին եւ Նոր Կտակարանաց, նրբից եւ արտաքնոց, եւ ժիր էր ի աշակերտաց վարժումն եւ ի դաս ասելն, եւ շատ ժամանակ նստեալ կայր ի վանս Կարկառու, եւ ոչ ելանէր... թէ լինէր երբեմն յամթացիք բռնութեամբ տանէին ի քաղաքն դաս ասել ժամանակ մի եւ դարձեալ դառնայր ի վանս իւր: Եւ ել համբաւ նորա ընդ ամենայն Հայաստանեայս եւ փայլէր որպէս զարեգակն լուսաւորի ի մէջ աստղեաց*»[47]:

Կարկառեցի հասցուցած է մեծ թիւով աշակերտներ, որոնցմէ, կ'ըսուի թէ՝ «*տասից տուեալ է գաւազան*»: Իր աշակերտներէն էին՝ Կարապետ Թիլաւանցի (Քոթ), Գրիգոր Գանձակեցի, Խաչատուր Կարկառեցի, Ղազար Տարանդացի, Թումա Կարկառեցի, Զաքարէ Վանեցի, Կիրակոս Տրապիզոնցի, Մաղաքիա Թոխաթեցի եւն.[48]:

Բոլոր հիմքերն ունինք ենթադրելու, թէ Պետրոս Կարկառեցի Հալէպի մէջ կաթողիկոս օծուելէ յետոյ, Կարկառի դպրոցը հոն փոխադրած է, եւ

տեղւոյն դասատան մէջ շարունակած դասատուութիւնը մինչեւ իր կեանքին վերջը, որով Հալէպի դասատուն-գրչատունը նոր վերելք կ'ապրի «*քաջ հռետոր եւ րաբուն*»՝ Պետրոս Կարկառեցիի առաջնորդութեամբ:

Պետրոս կաթողիկոս նաեւ բանաստեղծ է: Ձեռագիրերու մէջ պահպանուած են բանաստեղծական յօրինումներ՝ «*Պետրոս կաթողիկոսէ ասացեալ*»: Իրմէ ունինք նաեւ չափածոյ յիշատակարաններ: 1606ին գրած է Ողբ՝ «*Վասն Աւերման Գիւղաքաղաքին Ճուղայոյ եւ Ամենայն Հայոց*» (Երուսաղէմ, Ձեռ. թիւ 794): Ձեռագրական աղբիւրներու մէջ ան կը յիշուի իբրեւ պատուիրատու, նորոգող եւ կազմող:

Պետրոս կաթողիկոս վախճանած է 1608ին Հալէպ, թաղուած է Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցւոյ հին մատռան ներսը, արեւմտեան որմին տակ, որուն վրայ կայ փորագիր ընդարձակ արձանագրութիւն. «*...Սա ի հօրէ ծընեալ լինի, Կարկառ անուն փոքր քաղաքի եւ սրբութեամբ ինքն սնանի, որպէս գրատրակ յանապատի: Ի յաւիղն մեծ Եփրատ գետի ի վանքն Սբ. Տիմոթէի զամս Խ (40) այլ աւելի վարս ուղղէր ազգի ազգի...*»:

Պետրոս կաթողիկոսի մահէն ետք, Սսոյ իբրեւ միակ գահակալ կը մնայ Յովհաննէս Այնթապցի:

Յաջորդող դարերուն նոյնպէս Կիլիկիոյ կաթողիկոսներէն ոմանք պարբերաբար Հալէպ հանգրուանած են, որ սակայն այս ուսումնասիրութեան ծիրէն դուրս է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Արաբական Աղբիւրները Հայաստանի եւ Հարեւան Երկրների Մասին (Եակուտ ալ-Համաուի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ), Հտր. 3*, կազմ.՝ Հ. Նալբանտեան, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1965, էջ 235:

[2] *Մանր Ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ., Հտր. 1, Նիւթեր Հայ Ժողովրդի Պատմութեան, Գիրք է.*, կազմ.՝ Վ. Յակոբեան, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1956, էջ 82:

[3] *Արաբական Աղբիւրները, Հտր. 3*, էջ 287:

[4] Նոյն, էջ 250:

[5] Հալէպի հայոց իբրեւ ինքնուրոյն համայնք կազմաւորման, ինչպէս նաեւ եկեղեցիներու սկզբնական շրջանի վերաբերեալ յստակ եւ ստոյգ տեղեկութիւններ կը պակսին մեզի: Յայտնի է միայն, որ 1329ին արդէն Հալէպի մէջ հայերը ունէին եկեղեցի՝ Ս. Աստուածածին անունով: Իսկ 1355ին գրուած ձեռագիրի մը յիշատակարանը կը հաստատէ, թէ այդ թուականին արդէն Հալէպի մէջ կար կազմակերպուած համայնք՝ ռէիսի (տանուտէր) գլխաւորութեամբ:

[6] Հալէպի հայ վաճառականներու ձեռքը կը գտնուէր Հալէպի փողերանոցը, մաքսատունն ու արտաքին առեւտուրը: Անոնց կը պատկանէր եւրոպական երկիրներու հետ առեւտուրի, յատկապէս մետաքսի վաճառքի մենաշնորհը՝ մետաքսի ճանապարհի ամբողջ երկայնքին՝ մինչեւ հեռաւոր Արեւելք, Հնդկաստան ու Չինաստան:

[7] *Սիմէոն Դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, Տարեգրութիւն Եւ Յիշատակարանք*, Հրատ.՝ Հ. Ն. Ակինեան, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1936, էջ 320:

[8] *Սիմէոն Դպրի*, էջ 318:

[9] *ԺԵ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Հտր. Բ. (1451-1480 թթ.)*, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1958, էջ 273:

[10] *Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ Կամ Դարանաղցւոյ*, հրատ.՝ Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, Ս. Յակոբ, 1915, էջ 13:

[11] Նոյն:

[12] *Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց Ի Վենետիկ, Հտր. Բ.*, յօրինեց՝ Հայր Բարսեղ Սարգիսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1924, էջ 488:

[13] Բաբկէն Ա. Աթոռակից Կաթողիկոս, *Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441էն Մինչեւ Մեր Օրերը)*, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 1939, էջ 146:

[14] *Սիմէոն Դպրի*, էջ 319:

[15] Բանասիրութեան մէջ մինչեւ վերջերս ընդունուած էր կարծել, որ բանաստեղծ-տաղերգու Յովհաննէս Թլկուրանցի եւ կաթողիկոս Յովհաննէս Թլկուրանցի նոյն անձն է: Սակայն ներկայիս ապացուցուած է, որ բանաստեղծ Յովհաննէս Թլկուրանցի ապրած է ԺԴ. դարու երկրորդ եւ ԺԵ. դարու առաջին կէսին, հետեւաբար բացառուած է, որ միեւնոյն անձը ըլլայ:

[16] *Դարանաղցի*, էջ 85:

[17] *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն Մանկունք Եկեղեցւոյ Եւ Մասնաւորաց, [Հտր. Ա.]*, կազմեց՝ Արտաւազդ Արք. Սիւրմէեան, Երուսաղէմ, Ս. Յակոբեանց տպարան, 1935, էջ 151:

[18] Իդէպ՝ 1500 թուագիր յիշատակարանի մը համաձայն Ռէիս (տանուտէր) Իսա Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիին հետ մէկտեղ կառուցած է նաեւ նոյն բակին մէջ գտնուող մարոնիներու եւ յոյներու եկեղեցիները՝ «*...Այլ եւ զխորանն մարունեան, նոյնպէս զազգին ըզհոռոմեան...: Այլ եւ խըցեր հանգըստարան, ի գալ հիւրոցն աւտարական. ...Շինեաց դարպաս թագուորական, որ ժամատեղ էր ամառան. քահանայից տեղ էր հանգստեան, զի վայելեն խաղաղական*» (*Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի*, էջ 151):

[19] *Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, ԺԳ. Դար*, կազմեց՝ Ա. Մաթեւոսեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 415:

[20] Աստուածատուր Եպս. Տէր-Յովհաննէսեանց, *Ժամանակագրական Պատմութիւն Երուսաղէմի, Հտ. Ա.*, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1890, էջ 251-4:

[21] *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի*, էջ 8

[22] Նոյն, էջ 340:

[23] Գրիգոր Կամախեցի, էջ 320:

[24] Բաբգէն Եպիսկոպոս, «Ազարիա Ջուղայեցի», *Տաթեւ Կրօնական Տարեցոյց, Դ. Տարի*, Հալէպ, Տպ. Արաքս, 1928, էջ 90:

[25] Հայր Միքայէլ Չամչեանց, *Հայոց Պատմութիւն, Հտր. Գ.*, Վենետիկ, Ս. Ղազար, 1786, էջ 528:

[26] *Դարանաղցի*, էջ 319-320:

[27] Այս մասին տե՛ս՝ Վարդի Քէշիշեան, «Հալէպի Գրչութեան Կեդրոնը», *Բանբեր Մատենադարանի, թիւ 19*, 2012, էջ 191:

[28] *Դարանաղցի*, 320

[29] Նոյն, էջ 321:

[30] Բաբկէն Ա. Աթոռակից, էջ 159-160. նաեւ՝ Երուսաղէմ, Ձեռ. թիւ 338, *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտր. Բ.*, կազմեց՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1967, էջ 223:

[31] Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, Ձեռ. թիւ 1518, *Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր. Ե.*, կազմ.՝ Օ. Եգանեան, Երեւան, «Նայիրի» Հրատ., 2009, էջ 203:

[32] *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Զմմառի Վանքի Մատենադարանին,* կազմեց՝ Մեսրոպ Վրդ. Քէշիշեան, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1964, էջ 195:

[33] Աղեքսանդր Վրդ. Պալճեան, *Պատմութիւն Կաթողիկէ Վարդապետութեան Ի Հայս եւ Միութեան Նոցա Ընդ Հռոմէական Եկեղեցւոյ Ի Փլորենտեան Սիւնհոդոսի*, Վիեննա, Մխիթարեան [Տպարան], 1878, էջ 307:

[34] Բաբկէն Ա. Աթոռակից, էջ 180:

[35] Չամչեան, էջ 536:

[36] Բաբկէն Ա. Աթոռակից, էջ 184:

[37] Ազարիա կաթողիկոսին Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը պարտքերէ ազատելու հանգանակութեան Պետրոս Կարկառեցի կարեւոր մասնակցութիւն կ'ունենայ:

[38] Երուսաղէմ, Ձեռ. թիւ 958, *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտր. Գ.*, կազմեց՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1968, էջ 514:

[39] Յակոբոս Վ. Տաշեան, *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց Ի Վիեննա, Հտր. Ա.*, Վիեննա, Մխիթարեան Տպ., 1895, էջ 394:

[40] *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտր. Գ.*, կազմեց՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1968, էջ 513:

[41] Ըստ աղբիւրներու Յովհաննէս Այնթապցի Հալէպէն Ատանա գացած է Ազարիայի մահէն 5 ամիս ետք եւ կաթողիկոս օծուած 20 Դեկտեմբեր 1601ին, ուստի կրնանք ենթադրել, որ Պետրոս Կարկառեցի կաթողիկոսական ձեռնադրութեան եւ օծման արժանացած է 1601 Նոյեմբերի վերջ-Դեկտեմբեր 20 ժամանակամիջոցին:

[42] Պատմագիրներէն ոմանք Պետրոս Կարկառեցին հակաթոռ կաթողիկոս կը նկատեն, ոմանք ալ կ'ընդունին կաթողիկոս իր նախորդներուն շարքին: Այս մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Վեներա Մակարեան, «Կիլիկիոյ Ազարիա Կարկառեցու Հակաթոռութեան Թուականը (ԺԷ.-ԺԸ. դդ.) (Ըստ Հալէպի Շարիա Դատարանի Արաբերէն Արձանագրութեան)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԷ.*, 2017, էջ 465-472:

[43] *Դարանաղցի*, էջ 329-330:

[44] Հ. Միքայէլ Չամչեան հետեւեալը կը հաղորդէ կաթողիկոսական աթոռի շուրջ ծայր առած պայքարի վերաբերեալ. Յովհաննէս Այնթապցի եւ Պետրոս Կարկառեցի՝ որպէս երկու ընկերներ «*...ի մեռանիլ ապա Ազարիա՝ գնացին երկոքին ի Բերիա. եւ կացին անդ ամիսս ինչ մինչ ի դեկտեմբեր: Մեկնեալ անտի Յովհաննու վարդապետի Անթէփցոյ՝ գնաց յԱտանա. եւ Պետրոս մնաց ի Բերիա. եւ զի դեռեւս չէր եդեալ կաթողիկոս ի Սիս՝ ժողովուրդքն Բերիոյ*

սփիւեցին զՊետրոս վարդապետ, եւ եփուն ձեռնադրել զնա կաթողիկոս Սսոյ առանց հաւանութեան Սսեցւոց»: Այս լուրը առնելով, սսեցիք՝ միաբանք եւ ժողովուրդ իբր յուժ կը խռովուին, եւ Յովհաննէս վարդապետը Սիս բերելով կը ձեռնադրեն կաթողիկոս. «*եւ եղեն յայնժամ կաթողիկոսունք Սսոյ եւ երկու. որոնց՝ մին նստէր ի Սիս, եւ միւսն ի Բերիա*» (Չամչեան, էջ 536):

[45] *Դարանաղցի*, էջ 329-331:

[46] Չամչեան, էջ 536:

[47] *Դարանաղցի*, էջ 351-352:

[48] *Դարանաղցի*, էջ 353, 357, 363-364:

Aleppo as the Seat of the Cilician Catholicosate (16th-17th Centuries)

(Summary)

Varty Keshishian
keshishian.varty@gmail.com

Armenains have been acquainted with Aleppo from the earliest times. Basically due to trade, and sometimes for military reasons, Armenians gradually became established in Aleppo, particularly as of the 13th century. After the fall of the Cilician Armenian Kingdom in 1375, large numbers of Armenians left Cilicia and took refuge in Aleppo. The Aleppine Armenian community grew and developed in the 15th-16th centuries, when Armenian tradesmen and *khodjas* acquired significance and held powerful positions in Aleppo in trades and administration. The convergence of Armenian *khodjas* coincided with the temporary relocation of the Sis Armenian Catholicosate to Aleppo in the 16th-17th centuries, at a time when the Great See and the whole area were under the menace and domination of Turkmen tribes. Particualrly in the late 16th century the Sis Catholicosate was in danger due to the Djelali movement. Therefore, the Catholicosate was tranferred to the premises of the Aleppo Karasnits Mangants and Surp Asdvadzadzin churches. Alongside the Catholicos other high-ranking clerics and cultural figures converged on Aleppo, which became a spiritual-cultural center for the Armenians.

During the 16th and 17th centuries the Aleppo Armenian community had its golden age, as all aspects of Armenian medieval culture developed and reached new heights. Aleppo, thus, became a natural preserve of medieval Armenian arts and safeguarded the continuity of its rich traditions

Indeed, when in the 15th-16th centuries all of Asia Minor and Cilicia had become an area of operation for the Djelali brigands, Aleppo turned out to be a safe haven for the Cilicia Catholicosate and the Armenians of the region.

ARMENIANS IN 19TH CENTURY ALEPPO

Hidemitsu Kuroki
hidemitsu.kuroki@gmail.com

INTRODUCTION

Aleppo was a major Armenian business center prior to the arrival of the Armenians caused by the genocide during the First World War period.

Located at the crossroads of the Mediterranean-Levant route and Anatolia, Aleppo was one of the Ottoman Empire's major long-distance trade cities. Sophisticated facilities for travel, trade, commerce, and manufacture were clustered in the city center, while the presence of a diverse religious and ethnic population made the city a place for cosmopolitan merchants.

Recorded Armenian presence in the city dates back to the 13th century. Historically Aleppo was one of the prelacies of the Cilician Catholicosate of the Armenian Church. During turbulent decades the Catholicos (whose seat was in Sis/Kozan, Cilicia) took refuge in Aleppo, where, particularly during the 16th-17th centuries, a vibrant Armenian cultural life blossomed. In another vein, for the Armenians, one of the conspicuous trading diasporas of the world, Aleppo was one of their bridgeheads to extend their network. Thus the historical importance of Aleppo for the Armenians is very obvious.

Based mostly on Ottoman registers preserved in Istanbul, this paper intends to explore the reality of the Armenian society of Aleppo in the middle of the 19th century, describing:

- first, the size of the Armenian population,
- second, the population's distribution within the city,
- third, the Armenian migrants' places of origin,
- and fourth, the Armenians' jobs.

A.- THE SIZE OF THE ARMENIAN POPULATION IN ALEPPO

There exist several population estimates not only of the Armenians, but also of the Christians of Aleppo in general. The detailed statistical data of Aleppo's population for the year 1845, published in 1853 by ex-French Consul Henri Guys, indicate Orthodox and Catholic Armenians together constituted 4,953, approximately 29%, of the Christians in Aleppo.[1] In 1848, another French Consul in Aleppo made an estimate of the number of Armenians, at 4100, 26%.[2] In 1856, Maronite Bishop Yusuf Matar reported the social conditions of Christians in Aleppo, giving the population by sects, and Armenians were 5500-5700, 31% of the Christian population of the city. [3] (See Table 1)

I have compared these estimates with documents preserved in the Turkish Prime Minister's Ottoman Archives in Istanbul (Başbakanlik Osmanli Arşivi). There are two *jizya* registers of the relevant period. These are the registers of

1844 and of 1849.[4] Besides, there are three other registers of 1849, which are population survey registers used for the preparation of military conscription for Muslims and direct taxation of Christians and Jews. One of them covers the details of Muslim outsiders, and the second covers the details of Christian outsiders. The third covers all residents, though not in detail, counted by neighborhoods and religions (Muslims, Christians, and Jews: Thus, Armenians were not differentiated).[5]

Table 1. Estimated Christian population in Aleppo

Community	Number	%	Number	%	Number	%
	1845 (published)		1848		1856	
Rum (Greek) Orthodox	718	4%	500	3%	500	3%
Rum (Greek) Catholics	6,490	38%	7,000	44%	7,000	38%
Armenian Orthodox	1,903	11%	600	4%	1,500	8%
Armenian Catholics	3,050	18%	3,500	22%	4,000–	23%
Syrian Orthodox	17	0.1%	-	-	200	1%
Syrian Catholics	2,107	12%	2,000	12%	2,200–	12%
Maronites	1,645	10%	1,500	9%	2,000	11%
Latins & Chaldeans	986	6%	900	6%	500+	3%+1%
Protestants	21	0.1%		-		-
Total	16,937		16,000		18,100-18,500	

Sources: see Notes 1, 2, and 3.

The *jizya* was levied on Christian and Jewish male adults, and from the 1840s, during the period of Tanzimat, the poll tax was collected literally from persons directly, not from communities all together. Thus the *jizya* is regarded as a reliable source for estimates and other data. The total number of *jizya* payers in 1849 was 5,198. Of these *jizya* payers there were 966 Armenians. Another 726 were listed as outsiders, with no confessional distinctions between them; however, a detailed examination of the names of these outsiders revealed that most of them were Armenians. Indeed, some 650 names of the outsiders were Armenian (approximately 90%). Therefore, the total number of male Armenians who paid the *jizya* would be 1,616 out of a total of 5,198 *jizya* paying Christians living in Aleppo in 1849. Thus, it is possible to assume that the Armenians constituted around 31% of the Christian population of Aleppo, according to the poll tax register (Hereunder abbreviated as MZ Cizye 1177, see Table 2).

As mentioned above, there exists another document for the population survey, though it covers only Christian outsiders (NFS.d 3725). This survey was conducted also in 1849. But there is a discrepancy between the two documents, MN Cizye 1177 and NFS.d 3725, which lies in the number of outsiders. NFS.d 3725 puts the total number of outsiders (which includes a majority of

Armenians) at 472 (see Table 3), in contrast to the first survey which put the number of *jizya* paying outsiders at 726 - almost a 30% difference, a total of some 250 males. The reason is supposed to be that outsiders were counted only at special places such as *khan*s, bakeries, and mills, for the population survey for NFS.d 3725. People making up the difference may have lived in residential houses and engaged in other jobs so were not counted in the survey. However, for the *jizya* collection, they were covered.

Table 2. Aleppo *Jizya* Payers, 1849, based on MN Cizye 1177

Community		Number	%	% among Christians
Rums		2,013	39%	46%
Armenians		966	19%	22%
Suriyanis		386	7%	9%
Maronites		260	5%	6%
Unknown		23	0.4%	1%
Jews		824	16%	
Outsiders	Armenians	650	13%	15%
	Other Christians	76	1%	2%
Total of Christians		4,374	84%	100%
Total		5,198	100%	

Source: H. Kuroki, "Mobility of non-Muslims in Mid-Nineteenth-Century Aleppo," in *The Influence of Human Mobility in Muslim Societies*, H. Kuroki (ed.), 2003, London, Kegan Paul, p. 144.

One may presume that the local Aleppo Armenian *jizya* payers lived with their families, wife and children. If on average every local Aleppo Armenian family had two children, then we would have 966 *jizya* payers + (3 x 966) = 3864 Armenians. If we add the local Armenian clerics, the local Armenian elderly and blind, and those who were not capable of working, plus those Armenians who were under foreign protection, and the 650 non-Aleppine Armenians, then it would be fair to claim that the total number of Armenians in Aleppo was between 4,500 and 5,000 in 1849.

Table 3. Aleppo Outsiders, 1849, based on NFS.d. 3725

Armenians	411	5 Armenian Catholics included	87%
Rums	41	9 Rum Catholics included	9%
Suriyanis	9		2%
Maronites	4		1%
Protestants	1		0.2%
Unknown	6		1%
Total	472		100%

Source: H. Kuroki, "Migrants in Ottoman Aleppo, 1849: A Preliminary Analysis of Population Surveys on 'Outsiders,'" in *Human Mobility and Multiethnic Coexistence in Middle Eastern Urban Societies 1*, H. Kuroki (ed.), Tokyo, ILCAA, Tokyo University of Foreign Studies, 2015, p. 62.

B.- ARMENIAN RESIDENTIAL AREAS

The second point to be clarified is the residential areas of the Armenians, or their population distribution, among the city quarters.


[17] For the details of the Antioch massacre, consult ibid.; FO 861, File 58, James Martin to Fontana, June 16, 1909; Germany, Türkei no. 134, microfilm roll 97, Band 25, Martiros Missakian, imperial consular agent of Germany at Antioch, to von Tischendorf (?), April 22, 1909; Band 25 a, Missakian to von Tischendorf, April 24, 1909; Capuchin Archives, Maison Saint François, Mtayleb, Lebanon, File *Khoderbey 1910*, Fr. A.C., Brièvе relation sur Kodorbek et villages arméniens parsemés sur le mont Gebel Moussa, October 21, 1910; Zora Iskenterian, *Husher patmutian hamar* (Memoirs for History), Beirut, Sevan Printing House, 1974, pp. 23-36; Clemente da Terzorio, *Le missioni dei minori Cappuccini*, vol. V, *(Turchia Asiatica)*, Rome, Cooperativa Tipografica Manuzio, 1919, pp. 467-68; P. Constant, *Capucins missionnaires. Syrie, Liban, Turquie*, Marseille, Imprimerie Saint-Léon, 1931, pp. 41-45; *Les massacres d'Antioche et de Tarse et la mission des Capucins en Syrie et Cilicie*, N.P., n.p., [1909?], pp. 10-26; Isobel Lytle, *James Martin: Pioneer Medical Missionary in Antioch*, Belfast, Cameron Press, 2003, p. 59; R.P. Célestin, "Les massacres d'Antioche," *Les Missions Catholiques*, 41:2088 (June 11, 1909), pp. 278-80; R.P. Jérôme, "Un an après les massacres," *Les Missions Catholiques*, 42:2133 (April 22, 1910), pp. 181-83; James Martin, "The Massacre of Armenians at Antioch," *The Friend of Armenia*, no. 38 (Summer, 1909), pp. 7-9; Vardan Varderes[ian], "Antakya Hadisesi" (The Antioch Incident), *Avetaber*, no. 22 (May 29, 1909), pp. 471; "Kilikian Iurer" (Cilician News), *Arevelian Mamul* (Oriental Press), no. 20 (May 12, 1909), pp. 560-63; *Lusaber-Arev* (Light Bearer-Sun) (Cairo), May 15, 1909, May 18, 1909.

The clergymen who were killed included the parish priest, Fr. Armenak Tonatosian; V. Rev. Daniel Hakobian, who was in town on a visit from the Ktuts-Lim Diocese in Van province; and the newly-ordained V. Rev. Arsen Harutiunian, who was dispatched by Catholicos Sahak II of Cilicia to inspect the Armenian parishes in the general area.

[18] For the details of the Kesab massacres, consult American Board of Commissioners for Foreign Missions (ABCFM) Archives, Houghton Library, Harvard University, Cambridge Massachusetts, ABC: 16.9.5, vol. 15, Stephen Van R. Trowbridge, "The Sack of Kessab"; Austria-Hungary, Osterreichisches Staatsarchiv, Vienna, Die Akten des k.u.k Ministeriums des Aussern, 1848-1918, Politisches Archiv, Abteilung XXXVIII: Konsulate, Carton 344, File *Beyrut 1909*, Telegram no. 8081, dispatched April 25, 1909, received April 27, 1909 (see also Carton 384, File *Lattaquia 1910*); France, Archives du Ministère des Affaires Etrangères (AMAE), Quai d'Orsay, Paris (now in Nantes), Arménie-Anatolie-Cilicie, vol. 83, *1908 janv.-1910 fev.*, Note pour le Ministre au sujet des troubles d'Asie Mineure, May 12, 1909; Sabatino, "Les pères de Terre-Sainte," pp. 375-77; "Kasabdan bir Mektup" (A Letter from Kesab), *Avetaber*, no. 51 (December 18, 1909), p. 1108; Yusuf al-Hakim, *Suriyya wal-a'hd al U'thmani* (Syria and the Ottoman Era), vol. I, Beirut, 1966, pp. 178-81; Hakob Cholakian, *Kesap*, vol. I, Aleppo, Hamazgayin Regional Committee of Syria, 1995, pp. 89-98; Alper S. Temirian, *Kesap (1909-1946)*, Beirut, K. Tonikian Press, 1956, pp. 51-65.

[19] ABCFM, ABC: 16.9.5, vol. 15, Trowbridge, "The Sack of Kessab," p. 6.

[20] Ibid., vol. 17, Effie M. Chambers, Report, July 17, 1909; idem, Chambers to James Barton, *Widows* Kessab, August 19, 1909 (in this report Chambers puts the number of widows at 54); idem, vol. 21, Chambers, Report of the Work in Kessab Field for 1909-10. See also ABC: 16.5, vol. 6, D.H. Koundakjian, What the Protestants of Kessab Have Done for Their Church, Destroyed by Fire During the Recent Disturbances, 1913. For conditions and relief efforts in Kessab after the carnage, consult FO 195, Files 2306-2307, FO 424, Files 221-222, and FO 861, Files 58-59.

[21] Germany, Türkei no. 134, microfilm roll 97, Band 24, von Tischendorf to von Bülow, April 23, 1909, April 24, 1909; Band 25, von Tischendorf to von Bülow, April 25, 1909

[22] Ibid., microfilm roll 98, Band 26, von Tischendorf to von Bülow, June 24, 1909.

[23] Ibid., June 19, 1909.

[24] Ibid., June 24, 1909; microfilm roll 97, Band 24, von Tischendorf to von Bülow, April 23, 1909, April 24, 1909; Band 25, von Tischendorf to von Bülow, April 25, 1909.

[25] Ibid., microfilm roll 97, Band 24, von Tischendorf to von Bülow, April 23, 1909; Band 25, von Tischendorf to von Bülow, April 25, 1909, April 30, 1909.

[26] Ibid., microfilm roll 98, Band 26, von Tischendorf to von Bülow, June 16, 1909.

[27] Capuchin Archives, File *Khoderbey 1910*, Fr. A.C., Briève relation sur Kodorbek; Paul Jacquot, *Antioche, centre de tourisme*, vol. III, Beirut, Imprimerie Catholique, 1931, pp. 506-07; Constant, *Capucins missionnaires*, p. 61; *Les massacres d'Antioche et de Tarse*, p. 28; da Terzorio, *Les missioni*, V, pp. 468-69; R.P.

Jérôme, "Au pays des massacres," *Les Missions Catholiques*, 41:2091(July 2, 1909), p. 316.

[28] Jérôme, "Au pays des massacres," p. 316. Actually, the Capuchin missionaries posted at Kheder Beg met with the mudir at Svedia several times. Consult Capuchin Archives, File *Khoderbey 1910*, Fr. A.C., Brièvе relation sur Kodorbek.

[29] Great Britain, FO 424, File 219, W.C. Packenham to Cecil F. Thursby, May 2, 1909. See also FO 861, File 58, David Douek's urgent telegram to British Consulate, Aleppo, April 22, 1909.

[30] Ibid., FO 195, File 2306, James Martin to A. Catoni, April 21, 1909. See also FO 861, File 58, Martin urgent telegram to British Consulate, Aleppo, April 22, 1909.

[31] Ibid., FO 424, File 219, Curzon-Howe to Admiralty, April 24, 1909; idem, Thursby to A. Curzon-Howe, April 26, 1909; idem, Lowther to Edward Grey, April 28, 1909; idem, Packenham to Thursby, May 2, 1909; idem, Curzon-Howe to Admiralty, May 12, 1909; FO 861, File 58, Douek telegram to British Consulate, Aleppo, April 26, 1909.

[32] Ibid., FO 195, File 2306, Inclosure in Consul Fontana's no. 10, of May 5, 1909: Vice-Consul Douek to Acting-Consul Catoni, April 30, 1909.

[33] Jérôme, "Au pays des massacres," p. 316; *Les massacres d'Antioche et de Tarse*, p. 28; Jacquot, *Antioche*, III, p. 507; Lytle, *James Martin*, p. 61; Constant, *Capucins missionnaires*, p. 61.

[34] Great Britain, FO 424, File 219, Packenham to Thursby, May 2, 1909.

[35] Ibid.

[36] *Asbarez* (Arena) (Fresno), July 16, 1909.

[37] Capuchin Archives, File *Khoderbey 1910*, Fr. A.C., Brièvе relation sur Kodorbek; Jérôme, "Au pays des massacres," p. 316.

[38] [Rose Ikarian Fiscus], "Rose's Story (as Recorded in 1953)," unpublished manuscript, p. 2. The location of the original manuscript is unknown. I have a copy.

[39] Varderes[ian], "Antakya Hadisesi," p. 471; *Tzayn Hayreniats* (Voice of the Fatherland) (Constantinople), May 15/28, 1909; *Asbarez*, June 18, 1909, July 2, 1909.

[40] *Asbarez*, June 18, 1909, July 2, 1909.

[41] Ibid., August 11, 1911.

[42] Ibid., June 18, 1909; Jérôme, "Au pays des massacres," p. 316; Jacquot, *Antioche*, III, p. 507. According to *Asbarez*, July 16, 1909, some Alawites rescued Armenian laborers by disguising them as Alawites.

[43] Jérôme, "Au pays des massacres," p. 316.

[44] Archpriest NersesTavugjian, *Tarapanki oragir* (Diary of Suffering), Toros Toranian, editor, Beirut, High Type Compugraph – Technopresse S.A.L., 1991, p. 28.

[45] Capuchin Archives, File *Khoderbey 1910*, Fr. A.C., Brièvе relation sur Kodorbek.

[46] Constant, *Capucins missionnaires*, pp. 61-62. For a partial list of the victims from Musa Dagh, consult Hakob Bampakian, "1909 i kotoradzin Musa-Taghi giugheren inkadz nahataknere" (The Martyrs from the Musa Dagh Villages Who Fell during the 1909 Massacre), unpublished manuscript, Anjar, Lebanon. Compare the Yoghun Oluk section of this list with the following: Archives of the Musa Dagh Monument-Museum, Musa Ler Town, Armenia, Sedrak Yesayi Haykazyan, "Husher u busher

Musa Leran 1915 t. inknapashtpanutyan orerits" (Memoirs and Thorns from the Days of the 1915 Self-Defense of Musa Dagh), unpublished manuscript, Notebook 4, n.p.

[47] *Asbarez*, July 2, 1909.

[48] Capuchin Archives, File *Khoderbey 1910*, Fr. A.C., Brièvе relation sur Kodorbek; *Asbarez*, July 23, 1909.

[49] Martin, "The Massacre of the Armenians at Antioch," p. 9; Iskenterian, *Husher*, p. 36. Sherpetjian's two companions were Karapet Tilkian from Bitias and Sedrak Iskenterian from Haji Habibli, both of whom escaped. Tavugjian, *Tarapanki oragir*, p. 23, cites the name of Karapet Re[n]jilian instead of Tilkian.

[50] Great Britain, FO 861, File 58, Martin to Fontana, June 16, 1909; *Asbarez*, July 23, 1909. According to Tavugjian, *Tarapanki oragir*, pp. 23-24, Sherpetjian and his companions spent the night at notable Gevorg Paljian's house in Kabusiye. The Mulazim surrounded the house with thirty to forty soldiers, ordered Paljian's guests out, Iskenterian escaped, Paljian and Karapet agha (Tilkian or Renjilian) tied up Sherpetjian, and the Mulazim killed him. Tavugjian thus implies treachery or betrayal, which is not evident in any other source.

[51] Great Britain, FO 861, File 58, Martin to Fontana, June 16, 1909.

[52] *Asbarez*, July 23, 1909.

[53] Ibid., June 18, 1909, July 16, 1909; Varteres[ian], "Antakya Hadisesi," p. 471; *Tzayn Hayreniats*, May 15/28, 1909; *Pahak* (Sentinel) (Boston), June 22, 1911.

[54] Gloria Hachigian Ericsen, private papers, Orlando, Florida, Vanes S. Yeghiarian to his brother, Movses Yeghiarian, August 1, 1909, Bitias.

[55] National Archives of the Republic of Armenia, Yerevan, Armenia, Class (*font*) 57, Index (*tsutsak*) 2, Document (*gordz)* 1828, Fr. Arsen Ter Arakelian and Vardan Varderesian to Catholicos of All Armenians Madteos, December 18/31, 1909, Haji Habibli.

[56] *Tzayn Hayreniats*, May 15/28, 1909; *Pahak*, June 22, 1911. *Asbarez*, June 16, 1911, reported that the Armenian leadership was contemplating sending 70-80 more widows from Antioch to Musa Dagh.

[57] Constant, *Capucins missionnaires*, p. 62; Jérôme, "Au pays des massacres," p. 316; *Les massacres d'Antioche et de Tarse*, pp. 28-29; Jacquot, *Antioche*, III, p. 507.

[58] Constant, *Capucins missionnaires*, p. 60.

[59] Tavugjian, *Tarapanki oragir*, pp. 13-27, 39-46. *Manusa* is defined as "a kind of striped or designed cloth (worn by peasants)." See *New Redhouse Turkish-English Dictionary*, İstanbul, Redhouse Press, 1974, p. 731.

[60] Lytle, *James Martin*, p. 61.

[61] Tavugjian, *Tarapanki oragir*, p. 19.

[62] Ibid., pp. 20-21.

[63] Germany, Türkei no. 134, microfilm roll 98, Band 26, von Tischendorf to von Bülow, June 29, 1909.

[64] Hachigian Ericsen, private papers, Yeghiarian to brother Movses, August 1, 1909.

[65] Armenian General Benevolent Union (AGBU), *Yeramia teghekagir* (Three-Year Report), Cairo, N. p., 1909, p. 22.

[66] Ibid., p. [57]. For the amount allocated for Musa Dagh, see also *Lusaber-Arev*, October 26, 1909, October 30, 1909.

[67] AGBU, *Yeramia teghekagir*, p. 22.

[68] Armenian Prelacy of Aleppo (APA) Archives, Aleppo, Syria, Section D, Minutes of the Prelacy Civic Council Meetings, File 40, minutes of the March 11, 1910, March 25, 1910, and April 29, 1910 sessions. The Prelacy Civic Council asked Zaki Sukyas, a Greek Orthodox merchant from Antioch then conducting business in Aleppo, to deliver the money to Antioch. Citing his absence from that city, Sukyas instead recommended Balji Zade, a reliable Turkish merchant from Antioch, to make that transfer. The Civic Council agreed.

[69] Armenian General Benevolent Union (AGBU) Archives, Saddle Brook, New Jersey (now in New York, New York), File 17 B, *Npast bashkhman tsutsakner 1906-1914, F-Z* (Lists of Relief Distribution 1906-1914, F-Z), Locum Tenens of Aleppo V. Rev. Shahe Gasparian to Chairman and Members of the AGBU Central Administrative Board in Cairo, April 15/28, 1910.

[70] Ibid.

[71] Hakob H. Terzian, *Kilikio aghete* (The Calamity of Cilicia), Constantinople, H. Asaturian and Sons Printing, 1912, pp. 817-18. For the full membership rosters of both components of the International Relief Committee, see *Biuzandion*, May 13, 1909.

[72] *Biuzandion*, November 23, 1909. See also [Teny Pirri-Simonian, compiler and editor], *100 ans du génocide arménien: Mémoire et reconnaissance*, Antelias, Lebanon: A publication of the Armenofas Foundation/Catholicosate of Cilicia Press, 2015, p. 142.

[73] *Biuzandion*, November 20, 1909.

[74] APA Archives, Section D, File 41, The Income-Expense of the Victims' Chest for 1 January 1910-14 April 1910.

[75] *Asbarez*, October 22, 1909, also mentions two additional sums of 3,000 francs and 1,000 francs sent from Fresno. The way they are described is somewhat vague.

[76] Ibid.

[77] Ibid.

[78] Ibid., October 15, 1909. The "Thank You" letter indicates the sum of 43.5 liras instead of 130.5 liras. This discrepancy may be explained as follows: Either the larger amount was sent in installments (of which 43.5 liras was one installment), or, perhaps, the people of Fresno donated money twice, one sum being 130.5 liras and the other 45.5 liras (in addition to the 50 liras referred to in the text). The letter was signed by notables Movses Renjilian, Abraham H. Renjilian, and Vanes S. Yeghiarian (Ikarian) from Bitias; Martir Iskenterian and Grigor Margarian from Haji Habibli; and Khoren T.K Kiulyuzian and Hovhannes Geppurian from Yoghun Oluk. See *Asbarez*, October 15, 1909.

[79] Capuchin Archives, File *Khoderbey 1910*, Fr. A.C., Brière relation sur Kodorbek; Tavugjian, *Tarapanki oragir*, p. 19.

[80] *Biuzandion,* December 5/18, 1909.

[81] *Asbarez*, January 28, 1910.

[82] APA Archives, Section D, File 40, minutes of the February 18, 1910 session.

[83] Ibid., File 41, minutes of the April 29, 1910 session.

[84] Ibid., File 40, minutes of the February 24, 1910 session.

[85] Ibid., File 41, minutes of the April 29, 1910 session.
[86] Ibid., minutes of the July 22, 1910 and August 5, 1910 sessions.
[87] Ibid., minutes of the March 13/26, 1911 session.
[88] Ibid., File 40, minutes of the February 11, 1910 session.
[89] Ibid., minutes of the February 18, 1910 session.
[90] AGBU Archives, File 17 B, V. Rev. Gasbarian to Chairman and Members of the AGBU Central Administrative Board in Cairo, May 4, 1910.
[91] APA Archives, Section D, File 41, minutes of the July 8, 1910 session. The fathers were Ghazar Ter Ghazarian and Haji Avetis Hasirjian.
[92] Ibid., File 41, minutes of the May 26, 1911 session.
[93] Ibid., minutes of the June 30, 1911session.
[94] Ibid., minutes of the July 14, 1911 session.
[95] Terzian, *Kilikio aghete*, pp. 826-29.
[96] *Pahak*, October 15, 1914.
[97] Terzian, *Kilikio aghete*, p. 833. In the source, the total number of widows in Antioch is put at 122, which is a calculation error.
[98] Tavugjian, *Tarapanki oragir*, p. 29.
[99] APA Archives, Section D, File 41, minutes of the March 20, 1910 mixed session; minutes of the June 3, 1910 session.
[100] AGBU Archives, File 17 B, V. Rev. Gasparian to the Chair and Members of the AGBU Central Administrative Board in Cairo, May 21, 1910, June 8, 1910.
[101] Tavugjian, *Tarapanki oragir*, pp. 35-38.
[102] APA Archives, Section D, File 41, minutes of the July 8, 1910 session.
[103] Tavugjian, *Tarapanki oragir*, pp. 38-39.
[104] Ibid., p. 42.
[105] Ibid., pp. 41-42.
[106] Germany, Türkei no. 134, microfilm roll 98, Band 26, von Tischendorf to von Bülow, June 29, 1909.
[107] *Asbarez*, January 28, 1910.
[108] Tavugjian, *Tarapanki oragir*, pp. 41-42.
[109] Kévorkian, *The Armenian Genocide*, p. 95.
[110] Ibid., p. 96.
[111] Aram Mirzoyan, "Vorbakhnam gordzuneutyune 1909 T. Adanayi yev Halepi nahangnerum teghi unetsadz charderits heto" (Orphan Care Activity after the 1909 Massacres in the Provinces of Adana and Aleppo), *Journal of Genocide Studies* (a publication of the Armenian Genocide Museum-Institute, Yerevan) 1:1 (2013), p. 95.
[112] *Azatamart* (Freedom Battle) (Constantinople), September 12/25, 1910.
[113] Vahan Kiultalian, "Kilikio agheten verch" (After the Cilician Calamity), "*Tatev" Kronakan Taretsuyts* ("Tatev" Religious Almanac) (Aleppo), 4th year (1928), pp. 238-40.
[114] *Biuzandion*, January 12, 1912.
[115] Catholicosate of Cilicia Archives, Antelias, Lebanon, File 23/1, *Antiok 1914-1940* (Antioch, 1914-1940), Fr. Harutiun Tumayan to Catholicos Sahak II, March 4/17, 1915.
[116] *Biuzandion*, July 15, 1909.

[117] Ibid., July 22, 1909.
[118] Ibid.
[119] Ibid., August 24, 1909; Cholakian, *Kesap*, I, p. 98.
[120] "Srtajmlik lurer Antioken" (Heartrending News from Antioch) *Tajar* (Cathedral/Temple) (Constantinople), 2nd year, no. 4 (January 31, 1911), pp. 70-71.
[121] *Miutiun* (Union) (Cairo), 1st year, no. 10 (October, 1912): 150; 2nd year, no. 21 (September, 1913), p. 129.
[122] "Srtajmlik lurer Antioken," p. 71.
[123] *Miutiun*, 2nd year, no. 17 (May, 1913): 80. The donors were : 20-piaster category: All from Yoghun Oluk: Fr. Abraham Ter Galustian, Nerses Gazanjian, Japra Gazanjian, Poghos Karpushian (Shemmassian), Martiros Geppurian, Gevork Shrigian, Poghos Karipian; 15-piaster category: From Haji Habibli: Sedrak Iskenterian, Yorki Iskenterian, Asatur Iskenterian, Iskenter Iskenterian, Hovnan Iskenterian, Hovsep Tutaglian, Grigor Margarian, Haji Khacher Martirian; from Bitias: Movses Chaparian, Abraham Renjilian, Hovhannes Hovhannesian; from Antioch: Sahak Aramian, Harutiun Ter Asaturian, Yesayi Yerkatagordzian.
[124] *Miutiun*, 2nd year, no. 18 (June, 1913), p. 89.
[125] Great Britain, FO 195, File 2306, Martin to Fontana, June 19, 1909.
[126] Ibid., Fontana telegrams, June 17, 1909, June 23, 1909.
[127] Germany, Türkei no. 134, microfilm roll 98, Band 26, von Tischendorf to von Bülow, June 16, 1909.
[128] Ibid., June 24, 1909.
[129] Ibid., June 19, 1909.
[130] Ibid., June 24, 1909.
[131] Ibid., FO 195, File 2307, FO 861, File 58, FO 424, File 221, Fontana to Lowther, October 3, 1909.
[132] Ibid.
[133] Ibid., FO 195, File 2337, FO 861, File 59, Fontana to Lowther, March 5, 1910.
[134] Ibid., May 30, 1910. The released Turkish notables included Kaiseri Zade Hadji Nahad, Khalaf Aga Zade Husni, Bereket Zade Refaat Aga, the Ex-Kaimakam Muharem Pasha, Veresh Aga Zade Sheikh Omar, and his clerk, Ibrahim Bin Mohammed.
[135] Great Britain, FO 195, File 2337, FO 861, File 59, Fontana to Lowther, March 5, 1910.
[136] Ibid., May 30, 1910.
[137] Ibid., File 2366, Fontana to Lowther, May 3, 1911.
[138] Isobel Lytle, private papers, Newtownabbey, N. Ireland, Martin 7. Doc., "Ten Years of the Antioch Mission, 1905-1915," p. 10.
[139] Great Britain, FO 195, File 2366, Fontana to Lowther, May 3, 1911.
[140] Ibid., April 25, 1911, May 31, 1911; idem, Fontana telegrams no. 20, urgent, April 19, 1911, no. 26, April 27, 1911, no. 27, May 2, 1911.
[141] Lytle, private papers, Martin 7. Doc., "Ten Years of the Antioch Mission, 1905-1915," p. 10; Lytle, *James Martin*, p. 62.
[142] Great Britain, FO 195, File 2366, Fontana to Lowther, April 25, 1911.
[143] Ibid., May 31, 1911.

[144] Ibid., FO 861, File 60, Martin to Fontana, May 6, 1911.
[145] APA Archives, Section D, File 41, minutes of the January 11, 1913 session.
[146] Lytle, private papers, Martin 7. Doc, "Ten Years of the Antioch Mission, 1905-1915," p. 14; Lytle, *James Martin*, p. 64.
[147] *Pahak*, May 22, 1913.
[148] APA Archives, Section D, File 40, minutes of the February 4, 1910 session.

Մուսա Տաղը՝ Օսմանեան Սուրիոյ Հիւսիս-Արեւմտեան Շրջանը, 1909ի Կիլիկեան Կոտորածներու Շրջանին

(Ամփոփում)

Վահրամ Շեմմասեան
Vahram.shemmassian@csun.edu

Հեղինակը լուսարձակի տակ կ'առնէ 1909ի կիլիկեան կոտորածներուն զուգահեռ՝ Օսմանեան Կայսրութեան ենթակայ Սուրիոյ հիւսիս-արեւմտեան հայաբնակ վայրերուն մէջ տեղի ունեցած ջարդերն ու վնասները եւ անոնց հետեւանքները:

Ներկայացնելէ ետք Անտիոքի, Քեսապի, Հալէպի եւ շրջակայքի հայոց դիմագրաւած սպանդն ու հետապնդումները, կողոպուտը, քանդումներն ու արտաքսումը, հեղինակը կը մանրամասնէ այդ շրջանի Մուսա Լեռան հայութեան դիմագրաւած ահաբեկումի վտանգը, ջարդ-կողոպուտ-աքսորի սարսափն ու սպառնալիքը, մուսալեռցիներու դիմադրութիւնը, օսմանեան տեղական իշխանութեանց մասնակցութիւնը սպանութիւններուն, օտար միջամտութիւնը՝ կանխարգիլելու-սահմանափակելու յարձակումներն ու սպանդը, ապա նաեւ՝ իւրաքանչիւր յարանուանութեան կրած զոհերուն թիւը, կը ներկայացնէ հետեւանքները՝ հրկիզուած տուն ու խանութներու, որբերու եւ այրիներու թիւերը, նիւթական վնասները՝ ըստ գիւղի:

Հեղինակը կ'անդրադառնայ նաեւ կոտորածներուն եւ աւերին արտասահմանեան արձագանգին, Մուսա Լեռ փութացուած հայ (միութենական եւ եկեղեցական) թէ օտար նպաստներուն:

Հուսկ, հեղինակը կ'արժեւորէ կոտորածէն ետք տեղի ունեցած եւ ջարդարարութեան տարողութեան չհամապատասխանող կեղծ դատավարութիւններուն:

ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ 1909Ի ԿԻԼԻԿԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՕՐԵՐՈՒՆ ԱԼԵՔՍԱՆՏՐԷԹԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՄԱՍԻՆ

Միհրան Մինասեան
mihran.min@gmail.com

ՄՈՒՏՔ

Համեմատաբար քիչ գրուած է Ալեքսանտրէթ (Իսքենտէրուն) Գաւառակի փոքրաթիւ հայկական գաղթօճախին մասին: Շրջանի հայաբնակ քաղաքներու եւ աւաններու անցեալը լուսաբանող առանձին մենագրութիւններ չկան: Անոնց մասին, իբրեւ սկզբնաղբիւր կարելի է նկատել պարբերական մամուլի էջերուն ցրուած քանի մը թղթակցութիւն, յուշագրութիւն եւ արխիւային անտիպ փաստաթուղթեր միայն, իսկ պատմագրութեան մէջ գաւառակի հայութեան մասին եղած հարեւանցի ակնարկութիւնները հեռու են դարերու անցեալ եւ պատմական աւանդ ունեցող գաղթօճախին մասին լիարժէք ու ամբողջական պատկերացում տալէ:

Ծանօթ է, որ 1909ի Կիլիկեան Կոտորածները ընդգրկած են աշխարհագրական ընդարձակ տարածք, որ ներառած է Ատանայի ամբողջ նահանգն ու անոր սահմանակից Հալէպ Նահանգի կարգ մը շրջանները: Օսմանեան Հալէպ նահանգի, Հալէպ Գաւառի՝ Ալեքսանտրէթ Գաւառակի կեդրոն համանուն քաղաքը թէեւ ուղղակիօրէն չէ ենթարկուած կոտորածի, բայց եւ այնպէս նոյն գաւառակի կարգ մը գիւղեր զերծ չեն մնացած ջարդերէն եւ ունեցած են մարդկային ու նիւթական մեծ կորուստներ: Անոնք բաժնած են Ատանայի հայութեան վիճակուած ճակատագիրը, ինչպէս օրինակ՝ Գրըգխան գիւղը, որուն հայ բնակչութիւնը մեծամասնութեամբ կոտորուած է: Գաւառակի միւս աւաններուն մէջ պատահած են մասնակի սպանութիւններ, կողոպուտներ եւ աւերածութիւններ, որոնք բարեբախտաբար չեն վերածուած համընդհանուր կոտորածի:

Կիլիկեան Կոտորածներէն աւելի քան դար մը ետք, տակաւին անոր մասին չհրապարակուած եւ չուսումնասիրուած արխիւային հսկայ նիւթ կայ հայ թէ օտար դիւանատուներու մէջ: Կոտորածներուն վերաբերող անտիպ փաստաթուղթերու հաւաքածոյ մըն ալ կայ Բերիոյ Թեմի ազգային առաջնորդարանի դիւանատան մէջ, որմէ հրատարակութեան կու տանք Ալեքսանտրէթ Գաւառակի հայութեան վերաբերող երեք անտիպ փաստաթուղթեր: Ասոնք գրուած են Ալեքսանտրէթի առաջնորդական փոխանորդ Տէր Գրիգոր Քհնյ. Մինասեանի կողմէ եւ կը նկարագրեն ոչ միայն գաւառակի հայաբնակ վայրերուն մէջ պատահած սպանութիւններն ու աւերածութիւնները, այլ նաեւ կը փոխանցեն վախի ու

սարսափի այն մթնոլորտը, որուն մէջ ապրած է տեղւոյն հայութիւնը կոտորածներու օրերուն: Առաջին երկու փաստաթուղթերը դէպքերուն մասին օրը օրին տրուած լրատուութիւններ են, իսկ երրորդը՝ Հալէպէն յղուած հարցարանի մը ամփոփ պատասխանը:

Առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ դրուող այս անտիպ նիւթերը նոր լոյս կը սփռեն ոչ միայն Ալեքսանտրէթի Գաւառակի հայութեան անցեալի մութ մնացած կարգ մը կարեւոր դրուագներուն վրայ, այլ նաեւ կ'ընդարձակեն Կիլիկեան Կոտորածներուն մասին մեր պատկերացումները, որովհետեւ այդ ջարդերուն նուիրուած հայերէն թէ օտարալեզու գրականութեան մէջ եւս բացակայ է Ալեքսանտրէթի Գաւառակը:

Փաստաթուղթերը հրատարակութեան կու տանք նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան, պահելով լեզուական եւ ուղղագրական անհարթութիւնները:

Փաստաթուղթերուն կցած ենք անհրաժեշտ ծանօթագրութիւններ, ուր սակայն առանձին-առանձին չենք նշած 1915ին այստեղ յիշատակուող բնակավայրերու հայութեան վերապահուած ճակատագիրը, որովհետեւ բոլորի պարագային ալ նոյնն է այն՝ աքսոր, կոտորած եւ Զինադադարին տասանորդուած վերապրողներու վերադարձ հայրենի տուն:

ԱԼԵՔՍԱՆՏՐԷԹ ՔԱՂԱՔԸ

Ալեքսանտրէթ կամ Իսքենտէրուն պատմական քաղաքը կը գտնուի Միջերկրականի հիւսիս-արեւելեան ափին, Հայոց Ծոցի վրայ: Կիլիկեան Հայոց Թագաւորութեան ժամանակ, ան շրջան մը մաս կազմած է հայկական պետութեան, իսկ ուշ միջնադարուն՝ եղած է Հալէպի գլխաւոր նաւահանգիստը:

1902ին ունեցած է 125 տուն հայ եւ 100-150 պանդուխտ քեսապցի բանուորներ: Տեղւոյն հայերը ունեցած են եկեղեցի մը եւ 60 մանչ ու 45 աղջիկ աշակերտներով զոյգ վարժարաններ[1]: 1913ին քաղաքը ունեցած է 4500 հայ բնակիչ, Ս. Քառասուն Մանկունք եւ Ս. Խաչ հայկական եկեղեցիները եւ 4 վարժարան[2]: Այլ աղբիւր մը՝ 1914ին տեղւոյն հայութեան թիւ նշած է 1950 անձ, որոնք ունեցած են Ս. Աստուածածին եկեղեցի եւ 150 աշակերտ ունեցող ազգային վարժարան: Ալեքսանտրէթ եւ մօտակայ Պէյլան Գաւառակները Ա. Աշխարհամարտի նախօրեակին ունեցած են 16 հայաբնակ աւաններ՝ մօտաւորապէս 14 հազար հայ բնակչութեամբ[3]: Ալեքսանտրէթի հայաբնակ գիւղերէն պիտի յիշել Նարկիզլիկը կամ Ներկիզլիկը, Աքչայը, Քըշլան կամ Քըշլա Տերէսին, Գարա Աղաճը, Ֆարթըսլըն, եւն.: Իսկ մօտակայ Պէյլան Գաւառակի հայաբնակ գիւղերէն՝ Աթըքը, Գրըգխանը, Գանլը Տերէն, Կէօզէլլին, Սովուք Օլուքը եւն.:

Համաշխարհային Առաջին Պատերազմի զինադադարէն ետք, կարճ ժամանակով, շրջանը գրաւած են անգլիացիք, ապա՝ ֆրանսացիք, իսկ

1920ին ան մտած է Սուրիոյ կազմին մէջ մինչեւ 1939, երբ ֆրանսեւթրքական համաձայնագրով, ամբողջ գաւառակին հետ բռնակցուած է Թուրքիոյ:

Ա.

Իսկէնտէրուն, 24 [Ապրիլ]/7 Մայիս 1909

Գերապատիւ
Տ. Շահէ Վարդ. Գասպարեան[4]
փոխ-առաջնորդ Ս. հայր վիճակին Հալէպու
Հալէպ

Գերապատիւ Ս. հայր,

19/2 եւ 21/4 Մայիս թուեալ խնդրագրերս կը հաստատեմ որով կարեւորն ծանուցած էի:

Իսկէնտէրուն.- Տեղւոյս ապահովութիւնը բաւական երաշխաւորեալ է, հետզհետէ զինուորներ կը հասնին եւ կը մեկնին այսր անդր: Երէկ Տէօրթ-Եօլ[5] թափուր[6] մը եւս գնաց թէ հոն մնալու կամ անցնելու համար չեմ գիտեր: Օսմ. զրահաւոր մ'ալ եկած է Համիտիյէ անուն որ երկու օր Փայաս[7] եւ Տէօրթ-Եօլի առջեւ խարսխելով հոս վերադարձաւ, իտալական մարտանաւն ալ միեւնոյն շրջանը միեւնոյն կերպով ըրաւ կարծես հետապնդման ձեւի մը տակ: Կայ նաեւ ֆրանսական մարտանաւ մը, իսկ անգղիականն Սուէյտիյէ[8] կ'երթայ հոն լեռները ապաստանողները փնտռելու եւ ժողովելու համար, մինչեւ ցարդ 1600ի մօտ հարս աղջիկ մանուկ էրիկ մարդ (քիչ) ժողված է կ'ըսուի: Երէկ ֆրանս. հիւպատոսի պահանջման վրայ Նարկիզլիք[9] Ագչայ[10] այրուած տները քանի ընտանիք ընդ ամէնն քանի հոգի անպատսպար (առանց տան) մնացողաց քանակը ուզեց եւ մատուցի, գումար 115 հոգի 18 ընտանիք եւ 37 տուն այրած են այս երկու տեղերու մէջ:

Պատճէնն ներփակ հեռագրոյն պատասխանը վիլայէթէն[11] հոս հրամայուած է, ինչ պարունակութեամբ կամ հարցասիրութեամբ եղած ըլլալը չեմք գիտեր, սա գիտեմք որ հեռագիր տուողները երէկի օր նեղեցին, երկար հարցաքննեցին բանիւ բերանոյ գրողն փնտռեցին եւ որովհետեւ նպաստից մասնաւոր գօմոսիօն[12] մը կազմուած է այդ հեռագիրը հոն փոխանցուած է, նոյն գօմոսիօնի մէջ մի հայ եւ մի յոյն կայ անոնց ցարդ տեղեկութիւն տուած չեն հեռագրի պարունակութենէն, անոնց ալ անկ եղածը խօսեցայ որ 'ի պահանջել հարկին անվախ գտնուին եւ անկ եղածը խօսելէ եւ գործադրել տալէ չը քաշուին, հոս ալ ինչպէս կը լսեմք Իթթիհատի ընկերութիւն մը կայ 38 անդամէ բաղկացեալ, ոչխարագլուխ գայմագամ[13] մը, գատըն[14], պելետիյէ րէիսին[15], մալմիւտիրին[16], գանձապետը, շէրիէ քեաթիպին[17] գլխաւորներն են, եւ արդէն մէճլիսի իտարէին[18] մէջ քրիստոնեայ անդամ չկայ, անոնք Կարապետ Քէշիշեան եւ Փեթրօ Ֆիլիպպին արդէն շատոնց մեկնած է,

ուրեմն մէճլիսի իտարէ ըսելով միայն թուրք տարրը կայ, որուն մէկն ալ բարի լինելուն կարեւորութիւն չունի, այս մէճլիսի իտարէին գլխաւոր ղեկավարն է պէլէտիյէ րէիսին, Պէյազիտ էֆ. արդէն պաշտօնապէս արատաւորեալ եւ դատարանէ ատենին խստիւ մերժուած մի անձ, չեմ գիտեր վալի[19] փաշան սորա եւ սոցա հանդէպ եղած բողոքանաց հակառակ կը սիրէ պահել իրեն պաշտօնին մէջ, եւ իանէ (նպաստից) գօմիսիոնի երեք-չորս թուրք սպաներն Իթթիհատի Մուհամմէտի[20] անդամներէն են, գործ ունիմք եւ որչափ որ կարելի է պիտի աշխատին տուներնին թալնուած խեղճ հայերը տուն վերադարձնել առանց անոնց բողոքներուն կարեւորութիւն տալով:

Ասկէրիյէ գօմանտանը[21] երէկ կանչելով ինձ ըսաւ որ հիմա շիֆրէ[22] հեռագիր ստացայ կոտորած եւ թալան ընող եւ սարքողները պիտի պատժուին խստիւ, եղած դէպքերու մասին ինչ տեղեկութիւն որ ունիս թղթով մը ինձ գրէ, ուրիշի ալ յանձնարարեցի որ ընեն ըսաւ:

Կառավարութիւնը երկու օրէ ‘ի վեր տուներնին թալնուած եւ կողոպտուածներուն երբեք բան չը տար (օրապահիկ) այլ միայն տներնին այրուողներուն կը տայ, դարձեալ <u>մեր կողմանէ կը նայուին</u>: Նարկիզլիկի մէջ առ ահի իսլամացած 16 հոգի կայ եւ գաղտագողի, խեղճերը հոս չեն գար վախնալով որ կ'սպաննուին եւ առ ահի ալ չեմք երթար կ'ըսեն, թէեւ անցեալ օր վերադարձէս յետոյ ոստիկան ղրկեցի դարձեալ չեկան առ ահի գիտեմ, ժամանակ ալ չ'ունիմ դարձեալ հոն երթալու:

42ի մօտ մարաշցի եւ ուլնեցի[23] ուխտաւորները ցարդ չը կրցանք ղրկել ճանապարհաց անապահովութեան պատճառաւ:

Տէօրթ-Եօլ խաղաղ կ'երեւի բայց ապագան մութ է: Էրզինի[24] մութասարըֆը[25] տուներնին թալնուած եւ բոլորովին այրուելով դաշտ եղած նաճարլըցիները[26] բռնութեամբ ղրկել կը ջանայ, տուն չկայ, անկողին չկայ, հաց չկայ, ո՞ւր երթանքի ի պատասխան շրջակայ թրքերու տները գացէք, հոս (Տէօրթ-Եօլ) չը պիտի թողում զՁեզ ըսելով կը պնդէ, միայն իտալական մարտանաւուն Տէօրթ-Եօլի առջեւ երեւմամբը մի քիչ կը կակղանայ: Այսօր լուր չ'առի ցարդ յուսամ խաղաղ են:

<u>Պէյլան</u>[27] խաղաղ է թէեւ երէկ վախի ձայներ կային տեղւոյն մէջ ալ երէկի օր <u>սագրթցի</u> գիւղէն երկու ժամ հեռաւորութեամբ թրքաբնակ գիւղի մը 9-10 թուրք կանայք կառավարութեան դիմելով շատ մը հայեր մեր գիւղի վրայ յարձակեցան եւ յարձակելու վրայ են ըսելով խուճապ ձգեցին, կառավարութիւնը յերուրանք ըլլալը հասկցաւ եւ առանց հարցուփորձի ետ խրկեցին, հեռագիր տուողները (մերայինք) կուսակալէն խստիւ կը հարցաքննուին, մինչդեռ ասանկ խուճապ ձգողները ծիծաղով մը կը ղրկեն:

Գըրըգխան[28] եւ շրջակայքը սպաննուած են 110 հայ, որոնց տասի մօտը կին, 15 հոգի անյայտացած կամ բռնի թրքացուած: 437 հոգի անպատսպար խեղճ եւ օրական հացի կարօտ մնացած են: Պէյլան

քահանայ հօր[29] գրեցի որ ինձ տեղեկագիր ղրկէ- մանրամասն հոս ինձմէ պահանջողներ կան, տեղւոյս մէջ թալնուած եւ այրուած տներու կահ կարասեաց, կենդանիք, գրաստ, արջառ, ոչխար եւ այլն առանձին մանրամասն իւրաքանչիւր տան հաշիւը պատրաստել տալով մասնաւոր տետրակի մէջ արձանագրել կ'աշխատիմ, վնասուց հաշիւ մը հանելու համար:

Ինձ վերադարձուած նամակներուս գօբիան առնելով առանձին ծրարով մը այսօր յետս կը վերադարձնեմ:

Համբուրիւ Ս. Աջոյն հայրութեան, որոյ օրհնութեանց եմ յար կարօտ

Գրիգոր Քհնյ. Մինասեան[30]

Պելֆանթօ Գաթօնիին[31] յանձնուած է դրամը օսմ. պանքայի կողմանէ, զի պանքան ինձ այսպէս հրահանգ տրուած է ըսաւ, անոնք ալ դրամ չտալ կ'ուզեն, այլ ալիւր եւ ուտելիք: Տեսնենք:

Յետ գր.: Երէկ հետեւեալ հեռագիրն ստացայ. "Église arménienne, Recovery ottombank 200 livres turcs pour Arméniens Dortyol et environs - Union Arménienne"[32]:

Բ.

Իսկէնտէրուն Գազայի[33] պատկան գիւղերու մէջ սպանեալ հայերու անուանքն[34]

Նարկիզլիք

1- Մահտեսի Գրիգոր Մարօնեան, տարիք 62: Սպաննիչք ներկիզլիկցի Ալիճան օղլու[35] Մօհամմէտ Ալիւշ, եղբայրը եւ րէտիֆ զինուոր[36] Քէլ Օղլան Օղլու Ապտիւլլահ եւ այլք:

2- Աւետիս Մարտիկով Էօրտէկեան, տարիք 23:

3- Յովսէփ Պօղոսով Էօրտէկեան, տարիք 25:

4- Գէորգ Սարգիս Էօրտէկեան, տարիք 22:

5- Միք[ա]էլ Օղլու, տարիք 36:

Սպաննիչք.- Էմիր Օղլու Մօհամմէտ, Գուրտուշ Իպրահիմ Օղլու, Քէօսէ Օղլու Ահմէտ, գիւղաժողովի անդամ Մըսթըգ, Քէօր Ահմէտ, նաեւ 3 րէտիֆ զինուորներ միասին գիւղէն քաղաք գալու ճանապարհին՝ Միք[ա]էլ Օղլուն Ներկիզլիկի ստորոտը կամուրջի մօտ իսկ Աւետիսը Յովսէփը Գէորգը ջրաղացքի մօտիկը կը յօշոտուին եւ դիակներն (վերջի երեքին) յօշոտեալ վիճակին մէջ բերել տալով թաղուած են, իսկ Միքայէլ Օղլուն անթաղ փճացած:

6- Պէյլանցի Սողոմոն տարիք 19: Ներկիզլիկի պարտէզներու վերջացած ձորի մէջ բահով եւ ուրագով յօշոտուած: Սպաննիչը Էմիր

Մօհամմէտ Օղլու Ալի, թաղուած է զարնուած տեղւոյն մօտ, սպանման գործիք բահով եւ ուրագովը:

Գարա Աղաճ[37]

7- Սարգիս Գարապաճագեան, աթոռակալ[38] Պէյլանու, տարիք 42: Յիշեալը Գարա Աղաճ գիւղին մէջ գտնուած ագարակէն Իսկէնտէրուն գալու համար երկու րէտիֆ զինուորներու եւ երեք ալ այլ անձանց ներկայութեամբ Պէրէքէթ Օղլու Սալէհ Ճապուրի հետ 4 մէճիտի վարձքով՝ անվնաս Իսկէնտէրուն հասցնելու կը սակարկուի, եւ դրամն ալ գանձելով ճամբայ կը հանուի դէպ Իսկէնտէրուն, բայց ճամբան կը փճացուի անշուշտ յիշեալ Ճապուր Սալէհի ոճրագործութեամբը:

8- Կօշկակար Պետրոս Պետոյեան, տարիք 55: Պէյլանի ճամբան յօշոտուած, սպաննիչը անծանօթ:

Ֆուրթըսլը[39]

9- Մինաս Օղլու Յակովբ, տարիք 35:

10- Ասոր փեսան տարիք 25:

Ասոնք Ֆուրթըսլը գիւղէն Արաբ Տէրէսի[40] գիւղը գալու ճամբուն կ'սպաննուին, սպաննիչք Հովիտ[41] գիւղացի Աֆթիյտ աղա Օղլու Րէշիտ կը կարծուի:

Վերոգրեալ սպանեալներու սպաննիչք եւ նոյն գիւղերու մէջ գտնուող հայ բնակչութեան (Ներկիզլիկ, Գըշլա Տէրէսի[42]) տներն թալանող եւ զոմանս ալ յետ թալանի այրող ոճրագործաց հետ բանտարկուած են եւ նախնական քննութիւնք առնուած:

Գ. Քհնյ. Մինասեան

1909 Յունիս 2
յԻսկէնտէրուն

Գ.

Իսկենտերուն 13 Յուլիս 1909

Հարցարան.

1. Կոտորածք, աւառարութիւնք, հրձգութիւնք ե՞րբ եւ որպիսի՞ պարագաներով տեղի ունեցան:

Պատասխանիք.

1909 Ապրիլ 2ի հինգշաբթի լոյս գիշերանց խուճապ մը տեղի կ'ունենայ, յանկարծակի գիշերանց րէտիֆ զօրք ժողովելու նպատակի մը տակ, Ապրիլ 2ին տեղակալը ամէն տարրէ գլխաւորները կանչուեցան եւ խուճապը րէտիֆ զօրք ժողովելու հանգամանքէն յառաջ եկած լինելը յետ բացատրութեան ժողովրդեան յորդորներ կարդացին որ ոեւէ խռովութեան առիթ չտրուի, ամէն տարր իւր տգէտները յորդորելով եւ

խրատելով եւ իմամն[43] ու քահանայք ալ ճամիէն[44] եւ եկեղեցիէն խօսին ժողովրդաց խաղաղութեան պահպանման, արդէն այս յորդորականներու գաղտնի խորհուրդներու անտեղեակ եւ զարմանալի կը թուէր այն ատեն, յաջորդ օր Ապրիլ 3 ուրբաթ շրջակայ գիւղերէ թիւրք տարրը զինեալ քաղաքը կը գայ ինչպէս նաեւ շատեր ալ քաղաքի շուրջը պարտէզներու մէջերը եւ ետեւները ‘ի թագստի կը մնան, եւ հրացաններու արձակման նշանի վրայ անոնք ալ միանալով քաղաքամիջի թուրք խուժան գիւղացիներու հետ անխտիր թալանել այրել առեւանգել որոշած են բոլոր քրիստոնեայ տարրերը:

Միջօրէի աղօթքին միւֆթի[45] էֆ. ըստ իւր խոստման քարոզեց ժողովրդեան ազդեցիկ կերպով այնպէս որ համարձակութիւնը չ'ունեցան ոչինչ առնել եւ շատերը դժգոհ մնացին այս քարոզէն եւ խօսքեր հանեցին թէ՝ միւֆթի էֆ. կաշառք առած է հայերէն եւ յետմիջօրէին իրենց տեղերը մեկնեցան երեւակայական եւ երազական հաշիւներէ յուսահատ եւ սպաճըլցիներէն եւ ագչայցիներէն (թրքաբնակ գիւղք) կը թալնեն իրենց ճանապարհաց վրայ գտնուած Ագչայի հայաբնակ թաղի 8 տները Սեմին աղայինն ալ բռնկցնելով ու այրելով մինչ 8 տուն հայեր քաղաք կը հասնին ուղղակի կամ տարբեր ճամբաներով:

Ապրիլ 4ին առաւօտուն կ'այրուին Ագչայի մնացեալ եօթը տներն ալ մինչ երեկոյէն ոստիկան զինուոր ղրկուած էր այրումէ պահպանութեան համար, սոյն աւուր մէջ կ'սպաննուին Ֆուրթըսլի հայ գիւղի բնիկներէն եւ ճանապարհի վրայ Թէմուրճեան Յակովբ եւ որդին Յարութիւն, սպաննիչք անծանօթ եւ կ'այրուին Գըշլա Տէրէսիի հայ բնակչութեան 12 տներէն 8 տներ յետ թալանէ, ինչպէս նաեւ Ներկիզլիկի գիւղէն ալ (խառն բնակչութեամբ) 4 հայոց տներ, մնացեալներն ալ թալանելով սոյն երկու տեղերու հայ բնակչութիւնը մազապուրծ արշալոյսի մօտ ինչպէս նաեւ Պէյլանի պատկան Սօուգ-Օլուգ[46] Կէօզէլլի[47] հայ գիւղերու բնակչութիւնը մազապուրծ եւ վրայի զգեստներով հազիւ կը հասնին Իսկէնտէրուն գաղտագողի ճամբաներով, յաջորդ օր կ’սպաննուին Ներկիզլիկի մէջ մնացողներէն Գրիգոր Մարօնեան եւ պէյլանցի Սողոմոն, իսկ Ներկիզլիկէն միասին մեկնող 3 րէտիֆ զօրքերով եւ Էմին Օղլու Մահմտ, Գուրտուշ, Քէօսէ Ահմէտ եւ Մըսթըգով քաղաքի ճամբուն վրայ եւ կամուրջի մօտ Միքայէլեան Միքայէլ եւ ջրաղացքի մօտ ալ Աւետիս Մարտիկով եւ Յովսէփ Պօղոսով եւ Գէորգ Սարգիսով Էօրտէկեանք կը զարնուին եւ կը յօշոտուին, սոցա սպաննիչները միասին եկողները լինելու են եւ են արդէն: Յետ մի քանի աւուրց կը կորսուի նոյն ջրաղացքի տէր պէյլանցի Գարապաճագեան Սարգիս աղան որ 4-5 թուրք անձանց ներկայութեամբ եւ վկայութեամբ եւ 4 արծաթ մէճիտ վարձքով անվնաս Իսկէնտէրուն յանձնուելու պայմանաւ Ճապպուր Սալէմով ճամբայ ելած էր, անշուշտ սա ալ Սալէմ Ճապպուրով եւ համախոհներովը կը փճացուի,

Սարգոյի ձին եւ վրայի դրամներն իւրացնելու համար որ 150 ոսկւոյ գումար մ'է կ'ըսուի:

2. Այս խժդժութեանց թելադրիչք որո՞նք էին, քանի՞ն ձերբակալուած են, անոնց նկատմամբ ի՞նչ տնօրինութիւն եղած է եւ ո՞յք ոմանք ազատ կը մնան:

Թելադրիչները քաղաքամիջի յետադիմական ազդեցիկներէ եւ կառավարութեան մէջ բարձր պաշտօն վարող անձինքներն լինելը կը խօսուի, բայց ոճրագործք թելադրիչներու անունները չեն տար թելադրուելով թելադրիչներէ եւ միայն ծեծով կարելի է խոստովան[ն]ցնել տալ այն ալ Էօրֆիէն[48] չ'ըներ, ընելու հրաման չունի կ'ըսեն եւ այս յայտնի է զի այսչափ տարիներ միասին ապրող ժողովուրդ մը միանգամայն տգէտ եւ մոլեռանդ ինքնաբերաբար այսպէս խժդժութիւններ, թալաններ եւ հրձիգութիւններ չ'ըներ, երբ իւր մոլեռանդութիւնը գրգռողներ եւ թալանի բնականապէս հակամէտ խուժանի մը ճաշակը սրողներ չը լինին:

3. Ո՞րքան է զոհերու թիւը բնիկ եւ ուրիշ գաւառներէ եկողները, այր եւ կին, մանկտի նշանակելով զատ զատ:

Իսկէնտէրունի հայ բնիկներէն Այասի[49] մէջ (Ատանա[յ]ի պատկան) սպաննուած են Մատթէոս էֆ. Պալեան եւ Յարութիւն Սարաֆեան, իսկ Ատանա[յ]ի մէջ 18 ամեայ Իսկէնտէրունցի Մարտիրոս Սարգիսով Մարտիկեան պատանին: Ներկիզլիկի (Իսկէնտէրունի պատկան) գիւղէն 6 այր, Ֆարթըսլը գիւղէն 2 այր, պէյլանցի ըլլալով 2 այր (մին Սարգիս Գարապաճագեան եւ միւսն քէօշկէր[50] Պետրոս), որով Իսկէնտէրունի կորուստը կը լինի 13 այր:

4. Ո՞րքան վիրաւորեալներ կան:

Կէօզէլլի գիւղէն Գէորգ Կիւզէլ Աբոյեան որ ցարդ հիւանդ է եւ օրֆացի[51] Յարութիւն որ ապաքինած է:

5. Ո՞րքանի կը յանգի ընդհանուր կարօտելոց թիւը իւրաքանչիւր արկածեալ վայրեր զատ զատ նշանակելով:

Ներկիզլիկ գիւղէն	53 անձ
Ագչայէն	37 անձ
Գըշլա Տէրէսիէն	28 անձ
Ֆարթըսլըյէն	5 անձ
Այասէն	18 անձ
Պէյլանի պատկան Կէօզէլլիէն	11 անձ 152
Զանազան տեղերէ 22 անձ	22 }=174

6. Ո՞րչափ որբ ունինք արու եւ էգ զատ զատ, ո՞րքանը մեր քով եւ ո՞րքանը ուրիշներու մօտ կը մնան:

Այասէն որբ 7 տղայ 6 աղջիկ

Ներկիզլիկէն որբ 2 տղայ 5 աղջիկ

Այասէն եղողներէն Ամերիկեան Սաղմոսական երէց Քէնէտիի[52] կողմանէ 4 տղայ երեք աղջիկը Անթապ եւ Պէյրութ դպրոցները ղրկուեցան, իսկ մնացեալ[ք] կը մնան իրենց ծնողաց մօտ:

7. Ո՞րքան է առեւանգեալ կանանց եւ աղջկանց թիւը եւայլն:

Իսկէնտէրուն եւ շրջակայք առեւանգումներ եւայլն չեղան:

8. Ո՞րքան եւ ի՞նչ տեսակ շէնքեր հրկիզուած են:

Այրուած շէնքերն են գիւղական տներ, մեծի մասամբ քարաշէն եւ երկյարկ յարակից շերամատներով, մարագներով եւ ախոռներով: Գըշլա Տէրէսիի, Ներկիզլիկի, Ագչայի այրուած տանց ընդհանուր արժէքը կը հասնի 900 ոսկւոյ:

9. Ջարդէ ճողոպրող եւ այլուր ապաստանողաց թիւը քանի՞ է:

Իսկէնտէրունի պատկան հայ բնակչութենէ Աղեքսանդրիա եւ Կիպրոս խոյս տուողներու քանակը 250-300 ի մէջն էր, հետզհետէ կը վերադառնան:

10. Ո՞րքան է ժողովրդեան նիւթական եւ դրամական կորուստներու քանակը:

Միջին հաշուով թալան կորուստ եւ այլն 4000-5000 ոսկւոյ մէջն է:

11. Ո՞րքան ազգային հաստատութիւնք եւ նոցա հասութաբեր կալուածք փճացան եւ ո՞րչափ է անոնց նիւթական վնասն:

Իսկէնտէրուն եւ շրջակայքը ազգային եւ եկեղեցական շէնքեր չայրեցան ինչպէս նաեւ հասութաբեր կալուածներ որ արդէն չկայ: Անապահովութեան առթիւ գործերու գէշ ընթացքը արդէն պիտի վնասէ բարոյապէս եւ նիւթապէս քաղաքիս հասարակութեանը որոց քանակը որոշել անկարելի է (մանաւանդ հայ տարրը):

11[53]. Կառավարութեան կողմանէ ի՞նչ միջոցներ ձեռք առնուած են կողոպուտներն տերանց դարձնելու եւ ցարդ ո՞րքան եւ որոց դարձուած են:

Մինչ ցարդ ոչինչ չըրաւ եւ հակառակ որ Հիյէթը Էօրֆիյէ մը կայ տեղւոյս մէջ, այսօր մէկ ամսոյ մօտ է որ կը գործէ, բայց ոչինչ [ըրաւ], թէեւ կանխաւ այս առթիւ ալ բողոքուեցաւ, դարձեալ նոյն է եւ կողոպուտներէ ոչինչ եկած են մինչդեռ կողոպտողք շրջակայ եւ ծանօթ գիւղացիք են:

12. Կառավարութենէ նաեւ օտար մարդասէրներէ նիւթական ո՞րքան նպաստ տրուած է հայ կարօտելոց եւ ի՞նչ եղանակաւ:

Դէպքերու առջի ատենները տեղւոյս մէջ ապաստանողաց 800-900 մօտ անձանց եկեղեցիներս հայթայթեց հացագին 13 օր, յետ որոյ Եւրոպայի պաշտօնական տներ խնամքէն մաս մը առին, կառավարութիւնն ալ միայն տներն այրածներուն եւ (Իսկէնտէրունի պատկան) անձանց օրական 6-ական մեթալիկ[54] հացագին տալ սկսաւ մերժելով միւս ապաստանողներու խնամելու հոգը, Հալէպ Առաջնորդարանէ, Եգիպտոս Հայ Բարեգործական Ընկերութենէ եւ Պատրիարքարանէ եւ ի վերջոյ հիմա ալ Նպաստից Միջազգային Յանձնաժողովոյ[55] կողմանէ հացագին կը տրուի կարօտելոց, կառավարութիւնը այս օրեր մերժեց նաեւ տներն այրուողներուն ինչպէս սպաննուածներու այրի եւ որբերուն խնամելու հոգը:

1909 Յուլիս 13/26 Աղօթարար

յԻսկէնտէրուն Գրիգոր Քհնյ. Մինասեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Միհրան Մինասեան, «Պատմական Անտիպ Տեղեկագիր մը Բերիոյ (Հալէպի) Թեմի Հայութեան Մասին», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, Երեւան, թիւ 1-2 (109-110), 2007, էջ 23:

[2] Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Ա.,* Երեւան, ԵՊՀ Հրատ., 1986, էջ 75:

[3] Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman a la Veille du Génocide,* Հրատ.՝ ARHIS, Փարիզ, 1992, էջ 350, 63:

[4] Շահէ Վարդ. Գասպարեան (Այնթապ, 1882-Հայաստան, 1935): Ան արմաշական է, 1908-11՝ վարած է Հալէպի առաջնորդական տեղապահի պաշտօնը, 1911-13՝ եղած է Ատանայի առաջնորդ, 1917-30՝ Պոսթոնի հոգեւոր հովիւ, 1930-35՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանուց տեսուչ (*Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա. Հտր.,* աշխ. ու խմբ.՝ Գէորգ Ա. Սարաֆեան, Հրատ.՝ Ամերիկաբնակ Այնթապցիներու Միութեան, Լոս Անճելըս, Սենթրըլ Թայփսեթինկ, 1953, էջ 403-7):

[5] Հայկական անուանումով՝ Չորք Մարզպան: Հայաբնակ քաղաք Ատանա Նահանգի Եարփուզ (Ճեպէլ Պերեքէթ) Գաւառի Չորք Մարզպան Գաւառակի կեդրոնը, Ատանայէն հարաւ-արեւելք, Սեւ Լեռներու փէշերուն:

Քաղաքը ունեցած է Ս. Աստուածածին եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Ս. Քրկիչ) եկեղեցիներն ու Ս. Սարգիս վանքը, ինչպէս նաեւ աւետարանական համայնքի մէկ եկեղեցի եւ երկու վարժարան, նաեւ՝ երկյարկ Կեդրոնական Վարժարան եւ Կիլիկիոյ կոտորածներու որբերուն համար հաստատուած Սիսուան եւ Քելէկեան որբանոցները:

Տեղւոյն հայերը, 1895ի Համիտեան Կոտորածներուն, ութօրեայ ինքնապաշտպանական մարտերու շնորհիւ, փրկուած են կոտորածէ: Նոյնը

պատահած է նաեւ 1909ին, երբ անոնք 13օրեայ դիմադրութենէ ետք, համեմատաբար քիչ կորուստներ տալով փրկուած են համընդհանուր ջարդէն: Սակայն թուրքեր յաջողած են հրկիզել հայերու հարիւրաւոր տուներ ու ամառանոցներ: 1912ին ան ունեցած է հազար տուն զուտ հայ բնակչութիւն, որուն 20ը՝ աւետարանականներ, մնացեալները առաքելականներ (*Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 Սեպտ. 11-1912 Սեպտ. 11. Յաւելուած Տեղեկագիր Քննիչ-Պատուիրակ Պ. Ժագ Սայապալեանի*, Կ. Պոլիս, Տպ. Շանթ, 1912՞, Սայապալեանի Տեղեկագիրը, էջ 57), իսկ Ցեղասպանութեան նախօրեակին ունեցած է 12,300 հայ բնակիչ (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից…*, *Հտր. Բ.*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1988, էջ 140):

[6] Օսմանեան բանակի ստորաբաժանումներէն, որ բաղկացած կ'ըլլար 100 զինուորէ:

[7] Փայաս՝ պատմական կարեւոր նաւահանգիստ Միջերկրականի ափին, Հայոց Ծոցի հիւսիս-արեւելքը: Միջնադարուն եղած է վաճառաշահ մեծ կեդրոն արեւելքի ու արեւմուտքի միջեւ, մանաւանդ՝ ԺԳ.-ԺԴ. դարերուն, Կիլիկիոյ Հայկական Թագաւորութեան շրջանին. աւելի ետք անշքանալով՝ վերածուած է աւանի, որ 1903ին ունեցած է շուրջ 6000 բնակիչ, որուն կէսը՝ հայեր, իսկ միւս կէսը թուրքեր էին (Հ. Ս. Էփրիկեան, *Պատկերազարդ Բնաշխարհիկ Բառարան, Ա. Հտր.*, Բ. տիպ, Վենետիկ-Ս. Ղազար, 1903, էջ 397-398):

[8] Սուետիա, ծանօթ է նաեւ Մուսա Լեռ անունով: Գիւղախումբ Հալէպի Նահանգի Հալէպ Գաւառի Անտիոք Գաւառակին մէջ, Միջերկրականի արեւելեան ափերուն, Քեսապէն հիւսիս-արեւմուտք: Ունեցած է հայաբնակ վեց գիւղ, որոնք 1911ին միասնաբար ունեցած են 1338 հայ տուն՝ 6283 բնակիչ (Գրիգոր Տունկեան, *Նիւթեր Լաթաքիոյ եւ Շրջակայքի Հայ Ազգաբնակչութեան Պատմութեան*, Հրատ. Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանի, Հալէպ, Տպ. Շարք, 1983, էջ 35):

Սուետիայի շրջակայ հայաբնակ գիւղերը մարդկային եւ նիւթական մեծ կորուստներ ունեցած են 1909ին, բայց 1915ին, անտեսելով իրենց բնակավայրերէն հեռանալու կառավարական հրահանգը, բարձրացած են լեռ եւ ամբողջ 53 օր դիմադրելով ու մարդկային նուազագոյն զոհեր տալով՝ ֆրանսական ռազմանաւերով տեղափոխուած են Փոր Սայիտ՝ Եգիպտոս, ու փրկուած համընդանուր կոտորածէն:

Զինադադարին անոնք վերադարձած են հայրենի տուն ու կրկին շէնցուցած զայն: Շրջանը, 1939ի ֆրանսեւթուրք համաձայնագրով, Սուրիայէն խլուելով բռնակցուած է Թուրքիոյ, որուն հետեւանքով տեղւոյն հայերը մեծամասնութեամբ հեռացած են անկէ եւ ապաստանած Լիբանան, ուր հիմնած են Այնճար հայաւանը:

[9] Նարկիզլիք՝ հայաբնակ գիւղ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Պէյլան Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքի մօտակայքը, Ամանոս Լեռան փէշերուն, Սօուգ Օլուգ եւ Կիւզէլլի գիւղերէն քսանական վայրկեան հեռաւորութեան վրայ: 1902ին վերոյիշեալ զոյգ գիւղերուն հետ միասնաբար ունեցած է 45 հայ տուն (Մինասեան, էջ 23, 29): Այլ աղբիւրի համաձայն, 1914ին ան ունեցած է 180 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 350): 1909ին թուրքեր

թալանած են գիւղը, բնակիչներէն սպաննած են 6 հայեր եւ այրած հայերու պատկանող նոյնքան տուներ (Յակոբ Յ. Թերզեան, *Կիլիկիոյ Աղէտը*, Կ. Պոլիս, Տպգր. Յ. Ասատուրեան եւ Որդիք, 1912, էջ 267):

[10] Աքչայ՝ հայաբնակ գիւղ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքէն արեւելք (*Հայաստանի եւ Յարակից…*, *Ա. Հտր.*, էջ 143): 1909ին թուրքեր Ագչայի մէջ այրած են հայերու պատկանող 18 տուներ (Թերզեան, էջ 267):

[11] Վիլայէթ՝ նահանգ, հոս՝ նահանգապետութիւն:

[12] Ֆրանսերէն՝ յանձնաժողով:

[13] Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ գաւառակի կառավարիչ, գաւառակապետ:

[14] Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ դատաւոր:

[15] Թաղապետութեան նախագահ: Կը կոչուէր Պէյազիտ էֆ., ինչպէս պիտի տեսնենք աւելի վար:

[16] Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ գաւառի հաշուակալ:

[17] Շերիի՝ իսլամական դատարանի գրագիր, քարտուղար:

[18] Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ վարչական ժողով:

[19] Արաբերէն՝ նահանգապետ: Նոյն թուականին Հալէպի նահանգապետն էր Ռաշիտ Պէյը, որ պաշտօնը ստանձնած էր 5 Հոկտեմբեր 1908ին ու շարունակած՝ մինչեւ 1909ի Սեպտեմբերի վերջերը, երբ հալէպցիներու բողոքներուն վրայ պաշտօնանկ եղած է (محمّد فؤاد عنتابي وشجوى عثمان, *حلب في مئة عام 1850–1950*, Բ., Հալէպ, 1993, էջ 71, 79):

[20] Բառացիօրէն Մուհամմէտեան՝ Իսլամական Միութիւն:

[21] Զինուորական հրամանատար:

[22] Ծածկագիր:

[23] Նկատի ունի Զէյթուն աւանը:

[24] Էրզին՝ գիւղ Ատանա Նահանգի Եարփուզ Գաւառի Էրզին Գաւառակի կեդրոնը, Ատանա քաղաքէն հարաւ-արեւելք: ԺԹ. դարակիսուն հայաբնակ էր եւ մօտակայ Պաղչէ, Էյպէզ, Եուզէրլիք, Չորք Մարզպան եւ Օճաքլը աւաններուն հետ միասնաբար ունեցած է 1200 հայ տուն (*Հայաստանի եւ Յարակից…*, *Բ. Հտր.*, էջ 365), բայց աւելի ետք հայաթափուած է ամբողջութեամբ: Կիլիկեան Կոտորածներուն, գիւղին մէջ սպաննուած են այլ վայրերէ հոն աշխատանքի եկած հայեր:

[25] Կը կոչուէր Նուրէտտին (Հրաչիկ Սիմոնեան, *Հայերի Զանգուածային Կոտորածները Կիլիկիայում (1909 Թ. Ապրիլ)*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2009, էջ 123):

[26] Նաճարլը՝ զուտ հայաբնակ գիւղ Ատանա Նահանգի Եարփուզ Գաւառին մէջ, Չորք Մարզպանէն հիւսիս-արեւմուտք, 7 ժամ հեռաւորութեան վրայ: Ունեցած է եկեղեցի եւ վարժարան: Ի. դարասկզբին ունեցած է 750 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 304), իսկ Կիլիկեան Կոտորածներու նախօրեակին՝ մօտ 100 տուն: Նոյն դէպքին, նաճարլըցիներ կարճ դիմադրութենէ ետք, ապաստանած են Չորք Մարզպան եւ այնուհետեւ 10-12 ընտանիքներ միայն վերադարձած են գիւղ, որ ամբողջութեամբ աւերուած էր թուրքերու կողմէ, մինչ անոր բնակիչները մնայուն կայք հաստատած են Չորք Մարզպանի մէջ (*Տեղեկագիր Այրիախնամ…*, Սայապալեանի Տեղեկագիրը, էջ 59): Կոտորածներուն

հետեւանքով գիւղը ունեցած է հայ առաքելական համայնքի 10 որբ (Կիլիկիոյ Որբախնամ Կեդր. Յանձնաժողով, *Տեղեկագիր 1909 Օգոստոս 7-1910 Դեկտեմբեր 31,* Կ. Պոլիս, Տպ. Օ. Արզուման, 1911, էջ 74):

[27] Պէյլան՝ գիւղաքաղաք Կիլիկիոյ մէջ, Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Պէյլան Գաւառակին կեդրոնը, Ալեքսանտրէթ Քաղաքէն 13 քլմ. հարաւ-արեւելք հեռաւորութեան վրայ: Աւանը ունեցած է Ս. Սարգիս եւ Ս. Աստուածածին անունով հայ առաքելական զոյգ եկեղեցիներ: Հայ կաթոլիկ եւ աւետարանական համայնքները եւս ունեցած են իրենց եկեղեցիներն ու դպրոցները: Կիլիկեան Կոտորածներուն հետեւանքով տեղւոյն հայերը ունեցած են 62 առաքելական համայնքի, 3 աւետարանական եւ 2 կաթոլիկ որբեր (*Տեղեկագիր 1909*..., էջ 89, 94, 95):

Ցեղասպանութեան նախօրեակին ան ունեցած է 1791 հայ բնակիչ իսկ անոր ազգային վարժարանը՝ 180 աշակերտ (Kévorkian-Paboudjian, էջ 350): Ձինադադարին, հայրենի աւան վերադարձած են մօտ 600 վերապրողներ ու վերաբացած են դպրոց ու եկեղեցի:

[28] Գրըգխան՝ հայաբնակ գիւղ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքէն հարաւ-արեւելք: Կիլիկեան Կոտորածներէն առաջ ունեցած է 80 տուն հայ եւ հազիւ 30 տուն իսլամ բնակչութիւն: Ջարդէն քանի մը տարի առաջ հոն վերաբնակեցուած են 25 տուն իսլամ: Կիլիկեան Կոտորածները ամբողջութեամբ շրջած են գիւղին ժողովրդագրական պատկերը եւ 1912ին, տեղւոյն իսլամներու 80 տունին դիմաց՝ մնացած է հայերու հազիւ 30 տուն (*Տեղեկագիր Այրիախնամ*..., Սայապալեանի Տեղեկագիրը, էջ 5): Կիլիկեան Կոտորածներուն, գիւղը տուած է 93 զոհ (Թերզեան, էջ 267), որոնք իրեց ետին ձգած են 88 հայ առաքելական, 7 աւետարանական եւ 10 կաթոլիկ համայնքի որբեր (*Տեղեկագիր 1909*..., էջ 89, 94-95), իսկ 1914ին՝ ունեցած է 176 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 351):

[29] 1909ին Պէյլանի քահանան էր Տէր Վահան Մանուկեան (Հաճընցի, 1844-Պապ, 1915): Որպէս ուսուցիչ՝ դասաւանդած է Պոլիս, Այնթապ, ապա 18 տարի՝ Հաճընի Միացեալ Ընկերութեան Ճեմարանը, ապա՝ Տարսոն ու Չորք Մարզպան: Քահանայ ձեռնադրուելով քանի մը տարի վարած է Հաճընի առաջնորդական փոխանորդի պաշտօնը: Քաղաքական ամբաստանութեամբ աքսորուած է Ադրիանապոլիս, ապա նշանակուած է Ալեքսանտրէթի ու Պէյլանի առաջնորդական փոխանորդ եւ չորս տարի ետք՝ վերադարձած Հաճընի: 1915ին աքսորուած է Հալէպ, հոնկէ՝ Պապ, ուր եւ վախճանած է (Յակոբ Պ. Պօղոսեան, *Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը Եւ Շրջակայ Գօզան-Տաղի Հայ Գիւղերը*, Լոս Անճելըս, Տպգր. Պօզաճեան, 1942, էջ 362-364):

[30] Յիշուած է նաեւ Պօղոսեան մականունով (Չմշկածագ, 1860-Ալեքսանտրէթ, 1938), հետեւած է Երուսաղէմի Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարանի դասընթացքներուն: 1889ին մտած է ուսուցչական ասպարէզ, 1903ին ձեռնադրուած է Ալեքսանտրէթի քահանայ, 1915ին աքսորուած Հալէպ, ապա՝ սուրիական անապատ: Ձինադադարէն ետք վերադարձած է Ալեքսանտրէթ եւ շարունակած վարել տեղւոյն առաջնորդական փոխանորդի պաշտօնը (*Պատմագիրք Չմշկածագի*, դասաւորեց եւ խմբ.՝ Հայկազն Գ. Ղազարեան, Հրատ. Չմշկածագի Հայրենակցական Միութեան, Պէյրութ, Տպ.

«Համազգային», 1971, էջ 523-4. նաեւ՝ Յուսիկ Քինյ. Սեդրակեան, «Գրիգոր Քինյ. Մինասեան», *Գանձասար*, Հալէպ, Ապրիլ Բ. 2008):

[31] Ծովային ընկերութիւն որ գրասենեակներ ունեցած է արեւելքի բազմաթիւ քաղաքներու մէջ:

[32] Հատուածը ֆրանսերէն է ու կը թարգմանուի այսպէս. «*Հայոց եկեղեցի- Օսմանեան Դրամատունէն սպանալ 200 օսմ. ոսկի Տէօրթ Եոլի եւ շրջակայքի հայութեան համար- Հայկական Միութիւն (նկատի ունի ՀԲԸՄը – Մ.Մ.)*»:

[33] Գազա՝ գաւառակ: Իսքենտէրունի կամ Ալեքսանտրէթի Գաւառակը կը գտնուէր Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառին մէջ, դաշտային Կիլիկիոյ տարածքին, Միջերկրականի հիւսիս-արեւելեան անկիւնը, Հայոց Ծոցին վրայ: Տարածութիւնը շուրջ 5000 քառ. քիլոմեթր էր: Կեդրոնը՝ համանուն քաղաքն էր:

[34] Հոս տրուած Նարկիզլիքի, Գարա Աղաճի եւ Ֆուրթըսլը-Ֆարթըսլըի զոհերուն թիւը (յաջորդաբար 6, 2 եւ 2) կը համապատասխանէ Թերզեանի տուած թիւերուն, զորս իրեն տրամադրած էր Հալէպի առաջնորդական փոխանորդ Շահէ Ծ. Վրդ. Գասպարեանը (Թերզեան, էջ 267):

[35] Օղլու կամ օղլի, թրքերէնով՝ որդի:

[36] Արաբերէն՝ պահեստի զինուոր:

[37] Գիւղ՝ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքէն հարաւ-արեւմուտք:

[38] Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերուն ենթակայ հայաշատ քաղաքներու կաթողիկոսարանի աշխարհական ներկայացուցիչը, որ ընդհանրապէս կը զբաղէր կաթողիկոսութեան նիւթական եկամուտներու ապահովումով եւ իր իրաւասութիւններու ոլորտով կը յիշեցնէր ուշ միջնադարուն լայն տարածում գտած եկեղեցական նուիրակները:

[39] Կամ Ֆարթըսլը: Հայաբնակ գիւղ՝ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքէն հարաւ-արեւմուտք: 1914ին ունեցած է 200 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 350):

[40] Արաբ Տերէսի՝ գիւղ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ:

[41] Հովիտ՝ գիւղ Ամանոսեան Լեռներուն հիւսիս-արեւելքը:

Աւելի լայն շրջագիծի մը մէջ, պէտք է ըսել որ ազգ-պետութիւններ ստեղծելու երեւոյթը ընդհանուր կարգ դարձած էր յետ-պատերազմեան աշխարհին մէջ: Համաշխարհային Պատերազմը խորտակած էր երեք բազմազգեան ու բազմակրօն կայսրութիւններ՝ Օսմանեան, Աւստրօ-Հունգարական եւ Ռուսական: Ասոնց անհետացումը առիթ տուած էր պետական նոր սահմանագծումներու, մանաւանդ՝ նոր ազգ-պետութիւններու յառաջացումին: Նախկին օսմանեան տարածքներուն պարագային, ազգային ինքնութեան վրայ այս շեշտադրումը լոկ թրքական կողմին իւրայատուկ չէր: Անիկա համատարած էր նախկին կայսրութեան բաղկացուցիչ այլ էթնիք ու կրօնական համայնքներուն մօտ, ինչպէս օրինակ յոյն-ուղղափառներուն, հայերուն, արաբներուն, քիւրտերուն, ասորիներուն: Օսմանեան նախկին համակարգը այլեւս քանդուած էր. յաղթական դաշնակիցները (յատկապէս Մեծն Բրիտանիան եւ Ֆրանսան) այս տարածքը բաժնած էին զանազան ազդեցութեան գօտիներու, ուր սկսած էին յառաջանալ պետական նոր միաւորներ: Քաղաքական այս նոր

համակարգին մէջ, նախկին կայսրութեան զանազան բաղկացուցիչ ժողովուրդներ իրենց կարգին կը ձգտէին տիրանալ անկախ կամ ինքնավար տարածքներու, համախմբել այնտեղ իրենց ժողովուրդը ու ստեղծել միատարր հողատարածք մը, միատարր բնակչութեամբ:

Այս էր ընդհանուր մթնոլորտը Ա. Համաշխարհային Պատերազմի վաղորդայնին:

Բայց ինչ որ արդի Թուրքիան ամէնէն շատ կը յատկանշէր ազգ-պետութիւններ հիմնել ձգտող միւս ժողովուրդներէն՝ անոր ղեկավարներուն գաղափարական մօտիկութիւնն էր Օսմանեան Կայսրութեան նախկին իշխանութիւններուն՝ Իթթիհատ Վէ Թերաքքըին (Իթթիհատ Կուսակցութիւն) հետ: Այս կուսակցութեան իշխանութեան տարիներուն էր, մանաւանդ Առաջին Համաշխարհային Պատերազմին ընթացքին, որ Փոքր Ասիան միատարրացնելու ու թրքացնելու քաղաքականութիւնը նոր հանգրուան մը կը թեւակոխէր, աւելի ճիշտը ոճրային տարողութիւն մը կը ստանար: Այս տարիներուն է որ Իթթիհատը գործադրութեան կը դնէր ոչ-թուրք ժողովուրդներու տեղահանման, բնաջնջման ու բռնի բնակեցման ամբողջ ծրագիր մը, որուն գագաթնակէտը կը հանդիսանար հայերու գրեթէ ամբողջական բնաջնջումը եւ անհետացումը Հայկական Բարձրաւանդակի իրենց բնաշխարհէն, ինչպէս նաեւ Արեւմտեան Անատոլիայի բազմաթիւ գիւղերէ ու քաղաքներէ:

Անատոլիան միատարրացնելու եւ թրքացնելու տեսլականը նոյնպէս պիտի ըլլար Նոր Թուրքիոյ վարիչներուն հետապնդած գլխաւոր նպատակներէն: Այս երեւոյթը բնական կրնայ թուիլ, եթէ նկատենք որ Քեմալի ղեկավարած շարժումը շատ մը էական կէտերու մէջ շարունակութիւնն էր Իթթիհատին[2]: Այս իմաստով ալ անիկա իր նկարագրով մեծապէս իթթիհատական էր[3]: Շարժումին մէջ փաստօրէն կային բազմաթիւ դէմքեր, որոնք Իթթիհատի նախկին անդամներ էին եւ հիմնական դերակատարութիւն ունեցած՝ Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներուն բռնագաղթի ու կոտորածի ծրագիրերուն իրականացման մէջ:

Ընդհանուր իրավիճակը աւելի լաւ ըմբռնելու համար պէտք է աւելցնել, որ Ա. Համաշխարհային Պատերազմին յաջորդած ժամանակաշրջանին՝ հակամարտութիւնը աւելի եւս սրած էր օսմանցի թուրք ու օսմանցի քրիստոնեայ տարրերուն միջեւ: Փաստօրէն, եթէ այստեղ վերցնենք մեր նիւթին հետաքրքրող տարածքները, պիտի նկատենք որ դաշնակից ուժերուն կողմէ Կիլիկիոյ եւ աւելի արեւելք գտնուող շրջաններուն գրաւումը, մեծ ոգեւորութեամբ կ'ընդունուի տեղաբնիկ քրիստոնեայ ժողովուրդներուն կողմէ: Անոնք մեծամասնութեամբ Ցեղասպանութենէն վերապրած հայեր էին: Այս ցնծութիւնն ու խանդավառութիւնը անոնց կողմէ շատ արագ կ'արտայայտուի նաեւ գործնական քայլերով. փաստօրէն դաշնակից ուժերը (բրիտանացիներ, ապա ֆրանսացիներ) յատկապէս այս տեղաբնիկ քրիստոնեայ տարրն է որ կը դարձնեն իրենց գրաւման ռազմավարութեան հիմ-

նական լծակը: Այս տարրն էր որ գրաւող վարչամեքենային կը հայթայթէր կարեւոր մարդուժը, թէ՛ քաղաքացիական վարչութիւններուն եւ թէ՛ զինուորական-ոստիկանական մարմիններուն համար:

Այս պայմաններուն մէջ խրամատը աւելի պիտի խորանար թուրք եւ ոչ-թուրք (մանաւանդ քրիստոնեայ) բնակչութիւններուն միջեւ: Հետեւաբար տարօրինակ չէ, որ յետագային, երբ թրքական իշխանութիւնները կը սկսին տեղահանել այս տարածքներէն զանազան ոչ-թուրք համայնքներ, արդարացումի համար յաճախ կը նշուէր անոնց մօտիկ անցեալի գործակցութիւնը ֆրանսական գրաւող ուժերուն հետ: Թրքական կողմին համար ասոնք պարզապէս կասկածելի տարրեր էին, որոնք կրնային վտանգել թրքական նորահաստատ պետութեան գերիշխանութիւնը ու սպառնալ անոր անվտանգութեան:

ՏԵՂԱՀԱՆՈՒՄՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵԼԱՁԵՒՆ ՈՒ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Կարեւոր է շեշտել, որ Թուրքիա-Սուրիա սահմանային գօտիին մէջ ապրող ոչ-թուրք փոքրամասնութիւններու տեղահանումը տեղի չունեցաւ թրքական կառավարութենէն բխող ուղղակի հրամաններու ճամփով: Այս գծով թրքական իշխանութիւններուն որդեգրած միջոցառումները յարաբերաբար աւելի նուրբ ու մշակուած բնոյթ ունէին. կարծես թէ իշխանութիւնները կը խուսափէին բացայայտ եւ ուղղակի պատասխանատու համարուիլ այս տեղահանումներուն: Այսպէս, թիրախ ընտրուած բնակչութիւններուն դէմ կը սկսին գործադրուիլ բազմակողմանի նեղութիւններ ու ճնշումներ: Որոշ ժամանակ ետք, ենթականերուն համար այս միջոցառումները այլեւս կը դառնան անտանելի, պատճառ դառնալով անոնց ուժասպառութեան ու յուսալքման: Այսպիսի պայմաններու մէջ է, որ անոնք կ'որոշեն ձգել իրենց երկիրը ու ապաստան գտնել սահմանակից Սուրիոյ մէջ:

Փորձենք այստեղ ընդհանուր գիծերու մէջ վերաշարադրել այս միջոցառումները.-

- Մամուլի արշաւ.- Թրքական տեղական մամուլին մէջ, մանաւանդ իշխանութիւններուն մօտիկ կանգնած թերթերուն մէջ (օրինակ՝ *Türk Sözü, Yeni Adana*, *Teceddüt*, *Altun Öz*), սուր արշաւ մը ծայր կ'առնէ սահմանագծային ոչ-թուրք փոքրաթիւ համայնքներուն դէմ: Ազգայնական ու ցեղապաշտական ներշնչումով գրութիւններու մէջ այս փոքրամասնութիւնները կը ներկայացուին իբրեւ թրքական նոր պետութեան ոխերիմ թշնամիները ու անոնցմէ բացայայտօրէն կը պահանջուի հեռանալ Թուրքիայէն: 1922ի վերջաւորութեան, կարգ մը թերթերու մէջ լոյս կը տեսնեն յայտարարութիւններ թէ սոյն համայնքներու անդամները ամէնէն ուշը մէկ ամիս ժամանակ ունին՝ Թուրքիան լքելու ու

հեռանալու անկէ: Նմանօրինակ բովանդակութեամբ որմազդեր ալ կը փակցուին Կիլիկիոյ մէջ ապրող քրիստոնեաներու խանութներուն վրայ[4]:

- Իրաւական հետապնդումներ ու անհիմն մեղադրանքներ.- Իրաւական հետապնդումները նոյնպէս ճնշումի տարածուած ձեւ մըն էին: Մեղադրանքները յաճախ կապ ունէին 1919էն 1921՝ ֆրանսական բանակներուն կողմէ Կիլիկիոյ գրաւման ժամանակաշրջանին հետ: Խնդրոյ առարկաները կը մեղադրուին այդ տարիներուն, ֆրանսական ուժերուն կողքին, իսլամներու դէմ գործադրուած բռնութեան աքթերու համար: Այլ պարագաներու, թուրք անհատներ դատի կը կանչեն քրիստոնեաներ՝ մտացածին պարտքեր չվճարելու յանցանքով: Այս դատերը յաճախ կ'աւարտէին մեղադրեալին ինչքերուն գրաւումով: Նշենք նաեւ որ փաստաբաններ կը խուսափէին քրիստոնեայ մեղադրեալին պաշտպանութիւնը ստանձնելէ[5]:
- Գիւղական բնակչութիւնները քաղաքներու մէջ համախմբելու հրամաններ.- Տեղական իշխանութիւններ հրամաններ կ'արձակեն գիւղերու մէջ ապրող քրիստոնեայ բնակչութիւններու՝ ամէնէն մօտիկ քաղաքները տեղափոխուելու: Այս քայլին նպատակը առաջին հերթին սոյն գիւղական համայնքները համախմբել ու այս ձեւով զանոնք հակակշիռի տակ պահելն էր: Ասոր կը յաջորդեն ճնշումներն ու կամայականութիւնները, որոնք կը միտէին սոյն բնակչութիւնները Թուրքիայէն դուրս մղել: Այս միջոցառումները յատկապէս կը վերաբերին Տիարպեքիրի, Մարտինի ու Սղերդի մեծամասնութեամբ քրտաբնակ գիւղական շրջաններու հայերուն:

Այսպէս, 1920ականներու վերջաւորութեան անոնց դէմ կը կիրարկուին հետեւեալ միջոցառումները.-

Առաջին հանգրուանով, թուրք ոստիկաններ, տեղական գիւղապետեր ու մունետիկներ կը յայտարարեն, թէ հայ գիւղացիներուն պատկանող արտերը պիտի բռնագրաւուին իշխանութիւններուն կողմէ: Գիւղացիներէն կը պահանջուի հեռանալ իրենց բնակավայրերէն ու հաստատուիլ քաղաքներու մէջ: Այս ձեւով ծայր կ'առնէ ներքին գաղթ մը դէպի ամէնէն մօտիկ քաղաքը: Գիւղացիներուն արգիլուած էր վաճառել իրենց հօտը կամ որեւէ այլ շարժուն ինչքեր:

Երկրորդ հանգրուանով, քաղաքներուն մէջ հաստատուած այս գիւղացիներուն անկարելի կ'ըլլայ նոր աշխատանքի մը ձեռնարկել կամ որեւէ տեղ աշխատանք գտնել: Փաստօրէն, քաղաքաբնակ իսլամները արդէն ցուցմունքներ ստացած էին տեղական իշխանութիւններէն՝ այս գաղթականներուն գործ չհայթայթելու վերաբերեալ: Այս ձեւով գիւղացի հայերու հաւաքավայրեր կը դառնան բազմաթիւ քաղաքներ՝ Միտիաթ, Բալու, Մարտին, Տերենտէ, Մալաթիա, Տիարպեքիր, Արաբկիր, Խարբերդ:

Երրորդ հանգրուանով, սոյն հայերը, ապրուստի միջոցներէ զրկուած, կ'ընդունին իշխանութիւններուն ընծայած «դիւրութիւնները»՝ Թուրքիան

ձգելու ու Սուրիա ուղղուելու: Բայց շատ մը հայ գաղթականներու համար, այս երրորդ հանգրուանը կը հանդիսանայ կողոպտուելու վերջին փուլը: Անոնք կը ստիպուին մեծ գումարներ վճարել՝ անցագիրի մը տիրանալու համար: Անոնք կը ստիպուին, օրինակ, վճարել իրենց նախորդ տարիներու բոլոր տուրքերը՝ իրական կամ մտացածին: Վերջապէս, անոնց ճամփորդական անցագիրերուն մէջ կը դրոշմուին յատուկ կնիքներ, որոնք բոլորն ալ միեւնոյն գաղափարը կ'արտայայտէին՝ «*Թուրքիա վերադարձը արգիլուած*», «*չվերադառնալու պայմանով*», «*առանց վերադարձի*»[6]:

- Պոյքոթ.- Քաղաքներու մէջ կոչեր կ'ուղղուին տեղական ազդեցիկ անձնաւորութիւններու կողմէ՝ քրիստոնեաներուն խանութներն ու վաճառած ապրանքները պոյքոթելու մասին: Իշխանութիւնները ոչ մէկ քայլ կ'առնեն այս պոյքոթը արգիլելու նպատակով: Միաժամանակ թրքական ընկերութիւններու մէջ (դրամատուն, երկաթուղի) աշխատող ոչ-իսլամ պաշտօնեաներ, երբեմն նաեւ ոչ-իսլամ բժիշկներ, փաստաբաններ պաշտօնանկ կ'ըլլան[7]: Մարաշի մէջ, 1922ին, հայերուն արգիլուած էր քաղաքէն դուրս գալ ու արտերուն մէջ աշխատիլ: Բոլոր հայ վաճառականները պոյքոթի ենթակայ էին տեղական շուկային մէջ: Իսկ արհեստաւորները կրնային աշխատիլ միայն այն պայմանով որ թուրք գործակից մը ունենային: Ասիկա առաջին քայլն էր անոնց արհեստանոցին բռնագրաւումին: Կ'արձանագրուէին նաեւ ուղղակի բռնութեան աքթեր, երբ օրինակ Մարաշի փողոցներէն անցնող հայեր լուտանքներու կ'ենթարկուէին ու կը քարկոծուէին[8]: Նոյնն էր պարագան Այնթապի մէջ: Թուրքիոյ տեղական շուկային ուղղուած Այնթապի քրիստոնեաներուն արտադրութիւնները պարտաւոր էին յատուկ նշան մը կրել. բան մը, որ պարզապէս կը խոչընդոտէր անոնց վաճառքը այլ վայրերու մէջ[9]:

Այս տեղահանութիւններուն գործընթացին քննութիւնը առաջին հերթին իյայտ կը բերէ, որ անոր մղիչ ուժը իշխանութեան վրայ գտնուող CHPին հետ ուղղակի առնչուող հաստատութիւններ (տեղական թերթեր, *Türk Ocakları*) կամ անձնաւորութիւններ (տեղական իշխանաւորներ) են: Երկրորդ հերթին, հետաքրքրական է տեսնել, որ սոյն անձերէն շատերն ու կարեւորագոյնները Իթթիհատի նախկին անդամներ էին, որոնք զանգուածային տեղահանութիւններ կազմակերպելու հարցով արդէն իսկ ուշագրաւ փորձառութիւն մը ունէին:

Նշենք այս գծով քանի մը օրինակներ.-

Ալի Ճենանի պէյ.- 1920ականներու սկիզբը, Այնթապի մէջ, Քեմալական Շարժումին ամէնէն ազդեցիկ դէմքն է: Յետագային ան պիտի դառնայ նաեւ Առեւտուրի նախարար: Ան նախապէս Իթթիհատի անդամ էր ու երեսփոխան՝ օսմանեան խորհրդարանին մէջ: Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներուն, գլխաւոր կազմակերպիչներէն կը համարուի

իր պաշտօնավարութեան տարածքէն ներս հայերու տեղահանման ու անոնց ինչքերուն բռնագրաւումին[10]:

Տիարպեքիրի պարագան այս իմաստով աւելի արտայայտիչ է: 1924ին տակաւին այս քաղաքին մէջ ապրող քրիստոնեաներուն տեղահանման գլխաւոր պատասխանատուները կը համարուին տեղական CHP կուսակցութեան ղեկավարներ Փիրինչիզատէ Ֆէյզի, Մուֆթիզատէ Շերիֆ պէյ, Զուլֆիզատէ Զուլֆի, Զիա Կէօքալփ: Բոլորն ալ Իթթիհատի անդամներ: Ասոնցմէ առաջինը, ծագումով քիւրտ, եղած է օսմանեան երեսփոխան, ապա՝ Քեմալի օրով, դարձեալ եղած է երեսփոխան ու վարած նախարարի պաշտօն: Ա. Համաշխարհային Պատերազմին ընթացքին, ըլլալով վալիին՝ Տոքթ. Ռեշիտի գլխաւոր գործակիցը, Ֆէյզի առաջնային դերակատարութիւն կ'ունենայ նահանգի քրիստոնեաներուն բնաջնջումին մէջ: Կէօքալփ նոյն կուսակցութեան գլխաւոր գաղափարախօսներէն է: Գալով Շերիֆ պէյի եւ Զուլֆիի, անոնք, նոյն տարիներուն, կը գլխաւորեն տեղական միլիսներ, որոնք կը գործադրեն զանգուածային այս ջարդերը[11]:

Հաճի Քայա Իզոլու.- Պատերազմի տարիներուն ան մաս կը կազմէ Մամուրէթ ուլ-Ազիզ Նահանգին մէջ գործող Յատուկ Կազմակերպութեան (Teşkilât-i Mahsusa): Այս վերջինը, ըլլալով Իթթիհատի գաղտնի մէկ ճիւղը՝ հիմնական դերակատարութիւն կ'ունենայ հայերու Ցեղասպանութեան կազմակերպման մէջ[12]: Պատերազմէն ետք, Հաճի Քայա Խարբերդի մէջ կը գլխաւորէ Քեմալական Շարժումին տեղական թեւը, որ յարատեւ ճնշումներու կ'ենթարկէ տեղի քրիստոնեայ փոքրամասնութիւնները: Անոնցմէ շատեր կը ստիպուին լքել իրենց երկիրը ու ապաստանիլ Սուրիա[13]:

Հաճի Մուսթաֆա Քամիլ.- Նախկին իթթիհատական, ան իր ուղղակի մասնակցութիւնը կը բերէ Ուրֆայի հայերու ջարդին[14]: Յետագային ան մաս կը կազմէ Քեմալի կուսակցութեան ու կը դառնայ Շանլըուրֆայի քաղաքապետ: 1924ին ան անձամբ իր մօտ կը կանչէ տեղաբնիկ քրիստոնեայ համայնքներու պատասխանատուներ ու սպառնալիքներու ճամփով անոնցմէ կը պահանջէ ամբողջ համայնքով հեռանալ Թուրքիայէն[15]:

1920ԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԷՆ ԴԷՊԻ ՍՈՒՐԻԱ

Սուրիոյ հետ սահմանային գօտիին մէջ ապրող եւ տեղահանման այս քաղաքականութեան զոհերը դարձած համայնքները բազմազան են: Անոնք սփռուած կ'ապրէին այս տարածքէն ներս: Նախապատերազմեան անոնց իրավիճակին բաղդատմամբ, պարզ է որ 1920ականներու սկիզբը անոնց թիւը անհամեմատօրէն նուազած էր. անոնց մեծամասնութիւնը զոհերը եղած էին Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներուն

Իթթիհատի ջարդի ու բռնագաղթի քաղաքականութեան: Անշուշտ այստեղ պէտք է նշել, որ տարագրուածներէն ոմանք - հայեր մեծամասնութեամբ - Զինադադարէն ետք կը վերահաստատուին Ատանայի Նահանգին մէջ, ինչպէս նաեւ աւելի արեւելք գտնուող տարածքներու մէջ՝ Մարաշ, Այնթապ եւ Ուրֆա: Այս տարածքները գրաւուած էին անգլեւֆրանսական դաշնակից ուժերուն կողմէ: Բայց 20 Հոկտեմբեր 1921ի Անքարայի Համաձայնագրով Կիլիկիան վերստին կ'անցնի թրքական գերիշխանութեան ու ֆրանսական վերջին բանակները այստեղէն կը հեռանան 4 Յունուար 1922ին: Այս պայմաններուն մէջ Կիլիկիոյ հայերը իրենց կարգին կը գաղթեն այս տարածքէն ու կը հաստատուին գլխաւորաբար Սուրիա ու Լիբանան: Աւելի արեւելք գտնուող մեծ քաղաքներուն քրիստոնեայ բնակչութիւնը չէր կրցած ընկերակցիլ ֆրանսական բանակներուն, երբ այս վերջինները կը նահանջէին այս վայրերէն: Հետեւաբար, 1922ին կը նկատենք որ Մարաշի, Այնթապի, Ուրֆայի ու Քիլիսի մէջ կ'ապրէր տակաւին քրիստոնեաներու նկատառելի թիւ մը:

Սահմանային գօտիին մէջ կային նաեւ այլ վայրեր, որոնք Զինադադարէն ետք երբեք ալ չէին գրաւուած դաշնակիցներուն կողմէ, բայց եւ այնպէս իրենց կարգին կը հաշուէին քրիստոնեայ փոքրամասնութիւններ: Մեծ քաղաքներու մէջ (Տիարպեքիր, Մալաթիա, Խարբերդ) անոնց թիւը նկատառելի չէ: Ասոր կողքին կայ սակայն Սղերդի, Տիարպեքիրի, Պշերիկի գիւղական շրջաններուն պարագան: Այսպէս, հազարաւոր հայ գիւղացիներ կ'ապրէին մեծամասնութեամբ քրտաբնակ այս տարածքներուն մէջ: Անոնք տասնամեակներու ընթացքին գրեթէ ճորտային յարաբերութիւններու մէջ էին տեղական քիւրտ աղաներու ու շէյխերու հետ: Հողագործներ կամ արհեստաւորներ էին, որոնք ամէն ձեւով կախեալ էին զիրենք շահագործող աղայէն կամ շէյխէն: Բայց այս վերջինները միաժամանակ իրենց պաշտպաններն էին, նկատի ունենալով որ այս գիւղացիները, մշակի կամ արհեստաւորի հանգամանքներով, ընտիր, շահաւէտ ու պիտանի տարր էին քիւրտ մեծաւորներուն համար:

Փոխադարձ շահերու այս առկայութիւնն է նաեւ, որ քիւրտ աղաները կը մղէ պաշտպանելու այս հայերը Ա. Համաշխարհային Պատերազմի ջարդերէն ու բռնագաղթէն: Բայց 1920ականներու վերջաւորութեան, թրքական կեդրոնական իշխանութիւնները կը յաջողին թուլցնել այս տարածքներէն ներս ամէնազօր համարուող քիւրտ աղաներուն ու շէյխերուն ազդեցութիւնն ու ուժը: Մէկ խօսքով, նոյն այս աղաները այլեւս անզօր էին այս հայերուն պաշտպանը հանդիսանալէ:

Փորձենք այստեղ, ըստ քաղաքի ու շրջանի, թուային ընդհանուր պատկերը տալ 1920ականներուն եւ 1930ականներու սկիզբին Թուրքիան ձգած ու Սուրիա ապաստանած քրիստոնեայ փոքրամասնութիւններուն:

- Այնթապ, Քիլիս, Մարաշ, Ուրֆա.- Ասոնք բոլորն ալ նախապէս դաշնակիցներուն կողմէ (սկիզբը բրիտանական, ապա՝ ֆրանսական

ուժեր) գրաւուած քաղաքներ են: Երբ դաշնակից ուժերը կը նահանջեն այս քաղաքներէն, շատ մը քրիստոնեաներ չեն կրնար ընկերանալ անոնց ու կը շարունակեն մնալ այստեղ՝ թրքական նոր իշխանութիւններուն տակ: Այսպէս, 1922 Յունուարին, մօտ 5000 հայեր կ'ապրին տակաւին Այնթապի մէջ, 5000էն աւելի՝ Մարաշի մէջ, իսկ մօտ 1000 ալ՝ Քիլիսի մէջ: Գրեթէ մէկ տարի ետք, 4 Յունուար 1923ին, հայ բնակչութիւնը Այնթապի մէջ կը հաշուէ 80 հոգի, իսկ Քիլիսի մէջ՝ 10 հոգի: Ինչ կը վերաբերի Մարաշին, 1 Նոյեմբեր 1922էն մինչեւ 15 Մարտ 1923, արձանագրուած է 5374 մարաշցի հայերու մուտքը սուրիական սահմանէն ներս[16]: Ուրֆայի պարագային, կը նշուի որ 1924ին քաղաքին մէջ տակաւին կ'ապրին մօտ 5000 քրիստոնեաներ, որոնցմէ 3000ը՝ ասորի, 1500ը՝ հայ եւ 500ը՝ քաղդէական: 1924ին, շատ կարճ ժամանակամիջոցի մը մէջ՝ Փետրուար 10էն մինչեւ Ապրիլ 11, մօտ 4200 քրիստոնեաներ կը լքեն Ուրֆան ու ապաստան կը գտնեն Սուրիոյ մէջ[17]:

- Թարսուս, Մերսին, Ատանա.- Ֆրանսական բանակներու հեռացումէն ետք, այս քաղաքներուն մէջ կը շարունակեն ապրիլ լիբանանեան կամ սուրիական ծագումով յոյն-ուղղափառ ընտանիքներ, որոնք շատ յաճախ մեծ կալուածատէրեր են: Թրքական իշխանութիւնները այս անձերուն դէմ կը սկսին գործադրել զանազան միջոցառումներ, զանոնք Թուրքիայէն հեռացնելու ու անոնց ինչքերը բռնագրաւելու նպատակով:
- Մարտին, Տիարպեքիր, Մալաթիա, Խարբերդ.- Այս քաղաքները Զինադադարէն ետք երբեք չեն գրաւուիր դաշնակիցներուն կողմէ եւ կը շարունակեն մնալ թրքական իշխանութիւններուն ենթակայ: Այստեղ ապրող քրիստոնեաները կա՛մ պատերազմի տարիներուն չբռնագաղթուած բնակիչներ էին, կա՛մ տարագիրներ, որոնք իրենց անձնական նախաձեռնութեամբ վերադարձած էին իրենց բնակավայրերը: 1922էն սկսեալ, անոնց դէմ կիրարկուող ճնշումներն ու բռնութիւնները կը սաստկանան: Այս պատճառով ալ, 1922էն մինչեւ 1923ի վերջը, 3202 գաղթականներ, բոլորն ալ հայեր, կը ձգեն Խարբերդի ու Տիարպեքիրի շրջանները ու ապաստան կը գտնեն Սուրիա[18]: Նոյն ժամանակաշրջանին 2666 հայեր կը գաղթեն Մալաթիայէն ու կը մտնեն սուրիական սահմանէն ներս[19]: Տիարպեքիրի մէջ, 1924էն սկսեալ, այս տեղահանութիւնները նոր տարողութիւն մը կը ստանան եւ այս անգամ կը սկսին ընդգրկել քրիստոնեայ բոլոր համայնքները: Ապրիլ 1924ի տուեալներով, քաղաքին քրիստոնեայ բնակչութիւնը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.- 2000 հայեր, 1500 քաղդէականներ, 1400 ասորիներ, 500 յոյն-կաթողիկէներ[20]: Նուազ քան մէկ տարի ետք՝ Յունուար 1925ին, քաղաքաբնակ քրիստոնեայ բնակչութեան թիւը կը գնահատուի միայն 545 անձ[21]:

- Քրտաբնակ գիւղական շրջաններէն հայերու հոսքը դէպի Սուրիա.- Ասոնք Տիարպեքիրի, Մարտինի, Պիթլիսի, Մալաթիայի եւ Խարբերդի գիւղերու մէջ ապրող հայեր են: Իրականութեան մէջ, անոնցմէ շատեր մաս կը կազմեն քրտական գիւղական եւ երբեմն նաեւ ցեղախմբային համակարգին: Դժուար է անոնց մասին ընդհանուր թիւ մը ներկայացնել: 1924 թուակիր աղբիւրի մը համաձայն, Տիարպեքիրի նահանգին՝ Սիլվանի, Հազրոյի, Լիճէի, Պշերիկի, Ղարզանի ու Սեւերեկի գաւառներուն գիւղաբնակ հայերուն թիւը կը գնահատուի 8040 անձով[22]: Թէեւ այս թիւը կրնայ չափազանցուած թուիլ, բայց եւ այնպէս, 1929ին ծայր առած նոր գաղթը պիտի ապացուցէ այս վայրերուն մէջ հայերու յարաբերաբար խիտ գոյութիւնը: Այսպէս, 1929ի ընթացքին, կ'արձանագրուի մօտաւորապէս 4700 հայերու մուտքը Սուրիա[23]: 1930ին գաղթականական այս հոսքը դէպի Սուրիա կը շարունակուի, բայց այս պարագային մուտքերուն արձանագրութիւնները նուազ յստակ են: Միայն գիտենք, որ Ազգերու Լիկայի ներկայացուցիչին համաձայն, 1929-30ին Սուրիա մտած այս նոր գաղթականներուն թիւը կը գնահատուի 8-10,000[24]:

ՃԵԶԻՐԷԻ ԲՆԱԿԵՑՈՒՄԸ ԳԱՂԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՎ

Երբ կը քննենք ֆրանսական իշխանութիւններուն վարած գրաւման քաղաքականութիւնը Ճեզիրէի տարածքին մէջ, կը նկատենք որ այստեղ միատեղուած էին դասական գաղութատիրութեան մը հիմնական սկզբունքները. տարածքի գրաւում, նոր քաղաքներու կառուցում, գաղթական ժողովուրդներու բնակեցում, բնական հարստութիւններու շահագործում, քաղաքական-ռազմավարական նպատակներու հետապնդում:

Սկզբնական շրջանին ֆրասական իշխանութիւնները կը միտէին այստեղ բնակեցնել միատարր բնակչութիւն մը, որ պիտի ըլլար «ասորա-քաղդէական» խումբը: Այս անուանումը աւելի քաղաքական է եւ անոր մէջ կը խմբուին այն ժամանակ Թուրքիոյ եւ Իրաքի սահմաններուն մէջ ապրող սուրիանիները (ուղղափառ եւ կաթողիկէ), ասորիները (ծանօթ նաեւ նեստորականներ անունով), քաղդէականները: Այս քաղաքանութեան հոլովոյթին մանրամասնութիւնները պիտի չքննենք այստեղ[25]: Պարզապէս պէտք է շեշտել, որ ֆրանսական իշխանութիւններուն սկզբնական ծրագիրը իր զարգացումը ապրեցաւ եւ գաղութատիրական յայտագիրը սկսաւ ընդգրկել ազգային եւ կրօնական այլ խումբեր, որոնց շարքին՝ գլխաւորաբար հայերը:

Կարեւոր է այստեղ նշել, որ 1920ականներու սկիզբը Վերին Ճեզիրէի մէջ թուրքեւսուրիական սահմանագիծին ճշտումը հակամարտութեան նիւթ էր Թուրքիոյ եւ ֆրանսական հոգատար իշխանութիւններուն միջեւ, ինչ որ պատճառ էր որ այստեղ տիրէր ընդհանուր անկայուն իրավիճակ: Այնպէս որ գաղթական ժողովուրդներու (սկզբնական շրջանին

մեծամասնութեամբ քրիստոնեաներ) բնակեցումը Խապուր Գետի երկու ափերուն՝ առաջին հերթին կը միտէր ֆրանսական իշխանութիւններուն դիրքերը հզօրացնել, նոյն ժամանակ ալ ծրագիր կար գիւղատնտեսութեան ճամփով վերարժեւորել այս վայրերու բերրի հողը: Ծրագիրին արագ յաջողութիւն մը անպայմանօրէն պիտի ըլլար յաղթանակը Սուրիոյ մէջ ֆրանսական հոգատարութեան: Ծրագիրին իրականացումը կը պահանջէր ունենալ նաեւ զինուորական ուժ: Այս իսկ պատճառով, երբ այստեղ կը հաստատուին առաջին գաղթական խումբերը, անոնց շարքերէն ալ կը ստեղծուին նաեւ զինեալ ջոկատներ, որոնք հաստատուած էին քաղաքային նորաստեղծ կեդրոններուն մէջ՝ պաշտպանելու համար տարածքը տեղական թափառաշրջիկ ցեղախումբերու յարձակումներէն:

Արդ, բնակեցումի եւ քաղաքային նոր կեդրոններու հաստատման այս ծրագիրին յաջողութեամբ՝ միտում կար արժեզրկել սահմանէն անդին գտնուող թրքական քաղաքներուն իշխող դերը: Ասոնց շարքին էին Նիսիպինը, Մարտինը, Ճեզիրէթ իպն Օմարը (Ճիզրէ), որոնք դարերէ իվեր այս տարածաշրջանին մէջ տնտեսական եւ քաղաքական ազդեցութեան կարեւոր կեդրոններ էին: Միաժամանակ, սուրիական Վերին Ճեզիրէի մէջ քաղաքային եւ գիւղական կեանքը զարգացնելով, ֆրանսական տեղական իշխանութիւնները կը ձգտէին նստակեաց դարձնել այս վայրերուն մէջ գտնուող թափառաշրջիկ շատ մը ցեղախումբեր: Պարզ է որ անոնց ներկայութիւնը, արածելու եւ արօտավայրերու սահմաններու շուրջ յառաջացող վէճերը այս վայրերուն մէջ մնայուն հակամարտութեան աղբիւրներ էին:

Մէկ խօսքով, ֆրանսական իշխանութիւններուն հաշիւներուն մէջ Վերին Ճեզիրյի բնակեցումի եւ զարգացումի ծրագիրին մէջ ռազմական եւ տնտեսական նպատակները կը միախառնուէին: Ահաւասիկ այսպիսի պայմաններու մէջ է որ կը հիմնուի Վերին Ճեզիրէի առաջին քաղաքային կեդրոնը, որ կ'ըլլայ Հասաքէն: Այսպէս, Մարտ 1922ին, ֆրանսական բանակային միաւոր մը առաջին անգամ ոտք կը դնէ այս տարածքին մէջ եւ, հակառակ կարգ մը տեղական ցեղախումբերու ընդդիմութեան, կը յաջողի գրաւել Հասաքէ, կամ Հասաչէ կոչուող հիւղակին նախկին օսմանեան զօրակայանը եւ անոր աւերակներուն վրայ կը հիմնուի ֆրանսական զօրակայան մը (*պուրճ*): Շուտով այս կառոյցին շուրջ կը կառուցուին բնակարաններ, որոնց բնակիչները Թուրքիոյ Մարտինի շրջանէն փախուստ տուող քրիստոնեաներ էին՝ սուրիանիներ եւ հայ կաթողիկէներ: 1922ի վերջաւորութեան այստեղ արդէն կը հաստատուի մօտ 50 ընտանիք[26]: Այսպէս է որ ծնունդ կ'առնէ Հասաքէ քաղաքը՝ Խապուրի եւ անոր հարկատուներէն Ճաղճաղի միացման կէտին ափին:

Այնուհետեւ Հասաքէի զարգացման հոլովոյթը շատ մը գիծերով նման պիտի ըլլար Ափրիկէի կամ Ասիոյ մէջ զինուորականներու կողմէ

կառուցուած գաղութային քաղաքներուն: Այսպէս, տեղւոյն բարձրաստիճան զինուորականները իրենք էին նաեւ սոյն քաղաքներուն ճարտարապետերը: Հասաքէի պարագային գիտենք որ քաղաքը արագ զարգացում կ'արձանագրէ յաջորդող երկու տարիներուն: Համաչափ եւ ուղիղ գիծերով փողոցներ կառուցելու ծրագիր մը գործադրութեան կը դրուի, կեդրոնական հրապարակ մը կը ստեղծուի, կը կառուցուին եկեղեցիներ, դպրոցներ, մզկիթ մը, բուժարան մը[27]: Հոս տեղակայուած զինուորական գունդին անդամները նոյնպէս մեծ մասամբ տեղաբնիկ կամ շրջակայ վայրերէ (Հալէպ, Ուրֆա, Մարտին) եկած քրիստոնեաներ էին (ասորիներ, քաղդէականներ, սուրիանիներ), որոնցմէ շատերուն ընտանիքները նոյնպէս հաստատուած էին նորակառոյց Հասաքէի մէջ[28]: 1925ի սկիզբը աւանին մէջ կ'ապրին 779 բնակիչներ (756 քրիստոնեայ, 23 իսլամ): Քրիստոնեաները մեծ մասամբ Մարտինի շրջանէն էին[29]: Հետզհետէ, Հասաքէի շուկան շրջանային կարեւորութիւն կը ստանայ: Իրենց գնումներուն համար տեղական ցեղախումբերը պէտք չունէին այլեւս սահմանէն անդին թրքական քաղաքներ ուղղուելու: 1932ին, քաղաքը կը հաշուէ արդէն 6 հազար բնակիչ, որուն 5700ը քրիստոնեաներ են[30]:

Վերին Ճեզիրէի մէջ Հասաքէի հիմնումին յաջորդած երկրորդ կարեւոր քաղաքային կեդրոնը կ'ըլլայ Քամիշլին: Ֆրանսական բանակները այստեղ մուտք կը գործեն 3 Օգոստոս 1926ին: Նոյն տարուան Սեպտեմբերին ֆրանսացի սպաներ հիմը կը դնեն այս նոր քաղաքին[31]: Կարեւոր է նշել թէ մինչեւ այդ Քամիշլին ընդգրկող սահմանային այս գօտին կը մնար Թուրքիոյ հետ վիճելի տարածք մը, այնպէս որ ֆրանսական բանակները կը խուսափէին այստեղ ոտք դնելէ: Սահմանային այս նոր կեդրոնին ստեղծումը աւելի շռնդալից կ'ըլլայ քան Հասաքէինը: Այս վերջինին նման, Քամիշլիի մէջ ալ առաջին հիմնուած կառոյցը կ'ըլլայ ֆրանսական բանակի զօրակայանը, Ճաղճաղ Գետի ափին եւ միայն 1200 մեթր հեռաւորութեամբ թրքական Նիսիպին քաղաքէն: Խորքին մէջ, Քամիշլիի հիմնադրութեան բուն պատճառը Նիսիպին քաղաքին շրջանային կարեւորութիւնը նսեմացնել էր եւ անկէ խլել տնտեսական եւ քաղաքական շրջանային կեդրոնի դերակատարութիւնը: Առաջին բնակիչները Մարտինի, Միտիաթի եւ Նիսիպինի կողմերէն եկող սուրիանիներ (ուղղափառ եւ կաթողիկէ), հայ կաթողիկէներ եւ հրեաներ էին: Այս վերջիններն նախապէս կ'ապրէին Նիսիպին Քաղաքին մէջ: Հրեաները Քամիշլի կը գաղթեն 1927ի սկիզբը, այլ խօսքով քաղաքին հիմնումէն քանի մը ամիս ետք, այս ձեւով դառնալով անոր առաջին բնակիչներէն: Հոկտեմբեր 1927ին Քամիշլիի մէջ կային արդէն 650 հրեաներ, իսկ 1934ին՝ մօտ 2 հազար[32]:

Հիմնադրութենէն միայն մէկ տարի ետք, քաղաքը արդէն կը հաշուէր 3000 բնակիչ: Իսկ 1932ին անոր բնակչութիւնը կը հասնէր 7500ի, որուն մեծամասնութիւնը քրիստոնեաներ էին[33]:

Ֆրանսական իշխանութիւնները այստեղ հաստատուելու դիւրութիւններ կ'ընծայեն նորաբնակներուն: Նոյն այս տարիներուն Խապուրի եւ Ճաղճաղի հովիտին մէջ նոր գիւղեր ալ կը հիմնուին, իսկ բազմաթիւ մշակելի հողեր նորաբնակ գիւղացիներուն տրամադրութեան տակ կը դրուին: Քամիշլիի քաղաքապետութիւնը բնակութիւնը քաջալերելու նպատակով, յարաբերաբար աժան գիներով հողեր կը սկսի վաճառել քաղաքին մէջ բնակելի նոր տուներ կառուցել փափաքողներուն: Հասաքէի մէջ, քաղաքին հիմնումին յաջորդած առաջին տարիներուն, հողատարածքներ ձրիօրէն կը շնորհուին քրիստոնեայ բնակիչներուն, բնակարաններ կառուցելու համար: Սուրիոյ Գիւղատնտեսական Դրամատունը վարկեր կը տրամադրէ այս տարածքին մէջ հաստատուած գիւղացիներուն անհրաժեշտ գործիքները եւ սերմնացուն գնելու համար[34]:

Ֆրանսական վարչամեքենային դիտանկիւնէն, 1920ականնե-րուն Թուրքիայէն հասնող քրիստոնեայ գաղթականները իրենց էթնիք կամ կրօնական պատկանելիութեան պատճառով կը համարուէին ռազմավարական պիտանի եւ շահաւէտ տարր մը: Ահաւասիկ այս պատճառով ալ այս գաղթականներէն շատեր ֆրանսական իշխանութիւններուն նախաձեռնութեամբ եւ քաջալե-րանքով բնակութիւն հաստատեցին Վերին Ճեզիրէի մէջ եւ դար-ձան այստեղ հիմնուած նոր քաղաքներուն եւ գիւղերուն առաջին բնակիչները:

Այս ձեւով ալ նաեւ սկիզբ առաւ սուրիական Վերին Ճեզիրէի մէջ հայկական համայնքային կեանքը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] François Georgeon, "Les Foyers Turcs à l'Époque Kémaliste", *Turcica*, T. XIV, 1982, էջ 168-215:

[2] E. J. Zurcher, *The Unionist Factor: The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement, 1905-1926*, Leiden, Brill, 1984, էջ 103-105:

[3] Taner Akçam, *A Shameful Act: the Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*, New York, Metropolitan Books, 2006, էջ 303:

[4] Vahé Tachjian, *La France en Cilicie et en Haute-Mésopotamie: Aux Confins de la Turquie, de la Syrie et de l'Irak (1919-1933)*, Paris, Karthala, 2004, էջ 196-197:

[5] CADN (Centre des Archives Diplomatiques de Nantes), fonds Ankara, 2e série, n° 73, նամակ Բարձր քոմիսար Վեկանէն Փարիզ՝ Արտաքին Գործոց Նախարարութեան, 1923 Նոյեմբեր 8, Պէյրութ:

[6] Tachjian, էջ 277-278:

[7] Ayhan Aktar, "Homogenizing the Nation, Turkifying the Economy: The Turkish Experience of Population Exchange Reconsidered", R. Hirschon (ed.), *Crossing The*

Aegean: An Appraisal of the 1923 Compulsory Population Exchange between Greece and Turkey, New York, Berghahn Books, 2003, էջ 92:

[8] Գրիգոր Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն*, Ա. Հրատ., Մ. Նահանգներ, Կոչնակ Հրատ., 1934, Նիւ Եորք, Բ. Հրատ., 1988, էջ 829. նաեւ՝ Նուպարեան Գրադարանի արխիւներ (Փարիզ), նամակ Խայիկեանէն Տոքթ. Մելքոնեանի, 25 Ապրիլ 1922, Պէյրութ:

[9] CADN, mandat Syrie-Liban, bureau diplomatique, նամակ Հայ Ազգային Միութենէն Բարձր Քոմիսար Զօրավար Կուրոյի, 3 Մարտ 1922, Հալէպ:

[10] Raymond H. Kévorkian, *Le Génocide des Arméniens*, Paris, Odile Jacob, 2006, էջ 750-751:

[11] Նոյն, էջ 437-440:

[12] Նոյն, էջ 521:

[13] Tachjian, էջ 259:

[14] Kévorkian, էջ 770:

[15] Tachjian, էջ 262-263:

[16] Նոյն, էջ 217-224:

[17] Նոյն, էջ 265:

[18] CADN, mandat Syrie-Liban, 1er versement, cabinet politique, n° 996, Armée du Levant, 2e division, SR, "mouvement des immigrés en Syrie", 15 Դեկտեմբեր 1922էն 15 Դեկտեմբեր 1923:

[19] CADN, "mouvement des immigrés en Syrie", 1 Նոյեմբեր 1922էն 31 Դեկտեմբեր, 15 Ապրիլ 1923էն Հոկտեմբեր 1923:

[20] CADN, mandat Syrie-Liban, 1er versement, n°1782, Turquie, compte-rendu de renseignements, n° 21, 19 Ապրիլ 1924, exemplaire n° 19, «Expulsion de chrétiens de la région de Diarbekir»:

[21] CADN, mandat Syrie-Liban, 1er versement, n°1782, Turquie, compte-rendu de renseignements, n° 57, 17 Յունուար 1925, Պէյրութ, exemplaire n° 17, «Minorités: situation des chrétiens de Diarbekir»:

[22] CADN, mandat Syrie-Liban, 1er versement, n°1782, Turquie: compte-rendu de renseignements, n° 27, 31 Մայիս 1924, exemplaire n° 19, «Vexations contre les éléments non-turcs: la déportation des chrétiens de Diarbekir»:

[23] Tachjian, էջ 283:

[24] CADN, mandat Syrie-Liban, 1er versement, bureau diplomatique, n° 2544, նամակ n° 375, 22 Դեկտեմբեր 1929, Պէյրութ, էջ 2:

[25] Այս մասին տե՛ս՝ Tachjian, էջ 291-306:

[26] MAE (Ministère des Affaires étrangères), Levant 1918-1940, Syrie-Liban, vol. 298, Հայր Փուատըպարի կողմէ պատրաստուած տեղեկագիր՝ «La Haute-Djezireh (notes de voyage)», Յունիս 1925, Պէյրութ, f° 162:

[27] Նոյն:

[28] Christian Velud, "*Une Expérience d'Administration Régionale en Syrie durant le Mandat Français: Conquête, Colonisation et Mise en Valeur de la Gazîra, 1920-1936,*" դոկտորական աւարտաճառ, Լիոն 2 Համալսարան, 1991, էջ 468. նաեւ՝ CADN, mandat Syrie-Liban, 1er versement, cabinet politique, n° 550, նամակ

(n° 2418 / S.RR) Պիլլոթէն Հալէպի մէջ Թուրքիոյ հիւպատոսին, 17 Սեպտեմբեր 1926, Հալէպ:

[29] Հայր Անթուան Փուատըպարի կողմէ պատրաստուած տեղեկագիր, Յունիս 1925, ff. 162-163:

[30] CADN, mandat Syrie-Liban, 1er versement, cabinet politique, n° 576, «Situation des réfugiés en Haute-Djazireh, avril 1932», Հայր Փուատըպարի տեղեկագիրը ուղղուած ընդհանուր բժիշկ Ժիւլին՝ Բարձր Քոմիսարութեան (Պէյրութ) առողջապահական եւ ընկերային ծառայութիւններու տնօրէն, 25 Ապրիլ 1932, Պէյրութ, էջ 1:

[31] CADN, mandat Syrie-Liban, 1er versement, cabinet politique, n° 550, «La ville de Kamechlié», անստորագիր տեղեկագիր, 1937 թուակիր, էջ 2:

[32] MAE, Levant 1918-1940, Syrie-Liban, vol. 302, «Situation des réfugiés de Haute-Djezireh, octobre 1927», Հայր Փուատըպարի կողմէ գրուած տեղեկագիր, 6 Յունուար 1928, Պէյրութ, f° 62:

[33] CADN, «Situation des réfugiés en Haute-Djazireh…», նոյն, էջ 1:

[34] MAE, Levant 1918-1940, Irak, vol. 54, նամակ (n° 80/KD) Ժուվենէլէն Արտաքին Գործոց Նախարարութեան, 9 Փետրուար 1926, Պէյրութ, f° 204; CADN, mandat Syrie-Liabn, 1er versement, cabinet politique, n° 610, հրէական համայնքային խորհուրդին կողմէ յղուած խնդրագիր Սուրիոյ եւ Լիբանանի Բարձր Քոմիսարին, 17 Ապրիլ 1934, էջ 4:

Syrian Jazira and the Armenians in the 1920s:
A Colonialist Episode During the French Mandate
(Summary)

Vahe Tachjian
vtachjian@gmx.de

In the early 1920s thousands of Armenian refugees were settled in the Syrian Jezira district. These new settlements were established at a time when thousands of Armenians had already been settled and had started to make a living in Aleppo, Beirut and Alexandretta refugee camps.

These newest refugees coming from Turkey were settled in little known localities like Jezira and elsewhere, far from other Syrian Armenian settlements. The new arrivals were mostly Kurdish-speaking Armenians who had been uprooted from rural regions east of Diarbekir as well as from areas southwest of Bitlis.

The paper highlights the settlement of these new incoming refugees and examines their treatment by the French mandate authorities, who had adopted a colonization policy concerning Jazira. The settlement of the refugee Armenians in that area was planned to provide strong leverage for the success of this colonization policy.

This is the time when new Armenian settlements like Hasake and Kamishli mushroomed in Syrian Jezira, where the Assyrian and Armenian settlements were envisaged as playing a pivotal role in the adoption of the policy.

FROM REFUGEES TO DECENT SYRIAN CITIZENS: ARMENIANS IN SYRIA UNDER THE FRENCH MANDATE (1921-1939)

Seda Altuğ
seda.altug@boun.edu.tr

The majority of Syrian-Armenians are the descendants of Ottoman-Armenians who survived the 1915 Armenian Genocide. Various localities in Ottoman-Syria formed the main destination of forced displacement following the Genocide and its immediate aftermath. Mass violence against Armenians did not terminate in 1915, though. It continued, in different forms at various times and places throughout the 1920s, resulting in three big migration waves first to Ottoman, and later to French mandated Syria and Lebanon. The initial and the biggest wave to Syria was during 1915, when Armenians were exiled to concentration camps inside Ottoman-Syria.[1] Many of these became the sites of the ugliest massacres. The second biggest wave corresponds to the end of the war in Cilicia between the French army and the Turkish nationalist forces,[2] which was followed by the Ankara agreement (October 20, 1921) delimiting the border between the newly founded Turkish Republic and Syria under the French mandate.[3] The third wave of expulsion towards French Syria, in particular north-eastern Syria, took place following Turkey's military suppression of the Kurdish Sheikh Said Revolt in 1925. Armenians who had survived the Genocide and had continued living under the "protection" of local Kurdish lords, in south-eastern Turkey, yet in a totally devastated world, had lost their shield, due to the social and political break-up of the Kurdish habitat by the Turkish state. According to figures compiled by the League of Nations, 8000 to 10,000 Armenians from the countryside of Diyarbekir, Batman, Mardin, Şirnak, Si'rt, Bitlis, and Cizre joined the Armenian deportees who had arrived in Syria earlier in 1915-16 and 1921-23.[4]

Along with other groups, Armenians arrived in French-Syria and Lebanon as refugees, and many, but not all, initially lived in refugee camps on the outskirts of main Syrian towns and along the Turkish-Syrian border. Despite being under-researched, the refugee issue was one of the most controversial issues in the post-WWI Levant, posing serious concerns not only for the governing colonial powers and the home state, but also for both the displaced and host populations.[5] The relationship between the newcomers, and the local society, as well as the Arab nationalists and French colonial state were not static and unidimensional. Ahistorical and sectarian explanations fall short of explaining the multi-layered and complex encounters that were often shaped through the political, economic and social concerns of the involved parties. This

article, by focusing on the public debates (in)directly around the refugee issue at certain political moments in the 1920s and 30s in French-Syria, attempts to shed light on the process of construction of hegemonic Syrian-Armenianness.

The history of the post-genocide Armenian world is an understudied scholarly field, as is that of the Armenians in Syria and Lebanon.[6] One of the most significant reasons underlying the scarcity of studies in post-genocide Armenian history is the continuing denial of the Turkish state vis-à-vis the Genocide, and hence the inevitable (non-)academic focus to demonstrate that Armenians had been subjected to genocidal violence sponsored by the Ottoman empire in 1915. Thus, most studies are political histories that concentrate on modern Armenian history until 1915. Since the 1960s, the (non)scholarly field of post-genocide Armenian history in Syria has been comprised of a small number of local histories of hometowns, histories of Armenian institutions founded in Syria, memoirs and journalistic accounts, mostly in Armenian and at times in Arabic. Few scholarly works, though, have incorporated the social, economic and political history of the Armenian refugees into the general history of French-Syria. Furthermore, no theoretical engagement with the fields of mandate history, imperial history and refugee studies has been embarked on.

Similarly, mainstream Syrian-Armenian memories present history as already "clean" in a self-made way without any process of negotiation, conflict or resistance. These narratives leave no room for tracking the confrontations of the various local actors with the colonial/national state power and the resulting transformations in the political and social subjectivities. This paper attempts to problematize such ahistorical narratives and unveil the processes of conflictual or other encounters between the locals and Armenian refugees following their arrival at their new residences. Through these processes rival understandings of Syrian-Armenianness were carved out in Syria under the French mandate (1921-1946).

***

In the Syrian-Armenian collective memory - regardless of the later refugee waves - 1915 is seen as the decisive event, a violent ending, but also a new beginning and a new period of struggle in a hostile and foreign setting in Ottoman- and later in French-Syria. The 1915 violence which took different forms in social, economic, cultural, and geographic terms, constitutes the foundation of *all* the historical narratives. Be they local history or the history of the French mandate, the narratives begin with the lengthy and extensive narratives of violence of all kinds that the Armenians were exposed to back in their native towns and on the way to, or prior to, their arrival in Syria. An entire life was left behind in an absolute fashion and would not be returned. Its fields, trees, rivers, and climate are remembered with extreme grief, and the new refuge is never really a substitute. The French mandate rule found upon arrival

in Syria and the colonial agency are obscured, or rather assimilated, into a survival narrative where the main provider is depicted as the "(Arab) Syrians" if not the "Armenian community" itself. The new life in French-Syria indicates a positive change from bad to good, from insecurity, fear, instability and oppression back in the hometown to security, stability, and tolerance in the host land. Generosity and respect on the part of Syrian Arabs are presented as the underlying factors in this novel safety and security. No mention is made of the distress felt by the local Syrians due to the refugee inflow, nor of the dominant French colonial perspective vis-à-vis the Christian refugees and the fragile bargaining between the two, nor of the tacit agreement between the Syrian Arab nationalists and the Armenian leadership of the early 1930s.

THE REFUGEE ISSUE IN FRENCH-SYRIA

Surviving the massacres and arriving in Syria under conditions of extreme impoverishment, the refugees' survival and later gradual integration into the host society was not as smooth as the official history and present-day memories claim. Neither the Arab nationalist press of the 1920s nor the local population was as welcoming and tolerant towards the newcomers as the later written histories and memories allege. Still, one should refrain from assuming that the Christian refugee-local population relationship was one-dimensional, or that the Syrian Arab nationalist elites were unanimous. The relationship took different forms according to region, class, politics and other factors.

However, there is almost no integrated and relational history of the controversial encounters between the incoming refugees and the local population during the early days of French colonial rule in Syria.[7] Nora Arissian's work in Arabic entitled "Echoes of the Armenian Genocide in the Syrian Press" may be considered the first attempt to write the history of the Armenian Genocide through the eyes of Syrian Arab nationalists.[8] Together with her study of the memoirs of Syrian intellectuals on the genocide,[9] her work has paved the way for further research on the topic.[10]

Regarding the refugee issue, the French authorities were concerned with the economic, social, and political costs of settling refugees in inner Syria or in the Turco-Syrian frontier zone. They had to deal with the matter without running into a deep crisis of legitimacy, in the eyes of both the local Muslim majority and the refugee Christians in Syria. Justifying their presence in Syria and Lebanon as "the protectors of Christians of the Orient," the mandate authorities had to avoid increasing anxiety among Syrian Arab nationalists, too. French diplomatic archives are full of reports from the 1920s about the refugee populations - especially Armenians and Kurds from Turkey, and Assyrians from British Iraq - and various projects for their settlement. These documents demonstrate that the French mandatory central authorities did not adopt a

comprehensive refugee policy, but embraced a pragmatic approach that took into account particular political, economic, diplomatic, and social concerns.

In parallel, the new Turkish republic was anxious about an "enclave of undesirables" - in particular, Armenians and Kurdish political refugees - formed outside its control, just south of its border in northern Syria.[11] Numerous items of correspondence between Ankara and the French High Commissariat in Beirut include Turkish complaints over "malicious elements," namely the Armenians in the frontier zone and rebellious Kurdish tribes residing in Syria.[12] The settlement of Armenians along the Turkish-Syrian border, their recruitment into the French administration and army, and trans-border incursions by Kurds into Turkey form the *sine qua non* topic of the intelligence reports, telegrams, and other correspondence between 1925 and 1927. The French are criticized for providing protection to Kurdish rebels and allowing the settlement of Armenians in areas near the border.

The French central authorities were well aware of the need to regulate the refugee flow. The High Commissariat in Beirut had, after 1925, become more responsive to the demands of the Turkish Foreign Ministry. In a report drafted after the Sheikh Said Revolt and entitled "Du Passage en Syrie des Populations Kurdes ou Chrétiens ou des Déserteurs Turcs," High Commissar Maurice Sarrail overtly proposed to Paris to "organize the regulations pertaining to accepting refugees in Syria."[13] Despite the pragmatic approach adopted by the French central authorities, certain local officers still held their ground and took initiative in the settlement of the refugees, in particular Kurdish refugees from Turkey. In a letter dated January 27, 1925, a local French officer describes the Turkish allegations of Armenian colonization on the border as mistaken and exaggerated:

> Since the beginning of the armistice, the biggest problem that the mandatory power has been trying to resolve is the refugee problem. We have received 96,450 refugees since then, and they are all impoverished people. France has made great economic sacrifices for them. Just for the sake of relieving pressure on the north of Syria, we have settled two-thirds of these poor people in inner Syria. The rest reside in Aleppo and in the Sanjak of Alexandretta, and their settlements were realized calmly and in deference to the Muslim population.[14]

Syrian Arab nationalists, too, hotly debated the "refugee problem." This was as much a political issue as it was a social and economic problem until the mid-1920s, especially as the settlement of refugee groups - in particular the Armenians, in inner Syrian cities - began to be socio-economically more visible.[15] Relief, food programs, and settlement arrangements were offered in particular to Armenian refugees by several missionary organizations, as well as

the French mandatory authorities. The refugee issue along with the French surrender of some Syrian land to Turkey formed the two major criticisms by Syrian-Arab nationalist elites as they expressed their indignation towards the Ankara Agreement in the early mandate years. The arrival and settlement of the refugees either in inner Syrian towns or in remote corners of the state were directly linked to colonial "divide and rule" politics. The flow of refugees into the Syrian space, which persisted throughout the 1920s without any expression of consent by the local Syrians, evoked a "lack of agency" because of a "sovereignty deficit" in the Syrian national self. Arguing that Syria had turned into a "whore," as refugees could freely enter the country, several articles in the nationalist press demanded regulation of the border without regard to the ethnicity and religion of the refugee group.

The refugee issue was not necessarily experienced as, or translated into, sectarian Muslim-Christian hostility, though. French colonial accounts viewed the conflict through sectarian lenses and argued that it was due to "some chauvinistic personalities, in particular the Muslims who were apprehensive of the arrival of an avalanche of Christians since their presence would have an effect on the election results." Despite the fact that the situation also gained a sectarian dimension in later years, French reports usually underestimated the social and economic dimension of the issue as well as the everyday tensions between the local Syrian Christians and the incoming Christian refugees. The memories of refugee Christians about their early days in Aleppo refer to the uneasiness in everyday interaction between local Christians and incoming refugee Christians.[16]

The refugee issue was intensified every now and then during different political circumstances, like general elections, the announcement of the new citizenship law (1925), the year of the economic crisis (1929), and throughout the period between 1925 and 1933 when the refugee inflow to Jazira was at its peak.

Aleppo, having the biggest migrant population, was the city where social and economic discomfort was translated into communal fights, thanks to French sectarian politics in relation to governing the ethno-religious difference in Syria and Lebanon.[17] 35% of Aleppo's population was composed of Christians, and French officers embarked on manipulative efforts to "counter" Arab nationalist political activity through playing the "Christian card." In two important instances the refugee issue had top priority in the nationalist political agenda. One instance was the late 1920s, when the adverse effects of the Great Depression started to be felt in French-Syria as the Syrian pound was tightly tied to the fluctuations of the French franc.[18] The second corresponded to the settlement of Kurds, Armenians, Syriacs and other Christians from Turkey in Jazira between 1925 and 1930. Despite a relative decrease after 1930, the

arrival of nine thousand Iraqi-Assyrians in French Jazira in 1933 provoked great anger among Arab nationalists.[19]

In the early 1920s, the main focus of Syrian discomfort was the colonization of Syrian space by the refugee population. The immigrants (*muhajirun*) were targeted as being the cause of the economic adversities and social deprivation experienced by the local Aleppenes. The nationalist press drew a fundamental distinction between the newcomers and the locals, usually without referring to the religion or ethnic affiliations of the newcomers. In certain instances, the refugees were labelled "parasites" [*muhajina, tufayli*] who arrived in the country and seized the locals' jobs; yet the local population was not defined in exclusive religious or ethnic terms such as "Muslims" or "Arabs." An article in *Alifba'* in 1923 reads:

> There is no force that prevents their flood-like assault on us. They are the main cause of the inflation and lack of premises for rent in the city. The misfortune is there in front of our eyes, but we can do nothing to get rid of this curse [*bala'*].[20]

The same article continued with a softer tone by referring to "Syrian generosity:"

> If we were well to do, we would help them, but that's enough! We are not against the distribution of land to those poor refugees, but everything has a limit; the facilities provided for refugees have exceeded those limits. The number of immigrants and strangers [*ghuraba*] is more than the number of locals [*wataniyyun*] in government offices and the number of refugee workers in the city is more than local workers.

The excessive number of jobless refugees, who were stealing the jobs of Syrians[21] where there was already unemployment[22] was a commonly recurring phrase in the newspaper stories of the early 1920s. Another "misfortune" introduced by the refugees, according to the nationalist press, was their sets of values [*nizam 'orfi*] which were viewed as "harmful" for the country. The Damascene Arab nationalist newspaper *Al-Sha'b* noted that the communal-land ownership system [*nizam masha'a*] in the Armenian settlements [*musta'marat*] resembled that of the communist system which the whole world, [including the French] were against ... the head of the village allots the land to the villagers in the settlement; he distributes the equipment, collects the harvest and distributes it equally between the villagers and also it is he who takes the collective decisions concerning the daily needs of the settlement population.[23]

The author first compared this system to the collective landownership of feudal times, then drew parallels between the social structure of the Armenians and that of a militaristic order, and lastly argued that this social order was

informed by "communist principles." The article ended with the author's call for attention to the alarming likely "contamination of Syria by the red danger." By bringing the "red danger" into the refugee issue, the writer appealed to the anti-communist sensitivities of the French mandatory power, and highlighted both "common interests" and "common enemies" shared by the Syrian-Arab nationalist elites, as the ruled, and the French, as the ruler.

The granting of Syrian citizenship to the Armenian refugees by the mandate authorities in September 1924 institutionalized the Armenians as one of the nine sects (*millet*) in French-Syria. It was one of the first instances where the religion of the refugees was referred to in an explicit way. Watenpaugh calls the negotiations between the colonial power and the Armenian refugees a "survivor's bargain." He argues that the "ambiguous and vulnerable status of the Armenians in Syria forced the communities to mobilize political and cultural resources and to accept governmental and non-governmental paternal and, albeit, often altruistic help, a process which he denotes as a "survivor's bargain" after Deniz Kandiyoti's concept of "patriarchal bargain."[24] In return for their cooperation with the social, economic, and ideological processes of imperialism, the Armenian sect would receive material and discursive support for its corporate preservation as a distinct entity and its transformation into a distinct class. Writing the conflictual local-refugee relationship into a sectarian ledger was still not the hegemonic political narrative in Syria in the 1920s. However, the French colonial strategy of reinforcing and expanding the political spaces reserved for Armenians in the new confessional system in Syria, in order to advance their interests, accentuated this alignment. The immediate aftermath of the 1926 elections - when the High Commissioner decided to redistribute some of the existing seats in the Syrian national representative council in order to counter the nationalist vote - triggered anti-Armenian sentiments. These were manifested in terms of Muslim-Christian contests in Aleppo.[25] As a result of French manipulation of population figures, the Armenians were accorded two representatives in the 1926 parliamentary elections,[26] and these elections were boycotted as illegitimate by the leading nationalist political party, al-Kutla al-Wataniyya. "Within only forty-eight hours, the Christians came to have six whereas the Muslim majority got only five seats" stated the newspaper *Al-Sha'b* with bewilderment and anger.[27] The article continued: "By decreasing the number of Muslims from 30 thousand to 25 thousand and by not recording the number of Armenians emigrating out of Syria, the locals' [*ahl al-balad*] right to vote and elect was conferred on foreigners."[28]

The unity of Syria was the primary political agenda of the Arab nationalist movement in the 1920s. The nationalists continuously protested against secession [*infisal*], i.e. the division of Syria into four autonomous units [*al-*

aqdiyya al-arba']. The divided Syria was labelled "the dispossessed homeland" [*al-watan al-salb*], while "united Syria" [*al-wahda al-suriyya*] was put forward as the goal [*dhala*] aspired to by the Syrians. All Arab nationalist parties (from the most radical Shahbandaris to the pro-French liberal constitutionalists), had invested in the question of Syrian unity, which was fiercely contested by the French and their local Syrian beneficiaries; however, the nationalists rarely radically questioned the legitimacy of French rule in their approach to the refugee issue. Particularly in the years of economic hardship in the late 1920s, one hardly comes across radical critiques of French colonial rule or its role in hindering economic development in Syria. It was usually the refugees who were slandered, othered and viewed as the cause of unemployment and rising prices. The French colonial state was appealed to, in the search for common ground against the refugees, or at times, against Turkish assaults and harmful propaganda that endangered the Syrian entity [*kayân*]. The French mandate authorities were asked for "proper governance" and were reminded of their mandate responsibilities towards Syria as assigned by the League of Nations.[29]

One of the rare instances when French rule in Syria was directly opposed by the locals was in the immediate aftermath of the first massive anti-French uprising, the Great Revolt (1925), where a battalion of Armenian-French soldiers fought Syrian anti-French rebels.[30] It led to an attack by Syrian nationalists on the Armenian quarter in Damascus and the killing of some thirty Armenians. These killings, however, were 'justified' because of the Armenians' "proven unfaithfulness" and the claim that "they [the Armenians] have been fighting against those on whose land they are camping."[31] The French were blamed for the Armenian presence in Syria, and thus for the colonization [*istia'mar*] of Syria and the mobilization of Armenians against local Syrians.

In prallel with the above-mentioned economic deprivation and social and political apprehensions regarding French rule in the country, the last and biggest wave of refugees from the eastern provinces of Turkey in the late 1920s, and of Assyrians from Iraq in 1933 to northeastern Syria, *Jazira*, caused extreme alarm and anxiety among Syrian Arab nationalists. The way the nationalists reacted to this latest influx of refugees differed from their previous reactions and was expressed as "harmful strangers vs. outraged Syrians." The settlement of these refugees in Jazira was considered a "violation of the sanctity of the Syrian body and national self," while the refugees were viewed as French "columns."[32] The arrival of refugees in big numbers created fear that more people were on their way to Syria. The newspapers were full of news giving fictitious numbers for new "incursions." It was through this controversial and contested process of the French opening up of the Jazira lands to non-Arab and non-Muslim refugees that Jazira came into conflict with the Syrian national body for the first time.

Syrian Arab nationalists viewed the settlement of refugees in Syrian Jazira and the following land distribution to refugees as fundamentally unjust and illegitimate acts, comparable in essence to the "settlement of Zionist settlers in Palestine." Nationalist newspapers described the French- and League of Nations-sponsored projects of settlement in Jazira as part of a greater plan for creating an Armenian homeland [*watan qawmi armani*] in the middle of the "Arab homeland." Unlike during earlier periods, the French mandate rule and the "humanitarian aid" of the League of Nations were condemned as being pretexts for the "occupation of the country by Armenians." *Al-Sha'b* wrote that "the more money is donated to the Armenians by the League of Nations, the more Armenians will flow to Jazira, which will soon result in turning Jazira into their national homeland."[33] Moreover, talks between the French authorities and Armenian community leaders, asking permission to build permanent houses and to transfer the Armenians from the refugee camps to the newly built residences, were interpreted as a request for a new homeland.[34] This instance seems to have left an important imprint on the Armenian collective memory in Aleppo even in the 2000s. Armenian interviewees in Aleppo remembered this historical incident as an event which affirms the "official Arab generosity" renouncing Arab society's "jealous" tendencies.

The anxiety about (dis)unity of Syrian land, to which French colonial, religious and administrative politics contributed greatly, led Arab nationalists to perceive the arrival of the refugees and the gradual improvement of their lot as "penetration into Syrian land by building houses thanks to donations from western states, especially Britain." If not on the streets, certainly in their newspapers, nationalists protested that "they [the Syrians] have to pay the price of the refugees' tragedy [*musiba*]",[35] and at the same time suffer under their "invading armies" [*al-juyush al-ghaziyya*].[36]

"The settlement of the refugees on Syrian-Arab land" - an expression that frequently pops up in the newspapers, is usually followed by an account of the role of "foreign powers" in the "derogation" of Syria, its land and people. It reveals Syrian nationalist anxiety due to the lack of self/national agency in the making of their own historical destiny. The articles evoked grievances resulting from the unjust treatment and neglect of Syrian agency. The title of the above-mentioned article, "Disrespected Syria" [*Suriyya allati la hurmata laha*] epitomizes this national(ist) anxiety due to the "sovereignty deficit" of the Syrians concerning their domestic issues. *Al-Sha'b* stated that "from the time the Armenians left their homeland, the doors of all countries have been shut in their faces, except this country. It is the security and peace provided by the French that led them to enter here."[37] The article noted that the League of Nations had approached all the western countries, and eventually the French had consented and chosen "Upper Jazira" as a suitable spot.

Nationalist press articles of the late 1920s and the early 1930s, which coincided with the last wave of refugees to Jazira, apparently embraced a more reactionary tone and evoke indignation. It is the refugees who are reproached and become the object of indignation in the first place. Such articles often ended with a demand to stop both recent Zionist and Armenian migration to the "eastern Arabian land" [*bilad al-sharq al-'arabi*]. This was assertive and self-confident rhetoric that claimed to represent a united and active Arab nation calling for addressing the issue of earlier immigrants too. "Their stay among us will not last long" wrote *Al-Sha'b* in a threatening tone and continued:

> Jazira is a Syrian Arab land. The Syrians will give it neither to the Armenians nor to non-Armenians ... They [the Arabs] will resist the settlement by all means possible. We warn the Armenians that a future life in Syria, next to the "angry Arab," will be insecure.

Arab nationalists did not embrace a colonial attitude towards the refugees. The latter were deemed to have a nation-state of their own too, just as the Syrians were aspiring to one. Several articles in the 1930s acknowledged the inevitability of establishing an Armenian national home and proposed Yerevan for that matter. The Yerevan option was argued to be "to the benefit of all" including the Armenians, Syrians, French and Turks. The Armenians should "spare themselves as well as the Arab states - Iraq, Palestine but most of all Syria - this misery. They should be rid of danger [*khatar*] and evil [*aswaih*], while at the same time the Turks should no longer be annoyed by their presence to their immediate south."[38]

Against this Arab nationalist fervor and the increase in inter-communal clashes, Armenian political parties addressed the Arab public, stating their good will. *Le Liban*, an Armenian newspaper, stated in an article written in Arabic dated May 15, 1930:

> Armenians were bound to come to Syria, but they never had the intention to create a national home there. Armenians indeed have a national homeland, but it is under the Soviet yoke; whenever it is re-opened, they are going to return there.[39]

Similarly, a joint declaration by the Armenian Hintchak and Ramgavar parties, stated that Armenians had only one homeland, which was Armenia. In this hospitable country, their only effort was to provide for the needs of their families and assure education for their children. They would like to see cordial relations maintained between the Arabs and the Armenians while misunderstandings that gave rise to suspicions were stamped out."[40] Likewise, other Armenian journals gave reassurances that Syria could not be compared to Palestine or the Armenians in the USSR. Obviously, it was high time to

propagate a new image of the refugee Armenian. An article in the Aleppo Armenian journal *Yeprad* published on May 24, 1930, signals the emergence of the "hardworking and apolitical Armenian guest" image in the Syrian collective memory:

> The Armenian is hospitalized [sent to hospital] in this country and this fact is accepted by the mandatory power and the noble Arab people. It is clear that hospitalized people do not have a claim to pursue politics. The so-called project of 'installation of an Armenian homeland in Syria' has therefore no foundation and is beyond imagination.[41]

As the Armenian parties aimed at maintaining amicable relations with both the French and Arab nationalists, they started taking a more pragmatic approach in the mid-1930s and moved towards cooperating with the Arab nationalists, particularly after 1936.[42] To be sure, the Armenian Communists had always sided with the Arab nationalist struggle for full independence.

GOOD REFUGEE VS. BAD REFUGEE (1936-39)

The refugee issue resurfaced in a different context following the Franco-Syrian Treaty (1936), which promised independence to the country within the next five years and foresaw the incorporation of the autonomously administered regions of the Sanjak of Alexandretta, the Sanjak of Alawites, the Sanjak of Druze and Jazira into a centralized and united Syria. The treaty was never ratified, but the fierce controversy over two fundamental articles of the treaty - the protection of minorities and unity of Syria - had long-lasting implications for non-Muslim and non-Arab Syrians in general. Two rival political movements, namely the Unionists and the Autonomists, in their French designations, contested these provisions. The Unionist group embraced the Arab nationalist ideal of full independence in a united Syria, while the Autonomists demanded an additional article in the Syrian constitution, namely the protection of minorities, as well as a decentralized Syria through the continuation of the status of the autonomously administered regions under the French mandate. It is during these years that the notion of minority and majority was contested by both groups to advance their political claims.[43] The Autonomists oscillated between an ethno-religious basis and a territorial definition of minority-ness and demanded special protection of minorities. The Unionists, however, avoided confronting the minority question. They rather opted for the incorporation and/or assimilation of the ethno-religious/regional entities into Syrian Arab national identity/territory, thereby counter-posing the notion of minority of the politically dissident Autonomists. The nationalist slogan "religion is for God and the nation is for all" evoked this idea.

The interconnectedness of the notions of political dissidence and refugee status in Syrian Arab nationalist imagery is related particularly to the Autonomy Movement in Jazira. The Autonomist faction in Jazira asked for special minority status for the region, whose population was comprised mostly of Christian and Kurdish refugees from Turkey and aspired to the continuation of the region's autonomous administrative status under the French mandate. While the Autonomists depicted the Jazirans under the rubric of minority, where the history of refugee-ness and certain other criteria were designated as the markers of minority status, a significant number of Arab nationalists rejected the Autonomist groups' conflation of refugee-ness and minority status and often proposed a political definition of majority-ness. PM Sa'adallah Jabiri said in a speech that the "ex-refugees of the 1920s have been integrated and become like us, thus they should not ask for special treatment. Several articles in the nationalist press drew a distinction between the 'majority,' indicating those Jazirans who embraced the Arab nationalist political narrative, and the 'refugee,' namely the politically dissident and the foreign Jazirans. The leaders of the movement were labelled as "refugees who deny favour" [*nakr al-jamil*]. They were accused of lacking bona fides [*husn al-mukafa'*] and were described as "not being ashamed to steal our lands."[44] Eventually the notion of refugee denoted 'minority' and meant the 'interest-seeker dissident rebel.' As minority-ness conjured up the image of political dissident contesting the ideological hegemony of the Arab nationalist discourse of 'organic national harmony,' the 'majority,' as it was appropriated in nationalist imagery, soon conjured up the image of "simple people who are only interested in their daily bread, and nothing else."[45] In a way, the Syrian-Armenians along with other Christians in Syria entered the post-colonial era as they adopted the nationalist rules of the post-colonial political field, in reference to which they redefined their political aspirations.

The most explicit sign of the pragmatic consent of the Syrian Christian refugees to an incorporationist, yet static, definition of Syrian national belonging came after two bloody incidents in mid-1937: the Sunday market incident in Aleppo and the Amouda incidents in Jazira. After each incident, Christian-Arab nationalist religious leaders intervened to calm down the Christian community and reassure the Muslim majority. The Armenian Orthodox Prelate, Bishop Ardavazt Surmeyan, may be considered as one of the first initiators of the rapprochement following the Sunday market incident of October 12, 1936. In his visit to the Armenian refugee camp north of Aleppo city, he said:

> I came here with the nationalist leaders in order to invite you to be calm and to return to your work. We have every interest in having cordial relations with the Muslims. The incidents of last Sunday Market had their origin in the "White Badge"[46] who are bought and paid by certain traitors. They create discord between the members of the country in order to reach their goal. I ask therefore all Armenians to have no relations with the "White Badge" and to even prevent them from moving around [the tent-city].[47]

Until the 1940s, French Syria was still a refuge for thousands of "undesirables" for whom Turkish nationalism had left no place.[48] Negotiation between the colonial power and the Armenian refugees contributed considerably to the social and economic betterment of the Armenians, while negotiation with the local Arab nationalists helped to calm the ever-lost feeling of security and stability - but only through a patrimonial relationship and at the expense of free political agency. Nevertheless, memories of the horrors of 1915 were evoked during several incidents in the coming years. The spell of the past will start to crumble, however, when the 1915 violence is acknowledged and, as Walter Benjamin said, when "the causes of what happened … have been eliminated."[49]

ENDNOTES

[1] Khatchig Mouradian, "Genocide and Humanitarian Resistance in Ottoman Syria, 1915-1917", unpublished Ph.D. dissertation, Clark University, 2014.

[2] By the Mudros Armistice (October 30, 1918) Cilicia had come under French occupation, which gave rise to Armenian dreams of having a homeland in Cilicia, where the decimated Armenians who had survived the Genocide started to gather. The Turkish nationalist forces, however, forced the some 120,000-150,000 Armenians into French Syria, a second uprooting.

[3] Between 1921 and 1923, 80,000 new refugees arrived in Syria and Lebanon by land or sea. By the end of 1925, approximately 100,000 refugees were living in Syria, 50,000 in Lebanon, 10,000 in Palestine and Jordan, 40,000 in Egypt, 25,000 in Iraq, and 50,000 in Iran (Vahé Tachjian, *La France en Cilicie et en Haute Mésopotamie*, Paris, Karthala, 2004; Chris Gratien, "Year of the Mosquito: Displacement and Disease in the Ottoman Empire during WWI", unpublished Ph.D. dissertation, Georgetown University, 2015; Richard Hovannisian, "The Ebb and Flow of the Armenian Minority in the Arab Middle East," *Middle East Journal*, xxvii, winter 1974. For different estimates, see Thomas H. Greenshields, "The Settlement of Armenian Refugees in Syria and Lebanon, 1915-1939," unpublished Ph.D. dissertation, University of Durham, 1978; Ara Sanjian "Armenians in the Middle East", The Teacher Training Workshop, "Minorities in the Middle East" organized by the Program in Near Eastern Studies Princeton University, 2006, unpublished paper.

[4] For an elaborate discussion of the last wave of deportations, see Tachjian, *La France en Cilicie et en Haute Mésopotamie*, pp. 301-17.

[5] John Hope Simpson, *Refugees: Preliminary Report of a Survey*, London, Royal Institute of International Affairs, 1938.

[6] Nicola Migliorino, *(Re)constructing Armenia in Lebanon and Syria*, NY, Oxford, Berghahn Books, 2008; Seda Altuğ, "Sectarianism in the Syrian Jazira: Community, Land and Violence in the Memories of World War I and the French Mandate (1915-1939)", unpublished Ph.D. dissertation, Utrecht University, June 2011; Laura Robson, *States of Separation: Transfer, Partition, and the Making of the Modern Middle East*, California, UCLA Press, 2017; Benjamin Thomas White, *The Emergence of Minorities*

in the Middle East: The Politics of Community in French Mandate Syria, Edinburgh, Edinburgh University Press, 2011; Keith David Watenpaugh, *Being Modern in the Middle East: Revolution, Nationalism, Colonialism and the Arab Middle Class,* NY, Princeton University Press, 2006.

[7] Several works on Syria mention the bad conditions and treatment refugees faced prior to their arrival, but only in passing. Among the few critical works on the refugees are: Benjamin Thomas White, "Refugees and the definition of Syria, 1920-1939", *Past and Present*, 235 (1), 2017, pp. 141- 178; Keith Watenpaugh "Towards a New Category of Colonial Theory: Colonial Cooperation and the Survivors' Bargain - The Case of the Post-Genocide Armenian Community of Syria under French Mandate," in Peter Sluglett and Nadine Méouchy (eds.), *The British and French Mandates in Comparative Perspective*, Leiden, Brill, 2004, pp. 597-622; Keith Watenpaugh, "A Pious Wish Devoid of All Practicability: Interwar Humanitarianism, The League of Nations and the Rescue of Trafficked Women and Children in the Eastern Mediterranean, 1920-1927," *American Historical Review*, 115:4, October 2010. For Jazira, see Altuğ, "Sectarianism in the Syrian Jazira"; Altug, "Armenian Genocide, Sheikh Said Revolt, and Armenians in Syrian Jazira" (www.armenianweekly.com/wp-content/files/Armenian_Weekly_April_2010.pdf); Ellen Marie Lust-Okar, "Failure of Collaboration: Armenian Refugees in Syria," *Middle Eastern Studies*, 32, 1, 1996, pp. 53-68.

[8] Nora Arissian, *Asda' al-Ibada al-Armaniyya fil-Sahafa al-Suriyya 1877-1930*, Beirut, Zakira Press, 2004.

[9] Both books were banned in Syria until 2011.

[10] Nora Arissian, *Ghawa'il al-Arman fil-Fikr al-Suri*, Beirut, Dar al-Furat, 2002. For a survey of existing Arabic literature on the Armenian Genocide, see Nikolay Hovhannisyan, *Arab Historiography on the Armenian Genocid*e, Yerevan, National Academy of Sciences of the Republic of Armenia Institute of Oriental Studies, 2005. Rifaat Mohammad has also made an excellent survey of Egyptian sources on the Armenian Genocide: Rifaat Mohammad, "Al-Qadiyya al-Armaniyya fil-Masadir al-'Arabiyya" [The Armenian question according to Arab sources], paper presented at the conference, "The Armenian Genocide and International Law," organized by Haigazian University, Beirut, September 2009.

[11] Seda Altuğ and Benjamin White, "Frontières et Pouvoir d'État: La Frontière Turco-Syrienne dans les Années 1920 et 1930," *Vingtième Siècle*, September 2009.

[12] Seda Altuğ, "Türkiye Suriye ile Sinirini Temizlerken" (Turkey clearing up its border with Syria), *Agos*, April 9, 14 and 27, 2007.

[13] CADN, Fonds Beyrouth, Cabinet Politique, Box 572, Service des Renseignements, Service Central, no. 868/K.S., March 5, 1925, Beirut.

[14] MAE, Série Syrie-Liban, vol. 177, Relation Turquie-Française.

[15] Greenshields, p. 60.

[16] Kamil al-Ghazzi, *Kitab Nahr al-Dhahab fi Tarikh Halab*, 3 vols., Shawqi Sha'th and Mahmoud Fakhouri (eds.), Aleppo, Arab Pen Press, 1991. One of the few sources that mentions the tensions between the local Christian and incoming Christians is a book by the ex Syriac-Catholic priest of Aleppo, Arch. Ignatius Dick, *Al-Hudur al-Masihi fi Halab*, Aleppo, Rum-Catholic Publishing House, 2003, 3 vols.

[17] Pierre La Mazière, *Partant pour la Syrie*, Paris, Libraire Baudiniere, 1926, pp. 200-3.

[18] Philip Khoury, *Syria and the French Mandate*, NY, Princeton University Press, 1987, pp. 85-91.

[19] Stephen Hemsley Longrigg, *Lebanon and Syria under the French Mandate*, London, Oxford University Press, 1958, p. 213; *Al-Ayyam*, September 10, 1934.

[20] *Alifba'*, October 26, 1923.

[21] "*Yuzahimun 'Amal Wataniyyun 'Ala Rizqihim wa Khayrat al-Balad.*"

[22] "Hawadis wa Akhbar Mahalliyya, Halat al-Arman al-Laji'in li-Suriyya, al-Nizam al-Shiu'ai wa Mazari'au al-Arman," *Al-Sha'b*, December 21, 1928.

[23] Ibid.

[24] Ibid., p. 603.

[25] Longrigg, pp. 171-2.

[26] Khoury, p. 129-30.

[27] "Huquq al-Akthariyya wal-Aqalliyat", *Al-Sha'b*, April 3, 1928.

[28] Ibid.

[29] *Al-Sha'b*, December 20 & 21, 1928.

[30] Khoury, p. 171.

[31] "Al-Arman wa-Qadiyyat Iskanuhum fi Suriyya", *Al-Sha'b*, December 21, 1926.

[32] "Suriyya allati la Hurmata Laha", *Al-Sha'b*, November 13, 1935.

[33] "Al-Watan al-Qawmi al-Armani fi Shimal, Yu'allim al-Suriyyin," *Al-Sha'b*, November 3, 1928.

[34] Ibid.

[35] "*mahmulin 'alayna hamlan*"

[36] "Al-Watan al-Qawmi al-Armani fi Suriyya, D'awa al-Orient ila Iskan al-Arman fil-Jazira," *Al-Sha'b*, January 28, 1930.

[37] "Al-Watan al-Qawmi," *Al-Sha'b*, November 3, 1928.

[38] "Al-Watan al-Qawmi al-Armani fi Suriyya."

[39] CADN, Cabinet Politique, Box 576, Service Politiques, Bureau d'études, "l'Arménie et les Arméniens", rédacteur: cdt. Terrrier.

[40] Ibid.

[41] Ibid.

[42] Miglioriono, *(Re)constructing Armenia in Lebanon and Syria*, pp. 58-62.

[43] Neither 'majority' nor 'minority' is a pre-given and fixed social category. For the historical construction of the notions of minority and majority in French-Syria, see White, *The Emergence*.

[44] "Wataniyyat al-Fikra wa Masharia' al-Sahra," *Al-Qabs*, Feb. 5, 1938.

[45] Several newspaper articles from the Arab nationalist press of the time construct the "nationalist majority" in Jazira as such.

[46] For the White Badge (Fr: l'Insigne Blanc, Ar: al-shara al-bayâ') see, Khoury, *Syria*, p. 470 and Keith Watenpaugh, "Steel Shirts, White Badges and the Last Qabadāy: Fascism, Urban Violence and Civic Identity in Aleppo under French Rule", in *France, Syrie et Liban (1918-1946), Les Ambiguïtés et les Dynamiques de la Relation Mandataire*, Damascus, IFPO Press, 2002, pp. 325-47.

[47] CADN-MAE, Fonds Beyrouth, Cabinet Politique, 392, Sûreté Générale (Aleppo), no. 3829, Oct. 16, 1936, as stated in Watenpaugh, *Being Modern*, p. 271.

[48] Watenpaugh, "Towards a New Category", pp. 597-622.

[49] As quoted by Theodor Adorno, "The Meaning of Working through the Past," in *Critical Models: Interventions and Catchwords*, New York, Columbia University Press, 2005, p. 103.

Գաղթականներէն Օրինակելի Քաղաքացիներ. Սուրիահայերը Ֆրանսական Հոգատար Իշխանութեան Տարիներուն (1921-1939)

(Ամփոփում)

Seda Altuğ
seda.altug@boun.edu.tr

Յօդուածը հարցադրումի տակ կ'առնէ պաշտօնական պատմագրութիւնը թէ գաղթական հայերը գրկաբաց ընդունուեցան Սուրիա: Ընդհակառակը, վերլուծական փաստարկներով հեղինակը կ'առարկէ այս փաստերուն, բացայայտելով զարգացումները դէպքերու, իրադարձութիւններու, արաբ ազգայնական եւ կրօնական դէմքերու արտայայտութեանց որոնք սկզբնական ոչ-բարեացակամ ընթացքէ բարեփոխուեցան դրական վերաբերումի:

Հեղինակը կը լուսաբանէ ներքին ծալքերը տեղական ընդվզումին դրդապատճառներուն, ինչպէս նաեւ՝ հետեւանքները, ապա նաեւ յառաջացած փոփոխութիւններուն պատճառները եւ այն լուսաբանական եւ հանդարտեցնող դերը զոր հայ կրօնական առաջնորդները ունեցան՝ թիւրիմացութեանց եւ յաւելեալ գրգռութիւններու առաջքը առնելու առումով:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ԿՈՐՍՈՒԱԾ ՀԱՐԱԶԱՏՆԵՐՈՒ ՓՆՏՌՏՈՒՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍՈՒՐԻՈՅ ՏԱՐԱԾՔԻՆ

Միհրան Մինասեան
mihran.min@gmail.com

ՄՈՒՏՔ

Հայոց Ցեղասպանութեան եւ Համաշխարհային Ա. Պատերազմի թոհուբոհին ընթացքին ցիրուցան եղաւ ամբողջ արեւմտահայութիւնը. շատերը սպաննուեցան, իսկ ողջ մնացողներ՝ ապաստանեցան հեռաւոր ու մօտաւոր երկիրներ ու երկրամասեր: Հազիւ հասած իրենց նոր բնակավայրերը, Ցեղասպանութեան մնացորդացը սկսան փնտռել իրենց ընտանիքի կորսուած անդամները, հարազատներն ու ծանօթները, բարեկամներն ու համագիւղացիները, եւ առ այդ՝ դիմեցին բազմազան միջոցներու: Անոնք եկեղեցիներու, հաւաքավայրերու եւ ակումբներու պատերուն փակցուցին ազդեր, թերթերու մէջ տպեցին յայտարարութիւններ, տարբեր հասցէներով գրեցին նամակներ, հարցուփորձի ենթարկեցին վերապրողներ, իսկ աւելի ետք՝ անոնցմէ շատեր նոյնիսկ վերադարձան արեւելք՝ Հալէպ կամ սուրիական անապատ եւ տեղւոյն վրայ կատարեցին անհրաժեշտ հետախուզական աշխատանքներն ու փնտռտուքները:

ՓՆՏՌՏՈՒՔՆԵՐ ՄԱՄՈՒԼԻ ՄԻՋՈՑՈՎ

Կորսուած հարազատները գտնելու ուղղութեամբ առաւել ընդհանրացած ձեւը թերթերու մէջ տպուած յայտարարութիւններն էին, որոնք Պոլսոյ եւ արտասահմանի հայաթերթերուն մէջ ունէին տարբեր վերնագրեր՝ «Հայերը Ձիրար Կը Փնտռեն», «Տարագրուածներու Ժամադրավայրը», «Տեղեկութիւն Կ'ուզուի» եւն.: Աւելի ետք ընդհանրացաւ «Կը Փնտռուին» կամ սոսկ՝ «Փնտռուածներ» խորագիրը, որ Հայաստանի մէջ ստացաւ «Փնտռում Են Հարազատներին» ձեւը:

Թերթերու այս սիւնակները, 1915էն ընդհուպ՝ մինչեւ 1980ականները, մնացին հայ մամուլի ամէնէն կարդացուած ու փնտռուած անկիւններէն մէկը. երեւոյթ մը, որ բնաւ զարմանալի չէ, որովհետեւ այդ օրերուն չկար մէկը որ կորսուած հարազատ մը կամ ծանօթ մը չունենար: Նոյն այդ թերթերուն մէջ տպուեցան նաեւ փնտռտուքներուն արդիւնքները: Նաեւ՝ անոնց միջոցով է որ կատարուեցան զիրար գտած հարազատներու հասցէներու եւ այլ մանրամասնութիւններու փոխանակումները:


Թերթերու մէջ տպուած յայտարարութիւններուն զուգահեռ, յաճախ կը տրուէին նաեւ խրախուսիչ խոստումներ. փնտռուողին մասին առաջին ստոյգ տեղեկութիւն փոխանցողին կը խոստացուէր նիւթական պարգեւ

կամ փնտռտուքը հիւրընկալող թերթին եռամսեայ կամ վեցամսեայ ձրի բաժանորդագրութիւնը ետն.:

Թերթերու միջոցով եղած փնտռտուքներուն շնորհիւ հազարաւորներ կա՛մ գտան իրենց կորսուած հարազատները, կա՛մ ստացան անոնց ճակատագրին մասին տարբեր մանրամասնութեամբ տեղեկութիւններ:


Այս յայտարարութիւնները թերթերու մէջ լոյս կը տեսնէին անվճար եւ յաճախ կ'արտատպուէին այլ թերթերու կողմէ:

Այս ուղղութեամբ կ'արժէ յիշել Զինադադարի սկզբնաւորութեան Պոլսոյ «Հայ Տարագրելոց Տեղեկատուութեան Դիւան»ին հրատարակած *Յուցակ Անյայտ Տարագրելոց* երկէջանի մեծադիր թերթը[1], որ ամբողջութեամբ նուիրուած էր ցեղասպանութեան հետեւանքով անհետ կորածներու փնտռտուքին: Հոն տեղ գտած էին հազարաւոր փնտռտուողներու անուանացանկեր, դասաւորուած ըստ բնօրրան նահանգներու եւ փնտռուող գերդաստաններու:



Յուցակ Անյայտ Տարագրելոց
Պոլիս, 3րդ թիւ, 1 Մայիս 1919.
եւ՝ հատուած

Նոյնանման հրատարակութիւն մըն էր նաեւ «Ընդհանուր Յուցակ Ազատեալ Հայերու» խորագրով գրքոյկը, որ կը պարունակէր Բաբերդէն, Քղիէն, Երզնկայէն, Մուշէն, Խարբերդէն, Չմշկածագէն, Տրապիզոնէն եւ այլ շրջաններէ հարիւրաւոր վերապրածներու անուանացանկեր[2]: Նոյն տարիներուն լոյս տեսած են նաեւ հայրենակցական հիմունքներով կազմուած քանի մը տպագիր գրքոյկ-ցուցակներ, իսկ պարբերական մամուլի էջերուն հրատարակուած են վերապրողներու բազմատասնեակ անուանացանկեր:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՑԱԿ
ԱԶԱՏԵԱԼ ՀԱՅԵՐՈՒ

Թաբեղի, Գղիի, Եոզկեայի, Մուսի եւ շրջակայքի գրաւուած վերջ ազատագրեր, որոնց անուններուն առաջին շրջանակին մէջ բաժնուած, նաեւ, հրատարակուած են: Ասոնք կը պատկանին Թուրքիոյ գրեթէ ամէն վայրերուն եւ կրցած են ազատիլ Տէրսիմի վրայով կամ դրամով գնուած ճոխիկ շրջուած վայրերէն եւ կամ գերուած թուրք բանակին:

Տպագր.-Հրատարակութիւն
ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆԵԱՆ
1916

15

ՅԱՆՈՒՆ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Տպագրութեան համարներուն վրայ կցուած ըլլալով ընծանի-քիս կարգ մը անգամներուն հետքերը, — որոնց անուններըը տարբեր նշանակուած են, — անոնց ոչ կամ մեռած և ոչ դաժանելնին, ըլլա՛յ Ապդ. Մարմիններէ, լրագրողներէ կամ անծանօթներէ թախանձագին կը խնդրուի վարը նշանակուած տասնեակ էջացոյցէ, որոնց մէջ հաւանաբար քաղէն, կը խոստանք երկու Անգլիական ոսկի ետ իրենէ:

Անհատական իրենց անուններն ու տարիքը, որոնք պրկուած են Ահեայ Ազատչէին գիւղէն:—

պատ	ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ,	38	տարեկան
— Յակոբ	ՄԱՔՐՈՒՄ	33	»
Բրէշ տղիկը	ՎԱՐՎԱՒՒ	12	»
»	ՄԱՔԲՈՒՀԻ	8	»
» զաւակը (Անուանը անծանօթ)		6	»
Փեսան փեսան	ՄԻՒԱՒ ԱՆՏՈՆԵԱՆ	32	»
Կինը	ԱՆՆԱ	23	»
Զաւակին թոռրոս		6	»

ՆՇԱՆ ՇԱՀԻՆԵԱՆ
Հասցէս.— DIKRAN ADILIAN, — Zagazig (Egypte).

Ց. Գ. Վերոնչանակեալ անուններէն միայն քանի փեսին Մխեան Աստուածատուր Պաթումէն չրլակայքը դանալը ձնախառնուած լրագրի հետ փոստատիրոջմէ մէջ կարդացինք:

ՆՈՒՃՆ

Ընդհանուր Յուցակ Ազատեալ Հայերու, Աղեքսանդրիա, 1916. Փնտռտուքի համար տպագրուած թերթիկ (Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնտ 420 (Ռուբէն Հերեանի ֆոնտ), ցուցակ 65, գործ 25, թերթ 15)


ՓՆՏՌՏՈՒՔՆԵՐ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ՄԻՋՈՑՈՎ


Թերթերու միջոցաւ եղած յայտարարութիւններէն ետք, փնտռտուքի ընդհանրացած երկրորդ ձեւը նամակագրութիւնն էր:

Հալէպը, որպէս աքսորական հայերու տեղաւորման գլխաւոր կեդրոն եւ սուրիական անապատին բացուող առաջին կայան, իր վրայ սեւեռած էր բոլոր փնտռողներուն ուշադրութիւնը, եւ պատահական չէ որ աշխարհի տարբեր անկիւններէն՝ Չինաստանէն մինչեւ Սիպերիոյ խորերը, Ափրիկէէն եւ Եւրոպայի, Ամերիկայի ու Միջին Արեւելքի երկիրներէն՝ տեղւոյն Ազգային Առաջնորդարանին եւ հայրենակցական մարմիններուն ու տարբեր անհատներու յղուած են հազարաւոր նամակ-խնդրագրեր՝ անոնցմէ «բարի լուր» մը կամ լուսաբանութիւն մը ստանալու արդար ակնկալութեամբ:

Այդ օրերու նամակագրական «եռուզեռ»ին մասին ընդհանուր գաղափար մը կարելի է կազմել Կարապետ Գաբիկեանի (1861-1925) յուշերու մեծարժէք հատորի այն հատուածէն, ուր ան նկարագրած է՝ թէ ինչպէս Չինադադարին Հալէպ հասնելէն ետք, արտասահմանի հայ թերթերը աւետած են իր վերապրիլը, որմէ ետք, իր իսկ հաւաստումով, «*Ամէն կողմէ ծանօթներէս նամակներ տեղալ կ'սկսին, խնդակցութիւններու, աչքի լուսերու հետ, իրենց ընտանիքի*

պարագաներու մասին տեղեկութիւններ կ'ուզեն. կը հարկադրուիմ ամէնքին ալ պատասխանել. մէկ նամակը 3-4 ղրշ.ի կը նստի վրաս, տարագրութենէ վերադարձող ընծի պէս մէկու մը համար քիչ մը նեղիչ զոհողութիւն մըն էր. բայց թէ խղճի պարտականութիւն է կ'ըսեմ. 7-800ի չափ նամակներու պատասխան տուի»[3]:





Փնտռտուքի համար որբհաւաք Ռուբէն Հերեանի թերթիկներէն՝ փնտռողներու եւ փնտռուողներու անուններով ու հասցէներով (ՀԱԱ, ֆոնտ 420, ցուցակ 65, գործ 27, թերթ 3, 4, 5)

Փակագիծի մէջ նշենք, թէ տարիներ առաջ, մենք առիթ ունեցանք ծանօթանալու եւ մուտքագրելու Բերիոյ (Հալէպի) Թեմի Ազգային Առաջնորդարանի դիւանատան մէջ պահուող եւ մեր նիւթին հայող բազմահարիւր նամակներ ու անոնց պատասխանները, ապա արխիւային այդ մեծ հաւաքածոյին կցեցինք քանի մը փոքր այլ հաւաքածոներ եւս, ինչպէս՝ Հալէպի Միջ-Գաւառային Հայրենակցական Միութեան ատենապետ, Հայ Ազգային Միութեան ատենադպիր եւ Պուրսայի ու Նիկոմիդիոյ Հայրենակցական Միութեան երկարամեայ ատենապետ՝ Սարգիս Սէլեանի (1879-1970) արխիւին մաս կազմող ու մեր մօտ գտնուող նամակները, Տիգրանակերտի Հայրենակցական Միութեան Հալէպի մասնաճիւղի արխիւէն նիւթեր, հալէպահայ ծանօթ ակնաբուժ Ռոպէր Ճեպէճեանի (1909-2001) անձնական դիւանի նիւթերը (որոնք 1960-70ականներուն Հայաստանէն իրեն յղուած նամակներ էին) եւ վերջապէս, Հայաստանի Ազգային Արխիւին մէջ պահուող ծանօթ որբահաւաք Հերեանի (1868-1921) փնտռտուքներու թեմայով ստացած տասնեակ խնդրագրերու հաւաքածոն[4]: Այս բոլորով յաջողած ենք համախմբել հարազատներու փնտռտուքի թեմայով գրուած մօտ հազար դիմումխնդրագիր եւ փնտռուողներու ցուցակ, առանց հաշուելու նոյն փնտռտուքի

հարցով փոխանակուած բազմաթիւ նամակներն ու Հալէպէն անոնց տրուած պատասխանները[5]:

Իրեն ուղուած հարցումներու տարափին տակ, Հալէպի Ազգային Առաջնորդարանը ստեղծած էր փնտռտուքի յատուկ համակարգ մը. երբ դիմում մը հասնէր Առաջնորդարան, առաջնորդ հայրը կամ դիւանապետը նամակին ամփոփումը առանձին գիրով անյապաղ կը փոխանցէր այն որբանոցներուն, անհատներուն, քահանայ հայրերուն, հայրենակցական խմբաւորումներուն, թաղական խորհուրդներուն, հայրենակիցներուն, Քարէն Եփփէին (1876-1935) եւ կամ բոլոր անոնց որոնք կրնային լոյսի նշոյլ մը սփռել հարցին վրայ եւ որեւէ ձեւով օգտակար դառնալ որոնման աշխատանքներուն:

Առաջնորդարանին կողմէ յղուած նամակներու կողքին, ըստ անհրաժեշտութեան, յաճախ եկեղեցիներու խորաններէն յայտարարութիւններ կը կատարուէին կամ տեղական մամուլին մէջ ծանուցումներ կը տպուէին, երբեմն ալ եկեղեցւոյ բակին կամ հանրային այլ վայրերու մէջ ազդեր կը փակցուէին, ու այս բոլորին պատասխանները համադրուելով՝ արդիւնքները կը փոխանցուէին փնտռող ազգայիններուն:

Փնտռուած անհատները ընդհանրապէս անյայտացած էին պատմական հետեւեալ դէպքերու ընթացքին.-

1- 1915ին ու անոր յաջորդող տարիներու կոտորածներուն կամ բռնագաղթի ժամանակ: Փնտռուածներու այս խումբը բնականաբար իր թիւով մեծագոյնն է: Մեծ եղած է մանաւանդ սուրիական անապատ մնացած կամ այնտեղ անհետացածներու համեմատութիւնը:

2- Օսմանեան բանակ զինուորագրուած եւ տուն չվերադարձած հայ զինուորներ:

3- Զինադադարէն ետք Կիլիկիա վերադարձած եւ 1920-21ի Կիլիկիոյ կոտորածներուն զոհուած կամ անոր հայաթափումին հետեւանքով անյայտացածներ:

4- Քեմալականներու կողմէ 1920-21ին Էսկիշեհիրէն, Կուտինայէն, Պուրսայէն ու շրջակայքէն Խարբերդ ու աւելի հեռուները աքսորուածներ:

5- 1922ի Զմիւռնիոյ աղէտին հետեւանքով կորսուածներ:

6- Ներքին գաւառներէն 1926-28ի վերջին բռնագաղթին հետեւանքով անյայտացածներ:

Հալէպ եւ Սուրիա ուղղուած փնտռտուքներու կողքին, պէտք է նշել նաեւ Սուրիայէն՝ արտասահման կատարուած փնտռտուքներու պարագան, երբ Սուրիա ապաստանած հայեր, իրենց հերթին, փնտռած են ենթադրաբար արտասահման ապաստանած իրենց հարազատները: Այդ փնտռտուքները շատ անգամ եղած են Հալէպի Ազգային Առաջնորդարանի կամ տեղւոյն հայրենակցական միութիւններու միջոցով՝ թերեւս անոր համար, որ փնտռողները ընդհանրապէս եղած են անգրագէտ մարդիկ, կամ Հալէպի

մէջ չեն ունեցած յստակ ու մնայուն հասցէներ եւ կամ իրենց տրամադրութեան տակ չեն գտնուած արտասահմանեան այն ազգային հաստատութիւններուն հասցէները, որոնց պէտք է յղուէին նման նամակները:

Հալէպէն՝ արտասահման կատարուած փնտռտուքներուն մէջ, կան նաեւ հարցումներ՝ Ա. Աշխարհամարտէն առաջ Միացեալ Նահանգներ ու այլ երկիրներ գաղթած հայերու մասին, որոնց Հալէպի հարազատները, աքսորի ճանապարհին, կորսնցուցած էին անոնց հասցէները:

Հակառակ Հալէպի ու շրջակայքի մէջ կատարուած մանրազնին փնտռտուքներուն, սակաւաթիւ բախտաւորներ միայն գտած են իրենց հարազատները ու միացած անոնց: Փնտռուողներէն շատեր հարցապնդուողներուն համար եղած են բոլորովին անծանօթներ, շատերու համար ըսուած է՝ թէ անոնք զոհուած են աքսորի ճանապարհին կամ սուրիական անապատին մէջ, ուրիշներու համար պատասխանուած է՝ թէ չեն աքսորուած ու մնացած են Երկիր, այլոց համար՝ թէ առեւանգուած են աքսորի ճանապարհին կամ սուրիական անապատին մէջ: Այլ խումբի մը համար տրուած են անոնց գտնուելու վայրին մասին ենթադրական տեղեկութիւններ, մինչ փոքր բնակավայրերու բնակիչներուն համար յաճախ յիշուած է՝ թէ այդ բնակավայրէն Հալէպի մէջ վերապրողներ չկան, որ կարենան պատասխանել ուղղուած հարցումներուն… Ու եթէ յանկարծ պատահէր հրաշքը ու գտնուէր կորսուած հարազատը, Առաջնորդարան հասած շնորհակալական նամակներուն վրայ առաջնորդ Արտաւազդ Արք. Սիւրմէեան (1889-1951) կը սիրէր ձգել հետեւեալ մակագրութիւնը. «*Առաջնորդարանը իր պարտքը կը կատարէ միայն*»: Պատահած է որ Ֆրանսա ապրող հայ մը, որուն «*15 տարիներէ ի վեր կորուսեալ*» զաւակը գտնուած է Հալէպի Ազգային Առաջնորդարանին միջոցով ու ղրկուած՝ հօրը, խնդրած է առաջնորդ Սիւրմէեան սրբազանէն, որ իր լուսանկարը ղրկէ իրեն, որպէսզի «*միշտ աղօթք ընեմ Ձեզի*»[6]:

Պէտք է հաստատել որ, Հալէպի Ազգային Առաջնորդարանը ոչինչ խնայած է դիմողներու խնդրանքին գոհացում տալու համար եւ ըրած է կարելին՝ գտնելու փնտռուողներուն հետքը. փաստ՝ նամակ մը ստանալու օրն իսկ, տարբեր հասցէներով յղուած բազմաթիւ հարցումներն ու անոնց պատասխաններու ուշացումի պարագային եղած յիշեցումներն ու յանդիմանական տողերը:

Ազգային Առաջնորդարանը իր ծառայութիւնները չէ սահմանափակած միայն նամակագրական կապերով, այլ անհրաժեշտութեան պարագային, հետախոյզներ ղրկած է Հալէպի տարբեր թաղամասեր կամ սուրիական անապատ, կատարած է դրամական փոխանցումներ, օժանդակած է գտնուած հայրենակիցները արտասահման՝ իրենց հարազատներուն մօտ տեղափոխելու աշխատանքներուն, ինչպէս նաեւ այլ ծառայութիւններ:

Փնտռուողները ընդհանրապէս եղած են մօտիկ ազգականներ, հարազատներ՝ հայր, մայր, զաւակ, քոյր, եղբայր, կին, ամուսին եւն.: Ուրիշներ փնտռած են աւելի հեռաւոր ազգականներ, բարեկամներ, ընկերներ, ծանօթներ, դրացիներ...: Գտնուած են նաեւ մարդիկ, որ փնտռեն ոեւէ համագիւղացի, համաթաղեցի, համաքաղաքացի կամ նոյնիսկ համագաւառացի, ինչպէս օրինակ՝ Խարբերդի Քէսրիկ գիւղէն Ռուսաստանի Մայկոբ քաղաքը ապաստանած Յովհաննէս Նաճարեան Ասատուրովիչը, որ 1927ին պիտի գրէր. «*Խնդրեմ Ս. հայր, Խարբերդ նահանգի շրջանից քէսրիկցի, մալաթիացի, մազկերտցի, խօզաթցի, բերդակցի, չիմիշկազակցի, ովքեր որ կը գտնուին այդտեղ, մեծ եւ փոքր արու եւ էգ կարելի է մեզ գրել*»[7], իսկ Համբարձում Միհրանեան, տարի մը ետք Լենինականէն կը գրէր. «*Խնդրում եմ ձեզանից որ այդտեղ (Հալէպում) գտնուող բոլոր պայպուրտցիների անուանացուցակը ուղարկէք ինձ: Ես ձեզանից շատ եմ խնդրում որ այս խնդրանքս անպայման կատարէք: Մենք հոս բաւական մեծ թուով պայպուրտցիներ կանք, որով մեզանից իւրաքանչիւրը ունի իր ընտանիքի անդամների եւ կամ ազգականների կորուստը, եւ բոլորս ալ որոնում ենք այդ կորուստներին: Վերջերս սպացած սփոյգ տեղեկութեանց համաձայն հոտ բաւականի մեծ թուով պայպուրտցիներ պէտք է լինեն: Մեծ յոյսով ենք որ դուք ուղարկելով այդ անուանացանկը մեզանից շատ շատերուն մեծ ուրախութիւն կը պատճառէք*»[8]: Ծանօթ է, որ Հալէպի մէջ պայպուրտցիներ-բաբերդցիներ ընդհանրապէս չեն գտնուած, եւ Սիւրմէեան սրբազան նամակին վրայ աւելի ետք ձգած է հետեւեալ մակագրութիւնը. «*Չեմ կարծեր որ բաբերդցիք ըլլան, դա՛րձեալ պրպտել, եւ արդիւնքը գրել*»: Բազմաթիւ են օրինակները, երբ մարդիկ չստուգուած լուրի մը կամ նոյնիսկ ենթադրութեան մը վրայ հիմնուելով՝ գրած են նամակներ, ակամայ յիշեցնելով ժողովրդային առածը, թէ «Ծովը ինկողը օձին կը փաթթուի»:

ՓՆՏՌՏՈՒՔՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Հարազատներու փնտռտուքի շարժումը սկսած է Զինադադրի յայտարարութեան հետ եւ առաջին նամակները Հալէպ հասած են 1918ի վերջ-1919ի սկզբնաւորութեան ու անոնց հոսքը շարունակուած է մինչեւ 1970ականները: Մեզի ծանօթ վերջին դիմումը կը կրէ 1981 թուականը, որ Ազգային Առաջնորդարանի պաշտօնաթերթ *Պարբերաթերթ* հանդէսին մէջ տպագրուած փնտռտուքի յայտարարութիւն մըն է[9]:

Նամակագրական կապը աշխուժացած է մանաւանդ 1926-28ին, երբ սուրիական անապատին մէջ տիրող երաշտին հետեւանքով, արաբական բազմաթիւ ցեղախումբեր ապաստանած են Անտիոքի ու Ամըքի շրջանները, իսկ տեղւոյն հայերը շփուելով անոնցմէ շատերուն հետ, անոնց վրաններուն տակ յայտնաբերած են իսլամացած բազմաթիւ հայորդիներ, ապա՝ սփիւռքահայ մամուլին մէջ, առ այդ տպագրած են

քանի մը լրատուութիւններ ու հրատարակած են գտնուած հայորդիներու ցուցակներ, որոնց յաջորդած է նամակներու եւ հարցումներու տարափ մը: Նոյն տարիներուն զուգադիպած է նաեւ Արեւմտեան Հայաստանի մնացորդացին բռնագաղթը դէպի Սուրիա, երբ հազարաւոր հայեր Խարբերդէն, Բալուէն, Մալաթիայէն, Տիարպեքիրէն ու շրջակայ գաւառներէն անցած են Սուրիա[10], բան մը որ շատերու մօտ վերաթարմացուցած է հարազատներ փնտռելու միտքը եւ նորանոր յոյսեր ներշնչած անոնց:

Մեր տեսած նամակներուն մեծ մասը գրուած է 1920-1930ականներուն: Մեծ է նաեւ թիւը յաջորդ տասնամեակի նամակներուն: Դիմումները նուազած են զգալիօրէն 1940ականներէն, մասամբ՝ Բ. Աշխարհամարտի հետեւանքով ստեղծուած նամակագրական դժուարութիւններուն, ապա՝ շատերու մօտ նկատուող յուսահատութեան պատճառով, ինչպէս նաեւ փնտռողներէն շատերուն հետզհետէ կեանքէ հեռանալուն եւ այլ ազդակներու հետեւանքով:

ԱՌԱՆՁԻՆ, ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ԴՐՈՒԱԳ-ՊԱՐԱԳԱՆԵՐ

Ամփոփ ձեւով ներկայացնենք քանի մը իւրայատուկ դրուագներ, վերցուած՝ մեր տեսած նամակ-դիմումներէն, թէեւ համոզուած ենք որ կ'արժէ խօսիլ գրուած իւրաքանչիւր դիմում-նամակի մասին առանձին-առանձին, առանց բացառութեան, որովհետեւ բոլորն ալ ողբերգական կեանքի մը, կեանքերու՛ պատմութիւններն են իրենց յոյզերով, յոյսերով, ուրախութիւններով եւ… յուսախաբութիւններով:

- Մեծ թիւ կազմած են անոնք, որոնք 1915ին անչափահաս ըլլալով, չեն իմացած իրենց անուն-ազգանունը եւ հետեւաբար չեն գիտցած թէ որո՛նց զաւակներն են իրենք, ո՛րտեղացի են ու հետեւաբար՝ ինչպէ՛ս պէտք է փնտռեն իրենց հարազատները:
- Հայուհի մը, որ կը փնտռէր 1915ին ընդամէնը 4 տարեկան եղած իր եղբայրը, մատնանշած է՝ թէ եղբայրը վստահաբար չի յիշեր իր անուն-մականունը, եւ հետեւաբար զինք փնտռելու եւ գտնելու յոյսերը բացառուած են, բայց աւելցուցած է նաեւ՝ որ ան արտաքինով շատ նման էր իրեն, եւ առ այդ՝ նամակին կցած է իր լուսանկարը եւ խնդրած՝ որ Հալէպի ու շրջակայքին մէջ իրեն նմանող եւ համապատասխան տարիք ունեցող խարտեաշ պատանի մը գտնելու պարագային՝ իմացնեն իրեն[11]:
- Ուրիշ մը, Թովմաս «Նալպանտեան», բնիկ տիարպեքիրցի, Աբխազիայէն, մանրամասն նկարագրած է Տիարպեքիրի իրենց տունը, թաղը, դրացիները ու խնդրած որ մարդիկ բարի ըլլան եւ ճշդեն իրեն անծանօթ իր իսկական մականունը, «*որպէսզի ճիշդ ազգանունս իմանամ եւ գոնէ հարազատներից մէկը գտնեմ աշխարհում*»[12]:
- Ռոտոսթոցի Գալուստ Սահակեան, իր քոյրն ու քեռորդին գտնելու յոյսով, 1931ին գրած է Հալէպ, ուր ըսած է թէ իր քոյրը «*իր ամուսինովը եւ*

մէկ զաւակովը 1915ին աքսորուած է Տէր Զօր, յետոյ ամուսինը ջարդը տարած են, մեր լսածին համաձայն քոյրս եւ զաւակը Տէր Զօրէն արաբ շէյխ մը տարած է, այս չափը ըսած են, շատ ու շատ կ'աղաչեմ որ նամակիս պատասխան գրելը չի յետաձգէք, որ աչքս ճամբան չի մնայ»[13]: *«Աչքը ճամբան մնացած»* Սահակեան, նոյն հարցով անգամ մը եւս դիմած է ճիշդ քառորդ դար անց՝ 1955ին: Իր այդ դիմումը եւս մնացած է անհետեւանք[14]:

- Կին մը դիմած է Առաջնորդարան, անոր համար որ երազին մէջ երեք անգամ ըսուած է իրեն՝ թէ իր զաւակը ողջ է եւ յոյս յայտնուած թէ պիտի կարողանայ գտնել զայն[15]: Ուրիշներ իրենց հարազատներուն ողջ կամ մեռած ըլլալը ստուգելու համար յաճախ դիմած են գուշակներու, ու անոնց տուած դրական պատասխաններէն ետք լծուած զանոնք փնտռելու աշխատանքին եւ առ այդ գրած են Հալէպ:
- Հետաքրքրական է նաեւ 1958ին Իրաքէն յղուած արաբերէն նամակ մը, գրուած՝ Իրաքի Ալ Աշքայանի ցեղախումբի անդամներէն՝ Մահմուտ Իպրահիմ Իսհակ անուն անձի մը կողմէ, ուր ան հայոց մօտ կը փնտռէ իր հայրը՝ հայկական արմատներ ունեցող Իպրահիմ Իսհակը, որ 1934ին Իրաքի Թէլ Աֆար քաղաքէն մեկնած է անորոշ ուղութեամբ ու չէ վերադարձած[16]: Ըստ երեւոյթին, Ցեղասպանութեան օրերուն, արաբներու մօտ ապաստանած, իսլամութիւն ընդունած ու յիշեալ ցեղախումբին մէջ ամուսնանալով ընտանիք կազմած հայ մըն է յիշեալ Իպրահիմ Իսհակը, որ աւելի ետք, լսելով իր ցեղին ձայնը, անցած է Հալէպ կամ այլուր, միացած ազգակիցներուն, իսկ իսլամ զաւակը, տարիներ ետք, իր հերթին, լծուած է կորսուած հայրը գտնելու աշխատանքին:

Կարելի է տալ բազմաթիւ այլ օրինակներ եւս, բայց ներկայացուածը բաւարար է պատկերացնելու համար վիշտը, հոգեկան դժուարին ապրումները, տառապանքն ու ցաւը, որ բաժինը եղաւ այն մարդոց՝ որոնք Ցեղասպանութեան հետեւանքով կորսնցնելով իրենց հարազատները, ամբողջ տասնամեակներ ապրեցան բարի լուրի մը, ուրախ խապրիկի մը կամ պատահական հանդիպումի մը երազով, ու անոնցմէ շատեր իրենց հետ գերեզման տարին այդ երազը, միաձուլուած՝ կորսուած զաւակի մը, հօր մը կամ մօր մը կորուստի անդարմանելի ցաւին:

Ստորեւ հրատարակութեան կու տանք նիւթին հայող քանի մը անտիպ նամակներ: Փոխած ենք միայն աբեղեանական ուղղագրութեամբ գրուած նամակներուն ուղղագրութիւնը եւ անհրաժեշտութեան պարագային՝ կատարած ուղղագրական ու կէտադրական հպումներ:

Հրատարակուող նամակները կը պահուին Բերիոյ Հայոց Թեմի Դիւանատան մէջ:

Ա.1

Դեկ. 1927-Յունուար 1928
Ռուսիա-Մայկոպ

Շնորհաւոր նոր տարի եւ բարի կաղանդ

Գերապատիւ Սրբազան հայր Տ. Արտաւազդ Ծ. վարդապետ եւ Առաջնորդ հայոց Հալապի

Հոգեւոր Ս. հայր,

Նուաստս Խարբերդ նահանգի շրջանից, Քէսրիկ գիւղի բնակիչներէն մին, Խոյուոր Օվանից Նաճար Ասատուրի որդին Յովհաննէս Նաճարեանցս, կը փնտռեմ իմ եղբօր որդին Անդրանիկը որ հիմա 16 տարեկան է, եւ քրոջս որդիները Կարապետ որ հիմա 18 տարեկան է եւ Սարգիսը 15 տարեկան է, որոնց հօր անունն է Պաղտասար եւ մօր անունը Աննա, թէպէտ ես ինքս Քէսրիկ ծնուած եւ Քէսրիկ գիւղիցն եմ, սակայն տաճիկների տուած նեղութեանց առթիւ Խօզաթ գիւղաքաղաքը փոխադրուեցանք, որպէսզի մի քիչ հանգիստ գտնենք, եօթն տարու չափ անդ մնալով դարձեալ վերադարձանք Բերդակ գիւղ Ս. Տնիկ թաղը, եւ այդ գիւղի ժողովուրդը մեզի անուանում էին Խօզաթցոնք, եւ այն տեղից երեք տարուց յետոյ Համաշխարհային Պատերազմն ծագեցաւ, տաճիկներն սկսեցին հայեր կոտորել, այդ առթիւ մեր Անդրանիկ անուն երախան ստիպուած մի ծանօթ թուրքի յանձնեցինք պահելու համար, եւ մենք խոյս տալով փախուստի դիմեցինք քրտերի մէջ ապաստանուեցանք միառժամանակ եւ այնտեղ լուր առնում էինք որ ամերիկացին եկած յետամնաց հայ որբ երախաները հաւաքած այդ կողմերը բերած են, մինչեւ ռուս զօրքի գալը եւ այդտեղից գնացինք Երզընկան, Երզընկայից գնացինք Կարին եւ Կարինից փախանք Ռուսաստան, եւ այդպիսով կորուսինք մեր հարազատներին, այն օրից ի վեր փնտռում եմ իմ կորուստներն եւ ոչ մի տեղեկութիւն չեմ ստացած, ուստի սոյն աղերսագրաւս դիմում եմ քեզ սրբազնութեանդ Ս. աջըն համբուրելով խնդրում եմ որ իմ խնդրանքն զանց չառնէք առանց մերժելու հայրախնամ օժանդակ աջակցութիւնդ ցոյց տալով զմեզ, անհունս պիտի ուրախացնէք, բարեացակամ շնորհիւդ երախտապարտ կացուցանելով զմեզ, տեղուիդ որբանոցներն դիմեցէք, Պաղտատու սդասիոնին քովը միւսի Ֆռլայէմբինի որբանոցը, տղան Միսակ էֆէնտուն[17] հարցուցէք, Պէյրութ Ղազիր որբանոցը դիմեցէք, գուցէ այդ տեղերից որեւէ տեղեկութիւն կը ստանաք: Այդ կողմից մի տիկին եկաւ աստ, անձամբ գնացի նրա մօտ, վերոյիշեալ տեղեկութիւններն տալուց յետոյ ասաց որ բերդակցի Աղաւնի անուամբ մի տիկին թուրքի մի հետ մի առ ժամանակ կենակցելով ի վերջոյ առիթից օգտուելով իր երկու երախաներով փախեր եկել է կողմդ, նրան կանչիր հարցուփորձելով գուցէ որեւէ տեղեկութիւններ կը ստանաք մեր կորուստների առթիւ եւ մեզ կը տեղեկագրէք:

Խարբերդ Նահանգի շրջանից Բերդակ գիւղի բնակիչներէն մին, տակերմանճի[18] Օվակիմին աղջիկը Խումարը, փնտռում է իր զաւակներին, աղջկան Աղաւնիին որ հիմա 28 տարեկան է, եւ տղան Դաւիթին որ հիմա 24 տարեկան է, եւ հայրերուն անունը Գասպար, եւ փնտռում է իր եղբօրորդոյն Գարեգինին որ հիմա 18 տարեկան է, հայրին անունը Մինաս եւ մօր անունը Նազլի:

Խարբերդ Նահանգի շրջանից Ատիեաման գիւղաքաղաքից բնակիչներէն մին, Յակոբ Սամուրեանը փնտռում է իր զաւակները, մայրերուն անունը Մայրամ է, մեծ տղուն անունը Յակոբ է, որ հիմա 23 տարեկան է, իսկ փոքրին անունը Նազար է որ հիմա 18 տարեկան է, իսկ աղջկան անունը Թուրվանտա է որ հիմա 15 տարեկան է, եւ իր քրոջ որդին Սարգիսը որ հիմա 31 տարեկան է եւ հօրը անունը Յակոբ է եւ մօրը անունը Աննա է:

Խարբերդ Նահանգի շրջան Մազկերտ գիւղի բնակիչներէն մին Զարդար Նունովարդանեանը փնտռում է իր եղբօր որդիներուն Միհրանին որ հիմա 19 տարեկան է եւ աղջիկան անունը Աննա որ հիմա 24 տարեկան է, հայրերուն անունը Սարգիս է եւ մայրերուն անունը Սառա է:

Խարսա Նահանգից Պարեախտար գիւղի բնակիչ ազգայիններէն մին Վարսենիկը փնտռում է իր տղուն Ցոլակին որ հիմա 21 տարեկան է, հայրին անունը Խաչատուր եւ ազգանունը Ալեքսանով:

Կը եզրակացնեմ խօսքս չունենալով ուրիշ որեւէ հարկաւոր գրելիք: Մնամ երախտապարտ մինչ ցկեանս ձերդ խոնարհ ծառայ եւ սպասող գրուս փոխադարձ պատասխանին

Նաճարեան Յովհաննէս Ասատուրովիչ

Ա.2

Համար 7554 1 Մարտ 1928

Մեծայարգ
Տիար Նաճարեան Յովհաննէս Ասատուրովիչ
Maikope- (Russie)

Ստացած ենք Ձեր 1928 Յունուար մէկ թուակիր գրութիւնը որով տեղեկութիւն կը խնդրէիք Ձեր եղբօրորդւոյն Անդրանիկի եւ Ձեր քրոջորդւոյն Կարապետի ու Սարգիսի եւ այլ կարգ մը Քէսրիկցի, Բերդակցի, Ատիեամանցի եւ այլ ազգայնոց մասին:

Իբրեւ արդիւնք մեր կատարած պրպտումներուն, կը փութանք Ձեր սիրելութեան հաղորդելու որ.-

1- Խարբերդի եւ յարակից գիւղերու Հայրենակցական Միութեան վարչութիւնը 26 Փետրուար թուակիր պատասխանագրով մը կը հաղորդէ թէ Անդրանիկի ուր ըլլալը բոլորովին անյայտ կը մնայ, իսկ Կարապետի ու

Սարգիսի մասին տրուած տեղեկութեանց համաձայն, անոնցմէ մին թուրքերու ձեռամբ զարնուած իսկ միւսն ալ մեռած է բնական մահով:

2- Բերդակցի Տէյիրմէնճի Յովակիմին աղջկան Տիկ. Խումար Յարութիւնեանի աղջիկը Աղաւնին կը մնայ եղեր Խարբերդի Շուշազ իսկ տղան կը գտնուի եղեր Փինօղլի գիւղը: Ասկէ զատ Հալէպ կը մնայ յիշեալ տիկին Խումարի քոյրը եւ քոռորդին Լուտերը, որ կը ճանչցուի Առաքելեան ազգանունով: Տիկին Խումար յիշեալներու հետ կրնայ թղթակցիլ ուղղակի Առաջնորդարանիս հասցէով:

3- Ատիեամանցի Յակոբ Սամուրեան որ կը փնտռէր իր պարագաները, ներփակ կը յղենք Ատիեամանի Հայրենակցական Միութեան Հալէպի վարչութեան 29 Փետրուար թուակիր գրութիւնը, ուր հարկ եղած ծանօթութիւնները տրուած են իր կորուստներու մասին. հաճեցէք ներփակ նամակը յանձնել իր հասցէին:

4- Մազկերտցի Աննան, իր եղբօրը Միհրանին հետ, ներկայիս Մարսիլիա-Ֆրանսա կը գտնուի:

Մեր կատարած քննութեանց արդիւնքը յայտագրելով Ձեր սիրելութեան, մնամ աղօթարար

Արտ. Վրդ.
Առաջնորդ Հայոց Հալէպի

Բ.1


Գոլոմպոս Ohio
Նոյ. 28 1928

Գերապատիւ Տիար,
Տ. Արտաւազդ Ծ. Վ. Սիւրմէլեան

Յարգելի հայր իմ,

Թերթին մէջ կարդալով Ձեր կատարած մեծ պաշտօնը եւ որբերու ու որբուհիներու արաբներու եւ թուրքերու քովէն վերադառնալնին լսեցի, շատ ուրախ եւ անհամբեր կ'զգամ ու կը ցաւիմ Հալէպէն հեռանալուս, ասկէ տասը տարի առաջ ես ալ Հալէպ էի, որ 6 վեց ամիսի չափ հայոց որբանոցը մնացի, բնիկ մարզուանցի եւ այդ տեղի եկեղեցականներէն լաւ ճանչցուած Վահրամ Եփրեմեանի քոյրն եմ, տարագրութեան միջոցին քաղաքէն ելլելով ընտանեօք մինչեւ Հեքիմ Խան հասանք, որ յաջորդ օրը Գանլը Տերէ ըսուած տեղը հասնելով քիւրտերը մեծ կոտորած մը ըրին մեր բանակին որ ես մեծ եղբօրս հետ ազատեցայ, բայց մայրս զոհ տուի, իրեն հետ կար պզտիկ եղբայրս միայն չորս (4) տարեկան որ մեռած չէր, մեր թուրք պահապանները ըսին որ մանուկը ձիու վրայ հեծցուցած հետերնին տարին, հարկաւ այդչափ պզտիկ տղայ մը գտնելը շատ դժուար է, բայց նորէն յոյսս չեմ կոտրեր, որովհետեւ այն տեղերը շատ ալ հայ կիներ եւ աղջիկներ տարուած էին: Պատուելի հայր իմ, չեմ ուզեր իմ նամակովս ձեզ յուզել կամ ձանձրացնել, բայց կ'աղաչեմ միայն ինծի երկտողով մը իմացուցէք որ այդչափ հեռու տեղերաց ալ եկողներ կա՞ն[19], նամակիս մէջ

պիտի գտնէք նկարս, որ տղեկը ճիշդ ինծի կը նմանէր, ոսկեգոյն մազերով բայց հաւանական շագանակագոյն դարձած է, աչքերը կապոյտ, պայծառ դէմքով, վզին վրան ալ ճիշդ դէմքին տակը վէրքէ մնացած կտուկ մը նշան մը ունէր, անունը չյիշեր, որ Յակոբ Եփրեմեան էր:



Կ'աղաչեմ այս տեսակ մէկը ըլլալէն կամ չըլլալէն ինծի իմացուցէք կամ այս նկարով նամակս պահեցէք կարելի է օր մը պէտք ըլլայ:

Աստուած հայ ազգիս ազատութիւն, սէր եւ միութիւն, եւ ձեզ պէս մեծ անձերուն ալ կարողութիւն ու համբերութիւն պարգեւէ:

Անկեղծ զաւակդ
Մարիամ Եփրեմեան

Մարիամ Եփրեմեան

86 Barthman Ave.
Columbus, Ohio

Բ.2

Համար 8727 — 25 Դեկտեմբեր 1928

Համեստուհի
Մարի Եփրեմեան
86 Barthman Ave.
Columbus, Ohio

Ձեր Նոյեմբեր 28 թուակիր նամակը ստացանք եւ համաձայն Ձեր խնդրանքին քննութիւն կատարել տուինք տեղւոյս ազատագրեալներու մէջ, Ձեր եղբօր Յակոբի մասին որոշ տեղեկութիւն մը առնելու յոյսով:

Ազատագրուած որբերով շահաքրքրուող մարմինը մեզի կը հաղորդէ թէ իրենց միջոցներով ազատուած տղայոց մէջ այդ անունով մէկը չէ գտնուած:

Ձեր խնդրանքը միշտ նկատի պիտի ունենանք եւ եթէ յառաջիկային հնարաւոր ըլլայ,- ինչ որ չենք յուսար,- Ձեր եղբօր Յակոբի մասին նոր տեղեկութիւն մը առնել, Ձեզի կ'իմացնենք:

Հայրական սիրով եւ օրհնութեամբ
Մնամ աղօթարար

Առաջնորդ Հայոց Բերիոյ
Արտաւազդ Վրդ.

Գ.1

1929 Նոյեմ. 22
Ռուսճուք

Պատուարժան
Թաղական Խորհուրդ
Ս. Եկեղեցւոյն-Հալէպի

Յարգելի Տեարք,

Տեղւոյս ազգայիններէն այրի տիկին Զարուհի Ակնայ Կարմրակ գիւղէն Խաչատուր Ղազարեանի ընտանիք, Ակնայ քաղաքէն Տիար Ստեփան Մազմանեանի դուստրն է, որը ներկայիս կը բնակի հոս, իր ծնողաց մօտ:

Սոյն տիկին Զարուհի, իր հինգ զաւակներով վերջին սարսափելի պատերազմի տարագրեալն լինելով, իր 5 անչափահաս զաւակօք, մինչեւ Հալէպի մէջ կը հասնի, եւ սակայն իր զաւակներէն 2-3ը ճանապարհին անսուաղութեամբ կը մնան, կ'անհետանան, եւ իր կարծիքով, երկու չափահասները ողջ լինել կը կարծէ:

Իր հինգ զաւակներու անուններն են՝

1- Նազենի, դուստր, որ ներկայիս 25 տարեկան է:

2- Սերոբ, մանչ, որ ներկայիս 23 տարեկան է:

3- Կարապետ, մանչ, որ ներկայիս 20 տարեկան է:

4- Խուտէմ, մանչ, որ ներկայիս 18 տարեկան է:

5- Յովակիմ, մանչ, որ ներկայիս 16 տարեկան է:

Տիկին Զարուհի Խաչատուր Ղազարեանի այս հինգ զաւակներէն մէկը, մանչ թէ աղջիկ անորոշ է, ներկայիս Հալէպ կը գտնուի եղեր, եւ, թէ՛ Ակընն եւ թէ՛ Կ. Պոլիս լուր առնելով, գրած տեղեկացուցած են հոս:

Արդ, ներկայիս աւելորդ չեմք համարիր, մանրամասնօրէն տեղեկացնելու թէ յիշեալ տիկին Զարուհին տարագրութեան սոսկալի թուականներէն 1921ին իր ծննդավայրը դարձած է միայնակ, եւ 1925ին Պուլկարիոյ Ռուսճուք քաղաքս գտնուող տիար Ստեփան Մազմանեանի մօտ կը բնակի, որը եւ իր ծնողքն է:

Տիկին Զարուհի իր հինգ զաւակները տարագրութեան արհաւիրքներուն մէջ, մեծամեծ գուրգուրանքներէ յետոյ, անհետացած տեսնելով, խիստ տխուր ու անմխիթար, երբ ներկայ լուրը կ'առնէ իր մէկ կորսուած զաւկին ողջ եւ ուր մնալուն կը տեղեկանայ, սրտատրոփ կը սպասէ ակնդէտ, իր զաւկին գալստեան արժանանալու:

Եւ, միթէ չ'արժե՞ր որ, հոգեւոր հարք, արգոյ թաղական, աղքատախնամ, որբախնամ վարչութիւնք փոյթ տանին, սոյն մանչ թէ աղջիկ զաւկին հետքը գտնելու եւ որոշ ծանօթութիւն փութացնելու, ի մխիթարութիւն իւր անմխիթար այրիացեալ մօր, տիկին Զարուհիի:

Ներկայիս կը փութամ յայտնելու թէ այդ զաւակը, ըլլայ մանչ թէ աղջիկ, եթէ Ձեր ջանիւք գտնուի ու այս կողմ ղրկուելու վիճակի մնայ խնդիրը.-

Աւելորդ չեմք համարիր յայտնելու որ, հոս, տիկին Զարուհիի ծնողքը, տիար Ստեփան Մազմանեան եւ իւր որդիքը, Գառնիկ, Դաւիթ եւ Յովհաննէս, ի վիճակի են զաւակը այս կողմ անցընելու օրինական միջոցները գործադրելու:

Ուստի, կը խնդրուի պատ. խորհուրդէդ, կամ պատկանեալ Որբախնամ վարչութենէն, որպէսզի բարի լինիք, նախ զաւակը գտնել եւ ըստ այնմ տեղեկագրել խորհրդոյս թէ՝

Ա. Ի՞նչ է անունը, եւ որու՞ մօտ կը գտնուի:

Բ. Այս կողմ ղրկելու համար, ինչպիսի՞ օրինական գործողութեանց պէտք կայ Ձեր կողմէ, եւ որբին ծնողքին կողմէ:

Գ. Դրամական ինչպիսի՞ ծախուց գումարի պէտքը անհրաժեշտ է, տեղեկացնել Թաղ. Խորհրդոյն՝ ի գիտութիւն:

Քաջ վստահ լինելով որ, պիտի բարեհաճիք սոյն գրութեան իբր մխիթարիչ պատասխան փութացնել մեզ, կը մնամ աղօթարար վասն Ձեր

Գրիգոր քահանայ Գասպարեան
Աւագերէց Ս. Աստուածածին եկեղեցւոյ

Տիկին Զարուհիի հասցէն է հետեւեալը. Ստեփան Մազմանեան-Ռուսճուք-Պուլկարիա:

Գ.2

1931 Փետրուար 22
Ռուսճուք

Գերաշնորհ
Տ. Արտաւազդ Ծ. Վ. Սիւրմէեան
Առաջնորդ հայոց Հալէպի

Գեր. Ս. հայր,

Կը յիշէք անշուշտ որ, տարի մը առաջ տեղւոյս ազգայիններէն մէկուն աղջկան փնտռտուքը կատարուեցաւ Ձեր միջոցաւ, եւ շատ գոհ եմք որ գտնուած է այդ աղջիկը, Մարիամը[20], որը ամուսնացեր է Պրն. Վահան Աւետիսեան խնուսցի, արհեստով շէօֆէօր[ի հետ], իսկ Մարիամը ակնցի, Խատէմ գիւղի բնիկներէն է, եւ որուն մայրը տիկին Զարուհի Ղազարեան քաղաքս կը գտնուի:

Արդ, սոյն վերոյիշեալ ծանօթութիւնները տալով, ներկայիս կը խնդրուի Ձերդ սրբութենէն, որպէսզի բարեհաճէիք ներփակ գրութիւնը վերոյիշեալ Պրն. Վահանին, կամ տիկնոջը Մարիամին հասցնելու,- եւ

Լսելով որ բաւական թոգաթցիներ կը գտնուին եղեր հոդ, եթէ կարելի է գաղթականաց ցանկէն քաղուելով անունները ղրկուի հոս, իրենց հայրենակիցներուն ներկայացնելու համար:

Մնամ ‘ի համբոյր Ձեր օծեալ Ս. աջոյն
Գր. Քհնյ. Գասպարեան
Աւագերէց Ս. Եկեղեցւոյս

Նամակին ծայրը Սիւրմէեան Սրբազան մակագրած է հետեւեալը.
«Գոհացնել, յանձնել:
28 Փետրուար 931 Արտ. Եպսկ.»:

Նամակին դարձերեսին կայ վերոյիշեալ Վահան Աւետիսեանի հասցէն:

Դ.

Գեր. Տ. Զարեհ Ս. Եպս. Փայասլեան
Առաջնորդ հայոց Հալէպի թեմի
Հալէպ

Բնիկ Սեբաստիայի Զառա գիւղացի, ներկայիս 77 տարեկան եւ հայկական ընդհանուր տարագրութիւնից յետոյ Լենինականում հաստատուած Էլճիկեան խաչիկ Նիկոլի փնտռում է իր

1 Իր կինը՝ Սեբաստիայի Գարապուլաղ գիւղացի Ճօմարտեան Արմաւենի Դանիէլի
2 Որդին Նիկոպապ Էլճիկեան (1915 թուին 12 տարեկան)
3 Աղջիկը Ագապի Էլճիկեան (1915 թուին 11 տարեկան)
4 Որդին Յովհաննէս Էլճիկեան (1915 թուին 8 տարեկան)
5 Որդին Սոկրատ Էլճիկեան (1915 թուին 6 տարեկան)
6 Որդին Արզուման Էլճիկեան (1915 թուին 4 տարեկան)
7 Որդին Մեսրոպ Էլճիկեան (1915 թուին 2 տարեկան)
8 Որդին Սերոբ Էլճիկեան (1915 թուին 1/2 տարեկան)

Խնդրարկուի յայտարարութեան համաձայն, իր Էրզրումի շրջանում, թրքական բանակի մէջ զինծառայութեան միջոցին, ընտանիքը տարագրուել է Զառայից եւ ողջամբ հասել մինչեւ Տիվրիկ, որից յետոյ ոչ մի տեղեկութիւն հնարաւոր չի եղել ստանալ:

Մասնաւոր կերպով խնդրում եմ Հալէպի եւ Ամերիկայի Սեբաստիայի Վերաշինաց Միութիւնների միջոցով կատարել հարկ եղած փնտռտուքները եւ ոգի ու կեանք շնորհել մի ծերունի աշխատաւոր հօր՝ որը իր մայր հայրենիքի խաղաղ կեանքը անց է կացնում իր հարազատների հոգեմորմոք յիշատակով:

Համբուրիւ Ս. աջոյդ եւ սպասելով Ձեր սրբազնութեան փրկարար կարգադրութեան, մնամ որդիական խորին ակնածանօք

17/5/1955 թ. Յարութիւն Պալեան
Լենինական

Փնտռողի հասցէ.
Էլճիկեան Խաչիկ Նիկոլի
Լենինական 15 փողոց, 231 տուն:

Ե.

Դեկ. 7 1958
Սոֆիա Պուլկարիա

Թաղական Խորհուրդ Հալէպի,
Մեծայարգ Տեարք,

Սոյն նամակը գրողը Ձեզ Պուլկարիոյ մէկ հայ քաղաքացին է որը կը բնակի Պուլկարիոյ մայրաքաղաքը՝ Սոֆիա, իմ անունս է Թագուհի Սուքիաս (հօր անունով) Սավայեան է: Ձեզմէ մեծ խնդրանք մը ունիմ այն է ինձ օգնէք որ կարենամ իմ կորսուած քոյրս գտնամ ու կարենամ անոր հետ կապ հաստատել: Քոյրս կորսնցուցած եմ հետեւեալ պարագաներու տակ. 1915ին քոյրս որուն անունը է Հաճի Մաննիկ Պօղոս Կակալըեան Ռոտոսթոյէն (Թեքիրտաղ) աքսորուած են դէպի Տէր Զօրի կողմերը, 2-3 տարի վերջը, պատերազմի վերջաւորութեանը, աքսորեալներուն վերադարձի ժամանակ յիշեալ քոյրս մնացած է Հալէպ եւ ամուսնացած է արապի հետ, այս պարագան հաստատ ծանօթ է մեզի, բայց ես աւելի ուշ իմացայ այն պատճառաւ որ ես աքսոր չեմ գացած: Մօտ անցեալներս Ձեզ ուրիշ նամակ մըն ալ ուղղած եմ, միեւնոյն պարունակութեամբ, բայց դժբախտաբար մինչեւ հիմա ոեւէ տեղեկութիւն մը չունիմ ու չեմ գիտեր թէ նամակս իր նպատակին հասա՞ծ է կամ թէ ոչ, հետեւաբար խնդրեմ բարի եղէք ու այս նամակս անպատասխան մի ձգէք, նոյնիսկ եթէ Ձեզ ոեւէ դժուարութիւն չի պատճառեր նախ, փնտռելէ առաջ ինձ երկտողով մը իմացուցէք թէ նամակս ստացուած է ու թէ կը համաձայնիք Ձեզմէ կախեալը ընէք քոյրս գտնալու համար կամ ոչ:

Քոյրս հիմա մօտ 56-57 տարեկան կայ, բացի այդ Ձեզի կու տամ նոյնպէս եւ մանրամասնութիւններ Ռոտոսթօ (Թեքիրտաղի) քաղաք ապրած ժամանակ, այն նպատակով որ հոտ շատ հաւանական է Ռոտոսթոյէն հայեր գտնուին որոնք կրնան օգտակար ներկայանալ այս մեր պարագային: Քոյրս կը բնակէր Ռոտոսթոյի Սրբ. Թագաւոր թաղը, ժողովարանին դէմը, հօրը անունը էր Պօղոս Կակալըեան, որը հողագործութեամբ կը պարապէր:

Ես վստահ եմ որ Ձեզ ծանօթ է որքան մեծ ուրախութիւն պիտի ըլլայ ինձ համար եթէ կարենամ քոյրս գտնալ, այդ պատճառաւ անտարակոյս Ձեր մարդասիրութեան վրայ կասկած չունենալով վստահ եմ որ ինչ որ կախում ունի Ձեզմէ պիտի կատարէք: Այս առթիւ խնդրեմ ընդունեցէք իմ կանխաւ շնորհակալութիւններս ու երախտապարտութիւնս: Վերջին խնդրանքս է ինչպէս գրեցի աւելի վերը, իմացուցէք ինձ նամակս ստացած էք կամ ոչ ու ինչ նպատակ ունիք:

Հասցէս հետեւեալն է.
Takouhi Savaian, Rue Antim I, 22 Sofia, Bulgarie

Մնամ Ձերդ յարգանօք՝
Թ. Սավայեան

Զ.

Երեւան, 29 12 1959 թ.

Հալէպի հայոց առաջնորդին,
Յարգելի Սրբազան,

1915 թուի հայ աղէտի ժամանակ, աքսորավայրում, Ռակկայի կողմերը կորցրի քրոջս Ռեբեկային: Բնիկ պալըքեսիրցի, հօր անունը Սարգիս, մօր անունը Նարդուհի: Պաղտատից մեր մի հայրենակից գրում է որ նա Ռեբեկային տեսել է Սիրիայի Մէատին քաղաքում 1917 թուին, այդ ժամանակ Ռեբեկան ամուսնացած է եղել մի արաբ յիսնապետի հետ եւ ունեցել է երկու երեխաներ:

Մեծապէս խնդրում եմ Ձեզ, այս տուեալների հիման վրայ հնարաւորութիւն ունենայիք Տէր Զօրի առաջնորդի եւ կամ այլ միջոցներով փնտռել քրոջս եւ ինձ բարի լուր մը հաղորդել քրոջս վիճակի մասին: Ներկայումս քոյրս պիտի լինի մօտ 55 տարեկան:

Միեւնոյն ժամանակ կը խնդրէի այս մասին հաղորդէիք Հալէպում ապրող պալըքեսիրցիներին, որպէսզի նրանք եւս հետաքրքրուէին քրոջս բաղդովը:

Ձեր հոգատարութեան համար նախօրօք իմ խորին շնորհակալութիւնս եմ յայտնում Ձեզ:

Ռեբեկայի եղբայրը՝ Յարութիւն Սարգիսեան

Հասցէ. Հայկ. ՍՍՌ Երեւան, Ստալին Գրատեան փողոց, 48 տուն:

Նամակին կցուած է Ազգային Առաջնորդարանի դիւանապետ Սամուէլ Գայնաքեանին յղուած Սարգիս Սէլեանի երկտողը, ուր կ'իմացնէ թէ «Ծանօթ նամակը կը վերադարձնեմ ապարդիւն փնտռտուքներէ վերջը: Հոս 3-4 պալըքեսիրցիներ միայն կան, որոնք ոչինչ գիտեն…»:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Կ. Պոլիս, 41.5x57.5 սմ.: Լոյս տեսած է 28 թիւ, կամ՝ աւելի:

[2] [Աղեքսանդրիա], տպագրութիւն-հրատարակութիւն Արամ Ստեփանեանի, 1916, 24 էջ:

[3] Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), *Եղեռնապատում Փոքուն Հայոց Եւ Նորին Մեծի Մայրաքաղաքին Սեբաստիոյ*, Պոսթըն, Տպ. «Հայրենիք», Հրատ. Ամերիկայի «Սեբաստիոյ Վերաշինութեան Միութեան», 1924, էջ 543:

[4] Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնտ 420, ցուցակ 65, համարեա բոլոր գործերը:

[5] Այս բոլորը, համապատասխան ուսումնասիրութեամբ եւ ծանօթագրութիւններով ճոխացուած, կը յուսանք հրատարակութեան տալ ոչ հեռու ապագային:

[6] Դիւան Բերիոյ Հայոց (ԴԲՀ), Մկրտիչ Մարգարեանէն Արտաւազդ Ծ. Վրդ. Սիւրմէեանին, 20 Յունուար 1926, Լանսէէն (Իզէր-Ֆրանսա):

[7] ԴԲՀ, Յովհաննէս Նաճարեան Ասատուրովիչէն Հալէպի Առաջնորդին, Մայկոբէն (Ռուսիա): Անթուակիր, հաւանաբար 1927:

[8] ԴԲՀ, Համբարձում Միհրանեանէն առ «Յարգելի տեարք», 26 Ապրիլ 1928, Լենինականէն:

[9] «Կը փնտռեն», տե՛ս՝ *Պարբերաթերթ*, Հալէպ, Դ. Տարի, թիւ 1 (10), Յունուար-Մարտ 1981, էջ 95:

[10] ***Ծ.խ.***- Այս մասին կարդալ այս հատորին մէջ Վահէ Թաշճեանի եւ Անի Ֆիշենկճեանի յօդուածները:

[11] Տե՛ս՝ աստ, նամակ թիւ Բ.:

[12] ԴԲՀ, Թովմաս Նալպանտեանէն առ «Մեծայարգոյ եւ Սրբազան Տեարք», Աբխազիայէն (Խորհրդային Միութիւն), 23 Օգոստոս 1967:

[13] ԴԲՀ, Գալուստ Սահակեանէն առ «Պատուարժան հոգաբարձութիւն Հալէպի հայոց», 17 Մայիս 1931, Worcester Mass.էն:

[14] ԴԲՀ, Գալուստ Սահակեանէն Հալէպի Առաջնորդին, 24 Մարտ 1955, Worcester Mass.էն:

[15] ԴԲՀ, Զուարթ Աբրահամեանէն՝ Հալէպի Առաջնորդին, 21 Յուլիս 1929, Եգիպտոսէն:

[16] ԴԲՀ, Մահմուտ Իպրահիմ Իսհակէն Հալէպի Հայոց Առաջնորդին, 7 Ապրիլ 1958, Թէլ Աֆարէն (Մուսուլ-Իրաք, արաբերէն լեզուով):

[17] Նկատի ունի ծանօթ հայասէր դանիացի Քարէն Եփփէն ու անոր որդեգիր զաւակը՝ Միսաք Մելքոնեանը: Միս Եփփէի որբանոցը կը գտնուէր Հալէպի Պաղտատի Կայարանին մօտակայքը, Շէյխ Թահա թաղամասին մէջ:

[18] Թրքերէն՝ ջաղացպան:

[19] Նկատի ունի նոյն շրջանին կազմակերպուած ձեւով անապատներէն հայ խլեակներու հաւաքման աշխատանքը, որուն համար ստեղծուած էր առանձին մարմին մը՝ «Որբահաւաք Յանձնախումբ»ը, առաջնորդ Արտաւազդ Արք. Սիւրմէեանի նախագահութեամբ: Նամակագիրը այդ Յանձնախումբի գործունէութեան մասին թերթերու մէջ կարդացած ըլլալը կը յայտնէր վերեւ:

[20] Խնդրարկու Զարուհի Ղազարեանի վերեւ տրուած զաւակներու ցուցակին մէջ Մարիամ անունով դուստր չէ նշուած, այլ կայ մէկ աղջիկ միայն՝ Նազենի:

The Soul Searching Process throughout Syria for Those Lost During the Armenian Genocide

(Summary)

Mihran Minassian
mihran.min@gmail.com

A search operation started as soon as the survivors of the Armenian Genocide had arrived at their new stations. They started to ask questions and inquire about their family members, relatives, and co-villagers. Diverse means were used in this search operation: announcements with the heading "looking for" were printed in newspapers, letters were sent to different addresses, survivors were interrogated, some even returned to Aleppo and the Syrian deserts to conduct searches for their lost ones.

Aleppo, as the main center of refugee settlement and as the first station on the road to the Syrian deserts, was the point of convergence for all the attention of those looking for surviving relatives. From all over the world Armenians sent inquiries to the Aleppo Prelacy, diverse compatriotic unions and individuals, always expecting "good news" for recovery of kin.

The immense number of inquiries induced the Prelacy to adopt a special search system. Every inquiry was processed by designated personnel; the content of the letter was summarized and immediately communicated to assigned individuals.

Alongside query letters addressed to the Prelacy, announcements were often made from the altar of the church by clerics and posted on the walls of the church and other public places. The information gathered was combined and sent to the inquirer.

Notwithstanding this extensive and systematic effort, very few were able to find their relatives as most had perished and details of their deaths were unknown.

ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱԼԷՊԻ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆ-ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ (1920-1927)

Անդրանիկ Տագէսեան
adakessian@haigazian.edu.lb

ՄՈՒՏՔ

Օսմանեան Կայսրութեան պարտութեամբ՝ Միջին Արեւելքի հայոց աքսորավայրերուն յաղթական դաշնակից բանակներու կողմէ գրաւումով եւ Զինադադարի հռչակումով, հայ գաղթականութեան մնացորդացի, խլեակներու փրկութեան, առեւանգեալներու վերատիրացման աշխատանքը թափ կ'առնէ, կարելիութիւնը կ'աւելնայ՝ փրկագործութեան, օգնութիւն հասցնելու հայ թշուառներուն, որոնց մասին հայ իրականութեան մէջ աւելի լայնածիր գրութիւններ ու ազգը փրկելու կոչեր հրատապ կը դարձնեն ազատարարութեան աշխատանքները՝ յարաբերաբար բարենպաստ պայմաններու յառաջացումով:

> ...Հարիւր հազարաւոր որբերու եւ կիներու ազատագրումը, զինադադարի հռչակումին առաջին օրերուն իսկ հրամայողական բարոյական պարտադրութիւն մը ճանչցուած էր բոլոր հայերուն կողմէ: ... անոնց ազատագրութիւնը կը դառնար մարդկային, ազգային եւ կրօնական պարտականութիւն մը... անոնց միջոցաւ անարգուած, անպատուուած կը տեսնէին հայութիւնը իր ամբողջութեան մէջ, հետեւաբար պարտադրանքը կը ստեղծուէր այդ անարգանքը սրբելու ազգութեան ճակատէն: Այս զգացումները կը տիրապետէին հայերուն եւ իւրաքանչիւր հայ, ինչ պայմաններու եւ դիրքի մէջ ալ գտնուէր, իր շրջապատին մէջ կ'աշխատէր եւ կը գործէր անոնց ազդեցութեան տակ: Թուրքի մը, արաբի մը, քիւրտի մը քովէն հայ որբ մը կամ կին մը փախցնելը պարտականութիւն կը համարուէր, իւրաքանչիւր հայու[1]:

Ընթացք կ'առնէր խլեակներու հոսք մը դէպի Հալէպ: Վերջինս Պէյրութէն ու Դամասկոսէն աւելի հիմնական կայան կը դառնար եւ կը վերածուէր գաղթականներու մայրաքաղաքի: Հալէպ ուղղուող այս հոսքը պիտի չդադրէր, քանի որ յառաջացեր էին առեւանգեալ որբեր եւ աղջիկներ, հարէմներու մէջ ծառայեցուած հայ խլեակներ ազատագրելու գործով զբաղող անհատներ, հարազատներ եւ կազմակերպուած ջոկատներ: Կազմակերպուեր էին դրամահաւաքներ ու հանգանակութիւններ՝ փրկագիներ վճարելու համար: ՀԲԸՄը 1919ին հիմներ էր «Ազատագրումի Հիմնադրամ»ը[2]. Աքապա-Քերէքի շրջանին մէջ Յովհաննէս Գլըճեանի, Հորանի շրջանին մէջ Լեւոն Եօթնեղբայրեանի խումբի, Տէր Զօրի կողմը՝ Հերեանի միջոցով կը կատարուէին որոնումներ ու ազատագրումներ[3]:

Տակաւ Հալէպ կը սկսին հաւաքուիլ խլեակներու բեկորներ: Ազատագրուած «*կիներուն ... ջախջախիչ մեծամասնութիւնը... ենթարկուած են... ոչ միայն բռնադատեալ աշխատանքի, ծեծերու, հարուածներու, այլատեսակ բռնութիւններու ճնշումին, բայց մանաւանդ բարոյական սարսափի մը: Սպաննուելու վախին տակ ապրած են ամէն օր...*»[4]:

Զարհուրելիօրէն թշուառ պատկեր մը կը յառաջանայ Հալէպի մէջ. ամէնէն աւելի աչքառու թշուառութիւնը մերկութիւնն է, բառին ամենալայն իմաստով. հազարաւորներ անկողին եւ ծածկոց չունին եւ ստիպուած են գետինը հողին վրայ պառկիլ. հազարաւորներ իբր զգեստ պատառոտուն աղտոտ քուրջեր ունին միայն...[5]:


ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՐԱՆՆԵՐ


Հալէպը ունէ՛ր որբանոց, չունէր սակայն միջոցը՝ առեւանգեալ այս կիները ամոքող, կազդուրող, վերակենսաւորող հաստատութիւնը: Եղածները, ինչպէս Հալէպի Օրիորդաց Միութեան (ՀՕՄ) Ապաստանարանը բաւարար չէին, կամ պահանջքը բաւարարող արդիւնաւէտութիւն չունէին:

Այս ծիրին մէջ պէտք է տեսնել Հալէպի մէջ ապաստանարան մը հիմնելու ՀԲԸՄի ծրագիրը:

«Հալէպի մէջ Ապաստանարան.- Կեդր. Վարչ. Ժողովը [ԿՎԺ] կարեւոր որոշում մը տուած է որ կը լրացնէ մեծ պակաս մը» գրութեամբ, *Միութիւն* կը ծանուցանէր ԿՎԺի նոր նախաձեռնութիւնը.-

Նկատելով որ հարէմներէն եւ անապատի հեռաւոր խորշերէն հայուհիներու եւ որբերու ազատագրումի գործը մին է այն նուիրական պարտականութիւններէն որ կը խօսին ամէն հայու սրտին, եւ սակայն նկատելով որ տեղ տեղ կ'առարկուի թէ ատոնց ազատագրումը հարկ կ'ըլլայ յաճախ յետաձգել, այն պատճառով որ այդպիսիներու հոգատարութեան միջոցները կը պակսին, որով երբեմն նոյնիսկ ազատագրուածներ անօթի եւ մերկ կը վերադառնան իրենց մահմետական տէրերուն մօտ, Կեդր. Ժողովը որոշում կայացուցած է Հալէպի մէջ հաստատել մասնաւոր Ապաստանարան-Աշխատանոց մը ... ուր հետզհետէ պիտի ընդունուին այդ շրջանին մէջ ազատագրուած եղերաբախտ հայուհիները եւ որբերը, հոգալով անոնց բոլոր պէտքերը եւ գործ տալով միեւնոյն ժամանակ յարակից աշխատանոցին մէջ...[6]:


UNION GÉN. ARMÉN. DE BIENFAISANCE
CONSEIL LOCAL
ALEP (Syrie)


CONSEIL LOCAL
ALEP (Syrie)

Այս ուսումնասիրութեամբ լուսարձակի տակ կ'առնենք Հալէպի ՀԲԸՄ Ապաստանարան Աշխատանոցը, որ գործած է 1919-1927 շրջանին[7]:

ՀԱԼԷՊԻ ՕՐԻՈՐԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԸ

ՀՕՄի «անխոնջ ջանքերով» կազմուած Հալէպի Ապաստանարանը կը գործէր 1919 Յունիսէն. եղած էր ժամանակ երբ օտարներէ հաւաքուած մինչեւ 150 որբեր եւ աղջիկներ հոգացուեր էին հոն: Սակայն, ՀՕՄի համար հեզասահ գործ չէր ասիկա. եթէ բարոյական կորովը կար, անբաւարար էին սակայն նիւթական միջոցները: Միւս կողմէն, ԿՎԺն շահագրգռուած էր Հալէպի մէջ սեփական ապաստանարան մը ունենալով, որուն առնչութեամբ 25 Դեկտեմբեր 1919 թուակիրով Հալէպի ՀԲԸՄ Մասնաժողովին ան թելադրանքներ կը կատարէ[8]:

Կը թուի թէ նման կեդրոնի մը հաստատման առարկայական տուեալները առկայ էին, որովհետեւ կարճ ժամանակ ետք, Հալէպի Մասնաժողովի ատենապետ Արմենակ Մազլումեան՝ ԿՎԺին յղուած 8 Յունուար 1920 թուակիր նամակով, յանուն Մասնաժողովին, «ազգօգուտ» կը համարէ ձեռնարկը եւ անցնելով գործնականի կը բանակցի ՀՕՄին հետ:

Հարցական կը մնայ թէ ԿՎԺն իր ծրագրին համար ի մտի ունէ՞ր ՀՕՄի Ապաստանարանը թէ՞ ոչ: Վերջինս անծանօթ չէր ՀԲԸՄին[9], որ 20 եգիպտական ոսկիի ամսական նպաստ կը կատարէր հաստատութեան, հանդերձանք ու օճառ կը հայթայթէր, նուիրեր էր գուլպայի 9 մեքենայ, գունաւոր մանած բուրդ եւն.[10]:

Յամենայնդէպս, Հալէպի Մասնաժողովը կը թուի թէ գործնական կը գտնէ այդ հաստատութիւնը ձեռք բերելու կարելիութիւնը եւ կը լծուի «նախնական խորհրդակցութիւններ»ու՝ Ռուբէն Հերեանի[11], գնդապետ Գոլուսքարի[12], առաջնորդական փոխանորդ Յարութիւն Քինյ. Եսայեանի[13]

եւ ՀՕՄի Գործադիր Մարմնին հետ: Եթէ Հերեան եւ Գնդ. Գոլուսքար կը գնահատեն ձեռնարկին բարերար դերը եւ կը խոստանան աջակցիլ անոր յաջողութեան (Գնդ. Գոլուսքար կը խոստանայ նաեւ՝ պատսպարեալներուն տալ գաղթականներու յատկացուած սնունդի բաժինը եւ ի հարկին նիւթապէս ալ օգնել), ապա Յարութիւն քահանայ եւ ՀՕՄը հաւանութիւն կը յայտնեն ծրագրին, մանաւանդ որ «ապաստանարանի մատակարարութեան հոգէն կ'ազատուէին»: Յարութիւն քահանայ Մասնաժողովին տրամադրութեան տակ անվճար կը դնէ Ազգային Առաջնորդարանին պատկանող Ապաստանարանին շէնքը: Ասիկա կը լուծէր ծրագրին համար անհրաժեշտ տեղի եւ տարածութեան խնդիրը: Կը մնային հաստատութիւնը փոխանցելու, շէնքը նորոգելու, կանոնաւորելու, ընդարձակելու եւ ներկայանալի ձեւի վերածելու հարցերը: Պէտք էր նաեւ՝ ԿՎԺի տեսլականին համապատասխանող յաւելեալ գործառոյթ տալ ապաստանարանին:

Կարճատեւ խորհրդակցութիւններու աւարտին, համաձայնագիրը կը կնքուի 14 Յունուար 1920ին: ՀՕՄի կողմէ զայն կը ստորագրեն ատենադպրուհի Արուսեակ Մարգարեան եւ ատեպնապետուհի Ա. Նազարեան, իսկ Մասնաժողովին կողմէ՝ ատենադպիր Գ. Խանճեան եւ ատենապետ՝ Արմենակ Մազլումեան: Գրաւոր արձանագրութիւնը կը հաստատէ Յարութիւն քահանան:

Գոհունակ՝ ձեռք բերուածէն, Մասնաժողովն ու ՀՕՄը «ուրախացնելու համար պատսպարանի որբերն ու աղջիկները կաղանդի ծառ մը եւ սեղան մը» կը սարքեն, որուն ներկայ կը գտնուին Նպաստամատոյցէն Տոքթ. Լեմպըրթ, Յարութիւն Քհնյ., Հայ Ազգային Միութեան անդամներ, Հերեան, Մասնաժողովին դիւանը, ՀՕՄի անդամուհիներ եւ ուրիշներ: Այս առթիւ, պատսպարեալներուն եւ «դպրոցի որբ ուսանողներուն կաղանդի առթիւ մէյ-մէկ զոյգ գուլպայ» կը բաժնուի:

Նոր՝ հաստատութիւնը պիտի կոչուէր «ՀԲԸՄիութեան Ապաստանարան-Աշխատանոց»: Անոր մատակարարութեան եւ վարչական հոգը պիտի պատկանէր Մասնաժողովին, մինչ ՀՕՄը պիտի վարէր պատսպարեալներուն մաքրութեան, առողջութեան եւ հանդերձեղէնի գործերը[14]՝ Մասնաժողովին հսկողութեան ու պատասխանատուութեան տակ:

Ըստ ծրագրի, հաստատութեան մէջ պիտի պատսպարուէր 50 հոգի: Զայն կառավարող մարմինը պիտի ունենար ընդհանուր ներքին հսկող մը[15], օգնականուհի մը[16], դռնապան ու սպասաւոր այր մը[17], այր պաշտօնեայ մը՝ գնումներուն համար[18] եւ խոհարարուհի մը[19], իսկ առողջապահական խնդիրներուն համար՝ այցելու բժիշկ մը[20], մինչ ծանր հիւանդները պիտի ղրկուէին Հալէպի Քաղաքապետական Հիւանդանոցը: Լուացքն ու զանազան աշխատութիւնները պիտի ընէին պատսպարեալները, իսկ

տոմարներու եւ ընդհանուր վերահսկողութիւնը պիտի կատարէին Մասնաժողովին անդամներն ու քարտուղարը:

Ըստ Մասնաժողովի նախահաշիւին, իւրաքանչիւր պատսպարեալի ամսական մէկ ոսկիի ուտեստեղէնի[21] ծախս մը կը նախատեսուէր: Կը նախատեսուէր նաեւ բաղնիքի ու լուացքի համար ամսական 10 ոսկիի ծախս, նոյնքան մը՝ բժշկական խնամքի, 5 ոսկի՝ ջեռուցման ու լուսաւորութեան, եւ 3 ոսկի՝ այլեւայլ ծախսերու: Ուստի, հաստատութեան ամսական ընդհանուր ծախսը պիտի ըլլար 9000 ե.ղ.: Ասոր վրայ պիտի գար աւելնալու Աշխատանոցին համար նախնական դրամագլուխին գումարը՝ 12,000 ե.ղ., ընդհանուր գումարը վերածելով տարեկան 120,000 ե.ղ.՝ կամ 1200 ե. ոսկիի:

20 Յունուար 1920 թուակիր նամակով ԿՎԺն կը փութայ վաւերացնել ծրագիրն ու նախահաշիւը, կը թելադրէ ներքին կանոնագրի մը ուրուագծումը եւ խնամակալութեան մը կազմութիւնը, ու 5 Փետրուար թուակիրով կը վաւերացնէ կայացած համաձայնութիւնը[22]:

Գործնական քայլերու անցնելով, Մասնաժողովը պաշտօնապէս կը դիմէ Յարութիւն քահանային՝ կատարելու հարկ եղած ձեւակերպութիւնները եւ փոխանցելու շէնքը որուն, նորոգութիւններուն ծախքերը պիտի հոգար Մասնաժողովը[23]:

ՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Պէտք է ըսել, որ նախօրինակը կար Ապաստանարան-Աշխատանոցին. ՀԲԸՄիութիւնը ունէր փորձառութիւնը նման հաստատութիւններու: Արդարեւ, ան 1918 Փետրուարին Պաղտատի մէջ ունէր արդէն «Տարագրեալներու Այրիանոց-Որբանոց» մը[24], Փոր Սայիտի մէջ՝ «Այրիանոց Աշխատանոց» մը[25], ուր աւելի ետք փոխադրուեր էին Պաղտատի Այրիանոցէն հարիւրաւոր այրիներ եւ անոք աղջիկներ, նաեւ՝ Դամասկոսի «Հայուհեաց-Ապաստանարան»ը, ուր ապաստանած էին 120 այրիներ եւ աղջիկներ[26]: Անդին՝ Ատանայի մէջ, 5 Յունիս 1919ին հաստատուած էր գործատուն մը, որ կը ծառայէր իբրեւ աշխատանոց անոք եւ կարօտ այրիներու[27]: Յատկանշական է որ ապաստանարան-աշխատանոցին անհրաժեշտութիւնն ու օգտաշատութիւնը նկատի առնելով, ԳՎԺն աւելի ետք նման աշխատանոց պիտի հիմնէր Սելանիկի մէջ[28]: Աւելի ետք, երբ 1925ի սկիզբին Նիր Իսթ Րիլիֆը կրճատեց իր գործունէութիւնը, ՀԲԸՄը դուրս մնացած որբանոցա-յիներէն ամէնէն անոքներուն (որոնք տակաւին ինքնաբաւ վիճակի մը չէին հասած) համար երկու ձեռնարկներ հաստատեց Պէյրութի եւ Հալէպի մէջ, որոնք կոչուեցան «Ինքնօգնութեան Կայաններ» [29]:

Կային եւ այլապատկան նման հաստատութիւններ, ինչպէս՝ 1919ին Համայի մէջ անգլիացիներու հաստատած «Որբանոց-Այրիանոց»ը[30]:

ՀԲԸՄը ունէր նաեւ որբանոց-արհեստանոցներու ցանց մը, ինչպէս Հալէպի Արհեստանոց-Որբանոցը, որուն բացումը կը կատարուի Սեպտեմբեր 1921ին, ուր առաջին հերթին կ'ընդունուին 100 որբեր[31]: 1922ին Արհեստանոցի կարգադրութիւններ կը կատարուին նաեւ Երուսաղէմի որբանոցին համար[32]: Մտածում կը յառաջանայ նաեւ Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1922ին Պոլիս փոխադրել շուրջ 275 չափահաս որբուհիներ եւ հոն եւս հաստատել արհեստանոց մը[33]:

ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԻՆ ՆՊԱՏԱԿԸ

Զարմանալի պիտի ըլլար, մտածել սակայն, թէ ԿՎԺն փափաքէր յաւելեալ նիւթաբարոյական պարտաւորութիւններ ստանձնել ապաստանարանային աշխատանքի մը համար, որ արդէն կը տարուէր եւ որուն - ինչպէս տեսանք - ան նիւթապէս կը սատարէր: Առնուազն երկու դրդապատճառ կրնար ունենալ ԿՎԺն՝ ստանձնելու համար Ապաստանարանը. 1՝ Ան պիտի ուզէր Ապաստանարանին առաքելութեան ծիրը ընդարձակել՝ բարեփոխելով անոր գոյութեան նպատակները եւ գործառոյթը, 2՝ իր տնօրինած գաղթականական տեղայնական հաստատութիւններուն համակարգին պակսող օղակը գոյացնել:

Իրողապէս, ԿՎԺն կը ծրագրէր ՀՕՄի ապաստանարանը ձեռք բերելով անոր գործնական այլ գործառոյթ մը եւս տալ. Ապաստանարանը պիտի դառնար «*հանգրուան մը՝ հաւաքուած որբերուն եւ անտիրական կիներու եւ աղջիկներու, որ ափեն մը հոն մնալէ յետոյ, մաքրուած, առողջացած ու կազդուրուած, աստիճանաբար պիտի ղրկուէին իրենց վայրերը, անոք չափահասները՝ Միութեան որբանոցները, ազգական ունեցող մեծերը՝ իրենց պարագաներուն, իսկ բոլորովին անտէրերը՝ Աշխատանոցի բաժնին մէջ իրենց յարմար գործով մը պիտի զբաղուէին*»[34], նորեր պիտի գային մեկնողներուն տեղ եւ ամոքումի ու կազդուրումի անիւը պիտի արագ դառնար՝ նորեր փրկելու եւ զանոնք հայ հաւաքականութեան վերամուծելու:

Այլ խօսքով, արհեստանոցը նաեւ նպատակ պիտի հետապնդէր «հաստատութեան մէջ ընդունիլ ազատագրուած հայուհիներու որբերը... [անոնցմէ] անտիրական կիներու եւ աղջիկներու գործ հայթայթել Աշխատանոցին մէջ»: Ըստ ծրագրի այդ 'գործեր'ը պիտի ըլլային բուրդ մանել, գուլպայ հիւսել, ասեղնագործութիւն, ձեռագործ ու կար: Այս աշխատանքներուն համար Ապաստանարանը ունէր 1 կարի մեքենայ, 9 գուլպայի մեքենայ, 6 նստարան, 3 մեծ ու փոքր սեղան[35]:

ՅԱՆՁԱՆՁՈՒՄ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Ինչպէս տեսանք, Յունուար 1920ին, Մասնաժողովը ՀՕՄի հետ համաձայնութեան գալով յանձն կ'առնէ Ապաստանարանի մատակարարման գործը, մինչ ՀՕՄին կը թողու հաստատութեան բարոյականին եւ Աշխատանոցին բաժինը[36]: Փետրուար 1920էն

հաստատութիւնը կը դառնայ ՀԲԸՄիութեան սեփական հաստատութիւններէն մին:

Նոր կացութեամբ ՀԲԸՄը հաստատութեան տարեկան վարկ կը վաւերացնէ՝ 1200 եգիպտական ոսկի, որուն վրայ պիտի գար աւելնալու Ֆրանսական Ներգաղթի Տնօրէնութեան կողմէ «Հոգետան մէջ պատրաստուած ապուր»ը[37], առաւել՝ ՀՕՄի միջոցաւ Ամերիկայի Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցին կողմէ պատսպարեալներու թիւին համեմատ տրուած հացագինը[38]: Պատսպարեալները շաբաթական երեք անգամ մսեղէն սնունդ եւ «առատ հաց» կը ստանային: Կենցաղային կարիքներուն համար Ապաստարանը ունէր ՀՕՄի, ՀԲԸՄիութեան, Ամերիկեան Կարմիր Խաչի եւ Հալէպի Առաջնորդարանին հայթայթումներով յառաջացած իրեր[39]:

14 Մարտին կը տեղեկագրուի Ապաստանարանին համար յառաջացուած խնամակալութեան մասին. Մասնաժողովը՝ յանձինս Գ. Խանճեանի, Տոքթ. Յովհաննէս Գլըճեանի եւ Մանուկ Սահակեանի ներկայ էր անոր մէջ, մինչ ՀՕՄը՝ Աղաւնի Նազարեանի եւ Րոզա Պայրամեանի:

Յանձնաձումը կ'ըլլայ սահուն, մանաւանդ որ մասնակի էր ան: Սակայն, կամքէ անկախ պատճառներ կը դժուարացնեն եւ կը դանդաղեցնեն հաստատութեան նոր ընթացքը. Տէր Զօրի եւ այլ վայրերու քաղաքական պայմաններու վատթարացումով որբահաւաքութեան գործը միաոժամանակ կը կասի, երթեւեկութեան եւ հաղորդակցութեան խզումներ կը յառաջանան, անկարելի կը դառնայ հումքի ստացումը: Արհեստանոցը կը բանի իր նուազագոյն կարողութեամբ. ապաստանեալները եղած բուրդը մանելով եւ իրենց անձնական կարերը ընելով կը զբաղին[40]: Մինչեւ 10 Հոկտեմբեր 1920՝ չեն հասնիր նաեւ ԿՎԺի խոստացած պատսպարեալներուն հագուստեղէնն ու կօշկեղէնը՝ երթեւեկութեանց ընդհատումին պատճառով[41]: Ապաստանարանը կ'արձանագրէ վերիվայրումներ. Դեկտեմբեր 1920ին անկէ փախուստ կու տան 3 հոգի, ինչ որ լուսարձակի տակ կը դնէ հսկողութեան խնդիրը:

ԿՎԺն կ'երկմտի շարունակել ստանձնել յանձնառութիւնը. 9 Նոյեմբեր 1920 թուակիրով ան կը յայտնէ Մասնաժողովին թէ ներկայ պայմաններու մէջ մտադիր չէ շարունակել, բացատրելով թէ եղած զոհողութիւնը համապատասխան արդիւնք չի տար, գործը շեղած է իր նախնական բուն առաջադրութենէն, բայց կարելի կը գտնէ միաոժամանակ վարկաւորել զայն:

ԿՎԺն գոհ չէր Ապաստանարանին վարչակառավարումէն. պայմաններն ալ չէին օգներ որ լիարժէք գործէր ան իր առաքելութեամբ: ԿՎԺին պատկերացումով, Ապաստանարանը դարձող անիւ մը պէտք էր ըլլար, ուր Եղեռնէն հարուածուածներ գային ամոքուելու եւ վերագտնելով իրենց կազդոյրը հեռանային՝ տեղ բանալով իրենցմէ աւելի կարիքաւորներուն:

Անդին, Հալէպի մասնաժողովը լաւապէս կը տեսնէր գործին ծանրութիւնը, կարեւորութիւնը եւ այն վարկը զոր Ապաստանարանը կ'ապահովէր Միութեան, առանց նիւթական ծանր յանձնառութեան: Ան հիմնական անյաջողութիւնները վերագրելով կացութեան, Մասնաժողովին Բ. ատենապետ Ռուբէն Էզաճեանի ստորագրութեամբ[42], 1920 Դեկտեմբերի նամակով դիտել կու տար ԿՎԺին, որ Նպաստամատոյցի, Առաջնորդապատկան շէնքի վարձք չտալու եւ այլ կողմնակի օգնութիւններէ ետք Ապաստանարան-Աշխատանոցը ընդամէնը տարեկան 500-600 ոսկիի ծախք մը կ'ըլլար ՀԲԸՄին՝ 1200 ոսկիի նախահաշիւին փոխարէն: Իսկ Ապաստանարանին կատարած բարերար դերը եւ մատուցած բարոյական վարկը՝ մեծ էին ՀԲԸՄի համար:

Մասնաժողովին եւ ԿՎԺին միջեւ կը թուի յառաջանալ լուր համախոհութիւն մը, որով վերջինս կը շարունակէ ՀԲԸՄի սեփականութիւն նկատել Ապաստանարանը, իսկ Մասնաժողովը նկատի կ'ունենայ որ «պատսպարեալները երկար ատեն» չմնան հաստատութեան մէջ «եւ միշտ աւելի կարօտ[եալ]ները եւ նորերը յաջորդեն հիներուն», թերեւս նաեւ՝ աւելի մօտէն հետեւի Ապաստանարանին խնդիրներուն:

Պէտք է ըսել, սակայն, որ Մասնաժողովը ծանր պարտականութեանց տակ էր՝ եթէ նկատի առնենք որ Հալէպի մէջ ՀԲԸՄի սեփականութիւնն էին զանազան հանրային հաստատութիւններ, որոնց բոլորին անմիջական յանձնառութիւնը կ'իյնար տեղի Մասնաժողովի անդամներուն վրայ: Անդամներուն թիւը ըստ երեւոյթին մեծ չէր եւ ատոր համար ալ ԿՎԺն աւելի քան անգամ մը թելադրական կ'ըլլար որ Մասնաժողովը պարտի անդամարշաւի ձեռնարկել՝ Հալէպի մէջ:

Յուլիսին, ֆրանսական բանակին Տէր Զօր մտնելու առիթէն օգտուելով հայ կառապաններու հետ Հալէպ կը հասնին 39 կիներ եւ փոքրիկներ, որոնցմէ բոլորովին անպաշտպան եղող 20 աղջիկներ եւ տղաք կ'ընդունուին Միութեան Ապաստանարանը[43]: Այսպիսով կը վերաշխուժանայ Ապաստանարանը. 9 Սեպտեմբեր 1921 թուակիր նամակով, ԿՎԺն գոհունակութիւն կը յայտնէ որ «հաստատութիւնը հետզհետէ ստանալու վրայ է բաղձացուած կանոնաւորութիւնը»:

Այնուհետեւ, սակայն, եւ մինչեւ փակումը, Ապաստանարանը կը գործէ ոչ-աշխուժ կշռոյթով[44]: Իսկ *Միութիւն*ը անհամեմատօրէն քիչ կ'անդրադառնայ Ապաստանարանին: Կարծէք վերջինիս առաքելութեան 'ոսկեդարը' եղած ըլլար 1920-21 շրջանը:

ԱՊԱՍՏԱՆԵԱԼՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ ԵՒ ԲՆՈՒԹԱԳԻՐ[45]

Ապաստանեալներու թիւ.- ՀՕՄի շրջանին Ապաստանարանը հոգացած էր մինչեւ 150 որբեր ու աղջիկներ: ՀԲԸՄ տնօրինութեան անցնելէ ետք եւ մինչեւ 30 Յունիս 1920, Ապաստարան կ'ընդունուի 58 հոգի, որոնց «մեծամասնութիւնը թուրքերու քովէ հաւաքուած հայուհիներ, որբեր եւ

օտարներու քով իբրեւ գերի ծառայածներ էին: Ասոնցմէ 12 հոգի իրենց ազգականներուն քով եւ 8 հոգի հայ ընտանիքներու քով իբրեւ սպասուհի կը տեղաւորուին, 1 նորածին՝ որբանոցը, իսկ 3 այլ «թրքածնունդ նորածիններ» կը մահանան, ու 30 Հոկտեմբեր 1920ի դրութեամբ Ապաստանարանին մէջ կը մնան 34 հոգի: Այնուհետեւ *Միութիւն*ը պարբերաբար՝ կը հրատարակէ ապաստանեալներուն անուանացանկը, որ կը հասնի 161ի[46]:

Ապաստանեալներու ծննդավայր.- 161 ապաստանեալներէն 11ը՝ ծնած էին Այնթապ[47], 10ը՝ Սեբաստիա, 9ական՝ Խարբերդ, Ուրֆա, 8ական՝ Կիւրին, Պրուսա, 7ը՝ Քղի, 6ական՝ Կարին-Էրզրում, Կեսարիա, 5ական՝ Հալէպ, Պերեճիկ, Տէր Զօր, 4ական՝ Աշոտ, Ատափազար, Սեւերէկ, 3ական՝ Իզմիթ, Մարաշ, Տիգրանակերտ, Քեմախ, 2ական՝ Ամասիա, Կէյվէ, Հասան Պէյլի, Սվազ, Տարենտէ, Քիլիս, 1ական՝ Ակն, Անկիւրի, Ատանա, Ատիաման, Արաբկիր, Բաղէշ, Գանկալ, Քեսապ, Գնճըլար, Եալովա, Եոզկատ, Էսքիշեհիր, Էւերէկ, Կէօքսիւն, Մարզուան, Մաարա, Մերտին, Մուսուլ, Նիյտէ, Չմշկածագ, Պալըքեսիր, Պարտիզակ, Պեհեսնի, Պոլիս, Սամսոն, Սիւրիհիսար, Վան, Տէօրթ Եոլ: 5 հոգի չէր գիտեր իր ծննդավայրը:

Ապաստանարանէն առաջ գտնուած վայր.- Ապաստանարանի բնակիչները փրկուած-հասած-ապաւինած-բերուած-ղրկուած էին զանազան տեղերէ, ինչպէս՝ Այնթապ (5), Ատանա (3), Ենի Եափան, Եունիէ (1), Թէլ Աֆար (1), Իսկենտէրուն (2), Իտլիպ (1), Հալէպ եւ անմիջական շրջակայք (44), Համա եւ շրջակայք (5 հոգի), Շորաքլը (1), Մերտին (1), Մումպուճ (2), Մուսուլ (1), Նիսիպին (3), Ուրֆա/Սուրուճ (6), Պաղտատ (4), Պերեճիկ (2), Պէյրութ (2), Պոլիս (2), Պրուսա (1), Սեւերէկ (3), Տէր Զօր (20), Տէօրթ Եոլ (2), Րաս Ուլ Այն (1), Րաքքա (1), Քիլիս (5), Քուպպէ Խան (1): Ասոնք եկած էին որբանոցներէ, հայ եւ արաբ քրսիտինեայ տուներէ (ուր աղախին էին), հանրատուներէ (շուրջ 10 պարագայ), թուրք ընտանիքներէ, թուրք-քիւրտ-իսլամ արաբ ամուսիններէ: Անոնցմէ ոմանք փախուստ տուած ու թաքնուած էին Ապաստանարան, ուրիշներ՝ յանձնարարուած էին, կային որ առաջնորդարանէն ղրկուած էին, նաեւ՝ ոստիկանատունէն եւն.:

Ընտանեկան պարագաներ.- Ապաստանեալներէն առնուազն 34 հոգին ամուսնացած էր թուրքի, քիւրտի կամ իսլամ արաբի հետ. ոմանք յղի վիճակով կը հասնին ապաստանարան, ուրիշներ՝ զաւակով, ուրիշներ՝ իրենց զաւակը լքած: Ասոնցմէ ոմանց եկրորդ ամուսնութիւնն էր օտար ամուսնութիւնը:

Անուանափոխութիւն.- Ապաստանարան հանգրուանածներէն առնուազն 58ը թրքացուած անուններով ժամանած էր հաստատութիւն: Ասիկա կը խօսի ցուցական ինքնութեան պարտադիր փոփոխութեան մասին:

Առողջապահութիւն[48].- Փետրուար 1920-Օգոստոս 1921 ժամանակահատուածի ընթացքին կ'արձանագրուի առողջական 197

պարագայ, հետեւեալ մանրամասնութեամբ.- Մալարիա/ստամոքսի ցաւ՝ 53[49], ջերմ՝ 20, տկարութիւն՝ 19, աչքի ցաւ/հիւանդութիւն՝ 9, վէրք՝ 8, 7ական՝ պրոնշիթ, փորհարութիւն, 6ական՝ ֆրանկախտ, մորթի հիւանդութիւն, այլեւայլ՝ 5, 4ական՝ ծննդաբերութիւն, թեթեւ պարագաներ, երիկամունքի հիւանդութիւն, յօդացաւ, 3ական՝ բորոտութիւն, րոմաթիզմ, կասթրիթ, ականջի ցաւ/հիւանդութիւն, ինֆլուենզա, 2ական՝ արգանդի բորբոքում, հարբուխ, ջղային, սրտի տկարութիւն, իլգիի ցաւ, 1ական՝ անթեսիթ, ոտքի վէրք, որթի հիւանդութիւն, ստինգի բորբոքում, իջուածք, colique nephretique, կուրծքի իջուածք, ձեռքի վիրաւոր, րուժիոլ, ամիտալիթիս, կոկորդի ցաւ, էմփեթիքօ:

ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԻՆ ՆԻՒԹԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Փետրուար 1920ին Ապաստանարանին համար եղած 7763,5 ղրուշ ընդհանուր ծախսին 2489,5ը յատկացուած էր հացի գնման, իսկ սնունդի ընդհանուր ծախսը եղած էր 4854,5 ղրուշ: Իբրեւ նախաճաշ, պատսպարեալները կ'ունենային «միշտ թէյ եւ հաց, երբեմն՝ հելվա եւ հաց: Ցերեկները՝ Ֆրանս. Ներգաղթի Վարչութենէն տրուած ապուրը եւ հաց: Իսկ երեկոները միշտ տաք կերակուր, շաբաթը 2-3 անգամ մսեղէն» եւ «առատ հաց»[50]: Հացի ծախսը, ամսական դրութեամբ, կը հոգացուէր Ամերիկեան Նպաստամատոյցին կողմէ, Լեմպըրթի միջոցով եւ յոյս կար որ «այս կարեւոր նպաստը տեւական պիտի ըլլայ»[51], մանաւանդ որ այդպիսի խոստում ստացուած էր:

Յուլիս 1921էն սկսեալ տեղաբնիկ հալէպահայ թէ գաղթական հայեր նուիրատուութիւններ կը կատարեն Ապաստանարան-Աշխատանոցին. ըստ երեւոյթին Մասնաժողովը յաջողեր էր ժողովուրդին ուշադրութիւնը Ապաստանարանին վրայ թեքել[52]: Ուշագրաւ է որ 1927ին պատսպարանին համար ՀԲԸՄը ծախսած էր 163 Ե.Ո.[53]:

ԱՇԽԱՏԱՆՈՑԸ (ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՁԵՌԱԳՈՐԾ)

Հաստատութեան գոյառումին երկրորդ գլխաւոր նպատակ հանդիսացած աշխատանոցը Փետրուար 1920ին կը սկսի գործել սահմանափակ հնարաւորութիւններով՝ հումքի ստացումին ուշացման պատճառով: Մասնաժողովը ներկայ անորոշ ու շփոթ ժամանակը նկատի առնելով աւելի յարմար կը նկատէ բաժինին ընդարձակման յետաձգումը, սպասելով ապահովութեան բարելաւումին:

Մարտին՝ կացութիւնը կը մնայ դժուար, քանի որ հաղորդակցութեանց անկարելիութեան պատճառով որբերէն միքանին կարելի չ'ըլլար Միութեան որբանոց, իսկ պատսպարեալներէն ուրիշներ՝ պատշաճ տեղեր ղրկել: Իսկ Աշխատանոցը - անապահովութեան բերումով - կը մնայ իր նախկին վիճակով. կիները բուրդ մանելով ու գուլպայ հիւսելով կը զբաղին:

Աշխատանոցի գործագործական բաժինը կը սկսի աշխուժանալ Դեկտեմբեր 1920էն. այդ թուականին սկսուած 2 գործեր արդէն աւարտած էին 20 Փետրուար 1921ին[54]: Մարտի կէսերուն 4 գործագործ աղջիկներուն թիւը կը բարձրանայ 5ի, իսկ աշակերտներունը՝ 6ի: Ապրիլի սկիզբը վարպետ գործագործներուն թիւը կը բարձրանայ 8ի, մինչ գործի երկու տեզկեահները կ'ըլլան երեք, իսկ Օգոստոսին՝ չորս: Իրագործում կը նկատուի Յուլիսին աշխատանոցին մէջ գործուած «եաստըք գործ»ը, որուն վարձատրութիւնը աւելի սուղ էր՝ 100 հանգոյցը՝ 7 փարա:

Աշխատանոցի միւս բաժինը զբաղ էր ձեռագործով: Գործագործութեան անտեղեակ 8-10 աղջիկներ Ապրիլ 1921ին կանոնաւորութեամբ ընթացող ձեռագործի բաժնին մէջ Այնթապի գործ, օյա, քրոշէ շապիկ եւ վարտիք, պրոտէ շապիկ եւ վարտիք եւ րեշուլիէ շապիկ եւ վարտիք, ասեղնագործ շապիկ, ճապկոն, թէլքաշ թաշկինակ կ'աշխատէին[55]:

Ձեռագործներէն մաս մը դուրսէն բերուած եւ վարձքով կ'աշխատուէին, մինչ մնացածը՝ ՀՕՄի դրամագլուխով էր: Երկու աշխատանոցներ մէջ աշխատող վտիտ ձեռքերը անձամբ կը վարձատրուէին իրենց աշխատանքին համար: Հասոյթին մնացեալը կ'երթար ՀՕՄին, որ յանձն կ'առնէ ստանձնել պատսպարեալներու առաւօտեան նախաճաշի ծախսերը՝ 15 Մայիս 1921էն[56]: Մինչ Մասնաժողովը կը մտադրէ գործագործութեան գործը բոլորովին իր վրայ առնել, քանի որ գործագործները լաւ վարժուած էին եւ մաքուր ապրանք կը գործէին:

Ձեռագործութիւն կամ գործագործութիւն չգիտցողները կը մղուէին բուրդ մանելու գործին: Ապաստանարանին մնացեալ միքանին դպրոց կ'երթային, ոմանք անկարող, հիւանդոտ, կոյր կամ ծծմայրեր ըլլալնուն գրեթէ չէին մասնակցեր աշխատանքներուն:

ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԻՆ ՏԵԽՈՂՈՒԹԻՒՆԸ

Զարմանալիօրէն, *Միութիւն*ը առանձին գրութիւն չի հրատարակեր Ապաստանարան-Աշխատանոցին մասին, մանաւանդ 1922էն սկսեալ: Այդուհանդերձ, իր պարբերական, պաշտօնական հաշուետուութեանց մէջ յաճախ կ'երեւի ան: Այսպէս, 1923ին, Հ.Բ.Ը.Միութեան 12 հաստատութիւններ հաշուող ցանկին մէջ կը յիշուի ան՝ «Ապաստանարան-աշխատանոց, Հալէպ, աղէտեալ կիներու եւ աղջիկներու յատուկ, 50 պատսպարեալներ» բացատրութեամբ[57]: Միութեան 1923ի տարեկան տեղեկագրին մէջ նոյնպէս կը նշուի ան, ուր՝ «անապատներէ եւ օտար տուներէ հաւաքուած 70ի չափ անտիրական աղջիկներ կը պատսպարուին եւ միեւնոյն ժամանակ կը զբաղին ձեռագործով, գործագործութեամբ եւ շալագործութեամբ, Հայ Օրիորդաց Միութեան հսկողութեան եւ հոգատարութեան ներքեւ»[58]: 1924ի ամբողջ տեւողութեան կը շարունակէ գործել Ապաստանարան-Աշխատանոցը[59]: Ապաստանարան-Աշխատանոցին կ'անդրադառնայ *Սուրիահայ Տարեցոյց*ը 1925ին, նշելով

որ ան ունէր 50 պատսպարեալներ[60]: Անոր գործունէութիւնը կը շարունակուի 1926ի ամբողջ տեւողութեան իբրեւ՝ Հալէպի «Կանանց Պատսպ.-Աշխատանոց»[61]:

Կը թուի թէ 1925ին, ԿՎԺՆ վերատեսութեան կ'ենթարկէ իր նպաստաբաշխումի քաղաքականութիւնը, տարիքի բերմամբ կ'արձակէ կարեւոր թիւով որբանոցայիններ[62], կը միաւորէ շարք մը որբանոցներ՝ տեղէ տեղ մէկտեղելով, հուսկ՝ մնացեալները կը խտացնէ Պէյրութի Քելէկեան որբանոցին մէջ[63]: Որբանոցներու այս միատեղումի քաղաքականութեան այլ դրսեւորումը կ'ըլլայ ՀԲԸՄ նպաստաբաշխ տարաբնոյթ հաստատութիւններու միացումը: Այսպէս, 1926ին ՀԲԸՄ Հալէպի «Ապուրի Ձեռնարկ»ը կը տեղափոխուի Կանանց Պատսպարան-Աշխատանոց, որով «հարիւրաւոր անօգնական գաղթականներ օրական ձրի ճաշ մը կը ստանան»[64]:

1927 տարեշրջանին, նոր աշխուժութիւն մը կ'արձանագրուի Ապաստանարանին մէջ, երբ 35 պատսպարեալներուն վրայ կ'աւելնան 46 նորեկներ, սակայն նոյնքան մըն ալ կը մեկնին եւ ընդհանուր թիւը կը մնայ անփոփոխ: 1927ին կը շարունակէ գործել աշխատանոցը, ուր «հայուհիները կը զբաղին ձեռագործով, գորգաշինութեամբ եւ կարով, օրավարձքի փոխարէն»:

Շատ հաւանաբար, Հալէպի Ապաստանարան-Աշխատանոցը կը դադրի 1928ին: 1929ի «Հ.Բ.Ը.Միութեան Հիմնարկութիւնները» վերնագրեալ տեղեկատուութեան մէջ չի յիշատակուիր այլեւս Հալէպի Ապաստանարան-Արհեստանոցը: Չի յիշատակուիր նաեւ Դամասկոսինը[65]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հալէպի ՀԲԸՄ Ապաստանարան-Արհեստանոցը դրսեւորումն էր հայ ժողովուրդի Ցեղասպանութեան աղէտը դիմագրաւելու, ամոքելու եւ յաղթահարելու միտող ՀԲԸՄի յառաջացուցած փրկարար ճիգերուն: Այդ ճիգերուն մէկ մասը ունէր հաստատութենական համակարգի բնոյթ: ՀԲԸՄ Հալէպի Ապաստանարան-Արհեստանոցը կը հանդիսանայ ընդհանրապէս հայութեան եւ ի մասնաւորի ՀԲԸՄի ճիգի դրսեւորում մը՝ ի պատասխան Հայոց Ցեղասպանութեամբ յառաջացած մարդկային մեծ տագնապին:

Ապաստանարան-Արհեստանոցը մէկ հանգրուանն ու դրսեւորումը եղաւ որբահաւաքի եւ այրիներու ազատագրումի այս աշխատանքին: Աշխատանք, որ շարունակուեցաւ 1920ականներուն եւ 1930ականներուն:

Հաստատութեան կենսագործունէութիւնը դրսեւորումն է համադրական ջանքերու, ուր կը մէկտեղուին մասնակի կարելիութիւնները հայկական միութենական (ՀՕՄ, ՀԲԸՄ, Հալէպի Առաջնորդարան), անհատական (Ռուբէն Հերեան եւն.), օտար բարեսիրական (Նպաստամատոյց, Կարմիր Խաչ) թէ պետական աջակցութիւնները (ֆրանսական, ամերիկեան, բրիտանական): Իրենց ճիգին մէջ՝ պատկան մարմինները յաջողեցան

զօրաշարժի ենթարկելով ոչ միայն ապահովել աջակցութիւնը հեռակայ վայրերու մէջ ապահով ապրող գաղթահայութեան, այլեւ ընդգրկել Արեւմտահայ անմիջական շրջապատը:

Հաստատութիւնը ունեցաւ մասնակի արդիւնք, նկատի առնելով յառաջադրանքին խոշորութիւնը եւ կարելիութիւններուն սահմանափակութիւնը: Ան չմնաց տագնապին հետեւանքներուն միայն անմիջական լուծումներ գտնելու յառաջադրանքին մէջ, այլ ձգտեցաւ աւելիին՝ արհեստներ ուսուցանելով՝ այդ խլեակները կեանքին եւ ընկերութեան վերահամարկելու:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Լեւոն Չորմիսեան, *Համապատկեր Արեւմտահայ Մէկ Դարու Պատմութեան, Գ. Հտր. 1908-1922*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1975, էջ 527:

[2] «*Անապատի որբերուն եւ հարէմներու հայուհիներուն ազատագրումի գործին եւ Հ.Բ.Ը.Միութեան Հալէպի Ապաստարան-Աշխատանոցին համար երախտագիտութեամբ պիտի ընդունուին կամաւոր նուիրատուութիւններ: «Ազատագրումի Հիմնադրամ»ին մասնակցողներէն կը խնդրուի դիմել Կեդր. Ժողովին կամ Տեղ. Մասնաժողովներուն*» (*Միութիւն, Պաշտօնաթերթ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գահիրէ (Եգիպտոս)*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1919, էջ 89):

[3] Էդուարդ Մելքոնեան, *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատմութիւն*, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան, Մուղնի Հրատ., 2005, էջ 99-100:

[4] Չորմիսեան, էջ 527:

[5] *Միութիւն*, Յունուար-Փետրուար 1919, էջ 6:

[6] «Անապատի Որբերը Եւ Հարէմներու Հայուհիները», *Միութիւն*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1919, էջ 88. նաեւ՝ էջ 84:

[7] Այս ուսումնասիրութեան համար օգտուած ենք ՀԲԸՄ Գահիրէի արխիւին մէջ պահուող Հալէպի Ապաստանարան-Աշխատանոցին վերաբերող թղթապանակէն: Դժբախտաբար ան պակասաւոր է եւ կ'ընդգրկէ միայն 8 Յունուար 1920-7 Սեպտեմբեր 1921 ժամանակահատուածի գրաւոր նամակագրութիւնը՝ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովին ու Հալէպի Մասնաժողովի վարչութեան միջեւ: Օգտուած ենք թղթապանակին մէջ պահ դրուած ամսական նիւթական եւ առողջապահական տեղեկագրերէն: Քննած եւ օգտուած ենք ՀԲԸՄ ատենի պաշտօնաթերթ *Միութիւն*ի 1919-1930 շրջանի թիւերէն, *Գործապատում [Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գործապատումը (Պատկերազարդ Վիճակագոյց)*, Գահիրէ, Տպ. ՀԲԸՄիութեան, 1919] եւ Մելքոնեանի վերոնշեալ հատորէն:

[8] ՀԲԸՄ Հալէպի մասնաճիւղը հիմնուած է 1910ին, իր կնիքին թիւն էր 17:

[9] ՀԲԸՄիութեան գործունէութիւնը ներկայացնող *Գործապատում* գրքոյկը էջ 60ի վրայ զետեղած է «Հալէպի Հայ Օրիորդաց Միութեան Ապաստանարանը» բացատրագիրով խմբանկար մը, ուր աւելցուած է թէ անոր «Հ.Բ.Ը.Միութիւնը կ'օժանդակէ»: Մինչ *Միութիւն*ի Մայիս-Յունիս 1919ի թիւին մէջ ան նշուած է իբրեւ

«ՀԲԸՄ սեփական հաստատութիւններ»էն մին («Հ.Բ.Ը.Միութեան Սեփական Հաստատութիւնները», *Միութիւն*, Մայիս-Յունիս 1919, էջ 35):

[10] «Հ.Բ.Ը.Միութիւնը Երկրին Մէջ», *Միութիւն*, Յունուար-Փետրուար 1920, էջ 9: «Հ.Բ.Ը.Միութեան Դրամական Նպաստները 14 Ամսուան Միջոցին (Սեպտեմբեր 1918-Հոկտեմբեր 1919)» վերնագրին տակ համառօտ հաշուետուութեամբ մը կը պարզուի որ 50466 Եգ. Ոսկիի հասնող ընդհանուր ելքերուն մէջ 250 Եգ. Ոսկի տրամադրուած է «Հարէմներէն որբ, աղջիկ եւ կին ազատագրելու համար» (*Միութիւն*, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1919, էջ 68):

[11] Ռուբէն Հերեան կը համադրէր իր որբահաւաքի գործը Ապաստանարանին հետ, որուն խնդրով խորհրդականն էր Մասնաժողովին:

[12] Ամերիկայի Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի ներկայացուցիչ(՞):

[13] Յարութիւն Ա. Քինյ. Եսայեան Հալէպի Առաջն. փոխանորդ՝ 1913-22: Միջանկեալ՝ 1916-18 տարիներուն բանտարկուած է Հալէպի մէջ (Վարդան Եպիսկ. Տէմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց, Ա. Հպր.*, Անթիլիաս, 1980, էջ 293, 302):

[14] Մաքրութիւնը պիտի ունենար պարբերական բնոյթ՝ ամէն ութ օրը անգամ մը՝ ճերմակեղէնի լուացք եւ մաքրութիւն:

[15] Ամսական 350 ե.ղ. վճարումով: Փետրուար ամսուն իսկ արդէն կը պաշտօնակոչուի տեսչուհի մը՝ Կատարինէ Սեֆէրեան, 2,5 օսմ. ոսկի ամսականով:

[16] Ամսական 150 ե.ղ. վճարումով: Փետրուար ամսուն իսկ արդէն կը պաշտօնակոչուի Սեֆէրեանի քոյրը՝ կէս օսմ. ոսկի ամսականով: Տեսչուհին եւ օգնականուհին կը ճաշեն պատսպարեալներուն հետ եւ «միշտ ներսը կը մնան»:

[17] Ամսական 250 ե.ղ. վճարումով:

[18] Ամսական 250 ե.ղ. վճարումով:

[19] Ամսական 200 ե.ղ. վճարումով: Խոհարարուհի, սակայն, Փետրուար ամսուան համար չէ պաշտօնակոչուած մէկը, ուստի «պատսպարեալներէն մին ստանձնած է այդ գործը»:

[20] Բժշկական խնամքը կը կատարէ Տքթ. Յ. Գլըճեան, որ աւելի ետք, Մայիս 1920ին, եռամսեայ իր այցելութիւններուն համար կը կատարէ որոշ գանձում մը: Գլըճեան կը շարունակէ Ապաստանարանին բժշկական վերահսկումը մինչեւ Դեկտեմբեր 1920, այնուհետեւ՝ Տքթ. Երուանդ Խրլոբեան:

[21] Ասիկա պիտի ընդգրկէր «սովորական ստացուած ապուրէն զատ կերակուրի ծախքը»:

[22] Յունուար-Փետրուար 1920ին, 1000 Եգ.Ո. կը ղրկուի Հալէպ՝ Միութեան Ապաստանարանին եւ այլ նպատակներու (*Միութիւն*, Յունուար-Փետրուար 1920, էջ 4):

[23] Որ կ'արժէ 1637 Եգ. Ղ.:

[24] *Միութիւն*, Յունուար-Փետրուար 1918, էջ 9:

[25] Ուր պատսպարուած էին շուրջ 400 հոգի՝ իրենց երկսեռ փոքրիկներով. յետագային, այս թիւը կը նուազի շուրջ 90ի: Այրիանոցը վրանաշարք մըն էր, տեղաւորուած որբանոցին առընթեր, զատ շրջափակով, սեփական աշխատանոցով (հսկիչ՝ Ատեմ[իս] Սանտալճեան), ուր վճարումով կ'աշխատէին, հաւաքատեղիով՝ ընդարձակ վրանի մը մէջ. ունէր քահանայ (Յակոբ Քինյ. Մավեան), խմբապետուհի, վերակացու (Ներսիկ Սեֆէրեան) ոստիկան,

պահակներ եւ յատուկ պաշտօնէութիւն (որ կը հոգար անոնց պէտքերը եւ կը հսկէր առողջութեան, աշխատութեանց եւ բարոյականին) (*Միութիւն*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1918, էջ 90. նաեւ, նոյն՝ Յունուար-Փետրուար 1919, էջ 12. նաեւ՝ «Հ.Բ.Ը.Միութեան Բօր-Սայիտի Գաղթավայրի Հաստատութիւնները», *Գործապատում*, էջ 53, 16. նաեւ՝ «Այրիանոց-Աշխատանոց», *Յուշարար*, Յունուար-Փետրուար 1919, էջ 12):

[26] *Միութիւն*, Մայիս-Յունիս 1919, էջ 35. նաեւ՝ *Գործապատում*, էջ 16:

[27] Մերմերլի Թաղ հաստատուած այս գործատունը ունէր երկու սրահ եւ վեց սենեակ, ուր կը գործէին գուլպայի եւ գորգի արհեստանոցները: Գուլպայի արհեստանոցը կ'աշխատէին 12, իսկ գորգի 20 տեզկեահներուն վրայ՝ 40-50 այրիներ («Հ.Բ.Ը.Միութեան Ատանայի Գործատունը», *Միութիւն*, Յունուար-Փետրուար 1920, էջ 10): Հոս հիւսուած են Պօղոս Նուպար, Զօրավար Անդրանիկ, Ներգաղթ եւ Լոյտ Ճորճ անուանածօն գորգեր (Մելքոնեան, էջ 101):

[28] *Միութիւն*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1924, էջ 93:

[29] «Ինքնօգնութեան Հանգանակութեան Պատսպարան-Աշխատանոցները Պէյրութի եւ Հալէպի Մէջ», *Միութիւն*, Մայիս-Յունիս 1925, էջ 35:

[30] Ուր կը պաշտօնավարէր հալէպահայ կրթական մշակ Գրիգոր Պողարեան (Գրիգոր Պողարեան, *Վերջին Խօսքեր (Հուսկ Բանք) Ուղղուած Հալէպի Կրթասիրաց Վարժարանի Աւարտական Կարգերուն Եւ Փունջ Մը Խմբագրական Էջերս*, Պէյրութ, Տպարան Ատլաս, 1975, էջ 7):

[31] «Հալէպի Արհեստանոց-Որբանոցը», *Միութիւն*, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1921, էջ 66:

[32] *Միութիւն*, Յուլիս-Օգոստոս 1922, էջ 55:

[33] *Միութիւն*, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1922, էջ 71:

[34] Մէջբերուած՝ Մելքոնեան, էջ 100:

[35] Ըստ Էզաճեանի 30 Հոկտեմբեր 1920ի տեղեկագրին:

[36] Ասիկա կը թարգմանուէր նաեւ տեսչուհիին եւ օգնականուհիին Ապաստանարանը գիշերելով ու հսկելով ընդհանուրին:

[37] Ասիկա Յունիս 1920էն ետք ՀԲԸՄիութեան ծախքերով կը պատրաստուի:

[38] Հացագինի վճարումը անընդմէջ կը շարունակուի գէթ մինչեւ Յունիս 1921:

[39] 36 անկողին, 39 վերմակ, 20 բարձ, 60 ծածկոց, 10 գուլպայի մեքենայ, 1 կարի մեքենայ ոտքով, 1 մանածի ճախարակ, 2 թէլ փաթթելու գործիք, 2 պղնձեայ խալկին, 4 պղնձեայ դոյլ, 1 պղնձեայ լուացքի տաշտ, 5 փայտէ նստարան, 2 մեծ սեղան, 1 փոքր սեղան, 3 երկաթէ դոյլ՝ ջրհորի, 1 ջրհորի չուան, 1 իւղի փոքր կարաս, 8 բուրդի սանր, 1 փայտէ սնտուկ, 1 փայտէ պառկելու թախտ, 16 կերակուրի պնակ, 12 չինքոյէ թէյի գաւաթ, 2 չինքոյէ շերեփ, 1 թէյաման, 1 դանակ, 1 կախուելիք լամբար, 1 ֆանուս, 1 կրակի համար երկաթէ ակիշ, 1 ունելի, 1 պատի ժամացոյց, 15 խսիր, 3 թելիսէ չուալ, 2 աթոռ, 46 դգալ, 10 բուրդ ման., 50 գուլպայ հիւսելու ճաղ, 4 ձագար քարիւղի համար եւ թիթեղներ, 2 չինքոյէ դոյլ, 4 զանազան կտորներ:

[40] Մելքոնեան, էջ 100:

[41] ՀՕՄ ճգնաժամը կը փրկէ դիմելով Ամերիկեան Կարմիր Խաչին, որ աւելի քան անգամ մը կը տրամադրէ ճերմակեղէն, հագուստ եւ կօշկեղէն:

[42] Էզաճեան իբրեւ բ. ատենապետ կը շարունակէ ստորագրել նամակները նաեւ 1920 Հոկտեմբերին, որմէ ետք իբրեւ բ. ատենապետ նամակները կը ստորագրէ Սամուէլեան:

[43] Ասոնցմէ 7ը քղեցիներ էին, որոնք ազգականներ ունենալով Մ. Նահանգներու մէջ, եւ ասոնցմէ ոմանց ճանապարհածախսը հասած ըլլալով Ամերիկա կը ղրկուին, իսկ երկու կեսարացիք իրենց եղբայներուն եւ ազգականներուն քով կը ղրկուին (*Միութիւն*, Յուլիս-Օգոստոս 1921, էջ 57):

[44] Այդուհանդերձ, առկայ գրեթէ բոլոր տուեալները կը խօսին ամսական միջին հաշուով ոչ-աւելի քան 30-50 ապաստանեալներու մասին: Հաստատութեան վերջին տարին՝ 1927ին, ապաստանեալներու թիւը 39 էր (Մելքոնեան, էջ 101):

[45] Տուեալները հիմնուած են Յունուար 1920-Սեպտեմբեր 1921 երկարող տեղեկագրերուն վրայ:

[46] «Ցուցակ Հ.Բ.Ը.Միութեան Հալէպի Ապաստանարան-Աշխատանոցի Պատսպարեալներու», *Միութիւն*, Մայիս-Յունիս, 1920, էջ 40. նաեւ՝ Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1920, էջ 78. նաեւ՝ Յունուար-Փետրուար 1921, էջ 15. նաեւ՝ Մարտ-Ապրիլ 1921, էջ 30. նաեւ՝ Մայիս-Յունիս 1921, էջ 48. նաեւ՝ Յուլիս-Օգոստոս 1921, էջ 57. նաեւ՝ Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1921, էջ 80:

[47] Տեղանունները կու տանք՝ ըստ արձանագրութեան:

[48] Հիւանդութիւններուն համար օգտագործած ենք տեղեկագրերուն եզրոյթները:

[49] Մալարիայի պարագաները այսքան շատ չեն, սակայն անոնց բուժումը կ'երկարի աւելի քան ամիս մը, որով ամսական առողջապահական ցանկերուն մէջ չապաքինած պարագաները դարձեալ արձանագրուած են:

[50] Բացառաբար, Ապաստանարան բերուած հինգամսեայ փոքրիկին համար միայն ամէն օր կաթ կ'առնուի:

[51] Յետագայ տեղեկագրերը կը հաւաստեն, որ խոստումը կը յարգուի եւ 1920 Մարտին՝ 1928, Ապրիլին՝ 2590, Մայիսին՝ 2128, Յունիսին՝ 2100 ղրուշ կը ստացուի Նպաստամատոյցէն:

[52] Ի դէպ, 1920 Փետրուար ամսու գնումներու եւ բոլոր ծախքերու հոգը կը ստանձնէ խնամակալ Մանուկ Սահակեան:

[53] «Պատսպարան-Աշխատանոց (Հալէպ)» *Միութիւն*, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1928, էջ 71-2:

[54] Այս երկու գորգերուն հանգոյցներուն ընդհանուր գումարը եղած է 961,792 (1768 կարգ եւ 544 թէլ): Իւրաքանչիւր 100 հանգոյցի վարձք գանձուած է 6,5 փարա: Երկու գորգերուն իբրեւ աշխատավարձք գանձուած 9 օսմ. ոսկիին կէսը կը տրուի գորգագործներուն, միւս կէսը՝ ապաստանարանին կարիքներուն:

[55] Տեղեկագրերուն եզրոյթները պահպանած ենք:

[34] Richard Edwards, "Baath Party (Syria)," in *The Encyclopedia of the Arab-Israeli Conflict: A Political, Social, and Military History, Volume 1: A-H*, ed. Spencer C. Tucker, Santa Barbara, California, ABC-CLIO, 2008, pp. 183-185.

[35] "List of Presidents of Syria," *Wikipedia*, https://en.wikipedia.org/wiki/List_of_Presidents_of_Syria .

[36] "People's Council of Syria," *Wikipedia*, https://en.wikipedia.org/wiki/People%27s_Council_of_Syria (accessed August 21, 2017).

[37] Inter-Parliamentary Union Database (IPU Parline Database: Syria), *Syrian Arab Republic: Majlis Al-Chaab (People's Assembly),* under the subheading "Last Election," http://www.ipu.org/parline-e/reports/2307.htm (accessed September 19, 2017). The address of the headquarters of the Inter-Parliamentary Union is 5, chemin du Pommier; Case postale 330; CH-1218 Le Grand-Saconnex, Geneva, Switzerland, and the Inter-Parliamentary Union has a Permanent Observer in the United Nations.

[38] *Syrian Arab Republic: Constitution, 2012*, Introduction, http://www.refworld.org/docid/5100f02a2.html (accessed August 29, 2017).

[39] Van Eijk, pp. 209-210.

[40] Kerim Yildiz, *The Kurds in Syria: The Forgotten People*, London, UK, Pluto Press, 2005, pp. 91-93; Michael M. Gunter, *The Kurds: A Modern History,* Princeton, New Jersey, Markus Wiener Publishers, 2016, pp. 87-132.

[41] Human Rights Watch, *Group Denial: Repression of Kurdish Political and Cultural Rights in Syria*, New York: Human Rights Watch, 2009, 10. https://www.hrw.org/sites/default/files/reports/syria1109webwcover_0.pdf (accessed August 31, 2017).

[42] Human Rights Watch, *Group Denial*, 10; Jordi Tejel, *Syria's Kurds: History, Politics and Society*, London, Routledge, 2009, pp. 51-52; Yildiz, pp. 33-41.

[43] Human Rights Watch, *Group Denial*, p. 11.

[44] Ibid.

[45] Ibid.

[46] Ibid.

[47] Ibid.

[48] Marine Olivesi, "Syrian Armenian Refugees Back President Assad," PRI's *The World*, April 1, 2013 https://webcache.googleusercontent.com/search?q=cache:q2l81h3s_RAJ: https://www.pri.org/stories/2013-04-01/syrian-armenian-refugees-back-president-assad+&cd=4&hl=en&ct=clnk&gl=us (accessed August 31, 2017). "PRI" stands for "Public Radio International," and its hour-long radio program entitled "The World" provides news and analysis about current events in various parts of the globe. According to PRI's website, "The World is heard on over 300 stations across North America."

[49] Van Eijk, p. 208.

[50] Maurits S. Berger, "The Legal System of Family Law in Syria," *Bulletin d'Études Orientales,* 49, 1997, p. 118.

[51] Diab, "Religion and the Law in Syria," in the section of that article entitled "1.4. Summary of the Syrian Judicial System," https://www.acihl.org/articles.htm?article_id=26 (accessed August 15, 2017). This article is not dated. However, it was published during or after 2009 in view of the fact that 2009 is the most recent publication date, which that article cites for several of its sources. The address of ACIHL's office in Lyon is 29, rue Arago; 69100 Villeurbanne-Lyon; France. The address of ACIHL's office in Strasbourg is 6, avenue Charles de Gaulle; 67800 Bischheim-Strasbourg. France. For another explanation of the concept of personal status law, see Camilo Gómez-Rivas, "Women, Sharia, and Personal Status Law Reform in Egypt After the Revolution," Middle East Institute, October 1, 2011, http://www.mei.edu/content/women-shari%E2%80%98-and-personal-status-law-reform-egypt-after-revolution (accessed August 15, 2017). Although the article focuses on Egypt, its conceptualization of personal status law is applicable to Syria and other majority-Muslim countries.

[52] Diab, "Religion and the Law in Syria," in the section of that article entitled "1.4. Summary of the Syrian Judicial System," https://www.acihl.org/articles.htm?article_id=26 (accessed August 15, 2017).

[53] Ibid.

[54] Berger, "The Legal System of Family Law in Syria," 119, n. 18.

[55] Diab, "Religion and the Law in Syria," in the section of that article entitled "1.4. Summary of the Syrian Judicial System," https://www.acihl.org/articles.htm?article_id=26 (accessed August 15, 2017).

[56] Diab, "Religion and the Law in Syria," in the section of that article entitled "3.3. Application of The CPS [which stands for 'Code of Personal Status'],"
https://www.acihl.org/articles.htm?article_id=26 (accessed August 15, 2017).

[57] Diab, "Religion and the Law in Syria," in the section of that article entitled "3.4. Return to the Origin: Law No. 31 Year 2006," https://www.acihl.org/articles.htm?article_id=26 (accessed August 15, 2017).

[58] Ibid.

[59] Ibid.

[60] Ibid. See also van Eijk, p. 175; Ibrahim Ghabour's, Esq., *Introduction to Syrian Personal Status and Family Law: Syrian Legislation and Jurisprudence on Marriage, Divorce, Custody, Guardianship and Adoption for the Purpose of Immigration to the United States*, n.p.: Jura Law, an imprint of TellerBooks, 2017, also provides helpful information related to personal status and family law in Syria.

[61] Van Eijk, p. 175.

[62] Ibid.

[63] Diab, "Religion and the Law in Syria," in the section of that article entitled "3.4. Return to the Origin: Law No. 31 Year 2006," https://www.acihl.org/articles.htm?article_id=26 (accessed August 15, 2017).

[64] Van Eijk, p. 175.

[65] Ibid.

[66] Ibid.

[67] Ibid.

[68] Ibid.

[69] Ibid., p. 64.

[70] Ibid., pp. 64-65.

[71] Ibid., p. 65.

[72] Ibid.

[73] Ibid.

[74] Ibid.

[75] Ibid., pp. 19-25.

[76] Ibid., p. 210.

[77] Ibid.

[78] Ibid.

[79] Ibid.

[80] Ibid.

[81] Ibid.

[82] Ibid.

[83] Country Reports on Human Rights Practices for 2006, *Volume II: Report Submitted to Committee on Foreign Relations, U.S. Senate and the Committee on Foreign Affairs, U.S. House of Representatives by the Department of State in Accordance with Sections 116(d) and 502(b)B of the Foreign Assistance Act of 1961 as amended April 2008*, Washington, DC, U.S. Government Printing Office, 2008, p. 2172.

[84] Ibid.

[85] Ibid.

[86] Ibid.

[87] Migliorino, pp. 118-121; Sanjian, pp. 5-6.

[88] Farhad Khosrokhavar, "Violence and the Egyptian Revolution" in *Reimagining Social Movements: From Collectives to Individuals*, Antimo L. Farro and Henri Lustiger-Thaler (eds.), Farnham, UK, Ashgate, 2014, pp. 133-134.

[89] Robert Fisk, "ISIS in Syria: In the Shadow of Death, A Few Thousand Christians Remain to Defy Militants," *The Independent*, November 12, 2014

http://www.independent.co.uk/news/world/middle-east/isis-in-syria-in-the- shadow-of-death-a-few-thousand-christians-remain-to-defy-the-militants-9857030.html (accessed February 9, 2014); K. Jayalakshmi, "Iraq ISIS Crisis: Christians, Hounded Out of Mosul, Trapped in Desert and Refugee Camps," *International Business Times*, July 28, 2014, http://www.ibtimes.co.uk/iraq-isis-crisis-christians-hounded-out-mosul-trapped-desert-refugee-camps-1458647 (accessed February 9, 2014).

[90] "What is Islamic State?" BBC News – Middle East, September 26, 2014 http://www.bbc.com/news/world-middle-east-29052144 (accessed February 9, 2014).

[91] Loveday Morris, "Christians under Threat in Syria as Islamist Extremists Gain Influence," *Washington Post*, October 4, 2013, http://www.washingtonpost.com/world/middle_east/christians-under-threat-in-syria-as-islamist-extremists-gain-influence/2013/10/03/214607ee-2a75-11e3-b141-298f46539716_story.html (accessed February 9, 2014).

[92] Will Freeman, "ISIS Is Forcing Thousands of Christians From Their Homes In Iraq," *Think Progress*, July 24, 2014 http://thinkprogress.org/world/2014/07/24/3463654/isis-iraq-christians/ (accessed February 9, 2015).

[93] Migliorino, pp. 1-3; 26-34.

Սուրիոյ Սահմանադրութիւնները եւ Փոքրամասնութիւնները
(Ամփոփում)

Դոկտ. Ճոն Արմաճանի
JARMAJANI@CSBSJU.EDU

Զեկոյցը կը համեմատէ եւ կը հակադրէ Սուրիոյ 1973ի եւ 2012ի սահմանադրութիւններուն տրամադրութիւնները՝ փոքրամասնութիւններուն հանդէպ: Ան հակիրճ տեղեկութիւններ կը փոխանցէ թէ՛ նախապետական եւ թէ՛ յետանկախական Սուրիոյ սահմանադրութիւններուն մասին:

Զեկոյցը կը վերլուծէ Սուրիոյ սահմանադրութեան հինգ սկզբունքները, թէ՝ սուրիական յեղափոխութիւնը (այն, որ իշխանութեան հասցուց Պասս Կուսակցութիւնը) արաբական լայնածիր յեղափոխութեան մաս մըն է, եւ թէ՝ արաբական որեւէ պետութեան ուղղուած սպառնալիք կը վերաբերի ամբողջ արաբական աշխարհին, թէ՝ Սուրիան կը պայքարի սիոնականութեան եւ կայսերապաշտութեան դէմ, թէ՝ ազատութիւնը սրբազան իրաւունք է եւ ժողովրդավարութիւնը կառավարման իտէալական ձեւն է, եւ թէ՝ արաբական յեղափոխութիւնը մեկուսացուած երեւոյթ չէ, այլ՝ համաշխարհային շարժումի մը մէկ մասնիկը:

2012ի սահմանադրութիւնը չի յիշատակեր Պասս Կուսակցութիւնը իբրեւ «ազգին եւ ընկերութեան ղեկավար»: Զեկոյցը կը վերլուծէ այս սահմանադրութեան տարբեր յատկանիշերը 1973ի սահմանադրութեան հինգ սկզբունքներուն եւ այլ յատկանիշերու կողքին, կը քննարկէ անոր դրոյթներուն հետեւանքները կրօնական փոքրամասնութիւններուն, ներառեալ՝ սուրիահայերուն վրայ: Ան կը վերլուծէ նաեւ արաբականութեան տարբեր՝ աշխարհիկ եւ կրօնական գաղափարախօսութիւնները, իսլամական *Ահլ Ալ Քիթապ* եւ *Զիմմի* հասկացութիւնները, ու անոնց հետեւանքները՝ կրօնական փոքրամասնութիւններուն վրայ: Այս յենքին վրայ, զեկոյցը կը քննարկէ սիւննի խումբերու դերը, ինչպէս՝ Տահէշի՝ Սուրիոյ մէջ, բաղդատելով սուրիահայերուն դիմագրաւածը՝ այս խմբակցութիւններէն՝ համիտեան ջարդերուն (1894-1896) եւ Հայոց Ցեղասպանութեան հետ:

Զեկոյցը կ'եզրափակուի քննարկելով կրօնական փոքրամասնութիւններուն հաւանական ապագան Սուրիոյ եւ ընդհանրապէս Միջին Արեւելքի մէջ:

ՀԱՅ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ (1918-1946)

Յակոբ Չօլաքեան
hagopcholakian@hotmail.com

ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ ՀԱՅ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄՆ ՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ 1918-1939ԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Համաշխարհային Ա. Պատերազմի աւարտին օսմանեան զօրքերը քաշուեցան Մերձաւոր Արեւելքի արաբական տարածքներէն ու Կիլիկիայէն: Օսմանեան բանակի պարտութեան մէջ հիմնական դերակատարութիւն ունեցաւ նաեւ Ֆրանսայի դրօշին տակ կազմուած Արեւելեան Բանակը, որուն հինգ հազար զինուորներուն մեծամասնութիւնը կը կազմէին կիլիկեցի հայերը: Իրաք, Յորդանան, Պաղեստին, Եգիպտոսի Փոր Սայիտի գաղթակայան ու Սուրիոյ ամբողջ տարածքին ցրուած հայ վերապրողները, սկսան կամաց-կամաց վերադառնալ հիւսիսային Սուրիոյ եւ Կիլիկիոյ ազատագրուած շրջանները, ուրկէ տարագրուած էին անոնք 1915ին: Տունդարձը ցամաքի ու ծովու ճամփաներով տեւեց մինչեւ 1920: Ատանայի մէջ կազմուած Ազգային Միութեան մասնաճիւղեր սկսան գործել գրեթէ բոլոր ազատագրուած շրջաններուն մէջ: Ասոնք կը կազմակերպէին վերադարձողներուն տեղաւորման, ապրուստի ու ապահովութեան խնդիրները: Այսուհանդերձ, բազմահազար վերապրողներ ցրուած կը մնային Սուրիոյ տարբեր շրջաններուն մէջ. անոնք կա՛մ փրկութեան կը սպասէին, կա՛մ ալ համակերպած էին իսլամանալու գաղափարին: Պատերազմէն անմիջապէս ետք սկսաւ վերապրող հայերը հաւաքելու ու փրկելու աշխատանքը:

1922ին ֆրանսացիներն ու թուրքերը որոշեցին պետական նոր սահմաններ, որով Ֆրանսան Թուրքիոյ զիջեցաւ Կիլիկիան եւ պատմական Սուրիոյ հիւսիսային շրջաններ: Տեղի ունեցաւ իրենց տուն ու տեղին վերադարձած հայ բնակչութեան երկրորդ հոսքը Սուրիա: 5 Դեկտեմբեր 1924ին Ֆրանսան յառաջացուց Սուրիական Պետութիւնը՝ Հալէպի եւ Դամասկոսի 'պետութիւն'ներու միաւորումով: Ալեքսանտրէթի Սանճաքը մտաւ 'Սուրիոյ Պետութեան' կազմին մէջ՝ պահպանելով հանդերձ իր «յատուկ ռեժիմ»ը[1]:

Սուրիական պետութեան այս սահմաններէն ներս հայ վերապրողներու տեղաւորումը սկսաւ պատերազմի աւարտէն անմիջապէս ետք ու անցաւ չորս փուլերէ.

1. Առաջին փուլ.- Օսմանեան զօրքերու հեռացումէն անմիջապէս ետք, 1918ի վերջաւորութեան, տարագրութեան ճամփաներէն սկսան տուն վերադառնալ վերապրողներէն անոնք, որոնց շրջանները ազատագրուած

էին Արեւելեան Բանակին կողմէ: Հոս նկատի ունինք յետոյ Սուրիական Պետութեան սահմաններէն ներս մտնող շրջանները: Այսպէս՝

ա.- Պէյլանի շրջանակ, որուն մէջ կը մտնէին Պէյլան, Սովուք Օլուք, Կիւզելլի, Ֆարթըսլի, Քանլը Տերէ, Քըշլա Տերէսի, Նարկիզլիք, Աթըք եւ այլ մանր գիւղեր: Ասիկա առանձին գաւառակ մը կը հանդիսանար իր տոհմիկ հայութեամբ: 1915ին տարագրութեան մեծ զոհեր կու տայ այս շրջանակը: Պատերազմէն ետք վերապրողներ կը վերադառնան ու կը վերականգնեն իրենց գիւղերը:

Այս շրջանակին մէջ պայմանականօրէն կը մտնեն նաեւ Ալեքսանտրէթ ու Գրըգխան քաղաքները, որոնց տուեալները տրուած են առանձին[2]:

բ.- Սուետիա, որուն մէջ կը մտնէին Հաճի Հապիպլի, Պիթիաս, Եողուն Օլուք, Խտրպէկ, Վաքըֆ, Քեպուսիէ գիւղերը: 1919ին իրենց գիւղերը կը վերադառնան Մուսա Լեռան հերոսամարտէն ետք Փոր Սայիտ տեղափոխուած մուսալեռցիները, ինչպէս նաեւ տարագրութեան ելած հայրենակիցներէն վերապրողները: Ազգային Միութիւնը կը հսկէ վերականգնումի աշխատանքներուն:

Այս շրջանակին մէջ կը մտնէ նաեւ Անտիոք քաղաքը, որուն տուեալները սակայն առանձնաբար կը տրուին: Անտիոքի հին գաղութէն սակաւաթիւ վերապրողներ եղած են: Նոր գաղութը կը կազմուի յաջորդ փուլին[3]:

գ.- Լաթաքիա եւ անոր մօտիկ **Արամօ** եւ **Ղնեմիէ** գիւղերը: Լաթաքիա կը նստէր սաղիմապատկան վանքի եւ Հոգետան տեսուչ վարդապետը, որ նաեւ կը վարէր Անտիոքի Թեմի կաթողիկոսական փոխանորդի պաշտօնը: Վերապրող տեսուչ Մովսէս Վրդ. Ոսկերիչեան 1919ի ամռան կը վերադառնայ իր աքսորավայրէն: Հին գաղութէն հատուկենտ վերապրողներ կը վերադառնան: Լաթաքիոյ նոր գաղութը կը ձեւաւորուի երկրորդ եւ չորրորդ փուլերուն:

Արամոյի եւ Ղնեմիէի տոհմիկ հայութենէն վերապրողները նոյն շրջանին կը վերադառնան ու կը վերապրեցնեն իրենց գիւղերը[4]:

դ.- Քեսապի շրջանակ, որուն մէջ կը մտնէին հայաբնակ Քեսապ, Գարատուրան, Պաշորտ, Սեւ Աղբիւր, Ներքի Գիւղ ու Խայիթ, Չինար, Չաքալճըք, Տուզաղաճ, Քէօրքիւնէ, Էքիզօլուք, Վերի Պաղճաղազ, Վարի Պաղճաղազ ու Չաթալլէք, մասամբ հայաբնակ Տեսթիւր գիւղերը: 1915ին տարագրութեան մեծ զոհեր կու տայ այս շրջանակը: Վերապրողները իրենց տուն ու տեղին կը վերադառնան 1918ի վերջերէն մինչեւ 1920: Անիշխանութիւն է. վերապրողները ստիպուած կ'ըլլան ինքնապաշտպանական մարտեր մղել շրջակայ թուրքմէն գիւղերէն յարձակումներ կազմակերպած քեմալական ուժերու դէմ: Ազգային Միութիւնը եւ զինուորական իշխանութիւնը կացութեան տէր կ'ելլեն՝ մինչեւ 1922, երբ ֆրանսական իշխանութիւնները շրջան կը մտնեն[5]:

ե.- Ճսըր Շուղուր աւանի մօտիկ **Եագուպիէ** ու **Գնիէ** արաբախօս գիւղերը: Հոս տարագրութեան հրամանը չի հասնիր, սակայն 1917ին այս

երկու գիւղերուն բնակիչները կը պարպեն իրենց բնակարանները եւ կ'ապաստանին շրջանի արաբ գիւղերը: Կը վերադառնան ֆրանսական իշխանութիւններու շրջան մուտք գործելէն ետք:

զ.- Քիւրտ Տաղի վրայ՝ **Արֆալի** գիւղը. Մեծ Եղեռնէն ետք նոյն շրջանակին մէջ չվերականգնեցան Եամատի, Կոչի (Կէօչհի), Արմանճօ, Գոնտունա, եւ Վերին Թընզըրի գիւղերը: Պոտամայի սարահարթի Պսապըթ, Գոմղայա, Մեշթէ, Այն-ըլ Հոր գիւղերը 1904էն ետք չեն յիշատակուիր: Մեծ Եղեռնին բոլոր հայերը կը տարագրուին: Զինադադարէն ետք կը վերականգնի միայն Արֆալի գիւղը տասնեակ մը ընտանիքներով[6]:

է.- Վերակազմաւորուեցան **Հալէպի**, **Դամասկոս**ի եւ **Տէր Զօր**ի նախկին գաղութները: Ասոնք չէին տարագրուած, բայց հոս գրաւուած էին հասարակական շէնքերը, միջոցները, եղած էին ձերբակալութիւններ: Ամբողջ պատերազմի տեւողութեան այս քաղաքներուն մէջ հաստատուած էին մեծաթիւ գաղթակայանները, ուր պարբերաբար տասնեակ հազարաւոր հայեր կը բերուէին ու այդ տեղերէն կը քշուէին անյայտ ուղղութիւններով: Զինադադարէն անմիջապէս ետք այս գաղութներու նախկին հայերը վերակազմակերպուեցան ու հսկայական դեր կատարեցին վերապրողները յայտնաբերելու, ազատագրելու եւ տեղաւորելու գործին մէջ:

Վերոնշեալ բոլոր շրջաններու հայերը Սուրիոյ հին գաղութի մնացորդացը կը հանդիսանային[7]: 46 բնակավայրերէն 22ը ունէին դպրոցական գործ. գործած են 56 դպրոցներ (կարգ մը վայրերու աղջկանց եւ մանչերու անջատ դպրոցները մէկ հաշուելով). 5 դպրոց՝ Պէյլանի շրջանակ՝ ներառեալ Ալեքսանտրէթ եւ Գրըգխան, 14 դպրոց՝ Սուետիա եւ Անտիոք, 3 դպրոց՝ Լաթաքիոյ շրջանակ, 2 դպրոց՝ Եագուպիէ եւ Գնիէ, 19 դպրոց՝ Քեսապի շրջանակ, 10 դպրոց՝ Հալէպ, 2 դպրոց՝ Դամասկոս, 1 դպրոց՝ Տէր Զօր: Տարագրութենէն վերադարձէն ետք բնիկները կը վերականգնեն իրենց նախկին հոգեւոր-կրթական կեանքը՝ օգտագործելով իրենց եկեղեցական-դպրոցական նախկին շէնքերը:

2. Երկրորդ փուլ.- Ֆրանսական զօրքերու Կիլիկիայէն, ինչպէս նաեւ Այնթապէն եւ Ուրֆայէն քաշուելով երկրորդ գաղթականութիւնը հոսեցաւ Սուրիա, ուր տակաւին բազմահազար հայ գաղթականութիւն մը ցրուած իզուր կը սպասէր տունդարձի հնարաւորութիւններուն: Ասոնք այն վերապրողներն էին, որոնք սուրիական անապատներէն դեռ նոր վերադարձեր էին իրենց հայրենի տուն ու տեղին, ու հիմա երկրորդ անգամ կը բռնէին գաղթի ճամփան: Այս փուլին կազմուեցան հետեւեալ շրջանակները.

ա.- Ազէզ-Աֆրինի շրջանակ, 1922էն ետք մեծ թիւով հայեր անցնելով Թուրքիա-Սուրիա սահմանագիծը հաստատուեցան Թուրքիոյ սահմանամերձ շրջաններուն մէջ: Այստեղ կարեւոր կեդրոններ եղան

Ազէզն ու Աֆրին հայաւանը՝ շրջակայ տասնեակ մը բնակավայրերուն համար, ինչպէս Մէյտան Էքպէզ, Ռաճօ, Քաթմա, Քուրթ Գուլագ, Մազարլըճ, Մապաթլի, Կիւմրիւք, Իտլէպ[8]: Այս շրջանակի մէջ հաստատուողները մեծամասնութեամբ քիլիսցիներ էին: Անոնք օտար չէին այս դրացի շրջաններուն, շատեր նոյնիսկ սեփական արտեր ու ձիթեստաններ ունէին այս կողմերը: Շատեր նոր կայք հաստատեցին իրենց սեփական հողերուն վրայ: Բնիկ հայութիւն մը ունէին Հարէմ եւ Մապաթլի: Քաթման երկաթուղիի կայարանն էր, ուր մեծ թիւով հայեր աշխատանքի անցան:

բ.- Ալեքսանտրէթի Սանճաքի շրջանակ, Տէօրթ Եոլէն, Կիլիկիոյ եւ Կապադովկիոյ կողմերէն եկած հոծ հայութիւն մը տեղաւորուեցաւ Ալեքսանտրէթի, Գրըգխանի, Անտիոքի եւ Ռիհանիէի մէջ: Ամըքի դաշտին մէջ եւ Մուսա Լեռան վրայ Ազգերու Լիկայի ջանքերով հիմնուեցան տասնեակ մը հայագիւղեր՝ Սողուք Սու, Չաթալ Թեփէ, Ռիհանիէ եւ մօտիկ Ասկէր Չայիրը կամ Հայաշէնը (կը յիշուի Հայկաշէն ու Նորշէն անուններով), Ապտիւլ Հիւյիւք կամ Վարդաշէն (կը յիշուի նաեւ Նախիջեւան անունով). Մուսա Լեռան վրայ կը հաստատուի Նոր Զէյթուն գիւղակը: Հայկադաշտը մուսալեռցիներու կողմէ շինուած նոր գիւղակ մըն է[9]:

գ.- Ծովափնեայ շրջանակ, Մեծ թիւով կիլիկեցիներ տեղաւորուեցան Լաթաքիա, հայոց հոգետան մէջ եւ քաղաքը: Ոմանք անցան Թարթուս, Պանիաս, Սաֆիթա, Քատմուս, Մեշթէլ Հլու[10]:

դ.- Որոնդէսի հովիտ, Նոր գաղթավայրեր դարձան Հոմս ու Համա քաղաքները, Սալամիէ եւ Միարտէ աւանները: Հիմնուեցաւ Մուշաշէն հայագիւղը: Փոքրիկ գաղութներ ձեւաւորուեցան նաեւ Ճսըր Շուղուր աւանին եւ Էնկըզիկ գիւղին մէջ[11]:

ե.- Հալէպի շրջանակ, Հալէպ շարունակեց մնալ մեծագոյն գաղթակայանը: Վերապրողներն ու կիլիկեան երկրորդ տարագրութենէն եկողները կը նախընտրէին հասնիլ Հալէպ, ուր աւելի պաշտպանուած կը զգային: Միջոց ունեցողները կը տեղաւորուէին Հալէպ քաղաքի հիւսիսային արուարձաններուն մէջ, ուր քրիստոնեայ տարրը աւելի խտութիւն կը ներկայացնէր, ինչպէս՝ Պապուլ Ֆարաճ, Խանտէք, Ճտէյտէ, Նայիալ, Թիլէլ, Սալիպէ, որ գերազանցապէս հայկական թաղամաս էր, իսկ ուրիշներ կը տեղաւորուէին հին քաղաքի խաներուն մէջ: Գաղթականներուն մեծ մասը, ան որ վարձ տալու կարողութիւն չունէր, կը հաստատուի հիւղաւաններու մէջ, որոնք գերազանցապէս կ'աճէին քաղաքի հիւսիսակողմը՝ Ռամատանիէի շրջանին մէջ: Հոս ծայրամասային արուարձան էր Ճապրիէն, ուր, իբրեւ վարձակալ, գաղթականները խտութիւն մը կը գոյացնէին, բայց անոր արեւմուտքին ձգուող ու մինչեւ Քուէյք Գետին եզերքը տարածուող հարթութիւններուն մէջ հիւղերը (պարաքա) օրըստօրէ երկու մեծ խմբաւորումներ կը կազմէին՝ Համիտիէն եւ Սուլէյմանիէն: Կային նաեւ Կիւրինցիներու եւ Ասորի քեմփերը, Զէյթուն

Խանը: Ասորի Քեմփին մէջ աշոտցի հայոց հետ կայք հաստատած էին նաեւ ուրֆացի հայախօս ասորիները[12]:

Համիտիէի եւ Սուլէյմանիէի հիւղաւանները կը կոչուէին Ռամի գաղթակայան: Թղթակիցը 1923ի ձմռան այսպէս կը նկարագրէ գաղթականներու վիճակը. «*Մինչեւ գարուն այս ժողովուրդին մէկ չորրորդը անգամ չի մնար. արդէն հիմա օրական 20-30 մահ կը պատահի: Հաց, ծածկոց, դեղօրայք, ամէն բան կը պակսի: Օգնութի՛ն, օգնութի՛ն, օգնութի՛ն տարաբախտ ցեղիս խլեակներուն համար*»[13]:

Վեր. Ահարոն Շիրաճեան այսպէս կը ներկայացնէ Հալէպի գաղթականութեան տեղաբաշխումը.

> Գաղթականներու շուրջ կէսը կ'ապրի քաղաքին մէջ: ...Մնացեալ աւելի չքաւոր կէսը կ'ապրի քաղաքէն դուրս, հիւղաւաններու մէջ, որոնց խոշորագոյնը կը գտնուի հիւսիսը, Սուլէյմանիէ-Համիտիէ շրջանը, որ կը կոչուի Ռամ քեմփ: Ասոր բնակչութեան թիւն է 13 հազար եւ բաժնուած է վեց թաղերու: Առաջին, երկրորդ եւ չորրորդ թաղերը 1900 հիւղերով, գրաւուած են մարաշցի, քիլիսցի, ճիպինցի գաղթականներէ, երրորդ եւ հինգերորդ թաղերը, 1348 հիւղերով, գրաւած են այնթապցիները, վեցերորդ թաղը, 53 հիւղերով, գրաւած են ուրֆացիները: Այս խոշոր քեմփէն մէկ մղոն դէպի հիւսիս կը գտնուի Կէօք Մէյտանի քեմփը, ուր կան Խարբերդի եւ Էրզրումի շրջանէն 900 գաղթականներ, որոնք կ'ապրին հին զօրանոցներու կիսափուլ շէնքերուն մէջ: Զէյթունի համբաւաւոր ռազմիկներու մնացորդացէն 500 հոգինոց ջախջախուած ու յուսակտուր խումբը կ'ապրի իշխանական անուն կրող Էսատ Փաշա քեմփին կիսաքանդ, լքուած եւ ողորմելի շէնքերուն մէջ: Պաղտատ կայարանին քեմփին մէջ կ'ապրին ուրֆացի սիւրիանիներ: Անոնցմէ զատ, կան նաեւ չորս փոքր հիւղաւաններ՝ այնթապցի, խարբերդցի եւ կիւրինցի 1700 գաղթականներով: 1600 գաղթականներ ալ հաստատուած են 11 խաներու մէջ, որոնց իւրաքանչիւրը կը պարունակէ մինչեւ 500 հոգի[14]:

Հիւղաւանները չէին կրնար մնայուն բնակչութիւն մը ունենալ՝ գլխաւորաբար այնտեղ տիրող ծայրայեղ թշուառութեան եւ պայմաններուն հակա-առողջական ըլլալուն պատճառով: Կոյուղիները բաց էին, աղտոտ ջուրերը տեղ-տեղ կ'ամբարուէին հորերու մէջ: Ըմպելի ջուրի համար անոնց կից բացուած ջրհորները չէին կրնար մաքուր ըլլալ: Անհատ հողատէրերու կը պատկանէին հիւղաւանին հողերը, որոնց սահմանուած վարձքերն ալ կանոնաւոր չէին տրուեր: Տէրերը կը պահանջէին պարպել հիւղաւանը: Միջոց ունեցողները կը հեռանային հիւղաւանէն՝ տեղաւորուելու համար քաղաքի արուարձաններուն մէջ, ոմանք կը ցրուէին Սուրիոյ տարբեր վայրերը կամ կը գաղթէին այլուր: Ամերիկաներ եւ Եւրոպա գաղթողները շատ էին: Գաղթականներու տեղաւորման յանձնախումբերն ալ

բնակութեան նոր վայրեր ուղղելով գաղթականները՝ կը փորձէին թեթեւցնել Հալէպի բեռը: Սակայն հիւղաւանը չէր պարպուեր՝ նոր հասած գաղթականներու պատճառով, ինչպէս 1929ին սկսող ու մինչեւ 1932 տեւող գաղթականութիւնը: Նախապէս շինուած հիւղերը չէին քանդուեր՝ գաղթականներու նոր ալիքի մը հնարաւորութեան դիմաց:

1930ին Ռամի քեմփի վեց շրջաններու պատկերը հետեւեալն է.

Ա. շրջան.- 500 հիւղակ (պարաքա), 1200 այր, 1300 կին, գումար՝ 2500: Մխթար՝ Գրիգոր Փարլաքեան:

Բ. շրջան.- 350 հիւղակ, 883 այր, 887 կին, գումար՝ 1770: Մխթար՝ Մկրտիչ Կիւլիւզեան: Այս երկու շրջաններու բնակչութիւնը մարաշցիներէ կը բաղկանայ մեծաւ մասամբ:

Գ. շրջան.- 708 հիւղակ, 1790 այր, 1750 կին, գումար՝ 3540: Մխթար՝ Գարեգին Թիւթիւնճեան:

Դ. շրջան.- 700 հիւղակ, 1750 այր, 1850 կին, գումար՝ 3600: Մխթար՝ Եագուպ Կէօզիւգարայեան:

Ե. շրջան.- 500 հիւղակ, 1200 այր, 1300 կին, գումար՝ 2500: Բոլորը այնթապցիներ: Մխթար՝ Արմենակ Սարգիսեան:

Զ. շրջան.- 215 հիւղակ, 400 այր, 417 կին, գումար՝ 817: Բոլորը ուրֆացիներ: Մխթար՝ Ղազար Գրիգորեան:

Ընդհանուր գումար՝ 2973 հիւղակ, 14,727 բնակիչ[15]:

1932ին գաղթակայանը աւելի մեծցած կ'երեւի, նախկին վեցի փոխարէն եօթը շրջանակներ ունենալով: Կը յիշուի, որ Ա. եւ Բ. շրջանակներու պետն է՝ Կիւլիւզեանը: Ա. շրջանակը կը բաղկանայ 400 տուներէ եւ 32 խանութներէ: Կը պարունակէ 2241 անձ 490 ընտանիքներու վրայ, բաժնուած յարանուանական հետեւեալ պատկերով.- հայ առաքելական՝ 352, հայ կաթոլիկ՝ 74, հայ աւետարանական՝ 47, հայ լատին՝ 14, մորմոն՝ 1, սուրիական կաթոլիկ՝ 1 եւ քաղդէացի՝ 1 ընտանիք: Ըստ հայրենակցական բաժանումի.- մարաշցի՝ 256, այնթապցի՝ 83, քիլիսցի՝ 43, խարբերդցի՝ 39, ռումգալէցի՝ 8, տիգրանակերտցի՝ 8, բալուցի՝ 7, ուրֆացի՝ 6, կիւրինցի՝ 3, զէյթունցի՝ 3, սղերդցի՝ 3, մալաթիացի՝ 2 ընտանիք եւն.: Միւս շրջանակներն ալ ունին գրեթէ համանման պատկերներ[16]:

Հիւղաւանը լաւագոյն պատսպարանն էր անոնց, որոնք իսկապէս ծայրայեղ թշուառութեան մէջ կ'ապրէին, որքան ալ հոն ֆիզիքական պայմանները վատառողջ էին ու որքան ալ սպառնալից էին հողատէրերուն կողմէ հողերը պարպելու դատական հետապնդումները: 1932-1935ականներուն քանդումի գործողութիւնները կը ձգձգուէին իբրեւ արդիւնք գաղթականներու կողմէ բացուած դատերուն: 1935ին կը տրուի միայն մէկ տարուան պայմանաժամ՝ նոր հող գնելու եւ հիւղերը լքելու համար:

Գաղթականաց Յանձնախումբի ջանքերով շուտով հողեր կը տրամադրուին գաղթականներուն, ու մէկը միւսին ետեւէն կը կառուցուին

Նոր Գիւղ (Մէյտան), Պոսթան Փաշա, Հէօլլիւք, Աճուրլուք, Շէյխ Մաքսուտ ու Ճեպէլ Սէյտէ (Խորթլախ), Էշրեֆիէ (Տաուտիէ) զուտ հայաբնակ հսկայ թաղամասերը: 1935-1936ին Ռամի գաղթականը կը քանդուի ու անոր տեղ կառուցուած Սուլէյմանիէի նորագոյն թաղամասին բնակիչները կ'ըլլան հայերն ու քրիստոնեայ այլ փոքրամասնութիւնները: Քուէյք Գետի ձախ ափին 1960ականներուն կը սկսի կառուցուիլ Վիլլաներ թաղամասը՝ գերազանցապէս հայ բնակիչներով:

զ.- Դամասկոսի շրջանակ, 1915ին դէպի Համա, ապա Հոմս քշուող հայ տարագիրներու յաջորդ մեծ գաղթականը կը հանդիսանայ Դամասկոսը: 1915 Օգոստոսէն Դեկտեմբեր հոս հասած են շուրջ 130,000 հայեր: Գաղթականներու գլխաւոր կեդրոնը եղած է Քատէմը[17]: Ասկէ խումբ-խումբ քշուած են շուրջ 30,000 աքսորականներ: 1916 Փետրուարին Դամասկոսի եւ շրջաններուն մէջ կը գտնուին աւելի քան 100,000 հայեր[18]:

1917 Նոյեմբերին հոս կը տարագրուին նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան սինոտի անդամներն ու հոն գտնուող այլ երեւելի հոգեւորականներ, ինչպէս Սսոյ Սահակ Կթղ. Խապայեանը, Գարեգին Եպս. Խաչատուրեանը, Մաղաքիա Եպս. Օրմանեանը, Կարապետ Արք. Մազլումեանը, որ կը նշանակուի տեսուչ տեղւոյն նորաբաց որբանոցներուն, Եղիշէ Եպս. Չիլինկիրեանը, որ 1917-1918 կը վարէ Դամասկոսի Առաջնորդութիւնը:

Զինադադարէն անմիջապէս ետք վերապրող գաղթականներու հաւաքագրում կը կատարուի երկրի հարաւային շրջաններու մէջ: Եգիպտահայերու ղեկավարութեամբ ազատագրութեան եւ փրկութեան հայկական խումբերը կազմուեցան 1918ի գարնան: Առաջին խումբին՝ Հայկական Արշաւական Փրկութեան Խումբին ղեկավարն էր Դամասկոսի մէջ օսմանեան չորրորդ բանակի զինուոր մը՝ Լեւոն Եօթնեղբայրեանը: Ան կը վայելէր հռչակաւոր արաբ ղեկավար Ֆայսալ իշխանի (որ պայքարեցաւ Սուրիան թուրքերէն ազատագրելու ի խնդիր) եւ բրիտանական բանակի սպայակոյտի աջակցութիւնը: Հաւուրանի շրջանին մէջ, Զինադադարի հաստատումէն ետք, խումբը յաջողեցաւ փրկուած հայերը Տրաա եւ Դամասկոս փոխադրելու աշխատանքը շարունակել, ուրկէ խումբ-խումբ կը կատարուի անոնց վերադարձը դէպի ազատագրեալ շրջաններ: Ասոնք մեծ մասամբ Անտիոքի եւ Կիլիկիոյ շրջաններու բնիկներ են ու հետեւաբար կը վերադառնան այն յոյսով, որ պիտի վերագտնեն իրենց տունն ու տեղը: Յաջորդող երկու տարուան մէջ գաղթականները գրեթէ կը պարպուին ու Դամասկոսի մէջ կը մնան միայն 4000 հայեր, որոնց գէթ մէկ չորրորդը հին գաղութի բնիկներն են:

1922ին վրայ կը հասնի կիլիկեան երկրորդ գաղթականութիւնը: Ֆրանսացիները Թուրքիոյ կը յանձնեն Կիլիկիան եւ հիւսիսային Սուրիոյ հայաշատ շրջանները, ուր վերապրողները վերահաստատուած էին: Ֆրանսական զօրքերուն հետ շրջանէն կը հեռանան նաեւ հայերը ու նոր

կայք կը փնտռեն Սուրիոյ մէջ: 1923ին Դամասկոս կայ 8000, իսկ մէկ ամիս ետք՝ 11,000 հայութիւն[19]:

Հայոց նախկին Պապ Շարքի եւ Պապ Թումա թաղամասերէն դուրս հոծ բազմութիւն մը հաստատուեցաւ նաեւ քաղաքի տարբեր թաղամասերուն մէջ, յատկապէս՝ Քատէմ, Սալիհէ: Լրիւ հայաբնակ էին Պոսթան Սալիպի եւ Սուֆանիէ հիւղաւանները: Հայեր կ'ապրէին նաեւ Դամասկոսի մերձակայ Մեզզէ, Տումա ու Քաթանա աւաններուն մէջ: Դամասկոսէն հարաւ, դէպի Յորդանան տանող տարագրութեան ճամփաներուն վրայ գտնուող հայերը մէկտեղուեցան Քունէյթրա, Տրաա, Սուէյտա եւ Սալխաթ աւաններուն մէջ[20]:

է.- Սուրիական Եփրատի վերին հովիտ, 1922ին Հիւսիսային Սուրիոյ ֆրանսական բարձր քոմիսէրի ներկայացուցիչ զօրավար Billette կը յաջողի հայ գաղթականներ տեղաւորել Եփրատի հովիտի սահմանամերձ շրջաններուն մէջ: Արեւմտեան ափին, հայեր հաստատուեցան Պապ, Մումպուճ եւ Ճարապլուս աւաններուն մէջ: Արեւելեան կողմը հիմնուեցան սահմանամերձ Արաբ Փունար եւ Թէլ Ապիատ գիւղերը: Անոնք մեծ մասով Ուրֆայի, Պերեճիկի, Սրուճի շրջաններու հայերն էին, որոնք դեռ տարագրութենէն առաջ որոշ կալուածներ ալ ունէին հոն եւ բարեկամական յարաբերութիւններ մշակած էին շրջանի պետեւի աշիրէթներուն հետ: 1908ին ուրֆացիք ձեռնամուխ եղած էին բնակութիւն հաստատելու այս կողմերը, Այն Արուսի շուրջ[21], հայոց պատկանող ընդարձակ հողերուն վրայ: Այդ նպատակով ալ միութիւն մը կազմուած էր Ուրֆայի մէջ: Կը հիմնուին Շարակրատ, Հիշէ Պենտի եւ Սլուկ գիւղերը. երեքն ալ ներկայիս Սուրիոյ մէջ: 170 հայ ընտանիք կը տեղափոխուի հոն. նորաբնակները մէկ տարի վարուցանք ալ կ'ընեն, բայց չեն գոյատեւեր: Ատկէ ետք հայերը իրենց հողերը վարձքով կու տային տեղացի արաբներուն:

Քարէն Եփփէ՝ Ազգերու Լիկայի լիազօր ներկայացուցիչի հանգամանքով, երկրագործութեամբ զբաղիլ ուզող հայոց համար յարմարագոյն տեղ կը համարէր այդ շրջանը, մանաւանդ Եփրատի հարկատու Պալըխ Գետի աւազանին մէջ, մինչեւ Րաքքա: Անոր ջանքերով 30 կարմուջցի ընտանիքներ կը հաստատուին Այն Արուս, Քարէն Եփփէի որդեգիր Միսաք Մելքոնեանի ղեկավարութեամբ: Վերջինս 1924էն սկսեալ հոս կազմակերպեց ու իրականացուց Ազատարար Միսիոնը, որուն միջոցով հարիւրաւոր հայեր օտարացումէ փրկուեցան ու դարձան հայութեան: Ան լաւագոյնս սիրաշահելով Անեզէ արաբ ցեղախումբի մեծամեծները, տեղական եւ ֆրանսական իշխանութիւններու ներկայացուցիչները, գիւղէ գիւղ, վրանախումբէ վրանախումբ խուզարկեց ու գտաւ օտարներուն յանձնուած հայու բեկորներ: Ասոնք Ազատարար Միսիոնի միջոցաւ իրենց ազգին կը վերադարձուէին: Անապատին մէջ Մելքոնեանի գործակիցներն էին Խաչիկ Յակոբեանն ու Ռուբէն Հերեանը: Ազատագիրները կը բերուէին Թէլ Սիմէն, ոմանք կ'ուղարկուէին Հալէպ՝ Քարէն Եփփէի, իսկ միւսերը կը տեղաւորուէին ոչ-շատ հեռու Խըրպըթ Էլ

Ռըզ, ուր կը ձեւաւորուի Թէլ Արմէն գիւղակը. 1926ին քիչ անդին կը ձեւաւորուի նաեւ Շարպ Պետրոս գիւղակը: Խըրպըթ Էլ Ռըզի մէջ կը բացուի որբանոց, որ կը դրուի Օր. Ենի Ենսընի խնամքին ու հոգատարութեան տակ: Որբանոցը շրջան մը կը պատսպարէ 60-70 որբեր: Քարէն Եփփէ իր անմիջական հսկողութեան տակ կ'առնէ իր հիմնած ոչ միայն Այն Արուս, Թէլ Արմէն, Շարպ Պետրոս եւ Այն Թինա գիւղերը, այլեւ շրջանի ամբողջ հայութիւնը՝ Թէլ Ապիատ, Ճարապլուս, Արաբ Փունար, Ռասուլ Այն, Րաքքա, Պապ, Մումպուճ, Համամ[22]:

ը.- Սուրիական Միջագետքի արեւելեան շրջանակ, Սուրիական Միջագետքի ծայր արեւելեան շրջանը կ'ընդգրկէ Եփրատի հարկատու Խապուր եւ ասոր հարկատու Ճաղճաղ վտակի աւազանները մինչեւ Տիգրիս Գետ ու Իրաքի սահմանը: Խապուր Գետի աւազանին մէջ 1915ին հայ տարագիրները ապրեցան Մեծ Եղեռնի ամէնէն վայրագ հաւաքական կոտորածները Ռասուլ Այնէն, մինչեւ Շատտատէ, Մարկատէ ու Տէր Զօր:

Շրջանի հայութեան առաջին շերտը կը կազմեն վերապրողները, որոնք չեն հասցներ Զինադադարէն անմիջապէս ետք շրջանէն հեռանալու ելք գտնել: 1922ին, ֆրանսական զօրքերու շրջան մուտք գործելէ ետք, աւելի ապահով գտնելով կը մնան ու կը մէկտեղուին գլխաւորաբար Տէր Զօր, Ռասուլ Այն, Ապու Քեմալ, Հասիչէ եւ Քամիշլի, ինչպէս նաեւ Քարամանիէ, Տերիք, Տրպեսիէ եւ Այն Տիւար:

1922էն սկսեալ շրջան կը սկսին հոսիլ մերտինցի փախստականներ՝ հայ, ասորի ու քաղդէացի[23]: Մերտինը սուրիական նոր սահմանէն ոչ-հեռու քաղաք մըն է, ուր կ'ապրէին հայեր, ասորիներ ու քաղդէացիներ: Հայերը ամբողջապէս արաբախօս էին եւ կաթոլիկ: Ունէին առանձին եպիսկոպոսութիւն: 1915ի Յուլիսի 3ին օսմանեան ոստիկանութիւնը կը ձերբակալէ հայոց Առաջնորդը՝ Իգնատիոս Մալոյեան եպիսկոպոսը, կրօնական դասի բոլոր անդամները եւ համայնքի երեւելիները, նոյն ատեն նաեւ՝ ասորի եւ քաղդէական եկեղեցական դասն ու երեւելիները, ապա Տիարպեքիր տանելու պատրուակով շղթայակապ կը հանէ քաղաքէն դուրս ու կը սպանէ անասելի չարչարանքներով: Սպանդը կը կատարուի Յունիս 10-11ին: Մերտինի բնակիչներէն շատեր սարսափած կը փախչին Սինճարի Լեռներ կամ արաբ ցեղախումբերու մօտ: Երբ պատերազմը կ'աւարտի՝ շրջան կը մտնեն ֆրանսական զօրքերը, իսկ տանիմարքացի զօրավար Էրնէթ շրջան կու գայ թրքական պետութեան հետ սահմանները վերջնական ձեւով որոշելու: Մերտին կը մնայ Թուրքիոյ կողմը: Մերտինցի քրիստոնեաները մեծ թիւով, իսկ հայերը ամբողջութեամբ կը սկսին գաղթել Սուրիա, Լիբանան ու Իրաք: Սուրիա մտնողները մեծամասնութեամբ կը հաստատուին Խապուր Գետի աւազանին մէջ:

Տէր Զօր շատ կարեւոր դեր կ'ունենայ անապատի ցեղախումբերու մէջ ցրուած հայ որբերու, որբուհիներու եւ կանանց փրկութեան գործին մէջ: Այստեղ 1919ի սկիզբներուն կը հասնի Հերեանը: Ան Մուշեղ Արք.

Սերոբեանի եւ Թորգոմ եպիսկոպոսի ցուցմունքներով եւ լիազօրութեամբ ստանձնեց հայ վերապրողները յայտնաբերելու եւ ապահով կերպով Տէր Զօրէն Հալէպ փոխադրելու գործը: Հերեան կը գործակցէր անգլիական եւ ֆրանսական իշխանութիւններուն հետ, ՀԲԸՄի, Հայ Ազգային Միութեան, Պոլսոյ Պատրիարքութեան, Ազգերու Լիկայի ներկայացուցիչներուն, Մերձաւոր Արեւելքի Նպաստից գործիչներուն եւ ուրիշներու հետ: Ան հիմնականին մէջ կը գործէր Ճեզիրէի, Շամաթիէի, Խերէյթայի, Թերպանի, Հաուիժայի, Մէյատինի, Ապու Քեմալի, Ժիպուրի եւ Շաուիի մէջ, որոնք կը գտնուէին Տէր Զօրի շրջակայքը: Իսլամացած հայերու իսլամական հաստատութիւններէն փրկելու գործընթացը կոչուած էր «Փրկութեան առաքելութիւն» կամ «Ազատագրութեան առաքելութիւն»: Այս գործունէութեան կարեւոր ցուցմունքներէն մէկը հետեւեալն էր. «*Բոլոր հայերը, որոնց անունները փոխուած են եւ բռնի կերպով իսլամացուած, պէտք է ազատագրուին եւ վերադարձուին, եւ եթէ իսլամներու կողմէ առեւանգուած են՝ ամէն ինչ պէտք է կատարուի զանոնք փրկելու համար*»: 1919-1921՝ Հերեան քանիցս եկաւ Տէր Զօր ու կազմակերպեց հազարաւորներու փրկութիւնը: Անոր մահէն ետք այդ գործը շարունակեցին իր ազատագիրները եւ ուրիշներ:

Այդ մասին հետեւեալը կը վկայուի. «*Տէր Զօրի նախճիրներէն ազատուած փոքրիկ հայ մանուկներ, որոնք փրկուած են շրջակայ պետեւիներու կողմէ, չափահասութեան տարիքին ալ, դեռ կ'ապրին շրջիկ պետեւիներու կեանքը: Այսպիսի հազարաւոր աղջիկներ ու երիտասարդներ կը գտնուին անապատին մէջ: Անոնցմէ ոմանք մերթ ընդ մերթ կը փախչին Տէր Զօր, ուր՝ իր ազգասիրութեամբ ու առատաձեռնութեամբ հռչակ հանած Տիկին Սաթենիկ (այրին հանգուցեալ դերձակ Գրիգոր Հայկեանի) զանոնք խնամելով եւ իրենց անմիջական պէտքերը հոգալով կը ղրկէ Հալէպ՝ Միս Քարէն Եփփէի պատսպարանը*»[24]:

Հոս ամէնէն առաջ կը կազմակերպուի Տէր Զօրի գաղութը. 1923ին կ'ունենայ թաղական խորհուրդ, եկեղեցի, դպրոց ու քահանայ: Տէր Զօր մինչեւ հնգամեակ մը կը մնայ շրջանի կեդրոնը, ու տեղւոյն քահանան այցելութիւններով կը հովուէ շրջանի միւս հայերը: Նոյն թուին կը վերակազմուի նաեւ Տէր Զօրի հայ կաթողիկէ համայնքը, որ շրջանին մէջ գոյութիւն ունեցող միակ հայ համայնքն էր Մեծ Եղեռնէն առաջ:

3. Երրորդ փուլ.- Շրջանի հայութեան երրորդ շերտը արեւելեան նահանգներէն Սուրիա անցնող հայ գաղթականութիւնը կ'ըլլայ: 1927-1931 տարիներուն շրջան կը հոսին մեծամասնութեամբ քրտախօս պշերիկցի հայերը: Քրտախօս հայերը Քամիշլի կու գային Թուրքիոյ Ճեզիրէթ Պոթանէն կամ Պշերի Լեռներէն, ատոր համար ալ կը կոչուէին պշերիկցիներ:

1925ին պայթեցաւ քրտական ապստամբութիւնը: Յատկապէս Տիգրանակերտի ու Բաղէշի նահանգներուն մէջ հայոց մնացորդացը

կ'ապրէր քիւրտ մեծաւորներու հովանաւորութեան տակ՝ բոլորովին զրկուած իր ժառանգութենէն ու իրաւունքներէն: Անոր համար չէր կրնար բողոքել թուրք իշխանութիւններուն, ոչ ալ կրնար գլուխ ցցել քրտական տեղական իշխանութիւններուն դէմ: Շատեր թէեւ իսլամացած՝ կացութենէն դուրս գալու միջոցներ կը փնտռէին: Առիթը դարձաւ այս խառնակ վիճակը: Եւ ահա 1927էն սկսեալ տեղ-տեղ զանգուածային, բայց մեծ մասով առանձին ընտանիքներով դէպի Միջագետք, յատկապէս Քամիշլիի շրջանը փախան Տիգրանակերտի եւ Բաղէշի նահանգներուն մէջ մնացած հայերը, որոնց շարքին մեծ թիւ կը կազմէին պշերիկցիները: Ասիկա սովորական փախուստ մը չէր, փախստականները մինչեւ սուրիական սահման հասնիլը կ'անցնէին ոդիսականներէ, իրենց քիւրտ տէրերը իրենց զինեալ մարդոց հետ կը կտրէին ճամփաները, կը տանջէին փախստականները, կը կողոպտէին ու բախտաւոր պարագային՝ թոյլ կու տային անցնիլ սահմանը ամբողջապէս կողոպտուած ու ձեռնունայն: Ասիկա հոգիի փրկութիւն մըն էր:

Իբրեւ վկայութիւն այստեղ աւելորդ չ'ըլլար մէջբերել Սղերդի Էնքասիր Գիւղէն քառասուն փախստականներու ոդիսականէն հատուած մը՝ խումբի առաջնորդ Կիրակոս Գրիգորեանի վկայութեամբ: Խումբը Սուրիա կը մտնէ 3 Ապրիլ 1930ին:

> Այս մարդը մէկն է քիւրտ Ահմէտ Իսքա Աղայի գործաւորներէն, որոնք անոր քով աշխատած են երկար տարիներ: Աղան անոնց տրամադրած է սերմնացու, եզներ ու կովեր: Անոնք աշխատած են ու բերքին երեք քառորդը հարկադրաբար տրամադրած են աղային, իսկ մէկ չորրորդը մնացած է իրենց: Անոնք արտօնութիւն ունեցած են կովերուն եւ ոչխարներուն կաթը առնել, բայց երբեք չեն կրցած զանոնք սեփականացնել: Վերջերս քիւրտ աղան շատ գէշ կերպով վարուած է անոնց հետ. քիւրտերը մտած են իրենց տուները ու բռնութեամբ առած են ամէն բան, նոյնիսկ անոնց աղջիկներն ու կիները: Անոնք իբրեւ հայեր, չեն կրցած ներկայանալ թուրք կառավարութեան, որովհետեւ անոնց ձայնը լսելի պիտի չըլլար, եւ քիւրտերը անկէ ետք զիրենք պիտի նեղէին աւելի քան երբեք: Անոնք ստիպուած էին լքելու իրենց տուները՝ նոյնիսկ մահուան սպառնալիքի տակ:
>
> Անոնք մեկնեցան 3 Մարտ 1930ին, ընդամէնը 40 հոգիով: Ութ ժամ տեւող ճամփորդութենէ մը ետք խումբը կը հասնի ասորի վանք մը: Անկէ ասորիներու ընկերակցութեամբ անոնք կու գան կը հասնին Տիգրիսի ափին: Այստեղ անոնց դէմ կ'ելլէ քիւրտ Ապտուլլան իր զինեալ մարդոց հետ: Այս մարդը որդին է քիւրտ կնոջ մը, Փերի Խանէ, այրին քիւրտ Ահմէտ աղային, սարսափելի բռնակալ մը ու հայդուկ մը: Այս կինը ունի երեք զաւակներ, զորս ինք կ'օգտագործէ սպանելու եւ կողոպտելու հայերը: Ան պատմականօրէն հռչակաւոր է իր ահաբեկումներով եւ սպանութիւններով:

Քիւրտ Ապտուլլան այս հայերը տասը ժամ կը բանտարկէ քարայրի մը մէջ, կը ծեծէ զանոնք ու դրամ կը պահանջէ: Վերջապէս անոնցմէ կը գանձէ 25 թրքական ոսկեդրամ ու ազատ կ'արձակէ: Անոնք կը ճամփորդեն վեց ժամ եւս, երբ ուրիշ քիւրտ աղա մը, Ճեմիլ Մուհամմէտ, կը շրջապատէ զանոնք իր զինեալներով, կը ծեծէ, կը սպառնայ սպանել զանոնք եւ դրամ կը պահանջէ: Ան հայերը կը բանտարկէ խոր քարայրի մը մէջ, ուր կը մնան ութ ժամ: Եւ անոնք ասկէ ալ կ'ազատին 25 թրքական ոսկեդրամ տալով բռնակալին[25]:

Պշերիկցի փախստականներու հոսքը ուղղուեցաւ Քամիշլի: Անոնք՝ հետիոտն եւ չեթէներէն կողոպտուած, անցնելով Տաւրոսեան Լեռներէն, եկան կայք հաստատելու Քամիշլի եւ շրջակայքի ճահճոտ բնակավայրերը, Ճաղճաղ Գետի ափերուն, պատմական Մծբին Քաղաքի աւերակներուն մօտիկ:

Հայ Գաղթականաց Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբը (ՀԳԽԿՅ) 1927ին փոքրիկ խումբերով Սուրիա մտնող այս գաղթականները սկզբնապէս կը տեղաւորէր Հալէպի մէջ, յատկապէս անոնց համար նկատի ունէր Նոր Գիւղը, բայց պշերիկցիները միասին ապրիլ ուզելով կը նախընտրէին մնալ Քամիշլիի եւ Հասիչէի կողմերը, այն երազանքով, թէ գուցէ օր մը դարձեալ երկիր կրնան վերադառնալ: ԳԽԿՅը 8 Փետրուար 1930ի իր նիստին՝ լուծելու համար Հասիչէի եւ Քամիշլիի շրջանները թափանցած նոր ու հին գաղթականներու, մանաւանդ այդ տարին ներս թափանցած շուրջ 5000 պշերիկցիներու եւ հնարաւոր նորերու կեցութեան ու տեղաւորման հարցերը, կը յառաջացնէ Գաղթականաց Տեղաւորման Յանձնախումբը (ԳՏՅ)՝ հետեւեալ անձերէն բաղկացած.- Վեր. Շիրաճեան, Տոքթ. Թորոս Պասմաճեան, Միսաք Մելքոնեան, Տիգրան Ռշտունի, Ճեմիլ Տիլէնճի, Միշէլ Թերճանեան, Եագուպ Մանկալօ[26]:

ԳՏՅն ամէն լիազօրութիւն ունէր Քամիշլիի եւ Հասիչէի շրջաններուն մէջ «մահմուլ» հողերու գնման, տուներու շինութեան, գաղթականներու ցանկագրման, տեղաբաշխումին եւ նպաստի բաժանումին մէջ:

ԳՏՅի պետը՝ Վեր. Շիրաճեան, քանիցս կը ճամփորդէ այդ կողմերը ու պէտք եղած միջոցառումները կը կատարէ: 31 Մարտ 1930 թուակիր տեղեկագիրը առաջինն է, որ մանրամասն տեղեկութիւններ կու տայ այս կողմերը հաստատուած գաղթականութեան մասին[27]: Այդ տեղեկագիրին մէջ արդէն կը խօսուի Քամիշլի, Հասիչէ եւ անոնց միջեւ՝ Քարամանիէ եւ Ամուտա հաստատուած հայոց մասին:

Վեր. Շիրաճեան մասնաւորելով իր խօսքը նորեկ գաղթական պշերիկցիներու մասին՝ հետեւեալը կը տեղեկագրէ. «*Չորս-հինգ ամիսներ առաջ Թուրքիոյ սահմանակից Տիարպեքիրի եւ Սղերդի շրջաններէն այս կողմերը գաղթեցին 450 ընտանիքներ, իսկ երկու ամիս ետք 30*

ընտանիքներ եւս՝ Սուրիա հաստատուելու մտադրութեամբ: Անոնցմէ ոմանք հայերէն գիտեն, սակայն մեծամասնութիւնը քրտախօս է: Քրտախօս հայերէն ոմանք կարողացած են իրենց հետ բերել իրենց հօտերը եւ որոշ կահ-կարասի, բայց մեծամասնութիւնը, 400 ընտանիք, ճամփան կողոպտուած են ու սնանկացած, զրկուած ամէն կարողութենէ»[28]:

ՀԳԽԿՅն կազմակերպեց օգնութիւն եւ նպաստ: Ֆրանսական եւ տեղական իշխանութիւններն ալ սննդամթերք տրամադրեցին: Սակայն գաղթականները վրանաբնակ իրենց կացութենէն դուրս ելլել ուզելով կը ջանային կայք գտնել ու մշտապէս տեղաւորուիլ: Շատեր կայք հաստատեցին Ամուտա, Ռասուլ Այն, Տրպեսիէ, Հասիչէ եւ Տէր Զօր: Պշերիկցիներէն շատեր մասնակցեցան Տէր Զօրի կամուրջին շինութեան աշխատանքներուն:

Գաղթականներէն ոմանք բնակարանային եւ ապրուստի դժուարութիւնները լուծելու համար տեղաշարժի դիմեցին եւ տեղափոխուեցան Տերիք ու շրջակայքի Այն Տիւար, Ուանըքէ, Պազընտանէ, Հաքամիէ եւ այլ գիւղեր՝ Տիգրիսի մօտակայ ափերուն: Այս շրջանը Քամիշլիէն դէպի արեւելք՝ շուրջ 100 քլմ. հեռաւորութեան վրայ կը գտնուէր: Շիրաճեան կը տեղեկագրէ. «*Հասիչէէն դէպի Քամիշլի, դէպի արեւելք՝ գաղթականներ ընդունող բազմաթիւ բնակավայրեր կան: Իրաք-թրքական սահմանին վրայ կայ ընդարձակ տարածութիւն մը, հոն կան հարիւրաւոր հողէ բլուրներ, որոնք հին ժամանակներուն քաղաքներու եւ գիւղերու կեդրոններ էին, ինչպէս Թէլ Արուսը, Թէլ Ուզումը, Թէլ Ինճիրը, Թէլ Պէյտարը, Թէլ Մաճկը եւն., եւն.: Այս վայրերու ներկայ բնակչութիւնը քրիստոնեաներու կողքին բաղկացած է քուրդ մեծամասնութենէ մը. քրտական գիւղեր կ'երեւին ամէն կողմ: Պետուին արաբները նոյնպէս կ'ուզեն հաստատուիլ շրջանին մէջ նորանոր գիւղեր շինելով*»[29]:

Ամբողջ շրջանը, մանաւանդ Քամիշլին, բազմազգ բնակավայր մը կը դառնար, ուր «*եկած են կայք դնելու տարբեր ազգերու եւ ցեղերու զաւակներ՝ հայ, հրեայ, արաբ, քուրդ, եագուպիկ ասորի, մերտինցի թոխլորքին...: Քրտացած հայեր ալ կային, Մամկունի խաշնարած ցեղը, մամիկոնեաններէն, Ռըշկոթա ցեղը՝ ռշտունիներէն, Էօմերիները՝ էրմենիներէն՝ հայերէն սերած, Պակկարա ցեղը՝ արաբ, բագրատունիներէն*»[30]: Հայերը ինքնին բազմազանութիւն մը կը ներկայացնէին՝ հայախօսները, քրտախօսները, արաբախօսները:

ԳԽԿՅն, որ կը գործէր հայ երեք համայնքներու միացեալ հովանաւորութեան տակ, արտասահմանի հայ մամուլին միջոցաւ ահազանգ հնչեցուց՝ հայ գաղթականներուն օգնութեան ձեռք երկարելու յուզալի կոչերով, ներկայացնելով անոնց սրտաճմլիկ կացութիւնն ու կարիքները: Կոչերը անարձագանգ չմնացին: Հայկական հեռաւոր գաղութներէն գաղթականներուն դեղօրայք, հագուստեղէն եւ նիւթական օժանդակութիւն հասան: Օգնութեան փութացին նաեւ օտար միսիոնարներ

ու եւրոպական բարեսիրական շրջանակներ: Այսպէս՝ ԳԽԿՅն գործի մղելով նաեւ իր մասնաճիւղերը 19 Դեկտեմբեր 1929ի որոշումով շրջան կը ղրկէ բժիշկ ու մեծ քանակութեամբ դեղօրայք ու անմիջական խնամքի տակ կ'առնէ զանազան հիւանդութիւններէ տառապող 120 մանուկներ: Մալարիան ամէնէն սպառնալից հիւանդութիւնը կը հանդիսանար այս ճահճոտ միջավայրին մէջ: Նոյն օրերուն 47 հակ հագուստեղէն կը տրուի գաղթականներուն: Ամէնէն մտահոգիչը բնակարանային խնդիրն էր: Գաղթականները յաճախ երկու կամ երեք ընտանիքներով կը բնակէին իրենց կողմէ շինուած մէկ սենեակնոց հիւղերուն մէջ:

Վեր. Շիրաճեան 3 Մարտ 1930 թուակիր տեղեկագիրով կը խօսի ԳՏՅի անմիջական ընելիքներուն մասին, յայտնելով որ հայ անհատներու եւ հաստատութիւններու կողմէ տրամադրուած 1800 եւ օտար բարերարներէ եկած 1200 թրքական ոսկեդրամի հաշուէն 200 կամ 220 ընտանիքի ծրագրած է տրամադրել վրաններ, որպէսզի անոնք հաստատուին ու զբաղին երկրագործութեամբ ու անասնապահութեամբ: Իւրաքանչիւր ընտանիքի պիտի տրուին նաեւ մէկական եզ, ոչխար եւ այծ, երկրագործական անհրաժեշտ գործիքներ, երկու կամ երեք ամսուան համար բաւարար սննդամթերք: Յանձնախումբի առաջնահերթ գործն է այդ գարնան իսկ գտնել, գնել ու անոնց տրամադրել անհրաժեշտ հողատարածութիւնները: Ասոնցմէ զատ 50 ընտանիքներ նոյնպէս կրնան ինքնաբաւ ըլլալ, եթէ անոնց եւս տրամադրուի անհրաժեշտ մշակելի հողատարածք: «*Ասոնցմէ դուրս մեր պիւտճէի կարողութենէն դուրս կը մնայ օգտակար ըլլալ եւս 210 ընտանիքներու, որոնք Սուրիա անցած են: Ատոր համար 600 թրքական ոսկեդրամի կարիք պիտի զգացուէր: Եւ եթէ վրաններու փոխարէն հիւղեր պիտի հաստատուին, ինչ որ անխուսափելի է յառաջիկայ ձմրան պարագային, ապա 10-12 հազար թրքական ոսկեդրամէն ոչ պակաս գումարի մը կարիքը կը զգացուի: Բայց, այս ամբողջ խնդրին ամէնէն տխուր բաժինը այն է, որ նորեկներուն թիւը շարունակաբար կը բարձրանայ: Որոշ վստահելի աղբիւրներէն ելլելով կայ ընդհանուր վախ մը, որ մենք որեւէ ատեն կրնանք գտնուիլ Թուրքիայէն եկող 600-700 ընտանիքներու նոր գաղթի մը առջեւ*»[31]:

ԳՏՅի մեծագոյն իրագործումը կ'ըլլան Թէլ Պրաքի մէջ շինուած երկու գիւղեր՝ Սահակաշէնն ու Մեսրոպաշէնը[32]: ԳՏՅն նոյն հոգածութիւնը ցուցաբերած է նաեւ քամիշլիաբնակ գաղթականներուն նկատմամբ: Շիրաճեան միշտ շրջան կը գտնուի, գործի վրայ է:

Քամիշլիի, Տերիքի եւ Հասիչէի շրջաններուն մէջ պշերիկցիներու տեղաշարժերը տեւած են շուրջ հինգ տարի, մինչեւ որ անոնք մեծ մասով եկած հաստատուած են Քամիշլի եւ անոր մօտիկ տասնեակ մը գիւղերուն մէջ, որոնցմէ շատերը անոնց ձեռակերտներն են: Անոնք հողի մարդիկ էին, հողի կարօտով ապրող մարդիկ: Քաղաքին կեանքը նեղ եւ ճնշիչ կը թուէր անոնց:

Քամիշլիի շրջակայքը կը տարածուէին ընդարձակ դաշտագետիններ, արօր չտեսած պարարտ հողեր, որոնք սեփականութիւնն էին շրջանի արաբ շէյխերուն: 1930ականներէն սկսեալ, պշերիկցիները նախաձեռնեցին հայկական գիւղերու կառուցման աշխատանքին: Կարճ ժամանակի մը մէջ Քամիշլիի շրջակայքը կառուցուեցան շուրջ 25 զուտ հայկական գիւղեր՝ աղիւսաշէն բնակարաններով: Իւրաքանչիւր գիւղ ունեցաւ իր գիւղապետը (մուխթար):

Գիւղակերտումի այս իրագործումը նոր եռանդով համակեց պշերիկցիները, որոնք նախաձեռնեցին ցորենի եւ այլ արմտիքներու մշակման: Անոնք մշակեցին նաեւ բանջարանոցներ, խնամեցին ոչխարի հօտեր եւ արջառներ, իսկ կիները զբաղեցան հաւաբուծութեամբ, ինչպէս նաեւ ձմռան վառելիքի ապահովման եւ ուտեստեղէնի ամբարման աշխատանքով: Ժրաջան էին պշերիկցի կիները: Անոնք իրենց տնային աշխատանքին զուգընթաց՝ կ'օգնէին նաեւ իրենց ամուսիններուն դաշտային աշխատանքի:

Յիշեալ գիւղերէն իւրաքանչիւրը ունէր մէկէ աւելի թոնիրներ եւ ըմպելի ջուրի մատակարարման ջրհորներ: Գիւղերուն արտերը մեծաւ մասամբ կ'ոռոգուէին Ճաղճաղ Գետի ջուրերով:

Այս նոր գիւղերու կալուածատէր արաբ շէյխերը հիացած էին իտես պշերիկցի գիւղացիներու ժրաջանութեան, կորովին եւ արդիւնաբեր աշխատանքին: Նոյն շէյխերը իրենց կարգին կը վայելէին այս արդիւնաբեր աշխատանքին բարիքները: Անոնք ցանուած արմտիքի արդիւնքներէն կը ստանային տոկոսային իրենց բաժինը, որ «հասըլ» կը կոչուէր:

Նոյն թուականներուն, ընդհուպ մինչեւ 1940, այս շրջանակէն ներս կը տեղաւորուին նաեւ Բալուէն ու Բաղէշէն եկած հայեր, Մերտինէն արաբախօս կաթոլիկ հայեր՝ հաստատուելով գլխաւորաբար Քամիշլի, Հասիչէ եւ շրջանակի միւս գիւղերուն մէջ:

1945ին կը յիշուին հետեւեալ գիւղերը Ուլթուլթիէ, Հլըքօ, Տալաուիէ, Տպպանա, Աուեճա, Ապու Ճալալ, Թլսում, Ճուխա, Մլուքսարա, Շամասիէ, Համերա, Շէյխաճիլ, Ճնետիէ Մեծ, Ճնետիէ Փոքր, Չրքօ, Սլամալէք, Մասհատա, Հլելիէ, Տայօ, Հիմօ, Ճմաքէ, Զանտա, Հարպա, Քզըլճա, Ամրի, Տերիք, Մալքիէ, Հեքքօ, Ղզըլճաղ, Թարթափ, Թէլ Քէօչէք, Թէլ Սեմիր, Վանիկ (Ուանըքէ) եւն.:

4.- Չորրորդ փուլ.- Կը սկսի Ալեքսանտրէթի Սանճաքին Թուրքիոյ կցումին հետեւանքով ծայր առած վերջին գաղթով: Հայ եւ օտար բարեկամներու միջնորդութիւնները եւ ձեռք առած միջոցները կը փրկեն միայն Քեսապի շրջանը, որ կը կցուի Սուրիոյ Լաթաքիոյ Նահանգին: 1939ի առաջին ամիսներէն սկսեալ Ալեքսանտրէթի, Պէյլանի եւ Սուետիոյ հայոց գաղթի ճամփան կ'անցնէր Քեսապի շրջանէն: Ալեքսանտրէթի Սանճաքի արեւելեան շրջաններու՝ Գրըգխանի եւ Ռիհանիէի եւ անոնց շուրջ գտնուող նորաշէն հայ գիւղերու հայերը կ'անցնին Հալէպ: Նոր գաղթականներէն

ոմանք կը մնան Լաթաքիա, Քեսապ, Հալէպ, Դամասկոս, իսկ կարեւոր մէկ մասն ալ զանգուածաբար կ'անցնի Լիբանան: Քիւրտ Տաղի գիւղերու հայերը՝ Արֆալի, Վերին Թընզըրի եւն. կը ցրուին Լաթաքիոյ շրջանին մէջ[33]: Մուսա Լեռան Վաքըֆ գիւղը եւ Ալեքսանտրէթի ու Գրըգխանի մէջ հաւաքուած փոքրաթիւ հայեր չեն գաղթեր: Անոնց հոգեւոր հովանաւորութիւնը կը ստանձնէ Պոլսոյ Պատրիարքարանը:

Թուրքիայէն տարբեր ճամփաներով հայերու մուտքը Սուրիա կը շարունակուի մինչեւ 1950ականները:

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԻՒԵՐԸ 1920-1930ԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Յետ երկրորդ տարագրութեան՝ 1923ի վիճակագրութեան մը համաձայն Սուրիոյ հայոց թիւը (Սուրիան Լիբանանն ալ կը ներգրաւէ) մօտաւորապէս 150,000 հոգի է, հետեւեալ բաժանումներով. Հալէպ եւ շրջակայքը՝ 90,000, Պէյրութ՝ 18,000, Դամասկոս՝ 8000, Իսկենտէրուն՝ 8000, Լիբանանի մէջ ցրուած՝ 6000, Թարապլուս-Զղարթա՝ 5000, Պէյլ(ան)՝ 3000, Պաթրուն՝ 3000, Զահլէ եւ շրջակայ գիւղեր՝ 2000, Սուր եւ Սայտա՝ 3000, Ճիւնի՝ 2500, Ղազիր՝ 1500[34]: Պարզ է, որ բազմաթիւ բնակավայրեր չեն ներգրաւուած այս ցանկին մէջ, եւ ատիկա հնարաւոր ալ չէր այդ պայմաններուն մէջ: Դեռ պարզ չէր, ու՛ր եւ ո՛րքան հայ խլեակներ կային մանաւանդ Սուրիոյ ամբողջ տարածքին վրայ: Կար նաեւ այն, որ Սուրիա մտնող հայ գաղթականներու հոսքը կը շարունակուէր ու միւս կողմէ՝ Սուրիոյ ճամփով ուրիշ երկիրներ անցնող գաղթականներու արտահոսք մըն ալ կը շարունակուէր նաեւ այդ եւ յաջորդ տասնամեակներուն մանաւանդ՝ դէպի Լիբանան, Յորդանան, Պաղեստին, Իրաք, Կիպրոս, Եւրոպա ու Հարաւային Ամերիկայի երկիրներ: Ուստի Սուրիոյ հայութեան ընդհանուր թիւերը երբեք չեն կրնար ճշգրիտ կամ նոյնիսկ մօտաւոր ըլլալ:

Մեծագոյն գաղթակայանը կը հանդիսանայ Հալէպը, մանաւանդ Կիլիկիոյ պարպումէն ետք: Սահակ կաթողիկոսէն ղրկուած նամակի մը մէջ կը յայտնուի, որ 1923ին Հալէպի մէջ 50,000 բնիկ եւ տարագիր հայեր կան, մասամբ վարձու խաներու մէջ, մեծաւ մասամբ վրաններու տակ զետեղուած. «*Մուհարրէմ ամիսը հասնելու վրայ է եւ ամէն ոք շուարած է, ո՞վ եւ ուրկէ՞ նոր վարձքեր պիտի վճարուին: Րելիֆը որբանոց արհեստանոց մը ունի ինն հարիւր եւ աւելի որբերու: Բարեգործականը 100 որբերու արհեստանոց ունի*»[35]: Նոյն թուին Ազգային Միութեան կողմէ (Տքթ. Ա. Ճեպէճեան՝ ատենադպիր եւ Գր. Վրդ. Փեհլիւանեան) Ամերիկայի Առաջնորդ Տիրայր եպիսկոպոսին ղրկուած նամակին մէջ կը յայտնուի, որ Հալէպի մէջ կան աւելի քան 50,000 հայեր, որոնց 20,000ը Իզմիրի վերջին անկումէն յետոյ Անատոլուէն եւ Կիլիկիայէն եկած են[36]:

*Սուրիահայ Տարեցոյց*ը 1923ի վիճակագրութեամբ մը հետեւեալ պատկերը կու տայ.

Համա-Հոմս.- Եղած են Ընդհ. Պատերազմին երկու մեծ հանգուաններ հայ տարագրութեան եւ նպաստած անոնց իրենց ապրուստի աժանութեամբ եւ բնիկ ժողովուրդին աշիրէթական աւանդական եւ օրինակելի կարգ անցած հիւրասիրութեամբ: Այս երկու քաղաքները ներկայիս կը պարունակեն 1200 տարագիր հայութիւն: Համա ունի քահանայ եւ դպրոց մը 40 աշակերտով:

Դամասկոս.- Սուրիահայ երրորդ մեծ կեդրոնը, ներկայիս կը պարունակէ 10,000է աւելի տարագիր հայութիւն մը, դպրոցը ունի 480 աշակերտ, Առաջնորդարան եւ Ազգային Միութիւն, որ տեղական եւ ֆրանսական իշխանութիւններէն ճանչցուած է պաշտօնապէս:

Իսկենտէրուն, Պէյլան, Գրըգխան.- Ունին շուրջ 12,000 հայութիւն մը, մեծագոյն մասամբ տարագիր: Իսկենտէրուն ունի իր եկեղեցին, Առաջնորդարանը, Ազգ. Միութիւնը, Ազգ. վարժարանը եւ ՀԲԸՄի Նուպարեան վարժարանը՝ գաղթականաց յատուկ:

Վերոյիշեալ քաղաքներէն դուրս կը մնան եւ սակայն Սուրիոյ սահմաններուն մէջ կ'իյնան Անտիոք՝ իր 200-300 տեղացի հայութիւնով, Լաթաքիա՝ 500 հայութիւն, Սուետիոյ վեց գիւղերը՝ Պիթիաս, Եողուն Օլուք, Հաճի Հապիպլի, Խտրպէկ, Քապաքլը[37] եւ Քեպուսիէ իրենց շուրջ 6000 հայութիւնով: Այս գիւղերը ունին եկեղեցի եւ դպրոցներ՝ ՀԲԸՄի հովանաւորութեան տակ: Աւելի հարաւը՝ Քեսապի շրջան, իր զուտ անխառն եւ բնիկ հայութիւնով, որ ունի նմանապէս իր դպրոցներն ու եկեղեցիները, 4000 հայ բնակչութիւն:

Սուրիոյ մէջ գտնուող Ազգ. եւ Նպաստամատոյցի որբանոցներու 10,000 աւելի որբերն ալ հաշուելով, հայութեան թիւը կ'ըլլայ 106,000, իսկ տեղացիներն ալ միասին՝ մօտ 150,000 հայութիւն կ'ունենանք[38]:

Սահակ կաթողիկոս Հայ Տարագրելոց Ամերիկայի Կեդր. Նպաստամատոյց Մարմնին (ՀՏԱԿՆՄ) ուղղած իր վերոյիշեալ նամակին մէջ, կարգ մը շրջանակներու 1923ի տուեալները քիչ մը տարբեր կը ներկայացնէ.

Համա-Հոմս.- 1200 տարագիր: Առաջինը ունի քահանայ, որ վարձուած սենեակի մը մէջ պաշտամունք կը կատարէ եւ դպրոցի կը ծառայեցնէ: Հոմս՝ ո՛չ քահանայ եւ ոչ ալ դպրոց: Հոգեւոր մատակարարութիւնք հին ասորիները կը կատարեն, շատ քիչ անգամ այցելու քահանայ մը, պատահական:

Լաւոդիկէ եւ շրջակայք.- 1800 տարագիրք, Երուսաղէմի վիճակ է, տեսուչ վարդապետ մը եւ արաբախօս քահանայ մը ունի, նոյնպէս եկեղեցի եւ դպրոց, որուն նպաստած է Բարեգործականը մասնաւոր գումարով մը:

Դամասկոս.- 11,000 տարագիր, վիճակ՝ Երուսաղէմի, ունի եկեղեցի եւ երկու տարագիր քահանայ, դպրոց 480 երկսեռ ուսանողներով:

Տարագիր հազարաւոր մանկտիք փողոցներու մէջ կը թափառին: Վարձուած հողերու վրայ՝ վրանաբնակ մեծ մասամբ: Այստեղ ալ յառաջիկային վարձու խնդիրը կը մտատանջէ տարաբաղդ տարագիրները[39]:

Ըստ 1928ի վիճակագրութեան մը՝ Սուրիոյ հայութեան ընդհանուր թիւն է 106,231 հոգի՝ հետեւեալ պատկերով.- Հալէպ՝ 40,000, Ճարապլուս՝ 1700, Գրըգխան՝ 2500, Պէյլան՝ 400, Իսկենտէրուն՝ 5000, Ֆարթըսլի՝ 175, Քեսապ՝ 3500, Մուսատաղի գիւղեր՝ 4000, Շամ՝ 9000, Հոմս՝ 700, Պապ՝ 175, Մումպուճ՝ 311, Րաքքա՝ 341, Անթըսսա՝ 74, Խըրփոթրաս (՞)՝ 45, Այն Արուս՝ 40, Արաբ Փունար՝ 319, Ասլանթաշ՝ 15, Տէր Զօր՝ 400, Ֆաթիճէ (՞)՝ 70, Ռասուլ Այն՝ 100, Ազէզ՝ 1000, Էքպէզ Մէյտան՝ 100, Սուետիէ քէօյլէրի (Սուէյտայի գիւղերը՝ տուրզիներու շրջան)՝ 300, Լաթաքիա՝ 1200, Քեսապի գիւղերը՝ 1000, Պանիաս՝ 60, Սելիմիէ՝ 110, Պէյթ (՞)՝ 100, Համամ՝ 60, Սովուք Օլուք եւ Աթըք՝ 300[40]:

Յաջորդ տասնամեակներուն, մինչեւ 1940ականները, դարձեալ՝ Սուրիոյ մէջ հայ տարրի վերաբերեալ ամբողջական մարդահամարներ ծանօթ չեն մեզի: Կան ընդհանուր մօտաւոր թիւեր: Բաւական վաւերական են 1930-40ականներու հայ առաքելական թեմական իշխանութիւններու տարեկան վիճակագրութիւնները Կաթողիկոսարանի *Հասկ* պաշտօնաթերթին մէջ: Հայ կաթողիկէ ու աւետարանական համայնքները հազուադէպօրէն հրատարակած են նման աղիւսակներ:

ՍՈՒՐԻԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ 1920ԱԿԱՆՆԵՐՈՒՆ

[13] «Փոքր Ասիան Առանց Քրիստոնեայի», *Հայաստանի Կոչնակ,* 20 Յունուար 1923, էջ 79բ:

[14] Կրինշիլտս, էջ 253:

[15] *Եփրատ,* 10 Մայիս 1930:

[16] «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ,* 2 Փետրուար 1932, էջ 557:

[17] James Bryce and Arnold Toynbee, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, Presented by Viscount Grey of Falloden by Viscount Bryce,*, Uncensored Edition, ed. and with an introduction by Ara Sarafian, Gomidas Institute, Great Britain, 2000, վաւերագիր թիւ 143, էջ 564-567:

[18] Նոյն, վաւերագիր թիւ 139, էջ 550:

[19] «Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ,* համապատասխանաբար՝ 23 Յունիս 1923, էջ 794բ. 21 Յուլիս 1923, էջ 919բ:

[20] Այս շրջանակի մասին նիւթեր ունին. Թղթակից, «Հայ Կեանքը Դամասկոսի Մէջ», *Հայաստանի Կոչնակ,* 2 Փետրուար 1924, էջ 146. նաեւ՝ Անստորագիր, «Վիճակագրական Տեղեկութիւններ Դամասկոսի Անցեալի Եւ Ներկայի Մասին», *Սուրիահայ Տարեցոյց, Բ. Տարի,* էջ 257. նաեւ՝ «Դամասկոսի Վերջին Դէպքը, Խմբագրական», *Սուրիահայ Մամուլ,* 25 Հոկտեմբեր 1925. նաեւ՝ «Երկու Կարեւոր Փաստաթուղթեր», *Սուրիահայ Մամուլ,* 20 Յունուար 1926. նաեւ՝ Սուրէն Վրդ. Քեմհաճեան, «Դամասկոսի Հայոց Սուրբ Սարգիս Վանքը Եւ Հին Ու Նոր Գաղութը», *Սուրիահայ Տարեգիրք, Ա. Տարի,* էջ 219. նաեւ՝ *Դամասկոսի Միացեալ Վարժարանի Քսանհինգամեայ Յոբելեան* (1929-1954), Հալէպ, 1956, Տպ. Արեւելք. նաեւ՝ P. Pierre Atamian, *Histoire de la Communauté Armenienne de Damas,* Beyrouth, 1964:

[21] Այս մասին կարդալ հատորին մէջ Յ. Պարանի յօդուածը:

[22] Այս շրջանակին մէջ հայերու վերաբնակեցման ու նոր գիւղեր հաստատելու մասին տե՛ս՝ Յակոբ Չօլաքեան, *Քարէն Եփփէ Հայ Գողգոթային Եւ Վերածնունդին Հետ,* 2001, Հալէպ, Տպ. Արեւելք, էջ 105-134. նաեւ՝ Ն. Նարկիզեան, «Ազգային Կեանքը Ճարապլուսի Մէջ», *Եփրատ,* 13 Մարտ 1949. նաեւ՝ Անցորդ, «Թէլ Ապիատ», *Արեւելք օրաթերթ,* 20 Մայիս 1947:

[23] *, «Տէր Զօրի Կեանքէն», *Եփրատ,* 1927, թիւ 37. նաեւ՝ Մկրտիչ Թերզեան, «Եկեղեցի Եւ Դպրոց Եփրատի Անապատային Ափերուն Վրայ», *Եփրատ,* 12 Դեկտեմբեր 1931. նաեւ՝ Ղ. Տէր Ղազարեան, «Քրդախօս Հայերու Մէջ», *Նոր Աւետարեր,* 1934, թիւ 10. նաեւ՝ Գրիգոր Մ. Լոյթեան, «Հայերը Հիւսիսային Սուրիոյ Մէջ», *Հայաստանի Կոչնակ,* 5 Սեպտեմբեր 1936, էջ 855. նաեւ՝ Ս. Բախտիկեան, «Հայ Դպրոցը Քամիշլիի Մէջ», *Արեւելք Օրաթերթ,* 25 Մարտ 1947. նաեւ՝ Ճորճ Չամիչեան, «Ճեզիրէի Հայութիւնն Ու Հայ Վարժարանները», *Տեղեկատու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովի, Պրակ Բ-Գ,* Ապրիլ, 1951. նաեւ՝ Անստորագիր, «Կեանքը Քամիշլիի Մէջ», *Արեւելք,* 29 Հոկտեմբեր 1948. նաեւ՝ Պատ. Պարգեւ Օրջանեան, «Քամիշլիի Հայ Աւետ. Համայնքը», *Գեղարդ Տարեգիրք, Բ. Գիրք,* էջ 373:

[24] *Եփրատ,* 9 Նոյեմբեր 1927:

[25] Կիրակոս Գրիգորեանի վկայութիւնը, անգլերէն, մեքենագիր, երկու էջ, *Հայ Գաղթականաց Կեդրոնական Յանձնախումբի Տեղաւորման Յանձնախումբի Թղթապանակ,* անձնական արխիւ:

[26] Նոյն, Հալէպ, 12 Փետրուար [1]930 թուակիր փաստաթուղթ. հայերէն, մեքենագիր, երկու էջ:

[27] Հայ Գաղթականաց Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբին անդամ եւ Տեղաւորման Յանձնախումբի ատենապետ Վեր. Շիրաճեան մեծ վաստակ ունի

Սուրիոյ մէջ հայ գաղթականները տեղաւորելու գործին մէջ: Ան է փաստօրէն գաղթականները ընդունողը, տեղաւորողը, նպաստներ հայթայթողն ու բաշխողը, բնակավայրերու տեղը որոշողը, գնողը, տուներու կառուցման հսկողը եւն.: Շիրաճեան բոլորին հետ կապուած թղթակցութիւնները, արձանագրութիւնները, պայմանագիրերը, հազարաւոր առանձին նիւթեր հաւաքած է յատուկ թղթապանակներու մէջ իբրեւ Տեղաւորման Յանձնախումբի արխիւ: Մեծ կարեւորութիւն կը ներկայացնեն 1930-1939ականներու այն փաստաթուղթերը, որոնք կապ ունին Սղերդի, Տիգրանակերտի եւ Բալուի կողմէն, յատկապէս Պշերիկէն, այդ տարիներուն գաղթած հայոց:

[28] Նոյն, *Վեր. Ա. Շիրաճեանի 31-3-1930 թուակիր տեղեկագիրը,* անգլերէն, ձեռագիր 11 էջ:

[29] Նոյն:

[30] Օրջանեան, «Քամիշլիի Հայ Աւետ. Համայնքը», էջ 374:

[31] Հայ Գաղթականաց Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբի Տեղաւորման Յանձնախումբի թղթապանակ, *Վեր. Ա. Շիրաճեանի 31-3-1930 թուակիր տեղեկագիրը,* անգլերէն, ձեռագիր 11 էջ:

[32] Տե՛ս նաեւ՝ Յակոբ Ճղլեան, *Սփուերում Մնացած Կեանք,* Երեւան, 1991:

[33] Նախլէ Ուարտ, *Հատրաթ Անթաքիա Ապր ալ-Ուսուր,* Սան Փաուլօ, 1956, էջ 235-236 (արբ.). նաեւ՝ Պայրամեան, էջ 21. նաեւ՝ Մարտիրոս Գուշագճեան, «Մուսալեռցիք Այնճարի Մէջ»՝ Գուշագճեան եւ Մատուռեան, էջ 498-500:

[34] «Շաբաթական Քրոնիկ», *Հայաստանի Կոչնակ,* 23 Յունիս 1923, էջ 794բ:

[35] «Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ,* 21 Յուլիս 1923, էջ 919բ:

[36] «Հայ Գաղթականութիւնը», *Հայաստանի Կոչնակ,* 14 Ապրիլ 1923, էջ 469ա:

[37] Հաւանաբար նկատի ունի Վաքըֆ գիւղը. Գապագլին նախապէս թրքաբնակ գիւղ էր, ուր յետոյ կու գան հաստատուելու զէյթունցի գաղթականներ. կը կոչուի Նոր Զէյթուն:

[38] «Սուրիահայոց 1923-ի Ամփոփ Վիճակագրութիւնը», *Սուրիահայ Տարեցոյց, 1924, Ա. Տարի,* պատր.՝ Մ. Աճէմեան, Մ. Սիսեռեան, Ե. Ոսկերիչեան, Գահիրէ, Տպ. Զարեհ Պէրպէրեան, 1924, էջ 237-238:

[39] «Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ,* 21 Յուլիս 1923, էջ 919-920:

[40] «Գաղութներ», *Հայաստանի Կոչնակ,* 10 Մարտ 1928, էջ 313բ:

[41] Չօլաքեան, *Քեսապ, Ա. Հտր.*, 119:

[42] «Տեղեկութիւններ Սուրիոյ Հայ Գաղթականութեան Մասին», *Հայաստանի Կոչնակ,* 17 Նոյեմբեր 1923, էջ 1459ա:

[43] «Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ,* 2 Ապրիլ 1921, էջ 486բ. նաեւ՝ Գուշագճեան եւ Մատուռեան, էջ 486ա:

[44] *Ոսկեմատեան, Ա. Հտր.*, էջ 342: Հեղինակը դպրոցները կը վերագրէ ՀԲԸՄի:

[45] Յակոբ Չօլաքեան, *Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան Վարժարանի (1927-2007),* Հալէպ, 2007, էջ 13:

[46] Գուշագճեան եւ Մատուռեան, էջ 486բ:

[47] «Վիճակագրութիւն Ճէպէլ Մուսայի Հայ Գիւղերուն», *Սուրիահայ Տարեցոյց,* Բ. Տարի, էջ 242:

[48] *Նոր Աւետաբեր,* 1929, թիւ 12, էջ 376, թիւ 13, էջ 411-412:

[49] Յ. Կիւրլէքեան, «Պէյլանի Կեանքէն», *Հայաստանի Կոչնակ,* 29 Փետրուար 1936, էջ 207. նաեւ՝ *Նոր Աւետաբեր*, հայատառ, 1931, թիւ 20, էջ 476:

[50] Յ. Կիւրլէքեան, «Պէյլան Աւանը», *Հայաստանի Կոչնակ,* 16 Մարտ 1935, էջ 254:

[51] «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 23 Օգոստոս 1930, էջ 1083ա. նաեւ՝ Մ. Պէյլէրեան, «Կեանքը Սուետիոյ Լեռնաշխարհին Մէջ», *Սուրիահայ Մամուլ*, 6, 11 եւ 13 Նոյեմբեր 1925:

[52] Մ. Արամայիս, «Հայ Կեանքը Դամասկոսի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 10 Նոյեմբեր 1923, էջ 1431. նաեւ՝ Սիրական Օրջանեան, «Տպաւորութիւններ Դամասկոսի Վրանաքաղաքի Այցելութենէն», *Սուրիահայ Մամուլ*, 3 Յուլիս 1925. նաեւ՝ Անստորագիր, «Վիճակագրական Ծանօթութիւններ Դամասկոսի Անցեալի եւ Ներկայի Կեանքէն», *Սուրիահայ Տարեցոյց*, Բ. տարի, 1925, էջ 254-255. նաեւ՝ Գապպէնճեան, էջ 256. նաեւ՝ Անստորագիր, «Սուրիոյ եւ Լիբանանի Հայոց Վիճակագրութիւնը», *Սուրիական Ալպոմ*, Գ. Տարի, 1929, էջ 110:

[53] Չօլաքեան, *Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան*, էջ 11-20:

[54] Նոյն, էջ 14-15:

[55] Չօլաքեան, *Քեսապ, Ա. Հտր.*, էջ 245:

[56] Լեւոն Յ. Լեւոնեան (1884-1943) աւարտած է Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ Քոլէճը: Ձինադադարէն ետք կը դառնայ Այնթապ, ուր կը վերակազմէ Ուսումնասիրաց Երիտասարդական Ընկերակցութիւնը (հիմնուած 1905ին), որ Այնթապի ինքնապաշտպանութեան կորիզներէն, իսկ ինք զինուորական ղեկավարներէն մէկը կ'ըլլայ: 1922էն ետք Հալէպի մէջ վերակազմուած Ուսումնասիրաց Ընկերակցութեան նախագահն է, իսկ 1925էն ետք Ուսումնասիրաց Վարժարաններու տէրն ու տնօրէնը: Լեւոնեանի գլխաւորած գործը առաջին իսկ օրէն կ'ունենայ հակառակորդներ: 1943 սպանուած կը գտնուի իր դպրոցին մէջ: Արամ Շորվօղլեան այսպէս կը գրէ. «*Տարիներ եւրք, Էմմանուէլ Եկեղեցւոյ մէջ, Ուսումնասիրացի դէմ նախ պաղութիւն, ապա հալածանք սկսաւ: Ուսումնասիրացի հետ վէճին արմատները գուցէ հինէն, Այնթապի Ա. եւ Բ. Եկեղեցիներու միջեւ եղած հարցերուն կապուած էին*» (Արամ Շորվօղլեան, «Կիսադարեան Յուշեր Հայ Աւետարանական Կեանքէ», *Ջանասէր*, 1974, թիւ 17-24, էջ 380):

[57] Միութեան ու անոր դպրոցական ցանցին մասին տե՛ս՝ *Սիրել եւ Ծառայել (Լեւոն Յ. Լեւոնեան, Մշակը եւ Իր Հունձքը)*, Խմբ.՝ Լեւոն Վարդան, Պէյրութ, Տպ. Սեւան, 1960, 112 էջ:

[58] Անարատ Յղութեան Քերց Սուրիոյ դպրոցներուն մասին տե՛ս՝ Յովհաննէս Արք. Նազլեան, *Պատմական Տեսութիւն Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութեան*, Պէյրութ, Կաթողիկէ Տպարան, 1948:

[59] Սուրիոյ հայ աւետարանական համայնքներու մասին տե՛ս՝ Խրլոբեան, *Ոսկեմատեան*:

[60] Յակոբ Չօլաքեան, «Ալեփփօ Գոլէճ», *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք*, Ե. Տարի, Հալէպ, 1996, էջ 356-364:

[61] «Միացում Երկու Եկեղեցիներու», *Ջանասէր*, ԻԵ. Տարի, 15 Յուլիս 1962, էջ 212:

[62] Այդ մասին կը պատմեն Քեսապի աւետարանական եկեղեցիներու եւ Հալէպի Սթասիոնին թղթակցութիւնները (Յակոբ Չօլաքեան, *Քեսապ, Գ. Հտր.*, «Ազգայնական Շարժումը Հայ Աւետարանական Համայնքին Մէջ» հրապարակումներու բաժինը, էջ 411-461):

[63] Վարդան Վ. Թէքէեան, «Նոր Թեմեր Ու Նոր Վիճակաւորներ», *Աւետիք*, 1954, թիւ 11-12, էջ 186:

[64] «Թեմերէ եւ Այլ Լուրեր», *Աւետիք*, 1943, թիւ 5-8, էջ 47. նաեւ նոյն՝ 1954, թիւ 11-12, էջ 186:

[65] Տքթ. Յակոբ Թօփճեան, «Հայութիւնը Սիւրիոյ Մէջ, Բ.», *Հայաստանի Կոչնակ*, 14 Յուլիս 1928, էջ 874բ:

[66] «Գաղութներ», էջ 313բ:

[67] *Տաթեւ Տարեգիրք*, Ե. Տարի, Հալէպ, Տպ. Արաքս, 1929, էջ 388:

[68] «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 2 Մայիս 1931, էջ 572ա:

[69] Չօլաքեան, *Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան*, էջ 124-125:

[70] Վարդան Եպս. Տեմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեան, Ա. Հրր.*, էջ 327-328. նաեւ՝ *Հասկ*, 1939, թիւ 11-է-թ, էջ 175:

[71] Անստորագիր, «Դամասկոսի Թեմի Գործերը», *Հասկ*, 1934, Հոկտեմբեր, էջ 82բ:

[72] Պ. Չպուքճեան, «Ալաւիթ Պետութեան Հայերը», *Սուրիահայ Տարեգիրք*, Ա. Տարի, էջ 139:

[73] «Լրատու Հայ Աւետ. Եկեղեցիներու», *Ջանասէր*, ԺԶ. Տարի, 1 Փետրուար 1953, էջ 94:

[74] *Խօսնակ*, Պէյրութ, 1960, Գ. Տարի, պրակ Զ. (Ի.), էջ 197:

[75] Ցանկը պատրաստուած է յետ մեր երկամեայ ուսումնասիրութեան, ուր տպագիր, արխիւային եւ դաշտային նիւթերու հիման վրայ շարադրած ենք բնակավայրերու եւ այնտեղ գործած դպրոցներու նկարագրութիւնը: 1946էն առաջ նման ամբողջական ցանկի մը չենք հանդիպած:

The Settlement of the Survivors from the Genocide in Syria and the Organization of the Syrian-Armenian Education and School Network (1918-1946)

(Summary)

Hagop Cholakian
hagopcholakian@hotmail.com

After WWI Armenian refugees settled in Syria in four stages: a) after the departure of the Ottoman armies, Armenians returned to their native areas which fell within the borders of Syria. Thirty-two Armenian localities were thus revived, including Aleppo and Damascus; b) after the retreat of the French forces from Cilicia, Aintab and Ourfa, a new outflow took place, and these refugees generally settled in the western areas of Syria; c) between 1927 and 1932 a new wave of refugees from the areas of Diarbakir and Bitlis (mainly Kurdish speaking) settled in Ras Ul Ayn, Hasake, and the vicinity; d) with the ceding of Alexandretta to Turkey a new wave of refugees poured into Latakia, Aleppo, Damascus and Lebanon. The repatriation of 1946-47 was followed by a flow from rural to urban areas, to Lebanon and abroad.

The paper covers the conditions during the establishment of these settlements intertwined with the evolution of the Syrian Armenian schools until the late 1940s. The article analyses the nature of these schools, their educational level, their founding organizations/institutions, the denominational communities sponsoring them, their networking, the jurisdiction they were put under, the development of secondary schools and the contribution they made to the Armenian community of Syria.

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՀԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԸ (Ակնարկ)

Նորա Արիսեան
noraarissiandeputy@gmail.com

ՄՈՒՏՔ

Սուրիահայ պատմագրութեան մէջ, ընդհանրապէս հայոց մասնակցութիւնը Սուրիոյ խորհրդարանական կեանքին եւ անոր պատմութիւնը բովանդակալից կերպով չեն լուսաբանուած: Թէ՛ հայագիտութիւնը, թէ՛ Միջին Արեւելքի եւ ընդհանրապէս հայկական մամուլը շատ քիչ անդրադարձած են սուրիահայ երեսփոխաններուն:

Սոյն աշխատութիւնը կը միտի համառօտակի ծանօթացնել 1928-2011 շրջանի տարբեր հանգրուաններուն պաշտօնավարած սուրիահայ 21 երեսփոխաններու ծաւալած գործունէութիւնը խորհրդարանական կեանքէն ներս[1]:

1920ականներուն հիմնուեցաւ Սուրիոյ խորհրդարանը՝ «Հիմնա-դիր Խորհուրդ» անունով[2]: Անոր պարտականութիւնն էր մշակել երկրին սահմանադրութիւնը: Սահմանադրութեան ծնունդէն ետք, 10 եւ 24 Ապրիլ 1928ին տեղի կ'ունենան խորհրդարանական ընտրութիւններ, որոնց յաջողութիւն կ'արձանագրեն Ազգային Միասնութիւնը եւ այլ ազգայնական թեկնածուներ:

«Հիմնադիր Խորհուրդ»ին մաս կը կազմէին չորս հայ երեսփոխաններ.- Հալէպէն՝ Նիկոլա Ճանճի (Ճանճիկեան)[3], Ֆաթհալլա Ասիուն[4] (փոխնախագահ) եւ Միհրան Բիւզանդեան[5], իսկ Ալեքսանտրէթէն՝ Մովսէս Տէր Գալուստեան[6]:

9 Յունիս 1928ին տեղի կ'ունենայ խորհրդարանի անդրանիկ նիստը, զոր կը նախագահէ ժողովականներու երիցագոյն անդամ Մոհամմէտ Ատանալին: Իրեն կ'աջակցին կրտսերագոյն անդամներ՝ Սաիտ ալ Ղազին եւ Ճանճին:

Հիմնադիր Խորհուրդի այս անդրանիկ նիստին կ'ընտրուի նաեւ խորհրդարանին դիւանը, հետեւեալ կազմով.- Հաշէմ ալ Աթասի (նախագահ), Ֆաուզի ալ Ղազի (43 ձայն) եւ Ֆաթհալլա Ասիուն (37 ձայն) (փոխնախագահներ):

Նոյն այս նիստին, խորհրդարանի դիտորդներ կ'ընտրուին Սաատալլա ալ Ժապրին (57 ձայն), Ճանճին (52 ձայն) եւ Ֆախրի ալ Պարուտին (49 ձայն): 67 անդամներէ բաղկացած այս խորհուր-դին գլխաւոր յառաջադրանքը կ'ըլլայ Սուրիոյ սահմանադրութիւնը մշակող Սահմանադիր Յանձնաժողովի մը յառաջացումը:

27 անդամներէ բաղկացած «Սահմանադիր Յանձնաժողով»ը կ'ընտրուի Իպրահիմ Հանանոյի նախագահութեամբ: Յանձնաժողովին

մաս կը կազմեն հայ երեսփոխաններ՝ Տէր Գալուստեան եւ Բիւզանդեան[7]: Վերջինս անդամ կ'ընտրուի 11 անդամներէ բաղկացած քուէախոյզ յանձնաժողովին եւս:

Այդ նիստին, ծայր կ'առնէ խորհրդարանի երդման բանաձեւի քննարկումը, ուր հայ երեսփոխաններ՝ Ճանճի եւ Բիւզանդեան, կարծիք կը յայտնեն բնագրի փոփոխութեան եւ բանաձեւին շուրջ:

13րդ նիստին, 7 Օգոստոս 1928ին, տեղի կ'ունենայ սահմանադրութեան նախագիծի տաք քննարկումը, մանաւանդ որ Սուրիան բաժնուած էր ինքնկառավարուող աշխարհագրական շրջաններու եւ պայքար կը մղուէր անջատողականութեան դէմ ու կը վճռուէր Սուրիոյ միասնակա՞ն թէ՞ դաշնակցային պետութեան կարգավի-ճակը[8]: Այլոց շարքին ելոյթ կ'ունենայ նաեւ Ճանճի, որ իրաւաբա-նական տեսակէտեր պարզելէ ետք, կ'անդրադառնայ նախագահի իրաւասութիւններուն ու ժամկէտին, գործադիր մարմնի իրաւասու-թիւններուն եւ կրօնական փոքրամասնութիւններու հարցին:

Միւս կողմէ, Ալեքսանտրէթի երեսփոխանները իրենց ելոյթներով համաձայն կը գտնուին Սուրիոյ միասնականութեան, պայմանաւ որ Ալեքսանտրէթը պահպանէ իր իրաւասութիւնները:

Սուրիոյ 1932ի խորհրդարանին մաս կը կազմեն չորս հայ երեսփոխաններ՝ Տէր Գալուստեան (կ'ընտրուի դիտորդ, աւելի ուշ՝ Ներքին Հարցերու Յանձնաժողովի անդամ), Ճանճի, Հանրի Հընտիէ[9] եւ Հրաչ Փափազեան[10] (կ'ընտրուի Գիւղատնտեսական Յանձնաժողովի, իսկ երկրորդ նստաշրջանի 4րդ նիստին՝ 16 Մայիս 1933ին, Արդարադատութեան Յանձնաժողովի անդամ): 29 Հոկտ. 1932ի նիստին, փոխնախագահները կը փոխարինուին Հանրի Հընտիէով եւ Ֆարէս ալ Զըղպիով:

1937ի Սուրիոյ խորհրդարանին մաս կը կազմէին հինգ հայ երեսփոխաններ՝ Ճանճի, Ասիուն, Հրանդ Սիւլահեան[11], Պետրոս Միլլէթպաշեան[12] եւ Տէր Գալուստեան:

Այս խորհրդարանի երկրորդ նստաշրջանի 20 Հոկտեմբեր 1937ի երկրորդ նիստին, Սիւլահեան մեծամասնութեամբ կ'ընտրուի Ազգային Տնտեսութեան Յանձնաժողովի անդամ, իսկ Տէր Գալուստեան եւ Միլլէթպաշեան՝ Արդարադատութեան Յանձնաժողովի անդամներ:

Միլլէթպաշեան աշխուժ գործունէութիւն կը ծաւալէ խորհրդա-րանին մէջ: 1937ին ընթացող նիստերուն ատենագրութեանց մէջ իյայտ կու գան անոր ներկայացուցած տեղեկագիրերը: Ակներեւ է նաեւ Սիւլահեանի աշխուժ մասնակցութիւնը զանազան օրէնքներու մշակման, մանաւանդ՝ Արդարադատութեան Յանձնաժողովի պարտքերու օրէնքի նախագիծին առնչութեամբ:

Այս խորհրդարանի երրորդ նստաշրջանին, 22 Մարտ 1938ին, խորհրդարանի նախագահ Ֆարէս Խուրի կը հաղորդէ երեսփոխան

Միլլէթպաշեանի մահուան լուրը, կը յիշէ անոր բարեմասնութիւնները իբրեւ ազնիւ եւ յարգարժան անհատականութիւն եւ բարձր գիտակցութեան տէր անձնաւորութիւն, ու ներկաները կը հրաւիրէ մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգելու յիշատակը հանգուցեալին:

Նոյն նստաշրջանի 24րդ նիստին, 31 Մայիս 1938ին, Սիլաահեան տեղեկագիր մը կը ներկայացնէ, ուր սուրիական կառավարութիւնը կը նմանցնէ նորածինի, որ կարիքը ունի խնամքի: Ան իր ելոյթին մէջ կոչ կ'ուղղէ խորհրդարանականներուն՝ հեռու մնալու բանավէճերէ եւ տարակարծութիւններէ, որպէս ազգի ներկայացուցիչներ: Ընդգծելով որ ներկաներուն միակ նպատակը խաղաղութեան հասնիլն է, ան իր գործակիցները կը հրաւիրէ լրջութեան եւ համագործակցութեան: Առ ի պատասխան, նախագահը շնորհակալութիւն կը յայտնէ նման ազնիւ մօտեցումին:

Չորրորդ նստաշրջանի անդրանիկ նիստին, 19 Նոյեմբեր 1938ին, երեսփոխաններ կ'ընտրուին Սիլաահեան, Արտաշէս Պօղիկեան[13] եւ Մովսէս Տէր Գալուստեան:

1938ի խորհրդարանական նսատշրջանին, երբ խորհրդարանի նախագահն էր Ֆարէս Խուրի, Սիլաահեան կ'ընտրուի Ազգային Տնտեսութեան Յանձնաժողովի անդամ, Տէր Գալուստեան՝ Արդարադատութեան եւ Սահմանադրութեան Յանձնաժողովի, Պօղիկեան՝ Բողոքագիրերու եւ Ֆինանսական Օրէնքներու Յանձնաժողովներու անդամ:

Խորհրդարանի հինգերորդ նիստին, 10 Դեկտեմբեր 1938ին, Կրթութեան Հարցերու նախարարին ներկայութեամբ, կ'ընթերցուի Պօղիկեանի ներկայացուցած տեղեկագիրը՝ կրթութեան մակարդակի բարելաւման ու մանաւանդ անձնական դպրոցներու հոգատարութեան պակասի մասին: Նախարարը կը գնահատէ Պօղիկեանի տեսակէտերը եւ պաշտպանած նպատակը:

Պօղիկեանի երկրորդ տեղեկագիրը կը վերլուծէ ուսուցիչներու կարգի բարձրացման հարցը: Նկատի ունենալով իրաւազրկուած ուսուցիչներուն պարագաները, Պօղիկեան օրինագիծ մը կը ներ-կայացնէ խորհրդարանին, որ իր կարգին կը փոխանցէ Կրթու-թեան Յանձնաժողովին: Պէտք է նշել որ Պօղիկեան այլ բնագա-ւառներու հարցերով եւս առաջարակներ ներկայացուցած է, ինչ-պէս՝ Հալէպի բնակչութեան ջուր մատակարարելու, թոշակի ժամա-նակաշրջանի, առեւտուրի եւ անշարժ գոյքերու իրաւական հարցե-րու շուրջ եւն., որոնք ընդունուած են եւ համապատասխան օրէնքներով սահմանուած:

Հայ երկու երեսփոխանները կը մասնակցին նաեւ շարք մը օրէնքներու նախագիծերու քուէարկութեան, օրինակ՝ անոնք կողմ կը քուէարկեն երկրի ճանապարհները ցանցաւորելու օրէնքին, Ազգային Տնտեսութեան Նախարարութեան պիւտճէի օրէնքի նախագիծին, ինչպէս նաեւ

գիւղատնտեսական հաստոցներու տէրերուն իրաւունքներու եւ ճանապարհներու եւ հորերու վերանորոգման նիւթական վարկի յատկացումներու շուրջ առաջարկուած նախագիծերուն:

Խորհրդարանի ատենագրական արձանագրութիւններէն կը պարզուի, թէ Պօղիկեան եւ միւս հայ երեսփոխանները գործօն մասնակցութիւն կը բերեն զանազան օրինագիծերու մշակումին, Սուրիոյ Հանրապետութեան պիւտճէի քննարկումներուն:

1943ին կը կազմուի նոր խորհրդարանը: 17 Օգոստոս 1943ի ընտրութիւններուն խորհրդարանի անդամ կը դառնան Նազարէթ Եագուպեան[14] (հայ առաքելական, Դամասկոս), Մովսէս Սալաթ-եան[15] (հայ առաքելական, Հալէպ) Փափազեան (հայ առաքելական, Հալէպ) եւ Ասիուն (հայ կաթողիկէ, Հալէպ): Սուրիոյ խորհրդարանի պատմութեան մէջ առաջին անգամ է որ Սուրիոյ խորհրդարանին մաս կը կազմէ դամասկահայութեան ներկայացուցիչ մը:

14 եւ 29 Օգոստոս 1945ի նիստերուն Եագուպեան կ'ընտրուի Վերաքննիչ Յանձնախումբի եւ Ազգային Տնտեսութեան Յանձնաժո-ղովի անդամ, Սալաթեան եւ Ասիուն՝ Դատական Յանձնախումբի անդամներ: Վերջինս՝ նաեւ Սահմանադրական Յանձնաժողովի նախագահ, Ազգային Պաշտպանութեան Յանձնաժողովի, իսկ Փափազեան՝ Արտաքին Յանձնաժողովի եւ Վերաքննիչ Յանձնաժողովի անդամ:

3 Դեկտեմբեր 1946ին Տիգրան Չրաճեան[16] կ'ընտրուի որպէս Հալէպի երեսփոխան:

31 Մարտ 1947ին, երկամսեայ տեւողութեամբ, մինչեւ 31 Մայիս 1947, Սալաթեան կ'ընտրուի Ֆինանսական Օրէնքներու Յանձնաժողովի անդամ, Եագուպեան՝ Վերաքննիչ Յանձնաժողովի, իսկ Փափազեան՝ Արտաքին Յանձնաժողովի:

1947ի Խորհրդարանի նստաշրջանը առաջինն է անկախութենէն ետք, որուն կ'ընտրուին չորս հայ երեսփոխաններ՝ 1.- Ֆրէտ Արսլանեան[17], (հայ առաքելական, Դամասկոս. ան մաս կը կազմէ Արտաքին Հարցերու Յանձնաժողովին, ապա՝ Սահմանադրական Յանձնաժողովին, հուսկ՝ Դատական Յանձնաժողովին), 2.- Ապտալլահ Ֆաթթալ[18] (հայ կաթողիկէ, Հալէպ. ան մաս կը կազմէ Վերաքննիչ Յանձնաժողովին[19], ապա՝ Դատական Յանձնաժողովին), 3.- Լուիս Հընտիէ (հայ կաթողիկէ, Հալէպ. ան մաս կը կազմէ Ֆինանսական Յանձնաժողովին), 4.- Տիգրան Չրաճեան (Հալէպ, չներկայացուած փոքրամասնութիւններ. ան մաս կը կազմէ Ազգային Տնտեսութեան Յանձնաժողովին):

Նոր խորհրդարանի առաջին նիստը կը գումարուի 27 Սեպտեմ-բեր 1947ին: Երկրի անկախութեան այս հանգրուանին, կը կազմուի Հիմնադիր Ժողովը, որ կը գործէ 12 Դեկտեմբեր 1949-2 Դեկտեմ-բեր 1951 շրջանին եւ կը յառաջացնէ նոր սահամադրութիւն:

1949ի խորհրդարանի 114 անդամներէն երկուքը հայեր էին՝ Ասիուն եւ Չրաճեան: Վերջինս կ'ընտրուի Սահմանադրական Յանձնաժողովի անդամ: Կարծէք թէ կը կրճատուի հայ երեսփոխաններու թիւը Սուրիոյ խորհրդարանին մէջ: Արդարեւ, այդուհետեւ երկու կամ նուազ հայ դէմքեր կ'ընտրուին եւ անդամ կը դառնան Սուրիոյ խորհրդարանին:

Վեցերորդ նստաշրջանի՝ 1953-54ին հայ երեսփոխան կ'ընտրուի Գրիգոր Էպլիղաթեան[20] (Հալէպ, ոչ-իսլամ անդամ): Ան անդամ կը դառնայ Ֆինանսական Օրէնքներու Յանձնաժողովին:

1961ին կը կազմուի Հիմնադիր Երեսփոխանական նոր Խորհուրդ: Այս նստաշրջանին կը մշակուին շարք մը օրէնքներ՝ քաղա-քացիութեան, թոշակի, ազգային զինանշանի, հիմնի եւն...: Հայ երեսփոխաններէն Էպլիղաթեան կը դառնայ Կրթութեան Յանձա-ժողովի, ապա Վաքֆի Յանձնաժողովի, հուսկ՝ Սահմանադրու-թեան Ընդհանուր Յանձնաժողովի, իսկ Արամ (Իպրահիմ) Գարա-մանուկեան[21]՝ Ազգային Պաշտպանութեան Յանձնաժողովի անդամ:

1971-73 գործած Ժողովուրդի Խորհուրդ նշանակովի խորհուրդին երեսփոխաններ կը նշանակուին Էպլիղաթեան եւ Ռուբէն Տիրարեան[22]: Անոնք անդամ կը դառնան Դաստիարկչական Յանձնաժողովին:

1973ի եւ 1977ի խորհրդարանի անդամ ընտրուած Հալէպէն Լեւոն Ղազալ[23] կը դառնայ Արտաքին Հարցերու Յանձնաժողովի, ապա նաեւ՝ Դաստիարակչական Յանձնաժողովի անդամ:

1977-94 շրջանին յաջորդական 8 նստաշրջաններու երեսփոխանական խորհուրդին անդամ կ'ընտրուի Էպլիղաթեան, որ կ'ընտրուի "Ժողովուրդի այլ կարգեր" ոլորտէն: Ան կը դառնայ Դաստիարակչական Յանձնաժողովի, Սահմանադրական եւ Օրէնսդրութեան Յանձնաժողովներուն անդամ:

1994-2002 շրջանին, յաջորդական 2 նստաշրջանի խորհրդարանի անդամ կ'ընտրուի Սիմոն Իպրահիմ Լիպարեան[24] (բանուորներու եւ գիւղացիներու ոլորտէն): Ան անդամ կը դառնայ Ծրագրաւորման եւ Արտադրութեան Յանձնաժողովին:

2003-11՝ դարձեալ երկու նստաշրջանի խորհրդարանի անդամ կը դառնայ Սիւնպուլ Սիւնպուլեան[25] ("Ժողովուրդի այլ կարգեր" ո-լորտէն): Ան անդամ կը դառնայ Սահմանադրական եւ Օրէնս-դրութեան Յանձնաժողովին ապա՝ Վերաքննիչ Յանձնաժողովին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կը տեսնենք որ սուրիահայութիւնը Սուրիոյ խորհրդարանին մէջ, սկիզբէն եւեթ ներկայացուած է գրեթէ միշտ: Անցնող շուրջ հարիւր տարիներու Սուրիոյ խորհրդարանի անդամակազմին մէջ հայ ներկայացուցչութեան թիւը տարուբերած է հինգի եւ մէկի միջեւ, բացի մէկ նստաշրջանէ: Ուշագրաւ է նաեւ այն որ հայ երեսփոխանները միշտ ալ

մաս կազմած են խորհրդարանական այլեւայլ յանձնաժողովներու՝ այդպէսով եւս գործօն եւ ակնառու մասնակցութիւն բերելով երկրին օրէնսդրական զարգացման:

Համառօտ աղիւսակ սուրիահայ երեսփոխաններու[26]

Տարի	Անուններ	Ընդհանուր թիւ
1928	Նիկոլա Ճանճի (Ճանճիկեան), Ֆաթհալլա Ասիուն, Միհրան Բիւզանդեան, Մովսէս Տէր Գալուստեան	69
1932-33	Տէր Գալուստեան, Ճանճի, Հանրի Հընտիէ, Հրաչ Փափազեան	
1936-39	Ճանճի, Ասիուն, Հրանդ Սիւլահեան, Պետրոս Միլլէթպաշեան, Տէր Գալուստեան	85
1938	Արտաշէս Պօղիկեան	
1943	Նազարէթ Եագուպեան, Մովսէս Սալաթեան, Փափազեան, Ասիուն	121
1946	Տիգրան Չրաճեան	87
1947	Ֆրէտ Արսլանեան, Ապտալլահ Ֆաթթալ, Լուիս Հընտիէ, Տիգրան Չրաճեան	140
1949-51	Ասիուն, Չրաճեան	114
1953-54	Գրիգոր Էպլիղաթեան, Չրաճեան	133
1960	Էպլիղաթեան	200 (սուրիացի) + 400 (եգիպտացի)
1961-63	Էպլիղաթեան, Արամ Գարամանուկեան	172 (Հիմնադիր Ժողով)
1965-66	-------	
1971	Էպլիղաթեան, Ռուբէն Տիրարեան	173 (Նշանակովի Ժողով)
1973-77	Լեւոն Ղազալ	197
1977-81	Էպլիղաթեան	196
1981-85	Էպլիղաթեան	195
1986-90	Էպլիղաթեան	194
1990-94	Էպլիղաթեան	247
1994-98	Սիմոն Իպրահիմ	250
1998-02	Սիմոն Իպրահիմ	250
2003-07	Սիւնպուլ Սիւնպուլեան	250
2007-11	Սիւնպուլ Սիւնպուլեան	250

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Սուրիոյ խորհրդարանին մէջ հայ երեսփոխաններու պատմութիւնը ուսումնասիրելու համար մեզի հիմք ծառայած է Սուրիոյ Արաբական Հանրապետութեան խորհրդարանի արխիւը, որ կը պարունակէ խորհրդարանական նիստերու արձանագրութիւնները, պաշտօնական շրջաբերականները, խորհրդարանական ատենագրութիւնները, խորհրդարանին յղուած բողոքագիրերը եւ այլ փաստաթուղթեր: Օգտուած ենք նաեւ մեր՝ *Հայ Երեսփոխանները Սուրիոյ Խորհրդարանէն Ներս 1928-2011*, արաբերէն հատորէն, (Դամասկոս, 2011), ինչպէս եւ *Գեղարդ, Սուրիահայ Տարեգիրք, Ե. Գիրք*էն (Հալէպ, 1996): Այս բոլորին միջոցով կարելի կ'ըլլայ լուսաբանել սուրիահայերու մասնակցութիւնը Սուրիոյ քաղաքական կեանքին՝ խորհրդարանի ոլորտին մէջ:

[2] Սուրիոյ օրէնսդիր խորհրդարանը ունեցած է տարբեր անուններ՝ տարբեր ժամանակահատուածներու: Այսպէս, Թշնամի Գրաւեալ Տարածքներու Վարչութեան (1917-20), ինչպէս եւ Սուրիոյ Արաբ Թագաւորութեան շրջաններուն (1920)՝ Սուրիոյ Ազգային Համագումար, Ֆրանսական Հոգատարութեան շրջանին (1922-30)՝ նախ կոչուած է Հիմնադիր Խորհուրդ (1923-25), ապա՝ Հիմնադիր Ժողով (1924-30), Սուրիոյ Հանրապետութեան շրջանին (1930-58)՝ Ներկայացուցիչներու Խորհուրդ (1932-33), Երեսփոխաններու Պալատ (1932-46), Ներկայացուցիչներու Տուն (1947-49), Հիմնադիր Ժողով (1949-51), Երեսփոխաններու Պալատ (1953-58), Արաբական Միացեալ Հանրապետութեան շրջանին (1958-61)՝ Երեսփոխաններու Պալատ (1958-60): Իսկ Սուրիոյ Արաբ Հանրապետութեան շրջանին (1961էն իվեր)՝ Երեսփոխաններու Պալատ (1961-63), Ազգային Յեղափոխական Խորհուրդ (1965-66), Ժողովրդային Խորհուրդ (1971էն իվեր) https://en.wikipedia.org/wiki/People%27s_Council_of_Syria (մատչում՝ 1 Նոյեմբեր 2017):

[3] Նիկոլա Ճանճի Հալէպի մէջ եղած է խմբագիր, շինարարութեան հաշուապահութեան պետական պաշտօնեայ: 1928ին, կը հրաժարի այդ պաշտօնէն եւ ստանալով ձայներու մեծամասնութիւնը, կը դառնայ երեսփոխան՝ Հիմնադիր Խորհուրդին:

[4] Ֆաթհալլա Ասիուն ունեցած է քաղաքական բեղուն գործունէութիւն: Ան անդամ էր ֆրանսական խառն դատարանի կազմին: Իպրահիմ Հանանօ Ասիունի պաշտպանութեան ճառը լսելէ ետք, կ'առաջարկէ որ թեկնածութիւնը դնէ 1928ի Հիմնադիր Ժողովին: Այսպէս, Ասիուն կը հրաժարի իրաւաբանութենէն եւ կ'անցնի քաղաքական ասպարէզ: Ան, Հիմնադիր Ժողովի անդրանիկ նիստին կ'ընտրուի փոխնախագահ: Ասիուն Հալէպի երեսփոխան կը վերընտրուի 1936ին, 1943ին եւ 1949ին: 1950ին կը դառնայ Հալէպի փաստաբաններու սենտիքայի նախագահ: Ասիուն, իր քաղաքական ասպարէզի տարբեր ժամանակաշրջաններուն եղած է Հանրային Գործոց, Հաղորդակցութեան, Առողջապահութեան եւ Արդիւնաբերութեան նախարար: Ան իր ծառայութիւններուն համար, սուրիական կառավարութեան կողմէ արժանացած է Սուրիական Արժանեաց Շքանշանին, մանաւանդ՝ Եփրատի ջուրը Հալէպ հասցնելու եւ գործածելի դարձնելու ծրագրին համար:

[5] Միհրան Բիւզանդեանի մասին կան սակաւ տեղեկութիւններ: Ան ծնած է Հալէպ, 1895ին, աւարտած Հալէպի Ֆրանսական Քոլէժը, ապա աշխատած Օսմանեան Դրամատան մէջ, հուսկ՝ զբաղած առեւտրական գործով:

[6] Մովսէս Տէր Գալուստեան ֆրանսական իշխանութեանց ցանկութեամբ կ'ընտրուի երեսփոխան՝ Իսքենտէրունի Սանճաքի հայութիւնը ներկայացնելու համար սուրիական խորհրդարանին մէջ: Աւելի ետք, ան կը հաստատուի Լիբանան, դառնալով նոյնպէս Լիբանանի խորհրդարանի անդամ: Տէր Գալուստեանի մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Աշոտ Ներսիսեան, *Մովսէս Տէր Գալուստեան. Կեանքը Եւ Գործունէութիւնը*, Ապրող Հերոսներ Մատենաշար Թիւ 5, Երեւան, Էդիթ Պրինտ, 2011:

[7] Յատկանշական է որ Տէր Գալուստեան եւ Հանանօ կը ստանան հաւասար քուէներ՝ 57ական ձայն:

[8] Ա. Համաշխարհային Պատերազմէն անմիջապէս ետք, Ֆրանսական Հոգատար Իշխանութեան տակ անցած աշխարհագրական Սուրիան սկզբնական հանգրուանին բաժնուած էր հինգ շրջաններու՝ Լիբանանի, Դամասկոսի, Հալէպի, Ալաուիթներու եւ Ճեպէլ Տրուզի: Աւելի ետք կը յառաջանան Ալեքսանտրէթի շրջանի պատկանելիութեան բարդութիւնները:

[9] Հընտիէ (Պալապանեան) ծնած է Հալէպ, հայ կաթողիկէ ընտանիքէ: Հընտիէ երեսփոխանական ներկայացուցիչն էր հայ կաթողիկէ համայնքին: Ան 1936ին, կը նշանակուի Ելեւմուտքի նախարար:

[10] Ազգային գործիչ Հրաչ Փափազեան Հալէպի մէջ ազգային բեղուն կեանք ունեցած է, մաս կազմելով ազգային զանազան մարմիններու: Երեսփոխան ընտրուած է 1932ի եւ 1943ի խորհրդարաններուն:

[11] Հրանդ Սիւլահեան ծնած է Այնթապ: 1939ին, ընտանեօք կը փոխադրուի Ամերիկա, ուր կը մահանայ 1949ին:

[12] Պետրոս Միլլէթպաշեանի պապենական մականունն է Միրիճանեան: Ծնած է 1891ին, Արաբկիր: Անդամ էր Հալէպի Ազգային Քաղաքական Ժողովին: Անոր խորհրդարանական գործունէութիւնը կարճատեւ կ'ըլլայ, մահուան պատճառով:

[13] 28 Յունիս 1938 թուակիր նախագահական թիւ 580 հրամանագիրով, նախագահ Հաշէմ ալ Աթասի Հայ Առաքելական Համայնքի երեսփոխան կը հաստատէ Պօղիկեանը՝ հանգուցեալ Պետրոս Միլլէթպաշեանի փոխարէն: Պօղիկեան 1920-36՝ քաղաքական գործունէութիւն ծաւալած է Սուրիոյ ազգային շարժումի ղեկավար Իպրահիմ Հանանոյի հետ, եւ ժողովրդային քուէարկութեամբ երեսփոխան ընտրուած 1937ին: Սուրիական մամուլը զայն անուանած է «Իպրահիմ Հանանոյի աջ բազուկը»: Պօղիկեան մահացած է 1954ին:

[14] Եագուպեան ծնած է Մարաշ, 1885ին: Պղինձի, փայտի եւ այլ նիւթերու առեւտուրէն ետք, Դամասկոսի մէջ, 1925էն ետք կ'անցնի շինարարական նիւթերու առեւտուրին եւ 1930ին կ'անցնի նաեւ շինարարութեան: Բազմաթիւ մզկիթներ կը կառուցէ Դամասկոսի մէջ, ինչպէս նաեւ Երկրագործութեան Նախարարութեան եւ Արդարադատութեան շէնքերը, Սամիրամիս պանդոկը եւն.:

[15] Ծնած է Մարաշ, 1895ին: Պաշտօնավարած է Օսմանեան Ֆինանսներու Նախարարութեան մէջ, ապա զինուորագրուած օսմանեան բանակին: 1922ին

կը հաստատուի Սուրիա, կը պաշտօնավարէ պետական մատակարարման վերահսկումի գրասենեակներուն մէջ: Սալաթեան 1964ին կը ներգաղթէ Խ. Հայաստան, ուր կը մահանայ 1975ին:

[16] Ծնած է 1894ին, տիգրանակերտցի ծնողքէ: Չրաճեան կը պատկանի Հայ Աւետարանական Համայնքին: Մինչեւ խորհրդարանի անդամ ընտրուիլը կը զբաղէր դեղագործութեամբ: Չրաճեան կը մահանայ 1959ին:

[17] Ծնած է Այնթապ, 1912ին: Աւարտած է Դամասկոսի Իրաւաբանական Հիմնարկը: Ան մահացաւ 2001ին Դամասկոս:

[18] Ծնած է Հալէպ, 1890ին: 1913ին կ'աւարտէ Պոլսոյ իրաւաբանական կաճառը: 1919ին կը վերահաստատուի Հալէպ, 1923ին կը նշանակուի Իտլիպի ընդհանուր դատախազ: Կը ստանձնէ դատական բարձր պաշտօններ Դամասկոսի մէջ: Կը մահանայ 1953ին:

[19] Կը դառնայ Յանձնաժողովին նախագահը:

[20] Ծնած է 1924ին, օսմանեան նշանաւոր դատաւոր Մատթէոս Էպլիղաթեանի ընտանիքին մէջ: Հեռակայ կարգով աւարտած է Պէյրութի Սէն Ժոզէֆ Համալսարանի իրաւաբանական Կաճառը 1947ին: 1948ին կը նշանակուի հաշտարար դատաւոր Լաթաքիոյ, Քեսապի եւ Քասթալի: 1971-73՝ անդամ էր Սուրիոյ նոր սահմանադրութեան մշակման յանձնախումբին: Կը մահանայ Հալէպ, 2010ին:

[21] Ծնած է Այնթապ, 1910ին: Հիմնադիրներէն է Սուրիոյ յետ-անկախութեան բանակին: 1932ին կը միանայ Դամասկոսի Զինուորական Կաճառին, զոր կ'աւարտէ 1934ին: Կը մահանայ Նիւ Եորք, 1996ին:

[22] Ծնած է Արաբկիր, 1928ին: Ընտանեօք տեղափոխուած է Հալէպ 1930ին: Եղած է հայերէն լեզուի ուսուցիչ եւ Հալէպի Կիլիկեան Վարժարանի տնօրէն: Անդամ էր 1971ին Սուրիոյ նոր սահմանադրութիւնը մշակող յանձնախումբին:

[23] Ծնած է Հալէպ, 1915ին, սասուցնի ծնողքէ: Սկզբնական տարիներուն պաշտօնավարած է Երկաթուղագիծի Ընկերութեան մէջ: 1967ին կը նշանակուի Հայրենիքի Պաշտպանութեան Յանձնաժողովի անդամ:

[24] Ծնած է Հալէպ, 1947ին: 1974ին շրջանաւարտ կ'ըլլայ Հալէպի Համալսարանի մեքենական ճարտարապետութեան ճիւղէն:

[25] Ծնած է Հալէպ, 1965ին: Աւարտած է Հալէպի Համալսարանի Իրաւաբանական Կաճառը:

[26] نورا اريسيان, *النواب الارمن في المجالس النيابية السورية 1928-2011*, ص.323-326:

The Armenian Members of the Syrian Parliament

(Summary)

Dr. Nora Arissian
noraarissiandeputy@gmail.com

In order to have a better view of Syrian Armenian history, one should look at the careers of Syrian-Armenian MPs and their input to the Syrian parliament.

No such research has been conducted, except for the author's groundbreaking book on the subject. All that exists is bits and pieces of biographic notes published in Armenian newspapers on occasion.

The paper is based on thorough research of the registers and archives of the Syrian parliament from 1928 to 2011 and the above-mentioned book.

Alongside biographic highlights, the paper discusses the contribution of the Syrian Armenian MPs to diverse parliamentary committees and their stance concerning Syrian socio-economic and cultural affairs and policies. These are brought to life from the speeches and letters of the Armenian MPs.

COLPORTEURS DU KOMINTERN: TRAJECTOIRES COMMUNISTES ARMÉNIENNES EN SYRIE MANDATAIRE

Taline Ter Minassian
talintermi@hotmail.com

RÉSUMÉ

Mes premiers travaux ont porté sur la politique soviétique au Moyen-Orient et l'instrumentalisation des minorités. La conférence organisée par l'université Haygazian m'incite à revenir sur le rôle des Arméniens dans la Syrie de la période mandataire et les canaux multiples de la politique soviétique (diplomatie, Komintern, Arménie soviétique, HOG, rapatriements etc...) à cet égard. A propos de la minorité arménienne, les autorités mandataires françaises signalaient par exemple en 1934 que *'les Syriens et les Libanais font encore aux Arméniens le reproche d'avoir amené chez eux le communisme. Il est exact que cette doctrine, qui n'a trouvé aucun accès dans les milieux chrétiens ou musulmans des Etats sous mandat, a des adeptes agissants dans les communautés arméniennes».* Dans quelle mesure, les minorités et les Arméniens en particulier, ont elles joué un rôle spécifique dans la formation et le développement du parti communiste syro-libanais? Comment ce 'syndrôme minoritaire' a-t-il été corrigé par le mot d'ordre en faveur de l'arabisation du parti à partir des années 1930? Quelle a été l'importance de la nébuleuse pro-soviétique au moment du rapatriement des Arméniens de Syrie à la fin de la seconde guerre mondiale? Quelle fut la relation particulière entre les Arméniens de Syrie et l'Arménie soviétique? Avec le groupe *Spartak,* nous remonterons aux origines arméniennes du mouvement communiste syro-libanais en interrogeant en particulier le matériau que constituent les mémoires d'Artin Madoyan et de Hagop Ter-Petrossian (membre du bureau politique du parti communiste syro-libanais de 1929 à 1934) interviewé à Erevan en 1991 au moment où son propre fils, Levon Ter-Petrossian, devenait le premier président de l'Arménie indépendante.

Le colloque de l'université Haigazian m'a donné l'occasion de reprendre et de réévaluer le dossier que j'avais tenté d'ouvrir, il y a exactement vingt ans, dans le cadre de ma thèse.[1] Les Arméniens de Syrie n'ont certes pas été massivement des 'colporteurs du Komintern'[2] mais les trajectoires des communistes arméniens dans la Syrie mandataire évoquent un chapitre particulier d'une histoire transnationale relativement méconnue. La politique soviétique à l'égard des Arméniens de Syrie est un objet complexe, observable selon le point de vue de Moscou, siège des instances centrales du

communisme international - le Komintern - ou de Erevan où œuvre, entre autres instances, le HOG.[3] Cette politique fut-elle 'planifiée' par Moscou? Ou fut-elle au contraire le fruit de mouvements spontanément favorables à Moscou parmi les populations minoritaires de Syrie, et plus particulièrement parmi les Arméniens? Voici une page de l'histoire des relations entre marxisme et monde musulman[4] à laquelle j'ai tenté d'apporter ma contribution. Fin connaisseur des mouvements communistes au Moyen-Orient, Maxime Rodinson qui se défiait des lectures complotistes[5] (et notamment du fameux 'complot de Moscou') sans pour autant négliger la lourdeur de l'appareil à l'époque stalinienne, dressait au début des années 1970 un simple constat. Souvent, l'attirance pour les mouvements communistes du Moyen-Orient a été le fruit d'une inclination spontanée parmi les minoritaires. Et il faisait également valoir que sûrement, les archives de Moscou apporteraient un jour des réponses décisives à cette question. C'est ce que j'ai tenté de vérifier en 1991-1993 lorsque, profitant de l'effondrement de l'URSS, je me précipitais aux archives des Instituts du Marxisme-Léninisne de Moscou et de Erevan. Sous cette appellation encore en cours à l'époque, ces instituts abritaient en fait les archives du parti communiste de l'Union Soviétique, l'organisme tentaculaire de l'Etat-parti. A Moscou, j'ai donc eu l'occasion de travailler dans les archives du Komintern tandis qu'à Erevan, j'ai pu consulter quantité de papiers, d'autobiographies et de mémoires de communistes arméniens de Syrie et du Liban, notamment le manuscrit original en arménien des mémoires de Artin (Haroutioun) Madoyan. Ces fameuses archives soviétiques consultées à Moscou et à Erevan ont été le principal apport de ma thèse. Ce qu'elles recelaient sur ce sujet 'pointu' n'a pas été fondamentalement de nature à remettre en cause l'analyse lucide et informée de Maxime Rodinson sur le rôle complexe des minorités dans les différentes étapes de la formation du parti communiste de Syrie et du Liban. Plus difficile encore fut l'adaptation aux mots d'ordres changeants du Komintern à l'époque stalinienne à travers la bouche d'un leader controversé, d'ailleurs lui-même un minoritaire d'origine kurde, Khâled Bekdâsh. La période envisagée - les années du mandat français - permet de mettre en lumière les hésitations et les atermoiements d'une politique soviétique qui n'a été ni constante, ni monolithique au cours des années 1920 et 1930. A milieu des années 1940, lorsque l'URSS finalement put disposer de représentations diplomatiques au moment où se profilait l'indépendance de la Syrie et du Liban, la politique extérieure soviétique a trouvé auprès des Arméniens de Syrie - en majorité des réfugiés du génocide ayant fait souche - une capacité d'audience considérable. Il s'agira alors du 'retour' dans la mère patrie, l'Arménie soviétique, et du *nerkaght*. Je tenterais brièvement d'évoquer dans ce cadre contextuel quelques-unes des trajectoires des communistes arméniens dans la Syrie

mandataire en tenant compte de publications plus récentes[6] dont je n'avais pu disposer au moment de la parution de mon livre en 1997.

MINORITÉS ET MOUVEMENT COMMUNISTE AU MOYEN-ORIENT: PROBLÉMATIQUE GÉNÉRALE

On aborde ici les pages héroïques des débuts du mouvement communiste moyen-oriental, celle où les minoritaires jouèrent un rôle décisif d'impulsion, aspect amplement mis en valeur par l'historiographie arménienne soviétique, dans le livre de Topouzian[7] publié à Erevan en 1968. Cette date n'est d'ailleurs pas fortuite, c'est précisément à cette période que Moscou s'engage dans le soutien de l'extrême-gauche palestinienne et commence aussi, par cet intermédiaire, à investir le terrain de la 'gauche' arménienne, notamment au Liban. La préhistoire du mouvement communiste (qu'il faut d'ailleurs rechercher au Liban plutôt qu'en Syrie) et le rôle qu'y jouèrent les Arméniens s'expliquent de façon rationnelle: réfugiés, les Arméniens sont soumis à un contexte social de pauvreté et de survie dans des camps en voie de pérennisation. Au contexte social, s'ajoute le contexte politique du mandat français, vécu quotidiennement comme un régime arbitraire, impérialiste et colonial. Rappelons brièvement les chiffres de cette population arménienne parvenue en Syrie par les routes de la déportation et du génocide,[8] pour certains d'entre eux par la volonté même de Cemal, le 'pacha des Arméniens', dont le plan de royaume arabe détermina même l'idée d'instrumentaliser la population arménienne.[9] Avant la première guerre mondiale, il y aurait eu 20 000 Arméniens dans les provinces syriennes de l'Empire ottoman. Principaux refuges pour les rescapés du génocide, la Syrie et le Liban accueillent près de 150,000 Arméniens après 1915. Les colonies les plus importantes se trouvent à Alep (48,000 Arméniens), Beyrouth (30,000), Damas (12,000) sans compter Djebel Moussah, Kessab, Alexandrette, Zahléh, Homs, Tripoli... et les quelques 10,000 réfugiés encore répartis entre les camps et les orphelinats. Regroupés dans les camps de Beyrouth (environ 22,000), Alep (12-15,000), Damas (8-10,000), les réfugiés arméniens dans les nouveaux territoires sous mandat français subissent une condition misérable, terreau même de la contestation sociale. Pour eux, peu de travail, sauf dans la construction des routes... beaucoup d'Arméniens étaient ainsi employés au cassage et au transport des pierres. Certains parvenaient à louer des logements mais beaucoup d'autres demeuraient sous les tentes ou s'entassaient dans des abris de fortune. Selon l'historiographie soviétique qui n'est peut-être pas la source la plus fiable sur ce point, cette condition précaire du réfugié arménien contraint à habiter le camp, puis le bidonville, a perduré jusqu'aux années 1960.[10] Si ce contexte social a pu favoriser l'apparition de groupuscules communistes parmi les minoritaires et, en particulier parmi les Arméniens,

l'existence de l'Arménie soviétique pose dès les années 1920, la question des relations avec l'URSS dans des termes plus spécifiques. L'histoire du parti communiste de Syrie et du Liban et le rôle de premier plan joué par plusieurs personnalités arméniennes, posent plusieurs questions. Dans le contexte mandataire, alors même que les partis communistes sont contraints au statut d'illégalité, comment le parti communiste de Syrie, du Liban, puis le parti communiste syro-libanais se rattachent-ils aux réseaux du communisme international? Les relations avec le Komintern à Moscou étaient-elles directes ou non? Quel fut le rôle exact à cet égard du parti communiste français? Enfin comment mesurer l'impact de ces partis communistes, marqués par l'impulsion minoritaire, avec leur environnement majoritairement arabe et musulman? Au-delà du discours idéologique communiste qui prétend invariablement s'adresser aux 'masses arabes' dont les aspirations territoriales ont été démenties par l'administration française et la fin du rêve de la 'Grande Syrie', quel a été le rôle exact des minorités? Ces dernières ne sont elles pas au centre de la formation historique de ces partis et de ces 'réseaux' qui jusqu'à Moscou ont formé l'armature de la politique soviétique au Moyen-Orient?

DU GROUPE *SPARTAK* À LA FONDATION DU PARTI COMMUNISTE SYRO-LIBANAIS: LE 'SYNDROME MINORITAIRE' DU COMMUNISME SYRIEN

Première tentative pour dépasser les cadres nationaux et confessionnels, l'apparition des premiers groupes communistes au Liban[11] d'abord, en Syrie ensuite, semble le fruit des aspirations de certains 'minoritaires', soucieux d'affirmer leur sentiment de solidarité avec la masse des travailleurs syriens. Ces avancées sont l'œuvre de groupuscules, du moins durant les années 1920 et semblent révélatrices de la vocation 'internationaliste' des minorités. C'est ce que souligne l'historiographie arménienne soviétique,[12] soucieuse de mettre en évidence un synchronisme avec les débuts du mouvement syndical. La préhistoire ou plutôt le récit de la 'double fondation' du parti communiste de Syrie et du Liban, est à chercher au Liban: toutes les sources, mémoires de militants ou rapports de renseignement du Haut-Commissariat, mentionnent une ligue communiste intitulée *Spartak* fondée par deux Arméniens: Artin (Haroutioun) Madoyan et Haïgazoun Boyadjian. Fondé en 1923, les origines immédiates du groupe remonte à l'année précédente, 1922, année de la formation à Beyrouth de l'Union sociale-démocrate des Etudiants hintchaks dont le secrétaire était Madoyan. En 1923, cette Union a disparu pour laisser la place à l'organisation communiste *Spartak*, implantée à Beyrouth mais disposant de quelques filiales dans les territoires sous mandat français, notamment à Zahlé, Alep, Djebel Moussa et Alexandrette. Cette 'préhistoire', notamment la connexion avec l'association étudiante hintchak est confirmée

par les mémoires de Madoyan, conservées dans les archives du parti communiste à Erevan et, plus tard, publiées en arabe. Madoyan détient en effet un rôle central dans la préhistoire du mouvement communiste et peut paraître à juste titre comme l'un des fondateurs, si ce n'est le fondateur du parti communiste syro-libanais. Au moment de la fondation de Spartak, il était âgé d'une vingtaine d'années. Etudiant en médecine, il fréquente l'université Saint-Joseph de Beyrouth, tandis que Haïgazoun Boyadjian (né à Sis dans la région d'Adana en 1904) a entrepris des études d'odontologie à Zahléh. Outre leur commune orientation médicale, les deux fondateurs ont des origines géographiques communes: la Cilicie. En effet, Madoyan, fils d'un cordonnier arménien réfugié est également natif d'Adana.[13]

Comprenant une quinzaine de membres à Beyrouth au milieu des années 1920, *Spartak* semble avoir existé jusqu'à la fondation du parti communiste syro-libanais en 1931. Du moins, un rapport de la Sûreté Générale indique-t-il, en 1929, la liste de ses membres les plus indésirables dans les territoires sous mandat français.[14] Menant une propagande très active auprès de la communauté arménienne contre les dachnaks et les ramgavars qui attendant tout du soutien français, ils s'isolent et s'opposent aux ressortissants des pays d'accueil qui les reçoivent eux-mêmes avec une grande méfiance. En effet, le groupe *Spartak* prétend étendre son activisme en milieu arabe. Ainsi, selon l'une de ses proclamations, *'l'unique voie de la sécurité nationale et de la prospérité des Arméniens du Liban, de la Syrie et de tous les pays arabes, est celle de l'unité de la lutte avec les peuples arabes qui se sont dressés contre l'impérialisme pour leur libération et leur indépendance'*.[15] Bien entendu, cette légitime ambition de pénétrer dans les masses arabes est sans commune mesure avec les forces et les moyens réels dont dispose la jeune organisation communiste. Des contacts sont effectivement attestés avec l'Arménie Soviétique et avec le PCF mais le manque de moyens matériels explique la difficulté de maintenir un organe de presse permanent. Le premier journal communiste arménien, né probablement dans la mouvance de *Spartak* apparaît au Liban sous le titre *Nor Paros* mais seuls les deux premiers numéros de cette publication dirigée par Madoyan furent publiés. Une seconde tentative pour fonder un organe de presse permanent eut lieu en janvier 1927 mais ne fut pas davantage couronnée de succès: le journal *Spartak* est en effet imprimé à Alep dans une imprimerie secrète chez Stepan Kavadjian. Il faut préciser qu'à cette époque Madoyan, Boyadjian et Bedros Bardizbanian sont en résidence forcée à Raqqa près de Deir Zor, sur les lieux mêmes de l'holocauste arménien dont ils sont des rescapés. C'est de Raqqa qu'ils publient et expédient *Spartak* dans toutes les villes de Syrie et du Liban avant d'être de nouveau arrêtés et assignés à résidence à Atmos près de Lattaquié, dans le Djebel Alaouite. Journal illégal, soumis à des poursuites et

de sévères mesures d'interdiction, le journal *Spartak* ne parvint pas non plus à dépasser le deuxième numéro. Les difficultés auxquelles se heurtèrent ces internationalistes convaincus multipliant ces tentatives infructueuses d'agit-prop auprès des populations arabes, furent nombreuses. Placés sous l'étroite surveillance des autorités policières françaises, les leaders fondateurs de *Spartak* passèrent le plus clair de leur temps à être arrêtés ou assignés à résidence dans des régions qui furent aussi celles de la de déportation des Arméniens en Syrie. Il reste que dans le contexte minoritaire, cette volonté d'aller vers les masses arabes constitue un phénomène original.

La révolte du Djebel Druze et les événements de 1925-27 constitue néanmoins un tournant dont témoigne l'autobiographie de Boyadjian conservées dans les archives du parti communiste en Arménie.[16] Boyadjian rappelle qu' *'en 1925, commença la révolution anti-impérialiste syrienne contre les Français. Je revins à Beyrouth où j'ai organisé un comité de travailleurs communistes. Ce comité diffusait la propagande parmi les masses arabes musulmanes contre les soldats français et nous faisions des meetings etc... mais je fus arrêté avec d'autres membres et jeté en prison. 14 mois plus tard, grâce à l'aide du PCF, nous fûmes tous libérés. A la fin de l'année 1926, je me rendis à Damas et commençais mon travail qui consistait à organiser des groupes communistes parmi les Arabes. Je suis resté à Damas jusqu'en 1931 où je parvins à organiser plusieurs groupes communistes'*. Plusieurs détails concernant la période des années 1920, méritent en effet d'être retenus des souvenirs de Boyadjian. Les rapports privilégiés avec le PCF sont typiques des formations communistes nées dans l'Empire colonial français. Mais le comité central du groupe *Spartak* s'est attaché sous la houlette de Madoyan à devenir aussi vers 1925, dans le contexte de la révolte du Djebel druze, une organisation directement affiliée au Komintern. Les instructions du Komintern adressées aux groupes communistes de Syrie et du Liban sont d'ailleurs significatives de ce contexte: elles encouragent le travail 'illégal' et la 'conspiration' révolutionnaire et recommandent des tactiques différentes selon les régions des territoires sous mandat français. Ainsi, au Liban, considéré comme un pays avancé, le Komintern recommande le mot d'ordre de 'Guerre au féodalisme!' qui, selon les experts moscovites, ne manquera pas de dresser les paysans et les ouvriers contre les notables et les grands propriétaires. En revanche, en Syrie, dans les régions où la structure traditionnelle, clanique et 'féodale' du pouvoir politique a une forte emprise, comme dans le Djebel Druze, par exemple, le Komintern recommande de *'se garder d'attaquer le système féodal, encore trop fortement établi dans ce pays'* et recommande aux communistes arméniens de *'faire vibrer la corde nationaliste pour surexciter la haine contre l'étranger'*. Le Komintern recommande par ailleurs l'embauche en Syrie et au Liban d'ouvriers arabes venant d'Egypte car ils sont

Leisure activities were limited for adults and children alike. House visits were common among the families. Conversations revolved around children and social issues. Playing cards and discussing business particularly interested men. Literate people spent time reading novels. Story telling was a much anticipated and enjoyable pastime. Ani Markarian Shemsian, who lived in Ayn el-Arous until the age of nine, reminisced: "I anxiously waited for the afternoon each day. We gathered around my mother, Nvart, and sat on the carpet as she began reading stories to us. We were mesmerized by them."[47] Taking a nap after lunch was mandatory to avoid the temptation of going outside in the scorching heat. Children resented it, but they had no choice.

The wheat storage place served as a playground for children, who jumped over the full piled up bags one by one. In the backyard, they played hopscotch. The boys also played with marbles. Making stuffed dolls from scratch interested the girls, as they would design, cut out and sew the doll, embroider all features on the face of the doll and then stuff the body with wool. Tailoring different dresses for the doll was part of this process. Kids also jumped rope and slid on the harvesters. The day would wind down for adults and children alike at sunset. This was the case especially when electric power was not yet available in the village and the houses were lit by kerosene lamps.[48]


One of the community events during summer was a picnic at Hammam Ali (Ali's bath), which was situated at a distance of 1 Km. from Ayn el-Arous. The mineral waters of Hammam Ali attracted many people, who hoped to be healed of their ailments by immersing themselves in the water. As Janette Yesayan stated, "We went there during the summer to picnic. It was a fun time for all of us. We took food with us, we played the guitar and tambourine, we sang, and we danced. Those were good days. We had a great life."[49]

Autumn was not as busy as summer, but still required some labor. The soil had to be tilled in preparation for the ensuing planting season, quality seeds had to be secured and stored, and the machinery had to be overhauled for optimum use the following season. Life during winter was quiet as the village was emptied of most of its Armenian inhabitants. The families travelled to Aleppo for the educational needs of their children, since elementary schools did not yet exist locally, or for junior and high school. Those peasants who stayed behind took care of the livestock and the farms. The animals were kept inside the barns and fed stored fodder.[50]

The village of Ayn el-Arous did not have a health facility or a resident doctor during its early years. Simple health problems, mostly eye infections caused by dusty winds, and other intestinal problems, were treated by Loussan Matossian, one of the village folks, who filled the role of a medicine woman. She applied home remedies and, in some cases, medicines obtained from various sources.[51] Periodically, visiting doctors from nearby towns treated other health conditions. People with serious ailments went to Aleppo to be treated.[52]

VOLUNTARY ASSOCIATIONS

The formation of various voluntary associations was in response to the needs of the Armenians who had suffered tremendous losses during the genocide. Taking care of the multitude of orphans and Armenian women reclaimed from captivity, as well as their reintegration into society, were primary agenda items for these associations. The associations, which were charitable in nature and focused mainly on youth and sports; were primarily based in the city of Aleppo. However, they extended their reach to other Armenian communities across Syria by opening chapters there.


ՀԱՐՑԱՐԱՆ-ՎԻՃԱԿԱԳՈՒԹ

ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅ ԿԱԶՄԸ

AGBU

The AGBU, founded in 1906 in Cairo, was a philanthropic organization. It was formed to address the most pressing problem for the Armenians at the turn of the century - their state of insecurity and miserable socioeconomic condition, especially in the eastern provinces of the Ottoman Empire[53] and Cilicia. During World War I, AGBU humanitarian programs focused on

providing aid to genocide survivors and recovering captive Armenian women and children.[54] Their strategy was premised on the idea that bringing the scattered Armenians back together in a safe environment would create the basis for national rebirth. Similarly, the AGBU directed its efforts towards meeting the material needs of the refugees brought on by the evacuation of the Armenians from Cilicia and Smyrna and their resettlement in Syria, Lebanon, and Greece.[55]

In the 1930s, the AGBU readjusted its strategies and extended its support to community development and education. Ayn el-Arous was one of the Armenian communities supported. As a result of the expansion efforts, a new AGBU chapter was formed in Ayn el-Arous in January, 1934. Its founding executive board comprised Aroush Yesayan, president; Hagop Ghazarian, secretary; Hagop Ourishigian, treasurer; Mgrditch Markarian and Toros Balabanian, advisors. The executive board was approved by the AGBU Regional Board in Cairo, upon which the chapter assumed official status. Accordingly, it received the organization's by-laws, stationery, membership application forms, receipt booklets, and seal,[56] with the chapter number, 61 on it. The chapter regularly submitted its reports to the Cairo Regional Board indicating the status of its membership, members' names, the number of general membership and executive board meetings held, the amount of correspondence, and the total number of Armenians in the village.[57] To be kept abreast of general AGBU activities, the local chapter also requested periodicals and books such as the *Arev* (Sun), *Husharar* (Prompter), and *Vosgemadian* (jubilee Golden Book).[58]

By 1941, the Ayn el-Arous chapter had expanded by the formation of the AGBU Women's Auxiliary. The following were its founding members: Yeranouhi Yesayan, president; Zarouhi Degirmenjian, secretary; Haji Topjian, treasurer; Vartouhi Sahagian, Ovsanna Tufenkjian, Khatoun Degirmenjian, Rebecca Markarian, Ovsanna Nazarian, Zarouhi Khacherian, Marie Nalchanian, Zmroukht Khashmanian, Yester Ghazarian, Markrid Shahinian, and Ovsanna Basmajian, Aznive Piloyan, Arshaluys Piloyan, Armine Piloyan, Araxie Piloyan, Aznive Shahinian, and Armenouhi Basmajian, members at large.[59]

Ayn el-Arous – AGBU relations were not only confined to chapter activity. In 1934 some families from the village expressed great interest in relocating to Soviet Armenia. They applied to the AGBU Regional Board in Cairo, requesting assistance.[60] The latter asked for information regarding the name, age, birthplace, and occupation of each and every supplicant who wished to submit an application to the Soviet Armenian representative responsible for repatriation. However, the Board remained noncommittal and advised them to continue their normal lives, because there was no guarantee that the repatriation would take place within a year, if at all.[61]

Syrian Armenian Relief Cross

The Syrian Armenian Relief Cross (SARC) was established in 1929 in Aleppo in order to meet the health needs of the Armenian refugees, collect orphans, and support education. By 1936, thirty-one chapters had been established across Syria (including Lebanon) with a total of 2,078 members. One of the new chapters, established sometime during 1935-36, was that of Ayn el-Arous, with a total of forty-nine members. The chapter was able to raise 2,021 Syrian piasters that same year.[62]

The SARC chapter, along with the Central Committee in Aleppo, dealt with the health issues that were prevalent in the refugee communities at that time. Many individuals contracted malaria, a mosquito borne infectious disease with symptoms of fever, feeling tired, vomiting, and headaches. Eye ailments and various intestinal diseases, too, presented serious problems. The Aleppo chapter of SARC sent visiting doctors and medicine such as quinine to the affected communities. Another SARC mission was to pay special attention to education by supporting schools in the villages and needy areas. The Central Committee instructed its chapters to allocate the maximum percentage of their budget possible to education.[63]

Armenian Youth Association

The Armenian Youth Association (AYA) was given this name in 1930. It was previously the Near East Leagues, centers that had been founded across Syria and Lebanon so that Near East Relief (NER) could stay in touch and with orphans even after they had reached adulthood. In 1931, Bishop Papken Gulesserian (future coadjutor Catholicos of Cilicia) was the representative of the Catholicosate in the NER. As such, he became the head of the network of Near East Leagues, and renamed it the Armenian Youth Association (AYA/*Hay Yeridasartats Engeragtsutiun*).[64]

The AYA had many chapters in Syria and Lebanon. In 1941, alongside the already established chapters of the AGBU and SARC, a new chapter of the AYA was established in Ayn el-Arous through the initiative of Bedros Kelliguian and Hovhannes Shahinian.[65] The newly formed AYA chapter became very active, organizing athletic and cultural events. The chapter had a football team and its own field. The team practiced regularly and participated in inter-chapter games.[66] AYA activities also included lectures on social, cultural, and moral issues, as well as dramas performed by its theatrical troupe. To give an example, the AYA staged two comedies, *Tiv Hink Khelakare* (The Number Five Madman) and the *Shadakhos Sapriche* (The Talkative Barber). Many attended the event, including Arab dignitaries. The function was a success, as evidenced by the audience's loud applause, congratulatory remarks and commendations. The MC of the evening, Bedros Kelliguian, thanked those present for their

moral support. He highlighted the mission of the AYA, and thanked the AGBU for its continuous backing. The proceeds of the event went towards meeting the needs of the AGBU school.[67] Additional information is lacking about the AYA chapter of Ayn el-Arous.

Armenian General Athletic Association

The Hay Marmnagrtagan Enthanour Miyoutioun (Armenian General Athletic Association/HO.MEN.ET.MEN) was founded in Constantinople in 1918 to address the athletic needs of the Armenian people in the Ottoman Empire, especially those of orphans. The organization had its football, basketball, tennis, and scouts teams. By the end of that same year, twenty-five chapters had already been founded in Constantinople, and in 1919 they staged their inaugural Olympic Games.[68]

During the decade of 1935-45, new chapters of HO.MEN.ET.MEN were founded primarily in the Armenian communities of northern Syria. It was not until June 7, 1947 that the Ayn el-Arous chapter came into being, having a certain Mr. Boyajian as its founding chair. Initially, the chapter had twenty members, nine of whom were already in the Tell Abyad scouts team. The chapter had its own field and club, which facilitated its athletic activities. Membership fees and outright donations sustained the chapter. By the end of 1948, members and supporters had raised 191 Syrian liras. The association's expenses being 168 liras, a positive balance of 23 liras was left in its coffers. The chapter began enthusiastically, and remained active to the end. It also participated in the inter-chapter and Olympic Games, held in Aleppo annually around Easter. Unfortunately, this did not last long. In 1950, the chapter could not participate in the inter-chapter games, because it lacked the necessary number of players and could not borrow players from other chapters to complete the football team. A reporter, Sarkis Pakhdigian (future bishop Nerses Pakhdigian), wrote: "A weak team of 7-8 members, facing difficult conditions, are barely able to play."[69] The chapter ceased to exist in 1957, after only nine years, because of the lack of members. The Tell Abyad chapter wrote to the regional Board in Aleppo: "There are no Armenians left in Ayn el-Arous; therefore, no chapter is left."[70]

CHURCH AND SCHOOLS

The establishment of churches and schools has been on every Armenian agenda, and the Armenian community of Ayn el-Arous was no exception. The church there was established sometime between the second half of the 1920s and the 1930s.[71] The community did not have a resident priest to celebrate Holy Mass on Sundays. On special occasions, a visiting clergyman from Arab Punar, Raqqa or Aleppo conducted the religious services. Those special occasions

included the celebrations of the Vartanank Battle that took place in 451; the Holy Mother of God holiday in mid-August and the Holy Cross holiday in mid-September, both celebrated with the traditional blessed food of *herisa*; the commemoration of the Armenian Genocide on April 24; and Easter, when the traditional cookie of *kulunja* (made of dough with special spices) was baked, and egg tapping took place.[72]

The earliest leaders of the AGBU were convinced that education was necessary for the socioeconomic and intellectual development of the Armenian people, as well as for maintaining Armenian identity in the Diaspora. They accordingly invested heavily in the establishment of schools, including that of Ayn el-Arous in 1933, named Noubarian Elementary School.[73] The school operated on the church grounds.[74] The teachers and the principal were appointed by the Cairo AGBU Regional Board. For instance, Bedros Kelliguian was assigned principal in 1939 (at the age of nineteen!)[75] The curriculum included Armenian, Armenian history, religion, Arabic, French, Mathematics, and Science. The students participated in community functions by singing songs and reciting poems.[76]

Like all Armenian day schools in Syria, that of Ayn el-Arous faced financial difficulties. In 1934, the school had forty-eight students. Income from their tuition was 26 Ottoman liras, and from two cultural programs 3 liras, for a total of 29 liras. On the other hand, expenses included the following: 5 liras, deficit carried over from 1933; 25 liras, male teacher's salary; 15 liras, female teacher's salary; 4 liras, for desks; 5 liras for charcoal, wood, and stove; 3 liras for school cleaning, water, and sundries, for a total of 57 liras. Therefore, there was a deficit of 28 liras (nearly 50 percent of the budget), which the school board hoped the AGBU Cairo Regional Board would cover.[77]

Cooperation among the various Armenian organizations that had brought the genocide survivors together to create a basis for national rebirth began to decline in the 1930s. Fierce political rivalries sometimes had divisive outcomes. The main issue involved peoples' views and positions vis-à-vis Soviet Armenia. Should they support the Soviet Armenian regime? Or, should they oppose the regime and create a free and independent Armenia?[78] These contradictory opinions permeated Armenian society in Ayn el-Arous, as well. Community members from the latter camp wanted to open their own school, independent of the existing AGBU-subsidized Noubarian school. The AGBU naturally discouraged this separation, given the small size of the community. Despite this opposition, a second school was established in Ayn el-Arous in 1935-36 under the auspices of the Aleppo Prelacy with support from the Armenian Revolutionary Federation and its affiliate, SARC.[79] The Armenian schools that were opened during the first years of the French mandate in Syria did not have official governmental recognition. They operated under the ownership of

individuals, organizations, or compatriotic societies. However, in order to benefit from government subsidies, it became necessary to obtain permits.[80] The new school at Ayn el-Arous got its permit under the name of author Antranig Dzarougian.[81] To conclude, the Armenian community of Ayn el-Arous was able to sustain two elementary schools until they ceased to operate because of too few students.

CONCLUSION

The formation of the Syrian Armenian rural community of Ayn el-Arous dates back to the late 19th century with the arrival of Armenian refugees, predominantly from Urfa. They transformed the available but neglected arable land into productive agricultural fields. Notwithstanding its small size, this community maintained its own church, schools, and voluntary association, which played a significant role in the lives of its members. Today the demographics of the village have shifted, rendering the Armenians a tiny minority. Only the descendants of some of the founders continue to live there: Vartkes Matossian, Antranig Kilejian, Krikor Piloyan, Mgrditch Shahinian, Shahe Sanossian, and Ara Sanossian. The fortunes of Ayn el-Arous, with its ebb and flow, certainly applies to all other Armenian communities in Syria. Each of these communities requires a separate study (or studies) for a better understanding of the larger picture of this important diasporic collectivity.

ENDNOTES

[1] https://en.wikipedia.org/wiki/Tell-Abyad, retrieved May 31, 2017.

[2] Ibid., Ain-al-Arous, retrieved May 31, 2017.

[3] Ibid., Geography of Syria, retrieved August 11, 2017.

[4] Ibid., Balikh-River, retrieved May 31, 2017.

[5] Hagop Hisayian, *Yetesia* (Ourfa), Beirut, Aramazt Press, 1962, pp. 44-45.

[6] Aram Sahagian, *Tiutsaznagan Ourfan yev Ir Hayortinere* (Heroic Ourfa and Its Armenian Sons), 2nd ed., vol. 1, Aleppo, Armenian Youth Association of Urfa/Cilicia Press, 2011, p. 682.

[7] Htttps://en.alalam.ir/news/1479507/Syria-terrorists-bulldoze-prophet-Abraham-shrine, retrieved September 20, 2017.

[8] *The Armenian General Benevolent Union: One Hundred Years of History, vol. I: 1906-1940,* Raymond H. Kévorkian and Vahé Tachjian (eds.), Cairo-Paris-New York, AGBU Central Board of Directors, 2006, p. 14.

[9] Ibid., p. 141; Felix Pakhchinian, *Hort Hayutian Arunere* (The Gushing Streams of Armenians), Yerevan – Aleppo, Cilicia Press, 2011, pp. 21-22.

[10] Bedros Der Bedrossian (Ourfatsi), *Autobiography & Recollections*, Tamar Der-Ohannessian, trans., Dr. Vahan Janjigian, ed., Philadelphia, PA, N.p., 2005, p. 187.

[11] Ibid.

[12] Hisayian, p. 53.

[13] Der Bedrossian, p. 187.
[14] Sahagian, p. 683.
[15] Der Bedrossian, p. 14.
[16] Sahagian, pp. 683-84.
[17] Der Bedrossian, p. 14.
[18] Ibid., pp. 189-90.
[19] Sahagian, p. 682.
[20] Ibid., vol. 2, p. 1245.
[21] Interview with Jeanette Yesayan, July 23, 2015, Yerevan, Armenia.
[22] Ibid., June 15, 2017.
[23] Sahagian, vol. 1, pp. 689-90.
[24] Ibid., pp. 1160-161.
[25] Vahram L. Shemmassian, "The League of Nations and the Reclamation of Armenian Genocide Survivors," in Richard G. Hovannisian, ed., *Looking Backward, Moving Forward: Confronting the Armenian Genocide*, New Brunswick, USA, and London, UK, Transaction Publishers, 2003, p. 101.
[26] Sahagian, vol. 1, pp. 690-2.
[27] Ibid., vol. 2, p. 1333.
[28] Armenian General Benevolent Union (AGBU) Archives, Cairo, Egypt, File *Ayn el-Arous*, AGBU Ayn el-Arous Chapter to Cairo AGBU Regional Board, December 4, 1934. See Appendix 4 for the names of those breadwinners. I thank Dr. Antranik Dakessian for providing me with the AGBU documents.
[29] Telephone interview with Krikor Piloyan, July 27, 2017, Granada Hills, CA - Aleppo, Syria.
[30] Telephone interview with Saghatel Saghatelian, July 14, 2017, Granada Hills, CA – San Francisco, CA.
[31] Interview with Yesayan, July 23, 2015.
[32] Ibid., July 23, 2015; telephone interview with Piloyan.
[33] https://en.wikipedia.org/wiki/Agriculture in Syria, retrieved August 13, 2017.
[34] Ibid.
[35] Interview with Arsene Baran, September 2, 2017, Granada Hills, CA.
[36] Ibid.
[37] AGBU Archives, File *Ayn el-Arous*, AGBU Ayn el-Arous Chapter to AGBU Cairo Regional Board, May 1, 1951.
[38] Pakhchinian, p. 101.
[39] Wikipedia, Agriculture in Syria.
[40] Interview with Kevork Piloyan, May 23, 2017, Los Angeles, CA.
[41] Interview with Yesayan.
[42] Interview with Nora Kelliguian Bezdikian, July 11, 2017, Glendale, CA.
[43] Telephone interview with Sona Kelliguian Khanjian, September 13, 2017, Granada Hills, CA – Paramus, NJ.
[44] Interview with Kevork Piloyan.
[45] Interview with Kelliguian Bezdikian.
[46] Ibid.

[47] Telephone interview with Ani Markarian Shemsian, July 25, 2017, Granada Hills, CA – Fountain Valley, CA.
[48] Interview with Ani Yesayan Rastgelenian, June 15, 2017, Yerevan, Armenia.
[49] Interview with Yesayan, June 15, 2017.
[50] Interview with Kevork Piloyan.
[51] Interview with Yesayan, June 15, 2017.
[52] AGBU Archives, File *Ayn el-Arous*, AGBU Ayn el-Arous Chapter to AGBU Cairo Regional Board, July 3, 1943.
[53] Kévorkian and Tachjian, p. 17.
[54] Ibid., pp. 43, 114, 116-17, 123, 131.
[55] Ibid., pp. 135-37.
[56] AGBU Archives, File *Ayn el-Arous*, AGBU Ayn el-Arous Chapter to AGBU Cairo Regional Board, February 21, 1934.
[57] See, for example, ibid., AGBU Ayn el-Arous 1934 Report: Questionnaire/Report Card, 1 December 1933-30 November 1934, submission date January 10, 1935; AGBU Ayn el-Arous 1941 Report: Questionnaire/Report Card, 1 December 1940-30 November 1941, submission date February 15, 1942; AGBU Ayn el-Arous 1951 Report: Questionnaire/Report Card, 1 January 1951-31 December 1951, submission date April 10, 1952.
[58] AGBU Archives, File *Ayn el-Arous*, AGBU Ayn el-Arous Chapter to AGBU Cairo Regional Board, May 24, 1944.
[59] Ibid., September 27, 1941.
[60] Ibid., Hagop Ghazarian and Friends to the AGBU Cairo (Regional) Board, March 14, 1934. For the roster of families interested in repatriation to Soviet Armenia, see Appendix.
[61] AGBU Archives, File *Ayn el-Arous*, AGBU Cairo Regional Board to Hagop Ghazarian, March 23, 1934.
[62] *Deghegakir Suriahay Oknutian Khachi Getronagan Varchutian yev Masnadjiugheru, 30 Abril 1935-30 Abril 1936, yev Hashvegshir ou Kim. Badkm. Joghovi Voroshoumner* (Report of the Syrian Armenian Relief Cross Central Committee and Chapters, 30 April 1935 – 30 April 1936, and Accounts and Resolutions of the 3rd Delegates' Meeting), Aleppo, A. Der-Sahagian Printing, 1936, pp. 8-9, 30-31.
[63] Ibid., pp. 12-16, 33-37.
[64] Kévorkian and Tachjian, vol. 2, pp. 313-14.
[65] AGBU Archives, File Ayn el-Arous, AGBU Ayn el-Arous Chapter to AGBU Cairo Regional Board, June 6, 1941.
[66] *Keghart Souriahay Darekirk* (Keghart Syrian Armenian Yearbook), 4th year Hayg Barigian, Robert Jebejian, and Louisa Khabayan-Jebejian (eds.), AGBU Bibliography Committee, Aleppo, 1991, pp. 175, 178-79.
[67] AGBU Archives, File Ayn el-Arous, AGBU Ayn el-Arous Chapter to AGBU Cairo Regional Board, June 6, 1941.
[68] Puzant Torigian, *Badmutiun Hay Marmnagrtagan Enthanur Miutian, vol. I, Esgizpen Minchev 1938 Tvagan* (History of the Armenian General Athletic Association, from the Beginning to 1938), Beirut, Armenian Catholicosate of Cilicia Press, 1995, pp. 37-40.
[69] Ibid., vol. II, *(1940-1974)*, p. 219.

[70] Ibid.

[71] Pakhchinian, pp. 21-22.

[72] Interview with Angel Melkonian, September 14, 2017, Glendale, CA; telephone interview with Loucine Balabanian Tedjirian, September 21, 2017, Granada Hills, CA - Burbank, CA; interview with Yesayan, June 15, 2017.

[73] The school name "Noubarian" is mentioned in Hagop Cholakian, *Utsunamiag Halebi Azkayin Sahagian Varjarani 1927-2007* (Eightieth Year Anniversary of the National Sahagian School of Aleppo 1927-2007), Aleppo, Board of Trustees of National Sahagian School/Arevelk Press, 2007, p. 44.

[74] Interview with Balabanian Tedjirian.

[75] Barigian, Jebejian, and Khabayan-Jebejian, p. 175.

[76] Interview with Hermine Chouldjian, September 24, 2015, North Hollywood, CA.

[77] AGBU Archives, Cairo, File *Ayn el-Arous*, AGBU Ayn el-Arous Chapter to AGBU Cairo Regional Board, April 27, 1934.

[78] Kévorkian and Tachjian, vol. 2, pp. 343, 346-47.

[79] AGBU Archives, Cairo, File *Ayn el-Arous*, AGBU Ayn el-Arous Chapter to the AGBU Cairo Regional Board, August 8, 1936, June 24, 1937; idem, AGBU Cairo Regional Board to AGBU Ayn el-Arous Chapter, October 6, 1938; *Deghegakir Suriahay Oknutian Khachi Shrchanayin Varchutian 4 Hunvar 1939-30 Abril 1940* (Report of the Syrian Armenian Relief Cross Regional Committee 4 January 1939-30 April 1940), Aleppo, Der-Sahagian Press, 1940, p. 7; *Deghegakir Siuriahay Oknutian Khachi Getronagan Varchutian yev Masnadjiugheru*, pp. 30-31; Pakhchinian, pp. 21-22.

[80] Cholakian, pp. 7-18.

[81] Pakhchinian, p. 35.

Սուրիոյ Այն Արուս Գիւղի Հայօճախը

(Ամփոփում)

Յասմիկ Քելուկեան-Պարան
Hasmig.baran@csun.edu

Հրատարկութիւններու, արխիւային նիւթերու, հարցազրոյցներու, յուշերու, անձնական յիշողութիւններու միջոցով հաւաքուած նիւթի հիմամբ հեղինակը կը վերականգնէ մինչեւ 1950ականներու աւարտը մեծամասնութեամբ հայաբնակ Այն Արուս գիւղին կեանքին պատումը:

Հեղինակը կը ներկայացնէ հայոց այդ գիւղ հաստատուելուն նախաեղեռնեան հանգրուանը, ապա՝ Եղեռնէն ետք հոն հաստատուած հայ գաղթականութեան կեանքի պայմանները, կենցաղը, առօրեան, տան եւ առտնին աշխատանքային բաժանումը, այդ աշխատանքներուն ընթացքին տեղաբնիկ օգնականներուն առնչումը, անասնաբուծութիւնը, երկրագործութիւնը եւ հաւաքական աշխատանքներունը, մարանն ու հանդերձանքը, արհեստները, արաբ քոչուոր ցեղերու հետ յարաբերութիւնները, դպրոցական ու եկեղեցական կեանքը, մշակութային թէ մարզական միութիւններուն գործունէութիւնը, հանգստութեան ժամանցները, աւանդական տօնակատարութիւնները եւն.:

ՔԱՄԻՇԼԻԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՒ ՃԵԶԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ (1920-1960ականներ)

Անի Ֆիշենկճեան
fishenkjianani@hotmail.com

ՄՈՒՏՔ

1918ի աշնան Օսմանեան Թուրքիոյ զինուորական պարտութենէն կարճ ժամանակ ետք, Մուսթաֆա Քեմալի ազգայնական շարժումը յաջողեցաւ կեդրոնական եւ արեւմտեան Փոքր Ասիան, ինչպէս նաեւ Արեւմտեան Հայաստանը, Կարսի Մարզը, Սուրմալուն իր գերիշխանութեան տալ առնել[1]: Հայաթափուած Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիոյ վայրերու հայ մնացորդներու փոքրաթիւ հատուածներ, հակառակ թուրքերու ամէնօրեայ սպառնալիքներուն՝ կը շարունակէին չլքել իրենց պապենական հողը: Սակայն Քեմալի էթնիք միատարրութեան քաղաքականութեան որդեգրումով, անոնք ենթարկուեցան ուղղակի եւ անուղղակի հալածանքներու եւ տեղահանութեան: 1923-30ականներ երկարող այս գաղթականութեան հետեւանքով յառաջացած հայ տեղահանեալներուն կարեւոր մէկ մասը հաստատուեցաւ հիւսիսային Սուրիոյ Ճեզիրէի շրջանը, որով հայութիւնը թուային կարեւոր ներկայութիւն մը դարձաւ հոն:

Չաւէն Մսըրլեան կը հաւաստէ, որ այս շրջանին Թուրքիոյ ներքին գաւառներու հայութեան թիւը կը հաշուէր 30-40,000 հոգի: 1923էն սկսեալ անոնցմէ ոմանք կարենալով հոգալ իրենց ճանապարհածախսը կը հեռանան Պոլիս կամ Սուրիա[2]: Հալէպի Հայ Կարմիր Խաչի վարչութիւնը 6 Օգոստոս 1924 թուակիր նամակով, Ամերիկահայ Կարմիր Խաչի Կեդրոնական վարչութեան (Նիւ Եորք) կը գրէ. «*Թուրքիոյ սահմանամերձ ըլլալը իր դիրքով, հոս (Հալէպ Քաղաք - Ա.Ֆ.) ապաստան գտած են բազմահազար գաղթականներ: Գաղթականներու Հալէպ մուտքը, երբեք ընդհատում չէ ունեցած, մինչեւ այսօր շարունակաբար Թուրքիայէն ինքզինքնին ազատողները, խումբ խումբ կու գան սփուարացնելու անտուն ու անապաւէն մնացած մեր դժբաղդ ազգակիցներու թիւը*»[3]:

Մեր աշխատանքը երկրորդ[4] փորձն է ուրուագծային սեղմութեամբ ներկայացնելու Քամիշլիի հայ համայնքի եւ Ճեզիրէի Հայոց Առաջնորդական Փոխանորդութեան պատմութիւնը՝ սկիզբէն մինչեւ 1960ականներու աւարտը: Բնականաբար, այս ուսումնասիրութիւնը կարելի չէ ամբողջական համարել:

Թուրքիոյ արեւելեան նահանգներէն հայերու Սուրիա զանգուածային մեծ գաղթին ու Սուրիա հաստատուելուն վերաբերեալ առատ նիւթ կայ հայ մամուլի, հրատարակութիւններու, Սուրիոյ, Լիբանանի եւ Ամերիկայի ու գաղթականներու տեղաւորման հարցերով զբաղող հայ թէ օտար մարմիններու եւ միութիւններու տարեկան տեղեկագիրերուն ու

արխիւներուն մէջ: Նիւթին ուսումնասիրութիւնը ո՛չ միայն պատմամշակութային, այլ նաեւ քաղաքական նշանակութիւն ունի:

ՔԱՄԻՇԼԻ

Քամիշլին, կը գտնուի Սուրիոյ հիւսիս-արեւելքը, թրքական սահմանին վրայ: Ան կառուցուած է պատմական Մծբին[5] (յունարէն՝ Նիսիպին) քաղաքի պարիսպներէն 500 մեթր դէպի հարաւ: Քաղաքը երկաթուղագիծով հիւսիսէն կը միանայ Իրաքի Մուսուլ քաղաքին, իսկ հարաւէն՝ Սուրիոյ Հասիչէ, Տէր Զօր, Րաքքա, Հալէպ, Համա, Հոմս եւ Դամասկոս քաղաքներուն:

Քամիշլին իր անունը ստացած է Թուրքիոյ մէջ գտնուող համանուն գիւղէն, որ Խապուր Գետի Ճաղճաղ վտակի ափին կը գտնուէր[6]: Քամիշլի աննշան վայր մը եղած է մինչեւ Ա. Աշխարհամարտ, որմէ ետք դաշնակիցները նահանջելով թրքական հողերէն, ֆրանսացիք այստեղ՝ Այն Տիւարի մէջ, կը հաստատեն իրենց զօրանոցները, կը կազմեն բանակ[7] եւ 1926ին կը հիմնեն նոր քաղաքը[8], զոր կը բնակեցնեն հայերով ու քրիստոնեայ այլ գաղթականներով:

ՔԱՄԻՇԼԻԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒՄԸ

Քեմալական ազգայնական շարժման յաջողութենէն ետք, Թուրքիոյ նոր վարչակազմը հետամուտ եղաւ ինչպէս հայաբնակ այլ շրջաններու, նոյնպէս Պշերիկի[9] շրջանի հայաթափութեան քաղաքականութեան[10]: Քաղաքականութիւն մը, որ կը միտէր Արեւմտահայաստանը պարպել հայերու մնացորդներէն:

1925ին կը բռնկի քրտական ապստամբութիւնը, որ կը տարածուի յատկապէս Տիգրանակերտի եւ Բաղէշի նահանգները: Հայոց Ցեղասպանութեան մնացորդացը կ'ապրէր քիւրտ մեծաւորներու հովանաւորութեան տակ՝ իրաւազրկուած իր բոլոր իրաւունքներէն: Հետեւաբար չէր կրնար բողոքել թուրք կառավարութեան, կամ գլուխ բարձրացնել քիւրտերուն դէմ:

Կ'ենթադրուի, թէ Արեւմտեան Հայաստանէն գաղթականներու հոսքը կը սկսի 1927ին, ֆրանսացիներու՝ Քամիշլիի գրաւումէն (1926) անմիջապէս ետք: Որոշ տեղեկութիւններ կը հաստատեն սակայն, թէ 1925ին Քամիշլիի մէջ բնակութիւն հաստատած էին արդէն Հասիչէէն, Տէր Զօրէն, Րաքքայէն, Ռաս Ուլ Այնէն եւ Հալէպէն եկած հայ ընտանիքներ[11]:

Ֆրանսական բանակի ներկայութիւնը կը քաջալերէր Թուրքիոյ մէջ գտնուող սահմանամերձ քրիստոնեաներու գաղթը դէպի Սուրիա: Միւս կողմէն, 1927էն սկսեալ Պշերիկի[12] շրջանի հայութիւնը բռնագաղթի կ'ենթարկուի եւ կը ստիպուի հետիոտն անցնիլ Տաւրոսեան Լեռները: Ճամփան անոնք չեթէներէն կը կողոպտուին եւ կայք կը հաստատեն

Քամիշլի ու շրջակայքի ճահճոտ վայրերը, Ճաղճաղ Գետի ափերուն, պատմական Մծբին քաղաքի աւերակներուն տակ:

1927էն ետք նոր հոսք կը սկսի դէպի վերոյիշեալ վայրերը: Գաղթականները ընդհանրապէս կու գային Թուրքիոյ քրտաբնակ գաւառներէն, Ճեզիրէթ Պոթանէն կամ Պշերի լեռներէն, եւ տեղանունի հիմամբ կոչուած էին պշերիկցիներ[13]:

1928ի տուեալներով Քամիշլիի մէջ կար 10-15 տուն հայ, որոնք չունէին դպրոց եւ կրօնական հոգածութիւն[14]: Քամիշլիէն Տիգրան Ռշտունի 8 Դեկտեմբեր 1928 թուակիր գրութեամբ, տխուր կը ներկայացնէ այդ շրջանի մէջ գտնուող գաղթականներու վիճակը եւ անմիջական օգնութիւն կը խնդրէ անոնց համար: Բացի թշուառներու օգնութեան փութալու խնդրանքէն, ան կը տեղեկացնէ արաբներու եւ թուրքերու քովէն հետզհետէ հասնող որբերու եւ որբուհիներու մասին եւ կը խնդրէ շուտափոյթ միջոցներ որոնել պատսպարելու համար զանոնք[15]: Այս գծով Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովը կը յանձնարարէ ատենապետ Ազիրեանին եւ Ֆարէս Սապպաղեանին, որ հանդիպում ունենան ՀԲԸՄ տեղական մասնաճիւղին եւ կամ անոր ատենապետին հետ[16]:

1929ի առաջին ամիսներուն սկիզբ կ'առնէ Թուրքիոյ արեւելեան գաւառներէն դէպի Սուրիա զանգուածային արտագաղթը. գաղթականներուն «մէկ մասը գաղթած են կամովին, մինչեւ Օգոստոսի վերջերը, իսկ մեծագոյն մասը, Սեպտեմբերէն սկսեալ»[17]:

1929ի աշնան, Թուրքիոյ ներքին գաւառներու մէջ ապրող հայերուն կը պարտադրուի լքել իրենց անշարժ ունեցուածքը եւ թրքական անցագիրերով մուտք գործել Սուրիա: «Այդ անցագիրերուն վրայ կը զարնուէր կնիք մը, որ կ'ըսէր 'Թուրքիա վերադարձը արգիլուած'»[18]: Գաղթականները կու գային Տիարպեքիրէն, Խարբերդէն, Բալուէն, Մարտինէն, Վանէն, Պշերիկէն եւ այլ շրջաններէ: Խարբերդէն եւ Բալուէն գաղթողները երկաթուղիով կը հասնէին Սուրիոյ սահմանագլուխը, իսկ «Տիարպեքիրի շրջանի հայերը հարկադրուած էին քալելով հասնիլ սահմանագլուխ»[19]: Սակայն 1929ի վերջին ամիսներուն թուրք-սուրիական սահման հասած (Ախթերինի կայարան) 200 նոր գաղթականները չունենալով անցագիր՝ անոնց ցոյց կը տրուի դէպի Թուրքիա վերադարձի ճամփան[20]:

Բերիոյ Թեմը նկատի ունենալով այս երեւոյթին յուժ կարեւորութիւնը 28 Հոկտեմբեր 1929ին պաշտօնական գիրով կը պարզէ իրավիճակը Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. հայրապետին եւ անյապաղ լուծում կը խնդրէ: «*Քէմալական Թուրքիոյ որդեգրած հայահալած քաղաքականութեան հետեւանքով, Թուրքիոյ ներքին գաւառներէն գրեթէ ամէն օր, Հալէպ կը հասնին գաղթականաց կարաւաններ, որոնք հազարումէկ դժուարութիւններով հազիւ թէ ապաստանած Սուրիոյ ասպնջական սահմանները, կ'ենթարկուին կարգ մը դժուարութիւններու, անոր համար*

որ անոնցմէ շատերը կանոնաւոր անցագիր չունենալով, համապատասխան վիզա չեն ստացած Ասրանայի ֆրանսական հիւպատոսարանէն: Միջհայրենակցական Միութեան Վարչութեան գլխաւոր խնդրանքին վրայ, Հոկտեմբեր 24 թուակիր եւ 9940 համարով դիմած ենք Հալէպի Ֆրանսական Տեղեկատու Դիւանի պետ Քումանտան Գուվէռին, որ եթէ կարելի է, առանց դժուարութեան Սիւրիա մտնել արտօնուին քէմալական Թուրքիայէն ազատուող հայ խլեակները»[21]:

Քաղաքական ժողովը իր Հոկտեմբեր 1929ի նիստին նկատի կ'ունենայ նաեւ Տիգրանակերտի Նահանգի Պշերիկ-Ռըշգոթանի շրջանէն արտաքսուած եւ Քամիշլի ու Հասիչէ համախմբուած քրտախօս եկուոր շուրջ 150 ընտանիք հայերու կողմէ իբրեւ ներկայացուցիչ եկող երկու ազգայիններու գրաւոր եւ բերանացի դիմումները, «*որոնք շատ տխուր կերպով կը պատկերացնեն լեռնակեցիկ այդ մաքուր ժողովուրդի վիճակը, եւ կը խնդրեն որ անմիջական օգնութիւններ ըլլան, այլապէս անտուն եւ անպատսպար այդ ժողովուրդը յառաջիկայ խստաշունչ եղանակին ցրտահար եւ սովահար պիտի փճանայ*»[22]:

Փետրուար 1929ի սկիզբները Քամիշլի կը հասնին «72 տնուորներ»[23]: Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովը այս մասին մանրամասն կը տեղեկացնէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 6 Ապրիլ 1929 թուակիր եւ 504 համար տեղեկագիրով եւ միաժամանակ կը խնդրէ «*Ս. Օծութեան ազդու միջամտութիւնը ֆրանսական Բարձր-Գօմիսարութեան մօտ, կառավարական միջոցներով Քամիշլիի շրջանին մէջ տեղաւորելու համար զանոնք, որպէսզի հնարաւորութիւն ունենային նուիրուելու հողագործութեան եւ արդիւնաւորելու այդ շրջանի տնտեսութիւնը*»[24]: Քաղաքական Ժողովը «*քրտախօս հայոց ներկայացուցիչներուն կողմէ մատուցուած խնդրագիրով*»[25] անգամ մը եւս կը խնդրէ՝ կրկնել դիմումները Բարձր-Քոմիսէրութեան մօտ, «*յաջողեցնելու համար իր հայրենիքէն բռնագաղթուած մերազնէից տեղաւորումը Քամիշլիի մէջ, կամ շրջակայքը իրենց առանձին գիւղ մը տրամադրուելով: Մտավախութիւնը ունինք որ եթէ անմիջական օժանդակութիւններ չընծայուին այս ժողովրդեան,- ինչպէս որ ըսուած է մեզի,- մի գուցէ անոնք հեռանան մայրենի եկեղեցիէն, ի խնդիր պատառ մը հացի*»[26]:

Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովը իր 22 Նոյեմբեր 1929ի նիստին կը քննէ «*Թուրքիոյ Արեւելեան նահանգներէն եւ ի մասնաւորի Խարբերդի եւ շրջակայ գաւառներէն Հալէպ, Հասիչէ եւ Քամիշլի հասած վեց հարիւրէ աւելի ազգայնոց ներկայ թշուառ ու անմխիթար վիճակը*»[27], կ'որոշէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն խնդրել Սուրիա հասնողներու եւ գալիք հարիւրաւորներու տեղաւորման, պարենաւորման պարագան ուշադրութեան յանձնել Լիբանանի ու Դամասկոսի Առաջնորդութեանց, ինչպէս նաեւ «*արտասահմանի Առաջնորդութեանց եւ բարեսէր ազգայնոց, վերահաս ձմեռէն առաջ օգնութեան փութալու այս կարօտեալներուն*»[28]:

Քաղաքական Ժողովը նկատի ունենալով խնդիրին հրատապութիւնը նամակներ կը յղէ ՀԲԸՄ Տեղական Մասնաժողովին եւ Հայ Ազգային Կարմիր Խաչին (ՀԿԽ), խնդրելով որ «*սփանձնէ ասոնց խնամափարութիւնը, ապաւինելով ազգային Առաջնորդարանի օժանդակութեան*»[29]:

Գաղթականներու տեղաւորման ու սննդաւորման հարցով մտահոգ էր նաեւ Ամերիկայի ՀԿԽ Կեդրոնական Վարչութիւնը: Կազմակերպութիւնը իր Ժ. պատգամաւորական ժողովին՝ արծարծուած գերուհիներու եւ գերիներու ազատագրութեան օրակարգով կ'որոշէ նաեւ ՀԿԽի Սուրիոյ Շրջանային վարչութեան միջոցով նոր տարեշրջանէն սկսեալ այս գործը աւելի արդիւնաւէտ կազմակերպել. «*Նոր գաղթը Սիւրիոյ սահմաններէն ներս՝ գրաւած է մեր խոր ուշադրութիւնը եւ Պատգ. ժողովէն չնախատեսուած այդ պարագան սփիպած է Կեդրոնս, որ սահմանուած պիւտճէին մէջ կատարէ այնպիսի փնտրեսութիւն մը, որով այդ շրջանի միւս կարիքները հոգացուին խնայողաբար, որպէսզի չփուժեն այլ Շրջանները՝ իրենց համար նախատեսուած պիւտճէէն*»[30]:

19 Դեկտեմբեր 1929ին «*Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսին հովանաւորութեամբ*»[31] եւ վաւերացումով, Հալէպի մէջ կը կազմուի Գաղթականաց Խնամատարութեան մարմին մը՝ «*Թուրքիայէն բռնագաղթով սահմանն անցնողներու տեղաւորման եւ արտասահմանէն եկող նպաստներու բարւոք մատակարարութեան հսկելու համար*»[32]: Խնամատարութիւնը կազմուած էր՝ Տքթ.ներ Ալթունեան եւ Յարութիւն Տէր Ղազարեան, Հայր Գաբրիէլ Ծ.Վ. Գասպարեան, Արմէն Մազլումեան եւ Գրիգոր Ազիրեանէ[33]: Խնամատարութիւնը Դեկտեմբերի կիսուն Տոքթ. Թորոս Պասմաճեանին կը յանձնարարէ երթալ «*Գամըշլու եւ շրջանները, քննել եւ ուսումնասիրել նորեկ գաղթականներու կացութիւնը, փանիլ պէտք եղած աշխատանքը անոնց մէջ ծաւալած փարափոխիկ հիւանդութեանց առաջքը առնելու համար եւ փեղեկագրով մը իրենց պարզել անոնց կարիքները*»[34]: Գաղթականները թշուառութեան մատնուած էին եւ «*երկու-երեք շաբաթէ ի վեր անոնց կը մատակարարէին հաց եւ ապուր: Ծաղկախտը բոյն դրած էր այնփեղ ապաստանող երեխաներուն մէջ եւ հարիւրէ աւելի երեխաներու կեանքը խլած էր*»[35]: Այս պատճառով Գաղթականաց Խնամատարութիւնը կ'որոշէ այդ շրջանները ուղարկել Տոքթ. Պասմաճեանն ու ՀԲԸՄ պաշտօնատար Մ. Թերճանեանը՝ ժողովուրդը պատուաստելու եւ նպաստ բաշխելու[36]:

Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջաններուն մէջ հայ տարագիրներու օգնութեան փութալու համար, Հալէպի Գաղթականաց Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբը (ԳԽԿՅ) կը յառաջացնէ ենթայանձնախումբ մը հետեւեալ ազգայիններէ՝ Վեր. Ահարոն Շիրաճեան, Միհրան Բիւզանդեան, Տոքթ. Խաչիկ Պօղոսեան, Սարգիս Սէլեան, Միհրան Հերարտեան եւ Միհրան Պասմաճեան[37]: Յանձնախումբը

իր Ա. նիստը կը գումարէ Տոքթ. Ալթունեանի բնակարանը, խորհրդակցելու գաղթականներու բարուօք վիճակ մը ապահովելու մտահոգութեամբ: Ենթայանձնախումբը կ'որոշէ գաղթականներու նպաստի գործի ձեռնարկելու համար առաւել մօտէն հետաքրքրուիլ եւ ցանկագրել անոնց՝ անունը, մականունը, տարիքը, ծննդավայրը եւ նիւթական վիճակը[38]:

Յանձնախումբը ուսումնասիրելէ ետք գաղթականներու վիճակը կը տեղեկացնէ, որ 1929-1930՝ մէկ տարուան ընթացքին, Թուրքիայէն Սուրիա հասնող գաղթականներուն թիւը հասած է 800 ընտանիքի, մօտաւորապէս 5000 հոգի, որոնցմէ 600 ընտանիք առժամաբար ապաստանած են «*Իրաքի եւ Թուրքիոյ սահմանամերձ Քամըշլը եւ Հասիճէ շրջաններուն մէջ, իսկ 200 ընտանիք ալ կը մնան Հալէպ հիւղաւաններու եւ խաներու մէջ*»[39]: Քամիշլի եւ Հասիչէ հասնող գաղթականներուն անյապաղ օժանդակութիւն ցուցաբերելու համար կը կազմուի յանձնախումբ, կը ղրկուի բժիշկ, դեղօրայք եւ այլ պիտոյքներ եւ հոգեւոր մխիթարութեան համար քահանայ մը:

Տ. Մկրտիչ Քհնյ. Մուրատեան 1929ի սկիզբը վերադարձած ըլլալով «Րասիւլայն, Հասիչէ, Քամիշլի եւ Ամուտայի շրջանը կատարած իր հոգեւոր այցելութենէն» 25 Մարտ 1929ին տեղեկագիր կը ներկայացնէ, որով կը յայտնէ, որ վերոյիշեալ շրջաններուն մէջ ժողովուրդին քուէարկութեամբ առանձին թաղական խորհուրդներ կազմած է եւ կը խնդրէ վաւերացում:

Ֆրանսական իշխանութիւնը եւ տեղական կառավարութիւնը Քամիշլի եւ Հասիչէ ապաստանած գաղթականներու բնակութեան եւ տեղաւորման համար կը տրամադրեն ընդարձակ եւ բարեբեր հողեր՝ թրքական սահմանէն 50 քլմ. հեռաւորութեան վրայ: Իսկ Հալէպի Գաղթականաց Ենթայանձնաժողովի կողմէ Քամիշլի կը ղրկուի Վեր. Շիրաճեան, նորեկ գաղթականներու կացութիւնը ուսումնասիրելու նպատակաւ: Հալէպի Գաղթականաց Խնամատարութեան կողմէ կազմուած յանձնախումբը ուսումնասիրելէ ետք շրջանի՝ Ճեզիրէի, իրավիճակը կը տեղեկագրէ, որ գաղթած 600 ընտանիքներէն միայն 50ը ինքնաբաւ է, 150ին հող, տուն եւ «200ին թէ՛ հող, թէ՛ տուն եւ թէ՛ լծկան ու սերմնցու եւ լծկան տալէ վերջ, ստիպուած ենք մինչեւ յառաջիկայ գարուն ապրեցնել»[40]: Մնացեալ 200 ընտանիքը բոլորովին չքաւոր է եւ ամէն տեսակի օգնութիւն ցուցաբերելէ ետք, յանձնախումբը հարկ կը համարէ մինչեւ գարուն «ապրեցնել զանոնք»[41]:

Բնակութեան համար կը նշանակուին գիւղեր եւ աւաններ՝ զանոնք տեղաւորելու եւ ինքնաբաւ դարձնելու համար: Կ'որոշեն բնակութեան վայր դարձնել Չքըր Պազարը, Թէլ Պրաքը եւ Ղարասուն: Վերջինս, իր առողջարար օդին, բարեբեր հողերուն եւ երկու գետերու միջեւ գտնուելուն համար՝ կ'ընկալէ 500 ընտանիքներ: Իսկ Հասիչէի մօտերը, Թէլ Պրաքի սահմանին շուրջ, Ճաղճաղ Գետէն ոչ-հեռու, իրարմէ կէս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող երկու բլուրներու վրայ կ'որոշուի կառուցել

Սահակաշէն եւ Մեսրոպաշէն անունով երկու գիւղեր: Այստեղ ապաստան պիտի գտնէին Դեկտեմբեր 1929ին Թուրքիայէն Ճեզիրէի կողմերը գաղթած 600 տուն քրտախօս հայերէն 130 ընտանիք:

Եւ այսպէս, 1927-1930՝ Թուրքիոյ Արեւելեան նահանգներէն դէպի Սուրիա գաղթող հայերը, 31 Մարտ 1930ի տուեալներով, մեծ մասամբ տեղաւորուած էին Սուրիոյ հիւսիս-արեւելեան հետեւեալ շրջաններու մէջ.-

«Հասիչէ 100 ընտանիք լուսաւորչական եւ 100 ալ հայ կաթոլիկ.
Քամիշլի 400 ընտանիք լուսաւորչական եւ 30 ընտանիք կաթոլիկ հայեր.
Գարամանիէ 15 լուսաւորչական եւ հայ կաթոլիկ.
Ամուտա՝ 20 կաթոլիկ եւ 40-50 տուն լուսաւորչական»[42]:

Անոնք, առաջին տարիներուն, դժուարին կացութեան կը մատնուին: Մեծ էին Հայ Գաղթականաց Խնամատարական Կեդրոնական Յանձնախումբի, ֆրանսական եւ տեղական իշխանութիւններու ցուցաբերած օգնութիւնն ու նպաստը: Սակայն վրանաբնակ գաղթականները՝ դժգոհ իրենց կացութենէն, կը ձգտէին մշտապէս կայք հաստատել առաւել ապահով վայրեր: Այսպիսով շատեր կայք կը հաստատուին Ամուտա, Ռաս Ուլ Այն, Տերպէսիէ, Հասիչէ եւ Տէր Զօր, ուրիշներ կը տեղափոխուին Տերիք ու շրջակայքի Այն Տիւար, Ուանըքէ, Պազընտանէ, Հաքամիէ եւ այլ գիւղեր՝ Տիգրիսի մօտակայքը[43]:

Վեր. Շիրաճեան իր 31 Մարտ 1930 թուակիր տեղեկագիրին մէջ հետեւեալը կը գրէ. «*Հասիչէէն դէպի Քամիշլի, դէպի Արեւելք գաղթականներ ընդունող բազմաթիւ բնակավայրեր կան: Իրաք-Թրքական սահմանին վրայ կայ ընդարձակ տարածութիւն մը, հոն կան հարիւրաւոր հողէ բլուրներ, որոնք հին ժամանակներուն քաղաքներու եւ գիւղերու կեդրոններ էին, ինչպէս Թէլ Արուսը, Թէլ Ուզումը, Թէլ Ինճիրը, Թէլ Պէյտարը, Թէլ Մաճտը եւ այլն: Այս վայրերու ներկայ բնակչութիւնը քրիստոնեաներու կողքին բաղկացած է քուրդ մեծամասնութենէ մը, քրտական գիւղեր կ'երեւին ամէն կողմ: Պետրսի արաբները նոյնպէս կ'ուզեն հաստատուիլ շրջանին մէջ նորանոր գիւղեր շինելով*»[44]:

Թուրքիոյ ներքին գաւառներէն հայերու պարտադիր արտագաղթով մտահոգ էին նաեւ բարեսիրական, նպաստահաւաք մարմինները, ՀԲԸՄը, սրտցաւ ազգայիններ, տիկնանց յանձնախումբեր, կուսակցութիւններ, պատրիաքարաններ, առաջնորդարաններ, հայ մամուլը, որոնք գերազանցապէս օժանդակեցին ազգային մարդասիրական գործին[45]:

Հետզհետէ դէպի Սուրիա, ի մասնաւորի Քամիշլի, արտագաղթող հայերու թիւը կը բազմանայ եւ Քամիշլիի շրջակայքը կը հիմնուին 21-22 փոքր հայկական գիւղեր առհասարակ 10-15 ընտանիքներով եւ ծխական դպրոցներով[46]: Յետագային կ'աւելնան գիւղերու թիւն ու ընտանիքները՝ (Ուըթուըթիէ, Հըլըքօ, Տալաուիէ, Տըպանա, Աուեճա, Ապու Ճալալ, Թլսում, Ճուխա, Մլուքսարա, Շամասիէ, Հըմերա, Շէյխաճիլ, Ճընետիէ (մեծ),

Ճընետիէ (փոքր), Չըրքօ, Սըլամալէք, Մասհատա, Հըլելիէ, Տայօ, Հիմօ, Ճըմաքէ, Զանտա եւն.)[47]:

Այստեղ ապաստան գտած հայ կարօտեալ ընտանիքները կը բնակէին վրաններու տակ: Իրենց տրուած էին հարկաւոր իրեր՝ հողամշակութեան եւ տուներու շինութեան:

Առաջին տարին երաշտի հետեւանքով ցանքը արդիւնաւէտ չ'ըլլար եւ խնամակալութիւնը երկրորդ անգամ սնունդ եւ սերմնցու կը տրամադրէ նորաբնակներուն: Հաւանական նոր երաշտէ խուսափելու համար, Ճաղճաղ Գետին առջեւ թումբ կանգնեցնելու անյաջող փորձեր կը կատարուին:

1931ին կեցութեան անյաղթահարելի իրավիճակը մտահոգիչ դարձած էր ազգային մարմիններուն համար. անյապաղ պէտք էր քայլեր ձեռնակել: ԳԽԿՅին նախաձեռնութեամբ եւ հոգածութեամբ, շուրջ 500 գաղթական պշերիկցիներ (կամ 180 ընտանիք), Քամիշլիէն կը տեղափոխուին Թէլ Պրաք, ուր իրենց համար իբրեւ ազգային կալուած գնուած էին Թէլ Պրաքի բլուրն ու շրջակայ հարթ տարածութիւնները: Անոնք իրենց ընտանիքներուն համար կը կառուցեն հողաշէն բնակարաններով երկու գաղթակայան, զորս կը կոչեն Մեսրոպաշէն եւ Սահակաշէն (Վերի Գիւղ եւ Վարի Գիւղ): Իւրաքանչիւր գիւղ կ'ունենայ իր գիւղապետը: Այնուհետեւ կը բերուին նաեւ անոնց ընտանիքները, իւրաքանչիւր ընտանիքի կը տրուին հերկող ու կաթնտու կենդանիներ, երկրագործական գործիքներ, սննդամթերք ու սերմնցու: Նոյն տարին գիւղացիք կը կատարեն իրենց առաջին ցանքը[48]:

1931ին Սահակաշէնը կ'ունենայ 75 միայարկ բնակարաններ, իսկ Մեսրոպաշէնը՝ 64 բնակարան եւ 229 բնակիչ:

Նորաշէն երկու գիւղերու բնակիչները առհասարակ կը զբաղին հողագործութեամբ: Անոնք ունեցած են իրենց համար բաւարար մշակելու հող, որուն արդիւնքով կրցած են իրենց ապրուստը հոգալ:

1931ի ամառը երկու գիւղերու բնակչութեան թիւը կը հասնի 1177ի: Գոյութիւն ունեցած է դպրոց մը՝ երեք բաժանումով, երեք ուսուցիչներու հսկողութեամբ: Երկսեռ աշակերտներու թիւը՝ 138: Համայնքը ունէր քահանայ: Գիւղացիները բարեկամական փոխյարաբերութիւն կը հաստատեն դրացի աշիրէթներու հետ[49]:

Քամիշլիի եւ Թէլ Պրաքի գաղթակայաններու կառուցման եւ գաղթականներու խնամատարութեան գործին մէջ մեծ եղած է Հայ ԳԽԿՅին նիւթական եւ բարոյական ներդրումը: Ան լիազօրուած էր Քամիշլիի եւ Հասիչէի շրջաններուն մէջ գաղթականներու ցանկագրումին եւ տեղաբաշխումին:

1932ին Բերիոյ Թեմի Առաջնորդարանի տուեալներով Քամիշլիի առաքելական եկեղեցւոյ զաւակներուն թիւը կը հաշուէր շուրջ 3000 անձ: «*Հազիւ հինգ տարուան կեանք մ'ունեցող Քամիշլի գաւառը՝ ունի 500է աւելի հայ ընտանիքներ զանազան երկրացի, որոնցմէ մեծամասնութիւնը*

Թիւրքիայէն վերջերս մազապուրծ քրտախօս հայեր ըլլալով, կան փիգրանակերտցիք. մաս մը ուրֆացիք եւ 12 հոգի այնթապցիք»[50]:

Վերոյիշեալ թուականներուն համայնքը չունէր եկեղեցի եւ դպրոց, ժողովուրդը հոգեւոր սնունդ ստանալու համար կը յաճախէր օտար եկեղեցիներ եւ դպրոցներ. «...այլասերումի վտանգի մ'առջեւ կը գտնուէր: Մանաւանդ որ շրջապատուած էր նենգամէտ որսորդներէ, որոնք ամէն ճիգ ի գործ կը տանէին՝ օգտուելով ժողովուրդի անկազմ վիճակէն: Եւ սա ցաւալի կացութիւնը ոչ մէկուն ուշադրութիւնը կը գրաւէր»[51]:

Պտք է ընդգծել, թէ վերոյիշեալ թուականներուն բնակավայրէն ներս կազմակերպուած ազգային իշխանութիւն գոյութիւն չունէր, մարդիկ իրարու կապուած էին համաքաղաքացիական կապերով:

Բայց ֆրանսական բանակի առկայութիւնն ու ստեղծուած բարենպաստ պայմանները, մղիչ ուժ պիտի հանդիսանային ոչ միայն հայերու, այլեւ սահմանամերձ քրիստոնեաներու՝ բնակութիւն հաստատել վերոյիշեալ վայրերուն մէջ:

Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ 1939-46՝ Քամիշլի եւ Հասիչէ քաղաքներու բնակչութեան, յատկապէս հայերով ստուարացումին շնորհիւ կը սկսի բարեկարգուիլ ու ծաղկիլ յատկապէս Քամիշլին: Այս բարելաւման մէջ մեծ ներդրում ունին հայերը, որոնք իրենց տարբեր մասնագիտութիւններով ու արհեստներով այլ հմայք մը տուին արաբական շուկային: 1946ին Քամիշլիի բնակչութեան թիւը հասած էր 10,200ի[52]:

ՆԵՐԳԱՂԹ

1946ին դէպի հայրենիք զանգուածային ներգաղթի աւետիսը կը հասնի նաեւ Ճեզիրէի հայկական գիւղերն ու մեծ խանդավառութիւն կը ստեղծէ:

Ինչպէս Հալէպի, Դամասկոսի եւ Հոմսի, այնպէս ալ Ճեզիրէի շրջանին մէջ կը կազմուի ներգաղթի յատուկ կոմիտէ, որուն կ'անդամակցին Նորայր Ինճէճեան, Խաչօ աղա Շարոյեան, Մուրատ աղա Շարոյեան եւ ուրիշներ:

Հայ կեանքը, ներգաղթի օրերուն եւս, զուրկ չէր ընթացիկ իրարանցումէ: Ներգաղթի թեկնածուները անմիջապէս լուծարքի կ'ենթարկեն իրենց կալուածները՝ «10 օրէն մեկնելու ակնկալութեամբ»: Գաւառներու մէջ ներքնապէս լարուած կացութիւնը կը շարունակուի մինչեւ ներգաղթի կոմիտէի ծանօթ յայտարարութիւնը, թէ՝ «մթնոլորտային պայմաններու պատճառաւ ներգաղթի աշխատանքը կանգ պիտի առնէ եւ պիտի վերսկսի յառաջիկային»[53]:

Պէտք է նշել, թէ Քամիշլիի շուրջ գտնուող 10է աւելի հայ գիւղեր, հայերու սեփականութիւնը չէին: Անոնք գիւղատէրերու հետ պայմանագրութեամբ, որոշ պայմանաժամերով վարձու առնուած էին: Կնքուած համաձայնութեան մաս կը կազմէր նաեւ գետինի իրաւունքը, զոր գիւղատէրերը կը ստանային ամէն տարի բերքին 10-15% համեմատութեամբ:

Գիւղացիները՝ յուսադրուած մօտալուտ մեկնումի ակնկալութեամբ, աւելորդ կը նկատեն տուեալ տարուան վար ու ցանքի մասին մտածել, եւ ստացած հունձքի արդիւնքը ծախելէ ետք՝ կը ծախեն նաեւ ստացուածքները եւ լծկանները մեծ մասամբ:

Նիւթական եւ բարոյական կորուստը ենթադրելի է:

1947ին ներգաղթը կը շարունակուի:

1947ին Սուրիայէն կը հայրենադարձուին 1280 ընտանիքներ. 350ը՝ Ճեզիրէէն, 200ը՝ Հալէպէն, 260ը՝ Դամասկոսէն եւ Քեսապէն, մնացեալը՝ Սուրիոյ այլ շրջաններէ:

Բերիոյ Թեմի 1946ի տուեալներու համաձայն, Քամիշլիի հայ բնակչութեան թիւը 7866 էր, իսկ 1947ի տուեալներով՝ 4215 անձ[54]:

Ներգաղթի պատճառաւ կը նուազի ոչ միայն Քամիշլիի հայ բնակչութիւնը, այլեւ որոշ շրջաններու մէջ կը փակուին ծխական դպրոցները եւ տեղացի հայերը առաւել բարենպաստ պայմաններ ունեցող վայրերու փնտռտուքով կը գաղթեն մօտակայ հայահոծ շրջաններ եւ քաղաքներ:

1950ին Քամիշլին յարաբերաբար կը վերագտնէ իր նախկին աշխուժութիւնն ու խաղաղութիւնը: Հետզհետէ Քամիշլի հաստատուող հայերու թիւը վերելք կ'արձանագրէ: Ըստ 1951ի տարեկան վիճակագրութեան, Քամիշլի կը հաշուէր շուրջ 9317 հայ մարդ (իր շրջակայքով):

16 Յունիս 1965ին Հալէպ կը ժամանեն ներգաղթի լիազօր պատուիրակներ՝ Ա. Նանագիւլեան եւ Գ. Փեհլեւանեան: Պատուիրակները կ'այցելեն Քամիշլի, Րաքքա, Տէր Զօր քաղաքները եւ Սուրիոյ Ճեզիրէի շրջանի 12 գիւղական բնակավայրեր, ուր կ'ապրէին հայեր: Նախապատրաստական աշխատանքներ կատարելէ ետք կը սկսի հայրենադարձներու ընդունումը: 20 Յուլիս 1965ին, հայ պատուիրակներու կողմէ ընդունուած էր տեղափոխել 1364 ընտանիք՝ 7700 հոգի, 10 քաղաքներէ եւ քաղաքատիպ բնակավայրերէ, ինչպէս նաեւ 350 ընտանիք՝ 2500 հոգի՝ երկրի գիւղական շրջաններէ: Սակայն ծրագրուած քանակէն «կարող են հայրենադարձուել» ընդամէնը 220 ընտանիք, 1000 մարդ: Մնացեալը՝ 1144 ընտանիք՝ 6600 մարդ եւ որոշ մեծ ընտանիքներ նոյնպէս «պատրաստւում են հայրենադարձուելու այս տարի» եւ կամ՝ էլ 1966ի սկիզբը[55]:

1965-1966՝ Քամիշլիի եւ շրջակայ «շուրջ 30 հայաբնակ գիւղերու բնակչութենէն 4000 հայեր ներգաղթեցին Մայր Հայրենիք»[56]:

ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 1932ին Քամիշլիի արեւելեան կողմը, «Պշերի» կոչուած հայաբնակ թաղին մէջ, վարձու երկու հայաշէն սենեակներու մէջ հիմը կը դրուի հայկական վարժարանի մը: 1933ին, վարժարանը կը փոխադրուի վարձու շէնք մը, ուրկէ տարի մը ետք՝ նորակառոյց եկեղեցւոյ բակը: «*Սէրն*

ու եռանդը՝ դէպի եկեղեցի եւ տոհմային դաստիարակութիւնը, եւ միշտ նախաձեռնակ ոգին եւ յանդուգն գործունէութիւնը, որը պարծանքով կրնանք ըսել, թէ մի առաւելութիւն եւ առաքինութիւն է՝ ըստ մեր առած կրթութեան՝ որ իրականն է եւ ճշմարիտը»[57]: Այս առաջադրանքէն թելադրուած, բազմապիսի խոչընդոտներով հանդերձ, համայնքի զաւակները հանգանակութեամբ եւ «այլ միջոցներով» կը կանգնեցնեն շէնք մը, որ թէ՛ եկեղեցի, թէ՛ դպրոց, թէ՛ դասարան, թէ՛ հաւաքատեղի ծառայէ հայութեան[58]: Նորաշէն դպրոցը, սակայն, պիւտճէ չունէր եւ միշտ ենթակայ՝ փակուելու վտանգին. «*Միայն 400ի չափ երկսեռ աշակերտութիւնը նստեցնելու համար պէտք եղած նստարանները միայն Այնթապցիներս հոգացինք*»[59]:

1934ին կը կազմուի 7 անդամներէ բաղկացած նշանակովի թաղական խորհուրդ մը, որ կը վաւերացուի կեդրոնական իշխանութեան կողմէ:

Այս թուականներուն համայնքը օժտուած էր ընդարձակ նորաշէն եկեղեցիով, որուն կից կանգնած էր դպրոցի շէնքը 2 սենեակներէ բաղկացած: «*Եկեղեցւոյ եւ դպրոցին առջեւը ունին մօտ 400 մեթր քառակուսի տարածութեամբ բակ մը*»[60]: Երեսնականներու առաջին կէսին համայնքը ունէր երկու քահանայ՝ Տ. Աշոտ Փափազեան եւ Տ. Գաբրիէլ Երէցեան, մինչ «*Ժողովուրդի կարեւոր մասը քրտախօս են*»[61]:

Առաջին տարեշրջանին դպրոցէն ներս դասարանային դրութիւն գոյութիւն չէ ունեցած, հակառակ աշակերտներուն տարիքի տարբերութեան: 1934-35 կրթաշրջանին վարժարանը կ'ունենայ մինչեւ 4րդ դասարան, իսկ 1945-46ին՝ 6րդ դասարան:

1935ի տուեալներով Քամիշլին կը համարուի հիւսիսային Սուրիոյ ամէնէն հայաշատ կեդրոնը, ուր կը բնակէր 600 տուն հայ[62]:

Խումբ մը գիտակից հայերու նիւթական օժանդակութեամբ եւ ՀԲԸՄ նուիրատուութեամբ՝ հիմը կը դրուի Ազգ. Երկսեռ Վարժարանին՝ գլխաւորութեամբ Տոքթ. Գրիգոր Սարգիսեանի: Վարժարանի առաջին ուսուցիչները եղած են Արշակ Երէցեան եւ Մուխսի Մովսէս Մուրտեան, իսկ տնօրէնները, յաջորդաբար՝ Խաչիկ Քարուկեան, Արամ Սարգիսեան, Ստեփան Եաղուպեան, Կարապետ Պետրոսեան եւն.:

1933-34 կրթաշրջանին ՀԲԸՄը կը դադրեցնէ իր նիւթական օժանդակութիւնը ու կը բաւականանայ խորհրդանշական օգնութեամբ: Այդ օրէն սկսեալ վարժարանի պիւտճէին 80 տոկոսը կ'ապահովուի աշակերտութեան վճարած կրթաթոշակով եւ պարբերաբար կազմակերպուած դպրոցական ձեռնարկներով:

1963ին, պետական որոշմամբ՝ կը վերանուանուի Ազգ. Եփրատ Երկսեռ Վարժարան:

Համայնքը տեղական կրթական ուժեր չունենալով՝ տնօրէն եւ ուսուցիչ փնտռած է այլ քաղաքներու մէջ: Ասոնց պաշտօնավարութիւնը յաճախ երկար չէ տեւած: Ասոնք, ընդամէնը 1-2 տարի պաշտօնավարելէ ետք

մեկնած են: Գործնականապէս 1961-63էն սկսեալ դպրոցը կ'օժտուի տեղացի ուսուցիչներով: 1960ականներուն դպրոցի տնօրէն կը նշանակուի Ասատուր Պօղոսեան[63]:

Վարժարանէն շրջանաւարտ եւ յետագային պաշտօնավարող ուսուցիչ-ուսուցչուհիներէն են՝ Յակոբ Առաքելեան, Պետրոս Գալուստեան, Զուարթ Գալուստեան, Մանուշակ Գզիրեան, Շամիրամ Գէորգեան, Սիրվարդ Գէորգեան, Մատլէն Թեճիրեան, Անահիտ Թէօքմէճեան, Մանուշակ Թովմասեան, Թագուհի Խաչատուրեան, Վալանթին Մանուէլեան, Աստղիկ Մելքոնեան, Գէորգ Սրկ. Մելքոնեան, Անահիտ Մկրտիչեան, Շամիրամ Յարութիւնեան, Ազատուհի Յովհաննէսեան, Լուսվարդ Նասրեան, Թադէոս Պաղիկեան, Մարի Պօղոսեան, Զաւէն Սայեան, Լեւոն Առաքելեան: Վերջին երկուքը եղած են վերոյիշեալ բոլորին ուսուցիչները:

1949ին Ս. Յակոբ եկեղեցին փուլ կու գայ եւ անոր տեղ կը կառուցուին նոր դասարաններ:

Վիճակագրութիւն Ճեզիրէի Հայոց Թեմի վարժարաններու (1 Յունուար-31 Դեկտեմբեր 1942)[64]

Վայր	***Հայ բնակչթն.***	***Վարժարան***	***Աշակերտութիւն***
Քամիշլի	4814	Հայ Ազգային Վրժ.	342
Հասիչէ	272	Հայ Ազգային Վրժ.	104
Տէր Զօր	580	Հայ Ազգային Վրժ.	104
Ռաս Ուլ Այն	372	Մեսրոպեան Վրժ.	86
Տերպեսիէ	266	Ազգային Վարժարան	47
Ամուտա	233	Մեսրոպեան Վրժ.	47
Թէլ Պրաք	577	Սահակեան Վարժարան	48
Թէլ Քէօչէք	95	Ազգային Վարժարան	32
Քուպր Պիթ	128	Ազգային Վարժարան	24
Տերիք	179	Հայ Մեսրոպեան	31
Այն Տիւար	282	չունի	------
ընդհ.	7798		

ՃԵԶԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

Շրջանի բազմապիսի կարիքներուն կողքին Տ. Աշոտ Քհնյ. Փափազեան շուրջ 11 տարի «*ձեռնհասութեամբ կը վարէ Քամիշլիի Հայոց Հոգեւոր հովւութիւնը*»[65]: Բայց անհրաժեշտ էր «վեղարաւոր»ի մը ներկայութիւնը: Ուստի, Տ. Աշոտ պատճառաբանելով իր «*յառաջացած տարիքն ու տեսողութեան տկարանալը*»[66], 18 Դեկտեմբեր 1941 թուակիր նամակով՝ Բերիոյ Թեմի Խառն Ժողովէն *«ջերմօրէն կը խնդրէր զինք զերծ*

կացուցանել վարչական պարտաւորութիւններէ, ուզելով սահմանափակուիլ սոսկ հոգեւոր պարտականութիւններու կատարման մէջ»[67]:

Բերիոյ Թեմի առաջնորդ՝ Արտաւազդ Արք. եւ Ազգային իշխանութիւնը նկատելով որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի «հաճութեամբ» եւ Խառն Ժողովին որոշումով, Քամիշլիի շրջանը պիտի ունենայ իր Առաջնորդական Փոխանորդը, յանձին Հոգ. Տ. Խորէն Վարդապետ Բարոյեանի (ապագայ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), 27 Յունուար 1942ի թեմի խառն ժողովի 43րդ նիստին կ'որոշեն «ընթացք տալ Ճեզիրէի շրջանին կողմէ ժամանակէ մը ի վեր յայտնուած փափաքին»[68] եւ ընդունիլ թեկնածութիւնը Կիլիկիոյ միաբաններէն Հոգ. Տ. Խորէն Վրդ. Բարոյեանի, հետեւեալ պայմաններով.-

«-*Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդութիւնը ուղղակի կապուած է Հալէպի Ազգ. Առաջնորդարանին, ներկայացուցչական հանգամանք մը ունենալով Հալէպի Առաջնորդին եւ պատասխանատու Անոր՝ իր գործունէութեան մասին:*

- Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հայր Սուրբին կեդրոնն է Քամիշլի քաղաքը, ուր իրեն պիտի յատկացուին սենեակ եւ այլ դիւրութիւններ:

- Ճեզիրէի շրջանի հոգեւոր հովուութեան մէջ կը մտնեն Քամիշլի, Հասիչէ, Տէր Զօր, Ռաս-էլ-այն, Տերպեսիէ, Ամուդա, Թէլ-Պրաք, Քուպր-Պիթ, Թէլ-Քօչէք եւ Այնփիւար»[69]:

Այսպիսով, 2 Փետրուար 1942ին սկիզբ կ'առնէ Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդութեան պատմութիւնը:

Փոխանորդարանը տակաւ կը կազմաւորուի, կը կանոնաւորուի եւ նախախնամական դեր կ'ունենայ Ճեզիրէի շրջանի հայ ժողովուրդին համար:

Խորէն Վրդ. իր վրայ դրուած յոյսերը «լիովին» կ'արդարացնէ՝ «ժրաջան, կորովի, շինարար եւ շրջահայեաց գործունէութեամբ»[70]: Իր նախաձեռնութեամբ Քամիշլիի հայ համայնքը կ'ունենայ փոխանորդարան եւ մանկապարտէզի շէնք, մինչ անծածկ մնացած Հասիչէի եկեղեցին կը ծածկուի: Իր հովուութեան շրջանին, իւրաքանչիւր քաղաք եւ գիւղ կ'ունենայ իր եկեղեցին: Պէտք է նշել, սակայն որ շուրջ 10,000 հայութիւն հաշուող շրջանը չունէր նոյն համեմատութեամբ հոգեւորականներ, ինչ որ կը դժուարացնէր ազգային կեանքի կազմակերպումը: Այդ բացը կը լրացնէր Խորէն Վրդ. «*իր յաճախակի այցելութիւններով եւ ժողովուրդին հետ ունեցած իր շփումներով*»[71]:

Եկեղեցւոյ կողքին Ճեզիրէի բոլոր մեծ ու փոքր շրջանները կ'օժտուին ազգային վարժարաններով, ուր ուսում կը ստանան երկսեռ հայ մանուկներ: Այս վարժարաններուն գոյութիւնը փրկութիւն մը կ'ըլլայ շրջանի հայութեան համար, որ մեծ մասամբ քրտախօս էր[72]:

Տ. Խորէնի առաջնորդական գործունէութեան հինգ տարիները (1942-47 Հոկտեմբեր) կ'անցնին քաղաքականապէս խիստ լարուած՝ 1945ի ֆրանքօ-սուրիական հակամարտութեան պատճառով: Հակառակ տիրող իրավիճակին, առաջնորդ վարդապետը կը յաջողի պահպանել հայութեան վարկը ե՛ւ քրիստոնեայ, ե՛ւ իսլամ համայնքներու մէջ:

Ան շինարարական արդիւնալի աշխատանքներ կը կատարէ: Կը խրախուսէ 1946-47ի դէպի հայրենիք ներգաղթողները եւ սերտ յարաբերութիւն ու համագործակցութիւն կը մշակէ Բերիոյ Թեմի Առաջնորդ Տ. Զարեհ Վրդ. Փայասլեանի հետ: 1947ին Բարոյեան վարդապետի կը շնորհուի եպիսկոպոսական աստիճան[73]:

1942-47ին, Ճեզիրէի հայոց թիւը կը հաշուէր 35,000 շունչ:

1940ականներու սկիզբը բնութիւնը կը գործէ իր աւերը. լուր կը տարածուի Հալէպ, թէ Քամիշլիէն անցնող գետը յորդած է եւ պշերիկցիներու թաղը քանդած[74]: Իրականութեան մէջ, սակայն, յորդողը Խապուրը չէր, այլ՝ Թուրքիայէն եկող Ճաղճաղը, որ կը խանգարէ նաեւ երկաթուղագիծը, երկու շաբաթ դադրեցնելով թրքական շոգեկառքը[75]: Ճաղճաղ գետին յորդումով կը վնասուին 450-500 տուներ. ոմանք կը փլին, շատերը՝ փլելու ենթակայ կը դառնան, կը մահանան հինգ անձեր, որոնց երեքը մանուկներ: Հեղեղը կը տանի նաեւ շատերու ձմռան պաշարը[76]:

Ըստ այլ տուեալներու հեղեղը հայ զոհեր չի պատճառեր, սակայն վնասներու կ'ենթարկուին 25 տուն հայ-կաթոլիկներ: Հիմնական վնասը կը կրեն սիւրիանիները: Աղէտին առթիւ շրջանի կրօնական պետերը աղէտեալներուն համար հանգանակութիւն կը կազմակերպեն[77]:

2 Փետրուար 1942էն մինչեւ 16 Հոկտեմբեր 1947, Խորէն Վրդ. կը վարէ Հիւսիսային Սուրիոյ Ճեզիրէի առաջնորդական փոխանորդի պաշտօնը՝ յաջողապէս կազմակերպելով թեմին ազգային եւ կրթական գործերը, Սուրիոյ անկախութեան նախորդող բախտորոշ շրջանին:

Ճէզիրէի առաջնորդական փոխանորդը ստանձնելով «Դրան Եպս. պատասխանատու պաշտօն», զինք կը փոխարինէ Տաճատ Ծ. Վրդ. Ուրֆալեանը: Վերջինս, 16 տարիներու պաշտօնավարութեան շրջանին, շինարարական եւ կրթական ծառայութիւններ կը մատուցէ Քամիշլիի, Ռաս Ուլ Այնի եւ Հասիչէի վարժարանները ընդարձակելով, եկեղեցիները եւ Առաջնորդական Փոխանորդութիւնը վերանորոգելով: Քամիշլիի Ազգային Վարժարանը կը վերածուի միջնակարգի, 1400 աշակերտներով: 14 Յունիս 1963ին, Տաճատ Արք. կ'ընտրուի Լիբանանի Թեմի առաջնորդ: Յուլիսի սկիզբը ան կը մեկնի Լիբանան՝ հրաժեշտ տալով Ճեզիրէի հայութեան: Իրմէ ետք, յաջորդաբար Առաջնորդական Փոխանորդի պաշտօններ կը վարեն Կորիւն Վարդապետ Պապեան (1964-66), Պետրոս Վարդապետ Պէրպրեան (1968-71) եւն.:

1960ականներու կիսուն Կորիւն Վրդ.ի ջանքերով կեանքի կը կոչուի ներգաղթի յանձնախումբ, ՀՄԸՄին կը վերադարձուի պետութեան կողմէ

գրաւեալ շէնքը, եւ Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան նիւթական յատկացումով կրթական նորակառոյց շէնքերով կ'օժտուին Ռաս Ուլ Այնի, Հասիչէի եւ Տերիքի հայկական համայնքները[78]: Կրթական հաստատութիւններէն ներս կը դասաւանդուին կրօնագիտական եւ հայագիտական առարկաներ[79]:

1968-1971 տարիներուն համայնքը կը հովուէ Պետրոս վրդ. Պէրպէրեանը: Գաղութը կ'ունենայ իր հոգեւոր հովիւները, յանձինս՝ Աշոտ Ա. Քհնյ. Փափազեանի, Ղազար Քհնյ. Տիքիճեանի, Երուանդ Քհնյ. Երէցեանի եւն.:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կողքին, կաթողիկէ եւ աւետարանական համայնքները եւս կը կառուցեն իրենց եկեղեցին ու դպրոցը:

Քամիշլիի Կաթողիկէ համայնքի կազմակերպումը կը սկսի 1915էն ետք, երբ հայ մայրապետեր կը տարածուին Սուրիոյ զանազան քաղաքներուն մէջ, որոնց կարգին՝ նաեւ Քամիշլի, հիմնելով դպրոցներ եւ որբանոցներ:

Ճեզիրէի եւ Եփրատի շրջանը Հալէպի Հայ Կաթողիկէ Թեմին կապելէ ետք, 1938ին ան կը դառնայ Պատրիարքական Փոխանորդութիւն եւ կը յանձնուի Կիւրեղ Եպս. Զօհրապեանին (մինչեւ 1952)[80], որմէ ետք՝ 1954ին թեմը կը հռչակուի անկախ:

Քամիշլիի մէջ 1939ին կը հիմնուի մանչերու նախակրթարան մը՝ Ս. Յովսէփ Երկսեռ Վարժարանը, որ կը հաշուէր 100 հայ աշակերտ: Աւելի ուշ՝ 1951ին, կը հիմնուի Անարատ Յղութեան Քոյրերու Նախակրթարանը[81]:

Հայ Աւետարանական եկեղեցին (թրքախօս) իր համայնքը կը միացնէ սուրիանիներուն: Առաջին քարոզիչը կը հանդիսանայ Միհրան Գասարճեան, որուն կը յաջորդեն Պաղտասար Աճէմեանն ու Յարութիւն Յակոբեանը: Աւելի ուշ, համայնքէն շատեր կը միանան Հայ Առաքելական Եկեղեցիին:

Շնորհիւ Վեր. Ն. Խաչատուրեանի, 1953ին Քամիշլիի Աւետարանական Համայնքը կ'օժտուի կեդրոնով: Անդրանիկ աւետարանիչը կ'ըլլայ Վեր. Յովհաննէս Գարճեան (1953-56), որուն կը յաջորդէ Պատ. Պարգեւ Օրջանեան (մինչեւ 1971):

Համայնքը եւ առաջնորդական փոխանորդութիւնը մինչ օրս կը շարունակեն գործել եւ գոյատեւել հակառակ տարաբնոյթ դժուարութիւններուն:

Ցուցակ դպրոցներու 1964-1965[82]		
վայր	վարժարան	տնօրէն
Քամիշլի	Ս. Յովսէփ Կաթողիկէ Հայ Մանչերու Վրժ.	Հայր Հ. Շամուն

	Ս. Յովսէփ Անարատ Յղութեան Քոյրերու Վրժ.	Էմիլիա Իշխանեան
	Հայ Ազգային Երկսեռ Վրժ.	Կարապետ Պետրոսեան
Հասիչէ	Հայ Ազգային Վրժ.	Գէորգ Գարաօղլանեան
	Միացեալ Վրժ.	Յովհաննէս Էքմէքճեան
Տէր Զօր	Հայ Ազգային Վրժ.	Շահէ Պոյաճեան
Ռաս Ուլ Այն	Ազգային Մեսրոպեան Վրժ.	Ծերուն Գարապաճաքեան
Տերպէսիէ	ՀԲԸՄ Կիլիկեան Վրժ.	Յովհաննէս Պետիրեան
	Ս. Թերեզա Հայ Կաթոլիկներու Վրժ.	Նիքոլաս Սապպաղ
Ամուտա	Հայ Ազգային Երկսեռ Վրժ.	Յովհաննէս Մուշեղեան
Թէլ Պրաք	--	--
Թէլ Քէօչէք	--	--
Քուպր Պիթ	--	--
Տերիք	Հայ Ազգային Վրժ.	Սարգիս Ադամեան
Այն Տիւար	--	--

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

[1] Զաւէն Մսըրլեան, «Թուրքիոյ Ներքին Գաւառներու Հայոց Պարտադիր Արտագաղթը (1929-1930 թթ.)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Գ. Տարի*, 1972, Պէյրութ, էջ 101:

[2] Նոյն, էջ 105:

[3] Հայ Կարմիր Խաչի (ՀԿԽ) Հալէպի վարչութեան ատենագրութեան տոմար (6 Դեկտեմբեր 1922-5 Յունուար 1925), Հալէպ, էջ 164բ:

[4] Անի Փիշենկճեան, «Գամիշլի. Կազմութենէն Մինչեւ 1950-ական Թուականները», *Շաւիղ Պարբերաթերթ, Գ. Տարի*, Հալէպ, 2002, էջ 24-29:

[5] Մծբին քաղաքը Մեծն Տիգրանի օրով մաս կազմած է հայկական պետութեան: Եղած է հայոց արքային աթոռանիստ քաղաքներէն, ուր կը պահուէր անոր գանձերուն մէկ մասը: Քաղաքը Է. դարուն կը գրաւեն արաբները: Այդ եւ յաջորդող դարերու գրաւումներուն պատճառով քաղաքին ժողովրդագրութիւնը փոփոխութիւն կը կրէ:
Ի. դարու սկիզբը բնակչութիւնը կը հաշուէր 7000 անձ, որուն շուրջ 13%ը հայեր էին: 1915ի Ցեղասպանութեան՝ հայերու մէկ մասը կ'ոչնչանայ, մնացեալը կը տարագրուի: Այն հողերը, որոնք այսօր Քամիշլիի կը պատկանին, անցեալին կը պատկանէին Մծբինի ժողովուրդին (Փիշենկճեան, «Գամիշլի», էջ 24):

[6] Այլ ստուգաբանութիւն մը «Քամիշլի» բառը յառաջացած կը նկատէ «Քամիշ» (եղէգ) բառէն, եւ զայն կը թարգմանէ իբրեւ «եղէգնուտ» (Փիշենկճեան, «Գամիշլի», էջ 24. նաեւ՝ http://www.wikiwand.com/hy/Ալ-Կամիշլի):

[7] باروت محمد جمال، *التكون التاريخي الحديث للجزيرة السورية*، الطبعة الاولى، بيروت، 2013، ص 353:

[8] Նոյն, էջ 161:

[9] Հայ մամուլի եւ գրականութեան մէջ Պշերիկը (Բշերիկ, Բեշերի, Բըշերիկ, Բիշէր, Բիշիրի, Բուշերիկ, Պըշերի Պշերիկ) կը յիշատակուի իբրեւ գաւառ կամ գաւառակ

(Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. Ա.*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1986, էջ 713-714):

[10] Մսըրլեան, էջ 102-105 :

[11] Յ. Թոփուզեան, *Սիրիայի Եւ Լիբանանի Հայկական Գաղթօջախների Պատմութիւն*, Երեւան, 1986, էջ 170:

[12] Պշերիկը իր քրտախառն գիւղերու ցանցով մաս կազմած է Սղերդ Գաւառին, որ ունէր 7 գաւառակներ՝ Բարվար, Էրուն, Խարզան, Հազօ, Շիրվան, Ռետվան եւ Սղերդ (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. Դ.*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1998, էջ 631:

Պշերիկը 1890ականներուն Պիթլիս Նահանգի Սասունի շրջանի գաւառակներէն էր, ունէր 57 գիւղ՝ 1597 տուն, բնակիչներուն՝ 852ը հայ ընտանիքներ էին, 745ը՝ քիւրտ: Գարեգին Սրուանձտեանցի վիճակագրութեան համաձայն այս 57 գիւղերէն 40ը հայաբնակ էին: Այդ գիւղերուն մէջ է, որ պատմուած է «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպը: 1915ին Պշերիկէն տարագրուած են 2946 հայեր (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից, Հտր. Ա.*, էջ 713-714):

[13] Պատ. Պ. Օրջանեան, «Գամիշլիի Հայ Աւետարանական Համայնքը», *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, Բ. Գիրք*, Հալէպ, Տպ. Շարք, 1976-1978, էջ 370:

[14] «Տարագիր Հայութեան Տեղաւորումը Սուրիոյ Գաւառային Շրջաններ», *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, Ե. Տարի*, Հալէպ, 1996, էջ 93:

[15] Ա. Փիշենկճեան, *Յուշամատեան Սուրիահայ Օգնութեան Խաչի 1919-2009*, Հալէպ, 2010, էջ 59:

[16] Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Արխիւ (ԲԹԱԱԱ), ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52, 26 Հոկտեմբեր 1928-23 Սեպտեմբեր 1930, ՀԷ. նիստ, 22 Նոյեմբեր 1929:

[17] «Տարագիր Հայութեան Տեղաւորումը Սուրիոյ Գաւառային Շրջաններ», էջ 98:

[18] Մսըրլեան, էջ 105:

[19] Նոյն, էջ 106:

[20] «Տարագիր Հայութեան Տեղաւորումը Սուրիոյ Գաւառային Շրջաններ», էջ 98:

[21] Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արխիւատուն (ՄՏԿԿԱ), Բերիոյ Թեմի (ԲԹ), Հաւաքածոյ /h/ 3, ցուցակ /g/1, թղթածրար /թղթ./ 43, էջ 13:

[22] ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g 1, թղթ. 43, էջ 13:

[23] Նոյն:

[24] Նոյն:

[25] Նոյն. նաեւ՝ ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52:

[26] ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղթ. 43, էջ 13:

[27] Նոյն, էջ 14. նաեւ՝ ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52:

[28] Նոյն. նաեւ՝ ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թերթ 106:

[29] ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղթ. 43, էջ 14: Նաեւ ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ, թիւ 52, թերթ 106:

[30] Փիշենկճեան, *Յուշամատեան*, էջ 55-56:

[31] Տեղեկագիր Հալէպի Գաղթականաց Խնամատարութեան, 1 Յուլիս 1930, Հալէպ, էջ 2 (ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղթ. 82, էջ 16 շրջերես):

[32] Նոյն:

[33] *Եփրատ Օրաթերթ*, 14 Դեկտեմբեր 1929, Հալէպ, էջ 3:

[34] Սուրիահայ Օգնութեան Խաչի (ՍՕԽ) 1930-1933ի ատենագրութեան տոմար, «Տեղեկագիր Տոքթ. Թորոս Պասմաճեանի, Յունուար-Սեպտեմբեր 1930 Սուրիահայ Օգնութեան Խաչի Կեդրոնական Վարչութեան, թ. 107»: Հալէպի Հայ Ազգային Կարմիր Խաչի վարչութիւնը 3 Դեկտեմբեր 1929 թուակիր եւ 422 համար գրութեամբ՝ Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովէն կը խնդրէ «Գաղթականաց Խնամատարութեան կազմակերպումը վստահիլ Հայ Ազգային Կարմիր Խաչի ամբողջական կազմին»: Քաղաքական Ժողովը իր ՀԸ նիստին (3 Դեկտեմբեր 1929) կ'ընտրէ Սարգիս Սէլեանն ու Ն. Մաթոսեանը՝ իբրեւ օժանդակ անդամ Կարմիր Խաչի մօտ Գաղթականաց Խնամատարութեան մէջ աշխատելու (ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52, թերթ 108):

[35] Անի Ֆիշենկճեան, «Հայերու Հոսքը Դէպի Սուրիոյ Հիւսիս-Արեւելեան Շրջանները, Թէլ Պրագ (Սկիզբէն Մինչեւ 1938)», *Տաթեւ Հայագիտական Տարեգիրք, Հտր. 1*, Հալէպ, 2008, էջ 312:

[36] *Եփրատ*, 28 Դեկտեմբեր 1929, էջ 3:

[37] *Եփրատ*, 11 Յունուար 1930, էջ 3:

[38] «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 4 Հոկտեմբեր 1930, էջ 1274:

[39] ՄՏԿԿԱ ԲԹ, h 3, g 1, թղծ. 82, էջ 2:

[40] ՄՏԿԿԱ ԲԹ, նոյն, էջ 3:

[41] Նոյն:

[42] Կ. Մակարեան, «Քրտախօս Բշերիկցիները Եւ Անոնց Գաղթը Սուրիա (Պատմա-Ազգագրական Ակնարկ)», անտիպ, Հալէպ, 2003, էջ 17:

[43] Նոյն, էջ 17-18:

[44] Նոյն:

[45] ՄՏԿԿԱ ԲԹ, h 3, g 1, թղթ. 82, էջ 4:

[46] Վարդան Եպս. Տէմիրճեան կը նշէ, որ գաղթող հայերը հաստատուած են «Գամիշլիի եւ շրջակայ 32 գիւղերուն մէջ» (Վ. Եպս. Տեմիրճեան, *Գաւազանագիրք, Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց, Հտր. Ա.*, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 1980, էջ 474):

[47] ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղթ. 101, էջ 5-6: Այս գիւղերու մեծ մասի բնակչութիւնը ներգաղթած է Հայաստան՝ 1946-1948ին եւ 1964-1966ին կազմակերպուած հայրենադարձութեան օրերուն: Այսօր, անոնց մեծ մասը հողագործութեան ընդարձակ տարածութիւններ են:

[48] Անի Ֆիշենկճեան, «Հայերու Հոսքը», էջ 318-321. նաեւ՝ «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 23 Օգոստոս 1930, էջ 1083:

[49] «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 15 Օգոստոս 1931, էջ 1051:

[50] ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղթ. 79, էջ 9:

[51] Նոյն:

[52] Պարութ, էջ 367:

[53] Ֆիշենկճեան, «Գամիշլի», էջ 29:

[54] Նոյն:

[55] ՀԱԱ, ֆ. 875, g. 2, գ. 575, թ. 2, 40:

[56] Տեմիրճեան, էջ 491:

[57] ՄՏԿԿԱ ԲԹ, h 3, g 1, թղծ. 79, էջ 10:

[58] Նոյն:
[59] Նոյն:
[60] ԲԹԱԱԱ, դարան Զ. , թիւ 41, թերթ 2:
[61] ԲԹԱԱԱ, դարան Զ. , թիւ 41, թերթ 2: «Գամիշլիի ճիշդ առջեւէն կ'անցնի Ճաղճաղ Գետակը, որուն մէկ եզերքին հաստատուած են բաւական թիւով քրդախօս պշէրիկցիներ», նոյն:
[62] ԲԹԱԱԱ, դարան Զ. , թիւ 41, թերթ 2:
[63] ՀԱԱ, ֆ. 875, g. 14, գործ 169, էջ 1-7):
[64] ԲԹԱԱԱ, դարան Դ. , թիւ 25:
[65] ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղթ. 48, էջ 32:
[66] Նոյն:
[67] Նոյն:
[68] Նոյն, էջ 33. նաեւ՝ ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղթ. 48, էջ 33:
[69] Նոյն, էջ 33:
[70] ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղթ. 45, էջ 72 (Համարատուութիւն Ազգ. Վարչութեան...):
[71] ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղթ. 45, էջ 9, (Երկամեայ Տեղեկագիր...):
[72] ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղծ. 45, էջ 9:
[73] Տեմիրճեան, էջ 479-481:
[74] ՄՏԿԿԱ ԲԹ, h. 3, g. 1, թղթ. 85, էջ 12:
[75] Նոյն:
[76] Նոյն:
[77] Նոյն:
[78] Տեմիրճեան, էջ 491-492:
[79] Նոյն, էջ 485-486:
[80] «Հոս հայ կաթողիկէն ալ ունի Առաջնորդական փոխանորդութիւն մը, ուր կը նստի Գերապայծառ Զօհրապեան եպիսկոպոսը» (*Հայաստանի Կոչնակ*, 24 Յուլիս 1948, էջ 703): Փոխանորդութեան մէջ քահանայական պաշտօններ կը վարէին Հալէպէն ղրկուած բազմաթիւ վարդապետներ, ինչպէս՝ Տ. Գրիգոր Վրդ. Սարգիսեան (ժողովրդապետ) եւ Տ. Յովսէփ Վրդ. Սապպաղեան. նաեւ՝ http://www.armeniancatholic.org.
[81] Փիշենկճեան, «Գամիշլի», էջ 24-29:
[82] ՀԱԱ, ֆ. 875, g. 1, գ. 22, թ. 2; թ. 4: Ցանկէն առանձնացուցած ենք, Ճեզիրէի Թեմի վարժարանները իրենց տնօրէններով: Փոխած ենք ուղղագրութիւնը:

The Armenian Community of Qamishli and the Armenian Orthodox Vice-Prelacy of Jazira (1920-1960s)

(Summary)

Ani Fishenkjian
fishenkjianani@hotmail.com

The paper details the origins and development of the Armenian Orthodox vice prelacy in Jezire, and the factors that gave birth to its establishment.

The author describes the arrival of hundreds of Armenian families from the eastern regions of Turkey, who were persecuted and forced to take refuge on the Syrian side of the border. The paper highlights the efforts Armenian local and regional lay and religious authorites made to legalize their settlement on Syrian lands, the allocation of aerable lands for them to cultivate and make a living and their eventual integration into the tiny local Armenian communities of north-eastern Syria.

The author argues that their number necessitated the establishment of a vice-prelacy in the region, particularly after the formation of an Armenian school network and other organizations. The vice-prelacy was established in 1942, at a time when the Armenian population of Jezire was around 35,000. However, soon after, in 1946-47 a significant number of these new settlers were repatriated to Soviet Armenia.

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅԵՐԸ 1920-40ԱԿԱՆՆԵՐՈՒՆ (Ակնարկ)

Նորա Արիսեան
noraarissiandeputy@gmail.com

ՄՈՒՏՔ

Հակառակ իրենց փոքր թիւին, Սուրիոյ մայրաքաղաքին մէջ կայք հաստատած, Ցեղասպանութենէն մազապուրծ հայերուն պատումը կարեւոր մէկ բաղկացուցիչն է սուրիահայութեան պատմութեան:

Դամասկոսի մէջ հայերու մասին տուեալներ եւ արձանագրութիւններ գոյութիւն ունին հայկական աղբիւրներու մէջ, որոնք լոյս տեսած են դամասկահայ հաստատութիւններու, մշակութային, մարզական թէ այլ միութիւններու յոբելենական գրքոյկներու թէ հատորներու[1], ինչպէս նաեւ *Դամասկահայ Ամենուն Տարեգիրքը*ի եւ հայկական մամուլին մէջ[2]: Կան նաեւ որոշ արխիւային նիւթեր, ինչպէս՝ Դամասկոսի Ազգային Առաջնորդարանի 1866-1915 շրջանի տոմարները:

Հիմնուելով տարբեր աղբիւրներու վրայ, այս զեկուցումը կը շօշափէ հայերու ներկայութիւնը Դամասկոսի մէջ:

Դամասկոսի հայ գաղութի մասին արաբ սուրիական պատմագրութեան եւ հրատարակութիւններուն մէջ առաջին յիշատակումները հաւանաբար կը կատարուին 1879ին լոյս տեսած Նաաման Քասաթլիի գիրքին[3] մէջ, ուր Դամասկոսի եկեղեցիներուն շարքին կը յիշատակուի հայ առաքելական Ս. Սարգիս Եկեղեցին, որոշ մանրամասնութիւններ կը տրուին նաեւ անոր հրկիզման մասին (1870ականներուն)[4]: Գիրքը կը յիշատակէ նաեւ հայ կաթողիկէ եկեղեցին, կը նկարագրէ զայն իբրեւ փոքր եկեղեցի, որ կը գտնուի լազարիստներու մատուռին արեւելեան կողմը, հիմնուած բուրի մը տեղը, 1860էն ետք Կրիկորիոս (Գրիգոր Լուսաւորիչ) սուրբին անունով[5]:

Նոյն գիրքին մէջ ակնարկութիւն կայ նաեւ Դամասկոսի հայկական վարժարանին մասին. ան կը յիշուի իբրեւ «հին հայերու» վարժարան, ուր կը դասաւանդուի հայերէն լեզուն, ունի մէկ ուսուցիչ եւ 25 աշակերտ: Գիրքը կ'ակնարկէ նաեւ Ս. Սարգիս Եկեղեցւոյ շրջակայքը գործող հայկական վարժարանի մը, որ յատկացուած էր տղոց ուսուցման:

Ուշագրաւ է նախաեղեռնեան ժամանակաշրջանի դամասկահայ նշանաւոր դէմք՝ գրող, թղթակից, թարգմանիչ Ատիպ Իսհաքի պարագան: Ան՝ հայ կաթողիկէ ընտանիքի զաւակ, ծնած է Դամասկոս 1856ին, ապա անցած Լիբանան ու մահացած 1885ին, Պէյրութ:

Իսհաք կը համարուի ԺԹ. դարու արաբական վերածնունդի (*Ալ Նահդա*) ռահվիրայ. իր գրութիւններուն մէջ յստակ էր յեղափոխութեան եւ բարենորոգման շունչը, որոնց ջատագովն էր ան[6]:

Հակառակ փաստաթուղթերու սակաւութեան, կարելի է հաստատել որ քսաներորդ դարու առաջին տասնամեակին, գաղութին մէջ գործած է ուսանողական միութիւն, որ բաղկացած է բժշկական վարժարանի ուսանողներէն, որոնք կը պատկանէին Դամասկոսի ՀՅԴ ենթակոմիտէի մը:

Ուսումնասիրելով 1866-1915 շրջանի Դամասկոսի Ազգային Առաջնորդարանի տոմարները, կը պարզուի թէ Տիգրանակերտէն, Խարբերդէն եւ Այնթապէն մազապուրծ Դամասկոս հասած մեծաթիւ հայերէն ոմանք մահացած են Դամասկոսի մէջ: Նկատելի է, մանաւանդ, որ երեխայ եւ պատանի տարիքի մահացութեան թիւերը բարձր են: Անդին, Կեսարիայէն, Խարբերդէն, Ուրֆայէն մօտաւորապէս 10,000 հայեր հաստատուած են Դամասկոս Քատամ, Մեզզէ եւ Պապ Շարքի թաղամասերուն մէջ:

Հայոց Ցեղասպանութեան շրջանին Դամասկոս դարձած է հայ աքսորականներու կեդրոնացման կայք ուր հաւաքուած են 30 հազար հայեր: Ասոնցմէ շատեր Զինադադարին անցած են Կիլիկիա:

Յետ-ցեղասպանութեան ժամանակահատուածին Դամասկոսը կը դառնայ կեդրոն՝ Ցեղասպանութենէն վերապրող հայերուն: Այնուհետեւ, յաջորդող տասնամեակներուն, դամասկահայութիւնը կը կազմակերպուի, կը յառաջացնէ կենսագործունէութեան իր իւրայատուկ հոլովոյթը: Միաժամանակ, սակայն, 1920ականներու անկայուն վիճակին պատճառով շուրջ 15 հազար դամասկահայեր կը գաղթեն Լիբանան եւ այլ երկիրներ:

Ըստ դամասկահայ Յարութիւն Նաշալեանի յուշերուն՝ «*1914-1918 Առաջին Համաշխարհային Պատերազմին 100,000է աւելի հայեր տարագրուեցան եւ քշուեցան դէպի Պաղեստին ու Հաուրանի անապատը: Ասոնց մեծամասնութիւնը թշուառութենէն եւ տարափոխիկ հիւանդութիւններէ մեռած է: Վերապրող հայերէն շուրջ 35-40,000 հոգի Դամասկոս կը բերուին՝ ֆրանսական կառավարութեան օժանդակութեամբ Կիլկիա փոխադրելու համար: Ասոնցմէ 15,000 հայեր բնակութիւն հաստատելով կը մնան Դամասկոս*»[7]: Այդ թուականներուն արդէն կը գործէր չքաւոր ընտանիքներու նպաստելու նպատակով 1890էն իվեր Դամասկոսի մէջ կեանքի կոչուած Ս. Սարգիս Եկեղեցւոյ աղքատախնամ յանձնախումբը:

ՅԵՏ-ԵՂԵՌՆԵԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆ

1 Դեկտեմբեր 1918ին Դամասկոսի մէջ կը կազմուի Ազգային Միութիւնը, որ աջակից կը դառնայ զանազան շրջաններէ Դամասկոս հասած հայերուն: Ազգային Միութեան Դամասկոսի կեդրոնը օժանդակութիւն կը ստանար տեղական կառավարութենէն եւ անգլիական ու ֆրանսական իշխանութիւններէն:

Ըստ երեւոյթին Եգիպտոսէն[8] նաեւ նիւթական օժանդակութիւն ստանալով Հաուրան հաւաքուած 4000 հայ գաղթականներ Մեզզէ շրջանը կը հաստատուին, օրուան կուսակալ ԱլաԷտտինի միջնորդութեամբ[9]:

1920ականներուն դամասկահայերը մասնակից կը դառնան սուրիական տեղական պետական իրադարձութիւններուն: 9 Մայիս 1919ին, Դամասկոսի քաղաքապետարանին մէջ Իշխան Ֆէյսալի գլխաւորութեամբ, Սուրիայէն, Լիբանանէն, Պաղեստինէն ժամանած անձնաւորութիւններու ներկայութեամբ կազմակերպուած հաւաքին ներկայ կ'ըլլայ նաեւ Սուրիոյ եւ արաբական շրջաններուն մէջ հայ գաղթականներու հոգեւոր ներկայացուցիչը Աստուր Սարգիսեան: Ան, յանուն հայութեան իր ելոյթին մէջ զօրակցութիւն կը յայտնէ արաբներուն, եւ ակնարկելով Օսմանեան ջարդերուն, շնորհակալութիւն կը յայտնէ արաբներուն՝ հայ գաղթականներու հանդէպ ազնիւ մօտեցումին եւ վերաբերումին, հաւաստելով թէ՝ «*արաբներու անունը հայկական պատմութեան մէջ ոսկէ տառերով պիտի գրուի*»[10]:

Իշխան Ֆէյսալ, իր պատասխան ելոյթին մէջ հաստատած է որ ինք պիտի շարունակէ իր աշխատանքները այս ուղղութեամբ, կարեւորելով փոքրամասնութիւններու պահանջները:

Նշելի է որ թագաւորին հանդէպ դամասկահայերու զօրակցութիւնը այլապէս ալ դրսեւորուած է: Այսպէս, Դամասկոսի հոգեւոր հայրերը (որոնց մաս կազմած են Դամասկոսի հայ առաքելական առաջնորդն Աստուր Սարգիսեան ու հայ կաթողիկէ առաջնորդը՝ Ժըրժոս) յատուկ հրաւէրով մը, 8 Մարտ 1920ին ներկայացած են Դամասկոսի քաղաքապետարան եւ յայտնած են հայութեան զօրակցութիւնը իշխան Ֆէյսալին:

Դամասկոս կայք հաստատած հայեր, 1922-1925 ժամանակաշրջանին սկսած են տեղաւորուիլ զանազան թաղամասեր, ինչպէս՝ Պապ Շարքիի թաղամասը, զոր վարձակալելով ֆրանսական կառավարութենէն, տակաւ սեփականատէրերը դարձան այդ հողատարածքներուն[11]:

Դամասկոսի մէջ գաղթական հայերը ապաստանած էին Պապ Թումայի Ուստա Կարապետի եւ Պապ Շարքիի Խաչերի (Խաչեր Կէօնճեան) քեմփերը, ուր փոքրիկ մանկապարտէզ մը հիմնած էին:

Սուրիական տեղական մամուլը եւս անդրադարձած է Դամասկոսի մէջ հայերու հաստատման մասին: Դամասկոս լոյս տեսնող *ԱլՄուքթապաս* օրաթերթը, 3 Յունուար 1923ին կը հաղորդէ որ 1920ականներուն սկիզբը 7800 գաղթականներ հասած են Դամասկոս եւ հաստատուած հոն: Իսկ 28 Դեկտեմբեր 1923ին, թերթը կը յայտնէ թէ ըստ վերջին մարդահամարին, Դամասկոսի մէջ հայերու թիւը կը հաշուէ մօտ երեսուն հազար:

Դամասկոս տեղաւորուող հայութիւնը կը սկսի կազմաւորման գործընթացին. քսանականներուն սկիզբը կը կազմաւորուին ու գործել կը սկսին հայկական միութիւններու գաղութային մասնաճիւղեր, ինչպէս՝ Սուրիահայ Երիտասարդաց Միութիւնը (1922), մարզական եւ բարեսիրական միութիւններ ՀԲԸՄ (1913), ՀՄՄ (1921), ՀՄԸՄ (1922), ՍՕԽ (1927)[12]:

Կը հիմնուին նաեւ վարժարաններ: Ի տարբերութիւն 1894ին հիմնուած միակ վարժարանին, 1925-27ին, կը գործեն վեց վարժարաններ, 1200

աշակերտներով: 1930ին կը գործեն երեք վարժարաններ. Ս. Թարգմանչաց (հիմն. 1898)[13], Հայ Աւետարանական Երկսեռ Դպրոց (հիմն. 1925), Ազգային Միացեալ Վարժարան (հիմն. 1929): Աւելի ետք, 1954ին, հիմնուած է ՀԲԸՄ Կիւլապի Կիւլպենկեան, իսկ 1965ին՝ Հայ Կաթողիկէ Ալիշան Վարժարանը:

Քաղաքական ոլորտէն ներս, կարելի է հաստատել որ խորհրդարանի մակարդակով որոշ շփումներ կատարուած են գաղութին հետ:

11 Յունուար 1939ին, խորհրդարանի արտահերթ նստաշրջանի 6րդ նիստին, որ տեղի կ'ունենայ Ֆարէս Խուրիի նախագահութեամբ, կ'ընթերցուի Դամասկոսի հայերու անունով ներկայացուած ստորագրահաւաքնամակ մը, ուր դամասկահայերը իրենց զօրակցութիւնը կը յայտնեն Սուրիոյ խորհրդարանի որոշումներուն, ընդգծելով որ սուրիահայութիւնը կը զօրակցի Սուրիոյ անկախութեան: Փոխադարձաբար, Հալէպի եւ Դամասկոսի շարք մը երեսփոխաններ դրական կ'արտայայտուին հայերուն մասին, դրուատելով անոնց կեցուածքը՝ Սուրիոյ ազգային խնդիրներուն, եւ մասնակցութիւնը՝ երկրի զարգացման: Խորհրդարանի նախագահը կ'առաջարկէ արձանագրութեան մէջ նշել երեսփոխաններու գնահատանքը հայ «եղբայրներու» նկատմամբ՝ անոնց հաւատարիմ կեցուածքին համար, յանուն երկրի ազատութեան:

Այս հանգրուանին դամասկահայութեան մօտ որոշ քաղաքական աշխուժութիւն կ'արձանագրուի: 1943ի խորհրդարանական ընտրութիւններուն ազգային ցանկերը կը յաղթեն, Ֆարէս Խուրիի նախագահութեամբ կը կազմուի երեսփոխաններու խորհուրդը, 17 Օգոստոս 1943ի ընտրութիւններուն կ'ընտրուի Նազարէթ Եագուպեան (հայ առաքելական)[14]:

Մէկ նստաշրջանի համար՝ 1943-1947, ան երեսփոխան ընտրուած է Ազգային Ցանկէն: Եագուպեան անդամ էր ազգային տնտեսութեան յանձնաժողովի եւ բողոքագիրերու յանձնաժողովի:

1947ին դամասկահայերը կրկին առիթ կ'ունենան խորհրդարանական ներկայացուցչութեան: Սեպտեմբեր 1947ի խորհրդարանական ընտրութիւններով 4 հայ երեսփոխաններ մաս կը կազմեն նոր խորհրդարանին:

Դամասկահայ փաստաբան Ֆրէտ Արսլանեան (հայ առաքելական) մաս կը կազմէ խորհրդարանի արտաքին հարցերու եւ սահմանադրական յանձնաժողովներուն, հուսկ՝ դատական յանձնաժողովին: Ան կարեւոր նպաստ ունեցած է թոշակառուներու օրէնքի սահմանումին[15]:

Դամասկահայ բարձրաստիճան զինուորականներէն պէտք է յիշել Հրանդ Մալոյեանը[16], որ 1945ին ստանձած էր Սուրիոյ ոստիկանութեան հրամանատարութիւնը, Արամ Գարամանուկեանը, որ կը համարուի 1946ի անկախութենէն ետք սուրիական բանակի հիմանդիրներէն[17] եւ դամասկայ զօրավար Ալպէր Քիլէճեանը:

Նոյն շրջանի դամասկահայերու թուաքանակի մասին տուեալներ կարելի է քաղել 1951ի պաշտօնական մարդահամարէն: Ըստ այդ

մարդահամարին, Դամասկոսի արուարձանները բնակութիւն հաստատած են 61 առաքելական եւ 106 կաթողիկէ հայեր, իսկ Դամասկոս քաղաք՝ 17,473 առաքելական եւ 2305 կաթողիկէ հայեր: Ըստ նոյն մարդահամարին, սուրիահայութեան ընդհանուր թիւը կը հաշուէր 109,005 առաքելական եւ 19,219 կաթողիկէ հայեր:

Միութենական կեանքը կ'աշխուժանայ 1950ականներուն: 1952ին, կը հիմնուի Համազգային Մշակութային Միութեան մասնաճիւղ մը:

1957ին Դամասկոսի հայերը կը հաշուեն 7500, որոնցմէ 1500ը՝ հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական, մինչ 250-300 ընտանիքներ գաղթած են Հայրենիք[18]: Դամասկահայ մշակութային կեանքի դէմքերէն կարելի է յիշել բանաստեղծ Արմէն Անուշ Մարաշլեանը (1907-1958), գրող Յարութիւն Նաշալեանը, Միհրան Տէր Ստեփանեանը, Անդրանիկ Նաճարեանը (Անդրանիկ Արարատ) եւն.:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Դամասկոսի Միացեալ Վարժարանի Քսանհինգամեայ Յոբելեան 1929-1954*, Հալէպ, 1956:

[2] Լութֆիկ Եիրիքեան, *Դամասկահայ Ամենուն Տարեգիրքը, 1958, Ա. Տարի,* Դամասկոս-Սուրիա, Տպգր.՝ Տպ. Եիրիքեան, 1958:

[3] الروضة الغناء في دمشق الفيحاء- (Մշտադալար մարգագետին լայնարձակ Դամասկոսի մէջ), Դամասկոս, Ա. տիպ՝ 1879, Բ. տիպ՝ 2004:

[4] Եկեղեցւոյ գմբէթը այդ ժամանակ եղած է փայտաշէն եւ հրկիզումէն ետք է որ դարձած է քարեղէն:

[5] Հայ Կաթողիկէ եկեղեցին հին մատուռ մըն է, այժմ անգործածելի՝ Պապ Թումայի նեղ փողոցին մէջ: Սակայն Կաթողիկէ համայնքը ներկայիս ունի փառաւոր եկեղեցի, Պապ Թումայի հրապարակը նայող դիրքի վրայ, ուր կայ նաեւ Փարոս Վարժարանը:

[6] عيسى فتوح, *أديب اسحق باعث النهضة القومية*, (Իսա Ֆաթթուհ, Ատիպ Իսհաք՝ ազգային վերածնունդի շարժառիթը), Դամասկոս, 1976:

[7] *Դամասկահայ Ամենուն Տարեգիրքը*, Էջ 30-35:

[8] Հաւանաբար նաեւ ՀԲԸՄիութեան կողմէ:

[9] Այնտեղ կը բացուի դպրոց, ոմն՝ Յարութիւն Յարութիւնեանի կողմէ:

[10] جريدة العاصمة *(Ալ-Ասիմա երկշաբաթաթերթ*, Դամասկոս, թիւ 24, 9 Մայիս 1919):

[11] «Հայերու թաղ» յորջորջուած Ս. Սարգիս Եկեղեցւոյ շրջակայքը գտնուող Պապ Շարքիի թաղամասին մէկ հատուածը (ուր ապաստանած էին հայ գաղթականները), Ապրիլ 2015ին պաշտօնապէս անուանուեցաւ «*Հայ ալ Արման*»՝ հայոց թաղ:

[12] Թէքէեան Մշակութային Միութեան մասնաճիւղի արտօնագիրը ստացուած է 1971ին, իսկ մասնաճիւղը գործելք սկսած է 1975ին:

[13] Ազգ. Թարգմանչաց Վարժարանը հիմնովին կառուցուեցաւ Դամասկահայ բարերար Գեղամ Օհանեանի կողմէ:

[14] Նազարէթ Եագուպեան (Մարաշ, 1885-Դամասկոս, 1972): Փրկուելով ջարդէն հաստատուած է Դամասկոս: Աշխատած է շինարարութեան ասպարէզին մէջ: Դամասկոսի մէջ կառուցած է մզկիթներ, Դամասկոսի Համալսարանը եւ այլ պետական շէնքեր ու ճանապարհներ: Յիշարժան է ֆրանսացիներու ռմբակոծումէն ետք խորհրդարանի շէնքի վերակառուցման իր աշխատանքը:

[15] Արսլանեան ծնած է Այնթապ 1912ին, յաճախած Դամասկոսի «Ֆրէր» վարժարանը: Իբրեւ իրաւաբան, 1944ին մասնկացած է Արաբ Փաստաբաններու Ա. Խորհրդաժողովին, վարած է միութեան քարտուղարի պաշտօնը, մաս կազմած միութեան ամսագիրի խմբագրակազմին: Մահացած է 2001ին:

[16] Հրանդ պէյ Մալոյեան (1896-1978), զինուորական եւ քաղաքական գործիչ, որպէս հարիւրապետ ծառայած է ֆրանսական բանակին մէջ: Պաշտօնավարած է սուրիական ոստիկանութեան ծառայութեան մէջ, ստացած է վաշտապետի աստիճան, հասնելով մինչեւ ոստիկանութեան հրամանատարի պաշտօնին:

[17] Գարամանուկեան ծնած է Այնթապ 1910ին: 1930ին անցած է ֆրանսական բանակ, 1934ին աւարտած է Դամասկոսի Զինուորական Ուսումնարանը, ծառայած է Հալէպի հրետանիի ստորաբաժանումին: Ֆրանսա գործուղուած է հրետանային սպառազինութեան եւ սպայակոյտի սպաներու դասընթացքներու համար: Սուրիական բանակին մէջ ստանձնած է բարձրաստիճան պաշտօններ. 1949-1950՝ սպայակոյտի անդամ էր, իսկ 1949-57՝ հրետանային ուժերու ընդհանուր հրամանատար, նշանակուած է վաշտի ընդհանուր հրամանատար: Մասնակցած է Պաղեստինի պատերազմին, որպէս Սուրիոյ հրետանային զինուած ուժի հրամանատար: 1957ին նշանակուած է Ուաշինկթընի մէջ Սուրիոյ դեսպանատան զինուորական կցորդ, մահացած է Նիւ Եորք, 1996ին:

[18] Յարութիւն Նաշալեան, «Դամասկոսի Հայ Բնակչութիւնը», *Դամասկահայ Ամենուն Տարեգիրքը*, էջ 35:

The Armenians of Damascus

(Summary)

Nora Arissian
noraarissiandeputy@gmail.com

Notwithstanding its small size, the Damascus Armenian community constitutes a historical part of the Syrian Armenian community. These Armenians settled in Damascus after the Genocide and revived the old community there.

Based on diverse sources, archival materials, Prelacy registers, Arabic newspapers, and Syrian Arab memoirs and accounts, the paper sheds light on Damascus as an Armenian center and its history in the post-genocide era.

The paper highlights the growth and formation of the community, its schools, voluntary organizations, and churches, as well as its socio-cultural growth in the last one hundred years. It underlines the role a number of prominent Damascene Armenians had in various aspects of Syrian politics, society, economy and culture. Furthermore, the paper examines the relations of the community with local cultural circles and assesses the Damascene Armenian community from the local Arab perspective.

ՔԵՍԱՊԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Սիլվի Աբէլեան
apelsyl@hotmail.com

ՄՈՒՏՔ

Քեսապը Սուրիոյ Արաբական Հանրապետութեան Լաթաքիոյ Նահանգին մաս կազմող վարչական առանձին միաւոր է: Հիւսիսէն սահմանակից է պատմական Կիլիկիոյ, արեւելքէն՝ Թուրքիոյ, արեւմուտքէն՝ Միջերկրական Ծովուն. Իր միակ մատչելի ափը Գարատուրանի ծովաբերանն է:

Քեսապի եւ շրջակայ գիւղերու հայկական կազմաւորումը կը կապուի միջին դարերու Անտիոքի հայ հոծ գաղթականութեան եւ սերտօրէն կ'առնչուի Անտիոքի միւս շրջաններուն՝ Պէյլանի, Սուետիոյ, Լաթաքիոյ մօտիկ Ղնեմիէի, Արամոյի եւ Ռուճի Հովիտի հայկական բնակավայրերու բնակչութեան: Ան ԺԹ. դարէն հայ իրականութեան կը ներկայանայ իբրեւ հայկական ինքնուրոյն շրջան՝ պատմական, ազգագրական, բանահիւսական եւ բարբառային իւրայատուկ արժէքներով:

Մինչեւ ԺԹ. դարու կէսը շրջանի հայութիւնը իր բախտին լքուած ու գրեթէ անծանօթ շրջանակ մըն էր: 1850ականներուն՝ յարանուանութեանց երկփեղկումը եւ աւելի ուշ՝ 1890ականներուն ազգային-յեղափոխական շարժումներուն ներթափանցումը որոշ հետաքրքրութիւն մը կը ստեղծէ Քեսապի հանդէպ հայ թէ օտար կրօնական եւ ազգային մարմիններուն մօտ, սակայն ատիկա չ'անցնիր մամուլի մէջ պարբերաբար երեւցող հակիրճ տեղեկագրային թղթակցութիւններէն անդին:

Անցնող հարիւրքսան տարիներուն Քեսապի հայութեան ճակատագիրը սերտօրէն առնչուեցաւ թէ՛ արեւմտահայութեան, եւ թէ՛ Սուրիոյ հայօճախի պատմութեան: Միւս կողմէն, 1894-96ի Համիտեան ջարդերէն, 1909ի կոտորածէն, 1915ի Մեծ Եղեռնէն մինչեւ ֆրանսական հոգատարութեան հաստատումը Սուրիոյ վրայ, ապա՝ 1939ին Ալեքսանտրէթի Սանճաքի Թուրքիոյ կցումէն եւ մանաւանդ 1946-48ի հայրենադարձութենէն ետք, արտագաղթը, հայ բնակչութեան միատարրութեան վերացումը, տնտեսութեան արմատական փոփոխութիւնները եւ Քեսապի վերջին՝ 2014ի տեղահանութիւնը՝ դեր ունեցան եւ կը շարունակեն ունենալ Քեսապի տոհմիկ դիմագիծի փոփոխութեան մէջ:

Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ կորուստէն ետք, Քեսապը իբրեւ հայկական հնագոյն գաղթօճախ եւ ազգագրական միաւոր, հետզհետէ հետաքրքրութեան առարկայ կը դառնայ Ի. դարու երկրորդ կէսէն: Անցնող վեց տասնամեակներուն ան դաշտ կը դառնայ պատմագրական, բարբառագիտական, ազգագրական ու բանագիտական հետազօտութիւններու: Ան նաեւ մուտք կը գործէ գեղարուեստական գրականութիւն:

Այստեղ կը ներկայացնենք Քեսապի եւ շրջանի հայութեան արտացոլումը հայ գեղարուեստական գրականութեան մէջ:

ՔԵՍԱՊ ԳԱԽԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ ՄԱՄՈՒԼԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԻՆՉԵՒ ԵՂԵՌՆ

ԺԹ. դարուն Անտիոքի շրջանը թեմական խառնաշփոթ եւ անկազմակերպ վիճակ մը ունէր: Հոգեւոր զօրաւոր գերատեսչութենէ զրկուած՝ շրջանի հայութիւնը հոգեւոր եւ կրթական անմխիթար կացութեան մէջ էր[1]: Սիսի Կաթողիկոսութիւնը, որուն իրաւասութեան մէջ էր Քեսապի թեմը, անզօր էր դրական փոփոխութիւն մը բերելու տեղի խնդիրներուն ու այլազան կարիքներուն: Այս պայմաններէն օգտուելով, օտար միսիոնարներ ու քարոզիչներ 1850ականներէն կը թափանցեն Քեսապ, Պէյլան, Սուետիա եւ շրջակայ հայաբնակ գիւղերը: Անոնք ժողովուրդին զանազան ծառայութիւններ մատուցելով, կը յաջողին ներգրաւել բարօր դասակարգի ընտանիքներ:

Անտիոքի մէջ բացուած Ամերիկեան Միսիոնարական Պորտի[2] կեդրոնին հովանաւորութեամբ 1853ին հիմնուած Քեսապի հայ աւետարանական եկեղեցին թափ կու տայ կրթական-դպրոցական գործին զարգացման: Աւետարանական համայնքներ կը ստեղծուին շրջակայ գիւղերու մէջ: Եկեղեցիներ կը հիմնուին Գարատուրանի (1873), Էքիզօլուքի (1882) եւ Քէօրքիւնէի (1898) մէջ, որոնք կ'ունենան իրենց առանձին շէնքերն ու հոգեւոր հովիւները:

1857ին կը հիմնուի Քեսապի հայ կաթողիկէ ժողովրդապետութիւնը, որ կը կապուի Անտոնեան Հայրերու Անտիոքի թեմին: Անդին, 1890ին սկսած լատին քարոզչութիւնը, լատին *փաթրէ*ներու ջանքերով կը յաջողի ներգրաւել յատկապէս Վարի Պաղճաղազի բնակիչները: 1904ին Քեսապ գալով՝ ֆրանչիսկեան Թերրա Սանթա Առաքելութեան հայրեր կը ստանձնեն լատին ու կաթողիկէ համայնքներուն միասնական կրթական գործը: Քեսապի շրջանի հայութիւնը կը բաժնուի չորս յարանուանութիւններու:

Յաջորդաբար յառաջացող յարանուանական համայնքներու արդիական շէնքերուն դիմաց, հայ առաքելական եկեղեցին ու մանաւանդ դպրոցը չափազանց խեղճուկ էին եւ անմխիթար, որուն հետեւանքով անոր հօտէն մեծաթիւ ծուխեր ու վիճակներ կը հեռանան իրմէ:

Պորտի միսիոնարներուն աւետարանչական գործունէութեան դաշտերէն ղրկուած ու *Միշընըրի Հերըլտի*[3] մէջ լոյս տեսած տեղեկագիրերը, նաեւ *փաթրէ*ներու յղած թղթակցութիւնները՝ յաճախ անդրադառնալով Քեսապի կեանքի զանազան երեսակներուն, անուղղակիօրէն կը նպաստեն Քեսապի եւ շրջակայքի դէպի արտաքին աշխարհ առաջին բացայայտման:

Քեսապի հայ առաքելական եկեղեցին ԺԹ. դարու կէսէն ետք կը սկսի մամուլին ուշադրութեան առարկայ դառնալ գլխաւորաբար իր եկեղեցական կրթական խնդիրներով: Այս մասին տեղեկութիւններ կը բովանդակեն ոմն Զաքարիա վարդապետի *Սիօն*ին[4] յղած թղթակցութիւնները, ինչպէս նաեւ *Մասիս*ի[5], *Արեւելեան Մամուլ*ի[6], *Բիւրակն*ի[7], *Տաճար*ի[8] մէջ լոյս տեսած նիւթեր:

1890ականներուն Քեսապի մէջ տարածուած Հնչակեան Կուսակցութիւնը ազգային զարթօնքի մը սկիզբ տալով, չորս յարանուանութիւններու մասնատուած ժողովուրդը ազգային նպատակներու եւ հայրենասիրական գաղափարներու շուրջ կը ջանայ միաւորել: Քեսապի մէջ, աւելի ուշ՝ 1905ին կազմուած Դաշնակցութիւնը, շրջանին մէջ կը պաշտպանէ այն տեսակէտը, թէ ազգային կրթութիւն ու դաստիարակութիւն ապահովելու համար հարկաւոր է դուրս բերել դպրոցները համայնքային իշխանութենէն: Այս հեռանկարով ալ կը ստեղծուի Ուսումնասիրաց Միութիւնը 1910ին:

Կուսակցութիւններու մուտքով՝ կուսակցական մամուլը եւս կ'անդրադառնայ Քեսապին: 1894-96՝ համիտեան զուլումի տարիներուն, Անտիոքի, Սուետիոյ եւ Քեսապի կացութեան մասին տեղեկութիւններ կը գտնենք *Հնչակ*ին[9] եւ *Դրօշակ*ին[10] մէջ: Աւելի ետք՝ 1909ի Կիլիկիոյ Աղէտին մասին բազմաթիւ յօդուածներ, թղթակցութիւններ[11] լոյս կը տեսնեն հայ թէ օտար մամուլին մէջ[12], թէ՝ գիրքերու[13]: Կուսակցութիւններու մուտքը ազգային գիտակցութիւն եւ ապրում կ'արթնցնէ ժողովուրդին մէջ, ուր մինչեւ այդ յարանուանական շահերու գերակշռութիւն կը տիրէր: Ազգային կրթութիւնն ու դաստիարակութիւնը անհրաժեշտութիւն կը սկսին համարուիլ բոլոր հայոց համար՝ առանց համայնքային խտրութեան[14]:

Ի. դարու սկիզբը Հայոց Միացեալ Ընկերութիւնը[15] կը ստանձնէ ազգային վարժարաններու հսկողութիւնը եւ հետզհետէ կը կարեւորուի ազգային դաստիարակութիւնը: Այս շրջանին մամուլի մէջ կը շարունակեն լոյս տեսնել Անտիոքի շրջանի գիւղերուն կրթական ու հոգեւոր դժուարութիւնները նկարագրող նիւթեր[16]: Բերիոյ թեմը աւելի մօտէն կը հետաքրքրուի Անտիոքի շրջանի հայութեամբ, թեմական վիճակներու կացութիւնը կը մատուցուի մամուլին[17]: Պարբերաբար երեւցող հակիրճ տեղեկագրային թղթակցութիւնները կը պարունակէին նաեւ գողտրիկ պատկերներ եւ նմուշներ Քեսապի ազգագրութենէն, բանահիւսութենէն եւ բարբառէն, ինչ որ հետաքրքրութիւն կը ստեղծեն բանահաւաքներու, գրագէտներու եւ ուսումնասիրողներու մօտ:

Հայ բարբառագիտութեան հիմնադիր՝ Հրաչեայ Աճառեան, առաջինը սերտած է Անտիոքի բարբառախումբը եւ Քեսապի բարբառը[18]:

Քեսապի Աւետարանական համայնքի ծաւալած կրթական եռուն գործունէութիւնը անգերազանցելի կը մնայ մինչեւ տարագրութիւն: Շրջանաւարտ աղջիկներ Մարաշի մէջ կը շարունակէին իրենց ուսումը, իսկ շրջանաւարտ տղաք կը ղրկուէին Այնթապ, Մ. Նահանգներ, Մեծն Բրիտանիա եւն.՝ բարձրագոյն ուսման: Մինչ տարագրութիւն աւետարանական կրթութիւն ստացած բազմաթիւ բժիշկներ, գիւղատնտեսներ, աստուածաբաններ, ուսուցիչներ տուած է Քեսապ: Ասոնք կարեւոր դեր կ'ունենան Քեսապի բարգաւաճման ու յառաջդիմութեան մէջ, կը նպաստեն տեղի ազգագրութիւնն ու պատմութիւնը հրապարակելու գործին[19]:

ՔԵՍԱՊԻ ՄԱՍԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ ԵՂԵՌՆԷՆ ԵՏՔ

1915ի Մեծ Եղեռնին Քեսապ ամբողջութեամբ կը հայաթափուի, սակայն տարագրութենէն ճողոպրած բնակչութեան վերադարձով եւ աւելի ուշ թուրքերուն դէմ ինքնապաշտպանութեան մարտերով կրկին կը վերականգնի ու կը պահէ իր գոյութիւնը: Այս շրջանի դէպքերուն մասին ուսումնասիրութիւններ ու յօդուածներ կը հրատարակուին հայ եւ օտար մամուլին մէջ[20]:

Մեծ Եղեռնին, շրջանին մէջ ամէնէն ծանր հարուածը կը կրէ հայ աւետարանական համայնքը: Տարագրութենէն առաջ ան կը գոյացնէր բնակչութեան մէկ երրորդը եւ իր շինութիւններով կը գրաւէր Քեսապի ամէնէն գեղեցիկ դիրքը: Տարագրութենէն ետք Քեսապ այցելող հոգեւոր հովիւները, յաւերժացնելու համար համայնքին երբեմնի փառքը, սկսան նիւթեր հաւաքել ու զբաղիլ պատմագրութեամբ: Այս նիւթերը լոյս տեսան մամուլի կամ առանձին հատորներու մէջ[21]: Թէեւ այս աշխատութիւնները աւելի շատ համայնքներու պատմութիւնները կը ներկայացնեն, միաժամանակ՝ հակիրճ տեղեկութիւններ ալ կու տան Քեսապի պատմութեան, տնտեսութեան, ազգագրութեան եւ բարբառին մասին:

1920ականներէն ետք Քեսապ վերածուած էր սփիւռքահայ տոհմիկ հայօճախի մը եւ կապուած սփիւռքեան իրականութեան՝ թեմական, եկեղեցական, կուսակցական, միութենական բազմաթիւ կապերով: 1939ին Ալեքսանտրէթի Սանճաքին Թուրքիոյ կցումէն եւ 1946-48ի հայրենադարձութենէն ետք Քեսապ վերածուեցաւ զբօսաշրջութեան եւ ամառանոցային սիրելի վայրի մը հալէպահայութեան եւ պէյրութահայութեան համար: Ան, իբրեւ Պատմական Հայաստանէն աւանդ եւ Թուրքիոյ գերիշխանութենէն դուրս գոյատեւող միակ հայկական շրջան, սփիւռքահայ շատ մը մտաւորականներու համար ուխտավայրի հանգամանքը զգեցաւ[22]:

Այս շրջանին արտասահմանի մէջ կը գոյանայ քեսապցի մտաւորականներու նկատառելի թիւ մը: Կը սկսին գործել Ուսումնասիրաց մասնաճիւղեր՝ Պէյրութի եւ Մ. Նահանգներու մէջ: Արտասահմանեան մամուլին մէջ կ'երեւին քեսապցի անուններ, որոնցմէ Տոքթ. Ալպերթ Աբէլեան Պոսթոնի *Հայրենիք* շաբաթաթերթին եւ Նիւ Եորքի *Նոր Աշխարհ*ին մէջ կը ստորագրէ գրական գեղարուեստական յօդուածներ: Փորձեր կը կատարուին Քեսապի մօտիկ ու հեռաւոր անցեալը պատմագրելու, բանահիւսութիւնն ու ազգագրութիւնը գրառելու: Այս փորձերը սիրողական ու ոչ-ամբողջականի հարթակին կը մնան:

Քեսապի 1909-47ի իրադարձութիւններուն մասին կը խօսի Ալպէր Թեմիրեան իր *Քեսապ*[23] հատորին մէջ, ուր կը ներկայացնէ Քեսապի եւ իր գիւղերուն եղբայրասպան կռիւները, կուսակցական սուր հակամարտութիւնները, որոնց հետեւանքով կը պղտորի խաղաղ կեանքը եւ ծայր կ'առնէ արտագաղթը: Այդ շրջանին Քեսապի Ուսումնասիրաց

Միութեան Պէյրութի մասնաճիւղը կը հրատարակէ *Ալպոմ Քեսապի Եւ Շրջակայից*[24] նկարագիրքը, որ կը բովանդակէ ազգագրական երեւոյթներ պատկերող (հողամշակութեան աշխատանք, թոնիր, պարէն պատրաստելու ձեւեր եւն.) համառօտ տեղեկութիւններ ու ազգագրական ակնարկներ: Նոյն շրջանին Քեսապի բարբառը կը մտնէ գիտական շրջանառութեան մէջ: Հայրենի բարբառագէտ Արարատ Ղարիպեան «կը» ճիւղին մէջ կ'առանձնացնէ «հա» ճիւղը, ուր կը տեղադրէ Քեսապի բարբառը[25]:

Քեսապի 1919-22ի ինքնապաշտպանութեան իր ականատեսի վկայութեան հրատարակման կողքին, շուրջ հարիւրամեակ մը ետք, Քեսապի երրորդ տեղահանութեան՝ 21 Մարտ 2015ին վերաբերող բազմաթիւ տեղեկագրական յօդուածներ կը հրապարակուին հայ եւ օտար մամուլին մէջ: Այս առումով Քեսապի հայաթափման եւ անոր նախորդող իրավիճակի ականատես հեղինակի վկայութիւն է Յակոբ Չօլաքեանի *Քեսապի Երեք Օրերը* գիրքը (2014, Երեւան):

ՔԵՍԱՊԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ, ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՅ

Քեսապը համապարփակ երկասիրող առաջին բանասէրը կ'ըլլայ Չօլաքեան իր՝ *Քեսապ* ստուարածաւալ երեք հատորներով[26], որոնք կ'ընդգրկեն մինչ այդ Քեսապի մասին եղած հանրութեան ծանօթ բոլոր նիւթերը:

Չօլաքեան իր *Քեսապի Բարբառը*[27] հատորով Քեսապի բարբառը ամբողջապէս եւ ամենայն մանրամասնութեամբ կ'ուսումնասիրէ ու կորուստէ կը փրկէ զայն:

Չօլաքեան Անտիոքի եւ շրջակայքի հայ գաղթականութեան համառօտ պատմութիւնը, Քեսապի պատմական անցեալը, գաղթավայրի կազմութիւնը, աշխարհագրութիւնը, քաղաքական դէպքերը, համայնքային դրութիւնը, կրթական կեանքը, տնտեսութիւնը իր զանազան երեսներով, գիւղերը իրենց աշխարհագրական տեղեկանքներով ու բնակչութեան պատկերներով համապարփակ ու համակողմանի գիտական մօտեցումով կը հրատարակէ իր *Քեսապ* ուսումնասիրութեան Ա. Հատորին մէջ: Ուսումնասիրութեան երկրորդ հատորը կ'ընդգրկէ Քեսապի ազգագրութիւնն ու բանահիւսութիւնը[28]:

Չօլաքեանի *Քեսապ* շարքին երրորդ հատորը կ'ընդգրկէ անտիպ մնացած յուշագրութիւններ-ուսումնասիրութիւններ: Հատորը կը պարունակէ նաեւ մեծ քանակութեամբ արխիւային նիւթեր:

Վերոյիշեալ աշխատութիւններու կողքին Քեսապ գաւառակի պատմութիւնը, ազգագրութիւնն ու բանահիւսութիւնը շատ մը բանահաւաքներու եւ պատմաբաններու հետաքրքրութեան առարկայ դարձած են, որոնք յաջորդաբար հրատարակած են

ուսումնասիրութիւններ ու գիտական յօդուածներ: Գաղթավայրին կազմութեան մասին անդրադարձած են շատեր[29]:

Քեսապի հեքիաթներէն տպուած առաջին նմուշը գրի առած է Տիգրան Մանճիկեան[30]: Բանահիւսութեան վերաբերող նիւթեր հրատարակած է Չօլաքեան[31]: Անոր *Քեսապի ժողովրդական երգարուեստը*[32] ժողովրդական երգերու (երաժշտական նոթագրութեամբ) ընդարձակ հաւաքածոյ մըն է: Միւս կողմէն, Քեսապի կարգ մը երգեր ու պարեղանակներ մշակման կ'ենթարկուին ու կը ներկայացուին հանրութեան[33]: Այսօր եւս Քեսապի պարեղանակներէն ու պարերգերէն ոմանք տակաւին մեծ հաճոյքով կը կատարուին խնճոյքներու եւ հարսանեկան խրախճանքներու ընթացքին:

Քեսապի ժողովրդական ստեղծագործութիւններու բանահաւաքման ուշագրաւ աշխատանք տարած է նաեւ Միհրան Մինասեան, որ հրատարակած է 43 խաղիկ, 11 խաղերգ[34]: Հետաքրքական են Մելքոն Էպլաղաթեանի[35] շարք մը ուսումնասիրութիւնները Քեսապի մասին: Մեծ Եղեռնի մասին քեսապցիի վկայութիւններ հաւաքած է Վերժինէ Սվազլեան[36]:

Գրական լեզուի զարգացումով Քեսապի բարբառի գործածութիւնը տակաւ նահանջեց: Այսօր տակաւին գործածութենէ չէ դադրած բարբառը, բայց անով երգեր ու բանաստեղծութիւններ գրեթէ չեն յօրինուիր[37]:

ՔԵՍԱՊԸ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Քեսապը Ի. դարու երկրորդ կէսէն ետք գեղարուեստական գրականութեան մէջ կը սկսի իր ինքնուրոյն տեղն ու դերը ունենալ մանաւանդ երբ ազգագրութիւնը, պատմութիւնն ու բարբառը հետաքրքրութեան առարկայ կը դառնան:

Սկիզբէն եւեթ Քեսապի հանդէպ գրողներու հետաքրքրութիւնը քանի մը դրդապատճառներ ունեցած է:

1. Քեսապը արեւմտահայ մեծ աշխարհին միակ մնացորդացն է, ուր կը յամենան գաւառական կենցաղը, աւանդութիւնները, բարբառը, աշխատանքի տեսակները, սովորութիւնները, բարքերը եւն.: Գրողներ այդ պատառ մը հայրենի հողը ու անոր հոգեւոր արժէքները մասունք ընդունելով, կը սկսի ուշադրութիւն դարձնել եւ գեղարուեստականօրն վերարտադրել:
2. Քեսապը Սփիւռքի հայ իրականութեան եւ յատկապէս Մերձաւոր Արեւելքի հայահոծ շրջանակի այն հատուկենտ գիւղական շրջաններէն էր, որուն հետ՝ իբրեւ ներշնչարան, աղերս ունէին եւ կը շարունակեն ունենալ շրջակայ բոլոր հայօճախները, հայկական միութիւնները, մտաւորականութիւնը:
3. Քեսապը իր ամբողջ պարունակութեամբ ներշնչումի աղբիւր դարձաւ քեսապցի գրիչներուն համար: Անոնք աշխատեցան անմահացնել

զայն՝ գրականութեան բերելով զայն, հայրենի եզերքին հանդէպ որոշ նախանձախնդրութեամբ մը:

4. Քեսապը սփիւռքի տարածքին այն բացառիկ շրջաններէն է, ուր ծնողները ծննդավայրի հանդէպ անդիմադրելի սէր ու հզօր կարօտ ունին: Այս զգացումները բնական արդիւնքն են հայրենի հողի ուժին եւ քաշողականութեան: Հետեւաբար սէրն ու կարօտը մղեցին ի սփիւռս տարածուած քեսապցի գրողները, որ իրենց գիւղը գեղարուեստական գրականութեան նիւթ դարձնեն:

Փոքր չէ թիւը այն գրողներուն, որոնք առանձին հատորով, հրատարակութիւններով կամ պարբերական մամուլին մէջ ցրուած յօդուածներով ու գրութիւններով Քեսապը գեղարուեստական գրականութեան նիւթ դարձուցած են: Գրողներու այս փաղանգին կը պատկանին.-

- Օտար ափեր կայք հաստատած քեսապցի գրողներ, որոնք թուղթին յանձնած են իրենց ծննդավայրը իր կենցաղային աւանդութիւններով, իբրեւ կենդանի ու ապրող վկայութիւններ եւ ոչ թէ մեռած աշխարհ մը վերակենդանացնելու փորձ:
- Քեսապը օտար միջավայրերու ներկայացնող քեսապցի գրողներ:
- Քեսապ ապրող ու ստեղծագործող քեսապցի գրողներ, որոնք հանդէս կու գան ներկայացնելով գիւղի անցեալէն մտածելակերպ, կենցաղ եւ աւանդութիւններ խտացնող պատառիկներ:
- Քեսապ այցելած գրողներ եւ բանաստեղծներ, ինչպէս՝ Երուանդ Օտեան, Մկրտիչ Աճէմեան, Արմէն Անուշ, Յակոբ Միքայէլեան, Թորոս Թորանեան, Սմբատ Փանոսեան, Մարուշ Երամեան, Լալա Մինասեան եւն., որոնք հմայուած անոր հրաշալի բնութեամբ ու ներշնչուած անկէ՝ արձանագրած են զանազան բնոյթի գրութիւններ:
- Քեսապի մասին ոչ-հայ հեղինակներու շարքին մէջ եզակի տեղ կը գրաւէ Հաննա Մինան:

Ստորեւ աւելի մանրամասն կը ներկայացնենք Քեսապի մասին ստեղծուած գրականութիւնը:

1. ԱՐՁԱԿ ԵՐԿԵՐ

ա. Վիպակ

Արա Աբէլեան, *Հինադուլ 27*[88]

Յուշագրական բնոյթի այս վիպակին միջավայրը հայաբնակ Քեսապն է, իսկ հերոսները՝ երիտասարդ ուսանողներ, որոնց կարգին՝ Քեսապէն գործի կամ ուսման նպատակով մեկնած գիւղի զաւակներ: Ասոնք բոլորը Լիբանանի պատերազմի արհաւիրքէն փախչելով ապաստան գտած են Քեսապ: Հեղինակը Լիբանանի քաղաքացիական պատերազմի տակնուվրայութիւններուն կը հակադրէ գիւղական աշխարհի խաղաղութիւնը. «*Դեռ կեանքը խաղաղ էր Միջերկրականի ափին գտնուող*

այդ բարձունքին վրայ: Մարդիկ կրնային լիաթոք խնդալ ու փաղաքշական հայհոյանքներ ուղղել իրարու: Եւ ամէն բանէ առաջ անոնք գիտէին, թէ բռնութիւնը ոչ մէկ կերպով կը վարձատրէ»[39]:

Հեղինակը մէկ կողմէն կը պատկերէ գիւղական բնական կեանքը, գիւղացիներու ժիր բերքահաւաքը, միւս կողմէն կը նկարագրէ այդ երիտասարդներու առօրեան, պատերազմի մղձաւանջին ճնշումը անոնց վրայ, ցաւերը մոռնալու անոնց փորձը, երազներու խորտակումը, սէրն ու կարօտը:

Ուշագրաւ է հեղինակի հօր հողին կապուածութիւնը նկարագրող հատուածը. «*Եւ հողը ձայն ունէր ոտքերուս տակ: Հայրս մշակած էր զայն: Անոր ձեռքերը կոշտացեր էին, եւ հողը փափուկցեր էր: Անոր քրտինքը խառնուեր էր հողին ու ծառերը աւելի լայն տարածեր էին իրենց ճիւղերը*»[40]:

Քեսապ ապաստանած երիտասարդները միաոժամանակ ետք կը վերադառնան իրենց քարուքանդ երկիրը եւ անկէ ալ կը ցրուին աշխարհով մէկ: Գիւղի տղաքն ալ մէկիկ-մէկիկ կը ձգեն հայրենի գիւղը, իւրաքանչիւրը գործի կամ ուսման համար իր տեղը գտնելու: Կը մեկնի նաեւ հեղինակը իր հետ տանելով հայրենի եզերքին բուռն կարօտը, որ ընդմիշտ սեղմուած կը մնայ իր կուրծքին տակ. «*Երբ ամռան թռչուններուն վերջին երամը կը գաղթէր, կապարագոյն երկնքին վրայ հրաժեշտի եռանկիւններ գծելով՝ ես ձգեցի գիւղը*»:

Հեղինակը հանդարտ պատումով ու պարզ ոճով, առանց բայերու ծանրութեան, ժամանակի մը իրադարձութիւնները անցուցած է թուղթին, ուր Քեսապը ներկայացուած է որպէս հանգստակայան՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն:

բ. Վէպ

ա) Ալպերթ Ս. Աբէլեան, *The Antiochians*[41]

Անգլերէն այս վէպը ունի ինքնակենսագրական բնոյթ: Անոր առանցքը կը կազմեն Անտիոքը, Քեսապն ու Մ. Նահանգները: Հեղինակին նպատակը եղած է նախ օտար աշխարհին ներկայացնել հայն ու յատկապէս քեսապցին իր կենցաղով, բարքերով, սովորութիւններով եւ ապա՝ բացայայտել թուրքին գործադրած անօրէնութիւններն ու վայրագութիւնները 1909ի նախօրեակէն սկսեալ: Այս վէպը կարելի է առջինեկներէն համարել անգլերէն այն երկերուն, որոնք յուշագրութիւններու ընդմէջէն, իբրեւ ինքնակենսագրական վէպ, Մեծ Եղեռնը կը ներկայացնեն անգլիախօս աշխարհին:

բ) Գէորգ Աբէլեան, *Աննա Հարսը*[42]

1915ի Մեծ Եղեռնին, քեսապցիներուն բաժին հանուած տառապանքները արտացոլացնող եզակի երկ մըն է Գէորգ Աբէլեանի *Աննա Հարսը* վէպը: Ան հեղինակին մեծմօր արկածալից պատմութիւնն է:

Քեսապցի կնոջ կերպարը իր համարձակութեամբ, քաջութեամբ եւ մաքուր սիրով կը մարմնաւորէ վէպին գլխաւոր հերոսուհին՝ Աննան, որուն համբաւը տարածուած էր գիւղին սահմաններէն անդին: Ան նշանուած էր իր համագիւղացիին՝ Եզեկիէլին, բայց ո՛չ իր, ո՛չ ալ իր հօր սրտովն էր այս տղան: Աննան որքա՞ն կը փափաքէր ձգել գիւղը ու երթալ ընդարձակ հորիզոնով տեղ մը: Ան կ'որոշէ հեռանալ տունէն եւ կ'առաջարկէ ջորեպան Քերոբին՝ «*Վաղը գիշեր եկու՛ր, կը սպասեմ, քու նշանածդ փախցուցին, դուն ալ եկուր զիս փախցուր*»[43]: Աննան իր ոտքով հարսնութեան կ'երթայ Հաննոյենց տուն: Ագարակ մը շինելու երազը իրականացնելու նպատակով Քերոբ կը ճամփորդէ Ամերիկա՝ աշխատելու: Աննային՝ ամուսինին միանալու ճամփորդութիւնը կը ձախողի. ան իր երկու փոքրիկներուն հետ կը վերադառնայ գիւղ ու Եղեռնին - տնեցիներուն եւ համագիւղացիներուն հետ - կը բռնէ գաղթի արիւնոտ ճամփան, իր հետ տանելով ագարակ ունենալու իր երազը:

Ցնցող են անապատ նետուած Աննայի ու իր տալոջ՝ Գարունի, ափ մը ցորեն հաւաքելու եւ զաւակները կերակրելու, ապա՝ կեանք խորհրդանշող ցորենի հասկերուն մէջ իր միայնակ, հեռու բոլորէն, մահուան տեսարանները: Աննային հետ հողին յանձնուեցաւ իր երազը:

Հայ ժողովուրդի, մասնաւորաբար արեւմտեան հատուածին մէկ մասին ճակատագիրը կապուեցաւ յատկապէս՝ սուրիացի արաբին, երբ Հայոց Ցեղասպանութենէն ճողոպրած արեւմտահայ մնացորդաց մը կայք հաստատեց Սուրիոյ հիւսիսային շրջաններուն մէջ, ապա նաեւ՝ հարաւի շրջանները: Այսպիսով, հայ-թուրք դարաւոր գոյակցութենէն ետք, սկիզբ առաւ հայ-արաբ գոյակցութիւն մը վերջին հարիւրամեակի ընթացքին[i]:

Ի. ԴԱՐ, ՅԵՏԵՂԵՌՆԵԱՆ ՇՐՋԱՆ, ՄԻՆՉԵՒ 1950ԱԿԱՆՆԵՐ

Ցեղասպանութեան դժոխքէն եւ բռնագաղթածներու մահուան կարաւաններէն հրաշքով ողջ մնացած հայու խլեակներ, երբ կայք հաստատեցին Սուրիոյ զանազան քաղաքներուն, մասնաւորաբար՝ Հալէպի մէջ, սկզբնական շրջանին բնազդօրէն իրենց ֆիզիքական ապահովութեան մասին մտածեցին ու իրենց հիւղաւաններուն մէջ քաշուած, հնարաւորինս հեռու մնացին իրենց շրջապատի ժողովուրդէն: Վտանգն ու վախը բոյն դրած էին կոտորածներու բովէն անցած այս խլեակներուն մէջ, որոնք իրար կողքի կծկուած աւելի ապահով կը զգային: Միւս կողմէ, անոնք ոչինչ ունէին հասարակաց՝ շրջապատի ժողովուրդին հետ. ո՛չ լեզու, ո՛չ կրօն, ո՛չ ալ մշակոյթ: Միջավայրին հետ չհաղորդակցելու կարեւոր այլ պատճառ էր այն՝ որ գաղթականները հաստատուելու նպատակ չունէին, քանի որ այս արմատախլուածները կը հաւատային թէ պիտի վերադառնան իրենց ծննդավայրերը: Այնպէս որ, գաղթականները միքանի խոշոր հոգեբարոյական եւ գիտակցական անցարգելային հանգրուաններ ունէին՝

[i] Պէտք է նշել սակայն, որ հայ-արաբական յարաբերութիւնները ունին երկհազարամեայ չընդհատող պատմական անցեալ: Մեր ուսումնասիրութեան ծիրէն դուրս կ'իյնայ անդրադառնալ Փալմիր-Թատմորի Զենուպիա Թագուհիին (Գ. դար, Ք.ե.)՝ հայոց հետ ունեցած յարաբերութիւններուն, Մեծն Տիգրանի՝ Եփրատ Գետի երկու ափերուն արաբներ բնակեցնելուն, Սինայի եւ Երուսաղէմի Ե. Դարու հայ վանքերուն, հայոց Աբրահամ Պատրիարքի՝ Մոհամմէտ Մարգարէին հանդիպումին (չհաստատուած վարկած), անոր յետնորդներուն՝ հայոց կրօնապետերու հետ ունեցած հանդիպումներուն, Թէոդորոս Ռշտունիի՝ Մուաուիյէի հետ կնքած դաշինքին (652), Գրիգոր Մագիստրոս Պահլաւունիի (ԺԱ. դար) եւ այլոց քաջատեղեակութեան՝ արաբական բանաստեղծութեան, հայ բժշկութեան հայր Մխիթար Հերացիի կապերուն՝ արաբ բժշկութեան հետ, արաբ բժիշկներու Հայաստան այցելութեան եւ անոր բուսականութեան բժշկական ուսումնասիրութեան, Ագաթանգեղոսի *Հայոց Պատմութիւն*ի արաբերէն թարգմանութեան, Առաքել Անեցիի (ԺԳ. դար) արաբերէնէ կատարած թարգմանութիւններուն...:

հաս-նելու համար իրենց միջավայրին համարկուելու կարելիութեան: Առարկա-յական ու բարոյական անջրպետ մը կար, որուն վրայ կամուրջ նետելու համար դեռ ժամանակ պէտք էր: Դեռ պէտք էր լեզուն սորվիլ:

Ուստի, պարզ է, որ ջարդին յաջորդող առաջին տասնամեակներուն, փոխադարձաբար ուշագրաւ գրական կապեր չհաստատուէին գաղթական հայերուն եւ տեղաբնիկ արաբներուն միջեւ:

Երբ հայերը հասկցան որ այլեւս կորսնցուցած են իրենց հայրենի տունը եւ՝ անմիջական վերադարձի յոյսերը, վերապրելու-գոյատեւելու համար անհրաժեշտ նկատեցին մերուիլ տեղացիին եւ համարկուիլ, շաղուիլ, ներգրաւուիլ արաբ հասարակութեան եւ շրջապատին:

1950ականներուն կը սկսի թարգմանութեան գործընթացը: Այդ թուականներուն, հատուկենտ սուրիահայ թարգմանութիւններ եղած են, անձնական նախաձեռնութեամբ, ինչպէս՝ 1940ին, Աւետիք Իսահակեանի *Աբու Լալա Մահարին*՝ Խայրէտտին էլ Ասատիի եւ Բարսեղ Չաթոյեանի կողմէ[ii]: Աւելի ետք՝ 1952ին, կատարուած է մասնակի թարգմանութիւնը Վարդան Այգեկցիի *Աղուէսագիրք*ին:

ՅԵՏ-1950ԱԿԱՆՆԵՐ

Ի. դարու Բ. կիսուն, սկիզբ առաւ թարգմանական գրականութեան երկկողմանի որոշակի ծաղկումը՝ երկու ժողովուրդներու շփման որակական աճին եւ փոխճանաչողութեան անհրաժեշտութեան պատճառով:

Ուշագրաւ է որ մինչեւ 1950ականները, տասնամեակներով ապրելով սուրիացի արաբ ժողովուրդին մէջ, կիսելով անոնց հացն ու ճակատագիրը, տեղացիներուն նման կրելով սուրիական հպատակութեան անձնագիրը, սուրիահայոց բացարձակ մեծամասնութիւնը չէր ճանչնար տեղացի արաբը, բացի՝ մակերեսային ծանօթութիւններէ, որոնք ազգագրական սովորոյթներէն ու կենցաղային հարցերէն անդին չէին անցներ:

Անձամբ կրնամ վկայել, որ 1960ականներու աւարտին, Դամասկոսի Համալսարանի ուսանողական տարիներուս, տեղացի դասընկերներս գրեթէ ոչինչ գիտէին հայոց եւ սուրիահայոց մասին. տեղեակ չէին հայոց պատմութենէն, գիր-գրականութենէն, մշակոյթէն: Փաստօրէն, թերացած էինք մենք զմեզ ծանօթացնելու: Նոյնիսկ թերացած էինք տեղացիին լեզուն իւրացնելով շրջապատին հետ հաղորդակցելու: Հայերը թրքերէնը կ'օգտագործէին լայնօրէն, ժառանգելով իրենց բնակավայրերէն, կամ ծնողներէն: Հայը շատ աւելի մօտ կը զգար թրքերէնին, թրքական բարքերուն ու սովորութիւններուն, քան արաբերէնին: Թերեւս հասկնալի է ասիկա, որովհետեւ աւելի քան 400 տարի մնայուն շփման մէջ եղած էր թուրքին եւ օսմանցիին, քան թէ արաբին հետ:

[ii] Աւելի ետք, Չաթոյեան թարգմանած է նաեւ *نخب من الشعر الارمني* հատորը, որ լոյս տեսած է Սայիտ Աքըլի ներածականով, Պէյրութ, 1985ին:

Սակայն, ժամանակի ընթացքին, դրացնութեան թելադրանքով յառաջացած ու խորացած երկու ազգի զաւակներ զիրար աւելի ճանչնալու փափաքէն անջատ, այլ ազդակներ եւ իրադարձութիւններ եւս իրենց դերը ունեցան ու փոխադարձ շփումները որակական ցատկ կատարեցին յառաջացնելով երկկողմանի թարգմանական գրականութիւն մը:

Հայ համալսարանականներու թիւին աճը, անոնց շփումը արաբ երիտասարդութեան հետ, կարեւոր ազդակ եղան ընկերային յարաբերութիւններ մշակելու եւ աւելի մօտենալու արաբ գրականութեան: Միւս կողմէն, ձգտում մը յառաջացաւ - թերեւս ազգային հպարտութեան թելադրանքով - հայկականը ծանօթացնելու տեղացի դասընկերոջ, հայ արժէքները ցոյց տալով յարգանքի՛ արժանանալու գիտակից տարրին կողմէ:

ՀԱՅ-ԱՐԱԲ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՆՊԱՍՏՈՂ ԱԶԴԱԿՆԵՐ

- 1965ին Հայոց Ցեղասպանութեան 50ամեակի հանրային նշումը - աւելի հրապարակայնօրէն քան երբեւէ - նաեւ տարիներ շարունակ ամէն Ապրիլ 24ին բոլոր հայապատկան հաստատութիւններու, գործատեղիներու եւ վաճառատուներու փակ մնալը տեղացի արաբներուն մօտ հետաքրքրութիւն ստեղծած էր՝ իմանալու այս երեւոյթին դրդապատճառը:
- Խորհրդային շրջանին, թէ՛ պետական եւ թէ՛ Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի միջոցով յաճախ Սուրիա այցելեցին հայրենի արուեստագէտներ, մտաւորականներ, գրողներ եւն.: Այս այցելութիւնները ունեցան իրենց բարերար ազդեցութիւնը եւ հրամայական դարձաւ երկու ժողովուրդներուն՝ զիրար աւելի մօտէն ճանչնալու անհրաժեշտութիւնը, ինչ որ թափ տուաւ թարգմանական գրականութեան:
- 1970ականներու հայկական գաղտնի կազմակերպութեանց հակաթրքական գործողութիւնները իրենց դերը ունեցան այս ուղղութեամբ: Աշխարհի թերթերը, հանդէսները, լրատուամիջոցները ողողուեցան անոնց լուրերով եւ անշուշտ գործադրողներուն ետին կեցած հայ ժողովուրդով, անոր պատմութեամբ եւ Ցեղասպանութեան հարցով: Այս առթիւ տարբեր լեզուներով գիրքեր գրուեցան: Սուրիական մամուլը արձագանգեց այս դէպքերուն, ինչպէս կ'արձագանգէր Խորհրդային Հայաստանէն այցելող մշակութային դէմքերու ձեռնարկներուն:
- Սուրիան՝ Պիլատ Ուլ Շամը, որ 400 տարի ճաշակած էր Օսմանեան Կայսրութեան լեղին ու խաւարը, իսկ քսաներորդ դարուն եւրոպական դաւադրութեամբ կորսնցուցած էր Ալեքսանտրէթի Սանճաքը՝ նոյնինքն Օսմանեան Կայսրութեան ժառանգորդ պետութեան, բնական էր որ հակաթրքական քաղաքականութիւն մը վարէր: Սակայն, առկայ քաղաքական պայմաններուն բերումով «բարի դրացնութեան» սիրոյն զգուշ էր Թուրքիան չնեղացնելու: Հայ տարրն ալ պարզ է, պիտի չհակառակէր պետութեան: Սակայն եւ այնպէս, թարգմանուեցան ու լոյս

աշխարհի եկան գեղարուեստական գրականութեան կողքին, նաեւ Մեծ Եղեռնի եւ Հայկական Հարցի թեմայով գիրքեր:

Այս թարգմանութիւններուն զուգահեռ արաբ իրականութեան մէջ եղան բանասէրներ, որոնք ուսումնասիրական հատորներ գրեցին հայոց մասին, ներկայացնելով անոնց պատմութիւնը, մշակոյթը[2], անդրադարձան արաբական աշխարհի մէջ հայերու ներկայութեան, արաբերէն վերահրատարակուեցան Ֆայէզ Էլ Ղուսէյնի[3], եւ արաբերէն թարգմանութեամբ լոյս տեսաւ 1928ին Հալէպի մէջ օսմաներէն հրատարակուած Մելլան Զատէ Րիֆաաթին հատորները[4]: Եղան ուրիշ արաբ գրողներ, որոնք ոչ-հայագիր հեղինակներու հայկական առնչութեամբ երկեր թարգմանեցին, ինչպէս՝ Վրպան Սթամաթովի *Նաւով Արարատ*, Ուոլթըր Պանտազեանի, *Ալեքսանդրէթի Տագնապը* (թարգմ. Սամի Սամմուն), Վարդան Գրիգորեանի *Պարտադիր Ձուլում (Ազգային Իսլամ Փոքրամասնութիւնները Ազրպէյճանի Մէջ)*ը (թարգմ. Դոկտ. Ահմատ Ֆատէլ), Աստղիկ Չամքերթէնի *Հայաստան՝ Արմատներս*ը (թարգմ. Ապտալլա Հաճճար), Ժաք Տէր Ալեքսանեանի *Le Ciel Était Noir Sur l'Euphrate*ը (թարգմ. Սիլվա Արպաշ)[5]: Մարկերիթ Րիմշնայտէրի *Ուրարտու. Արարատի Գրկին Մէջ Հին Պեւրութիւն Մը* գիրքը (թարգմ.՝ Մուհամմատ Ուահիտ Խայեաթա), Հանրի Վերնէօյի *Մայրիկը* (թարգմանիչ՝ Եուսէֆ Գոշաքճի)[6], Ալեքսանդր Խաչատրեանի *Արաբերէն Արձանագրութիւնները Հայաստանի Մէջը* (թարգմանիչ՝ Շաուքաթ Եուսէֆ)[7], Մայքըլ Արլէնի *Passage to Ararat*ը (թարգմ.՝ Խալիլ Հանունիկ[8]): Կ'արժէ անդրադառնալ Նայիմ Էլ Եաֆիի, որ գրեց Ճեմալ փաշայի, օսմանեան գաղութատիրութեան դէմ արաբներու եւ հայերու պայքարին (համահեղինակ Խալիլ ԱլՄուսա), արաբական երկիրներու մէջ հայոց ջարդերուն, ժամանակակից արաբ բանաստեղծութեան մէջ թուրքի կերպարին (համահեղինակ Մահէր Մունժէտ) մասին[9]: Աւելի ետք յառաջացան նաեւ սուրիահայեր, որոնք արաբերէն հեղինակեցին, ինչպէս՝ Հուրի Ազէզեան, Գէորգ Նորիկեան[iii], Աւօ Գաթրճեան[iv][10], մինչ *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրքի* 6րդ հատորը ամբողջութեամբ արաբերէն թարգմանուեցաւ: Տասնամեակներէ իվեր արաբերէն կը հրատարակուի նաեւ Հալէպի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդարանի պաշտօնաթերթը[11]:

[iii] *Պատմական Ակնարկ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հարիւրամեայ Պայքար Յանուն Հայրենիքի Եւ Ազգին):*

[iv] Հեղինակ է ցեղասպանութեան զոհ՝ հայ մարզիկներու նուիրուած գրքոյկի մը:

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ ԵՐԿԵՐ[v]

Հայերէն եւ հայկական նիւթերու արաբերէնի թարգմանութեան պատիւը կ'երթայ խումբ մը թարգմանիչներու, որոնց մէջ յատուկ տեղ կը գրաւեն[vi] Նիզար Խալիլին (աւելի քան քսանեակ մը թարգմանութիւններ), Մեթր Նազար Նազարեանը (աւելի քան տասնեակ մը թարգմանութիւններ), Բժ. Ալեքսան Քեշիշեանը (աւելի քան յիսնեակ մը թարգմանութիւններ), Դոկտ. Նորա Արիսեանը (շուրջ տասնեակ մը թարգմանութիւններ): Աւելի նուազ գործեր թարգմանած են Հայաստանի Հանրապետութեան Հալէպի առաջին հիւպատոս Պօղոս Սարաճեան[vii][12], Լիւսի Գասապեան-Ղասսան Քաճճօ ամոլը[viii][13], Հուրի Ազէզեան[ix][14] եւ Խալէտ Ճպէյլի[x][15], Հրանդ Հապէշեան[xi][16], Մարալ Քէչեան, Հրաչ

---

[v] Այս բաժինին համար դիմած ենք զանազան թարգմանիչներու, ինչպէս նաեւ հետեւեալ աղբիւրներուն.- *Հայ Թարգմանական Գրականութիւն (1920-2010)*, կազմ՝ Թ. Վ. Սինանեան. նաեւ՝ *Հայ Թարգմանական Գեղարուես-տական Գրականութիւն, (1981-2010)*, կազմ.՝ Թ. Վ. Սինանեան, Յասմիկ Ն. Մկրտչեան. նաեւ՝ *Հայ–Արաբական Մատենագրական Առնչութիւններ*, Սեդա Պարսումեան-Տատոյեան, *Հայ-Արաբական Մշակութային Յարաբերութեանց Պատմութենէն.* նաեւ՝ Արմէն Յովսէփի Դարեան, *Ակնարկ Հայ-Արաբ Մշակութային Կապերուն Վրայ.* նաեւ՝ Վ. Վարժապետեան, *Հայ-Արաբ Յարաբերութեանց Մշակումը*:

[vi] Ներկայացուող ցանկը թարգմանուած գիրքերուն, անուններն ու այլ մանրամասնութիւններ մօտ են իրականութեան, սակայն ամբողջական չեն, քանի որ Սուրիոյ ներկայ պայմաններուն պատճառով, նիւթիս առնչուող աղբիւրները լրիւ մատչելի չէին մեզի:

[vii] Սարաճեան, թարգմանած է Պարոյր Սեւակի եւ Եղիշէ Չարենցի բանաստեղծութիւններու ընտրանի մէկական հատորներ, Եղիա Նաճարեանի *Արաբական Ազգային Մշակութային Ջարթօնքը,* հայկական պատմուածքներու ընտրանի մը եւ՝ Լեւոն Տէր Պետրոսեանի *Հայ-Ասորական Մշակութային Յարաբերութիւնները*ը:

[viii] Թարգմանած է *Քսան Հայկական Պատմուածք,* եւ Գէորգ Թեմիզեանի *Սերենապը*:

[ix] Թարգմանած է Ռաֆայէլ Իշխանեանի *Հայերի Ծագումը Եւ Անցեալի Պատմութիւնը, Լռութեան Ոճիրը* (խումբ մը հետազօտողներու ուսումնասիրութիւն-յօդուածները Հայոց Ցեղասպանութեան մասին) եւ Հայր Պարթեւ Կիւլիւմեանի *Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եւ Հայաստանի Նուիրումը Քրիստոնէութեան* գիրքերը:

[x] Թարգմանած է Լեւոն Մկրտչեանի Արցախի անցեալին ու ներկային նուիրուած ուսումնասիրութիւնը, 1915ի Հայոց Ջարդերուն մասին ուսումնասիրութիւններու ընտրանի մը, Քարոլայն Քոքսի եւ Ճոն Այփնըրի՝ Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքին նուիրուած հատորը, Ֆրանց Վերֆէլի *Մուսա Լեռան 40 Օրերը* եւ՝ Շաւարշ Թորիկեանի *Հայկական Հարցը Եւ Միջազգային Օրէնքը* հատորները:

[xi] Թարգմանած է Ալիշան Պայրամեանի *Ալեքսանդրէթի Սանճաքի Հարցը* հատորը:

Սահակեան[xii][17], Պետրոս Արք. Միրիաթեան, Արփի Փամպուքեան-Տոքթ. Սամիր Անթաքի, Մանուէլ Ճիճի, Յակոբ Միքայէլեան[xiii][18], Մարուան էլ Խաթիպ[xiv][19], Յարութ Վարդանեան[xv][20], Յակոբ Օքճեան[xvi][21], Սիլվի Աբէլեան[xvii][22]:

Թարգմանութիւնները յաճախ հովանաւորուած են կազմակերպութիւններու, գրատուն-հրատարակչատուներու կողմէ՝ Հալէպի Հայ Երիտասարդաց Միութիւն, Հայ Դատի Յանձնախումբ, Հալէպի ՀԲԸ Միութեան Մատենագիտական Յանձնախումբ, Սուրիոյ Մշակոյթի Նախարարութիւն, Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութիւն, Սուրիոյ Աշխարհագրական Միութիւն, Թէքէեան Մշակութային Միութիւն, Փիւնիկ Հիմնադրամ, Սալաթեան Հաստատութիւն, Հրանդ Տինք Հիմնարկ/Հայկազեան Համալսարանի Հրատարակչատուն եւն., եւ երբեմն ալ եղած են անհատական ձեռնարկներ: Կարգ մը թարգմանութիւններ հրատարակուած են Պէյրութ եւ այլուր:

Թարգմանուած գիրքերու մեծագոյն խմբաքանակը կը պատկանի հայերէն գեղարուեստական գրականութեան (աւելի քան 45 անուն), ապա կու գան Հայոց Ցեղասպանութեան առնչուող գիրքեր (շուրջ 17 անուն), հուսկ՝ պատմական, գիտական, սուրիական քաղաքական, ազգային-քաղաքական բնոյթի գիրքեր:

Հարկ է գնահատանքով յիշել նաեւ Բժ. Թորոս Թորանեանը, որ իր անհատական ջանքերով տասէ աւելի գիրքերու թարգմանութեան օժանդակած է՝ թարգմանել տալով, խմբագրելով, յառաջաբանը գրելով եւ նիւթականը ապահովելով անձնապէս, կամ մեկենասներ գտնելով:

ԱԿՆԱՌՈՒ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ

Թարգմանիչներուն շարքին իւրօրինակ երեւոյթ է **Նիզար Խալիլին** (ծն. 1928): Ան մահմետական արաբ մըն է, որ տասնամեակներէ իվեր կայք հաստատած է Քեսապ: Երիտասարդ տարիքին՝ 1940ականներուն, իբրեւ արաբերէն լեզուի ուսուցիչ կը պաշտօնավարէ հայկական վարժարանի մէջ: Եւ քանի որ ատենին հայկական վարժարաններուն մէջ բոլոր նիւթերը հայերէնով կը դասաւանդուէին, ինքնաբերաբար արաբերէնը կը դառնայ

[xii] Թարգմանած է Անդրանիկ Ծառուկեանի *Մանկութիւն Չունեցող Մարդիկը*, Թոթովենցի *Կեանքը Հին Հռովմէական Ճանապարհի Վրան*:

[xiii] Թարգմանած է Վարդան Այգեկցիի *Աղուէսագիրքը*:

[xiv] Հեղինակ է Սարուխանի նուիրուած ուսումնասիրութեան մը:

[xv] Թարգմանած է հայրենի ժամանակակից տասներեք հեղինակներու պատմուածքներու ընտրանի մը (Ժամանակակից Հայ Պատմուածք):

[xvi] Թարգմանած է Մուսա Փրենսի *Հայոց Ջարդերը՝ Մարդկութեան Դէմ Ոճիրներ* հատորը:

[xvii] Թարգմանած է Մխիթար Հերացիի *Ջերմանց Մխիթարութիւնը* (Նիզար Խալիլիի հետ):

կողմնակի նիւթ: Ան կը վկայէ թէ երբ կը տեսնէ որ աշակերտները չեն հետաքրքրուած արաբերէն սորվելով, կը մտածէ ինք հայերէն սորվիլ ու կը սկսի աշակերտներուն օգնութեամբ արաբերէն բառերուն հայերէնները գրի առնել ու սորվիլ: Եւ այսպէս շարունակելով, ան հայերէն լեզուին տիրապետած է, բաւարար հարուստ բառապաշար իւրացնելով՝ յաջողութեամբ կ'արտայայտուի ու սահուն կը խօսի հայերէն[xviii]:

Խալիլիի թարգմանական առաջին գործը կ'ըլլայ Յակոբ Պարոնեանի *Մեծապատիւ Մուրացկանները*՝ 1960ականներու սկիզբը, որուն հիման վրայ ՀԲԸՄ Լ. Նաճարեան-Գ. Կիւլպենկեան Վարժարանի երկրորդականի աշակերտները արաբերէն լեզուով բեմ կը բարձրացնեն երկը, արձանագրելով մեծ յաջողութիւն եւ հաստատելով աննախընթաց երեւոյթ մը: Խալիլիի յաջորդ թարգմանութիւնները կ'ըլլան Յովհաննէս Թումանեանի շարք մը հեքիաթները՝ վերջինիս ծննդեան 100ամեակին առթիւ:

Խալիլի տակաւ աւելի բարդ գործեր կը թարգմանէ, մինչեւ իսկ՝ Գրիգոր Նարեկացի եւ Մովսէս Խորենացի: Բնականաբար, անոր թարգմանութիւնները անթերի չեն եղած եւ քննադատական յօդուածներ գրուած են այդ առնչութեամբ՝ ատենին: Սակայն աներկբայօրէն ինք յարգանքի արժանի երեւոյթ մը եղաւ այս անդաստանին մէջ:

Խալիլի թարգմանած է[xix] Յովհաննէս Շիրազի *Սիամանթօ եւ Խջեզարէ*ն, Յակոբ Պարոնեանի, *Մեծապատիւ Մուրացկանները*ը, Լ. Յովհաննիսեանի *Հայ Բժշկութեան Պատմութիւն*ը, Յովհաննէս Թումանեանի *Կաթիլ Մը Մեղր*ը, *Անուշ*ը, *Ոսկու Կարասը*, *Գառնիկ Ախպէր*ը, *Սասունցի Դաւիթ*ը, *Քաջ Նազար*ը, *Գիգոր*ը, Արծրուն Կծոյեանի, *Մխիթար Հերացի*ն, Ռոպէր Ճեպէճեանի *Ասպտուր Ալթունեան*ը, Աւետիք Իսահակեանի բանաստեղծութիւններու եւ արձակի փունջ մը, ինչպէս նաեւ Գրիգոր Զօհրապի արձակէն փունջ մը, Զաւէն Տօլապճեանի *Լուռ Ղօղանջներ*ը, Լիւսի Սիւլահեանի *Սէր Եւ Սէր*ը, *Շփոթած Սրտեր*ը եւ *Կարմիր Հեծանիւ*ը, Վարդգէս Պետրոսեանի *Վերջին Ուսուցիչը*, Սերօ Խանզադեանի *Երեք Տարի 291 Օր*ը, Գէորգ Իբճեանի *Կանաչ Արծիւը*, Զ. Այնթէպլեանի *Ձայն Մը Քեսապի Լեռներէն*ը, Գրիգոր Նարեկացիի *Մատեան Ողբերգութեան*ը, Հայկազն Ղազարեանի *Պատմական Փաստաթուղթեր 1915ի Հայոց Ջարդերուն Մասին*ը, Գրիգոր Զօհրապի *Լուռ Ցաւեր*ը, Մովսէս Խորենացիի *Պատմութիւն Հայոց*ը, Գէորգ Աբէլեանի *Մեծմայրս, Աննա Հարսը*[23]:

Մեթր **Նազար Նազարեան** (1932-1991), արաբական վարժարան յաճախած ըլլալով, իւրացուցած է արաբերէնը: 1957-74՝ վարած է Հալէպի

[xviii] Գասպար Տէրտէրեան, «Փրոֆ. Նիզար Խալիլին՝ Իր Կենսագրական Տողերու Հայելին», *Ծաղիկ*, 16 Յուլիս 2009:

[xix] Տե՛ս՝ http://www.ektab.com/%D9%86%D8%B2%D8%A7%D8%B1-%D8%AE%D9%84%D9%8A%D9%84%D9%8A/ :

Ազգային Մատենադարանին փոխ-տնօրէնի պաշտօնը, միեւնոյն ատեն արաբերէն նիւթեր դասաւանդած ՀԲԸՄ Նաճարեան-Կիլպենկեան Վարժարանին մէջ: Հայ ըլլալուն՝ հայերէն բնագիրը լաւապէս հասկնալով, գրեթէ անթերի եղած են իր թարգմանութիւնները:

Նազարեան թարգմանած է[xx][24] Դանիէլ Վարուժանի *Հացին Երգը*, Իսահակեանի *Աբու Լալա Մահարին*, Գէորգ Էմինի *Քսաներորդ Դարը*, Վահան Թէքէեանէն բանաստեղծութեանց փունջ մը, Յովհաննէս Շիրազի *Յուշարձան Մայրիկիս*ը, Վարդգէս Պետրոսեանի *Ծերուկը Որ Մոռացել Էր Մեռնել*ը եւ՝ *Ամէնափխուր Մարդը*, Չարենցի *Ամբոխները Խելագարուած*ը, *Հայկական Պատմուածքներ*ը, Խանզադեանի *Մատեան Եղելութեանց*ը[25]:

Ակնաբուժ **Ալեքսան Քեշիշեան** (ծն. 1943) կարեւոր ներդրում ունեցաւ թարգմանական աշխատանքին մէջ[xxi]: Ան քաջատեղեակ էր արաբերէն լեզուի նրբութիւններուն: Հետամուտ ըլլալով Հայ Դատը ծանօթացնելու սուրիացի ընթերցող հասարակութեան, պետական եւ ակադեմական շրջանակներու՝ Քեշիշեան իր թարգմանական աշխատանքին առանցքը դարձուց Հայկական Հարցը: Իր թարգմանական բեղուն գործունէութեան համար, արժանացած է Սուրիական Պետական Շնորհակալագիրի (2006), Հայաստանի Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի «Պատուոգիր»ին (2011) եւ «Մովսէս Խորենացի» Շքանշանին՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ (2012):

Քեշիշեան ցարդ թարգմանած է աւելի քան 50 գիրք, որոնցմէ շուրջ 35ը հրատարակուած են: Ան թարգմանած է Հենրի Մորկընթոյի *Ազգի մը Սպանութիւնը*, Աւետիս Փափազեանի *Արաբական Կախաղանները Եւ Հայկական Ջարդերը, Թուրք Բժիշկներու Դերը Հայկական Կոտորածներուն Ընթացքին Ա. Աշխարհամարտին*, *Աւստրօ-Գերմանական Փաստաթուղթերն Ու Հայկական Ջարդերը, Թրքական Եւ Արեւմտեան Աղբիւրները Օսմանեան Կայսրութեան Եւ Հայոց Ջարդերուն Մասին*, եւ՝ *Հայոց Ցեղասպանութեան Պատմութիւն*, Խաչատուր Մուշեղեանի եւ Պերճ Սապպաղեանի *Արաբական Դրամներու Հատումը Հայաստանի Մէջ Եւ*

[xx] 1994ին, Դամասկոսի մէջ լոյս կը տեսնէ Նազարեանի մահուան առթիւ «Սիրով Բացիկներ՝ Երեւանէն Հալէպ» արաբերէն գիրքը, Մահմուտ Ալի ԱլՍաիտի եւ Ֆարիտ Նազարեանի խմբագրութեամբ:

[xxi] Ծնած է Հալէպ հայ հօրմէ եւ արաբ մօրմէ, նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Կրթասիրաց, Aleppo College, Րաէտ ԱլԱրապի վարժարաններէն ներս: 1964-71՝ ուսանած է Երեւանի Պետական Բժշկական Ինստիտուտը: 1971-75՝ մասնագիտացած է վիրաբուժութեան մէջ Ճեպէճեան Ակնաբուժարանէն ներս: Անդամ է Սուրիոյ Արաբ Գրողներու Միութեան (2002), Սուրիոյ Հնագիտութեան Ընկերութեան (1974, վարչական՝ 2006ին): 2007էն գլխաւոր խմբագիրն է Սուրիոյ Հնագիտական *Ալ Ատիյաթ* տարեգիրքին: Ան անձամբ հսկեց իր թարգմանած գիրքերուն տպագրութեան, ծրարեց, հասցէագրեց, մինչեւ իսկ նամակատուն յանձնելով Սուրիոյ ընտրանիին հասցուց զանոնք:

Անոնց Շրջանառութիւնը Արաբական Կայսրութեան Մէջ Եւ Դուրսը (հասկաքաղ), Շահէ Տէր Գէորգեանի *Վաղ Քրիստոնէական Շրջանի Ճարտարապետական Յարաբերութիւնները Սուրիոյ Եւ Հայաստանի Միջեւ*, Արամ Տէր Ղեւոնդեանի *Արաբական Էմիրութիւնները Բագրատունեաց Հայաստանում*, եւ՝ *Հետազօտութիւններ Հայ Արաբական Մշակութային, Քաղաքական Եւ Ռազմական Յարաբերութիւնների Մասին (4-14րդ Դարեր)*, Մանուէլ Ճինպաշեանի *Հայ Եկեղեցւոյ Յարաբերութիւնները Հայ Պետականութեան Հետ՝ Արաբական Տիրապետութեան Շրջանին,* Զարեւանդի *Միացեալ Եւ Անկախ Թուրանիա*, Թանէր Աքչամի *Թուրք Ազգային Ինքնութիւնն Ու Հայկական Հարցը,* Արտաւազդ Արք. Սիւրմէեանի *Պատմութիւն Հալէպի*, Մաղաքիա Արք. Օրմանեանի *Հայոց Եկեղեցին*, Արշակ Փոլատեանի *Քիւրտերը Աբասեան Խալիֆայութեան Շրջանին (10-11րդ Դարեր)*, Նիքոլայ Յովհաննիսեանի *Արաբական Երկիրներու Պատմութիւն* (4 հատոր), Գէորգ Աբէլեանի *Աղբարիկ Ափիկ Մը Ջուր...*, Վահան Տէր Ղեւոնդեանի *Կիլիկեան Հայաստանը Եւ Մերձաւոր Արեւելքի Արաբական Երկիրները 1145-1226*, Հրանդ Տինքի *Երկու Մօտիկ Ազգեր, Երկու Հեռաւոր Դրացիներ*, Ղեւոնդ Պատմիչի *Պատմութիւն* գիրքերը[26]:

Տոքթ. Քեշիշեան հեղինակն է նաեւ 1907-48ին Հալէպի մէջ լոյս տեսած *Ալ Թաքափտոմ* թերթին մէջ՝ 1896-1923 շրջանի Հայոց Ցեղասպանութեան վերաբերող նիւթերու, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի հայօճախներու կենսագործունէութեան առնչուող յօդուածներու շուրջ 400 էջանի արաբերէն ժողովածուներուն[27]: 2001ին հայերէն հրատարակած է *Ընդարձակ Ուղեցոյց Սուրիական Հնութիւններու* հատորը[xxii]:

Դամասկահայ **Նորա Արիսեան** (ծն. 1967), վերջին մէկուկէս տասնամեակին, մտաւ թարգմանական եւ հեղինակային գրականութեան ասպարէզ ու ֆրանսերէնի եւ անգլերէնի կողքին՝ թէ՛ արաբերէն եւ թէ՛ հայերէն լեզուներու տիրապետութեան պատճառով, իրարայաջորդ թարգմանութիւններ եւ հրատարակութիւններ կատարեց, արժանանալով հայ եւ արաբական շրջանակներու (ներառեալ ակադեմական եւ պետական) անխառն գնահատանքին:

Արիսեան թարգմանած է Յակոբ Պարոնեանի *Քաղաքավարութեան Վնասները*, Յարութ Սասունեանի *The World Speaks Out*ը, Վերապրողներու Վկայութիւններ, *Ընդդէմ Ատրպէյճանի Հակահայ Քաղաքականութեան*ը, Ալֆրէտ Տը Զայասի *The Genocide Against the Armenians 1915-1923 And the Relevance of the 1948 Genocide Convention*ը, Գէորգ Աբէլեանի *Յկեանս Նահատակութիւն*ը, Շահէն Աւագեանի *Լեռնային Ղարաբաղ. Իրաւական Ասպեկտները* (անգլերէնէ), Յարութ Սասունեանի *Հայաստան-Թուրքիա Արձանագրութիւնները*

[xxii] Հրատարակած է նաեւ բժշկագիտական ուսումնասիրութիւններ:

*Ճշմարտութի՞ն, Թէ՞ Խաբէութիւն*ը, Թաթուլ Յակոբեանի *Ղարաբաղեան Օրագիր-Կանաչ Ու Սեւը*, Մկրտիչ Պուլտուքեանի *Հայ Սեղանաւորները Օսմանեան Կայսրութեան Մէջը*[28]:

Արիսեան ունի նաեւ արաբերէն լեզուով հեղինակային երկեր[29]: Նաեւ՝ հայերէն երկ մը՝ *Տէր Ձօր, Նահատակաց Քաղաք* (Հալէպ, 2011):

Արիսեանի ներդրումը թէ՛ հայ գրականութեան եւ թէ՛ թարգմանական գրականութեան՝ մեծ ու շնորհակալ աշխատանք է: Անոր կատարածը Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ Հայ Դատին համար երախտաշատ գործ է:

Բանասէր եւ թարգմանիչ **Միհրան Մինասեան** (ծն. 1959), թարգմանած է առաւելաբար չափածոյ երկեր: Ան թարգմանած է Պարոյր Սեւակի բանաստեղծութիւններէն հատընտիր մը, *Նռան Հատիկը - Հայկական 100 Սիրային Բանաստեղծութիւն* (Նահապետ Քուչակի վերագրուող միջնադարեան 100 հայրէններ), *Դիմակներ Եւ Հայելիներ*[xxiii], *Հալէպցիներու Ապստամբութիւնը Օսմանցի Կուսակալ Խորշիտ Փաշայի Դէմ (1819-1820). Աբրահամ Արք. Քիւրէղեանի Օրագրութիւնը* (ընդարձակ յառաջաբան, ուսումնասիրութիւն, ծանօթագրութիւններ եւ յաւելուածական բաժին: Հեղինակակից՝ Պետրոս Արք. Միրիաթեան): Մինասեան հայերէնի թարգմանած է սուրիացի ժամանակակից վիպագիր-պատմուածագիր Իպրահիմ Ալխալիլի Հայկական Ցեղասպանութեան թեմայով գործերու ժողովածուն՝ *Անապատին Կակաչները* վերնագրով (Հրատ.՝ Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի, Անթիլիաս, 2002)[30]:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Այս բոլորէն ետք, պէտք է ընդունիլ, որ հայերը Սուրիոյ մէջ թերացած են իրենց ապրած երկրին մշակոյթն ու գրականութիւնը լաւապէս ճանչնալու: Արաբերէնէ հայերէն թարգմանուած երկերը փոքրաթիւ են՝ արաբական ծովածաւալ գրականութեան դիմաց: Նոյնիսկ Հայաստանի մէջ, ուր շատ աւելի հնարաւորութիւններ կան, արաբական գրականութենէ թարգմանուածը փոքրաթիւ է: Այո, թերացած ենք այս ոլորտին մէջ, ինչպէս թերացած ենք մեր գրականութիւնը տեղացիներուն ծանօթացնելու: Սկզբնական շրջանին - ինչպէս վերը յիշեցինք - Ցեղասպանութեան արհաւիրքէն վերապրողներուն հոգեկան վիճակին վրայ ազդեցութիւնն էր գերիշխողը: Անոնք անցեալի վախի ու անապահովութեան մթնոլորտի յաճախանքը ապրելով, շրջապատէն հեռու

[xxiii] Հատորը կ'ընդգրկէ ընտիր բանաստեղծութիւններ Համօ Սահեանէն, Զահրատէն, Զարեհ Խրախունիէն, Յովհաննէս Գրիգորեանէն եւ Իգնա Սարը Ասլանէն: Ան 2009ին արժանացած է Սուրիոյ Մշակոյթի Նախարարութեան «Սամի Ալտրուպի»ի անուան թարգմանչական առաջին մրցանակին, նաեւ՝ նախարարութեան վահանակին եւ նիւթական պարգեւին: Ան արժանացաւ նաեւ Հայաստանի Գրողներու Միութեան «Կանթեղ» մրցանակին:

մնացին: Յետոյ, երբ ոտքի կանգնեցանք, թերեւս մենք զմեզ 'գերադաս' համարելով կամ 'հայկական մնալու' մտահոգութեամբ չհաղորդուեցանք տեղական մշակոյթին եւ գրականութեան. բարդոյթը եւ մտահոգութիւնը մեզի՛ վնասեցին: Թէ՛ անծանօթ մնացինք արաբական հարուստ գրականութեան, թէ՛ ալ արաբին աչքին նախկին մեր բարձրութեան վրայ չմնացինք, մանաւանդ որ արաբը - պետականութիւն ունենալով - շատ արագաքայլ յառաջդիմեց ու շուկան ողողեց արաբական գրական բազմաբնոյթ գործերով, թերթ ու պարբերականներով եւ անշուշտ՝ հեռատեսիլային կայաններով եւ անոնց ճոխ ծրագիրերով:

Այսօր եւս, շատ քիչ է թիւը հայերու, որոնք արաբական գրականութիւն կը կարդան, կամ արաբ մշակոյթի այլեւայլ դրսեւորումներու կ'առնչուին: Պէտք է ընդունինք որ ասիկա թերացում մըն է մեր հաշուոյն: Սուրիոյ Արաբ Գրողներու Միութեան սուրիահայ անդամներուն թիւը մէկ ձեռքի մատներէն պակաս է: Նոյնն է պարագան Սուրիոյ Արաբ Նկարիչներու Միութեան: Տարբեր չէ պատկերը քաղաքական, զինուորական թէ այլ ասպարէզներու պարագային: Պէտք եղած ձեւով չմերուեցանք տեղացիներուն եւ այդ՝ իվնաս մեզի:

Այս բոլորէն ետք, կրնա՞նք ըսել, թէ յաջողած ենք մենք մեր նպատակին մէջ, արաբը սկսա՞ւ աւելի լաւ ճանչնալ մեզ եւ մեր դատը: Այո՛, սակայն՝ ո՛չ բաւարար չափով: Մենք հարկ է, որ այս կարեւոր ասպարէզը դարձնենք արհեստավարժ. մարդիկ պատրաստենք այս գործին ներգրաւուելու, մարդիկ որ տիրապետած ըլլան երկու լեզուներուն ալ:

Եթէ մեր գոյատեւումը պիտի շարունակուի այս երկրին ու ընդհանրապէս Միջին Արեւելքի մէջ, պէտք է անդրադառնանք անցեալի մեր սխալներուն եւ աւելի նպատակամէտ գործենք:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Սուրիոյ պատերազմի չորս տարիները, յստակօրէն խոչընդոտեցին սուրիահայ թարգմանական աշխատանքին թափը, մասնաւորաբար տպագրական աշխատանքը՝ անապահովութեան, ելեկտրական հոսանքի բացակայութեան եւ որոշ թարգմանիչներու երկրէն հեռացած ըլլալուն պատճառով:

Սուրիոյ ցարդ քառամեայ պատերազմը շատ բան խախտեց. նիւթական եւ բարոյական հսկայ հարուած հասցուց Սուրիոյ հայօճախին, քօղարկուած հակաքրիստոնեայ եւ հակահայ կիրքեր հրահրեց: Աւերակոյտի վերածուեցան հայկական թաղամասեր, հայկական հաստատութիւններ, զոհուեցան հայորդիներ: Ասոր զուգահեռ, Ցեղասպանութեան դարադարձի նշումը եւ պատերազմին պատճառով Սուրիական Պետութեան հակաթուրք կեցուածքը, նպաստեցին որ մտաւորական տարրը քիչ մը աւելի մօտենայ հայերուն եւ Հայկական Հարցին:

Հիմա սուրիահայութեան ապագան բաղձալի հեռանկարներ չի պարզեր տակաւին: Մաղթենք, որ նուազագոյն վնասով դուրս գանք այս գեհէնէն ու մեր պատմութեան սեւ էջերուն նորեր չաւելնան:

Սուրիահայութեան պետականամէտ կեցուածքը պատերազմի ընթացքին, առաւել՝ Թուրքիոյ դատապարտելի հակասուրիական կեցուածքն ու թշնամական վերաբերմունքը, խթան հանդիսանալու են, որ հայերս օգտագործելով այս առիթը, աւելի թափ տանք թարգմանական աշխատանքին, յատկապէս Հայ Դատին նպաստող գործեր թարգմանելով, թարգմանական աշխատանքը սիրողականէն, փոխադրելով մասնագիտական-արհեստավարժական մակարդակ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] اوديك اسحاقيان, *عروج ابى العلاء*, (سوريا, 1952, 1970):

[2] عثمان الترك, *صفحات من تاريخ الامة الارمنية (الارمن في ماضيهم وحاضرهم منذ اقدم عصور التاريخ حتى منتصف القرن العشرين)* (حلب, 1960)\ اديب السيد, *ارمينية في التاريخ العربي* (حلب, 1972):

[3] فائز الغصين, *المذابح في ارمينيا*, (حلب, 1991):

[4] مولان زاده رفعت, *الوجه الخفي للانقلاب التركي* (حلب, 1992):

[5] فريان ستاماتوف, *بالقارب الى آرارات* (دمشق, 1988)\جاك دير الكسانيان, *السماء كانت سوداء فوق الفرات (من مآسي الارمن)* (سوريا 1995)\والتر تشارلز باندازيان, *ازمة الاسكندرونة* (دمشق, 1998)\ وارطان كريكوريان, الالحاق القسري للأقليات القومية المسلمة في اذربيجان (اللاذقية, 2003)\ اسدغيك جمكرتن, ارمينيا جذوري (حلب, 2008)

[6] هنري فيرنوي, *مايريك اميمتي* (سوريا, 1992)\ مارغريت ريمشنايدر, اورارتو: مملكة ارمنية قديمة في احضان ارارات (حلب, 1993):

[7] الكسندر خاتشادوريان, *ديوان النقوش العربية في ارمينية (دراسة تاريخية لغوية باليوغرافية)* (دمشق 1990):

[8] مايكل ارلين, *العبور الى آرارات* (اللاذقية, 1981):

[9] *رحيل اللقالق...اغنيات حب الى ارارات*, (حلب, 1993)\ *جمال باشا السفاح (دراسة في الشخصية والتاريخ)* (اللاذقية, 1993)\ *نضال العرب والارمن ضد الاستعمار العثماني*, (اللاذقية, 1995)\ *مجازر الارمن وموقف الرأي العام العربي منه* (اللاذقية, 1992)\ *صورة التركي في الشعر العربي الحديث*, (اللاذقية, 1995):

[10] آفو كاترجيان, *الرياضيون الأرمن الشهداء والمتوفون فترة الإبادة* الأرمنية (بمناسبة الذكرى المئوية للإبادة الأرمنية) (حلب، 2015):

[11] *نبذة تاريخية موجزة عن الجاليات الارمنية في البلاد العربية (سورية, لبنان, العراق, فلسطين, الاردن,* مصر...) (اللاذقية, 1993)\ كيفورك نوريكيان, *نبذة تاريخية عن الاتحاد الثوري الارمني (الطاشناقسوتيون) مائة عام من النضال في سبيل الامة والوطن* (سوريا, 1995)\ *كيغارت. مهدى الى تعايش الشعبين العربي والارمني في سورية* (النشرة السنوية – الكتاب السبع, حلب, مطبعة الاصفهاني, 2002) *نشرة الارمن الكاثوليك – حلب* – (السنة 55-56, الاعداد 1-4, 2009-2010, دمشق 2009):

[12] بارور سيفاك, *مختارات شعرية*, (حلب,1994)\ يغيشيه تشارينتس, *اغنّي زهرة الحرية. مختارات شعرية* (انطلياس, 1997)\ليون دير بدروسيان, *العلاقات الثقافية الارمنية-السريانية* (حلب, 1997)\ فاهان توتوفنس, *قصص مختارة ارمنية* (دمشق, 1997)\ *الحياة على الدرب الروماني القديم* (حلب 1998)\ يغيا نجاريان, *النهضة القومية-الثقافية العربية* (دمشق, 2005)\

[13] *20 قصة ارمنية* (حلب, 1992)\ كيفورك تميزيان, *سيريناد* (حلب, 1995):

[14] رافائيل اشخانيان, *نشأة الارمن وتاريخهم القديم* (انطلياس, 1986)\ *جريمة الصمت (جريمة ابادة الجنس الارمني)*, تأليف نخبة من الباحثين والعلماء (حلب, 1995)\ الاب بارثيف كولوميان, *القديس كريكور المنور وهداية ارمينيا الى المسيحية* (حلب, 2000):

[15] ليفون مكردجيان, *اقليم ارتساخ او غاراباغ. الماضي والحاضر* (حلب, 1992)\ *مختارات من بعض الكتابات التاريخية حول مجازر الارمن عام 1915* (حلب, 1995)\ كارولين كوكس-جون ايبنر, *حرب تقرير المصير في كاراباخ الارمنية* (اللاذقية, 1995)\ فرانس ويرفل, *الايام الاربعون لجبل موسى* (حلب, 1995)\ شاورش طوريكيان, *القضية الارمنية والقانون الدولي* (اللاذقية, 1992 و 2000):

[16] اليشان بايراميان, *قضية لواء الاسكندرونة والدبلومسية الدولية (1936-1939)* (دمشق 1993):

[17] انترانيك زاروكيان, *اناس بلا طفولة* (بيروت 1987)\ ارشاك بولاديان, *دراسات في تاريخ وثقافة الشرق* (ابو ظبي, 2001)\ *المدخل الى تعلم اللغة الارمنية* (حلب, 2003):

[18] وارطان ايكيكتسي, *كتاب الثعلب (قصص وامثال شعبية ارمنية من القرن الثاني عشر)* (حلب, 1989):

[19] *صاروخان الكاريكاتير... الانتماء* (حلب, 1996):

[20] *قصص معاصرة من بلاد ارمينيا* (يريفان, 2013):

[21] موسى برنس, *مجازر الارمن. جرائم ضد الانسانية* (حلب, 1996):

[22] مخيتار هيراتسي, *معالجة الميات باستخدام الطب الشعبي والاعشاب* (حلب, 2011):

[23] اوهانس شيراز, *حكاية حب سيامانتو و خجه زاره* (بيروت ,1961)\ هاكوب بارونيان, *المتسولون الشرفاء* (حلب ,1964)\ ل.آ. هوانيسيان, *تاريخ الطب الارمني منذ العصور القديمة حتى القرن التاسع عشر والروابط بين مدرستي الطب العربية والارمنية* (حلب ,1968)\ هوانيس تومانيان, *قطرة عسل* (حلب ,1968)\ هوانيس تومانيان, *آنوش* (حلب ,1969)\ هوانيس تومانيان, *الاخ الجدي* (حلب ,1969)\ هوانيس تومانيان, *دافيد الصاصوني* (حلب ,1969)\ هوانيس تومانيان, *ناظار الشجاع* (حلب ,1969)\ اردزرون كدزويان, *مخيتار هيراتسي. الطبيب الارمني من القرن الثاني عشر* (حلب ,1972, 1989)\ روبير جبه جيان, *حياة طبيب حلب الشهير اسادور ارام التونيان واعماله* (حلب ,1972)\ *باقة من شعر ونثر اوديك ايساهاكيان* (حلب,1975)\ كريكور زوهراب, قصص مختارة من الحياة: آلام مكبوتة, اصوات الضمير (حلب, 1975)\ هوانيس تومانيان, *كيكور* (حلب ,1976)\ د. زاوين دولابجيان, *رنّات صامتة* (حلب ,1977)\ كريكور زوهراب, *آلام مكبوتة (قصص)* (حلب ,1995)\ فارتكيس بيدروسيان, *المعلم الأخير"(مسرحية)* (دمشق ,1985)\ لوسي سلاحيان, *حبٌّ وحب"(قصص)* (دمشق ,1985)\ لوسي سلاحيان, *قلوب حائرة (مجموعة قصص)* (دمشق ,1987)\ لوسي سلاحيان, *الدراجة الحمراء* (دمشق ,1988)\ سيرو خانزاتيان, *ثلاث سنوات (يوميات ضابط في الجيش السوفييتي)* (دمشق ,1991)\ كيورك إيبجيان، *الصقر الأخضر (قصص)* (بيروت ,1993)\ زوهراب عنتبليان, *صوتٌ من جبال كسب (قصص)* (دمشق ,1993)\ كريكور ناريكاتسي, كتاب المراثي (حلب ,1994)\ هايكازن غازاريان, *وثائق تاريخية عن المجازر الارمنية عام 1915* (حلب ,1995)\ موسيس خوريناتسي, *تاريخ الأرمن. من البداية حتى القرن الخامس الميلادي* (دمشق ,1999)\ كيفورك جورج آبيليان, *جثتي الكنة آنّا المغامرة* (عنجر ,2012).

[24] نظار نظاريان, *بطاقات عشق من يريفان الى حلب* (دمشق, 1994):

[25] طانييل واروجان, *انشودة الخبز* (حلب ,1970)\ كيفورك أمين, *القرن العشرين* (حلب ,1979)\ واهان تكيان, *صلاة امام عتبة الغد* (حلب ,1979)\ هوانيس شيراز, *نصب لذكرى امي و سفر التكوين* (حلب ,1981)\ يغيشه تشارنتس, *الجماهير المجنونة* (حلب, 1983)\ وارتكس بدروسيان, *العجوز الذي نسي ان يموت* (دمشق ,1985)\ سيرو خانزاديان, *سفر الوقائع* (دمشق, 1990)\ قصص ارمنية في الادب الارمني الغربي والمهجر حتى عام 1945 (دمشق, 1990)\ اويديك اسحاقيان, *ملحمة المعري* (حلب ,1976, اللاذقية 1994)\

[26] *قتل امة. مذكرات هنري مورغنطاو, السفير الاميركي في تركيا ما بين (1913-1916) عن المذابح الارمنية في تركيا* (حلب\دمشق 1990, 1991)\ اواديس بابازيان, *المشانق العربية والمجازر الارمنية امام المحاكم الاستثنائية العسكرية التركية بين عامي 1919-1921* (حلب, 1992)\ اليشان بايرامیان, *كفاح الارمن من اجل عروبة لواء الاسكندرونة* (حلب, 1992)\ فاهاكن دادريان, *دور الاطباء الاتراك في المذابح الارمنية اثناء الحرب العالمية الاولى* (اللاذقية, 1995)\ تانير اكجام, *الهوية القومية التركية والقضية الارمنية* (حلب, 1995)\ *ضرب النقود العربية في ارمينية وتداولها داخل وخارج الامبراطورية العربية* (حلب, 1997)\ فاهاكن دادريان, المستندات الالمانية والنمساوية الرسمية حول المجازر الارمنية (حلب, 1997)\ فاهاكن دادريان, المصادر التركية والغربية حول الدولة العثمانية والمجازر الارمنية (اللاذقية, 2001)\ زاريوانت, طورانية الموحدة المستقلة (حلب, 2001)\ شاهي دير كيفوركيان, *علاقات هندسة العمارة المسيحية المبكرة بين ارمينيا وسوريا* (حلب, 2002)\ آرام دير غيفونتيان, *الامارات العربية في ارمينيا البقرادونية* (حلب, 2003)\ مانوئيل جينباشيان, *علاقات الكنيسة بالدولة الارمنية في حقبة الهيمنة العربية (من الاجتياح العربي الاول وحتى الفترة العباسية المبكرة)* (حلب, 2005)\ تاريخ حلب (حلب, 2006)\ ارام تير غيفونيان, *دراسات استشراقية حول العلاقات الارمنية-العربية السياسية, العسكرية, التجارية, الثقافية بين القرنين 4-14 م.* (حلب, 2007)\ \نيكولاي هوفهانيسيان, *تاريخ الدول العربية* (حلب 2011)\كيفورك جورج ابيليان, اخي, جرعة ماء...(عنجر, 2011)\ هرانت دينك, *امتان قربيتان... جاران بعيدان (بيروت, 2012)*| ماغاكيا اورمانيان, *كنيسة الارمن* (حلب, 2009)\ ارشاك بولاديات, الاكراد في حقبة الخلافة العباسية في القرنين 10-11م. (دمشق, 2009)\

[27] *صفحات وثائقية من جريدة (التقدم) الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدولة العثمانية والبلاد الشامية* (حلب, 1996)\ *سهامات المواطنين الارمن في الحياة العامة للبلاد السورية منذ اقدم العصور وحتى يومنا* (حلب, 2007):

[28] هاروت صاصونيان, *الابادة الارمنية اعتراف العالم علناً 1915-2005* (بيروت, 2005)\ *شهادات ناجين*, تأليف سيتا كيليجيان, (بيروت, 2005)\ جورج (كيفورك) ابيليان, *شهادة مدى الحياة من آرام الى ...آرام* (عنجر, 2006)\ شاهين افاكيان, *كاراباخ, وجهة نظر قانونية* (بيروت, 2006)\ طاطول هاكوبيان, *يوميات كاراباخ. اخضر وأسود. لا حرب, لا سلم* (لبنان, 2012)/الصيارفة الارمن في الامبراطورية العثمانية (بيروت, 2015):

[29] *غوائل الأرمن في الفكر السوري (موقف المفكرين السوريين من الابادة الارمنية)* (بيروت، 2002)\ *أصداء الإبادة الأرمنية في الصحافة السورية 1877-1930* (بيروت، 2005)\ *النواب الأرمن في المجالس النيابية السورية 1928-2011* (دمشق، 2011)\ *100 عام على الإبادة الأرمنية (100 شهادة عربية)* (بيروت، 2015)\ *كوميداس والموسيقى الأرمنية*، مجموعة كتاب (دمشق، 2016):

[30] باروير سيفاك, *ليحل النور... وقصائد أخرى* (دمشق, 1995)\ *حبة الرمان – مائة قصيدة حب ارمنية* (دمشق, 1999)\ *ثورة الحلبيين على الوالي خورشيد باشا العثماني (1819-1820). يوميات المطران ابراهام كوبيليان* (حلب, 2008)/ *اقنعة ومرايا. مختارات من الشعر الارمني الحديث* (دمشق, 2010):

Translations into Arabic: The Syrian-Armenian Effort

(Summary)

Hagop Mikayelian
hagomik@yahoo.com

Armenian-Arab relations can be traced back to pre-Chrsitian times and have been uninterrupted ever since. These relations have involved the diverse spheres of politics, medicine, literature, sciences and trade.

Arab domination of Armenia had a very strong impact on the Armenian language, yet culturally the influence was mutual.

As of the early 20th century, right after the Genocide, a new set of relations, which are significant particularly in culture and literary translations, was established between the two nations. These new relations promoted mutual cultural recognition. Indeed between 1970 and 2000 translation from Armenian into Arabic and vice versa flourished in the fields of both literature and history.

The paper highlights the result of this effort and its impact on bridging gaps between these two nations and promoting knowledge of mutual national issues and concerns.

The significant achievements of this translation, however, are not considered enough. Indeed, this translation effort has not gone much beyond limited professionalism, has not been institutionalized and has remained the result of individual, self-motivated efforts.

ԳԱՐԵԳԻՆ ՔԵՍԱՊՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Մեր լեզուն ճանապարհ է դէպի յաւերժութիւն, գրաւական՝ մեր ինքնութեան, նոյեան տապան՝ մեր փրկութեան, լուսասփղ՝ մեր լինելութեան:

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հայկանուշ Յ. Մեսրոպեան
haykanushm@mail.ru

Գարեգին Ա. ամենայն հայոց կաթողիկոսի (1995-99) տպագիր քարոզները, մեկնութիւններն ու աստուածաբանական ուսումնասիրութիւնները հայ հրապարակախօսական արձակի լաւագոյն դրսեւորումներից են: Այդ երկերը հայ եկեղեցական-աստուածաբանական նորագոյն գրականութեան արժէքաւոր մաս են կազմում, աչքի են ընկնում կրօնափիլիսոփայական խոր ընդհանրացումներով, բովանդակալից եզրայանգումներով, պատկերաւոր լեզուամտածողութեամբ, գեղարուեստական խօսքին բնորոշ արտայայտչական զանազան միջոցներով, ինչպէս նաեւ բառային նորակազմութիւններով, յատկապէս բառաբարդումներով:

Հայերէնի բառապաշարի հարստացման եւ առանձին ուսումնասիրութիւն կատարելու համար յատկապէս ուշագրաւ են Վեհափառի կողմից ստեղծուած հեղինակային նորակազմութիւնները, որոնք, ըստ մեր բառարանի, 1700 են[1]: Մեր ուսումնասիրութեան նիւթերը քաղել ենք Անթիլիասում եւ Ս. Էջմիածնում տպագրուած Գարեգին Ա.ի շուրջ 20 գրքերից, ԱՄՆում հրատարակուած Գարեգին Ա. մատենաշարից (հեղինակ՝ Վազգէն Ղուկասեան)[2], ինչպէս նաեւ *Հասկ*[3] եւ *Էջմիածին*[4] ամսագրերում զետեղուած քարոզներից ու յօդուածներից:

Վեհափառի երկերի հարուստ բառապաշարը նպաստում է հայերէնի լեզուագանձի հարստացմանը: Ոչ միայն բառապաշարը, այլեւ առհասարակ հեղինակային ոճը շատ ուսանելի է: Ուստի դրանք մեր ժողովրդին հասու դարձնելու նպատակով կազմել ենք Գարեգին Ա. երջանկայիշատակ հայրապետի ասոյթների եւ պատգամների ժողովածու[5] եւ նորաբանութիւնների բառարան[6]:

Բառային նորակազմութիւնները, նաեւ բառերի իմաստային նոր կիրառութիւնները ստեղծուած են իմաստային նրբերանգների արտայայտմամբ եւ հայերէնի բառակազմական միջոցներով ու եղանակներով: Նորակազմութիւնների մի զգալի մասի լեզուական

ատաղձը Աստուածաշունչ մատեանն է, որով էլ պայմանաւորուած է դրանց գերակշռող մասի այս կամ այն բաղադրիչի աստուածախօսական ոլորտին պատկանելը:

Գարեգին Ա.ի բառակերտումները բնական են եւ պայմանաւորուած խօսքային իրադրութեամբ, որի հետեւանքով էլ իւրաքանչիւր բառ տուեալ իմաստային դաշտում գրեթէ անփոխարինելի է: Վեհափառի լեզուամտածողութիւնը բնականաբար պայմանաւորուած է հայրենի Անտիոքի բնաշխարհով, Քեսապի բարբառին յատուկ դարձուածքներով ու յարադիր կազմութիւններով, որոնցով հարուստ են *Հող, Մարդ Եւ Գիր*[7], *Հրաշք Տաթեւի*[8], *Հայ Մարդը Հայ Գիրքին Դիմաց*[9] եւ այլ ժողովածուներ: Ուսումնառութեան տարիներին նման լեզուազգացողութեանը մեծապէս նպաստում է դասական մատենագրութան, աստուածաբանական ուսումնասիրութիւնների ու մեկնութիւնների, այնուհետեւ համաշխարհային գրականութեան, փիլիսոփայութեան ու պատմութեան նշանակալից երկերին քաջածանօթ լինելը, որոնց ամփոփումն են *Խորհէ՛ Եւ Մտի՛ր*[10], *Ծանի՛ր Զքեզ*[11] ժողովածուները:

Կեանքի վերջին տարիներին արեւելահայ միջավայրն իր կնիքն է դնում վեհափառի լեզուամտածողութեան վրայ: Դա արտայայտւում է յատկապէս բանաւոր խօսքում: Նա ժողովրդի հետ սկսում է հաղորդակցուել լեզուական ուրոյն որակով՝ ստեղծելով արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի համադրեալ նոր որակ: Դրա լաւագոյն տարբերակը *Հայաստանեայց Եկեղեցին Իր 'Ծառայական Կերպին' Մէջ*[12] գրքի արեւելահայերէն փոխադրութիւնն է՝ կատարուած վեհափառի ձեռամբ:

Վեհափառի բանաւոր եւ գրաւոր խօսքի միջոցով արտայայտուած բառապաշարը կարելի է դասակարգել միքանի խմբերի:

ա) **Գրաբարաբանութիւններ.** Նման լեզուական միաւորների, գրաբարեան բազմաթիւ բառերի, դարձուածքների ու քերականական ձեւերի առկայութիւնը պայմանաւորուած է միքանի հանգամանքով.-

1) Նախ՝ ԿԸ ճիւղին պատկանող բարբառների արեւմտեան խմբակցութեան Անտիոքի կամ ծայր հարաւարեւմտեան բարբառախմբի Քեսապ - Սուեդիայի բարբառի Քեսապի ենթաբարբառը որպէս մայրենի ունենալը.

2) Գրական արեւմտահայերէնը որպէս հիմնական կրթութեան լեզուական տարբերակ ունենալը.

3) Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի հովանեաւ ճեմարանական, աստուածաբանական կրթութիւն ու դաստիարակութիւն ստանալը.

4) Գրաբարը՝ որպէս գրական լեզուի հնագոյն տարբերակ ուղեկցում է եկեղեցական ծիսական արարողութիւններին, որոնց մասնակցել է անուանի հոգեւորականը:

Գրաբարեան լեզուական յենքով են ստեղծուած *զհամահաւաքեալս յայսմ տեղւոջ, ի չորից կողմանս աշխարհիս այսորիկ, վասն*

պահպանութեան աւանդութեանց հարցն մերոց, վերամկրտեալ ի հաւատս եւ ի հայութիւնս մեր եւ այլ կազմութիւններ, որոնք հեղինակի խօսքին հաղորդում են պատմականութեան եւ քնարականութեան երանգ:

Նկատելի քանակ են կազմում գրաբարի անցեալ դերբայի ձեւերը, որոնք արդի հայերէնում բայական իմաստով չեն ընկալւում, առաւելապէս ունեն ածականական իմաստ եւ կիրառւում են որպէս պատկերաւոր մակդիրներ, օրինակ՝ *գրախնկեալ բակ, գօսացեալ պարտէզ, բանացեալ հոգի, անձնացեալ զօրութիւն, մարդեղացեալ Փրկիչ, մեքենականացեալ վիճակ, մասունքացեալ աւերակ, պրկեալ վճռակամութիւն, աստուածաշնչեալ խօսք, մանրանկարեալ կոնդակ, անծրեւացեալ արցունք, մշակացեալ ձեռք, աստուածանկարեալ պատկեր, միայնացեալ հոգի, երեկոյացեալ պահ, շիրմացեալ գետին, արփացեալ հոգի, ջրդեղեալ զօրութիւն* եւն., եւն.:

բ) Բառապաշարի յաջորդ խումբը, որը մերձաւոր աղերսներ ունի գրաբարաբանութիւնների հետ, **հնաբանութիւններն** են: Գրաբարեան ակունքներին մօտ լինելով են բացատրւում հնաբանութիւնների լեզուաիրադրական ընտրութիւններն ու նպատակային կիրառութիւնները: Դրանք հեղինակի խօսքին հաղորդում են պատմականութեան երանգ: Այդպիսի հնաբանութիւններից են՝ *ճշմարտող, վերառաքող, խանդալից, հանդիսադրել, անգայտ* (նօսր), *անձնադրոշմ, հոգեխառնութիւն, լուսափեսիլ, կենդանագործ, լրութիւն* (լրիւութիւն), *ճշմարտելի, ընկլուզել* (կուլ տալ), *խրախճանութիւն, մարդկաբար, յանկուցիչ, արդիւնագործ, կողկողագին, փրամախոհել, դէպ, փապաստ, հրիտակել* (կտակել), *նշմար, երաշփութիւն, վերնական, կարշնեղ, ասութիւն, ծնուցիչ, բարեխնամող, դառնաճաշակ, դալարիք, բնազանցական* եւն., եւն.:

գ) **Բանաստեղծական կամ հազուադէպ գործածութիւն ունեցող բառեր.** Վեհափառ հայրապետի խօսքը ոճաւորող միջոցներից են բառարաններում իբրեւ բանաստեղծական, ինչպէս նաեւ հազուադէպ գործածութեամբ նշուող բառերը. օրինակ՝ *սկզբնասկզբնէ, բուխ, փորձանաւոր, պաշտպանք, անդրանցնել, անձնադրոշմ, ժայթք, յաճախանք, զուարթախոհ, վեհավայր, դրասանգել, պերճաբարբառ, տեսլահար, դիւցազնաշունչ, կայլակել* եւն.:

դ) Վեհափառ հայրապետը, քաջածանօթ լինելով մեսրոպեան բառագանձի բոլոր շերտերին, նկարագրուածներից զատ ոճական նկատառումներով կիրառել է նաեւ բարբառային, ժողովրդախօսակցական (*պճլտուն, խանձողուած, հունար, ղայիմ*), մասնագիտական (*արժէչափ՝* քաղաքատնտեսական, *զօրաշարժ՝* ռազմական, *համագրաւել՝* տնտեսագիտական) եւ այլ շերտի բառեր:

ե) **Օտարաբանութիւններ եւ փոխառեալ բառեր**. Վեհափառն իր խօսքում լեզուաբանական բծախնդրութեամբ եւ յատուկ ընտրութեամբ գործառում է օտարաբանութիւններ եւ փոխառութիւններ. *երեկոյին մեծ*

փռամ (դրամա), *փիպով ու իփէալով ամուր, մասնաւոր ժեսթ, ոսկումի մանրանկարչական ոճային իւրայատուկ մոթիֆներով ընկերացած, մարդեղական աքթ, մանրանկարը ազգերուն մոզայիքին* եւն.:

զ) Վեհափառն իր գրուածքներուն յաճախ փակագծերուն նշում է տուեալ խօսքի իմաստային կիզակէտում գտնուող բառի օտար՝ անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն համարժէքը: Այսպէս՝ *բարձր կեանք* (high-life), *աշխարհայնամտութեան հոսանք* (secularism), *վանքի պատկերը* (image), *հոգեւոր տարածք* (dimension), *ի տեսութիւն* (en theoria), *խորհրդանիշ* (symbol) եւն.: Այսպիսի լրացուցիչ բացատրութիւնները յստակեցնում, որոշակիացնում եւ ամփոփում են բառիմաստը՝ ասելիքին հաղորդելով գիտական ոճի ճշգրտութիւն:

է) Հեղինակային նորաբանութիւններ: Վեհափառի լեզուն հարուստ է ոչ միայն բառային նորակազմութիւններով, այլեւ բառերի իմաստային նոր կիրառութիւններով: Բառային նորակերտումները ծնւում են իմաստային նրբերանգների ճշգրիտ ու անշեղ արտայայտմամբ, եւ իւրաքանչիւր բառ առանձնանում է դիպուկ գործառոյթով: Նոր բառերը կազմուած են հայերէնի բառակազմական ներքին միջոցներով ու եղանակներով: Նրա երկերի սովորական ընթերցման ժամանակ երբեմն կարող է թուալ, թէ այս կամ այն բառը յայտնի է եւ արդէն իսկ գործածուած: Սակայն երբ նման բառերն ստուգում ենք արդի հայերէնի ճաւալուն բառարաններով, պարզւում է, որ դրանք չկան այդ բառարաններում: Բառային նորակազմութիւնների մի զգալի մասի համար որպէս բառակազմական բաղադրիչ հանդէս են գալիս *աստուած, Յիսուս, Քրիստոս, Մեսրոպ, լոյս, հայ, հոգի, աւետարան, աղօթք, սուրբ, առաքեալ, ինքն* եւ այլ յատկանուններ եւ բառարմատներ:

Բառային նորակազմութեան բոլորովին նոր որակ կարելի է համարել, այսպէս կոչուած, անջատագրութիւնը: Բառակազմական այդ նորոյթը իմաստային եւ ոճական նոր ենթիմաստ է հաղորդում բառին: Այսպես՝ *ան-ժամանակ, ան-այսօր, ան-երէկ, ան-վաղ, մարդ-եղութիւն, մարդ-ութիւն, գեր-անձնական, անդր-անհատական, յետ-միջօրէ, հոգե-զօրացում, հոգե-կալում, հոգե-սնուցում, լոյս-ու-մութ, նոր-ութիւն, բան-ա-խօս, փոխ-յարաբերական, ան-բան, ան-ասուն, ով-ութիւն* եւն.:

Ինչպէս ցոյց են տալիս օրինակները, բառերի՝ ըստ բառակազմական մասնիկների եւ արմատի այսպիսի նպատակային տրոհումը ընդգծում է բաղադրիչներից յատկապէս մէկի՝ բառամիջուկի իմաստը՝ ստեղծելով լեզուաոտայայտչական մի նոր որակ: Բառիմաստային հետաքրքիր համադրութիւն են ստեղծում նաեւ նորակազմական արժէք ունեցող իւրօրինակ յարադիր կազմութիւնները. ինչպէս, օրինակ՝ *բանալի-բառ, սէր-Աստուած, աչք-Աստուած, Յիսուս-Խորհուրդ, հոգի-մսուր, լոյս-իմաստ, մեղր-բարիք, պտուղ-արդիւնք, կեանք-հաստատութիւն, մարդ-*

կարողութիւն, անէծք-օրհնանք, հոգի-կաղապար, արեւ-պահ, գրիչ-փետուր, ընձիւղ-բարտի, ցայտաղբիւր-աշխարհ եւ այսպէս շարունակ:

Հեղինակային նորաբանութիւնների քննութեան արդիւնքում նկատեցինք լեզուական բազմաթիւ իրողութիւններ, որոնցից կարելի է նշել հետեւեալները.

է-1) Բաղադրեալ կազմութիւնների բաղադրիչներից մէկը *Աստուած, Յիսուս, Քրիստոս, Մեսրոպ, լոյս, հայ, ոսկի, հոգի, աւետարան, աղօթք, սուրբ, առաքեալ, ինքն* եւն. բառերն են: Այսպէս՝ *աստուածածեռն, աստուածագիծ, աստուածակոխ, աստուածագիր, աստուածամաղ, յիսուսանուէր, յիսուսափիպ, քրիստոնէափիպ, քրիստոսահաւատ, քրիստոսափունկ, քրիստոսաբեր, հայաշեշտ, անհայախօս, հայավառ, հայանուագ, հայալոյս, հայափեսիլ, հայարիւն, լուսեղինութիւն, լուսալցուիլ, լուսածնունդ, նորալոյս, լուսաջան, լուսութիւն, լուսերգակ, լուսածորան, լուսաւորչակնիք, լուսագծել, մեսրոպահեղ, մեսրոպահունչ, մեսրոպագիծ, մեսրոպաբարբառ, մեսրոպաստեղծ, հոգեկառուցել, հոգեքանդ, հոգեկրթիչ, հոգեփոխ, հոգեկերտել, հոգիաբնակ, ինքնաշեշտ, ինքնաբարբառ, ինքնաբիւրեղացում, ինքնընծայում, ինքնապրկում, ինքնախորհողական, աղօթաճաճանչ, աւետարանագիծ, առաքելաժառանգ, սրբական, սրբահոգի* եւն., եւն.:

է-2) Մեծ թիւ են կազմում *գոյն* վերջածանցով նորաբանութիւնները, որոնցում բառի բովանդակութիւնը սաստկացւում եւ գերադրականութեան իմաստ է ստանում. *ընդարձակագոյն, անկեղծագոյն, լիագոյն, նուիրականագոյն, առատագոյն, իմաստնագոյն, գլխաւորագոյն, զօրաւորագոյն* եւն.:

Ը) Վերը թուարկուած բառապաշարային իւրայատկութիւններն ուղեկցւում են գեղարուեստական խօսքին բնորոշ պատկերաւորման միջոցներով, բառային պատկերների պատշաճ համադրումով, երբեմն էլ հակադրումով՝ տպաւորիչ ու բարձրարուեստ դարձնելով Գարեգին Ա. հայրապետի ասելիքը: Վեհափառի գրական վաստակի գրականագիտական քննութիւնը թողնելով գրականագէտներին՝ նշենք լեզուական ակնառու իրողութիւններից միքանիսը:

Բաւականին մեծաթիւ են մակդիրներն ու բառերի փոխաբերական կիրառութիւնները. այսպէս՝ *մեսրոպաբոյր ու յաւերժաբարբառ շիրիմ, աւետարանագիծ ճամփայ, ոգիաբնակ քաղաք, հայադրոշմ ծայն, աղօթաճաճանչ կամար, լուսածորան գրիչ, լուսաղբիւր հոգի, աստուածիմաստ վարդապետ, անդրանցնող աղբիւր, հայավկայ հրովարտակ, լուսահեղեղ դէմք, հայանուագ շարական, ծաղկած եկեղեցի, մեղահալած սպիտակութիւն, սրբաշունչ բառ, խորհրդասքօղ մատեան, ինքնարդարութեան փետուր, բնաթոյր զովութիւն, աղօթասոյզ խուց, գրչագրածին աշխատանոց, աղօթահայց մրմունջ, երկնածայն փայլակ, խնկեղէն աղօթք, խորհրդաբոյր կամար, լուսաւորչեան հիւսկէն,*

կրօնաբոյր մթնոլորտ, մեծատենչ փափաքներու կարկին, Անի քաղաքին փառախօս աւերակ, մտքի փեթակ, շնորհաբուխ բերան, բորբ իմաստ, թշնամիների գրոհների քամի, աղօթասոյզ քար, հոգեխօս դէմք, արեւեան ոճ, կոյրիմաստ բազալդ, կեանքի ոսկեթել, անհունախօս որմնանկար, բազմագունեան ամբոխ, քարերի բիւրեղ սրբատաշութիւն, տարիներու պրկուած իղձի զսպանակ, սուրբ թողօն, աստուածային ջրտուք եւն., եւն.:

Խօսքի պատկերաւորման հետաքրքիր միջոցներից են նաեւ բառակապակցութեան ներսում հակադրուած բառիմաստները, ինչպէս եւ առձայնոյթով՝ նման բաղաձայնների կուտակումով, բառերի կրկնութեամբ եւ բառախաղերով ստեղծուած արտայայտութիւնները, շրջասութիւնները, երբ առարկայի կամ անձնաւորութեան անուանումն ուղղակի տալու փոխարէն նշւում է նրանց այս կամ այն էական կողմը, յատկանիշը: Այսպէս՝ *ողբերգական կատակերգութիւն, աւերակներու անաւերակելի լեզու, հոյակապ աւերակ, անցեալը անցելութենէն փոխադրել ներկայի, շնորհալոյս Շնորհալի, լուսաջան լուսարար, խորասոյզ խորհուրդի խորհրդագործում, լոյսին լուսութիւնը, քաղաքացած եւ քաղաքայնացած կեանք, տառապանք չունենալու տառապանքէն տառապիլ* եւն.:

Համեմատութիւնների եւ փոխաբերութիւնների միաժամանակեայ գործառոյթը վեհափառի երկերին հաղորդում է առանձնայատուկ արժէք: Այսպէս՝ *սպառսպուռ ցրումն մեր ժողովուրդին ծառին բունէն մասնահատուած տաշեղներու պէս, աչքերը, արցունքէն միգացած, կը ծաւալին երկրի չորս ծագերուն, ինչպէս արեւը այգաբացի մշուշի ցնցուող սաւանին մէջ, մեռան, ինչպէս մեռնում են ճիւղերը ծառին, երբ խզւում են ու բաժանւում են իրենց բներից, մեռան, ինչպէս քարերը, երբ պոկւում եւ դուրս են ընկնում իրենց պատերից, խօսքս պատարագի նշխարին պէս բաժներ եմ իմ ժողովուրդին, Քրիստոսի կեանքը աշխարհին վրայ միախառնումն է աստուածայինին եւ մարդկայինին, ... ինչպէս երկինքին էջքը երկրի վրայ ու երկրին երկնայնացումը հոգեկան կեանքի ուժեղ թափանցումովը անոր մէջ, ինչպէս արեգակի շողին թափանցումը խոր մթութեան մէջ, մարդու ինքնութիւնը բազմաշերտ հողին նման հարստութիւն մըն է, աւանդութիւնները կը նմանին մարդու մարմնին ողնայարին, ցաւը կը նահանջէ հիւանդին դէմքին վրայ, ինչպէս խաւարը լոյսէն, պատերազմն ու խաղաղութիւնը հիւսքի սեւ ու ճերմակ թելերուն պէս իրարու հետ միշտ պար բռնեցին, դաշտի ծաղիկներուն նման գիրքեր, աղջիկներ ընձիւղ-բարտիներուն պէս կանգնած* եւն., եւն.:

Այսպիսով, Գարեգին Քեսապցի կաթողիկոսի բառապաշարը, հեղինակային նորաբանութիւնները դարձել են ժամանակակից գրական արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի անկապտելի մասը, նպաստում են գրական հայերէնի երկու ճիւղերի փոխհարստացմանը՝ լրացնելով հայերէնի հարուստ բառագանձը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Հայկանուշ Մեսրոպեան, *Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Երկերի Բառարան*, Մոնրէալ, 2000:

[2] Գարեգին Բ կաթողիկոս Սարգիսեան, «Հայ Եկեղեցւոյ Աստուածաբանութիւնը Ըստ Հայ Շարականներու» (ձեռագիր), Վարդապետական թեզ, Անթիլիաս, 1953-1955. նաեւ՝ «Ընդհանուր Եկեղեցւոյ Պատմութիւն», Անթիլիաս, վարդապետական տարիներ (ձեռագիր). նաեւ՝ *Մեղքը*, Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1979. նաեւ՝ *Ծանի՛ր Զքեզ...*, Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1984. նաեւ՝ *Հրաշք Տաթեւի. Թափօր Լերան Լանջերուն...*, Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1989. նաեւ՝ *Հին Արմատներէն Նոր Ընձիւղումներ*, Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1990. նաեւ՝ *Հայ Մարդը՝ Հայ Գիրքին Դիմաց...*, Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1990. նաեւ՝ *Անցեալը Անցած Չէ... Ուխտագնացութիւն Ի Տէր Զօր*, Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1991. նաեւ՝ «Դաւանաբանական Աստուածաբանութիւն» (ձեռագիր). նաեւ՝ *Հող, Մարդ եւ Գիր*, Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1991. նաեւ՝ *1700-ամեակը՝ Նոր Հոգեգալուստ*, Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1994. նաեւ՝ *Հայաստանեայց Եկեղեցին Իր «Ծառայական Կերպ»ին Մէջ*, Անթլիաս, ՏՄՏԿՀԿ, 1994, 188 էջ. նաեւ՝ Գարեգին Ա կաթողիկոս Սարգիսեան, *Ան-ժամանակը Ժամանակին Մէջ*, Ս. Էջմիածին, 1995. նաեւ՝ *Խորհէ Եւ Մտիր*, Ս. Էջմիածին, 1995. նաեւ՝ *Արեան Վկայութիւն, Նահատակութիւն Քառասնից Մանկանց*, Ս. Էջմիածին, 1995. նաեւ՝ *Բեթղեհէմի Աստղին Լոյսը՝ Ս. Էջմիածնի Պրիսմակէն...*, Ս. Էջմիածին, 1996. նաեւ՝ *Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան*, Ս. Էջմիածին, 1996. նաեւ՝ *Մաշտոցաշունչ*, Ս. Էջմիածին, 1997. նաեւ՝ *«Ես Յաղթեցի Աշխարհի...», Յարութիւն եւ Հայութիւն*, Ս. Էջմիածին, 1997. նաեւ՝ *Հոգեմտաւոր Ճառագայթումներ*, Ս. Էջմիածին, 1997. նաեւ՝ *«Տուք Զկայսերն՝ Կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ»*, Ս. Էջմիածին, 1998 եւն.:

[3] *Հասկ Հայագիտական Տարեգիրք*, Անթիլիաս, 1952-1994:

[4] *Էջմիածին Ամսագիր*, Ս.Էջմիածին, 1996-1999:

[5] *Խօսքս Պատրաստի Նշխարին Պէս Բաժներ Եմ Իմ Ժողովրդին, Ընտրանի Ասոյթների եւ Պատգամների*, կազմ.՝ Հայկանուշ Մեսրոպեան, Ս. Էջմիածին, 1999, 333 էջ:

[6] Մեսրոպեան, *Գարեգին Ա*:

[7] Գարեգին Բ. Կաթողիկոս, *Հող, Մարդ եւ Գիր,* Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1983:

[8] Գարեգին Բ. Կաթողիկոս Սարգիսեան, *Հրաշք Տաթեւի Թափօր Լերան Լանջերուն,* Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1989:

[9] Գարեգին Բ. Կաթողիկոս Սարգիսեան, *Հայ Մարդը Հայ Գիրքին Դիմաց...,* Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1980:

[10] Գարեգին Ա կաթողիկոս Սարգիսեան, *Խորհէ եւ Մտի՛ր*, Ս.Էջմիածին, 1995:

[11] Գարեգին Բ. Կաթողիկոս Սարգիսեան, *Ծանի՛ր Զքեզ*, Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ 1984:

[12] Գարեգին Վրդ. Սարգիսեան, *Հայաստանեայց Եկեղեցին Իր Ծառայական Կերպին՝ Մէջ,* մատենաշար Խորհրդակցական Ժողովներու Դասախօսութեանց թիւ 6, Անթիլիաս, ՏՄՏԿՀԿ, 1955:

The Vocabulary of Catholicos Karekin Kesabtsi as an Enriching Source for the Armenian Lexicon

(Summary)

Hayganush Mesrobian
haykanushm@mail.ru

The published sermons, interpretations and theological research of Karekin I, Catholicos of All Armenians, are among the best expressions of Armenian public speech. Answers are given to a multiplicity of questions in an encyclopedic manner that includes philosophical generalisations. The answers are significantly pictorial and have literary significance since they are expressed in different styles and at times by means of new words, particularly compound words. According to the paper, Catholicos Karekin I brought to life some 2000 new words in Armenian, thus enriching the Armenian lexicon. The paper analyses the formation and structure of these new words, which were molded according to the rules and regulations of Armenian word formation.

Alongside these new words, the paper notes that certain other words are used with new connotations and usage.The paper also notes that a large number of these new words come from the Bible, where words like God, Jesus, Christ, Mesrob, light, Armenian, soul, gospel, prayer, saint, disciple, and self constitute the first part of the newly formed compound word. The paper ends by highlighting a number of examples of these new words, which are an interesting combination of the Western and Eastern Armenian literary languages.

ԱԿՆԱՐԿ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ՀԱԼԷՊԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ
maroushyeramian@gmail.com

Նիւթին խորամուխ ըլլալէ առաջ հետեւեալ հարցադրումը ինքզինք կը պարտադրէ. կա՞յ հալէպահայ բանաստեղծութիւն կամ գրականութիւն՝ ընդհանրապէս. որովհետեւ «հալէպահայ բանաստեղծութիւն» արտայայտութիւնը կ'ենթադրէ որոշ աւանդութիւն մը, անընդմէջ հոսք մը բանաստեղծներու, գրողներու եւ հետեւողական ծաղկումը անոնց:

Գիտենք, որ Հալէպը գաղթի առաջին կայանն էր, ապա՝ Սփիւռքի մայր գաղութը, որ շատ արագ կրցաւ դիմագիծ ունենալ եկեղեցիներու, դպրոցներու եւ ակումբներու հաստատուն ցանցով. հետեւաբար բնական կը դառնայ ենթադրութիւնը, որ գրականութիւնն ու բանաստեղծութիւնը – մասնաւորապէս - պատմութիւն եւ աւանդութիւն ունենան այնտեղ:

Արդեօ՞ք ճիշտ է մեր ենթադրութիւնը:

Այս հարցին քննարկումը կը ստիպէ զիս քիչ մը հեռուէն սկսիլ:

1945ին *Ակօս* հանդէսին մէջ երեւցած գրախօսական մը, որ կը քննարկէր Մինաս Թէօլէօլեանի *Մթնոլորտ*[1] բանաստեղծութիւններու գրքոյկը, կ'անդրադառնար նաեւ սուրիահայ (ինչպէս կ'ըսուի այնտեղ) գրականութեան եւ կ'ըսէր.

> Որքա՞ն ճիշտ է արդեօք սուրիահայ բանաստեղծութեան հասցէին նետուած սա մեղադրանքը թէ՝ ամէնէն շատ բանաստեղծ Սուրիան տուած է եւ սակայն հոնկէ քերթուած մը կարելի չէ կարդալ ծայրէ ծայր:
>
> Իրողութիւնն այն է սակայն, որ հակառակ ամէն ուրացումի Սուրիա եւ Լիբանան մշակուող գրականութիւնը տուած է արդէն անուրանալի անուններ եւ վաւերական արժէքներ, որոնց կու գան միանալու ուրիշ, տակաւին նոր, բայց խոստմնալից անուններ[2]:

Կը տեսնենք թէ պատմութիւնը կը կրկնուի, եւ նորեր կու գան փոխարինելու երէցները:

Գաղթէն մինչեւ այսօր Հալէպը կը հաշուէ ոչ-արհամարհելի թիւ մը բանաստեղծներու, որոնք ծնած են, կամ շրջանի մը համար կայք հաստատած են այնտեղ: Սակայն երկրին քաղաքական կացութիւնը, փոքրամասնութիւններուն պայմանները, պարտադրուած սահմանափակումներն ու կաշկանդումները պատճառ դարձած են, որ անոնցմէ շատերը հեռանան եւ այլ երկիրներ հաստատուին:

Համեմատականօրէն բեղուն եղած են 1930էն մինչեւ 1950 երկարող երկու տասնամեակները, երբ գաղթականները՝ թօթափած իրենց հետ բերած խեղճութիւնը, լծուած են նաեւ հոգիի քաղցը ամոքելու երկնումին:

1960ականներուն սկիզբը ծայր առած քաղաքական վերիվայրումները կը կասեցնեն գիր ու գրականութեան, մանաւանդ մամուլի ծաղկումը: Ոչ միայն թերթեր դադրած են, նորեր լոյս չեն տեսներ, այլեւ քաղաքը՝ պարպուած իր բանաստեղծներէն, ոչ մէկ նոր շունչ կը բերէ:

Սակայն, հակառակ պայմաններուն եւ Հալէպի աւանդապահութեան, արդիականութիւնը կարծես գաղտնի եւ անշշուկ մտած էր քաղաք եւ կը բոցավառէր երիտասարդ տղոց երեւակայութիւնը: Շահպան (Խաչիկ Իշխանեան) տակաւին 1972ին կը գրէր՝

ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹԻՒՆ
Կուտ
Կուտ
Կարկուտ:

Կամ՝

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ
Ադամ
որդի:

Հակառակ այս արդիական շունչին, համեմատականօրէն ամուլ շրջան մը կ'ապրի հալէպահայ բանաստեղծութիւնը մինչեւ 20րդ դարու վերջին քանի մը տասնամեակները, երբ նոր թափով կ'արթննայ բանաստեղծութիւնը, նոր անուններու հետ նաեւ նոր շունչ բերելով:

Հալէպահայ բանաստեղծութիւնն ալ, ինչպէս սփիւռքահայ բանաստեղծութիւնը ընդհանրապէս, քերթողական քանի մը առանցքներ ունի՝ սէր, հայրենիք, գաղթահայու վիճակ, իսկ ժամանակակից քերթողներու պարագային՝ նաեւ գիտական նիւթեր:

Կարեւոր տեղ կը գրաւեն արաբ ժողովուրդին նուիրուած քերթուածները, մանաւանդ հալէպահայ քերթողներու առաջին սերունդի բերքին, ինչպէս՝ Զարեհ Մելքոնեանի[3], Արամ Արմանի[4], Հայկ Պարիկեանի[5], Անդրանիկ Թերզեանի[6] եւ այլոց քերթուածներուն պարագային:

Այս առումով հետաքրքրական է բաղդատութիւնը Թերզեանի Հալէպի նուիրուած քերթուածին, որ կը խօսի արաբական գիշերներու, ուղտերու եւ *եա լէյլի* մասին, եւ Յարութ Վարդանեանի «Սուրիա» խորագրուած բանաստեղծութեան, որ կ'ըսէ.-

Իմ մէկ հատիկ
Սրահս
Տարանցիկ ուղեւորներու սպասման[7]:

Անշուշտ նիւթերուն մօտենալու կերպը կը փոխուի երէց եւ կրտսեր քերթողներուն համար, ինչպէս օրինակ սիրային նիւթերու պարագային՝ երբ երէցները միայն բարիք կը ցանկան իրենց «հեռաւոր» սիրածին, իսկ կրտսեր սերունդի քերթողները, ժամանակի պահանջներուն հաւատարիմ՝

աւելի յանդուգն մօտեցում կը ցուցաբերեն: Մօտեցումի կերպն է, որ կը տարբերէ զիրենք, սերնդային տարբերութեան կողքին նաեւ խառնուածքի դաջուածքով:

Քսաներորդ դարու վերջին կէսի ամլութեան մէջ երկու անուններ կը փայլին՝ Գէորգ Թեմիզեան եւ Կորիւն Շահինեան - երկուքն ալ մահացած արդէն - որոնք իրենց արդիականութեամբ բարերար ազդեցութիւն կ'ունենան երիտասարդներուն վրայ: Այս երիտասարդները, ուստի, որոնք Հալէպի աւանդական շրջապատին մէջ ոչ միայն բանաստեղծելու, այլեւ արդիական քերթողութիւն մը մէջտեղ բերելու կարելիութիւնը կը տեսնեն:

Թեմիզեանի առաջին քերթողագիրքին[8] համար Վահէ Օշական ատենին ըսած է.

> «Ծով եւ կղզի», որ ամէնէն յուսադրիչ մատեանն է ներկայիս, մեզ կը փոխադրէ քիչ մը տարբեր աշխարհի մէջ: Գիրքը կը ձգտի մարդկային ահարկու առանձնութեան զգացումը տանելի, ապրելի իմաստի վերածել, կը փորձէ արդի մարդուն շուարումը, անձկութիւնը պարզ, ինքնատիպ արտայայտութեամբ, զուսպ արուեստով երկվայրկեան մը նուաճել[9]:

Նոյն շրջանին է, որ Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանէն տակաւին շրջանաւարտ իսկ չեղած երիտասարդ մը՝ Կորիւն Շահինեան, կ'երեւի *Բագին*ի էջերուն իր քերթուածներով, ապա կ'ունենայ իր առաջին քերթողագիրքը՝ *Լողարշաւը*[10]:

Թէեւ դանդաղ, սակայն հաստատ քայլերով է, որ հալէպահայ բանաստեղծներ վերստին տեղ կը գրաւեն սփիւռքահայ բանաստեղծութեան քարտէսին վրայ: 1983ին Թեմիզեանի երկրորդ գիրքը՝ *Շարժում*ը[11] լոյս կը տեսնէ, իսկ 1987ին՝ Շահինեանի երկրորդ գիրքը՝ *Գաղթականներ*ը[12]:

1991ին նոր անուն մը մուտք կը գործէ հալէպահայ բանաստեղծութեան անդաստանէն ներս՝ Մարուշ (Գազանճեան-Երամեան), որ միայն անունով կ'երեւի իր առաջին գիրքին՝ *Հում Բառերն...*ի[13] վրայ: Վ. Օշական կրկին կ'արտայատուի, այս անգամ «Նոր Գիրքեր» շաբաթական իր քրոնիկին մէջ մատնանշելով *Սուրիոյ աւազներուն վրայէն* փչող նոր շունչի մը առկայութիւնը:

> Առիթով մը Վ. Օշական կը գրէր Հալէպի մասին ու կ'ըսէր. Սփիւռքի դարբնոցներէն մին եղած է ան, եւ այսօր ալ իր դպրոցներով, ազգային կեանքի ներքին ջերմութեամբ, մարդկային զգացումներու որակի տեսակէտէն Հալէպը ոչ մէկ գաղութէ ետ կը մնայ:
>
> Ստորակայութեան բարդո՞յթ մը կը կրծէ իրենց ինքնավստահութիւնը, երբ կը նային Պէյրութի եւ աւելի հեռու: Սխալ ու վրիպած կեցուածք, որ կ'արդարացնեն «տեղական պայմաններ» կոչուած անիմաստ պատճառաբանութեամբ[14]:

Որոշ ճշտութիւն կայ անշուշտ Օշականի խօսքերուն մէջ: Վերջին տասնամեակին բանաստեղծական բերքն ու նորարարական շունչը սակայն, ինչպէս կը տեսնենք այս ուրուագիծին մէջ, հայէպահայ բանաստեղծութեան համար նոր շրջանի մը սկզբնաւորութիւնը կ'աւետեն:

Այսպէս է, որ քանի մը երիտասարդներ՝ Արա Ճուհարեան[15], Յարութ Վարդանեան[16], Յակոբ Տըլտլեան[17] եւ Սարգիս Ք. Խաչերեան[18] կը սկսին իրենց առաջին փորձերուն: Անոնց կու գայ միանալ աւելի ուշ Նանօր Ինճէճիկեան[19]: Իսկ բոլորովին վերջերս նոր անուն մը իր նախաքայլերը սկսած է առնել պատերազմական Հալէպի մէջ՝ Քրիստինա Տէր Ստեփանեան[20]:

Այստեղ որակի հարց չեմ դներ, որովհետեւ մթնոլորտ մը նկարագրել է մեր նպատակը, ցոյց տալ, որ Հալէպը ունեցած է եւ կը շարունակէ ունենալ իր բանաստեղծական երթը, քերթողական իր մթնոլորտը եւ քերթողական աւանդ մը ունենալու իր ճիգը:

Այս տողոցմէ մէկքանին արդէն գիրքերով հրապարակ եկած եւ իրենց արգասիքը ընթերցող հասարակութեան դատին յանձնած են: Միւսները կը շարունակեն երեւիլ տեղական թէ սփիւռքեան մամուլին մէջ:

2003ին Անթիլիասի մայրավանքին մէջ կայացած Միջին Արեւելքի Գրական Առաջին Համագումարին այս երիտասարդ տղոց ներկայութիւնը ոչ միայն տպաւորիչ էր, այլեւ յոյս կը ներշնչէր Հալէպի եւ Սփիւռքի բանաստեղծութեան ապագային հանդէպ: Նոյն տարին տեղի ունեցած էր Գրողներու Համահայկական Երկրորդ Համագումարը Երեւանի մէջ: Արդիւնքը նոյնքան փայլուն էր հայէպահայ քերթողութեան համար:

Յիշուած այս քանի մը անուններու առկայութեան էր, որ *Գանձասար* շաբաթաթերթի այդ օրերու խմբագրուհիին՝ Մարի Մերթխանեանի առաջարկով, 1998էն սկսաւ գործել «Գրական Աշխատանոց»ը, ուր հաւաքուած վեց երիտասարդները տարի մը աշխատելէ ետք, հանրութեան ներկայացան բանաստեղծական ընթերցումի երեկոյի մը ընթացքին, որպէս «վեցանկիւն խմբակ»:

Անշուշտ այս աշխատանոցին արդիւնքը այն եղաւ, որ *Գանձասար*ը 1999ին ունեցաւ իր Գրական Էջը: Ամսական դրութեամբ լոյս տեսնող այս էջը կրցաւ հաւաքական պատկերը տալ հալէպահայ նորագոյն բանաստեղծութեան, որ դիմագիծ մը կազմելու ձգտումը ունէր. այնտեղ չափածոյի կողքին, նաեւ արձակ գրութիւններ լոյս տեսան:

Շրջան մը ետք, այս երիտասարդներէն իւրաքանչիւրը ունեցաւ իր երախայրիքը, շնորհիւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գրական մատենաշարներուն:

Այս անուններէն անկախ եղած են նաեւ Վրէժ Թուրեան[21], Տիգրան Գաբոյեան[22], Խաչիկ Ասլանեան[23], Կարօ Ասլանեան[24], Նուշիկ Միքայէլեան[25], Սեւան Հաննէշեան[26] եւ ուրիշներ:

2005ին, երբ յստակ դարձաւ, թէ բաւական եռանդուն է գրական կեանքը Հալէպի մէջ, տարեգիրք մը՝ *Երթ*[27], սկսաւ լոյս տեսնել Բերիոյ Թեմի Առաջնորդարանին, աւելի՝ Առաջնորդ Շահան սրբազանի ձեռնարկութեամբ եւ Սուրիահայ Գրողներու Համախմբումին գործադրութեամբ (այս համախմբումին գոյութիւնն ալ կը պարտինք սրբազան հօր, թէեւ անոր գաղափարը հալէպահայ երկու գրագէտներ յղացած էին):

Հալէպի համար տարեգիրքերը աւանդութիւն եղած են, իր գոյութեան սկիզբէն իսկ: Գաղութին կազմաւորումէն մինչեւ 50ականներու աւարտը մեծ թիւով եւ տարբեր բնոյթի տարեգիրքեր ու տարեցոյցեր լոյս տեսած են, որոնց ամէնէն տարածունը կրօնական *Տաթեւ*[28] տարեգիրքը եղած է: *Արեւելք*[29] օրաթերթը ունեցած է իր *Արեւելք Տարեգիրքը*[30], աւետարանական համայնքը ունեցած է *Մանանայ*[31] տարեգիրքը, ՀԲԸՄիութիւնը ունեցած է *Գեղարդը*[32], նոյնիսկ հայրենակցական միութիւնները ունեցած են իրենց հրատարակութիւնները, ինչպէս *Տարօն*[33], *Սասուն*[34] եւ *Տիգրիս*[35] տարեգիրքերը:

Ասոնց կողքին անհատներ նաեւ ձեռնարկած են տարեգիրքերու հրատարակութեան, ինչպէս՝ Հալէպի պատմութեան մաս կազմող գրավաճառ Կիւլեսէր Տեմիրճեանը[36]:

Սակայն նորագոյն *Երթ* տարեգիրքը անոնցմէ կը տարբերի իր զուտ գրական բնոյթով: Անշուշտ այնտեղ երեւցած են չափածոյի կողքին նաեւ արձակ, ուսումնասիրական եւ թարգմանական աշխատանքներ: *Երթը* կու գայ որպէս մարտահրաւէր բոլոր դադրող թերթերուն եւ փակուող դպրոցներուն, որովհետեւ անոր էջերուն խմբուած գրողներուն մէջ բարձր է տոկոսը երիտասարդ գրողներու եւ նոր անուններու:

2005ի աշնան լոյս տեսած *Երթ Տարեգիրքի* առաջին թիւին մէջ, կ'երեւին անուններն ու գործերը հալէպահայ (նաեւ սուրիահայ՝ Լաթաքիայէն եւ Քեսապէն) 14 բանաստեղծներու, որոնցմէ երկուքը վաղամեռիկ են՝ Գէորգ Թեմիզեան եւ Կորիւն Շահինեան: Մնացեալին մեծ տոկոսը երիտասարդ անուններ են, որոնք կ'ապրին եւ կը ստեղծագործեն Հալէպի մէջ: Տարեգիրքը խօսուն փաստ է հալէպահայ քերթողութեան զարթօնքին եւ առոյգ գնացքին:

Երթ Տարեգիրքի չորրորդ հատորին համար հայրենի արձակագրուհի Ալիս Յովհաննիսեան կ'ըսէ՝ «*Սա գոնէ ինձ յայտնի միակ զուտ գրական հանդէսն է համայն աշխարհում՝ հայրենիքից դուրս (Հայաստանում ունենք միայն համանման «Նորք» հանդէսը): Եւ սա արդէն ինքնին մեծ յարգանքի արժանի փաստ է*»: (Պէտք է նշել, որ սփիւռքահայ *Բագին*, *Շիրակ* եւ աւելի ուշ՝ *Կամար* հանդէսները նուիրուած են նաեւ արուեստի եւ մշակոյթի):

Երթ Տարեգիրքի վեցերորդ հատորը լոյս տեսաւ Սուրիոյ, մանաւանդ Հալէպի տագնապին սաստկանալէն անմիջապէս առաջ, 2012ին:

Այստեղ կարելի է անդրադառնալ նաեւ այն իրողութեան, թէ արդեօ՞ք հայ-արաբ բանաստեղծական փոխազդեցութիւններ եղած են: Սուրիահայ Գրողներու Համախմբումին ձեռնարկութեամբ եւ խմբագրութեան առաջարկով, *Ալ Ատապ Ալ Աճնապիէ* (օտար գրականութիւն) գրական հանդէսի ամբողջ համար մը նուիրուած էր հայ բանաստեղծութեան[37]: Սակայն արդեօ՞ք արաբական բանաստեղծութիւնը ազդեցութիւն ունեցած է հալէպահայ քերթողութեան վրայ:

Այս հարցումին պատասխանը ոչ է եւ պատճառները՝ բազմաթիւ, որոնց կարելի է այլ առիթով լայնօրէն անդրադառնալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Կը տեսնենք, որ հակառակ անցեալի քանի մը տասնամեակներու արձանագրած նահանջին, հալէպահայ քերթողութիւնը թափ առած է եւ վերագտած երբեմնի իր եռանդին կողքին, նաեւ շունչի նորութիւն մը:

Բայց կարելի՞ է ըսել, որ «հալէպահայ բանաստեղծութիւն» մը կայ, որուն շուրջ կը խմբուին նոյն տեսլականն ու քերթողական նոյն մղումները բաժնող բանաստեղծներ: Կամ կա՞յ արդեօք հաւաքական հոգեբանութիւն մը, որ կրնայ կապել հալէպահայ բանաստեղծները իրարու եւ դիմագիծ տալ հալէպահայ բանաստեղծութեան:

Անշուշտ ոչ, որովհետեւ հալէպահայ բանաստեղծներէն իւրաքանչիւրը ունի ի՛ր ըսելիքը եւ ի՛ր ոճը, թէկուզ երբեմն բիւրեղացած չըլլայ այդ ոճը:

Այսօր հալէպահայ բանաստեղծութիւնը աւանդական եւ արդիական քերթողութեան ներդաշնակ փունջ մը կը ներկայացնէ. նոյն մթնոլորտին մէջ կ'ապրին եւ կը ստեղծագործեն երէց եւ կրտսեր բանաստեղծներ. անոնցմէ շատեր հաւատարիմ կը մնան արեւմտահայ քերթողութեան աւանդին, մինչ ուրիշներ ամբողջովին հակած են դէպի արդիականը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Մինաս Թէօլէօլեան, *Մթնոլորտ*, Հրատ.՝ Հալէպահայ Ուսուցչաց Միութեան, Սուրիա, 1945:

[2] Խ. Ա., «Մթնոլորտ», *Ակօս, Թ. Գիրք*, Պէյրութ, 1945, էջ 122:

[3] Զարեհ Մելքոնեան, *Ես Եւ Մարդիկ (1942-1943)*, Հալէպ, Տպ. Տէր Սահակեան, 1943:

[4] Արամ Արման, *Խաչբուռ*, Հալէպ, Տպ. Ալեփփօ Քոլէճ, 1944, 44 էջ:

[5] Հայկ Պարիկեան, *Այգեկութք. Քերթուածներ*, Հալէպ, 1962, 80 էջ

[6] Անդրանիկ Թերզեան, *Արեւելք*, Հալէպ, Տպ. Անի, 1946, 68 էջ:

[7] Յարութ Վարդանեան, *Եռանկիւն Արեւ*, Հալէպ, Տպ. Կիլիկիա, 2002, [ա.է.]:

[8] Գէորգ Թեմիզեան, *Ծով Եւ Կղզի*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1973, 70 էջ:

[9] Վահէ Օշական, «Մեր Բանաստեղծները. 8», *Ազդակ*, 19 Հոկտեմբեր 1974, էջ 5:

[10] Կորիւն Շահինեան, *Լողարշաւ*, Պէյրութ, Տպ. Համազգային Վահէ Սէթեան Տպարան, 1978:

[11] Գէորգ Թեմիզեան, *Շարժում. Բանաստեղծութիւններ (1973-1982)*, Հալէպ, 1983, 84 էջ:

[12] 50էջանի այս հատորը հրատարակուած է Պէյրութ, 1987ին: Տպարանը նշուած չէ:

[13] Մարուշ [Երամեան], *Հում Բառերն Իմ Կը Բերեմ Դիմակներու Հանդէսին*, Հալէպ, Տպ. Կիլիկիա, 1991, 86 էջ:

[14] *Գանձասար*, Նոյեմբեր Դ. 1998, էջ 6:

[15] Արա Ճուհարեան, *Երկու*, Հրատ. Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի թիւ 42, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 2001, 119 էջ:

[16] Յարվարդ (Յարութ Վարդանեան), *Լի*, Հրտ. Ռիչըրտ եւ Թինա Գարօլան Հիմնադրամ թիւ 7, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 2010:

[17] Յակոբ Տլտլեան, *Արուարձանի Ձայնածօղեր*, Հրատ.՝ Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 2001:

[18] Սարգիս Ք. Խաչերեան, *Լոյսն Ի Վեր*, Հալէպ, 2006. նաեւ՝ *Երգեր Ոսկեվար Քնարիս*, Հրատ. Ռիչըրտ եւ Թինա Գարօլան» Հիմնադրամ թիւ 10, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 2011:

[19] Նանօր Ինճէճիկեան, *Ալեկոծ Խորքեր*, Հալէպ, Տպ. Կիլիկիա, 2006, 77 էջ:

[20] Առայժմ ան հանդէս չէ եկած հեղինակային հատորով:

[21] Վրէժ Թուրեան, *Սրտի Բեկորներ*, Քեսապ-Հալէպ, Տպ. Ասֆահանի, 1995. նաեւ՝ Վրէժ Գլնճեան-Թուրեան, *Հայրենի Ղօղանջներ*, Քեսապ-Հալէպ, Տպ. Կիլիկիա, 1997. նաեւ՝ Վրէժ Գլնճեան-Թուրեան, *Սէր Ափսոսանք Ու Կարօտ*, Հալէպ, Տպ. Կիլիկիա, 2003:

[22] Գաբոյեան հեղինակն է բանաստեղծութեան երկու հատորներու՝ *Դէպի Երկինք Արձակուած Նետ* (1995) եւ՝ *Անմասն* (Երեւան, 2002):

[23] Հեղինակն է *Լուսաբացիս Ամպրոպը* գիրքին: Դժբախտաբար այլ տուեալներ չունինք այս մասին:

[24] Կազմած եւ խմբագրած է *Հուր Եւ Կարօտ* սիրային բանաստեղծութիւններու հաւաքածոյ մը, Բերիոյ Թեմի Առաջնորդարանի «Այգ» Մատենաշարով (Հալէպ, Տպ. Արեւելք, 2005): Առանձին հատոր չունի:

[25] Նուշիկ Միքայէլեան, *Քամիներից Այն Կողմ*, Երեւան, Զանգակ-97, 2002, 83 էջ:

[26] Մամուլի տակ է իր *Արեգնատենչ Հորիզոններ* գիրքը:

[27] *Երթ, Սուրիահայ Տարեգիրք, 1*, Հրատ. Սուրիահայ Գրողներու Համախմբու-մի, Հալէպ, Տպ. Արեւելք, 2005. *Հտր. 2*, Հալէպ, Տպ. Արեւելք, 2006. *Հտր. 3*, խմբ.՝ Վարդի Քէշիշեան, Հալէպ, Տպ. Արեւելք, 2007. *Հտր. 4*, խմբ.՝ Վարդի Քէշիշեան, Հալէպ, Տպ. Արեւելք, 2008. *Հտր. 5*, Հալէպ, Տպ. Արեւելք, 2009. *Հտր. 6*, խմբ.՝ Պերճուհի Աւետեան, Տիգրան Գաբոյեան, Յարվարդ, Մարգարիտ Շամիլեան, Մարիանա Պէրթիզլեան-Ղազարեան, Հալէպ, Տպ. Ոսկետառ, 2012:

[28] Արտաւազդ վարդապետ [Սիւրմէեան], *Տաթեւ. Կրօնական Տարեցոյց. Գրական, Բանասիրական, Գեղարուեստական*, Ա. Տարի (1925, Կ. Պոլիս, Տպ. Յ.Մ.Սէթեան), Բ. Տարի (1926, Հալէպ, Տպ. Արաքս Բ.Յ. Թօփալեան), *Տաթեւ. Տարեցոյց. Կրօնական, Բանասիրական, Գրական*, Գ. Տարի (1927, [ա.տ]), *Տաթեւ. Կրօնական Տարեցոյց. Գրական, Բանասիրական, Գեղարուեստական*, Դ. Տարի (1928, ՞՞), *Տաթեւ. Գրական, Բանասիրական, Կրօնական Տարեցոյց*, Ե.

Տարի (1929, Հալէպ, Տպ. Արաքս Բ.Յ. Թօփալեան), *Տաթեւ. Գրական, Բանասիրական, Կրօնական Տարեցոյց*, Զ. Տարի (1930, Հալէպ, Տպ. Արաքս):

[29] *Արեւելք Ազգային, Քաղաքական, Հասարակական Օրաթերթ*, լոյս տեսած Հալէպ, 1946-1963 շրջանին, ընդհատումներով:

[30] *Արեւելք Տարեգիրք, Ա. Տարի*, Հալէպ, Տպ. Նայիրի, 1948:

[31] *Մանանայ Տարեգրքոյկ*, 1946, Հրատ.՝ Հոգեւոր Եղբայրութեան Երիտասարդաց, Հալէպ, Տպ. Մարանաթա, 1946. *Բ. Տարի*՝ 1947, Հալէպ, Տպ. Մարանաթա, 1947. *Գ. Տարի*՝ 1948, Հալէպ, Տպ. Մարանաթա, 1948. *Դ. Տարի*՝ 1949, Հալէպ, Տպ. Մարանաթա, 1949: [ԾԽ. Կարելի չեղաւ ստուգել Մանանայի Ե.-Զ. հատորները]. *Է. Եւ Ը. Տարի*՝ 1952-53, Հալէպ, Տպ. Մարանաթա, 1953. *Թ.-ԺԲ. Տարի*՝ 1954-57, Հալէպ, Տպ. Մարանաթա, 1957:

[32] *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, Ա. Տարի*, խմբ.՝ Հայկ Պարիկեան, Հրատ.՝ ՀԲԸՄ Մատենագիտական Յանձնախումբ, Հալէպ, Տպ. Արեւելք, 1975. *1976-1978 Միացեալ Թիւ Բ. Գիրք*, խմբ.՝ Հայկ Պարիկեան, Հրատ.՝ ՀԲԸՄ Մատենագիտական Յանձնախումբ, Հալէպ, Տպ. Շարք, 1978. *Գ. Գիրք*, խմբ.՝ Հայկ Պարիկեան, Հրատ.՝ ՀԲԸՄ Մատենագիտական Յանձնախումբ [ՄՅ], Հալէպ, Տպ. Ալթափրէս, Պէյրութ, 1985. *Դ. Գիրք, Պատկերազարդ Էջեր Սուրիահայ Գաղութի Մարմնամարզական Կեանքէն (1910-1960)*, խմբ.՝ Հայկ Պարիկեան, Ռոպերթ Ճեպէճեան, Լուիզա Խապայեան-Ճեպէճեան, Հրատ.՝ ՀԲԸՄ ՄՅ, Հալէպ, Տպ. Ռապի, Հալէպ, 1991. *Ե. Գիրք, Պատմական Էջեր Սուրիահայ Մայր Գաղութի Կեանքէն*, խմբ.՝ Ռ. Ճեպէճեան, Հ. Պարիկեան, Լ. Խապայեան, Վարդի Քէշիշեան, Հրատ.՝ Վիլոէտ Ճեպէճեան Գրադարանի Հալէպ, 1996. *Զ. Տարի, Նուիրուած Ասպնջական Արաբ Ժողովուրդի Հետ Հայ Համայնքին Սերտաճին (Integration)*, խմբ.՝ Ռ. Ճեպէճեան, Լ. Խապայեան, Վ. Սալաթեան, Վ. Քէշիշեան, Թ. Խապայեան, Տպ. Ասֆահանի, 2000: Նորագոյն՝ Է. Հատորը, ամբողջութեամբ արաբերէն, լոյս տեսաւ 2002ին, Հալէպ:

[33] *Տարօն. Հաւաքածոյ Ժողովրդ. Երգերու*, հաւաքեց եւ կազմեց Արտաշէս Տէր Խաչատուրեան, Պուրճ Համուտ, Տպ. Յովեա, 1950:

[34] Մուրատ Պետրոսեան, *Տարօն-Սասուն, Էջեր Հայոց Նորագոյն Պատմութենէն*, կազմ.՝ Ա. Արշակունի, Հալէպ, Տպ. Արաքս Բ. Յ.Թօփալեան, 1928:

[35] *Տիգրիս Տարեգիրք*, Հրատ. Տիգրանակերտի Հայրենակցական Ընկ. Հալէպի Շրջանային Մարմնին, Հալէպ, Տպ. Տիգրիս Վարդգէս Գրիգորեան, 1946:

[36] Գրատունը հիմնուած է 1920ին, Պուրսայի Օւաճըք գիւղէն Կիւլեսէր Տեմիրճեանի կողմէ: Իր մահէն ետք Գրատունը ստանձնած է իր որդին՝ Արա, որուն մահէն ետք (1990) փակուած է ան: Գրատունը հրատարակած է հայերէն գիրքեր, որոնցմէ առաջինը՝ 1927ին՝ *Սուրիական Ալպոմ* (Հալէպ, տպարան Արարա) (*Գեղարդ, Ե. Գիրք, Պատմական*, էջ 241. նաեւ՝ Ռուբէն Տիրարեան, *Յուշամատեան Կիլիկեան Կրթ. Հասպատութեան*, Հալէպ, 1996):

[37] Այդ բացառիկը լոյս տեսաւ Ամառ 2005ին, իբրեւ հանդէսի 30րդ տարուան 123րդ համար: Թիւը տե՛ս՝ http://archive.sakhrit.co/contents.aspx?CID=16300 :

The Aleppo Armenian Poetry of the Last Decade
(Summary)

Marush Yeramian
maroushyeramian@gmail.com

The paper focuses on the sinuous road Aleppene Armenian poetry has taken lately.

It is said that Aleppo gives birth to writers but cannot keep them, because these fly away to other Armenian destinations at the first chance.

In recent decades, however, right before the Syrian crisis, the young generation stayed in the city due to the relative stability of the country. This was conducive to the development of a small group of young authors trying to give shape to Armenian-Aleppene literature.

The group used the literary pages of the Prelacy *Kantsasar* weekly, which is still functioning. Later on a broader group of upcoming and well-established authors gathered around a yearbook, *Yert*, which included both literary works and translations as well as research. Some Aleppene Armenian authors published their books themselves; others made use of the Cilicia Catholicosate-based Kevork Melidinetsi Literary prize, which published a number of their books.

ԱԿՆԱՐԿ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐՈՒ ՀԱԼԷՊԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ (2012էն Այսօր)

Մարուշ Երամեան
maroushyeramian@gmail.com

ՄՈՒՏՔ

Մեծ աղէտի մը առջեւ մարդ նախ ինք իր մէջ կը ցնցուի այնքան զօրաւոր, որ հոգեկան շփոթի կը մատնուի: Ներքին զգացական այդ շփոթէն դուրս գալը ժամանակի կը կարօտի: Իսկ անկէ դուրս գալէ ետք ալ կարիքը կ'ունենայ խորաչափելու աղէտը, զայն «հասկնալի» չափերու վերածելու:

1915ի Աղէտը այնքան մեծ էր, որ վերապրող հայ գրագէտները՝ այդ օրերուն տակաւին մանուկներ, չէին կրցած դուրս գալ այս կրկնակ հանգրուաններէն՝ զգացական ներքին շփոթէն եւ ապրուածը չափել-հասկնալու անկարողութենէն, եւ բնական հետեւանքով մը ինկեր էին լռութեան մէջ: Այս սերունդի գրագէտներէն ոչ ոք կրցած էր ջարդը *գեղարուեստական* գրականութեան վերածել, Կոստան Զարեանէն մինչեւ Շահնուր եւ Շուշանեան կամ Սարաֆեան: Ունեցած ենք Աղէտին *հետեւանքները* մատուցող գեղարուեստական գրականութիւն, ուր ներկայացուած են որբութիւնը, օտար քաղաքներու մէջ անտէր-անտիրական վիճակը եւ ձուլումի վտանգը. բայց ասոնք հետեւանքներն են, ո՛չ՝ Աղէտը ինք:

Այս խօսքս հաստատող երկու օրինակ կրնամ յիշել այստեղ միջազգային գրականութենէն. երբ լեհ-հրեայ վիպագիրին՝ Էտկար Հիլզընրաթին հարց կը տրուի, թէ ինչու՛ իր ողջակիզումը – հոլոքոսթը – ձգած, հայերու ջարդին մասին գրած է *The Story of the Last Thought* վէպին մէջ, վիպագիրին պատասխանը եղեր է. «*Ես այնքան մէջն եմ ու կը մնամ հոլոքոսթին, որը ի՛մս է, եւ որպէս այդ, դժուար յաղթահարելի: Մինչ հայկական ջարդերէն դուրս եմ, հետեւաբար կրնամ վիպականացնել զանոնք*»:

Երկրորդ օրինակս Էլի Վիզէլի *Night* գիրքն է, որ կը փորձէ նկարագրել իր ապրած օրերը, հոլոքոսթի ընթացքին: Կը փորձէ եւ կը ձախողի, որովհետեւ իր բառերը կը մնան մեռած ձուկերու սառնութեամբ, կարծես իրենք եւս սահմռկած՝ գրագէտին ներքին անդոհէն:

Անշուշտ հեռու եմ այսօրուան սուրիական, եւ աւելի խիտ կերպով՝ հալէպեան տագնապը հաւասարումի բերելէ դար մը առաջ կատարուածին հետ: Խորքին մէջ նմանութեան եզր իսկ չկայ:

Եւ արդէն Հալէպէն անմիջապէս երեւցող գրական էջերը կը հաստատեն, որ լռելու փոխարէն - ինչ որ Աղէտին ահաւորութեան չափանիշն է - գիր ունեցած ենք:

Բայց ...

Յակոբ Միքայէլեան - որ իր բեղուն գրիչով անդրադարձած է Հալէպի տագնապին՝ թերթերու թէ հանդէսներու մէջ երեւցած իր քառասունէ աւելի

յօդուածներով, նշմարներով եւ պատմուածքներով, անդրադառնալով նաեւ պատերազմէն ծնած կամ անոր արդիւնքը եղող հոգեվիճակներու - երբ հերթը հասեր էր իր հինգ օրերու առեւանգումը նկարագրելուն՝ «գրեցի՞ր այդ մասին» հարցումիս պատասխաներ էր.

- Գրեցի, բայց չեմ հրատարակած. չեմ հրատարակեր մինչեւ ...
- Մինչեւ ի՞նչ:
- Մինչեւ գեղարուեստական գործի չվերածեմ:

Դժուարութիւն մը զգալի էր իր խօսքերուն տակ, կարծես՝ խոչընդոտ մը յաղթահարելու անկարելիութիւնը:

Սակայն վերջին երկու թէ երեք տարիներուն Հալէպէն լոյս տեսած գրականութիւնը, կարգ մը մտորումներու կը մղէ:

Եթէ մենք, մեր արեան հետ եւ մեր ծիներով ժառանգեր ենք Աղէտի անդոհին հետ նաեւ Վախը, չի՞ կրնար ըլլալ որ անցնող հարիւր տարիներու ընթացքին մեր արեան մէջ կազմաւորուեր է նաեւ «հակադեղ»ը, այդ վախին դէմ դնելու, զայն դիմագրաւելու կամ շրջանցելու միջոցները: Ապա թէ ոչ ինչո՞վ բացատրել կեանքի բուռն եռանդը որ կը շարունակուի այնտեղ, եւ գիրը, որ կը ծաղկի անոր հետ, զարմանալիօրէն նաե՛ւ որպէս գեղարուեստական գրականութիւն:

Քանի մը նշումներ այստեղ.

- Ինքնութեան տագնապը, որ առկայ է աւելի շատ արեւմտեան ոստաններու մէջ ապրող սփիւռքահայ գրագէտներու գործերուն մէջ, եւ որ գրեթէ ամբողջովին կը բացակայի Միջին Արեւելքէն ծնունդ առած բերքին մէջ, այս տագնապի ընթացքին ալ կը բացակայի:
- Ի՛նչ որ կ'արտայայտուի այս քանի մը տարիներու գրականութեան մէջ ափսոսանք է, մեծ, հսկայ ափսոսանքը կեանքերու եւ մշակոյթի մսխումին առջեւ: Ու նաեւ՝ չհասկնալու երեւոյթը, այլ խօսքով՝ ներքին շփոթը, զոր յաղթահարելու համար է նաեւ, որ հալէպահայ գրագէտը գրիչը զէնքի պէս բարձրացուցեր է:
- Երրորդը՝ պատկանելիութեան ապրումին դրսեւորումն է. հարիւր տարին, որ ոչինչ կը համարուի պատմութեան մէջ, ակնթարթ մը միայն, երկար ժամանակ է աղիտահար ժողովուրդի մը կեանքին մէջ: Բայց հարիւրէն շատ աւելի տարիներէ իվեր հայեր ապրած են այս հողերուն վրայ, մեռելներ թաղուած են այստեղ, կեանքեր ծնած ...

«*Հողը մերը չէր, բայց մերը դարձաւ ...*

Լեզուն իմս չէր
Բայց արծագանգը կը հասնէր ունկիս
Հեռու Անիէն արքայէն Գագիկ

Իսկ ցաւը մերն էր սկիզբէն իմս

Խոշտանգուած հողի եւ հեղուած արեան
Յաւը իմս էր զի նոյնն էր նման

Ուրեմն, հակառակ ընկալուած հասկացողութեան, որ ճգնաժամային պահերու կարելի չէ գեղարուեստական գրականութիւն ստեղծել, հալէպահայ գրագէտները կրցան ճգնաժամը արտայայտող փոքր ծաւալի գրականութիւն ստեղծել, ինչպէս՝ օրագրութիւն, պատմուածք, յուշագրութիւն, բանաստեղծութիւն եւ նշմար: Երեւոյթը ինքնին լրիւ յուսալից է, հակառակ անոր որ շատ անյոյս կացութենէ մը ծնունդ կ'առնէ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Պատերազմէն ծնած բանաստեղծութիւնները առաջին անգամ իրենք զիրենք հաւաքաբար ներկայացուցին Հալէպի Զաւարեան Սրահին մէջ կայացած ասմունքի ցերեկոյթին, երբ հինգէն տասնհինգ տարեկան մանուկներ եւ պատանիներ Հալէպի նուիրուած գործեր ասմունքեցին: Այդ գրութիւններուն հեղինակներէն որոշ անուններ անակնկալ էին. անոնք կա՛մ առաջին անգամ էր որ բանաստեղծութիւն կը գրէին (խօսքս որոշ տարիքի անձերու մասին է), կամ ալ իրենք զիրենք չբացայայտած հեղինակներ էին, ինչպէս՝ Գօգօ Տունկեան, որ գեղարուեստական հրատարակուած գործ չունի, կամ՝ Յուշիկ Ղազարեան, որ ծանօթ է որպէս թատերագիր:

Անշուշտ կային նաեւ պատանի հեղինակներ, որոնք իրենց սէրը կ'արտայայտէին քաղաքին եւ անոր շնորհած բարի ու խաղաղ կեանքին հանդէպ. այդ պատանիները կրնան ուռճանալ ու թերեւս օր մը հաստաբուն ծառեր դառնալ, գրական մեր ածուին մէջ:

Լաւ կ'ըլլար հաւանաբար, եթէ ասմունքի այդ ցերեկոյթին հնչած գրութիւնները պրակի մը մէջ հաւաքուէին եւ բաժնուէին հանրութեան. այսօր մեր խօսքը շօշափելի հաստատում մը կ'ունենար:

Բանաստեղծութիւններ լոյս տեսան ոչ միայն *Գանձասար* շաբաթաթերթին, *Բագին* եւ *Կամար* գրական հանդէսներուն մէջ, այլ նաեւ համացանցային հանդէսներու (ինչպէս՝ «Գրական Կամուրջ»ին[1]) նաեւ Դիմատետրի էջերուն մէջ:

ՊԱՏՄՈՒԱԾՔ

Բազմաթիւ պատմուածքներ - Հալէպի պատերազմական վիճակէն ներշնչուած - լոյս տեսած են Սփիւռքի թէ հայաստանեան մամուլին մէջ: Քանի մը օրինակներ կը յիշեմ.

Լալա Մինասեան՝ «Ֆաթիհէ»[2]. Յակոբ Միքայէլեան՝ «Քարանձաւէն Դուրս»[3], «Պատերազմի Մեղեդիներ», «Եւ Պատերազմը կը Շարունակուի». Պերճուհի Աւետեան՝ «Հրաժեշտը»[4]. Մարուշ Երամեան՝ «Ուարթանը»[5],

«Նեխը Արեւին Տակ»[6]. Սոնա Թիթիզեան՝ «Սիրոյ Օրագրութիւն Պատերազմին Մէջ» եւն.:

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծ հետաքրքրութիւն ստեղծած է Լալա Մինասեանի «Սուրիական Օրագրութիւն»ը իր միաժամանակ յուզիչ եւ հետաքրքրական, իրապաշտ եւ ափսոսանքով լեցուն տողերով[7]: Միշտ չէ, որ կարելի կ'ըլլայ ինկող ռումբերու թոհուբոհին եւ իյնալիք ռումբերու անդոհին միջեւ ստեղծել գրականութիւն մը, որ հեղինակին ներաշխարհն ու զինք շրջապատող աշխարհը հաւասարումի բերէ:

Սփիւռքահայ մեծ թիւով թերթեր *Գանձասար* շաբաթաթերթէն կ'արտատպեն Մինասեանի գրութիւնները եւ շատ մեծ թիւով ընթերցողներ կը հետեւին անոնց:

Այնքան ատեն որ Հալէպ կ'ապրէր, Մարուշ Երամեան կը շարունակէր իր «Էջեր Հալէպահայու մը Օրագրէն»ը, որ լոյս կը տեսնէր Քանատայի *Հորիզոն* շաբաթաթերթին մէջ եւ կ'արտատպուէր սփիւռքեան այլ թերթերու կողմէ: Հալէպէն դուրս գալէ ետք, սակայն հեղինակը չ'արտօներ ինքզինքին գրել հալէպահայու առօրեային մասին:

ՀԱՄԱՑԱՆՑ ԵՒ ԴԻՄԱՏԵՏՐ

Շատերու համար թերեւս անլուրջ թուի համացանցին եւ դիմատետրին անդրադառնալ այստեղ: Բայց պէտք է ընդունիլ, որ պատանիներու եւ երիտասարդներու ջախջախիչ մեծամասնութիւնը այնտեղ է: Իսկ մեզ բոլորս կը հետաքրքրէ երիտասարդութիւնը, վաղուան հայ մարդը: Հետեւաբար դիմատետրը շատ լաւ վայր մըն է եւ միջոց՝ երիտասարդութեան բան մը ըսելու, մանաւանդ ըսելու մաքուր լեզուով եւ ճշգրիտ ուղղագրութեամբ: Անշուշտ կայ ահաւորութիւնը լատինատառին: Բայց յարատեւ ու ծրագրուած աշխատանքով կարելի է որոշ արդիւնքներու հասնիլ: Ահա թէ ինչու՛ սկսուած էր պատերազմէն ներշնչուած «Ժխտականներու Դրականները» շարքը՝ կարճ եւ խիտ պատկերներու եւ խոհերու ամէնօրեայ գրառումները:

Դիմատետրի էջերուն հրահրիչ եւ շփոթեցուցիչ գրառումներէն անկախ, կան նաեւ պատերազմական Հալէպէն եկող հետաքրքրական արձագանգներ:

Կ'արժէ որ լրջօրէն օգտագործուի դիմատետրը, հայ երիտասարդին հետ ի՛ր լեզուով խօսելու եւ հասկացողութեան գալու համար:

Այս առանցքին շուրջ կարելի է առանձին եւ երկար խօսիլ, ու թերեւս որոշ մօտեցումներ որդեգրել:

ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Այս ծիրին մէջ միակը Յակոբ Չօլաքեանի յուշագրութիւնն է, Քեսապի երրորդ տեղահանութեան մասին (առաջինը 1909, իսկ երկրորդը՝ 1915)՝ *Քեսապի Երեք Օրերը, 21-23 Մարտ 2014* (Էդիթ Պրինտ), առանձին գրքոյկով մը լոյս տեսած Երեւան, 2014ին:

Շատ հանդարտ գնացքով եւ մանրամասնութիւններով ընթացող պատումը կը տարուբերի քաղցր յուշերու եւ դառն ներկայի նկարագրութիւններուն միջեւ: Քեսապցի ծերեր, որոնք ապրած են Քեսապի երկրորդ տեղահանութիւնը, մէջընդմէջ իրենց մտածումները կ'արտայայտեն. համոզումներ, որոնք իմաստութիւն կը խտացնեն, կեանքին հանդէպ քիչ մը դառն ու քիչ մըն ալ փիլիսոփայական կեցուածքով:

Գիրքը այսօրուան վաւերագրումն է, նորօրեայ պատկերազարդ պատմութիւն հայոց մը:

Վերջընթեր էջին մէջ հեղինակը կ'ըսէ. «*Այլեւս Քեսապ փարբեր աշխարհ մըն է: Հեռու՜ աշխարհ մը: Կարծես մեր մոլորակէն դուրս, անհասանելի, ինչպէս Սասունն ու Վանը*» (էջ 124): Ապա կ'աւելցնէ քանի մը հատուած ետք. «*Ու (մարդիկ պիտի) անդրադառնան, որ այնտեղ՝ «Յո՞ երթաս, ժողովո՛ւրդ» գոռալով՝ կռուիլ, կռուի՛լ, կռուի՛լ հարկաւոր էր, ու առիւծի պէս փապալիլը աւելի լաւ էր քան այս սպասումն ու մաշումը*» (էջ 125):

Ահա՛ թէ ինչու՛ մենք կը լռենք յարգանքով Հալէպ մնացող ժողովուրդին կամքին առջեւ եւ իրենց հետ կը հաւատանք գալիքին:

Գիրքին վերջին էջերուն զետեղուած «Յիշատակարան»ը կը զեկուցէ, որ նոյն թուականի Յունիսին ժողովուրդը կը վերադառնայ իր ազատագրուած գիւղը վերաշինելու եւ հին հողին վրայ նոր կեանք մը յոյսով վերսկսելու:

ՈՐՊԷՍ ՎԵՐՋԱԲԱՆ

Եթէ հաւաքենք պատերազմի ընթացքին երկնուած գրականութիւնը, պիտի տեսնենք թէ բաւական ծաւալուն բերք մը պիտի ունենանք, հաւանաբար քանակով շատ աւելի, քան եղած էր նախորդ տարիներուն:

Նշմարելի է նաեւ, որ գրականութեան ոչ-մօտ մարդիկ, անկախ իրենց տարիքէն, սկսած էին արձանագրել իրենց մտորումներն ու ապրումները: Երէցները ափսոսանք կը պատճառեն, պատանիներն ու երիտասարդները՝ յոյս:

Բայց թէ գրական այս ամբողջ բերքէն ո՞վ պիտի գայ ցորենը յարդէն բաժնելու, ո՞վ պիտի ուզէ քննարկել այդ ամբողջը՝ այլ հարց է:

Իսկ գլխաւորը՝ որքա՞նը պիտի դիմանայ ժամանակին, արդէն ժամանակը ի՛նք պիտի ըսէ:

[1] http://lit-bridge.com :
[2] *Բագին*, Հոկտ.-Դեկտ. 2014, թիւ 4, էջ 10-17:
[3] *Կամար*, թիւ 18, 2013, էջ 44-49:
[4] Նոյն, թիւ 22, 2014, էջ 59-63:
[5] Նոյն, թիւ 22, 2014, էջ 42-47:
[6] *Բագին*, Ապրիլ-Յունիս 2014, էջ 21-37:
[7] Լալա Միսկարեան-Մինասեան, *Սուրիական Օրագրութիւն*, Հրատ. Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի թիւ 83, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 2016:

Syrian-Armenian Literature: Reflecting the War (2012-2015)

(Summary)

Marush Yeramian
maroushyeramian@gmail.com

Nothwithstanding the fact that the Syrian crisis is having a very strong impact on Aleppine Armenian daily community life, the local leadership as well as social and volunteer groups are involved in a daily effort to maintain a flow of life-as-usual.

The paper highlights Aleppine literature which can be given this status of "life-as-usual". Aleppine daily literature has started to reflect war in general and the daily fighting through poetry, short stories, diaries, essays, etc.

Alongside the usual means of publishing materials, namely newspapers, books, etc., the internet and Facebook have been instrumental in giving broad exposure to Aleppine Armenian literature.

ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ. ՀԱՒԱՔԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ (Քեսապի Պարագայ)

Մօրս յիշատակին
Շողիկ Աշըգեան
shogherashekian@yahoo.com

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Պատմութեան ընթացքին Քեսապի բնակչութիւնը տեղահանուած է երեք անգամ. 1909ին, 1915ին եւ 2014ին[1]: Երեք անգամ ալ, այսպէս կամ այնպէս, բնակչութիւնը վերադարձած է իր բնօրրանը:

Առաջին երկուքին մասին լսած եմ կենդանի ձեւով՝ քեսապցի մեծմայրերէ եւ մեծհայրերէ: Աւելի ուշ նաեւ կարդացած եմ այդ դէպքերուն մասին: Իմ մանկութեան եւ պատանութեան անմիջական մարդկային միջավայրը լեցուն եղած է 1909 եւ 1915 տեսած ծերունազարդ մարդոցմով: Անոնք ուղղակիօրէն ապրած էին այդ աղէտները, ու անցնելով անոնց մէջէն հաւաքաբար կրողներն էին դառն յիշողութիւններու: Այդ հաւաքական յիշողութիւնը աննկատ ու անցաւ կերպով կը փոխանցուէր փոքրերուս՝ անոնց պատումներուն միջոցով: Առանց վախ ու սարսափ զգալու, առանց բարդոյթի, նոյնիսկ մեծ հետաքրքրութեամբ մտիկ ըրած ենք 1909ի եւ 1915ի անոնց անձնական կեանքի դրուագները: Վերջիվերջոյ, չէ՞ որ այդ ամէնը պատմութիւն էին, անցեա՛լ: Իրենց ներկայութիւնը կենդանի ապացոյցն էր Քեսապի գոյատեւման, իրենց վերապրումին ու նաեւ յաղթանակին: Իրենք կա՛յին. կային հաւա՛քաբար եւ կ'ապրէին իրենց հարազատ աշխարհագրական միջավայրին մէջ, իրենց Հողին վրայ: Իրենց համար միակ էականը այդ **կեցութիւնն** էր. հաւաքական կեցութիւնը ա՛յն միջավայրին մէջ, որուն հետ կապուած էին հաւաքական յիշողութեամբ: Կեցութիւնը ինքը կեանքն է, եւ կեանքը ինքնին գերագոյն արժէք ըլլալով՝ յաղթանակ է մահուան դէմ: Չարը պարտուած եւ բարին յաղթանակած էր իրենց վերապրումով, բայց նաեւ իրենց տունդարձով: Ա՛յս էր իրենց պատումներուն հիմնական հասարակաց գիծը:

Անոնց պատումի դրուագները ցայսօր վառ են յիշողութեանս մէջ՝ իբրեւ ձայն ու պատկեր, դիմախաղ ու բովանդակութիւն:

Առաջին երկու տեղահանութիւնները բանաւոր պատումի, պատմութեան եւ մշակոյթի միջոցով փոխանցուած են ինծի իբրեւ հաւաքական յիշողութիւն: Երրորդը՝ 2014ինը, անձնական փորձառութիւն մըն է, որ կարդալու եւ սերտելու փոխարէն ապրեցայ հարազատներուս եւ համայն քեսապահայութեան հետ: Այնպիսի տեղահանութիւն մը, որուն նմանատիպ նախաճանաչողութիւնը տեսականօրէն ունէի քանի մը հանգամանքներով՝ իբրեւ քեսապցի, իբրեւ Հայկական Ցեղասպանութեան

հաւաքական յիշողութիւնը կրող հայ ու նաեւ իբրեւ պատմաբան: Լաւապէս կը գիտակցէի, թէ հաւաքականութիւն մը ինչ հարցեր կը դիմագրաւէ տեղահանութենէ մը ետք: Կը բաւէ այդ նիւթին մասին կարդալ 1915ի Ցեղասպանութեան հետեւող առաջին երկու տասնամեակներու Սփիւռքի գաղութներուն կազմաւորման պատմութիւնը: Երբ պատմութիւն կ'ուսումնասիրենք՝ գիտելիքներուն հետ կ'ամբարենք միջնորդուած փորձառութիւն: Որքան խորունկ ըլլայ անցեալի ճանաչողութիւնը, այնքան աւելի հարուստ կ'ըլլայ մեր փորձառութիւնը: Անխռով էի,- եւ ատիկա չէր վրիպեր շուրջիններուս ուշադրութենէն,- գուցէ այդ պատճառով: Բայց նաեւ ա՛յն պատճառով, որ Քեսապի գրեթէ ամբողջ բնակչութիւնը (քիչ բացառութեամբ) - մանուկ, մեծահասակ, ծեր – (բոլորը՝ հարազատներ ու ծանօթներ) ողջ էր՝ ստոյգ վտանգէն ազատած: (Պէտք է ըսեմ որ, նոյն զգացողութիւնը, առաւել կամ նուազ ուժգնութեամբ, ունէր իւրաքանչիւր քեսապցի՝ առանց պատմաբան ըլլալու: Որովհետեւ ինք կա՛ր, գոյութիւն ունէր. եւ այդ էր էականը, բացարձակ էականը: Մնացեալ բոլո'ր պարագաները ենթակայ էին ա՛յդ իրողութեան եւ հետեւաբար՝ յաղթահարելի): «Վեր**ԱՊՐՈՂ**» հաւաքականութիւն մըն էր քեսապցին: Վերապրիլ կը նշանակէ մահուան յաղթած ըլլալ: Միթէ ասիկա իսկական հերոսութիւն չէ՞ր: Զգացական եւ մտածողական մակարդակներու վրայ յաղթողի այս հոգեբանութիւնը ընդհանրական բնոյթ ունենալով՝ ենթակայական գետնի վրայ ներգործօն ուժականութեան անսպառ աղբիւր մը եղաւ թէ՛ ղեկավարին, թէ՛ պարզ անհատին համար, որմէ սնունդ կ'առնէր հաւաքական արժանապատուութիւնը:

Տեղահանութեան երկրորդ օրն էր Լաթաքիա, հարազատներով արդէն տեղաւորուած էինք նոր բնակարանի մէջ, կը պատրաստուէի Ս. Աստուածածին եկեղեցի մեկնիլ՝ գործիս գլուխը ըլլալու, երբ մայրս դիպուկ նկատողութիւն մը ըրաւ. «Պատմութիւն ուսանիլդ քեզ (եւ մեզ) ամէնէն աւելի ա՛յս պարագային պէտք պիտի գայ»: Իրաւացի՞ էր մայրս: Տարօրինակ չէ՞ր որ ե՛ւ հարազատներս, ե՛ւ մտերիմ գործակիցներս, եւ ընդհանրապէս քեսապցիներ նոյնանման նկատողութիւններ կ'ընէին ինծի: Ամէն պարագայի, մօրս խօսքը եղաւ սթափեցնող, յիշեցումները ինծի մտածել տուին եւ օգնեցին որ ամէնօրեայ գործնական աշխատանքներուս ու հեւքոտ սպառումիս մէջ պատմաբանի հայեացքս չկորսնցնեմ ու այդ ակնոցով դիտարկեմ տեղահանուած հաւաքականութիւնն ու անոր իրականութիւնը:

Այդ իրականութիւնը դառն ու դժուար էր. բայց քեսապցիին համար ո՛չ այնքան կենցաղային անբնական պայմաններն էին անտանելին, ո՛չ վաղուան անորոշութիւնը եւ ո՛չ ալ քաղաքական լարուած կացութիւնը, այլ այդ բոլորէն անդին ու ամէնէն առաջ՝ իր **արմատախիլ** եղած ըլլալը: Կորսուած էր բնօրրանը, որ ամէն բանէ առաջ ՀՈՂ էր, որուն կորուստին մրմռացող անլուր **Ցաւ**ն ու մորմոքող **Կարօտ**ը կը սկսէր տեղահանութեան

առաջին օրէն: Անոր անպայման վերադառնալու համոզումով՝ իրեն կը մնար այդ դառն իրականութիւնը լեռնական մարդու բարձր արժանապատուութեամբ կրելու գիտակցութիւն եւ կարողականութիւն ցուցաբերել՝ կենցաղային առօրեայէն մինչեւ քարոզչական մարզ եւ քաղաքական մակարդակ: (Ամէն պարագայի, այս մարզը առանձին ուսումնասիրութեան նիւթ է):

Տեղահանուած քեսապցիներէն առաջ տեսած էի նոյն կացութեան մէջ յայտնուած արցախցիներ (Շահումեանէն ու Մարտակերտէն) Երեւան, երբ ուսանողուհի էի այնտեղ: Բաց երկինքին տակ անոնց հաւաքական ներկայութիւնը սրտաճմլիկ տեսարան կը պարզէր: Անոնցմէ ոմանց սարսափահար դէմքերը տակաւին դրոշմուած կը մնան յիշողութեանս մէջ. յատկապէս՝ կիներունը: Ինչու՞ այդքան խեղճ էին անոնք: Չէ՞ որ վերջիվերջոյ կը գտնուէին հայրենի հողի վրայ: Այն ատեն չէի հասկնար:

Հայոց նոր եւ նորագոյն պատմութեան մէջ գրեթէ մեր բոլոր հողային կորուստներուն պատճառը Թուրքիան է: Անոր պատճառով էր, որ Քեսապ հայաթափուած էր նաեւ այս անգամ: Այս պարագան զայրոյթ եւ ընդվզում կ'առաջացնէր: *«Թուրքը իր թրքութիւնը նորէն ըրաւ»* կ'ըսէին քեսապցիները:

Տարածք եւ ժամանակ հասկացութիւնները անբաժանելի են իրարմէ: Արմատախիլ ըլլալ, չի նշանակեր միայն բնակավայրէ կտրուիլ, այլ մանաւանդ **ժամանակ**էն խզուիլ: Երբ Հող-բնակավայր կը կորսնցնենք անոր հետ կը կորսնցնենք ժամանակ, պատմութիւն եւ մշակոյթ: Վերջին երկուքը «տեղափոխելի» են. տեղահանուած բնակչութիւն մը իր հետ կրնայ «տանիլ» իր պատմութիւնն ու մշակոյթը: Արմատախիլ կացութեան մէջ կը սկսի «նոր ժամանակ» հիւսուիլ, (ոչ առաջինին պէս, բայց անոր նման: Քանի որ նոր ժամանակը, նախկինին շարունակութիւնը չ'ըլլար): Միակ բանը որ չի՛ տեղափոխուիր, կը մնայ անշարժ ու հաստատուն՝ Հո՛ղն է (Բնօրրանը): Ահա թէ ինչու՛, անխուսափելի ձգողական ուժի նման, կը ծնի անոր վերադառնալու ձգտումը....

ՄԵԹՈՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ համախումբ ու կազմակերպուած առօրեան դրական եւ կարեւոր տուեալ մըն էր դիտարկում իրականցնելու համար:

Մարտ 21 Դէպքին յաջորդած երեք ամիսներուն քեսապահայուն տեղահանուած իրավիճակը մնաց ամէնօրեայ տեսադաշտիս մէջ, դիտարկմանս առարկայ: Ամէն օր, առաւօտեան կանուխ ժամերէն մինչեւ ուշ կէս գիշեր պարտականութեանս բերումով եղած եմ ժողովուրդին հետ՝ Եկեղեցւոյ շրջափակէն ներս, ուր ստեղծուած էր «Հոգեւոր Քեսապը»: Շատ յաճախ, նաեւ գիշերած եմ հոն: Եւ կեցութեան անփոփոխ պայմաններուն

մէջ ամբողջ երեք ամիս այնտեղ ե՛ւ ականատեսը ե՛ւ մասնակիցը եղած եմ բո՛լոր անցուդարձերուն:

Այս ուսումնասիրութիւնը սուրիահայ գաղութի մէկ հանրոյթին պատմութեան մէկ երեսը կը փորձէ պեղել՝ քանակականէ աւելի որակական փոքր պատմութեան տեսքով:

Քեսապի պարագան զգայացունց քաղաքական դէպք մըն էր Սուրիոյ տագնապի շրջագիծին մէջ, ինչ որ ապացուցուեցաւ Դէպքէն անմիջապէս ետք տեղական թէ միջազգային լրատուամիջոցներու ցուցաբերած փութաջանութեամբ: (Այս մարզը նոյնպէս առանձին ուսումնասիրութեան նիւթ է): Իսկ համահայկական դիտանկիւնէն՝ Աղէտ էր:

Լրատուամիջոցներու քարոզչական զիկզակումներուն իտես, այդ երեւոյթէն անկախ սակայն, մօտէն իրազեկ ու առնչակից ըլլալով գետնի վրայ ընթացող աշխատանքներուն, առաջին օրէն ինծի համար հարց դարձաւ, թէ Մարտ 21ը եւ անոր յաջորդող օրերը ինչպէ՛ս կը յանձնուին պատմութեան՝ ոչ այնքան իրենց արտաքին շրջագիծով, որքան՝ քեսապահայութեան հետ առչնուած կապով, որուն ուսումնասիրութիւնը կարելի չէ առանց արխիւային նիւթերու հասանելիութեան: Ի յառաջագունէ կ'ընդունիմ որ ներկայ հանգրուանին կարելի չէ ամբողջական խորքով ներկայացնել տեղահանութեան պատմութիւնն ու բանալ անոր բոլոր ծալքերը. առարկայական կերպով վերլուծելով երեւոյթները եւ արժանի ու ճշմարիտ գնահատականը տալ բոլոր անոնց - անհատներ թէ մարմիններ - որոնց վրայ ծանրացած էր ժողովուրդին տիրութիւն ընելու գործը: Տակաւին կանխահաս է հրապարակայնացնել ամէն նիւթ, եւ բարձրացնել ամէն հարց ու անոնց տալ սպառիչ պատասխաններ: Ընդհանրական բնորոշումով, «Երկաթը տաք տաք կը ծեծեն»ը չի վերաբերիր պատմութիւն գրելուն:

Անձնապէս շատ լաւ կը ճանչնամ քեսապցին, անոր հոգեբանութիւնն ու մտածելակերպը: Աւելի՛ն, մէկ առ մէկ կը ճանչնամ բոլորը, այնպէս որ, դիւրաւ կրնայի որոշել, թէ ինչ փոխուած է անոնց մէջ թէ՛ անհատաբար եւ թէ՛ հաւաքաբար: Երեք ամիս ապրելով անոնց հետ՝ խճանկարի նմանողութեամբ կազմած եմ ընդհանուր պատկերը, որ կը փորձեմ ներկայացնել այստեղ:

Այս յօդուածը պատրաստած եմ Դէպքէն մէկ տարի ետք, Մայիս 2015ին, Քեսապ, յատուկ՝ Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին կազմակերպած սուրիահայութեան թեմայով գիտաժողովին ներկայացնելու համար, երբ քեսապցին դժուար այլ աննկուն վերականգնման իր առաջին տարին բոլորած՝ յետահայեաց մօտեցումով կ'անդրադառնար պատահածին՝ զգացական ազդեցութիւնները մասամբ թօթափած: Այս պարագան եւս կարեւոր կը համարեմ: Կ'ուզեմ աւելցնել նաեւ, որ վերջին տասը տարիներուն անընդմիջաբար ապրած եմ Քեսապ, որ ծննդավայրս է, եւ

ուր Սուրիոյ Ճգնաժամի տարիներուն անմասն չեմ մնացած ազգային կեանքին իմ համեստ մասնակցութիւնս բերելէ: Հետեւաբար անոր հաւաքական կեանքին վերաբերող իրադարձութիւններուն քաջածանօթ եմ մօտէն: Ինչ կը վերաբերի տեղահանութեան Դէպքին, հոս կ'արձանագրեմ միայն ա՛յն, ինչ որ ինքզինքիս թոյլատու կը համարեմ: Նիւթը շարադրած եմ հիմնուելով ձեռքիս տակ եղած անտիպ նիւթերու տուեալներուն, դիտարկումներուս եւ ականատես-մասնակիցի անձնական փորձառութեանս վրայ:

Փորձառութեանս եւ դիտարկումներուս խտացած հանրագումարը ներկայացուցած եմ մտախոհական-վերլուծական ենթախորքի վրայ:

Պատմութիւն գրելը պատասխանատու աշխատանք է: Աւելի պատասխանատուութիւն կ'ենթադրէ պզտիկ կամ մեծ իրադարձութիւն մը, ժամանակահատուած մը նորէ նոր պատմութեան յանձնելը:

Այս ուսումնասիրութիւնը պատրաստած ատեն շատ աւելի տագնապած եմ, քան ամբողջ ա՛յն երեք ամիսներուն, զորս անցուցի տեղահանուած հայրենակիցներուս հետ՝ անոնց անհատական եւ հաւաքական մտահոգութիւններն ու տագնապները ի՛մս ընելով: Տագնապած եմ արդա՛րօրէն, բծախնդրութեան եւ պատասխանատուութեան ա՛յն պարտաւորեցնող գիտակցութեամբ, որ գրուած ամէն մէկ նախադասութիւն ըլլայ առարկայական, փաստերով հիմնաւորուած, ճշգրտօրէն համապատասխանէ իրականութեան, հաւատարիմ մնալով պատմաբանի ստորոգելիներուն՝ ճշմարիտն ու ճշգրիտը յանձնել պատմութեան, բայց նոյնքան եւ աւելի՝ որպէսզի հայութեան փոքրիկ, գուցէ եւ աննշան, այս կոտորակին արժանապատուութիւնը, որ այնքան բարձրօրէն պահեց տեղահանութեան եւ անոր յաջորդած երեք ամիսներուն, վիրաւորած չըլլամ դոյզն իսկ մէկ բառով:

Համոզուած եմ: Ժամանակի ընթացքին երբ նոր տուեալներ հրապարակուին, աւելի լոյս կը սփռեն այս ուսումնասիրութեան յատկապէս ա՛յն մասին վրայ, որ կը վերաբերի 2014 Մարտի Քեսապի տեղահանութեան:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Անպայմանօրէն Տեղահանութեան դէպքն ու անոր առնչակից քաղաքական իրադարձութիւնները շարադրելու նպատակը չի հետապնդեր այս ուսումնասիրութիւնը: Ինչպէս կը յուշէ անոր վերնագիրը, զիս հետաքրքրողը եղած է Քեսապի օրինակին ընդմէջէն փորձել քննարկման նիւթ դարձնել **Տեղահանութիւնը**՝ կարգ մը երեսներով, իբրեւ անոր ականատես դարձած, անոր ենթարկուած ու զայն դիտարկած անձ:

Այս ուսումնասիրութիւնը պատրաստած եմ իմ առջեւս դնելով հետեւեալ հարցադրումները՝ անոնց պատասխաններ գտնելու մղումով.

- Փոխներգործութեան առումով. 1915ի պատմական-հաւաքական յիշողութիւնը ի՞նչ աղերսներ կ'ունենայ եւ ինչպէ՞ս կը ներգործէ նման պարագաներուն: (Այս պարագային տեղահանութեան զուգահեռ երեւոյթն է քննարկման առարկան):
- Իբրեւ Արարք. Տեղահանութիւնը ի՞նչ ազդեցութիւն կ'ունենայ հաւաքականութեան մը վրայ, եւ ան ի՞նչ միջոցներով կը յաղթահարէ զայն:
- Ազգային ռազմավարութեան եւ պահանջատիրութեան դիտանկիւնէն. քեսապցիին համար Մարտ 21ին իսկ ակնյայտ էր Թուրքիոյ զինուորական գործօն մասնակցութիւնը, հետեւաբար նաեւ պատասխանատուութիւնը, Քեսապի տեղահանութեան մէջ: Քեսապահայութեան այս կենսափորձը հայութեան հաւաքական կեանքին մէջ նկատի առնուելու չափ տեղ կը գրաւէ՞, եւ եթէ կը գրաւէ՝ ի՞նչ հարցադրումներ կը ստեղծէ, կամ ի՞նչ դասեր կը պարունակէ, թէ՞ իբրեւ տեղայնական եւ ոչ-համընդհանրական պարագայ պիտի մնայ Քեսապի տարեգրութեան եւ միայն քեսապցիին յիշողութեան մէջ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Փորձագիտական առումով այս ուսումնասիրութեան մասին, յատկապէս անոր մէջ տեղ գտած տուեալներու պարագային -իրե՛նց տեսակէտերը արտայայտած են եւ ճշտումներ կատարած քեսապցի ազգայիններ, որոնք Քեսապի եւ Լաթաքիոյ մէջ քեսապահայութեան վերաբերող տարբեր բնոյթի աշխատանքներուն մասնակցութիւն ունեցած են:

ՔԵՍԱՊԻ ԵՐՐՈՐԴ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

1909ի, 1915ի, Եւ 2014ի Տեղահանութիւններուն Նմանութիւնները

Բացի պատճառ-հետեւանք-վերջնական արդիւնք համանմանութենէն, երեք տեղահանութիւններն այլ հանգիտութիւններ չունին: Արդարեւ, երեք տեղահանութիւններուն ալ պատասխանատուն Թուրքիոյ պետութիւնն է (օսմանեան եւ հանրապետական): Առաջին երկուքի պարագային՝ ուղղակիօրէն. (քեսապցին տեղահանուած է իբրեւ Օսմանեան Կայսրութեան քաղաքացի): Երրորդ պարագային՝ միջնորդուած ձեւով. Թուրքիա, օգտագործելով Սուրիոյ տագնապն ու պատերազմական վիճակը ահաբեկիչներուն առջեւ բացաւ ամբողջ սահմանագիծը, զինուորական գործողութիւնները ղեկավարեց ու հովանաւորեց անոնց ներխուժումը Քեսապ՝ խախտելով իր եւ Սուրիոյ միջեւ կնքուած սահմաններու ապահովութեան համաձայնագիրը[2]: Երեք պարագաներուն ալ Քեսապ ամբողջութեամբ իր բնիկ տարրէն պարպուած է: Իսկ վերջնական արդիւնքի առումով, երեք պարագաներուն ալ քեսապցին

վերադարձած է իր բնակավայրը՝ 1915ին կորսնցնելով իր ընդհանուր թիւին 2/3ը[33]:

Քեսապցիին հաւաքական յիշողութիւնը այս երեք հանգիտութիւններուն վրայ սեւեռուած մնաց:

ՔԵՍԱՊԸ 2011-14 ՄԱՐՏ

2011ին Սուրիոյ տագնապին սկսելէն շատ չանցած, Քեսապի՝ ազգային-եկեղեցական մարմինները, սկսան շրջանին մէջ ստեղծուած տնտեսական, ծառայողական եւ ապահովական հարցերը դիմակայելու աշխատանքներ տանիլ: Ամէնէն հրատապ հարցը Ժողովուրդին անվտանգութիւնն էր, որ կը բխէր Քեսապի՝ Թուրքիոյ սահմանային շրջան մը ըլլալէն: Քեսապի սպառնացող հաւանական վտանգը կրնար գալ թրքական սահմանէն՝ հաշուի առնելով Թուրքիոյ քաղաքականութեան կտրուկ փոփոխութիւնը Սուրիոյ իշխանութեան (ըստ էութեան՝ պետականութեան) նկատմամբ, որ պետական ջերմ բարեկամութեան կարճ շրջանէ մը ետք կը ստանար դրդիչ եւ ժխտական բնոյթ: Քեսապցիին մտահոգութիւնը աւելի կը սրէր Թուրքիոյ ժխտական քաղաքականութեան աստիճանական կարծրացումին զուգընթաց:

Քաղաքական կացութենէն անկախ, կային նաեւ 1909ի եւ 1915ի տեղահանութիւններուն պատմական յիշողութիւնն ու փորձառութիւնը, որոնք կը յուշէին, թէ պէտք է զգօն ըլլալ: Այնպէս որ, երբ տակաւին Քեսապ խաղաղ էր, Գարատաշ գիւղէն մինչեւ Տիւզաղաճ գիւղ քեսապահայեաց թրքական ամբողջ սահմանագիծը Քեսապի եւ գիւղերու տղամարդոց կողմէ գիշերէն արշալոյս աչալուրջ հսկողութեան տակ առնուեցաւ՝ առանց ցուցական զինեալ երեւոյթներու: Հսկողութիւն կատարող տղամարդոց մեծամասնութիւնը 3-4 տարի պարտադիր զինուորութեան օրէնքով ծառայած էր սուրիական բանակին մէջ, այնպէս որ ունէր անհրաժեշտ եւ բաւականաչափ զինուորական գիտելիք: Ասկէ անկախ, քեսապցի տղամարդը հարազատ զաւակը ըլլալով իր բնական միջավայրին՝ շատ լաւ գիտէ աշխարհագրական բոլոր յարմարութիւնները՝ նման գործի համար:

Սուրիահայ գաղութի ազգային-եկեղեցական կեանքի ղեկավարման կեդրոնը Հալէպն է: Կազմակերպական կառոյցի տեսակէտէն, ինչպէս Սուրիոյ միւս քաղաքները, Քեսապի ալ հայ համայնքները, ազգային կառոյցներն ու միութիւնները կը ղեկավարուին Հալէպէն: Այնպէս որ Քեսապ կը հետեւէր Սուրիոյ տագնապին գծով Հալէպի որդեգրած ուղղութեան, թէեւ երկրի բնակչագրական քարտէսին վրայ կը գտնուէր Հալէպէն տարբեր գօտիի մէջ: Սուրիահայութեան պաշտօնական դիրքորոշումը այս էր. պաշտօնապէս հակադիր ճակատներէն ոչ մէկուն կողմ ըլլալ: Այս քաղաքականութիւնը, որ կը բխէր գաղութի անվտանգութիւնը ապահովելու իրողական կացութեան հրամայականէն,

կը վայելէր Հայաստանի պետութեան եւ համայն հայութեան ամբողջական զօրակցութիւնը:

Սուրիոյ տարածքին, երբ տագնապը սկսաւ թէժանալ՝ Քեսապի մէջ թափ տրուեցաւ յարաբերական աշխատանքներուն:

Քեսապէն ոչ-շատ հեռու կառավարութեան ընդդիմադիր հիմնական տարրը թուրքմէններն էին, որոնք կը սկսէին համարձակ դառնալ՝ անմիջականօրէն Թուրքիոյ քաղաքական եւ քարոզչութեան ազդեցութեան տակ՝ անոր զօրակցութիւնը ունենալով: Քեսապի հանդէպ՝ մինչ այդ իրենց թաքուն նկրտումները, կը սկսէին բացայայտօրէն արտայայտել: Երբ անոնք Ազատ Բանակին, Ժապհաթ Նուսրային եւ նման այլ ընդդիմադիր զինեալ խմբաւորումներուն միացան ու անոնց հետ սկսան կողք կողքի կռուիլ, Քեսապի ապահովութեան համար հրամայական նկատուեցաւ պետութենէն զինուորական անմիջական աջակցութիւն ապահովել: Քեսապի պաշտօնական այդ խնդրանքին ընդառաջելով՝ պետութիւնը շրջանին մէջ տեղակայեց պետական բանակի փոքր զօրագունդ մը: Ազգային մարմինները քաղաքապետարանի միջոցաւ, իրենց հնարաւորութիւններուն առաւելագոյն չափով օժանդակեցին անոր: Պետական բանակի զօրագունդը կը վայելէր քեսապահայութեան ամբողջական զօրակցութիւնը. անոր թիկունքը վստահելի, ապահով ու ամուր էր:

Մէկ կողմէ բանակին ներկայութիւնը, միւս կողմէ քեսապահայերուն ամէնօրեայ հերթապահութիւնը ժողովուրդին մօտ ապահովութեան զգացումը աւելիով ամրապնդեցին:

Քեսապի մէջ առաջին հրթիռները ինկան 25 Դեկտեմբեր 2011ին, կաթողիկէ համայնքին Ս. Ծննդեան օրը: Քեսապցիները ասիկա նկատեցին ազդանշան մը յատուկ Քեսապի ուղղուած:

Հետզհետէ բացայայտ կը դառնար Քեսապը «անջատ գօտիի» վերածելու Թուրքիոյ ախորժակը:

2012ի ամառէն աշուն, զինեալ խմբաւորումներու եւ ահաբեկիչներուն թափանցումը կանխարգիլելու համար, իշխանութեան կողմէ շրջանի անտառները հրդեհի տրուեցան: Քեսապցիները հսկեցին իրենց պարտէզներուն, որպէսզի հրոյ ճարակ չդառնան:

25 Յուլիս 2012ին Հալէպի մէջ կազմուեցաւ Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Մարմինը: Տարուան վերջը, ինչպէս Սուրիոյ հայաշատ այլ քաղաքներուն մէջ, Քեսապի մէջ ալ կազմուեցաւ նմանատիպ կազմով անոր Գործադիր Մարմինը, որ մինչեւ 21 Մարտ 2014 օժանդակեց Հալէպէն, Եագուպիայէն եւ Ռաքքայէն Քեսապ ապաստանած հայ ընտանիքներուն: Ի դէպ, այդ շրջաններէն Քեսապ ապաստանած կարիքաւոր ընտանիքները, եկեղեցական-ազգային մարմիններու կարգադրութեամբ տեղաւորուեցան ազգապատկան տուներու մէջ: Անոնցմէ ստուար թիւ մը քեսապցիները ձրիաբար տրամադրեցին իրենց

վարձու բնակարանները: Յուլիս 2013էն, ամսական հերթականութեամբ, շուրջ հարիւր ընտանիքներու սկսաւ պարէն բաժնուիլ: Նիւթական օժանդակութիւն տրուեցաւ Քեսապի հայկական դպրոցներուն:

2012 Յուլիսէն զինեալ ընդդիմադիրներու զինուորական յառաջխաղացքով կացութիւնը աւելի լարուեցաւ: Ժողովուրդի ապահովութիւնը ուղղակի մարտահրաւէր դարձաւ: Հետեւաբար, ճիգերը կեդրոնացուեցան այդ ուղղութեամբ: Օգոստոսի սկիզբը փակուեցաւ Քեսապը Լաթաքիոյ կապող գլխաւոր ճամփան: Զինեալ ընդդիմադիրներու կողմէ կատարուեցան յաճախակի փորձեր՝ կտրելու Լաթաքիա-Պասիթ ճամփան, որ Քեսապը Լաթաքիոյ կապող միակ ճամփան մնացած էր:

Դեռեւս 2012ին, վատ օրերու հաւանականութիւնը կանխատեսելով, օրուան հրատապ խնդիրներու օրակարգով կազմակերպուեցան միջհամայնքային եւ համաքեսապցիական խորհրդակցական հանդիպումներ: Անոնցմէ ոմանց մասնակցելու հրաւիրուեցան Քեսապ բնակող ոչ-հայ տարրի երեւելիներ եւս: Այդ հանդիպումներուն բոլորն ալ համաձայն էին մարտահրաւէրները միասնաբար դիմագրաւելու սկզբունքին, սակայն կային նաեւ որոշ վերապահութիւններ տարուող աշխատանքներուն գծով: Քեսապը մէկ մեծ ընտանիք է, ուր կարելի չէ բաժանարար գիծեր քաշել համայնքային եւ գաղափարական տարբերութիւններու վրայ գրաւ դնելով, թէկուզ եթէ նման բան փափաքողներ իսկ ըլլային: Բոլորին համար գլխաւոր հարցը Քեսապի ժողովուրդին անվտանգութիւնն էր, որ սակարկելի չէր:

Անընդհատ կը շարունակուէր գիշերէն մինչեւ առաւօտ ամէնօրեայ հերթապահութեան դրութիւնը: Տարբեր աղբիւրներէ կը հաւաքուէին հակառակորդներու մասին տեղեկութիւններ: Հսկող տղաները իրենց անթել հեռախօսներու միջոցով «կը լրտեսէին» հակառակորդը ին մտադրութիւններն ու շարժումները: Կը շարունակուէր բանակի զօրագունդին եւ պետական գրասենեակներուն հետ գործակցութիւնը: Ժողովուրդին մօտ խուճապ չկար: Իսկ հաւաքաբար Քեսապը լքելով այլ տեղ կայք հաստատելու մտադրութիւն՝ բնաւ: Նոյնիսկ՝ երբ խաղաղ ցոյցերէն ետք զինեալ բախումները հասան Լաթաքիոյ հիւսիսը՝ Քեսապի մատոյցներուն, երբ հրթիռակոծումները յաճախակի դարձան, երբ ստոյգ վտանգի պատճառով մէկէ աւելի անգամ հարկ եղաւ պարպել Տուզաղաճ գիւղի բնակչութիւնը:

Պատահեցան դէպքեր, երբ անակնակալօրէն, անհիմն կերպով կը տարածայնուէր Թուրքիոյ կողմէ յարձակումի մասին եւ Լաթաքիա կը տեղափոխուէին սակաւաթիւ ընտանիքներ, որոնք հոն սեփական բնակարան եւ կամ մօտիկ ազգական ունէին:

21 Մայիս 2013ին Թուրքիա գոցեց իր սահմանը Սուրիոյ հետ: Փակուեցաւ նաեւ Քեսապի սահմանադուռը: Ընդդիմադիր զինեալները

սկսան յարձակումներ գործել Լաթաքիոյ հիւսիսային շրջաններուն վրայ՝ պետական անցարգելներ թիրախ դարձնելով, համազարկի տակ առնելով եւ ռմբահարելով կառավարական ուժերու հակակշռին տակ գտնուող Քեսապի մօտակայ շրջաններ: Մայիս 29ին թրքական ուղղաթիռ մը ցածէն թռիչք կը կատարէր սահմանագիծի ամբողջ երկայնքով: 23 Յուլիսին, Քեսապ երկրորդ անգամ կը հրթիռակոծուէր: Հինգ հրթիռներ կ'իյնային տարբեր գիւղերու բաց տարածքներուն վրայ:

Հրթիռակոծումի դէպքերը դարձան յաճախակի: Աւելի մտահոգիչը սակայն, Լաթաքիոյ Նահանգի հիւսիսային գօտիին մէջ ընթացող զինուորական իրադարձութիւններն էին: Պատասխանատու մարդիկ, յատկապէս մօտէն կը հետեւէին անոնց զարգացումներուն: Ժողովուրդը վարժուած էր պայթիւններու ձայներուն: Տղամարդիկ հոգեպէս պինդ էին: Անոնք առանց ընկրկումի, կազմ ու պատրաստ, ոտքի ելան, երբ ընդդիմադիր զինեալները թրքական սահմանագիծէն Սեւ Աղբիւրի ուղղութեամբ փորձեցին Քեսապ ներխուժել, սակայն, չթափանցած՝ ետ քաշուեցան:

Երկու հաւանականութիւններ հաշուի մէջ էին, եւ նկատի առնուած. Թուրքիա սահմանը բանալով ահաբեկիչները ներս մղելու հաւանականութիւնը եւ շրջափակման մէջ իյնալու վտանգը:

Ժողովուրդը ի՛նք կը խօսէր այս երկու հաւանական վտանգներուն մասին եւ պատահելու պարագային իր ընելիքներուն դիպաշար կը հիւսէր:

Կը մթերուէին բաւականաչափ պարէն, դեղօրայք եւ այլ պարագաներ: Սպառնալից վտանգի պարագային կիներն ու մանուկները ապահով վայր պիտի տեղափոխուէին: Միութիւնները ցանկագրած էին իրենց գոյքերը:

Նպատակայարմար տղամարդիկ ապահովուած էին ինքնապաշտպանական թեթեւ զէնքերով: Բայց աչքառու զինեալ երեւոյթներ չկային: Քեսապցիները սովորական կերպով կը զբաղէին իրենց առօրեայ գործերով: Քեսապ բնակող ալեւի տարրը անջատաբար զինուած էր: Քեսապցիներէն ոմանք զէնք ձեռք բերած էին անձնական միջոցներով:

2011էն դադրեցաւ զբօսաշրջութենէն եկամուտ ապահովելու շատ մը ընտանիքներու միակ ապրուստի միջոցը:

2013ին Քեսապի տնտեսական վիճակը ծանր էր. կարկուտը, աւելի կանուխ՝ գարնան յորդառատ անձրեւները պատճառ դարձած էին, որ պտղատու ծառերը համարեա բերք չտան: Երիտասարդութեան կարեւոր տոկոս մը առժամաբար լքեց շրջանը, մեկնեցաւ Պէյրութ եւ ՀՀ՝ ուսանելու կամ գործ ճարելու մտադրութեամբ:

Հիմնական առաջադրանքը կը մնար վտանգի պարագային ժողովուրդը փրկել՝ նուազագոյն կորուստով: Ամէն պարագայի, Գարատուրան գիւղէն մինչեւ Լեղի Ջուր երկարող պետական սահմանագիծ մը պաշտապնելը, Թուրքիոյ զինուորական բացայայտ

մասնակցութեամբ Մարտ 21ի տարողութեամբ յարձակում մը կասեցնելը կամ ետ մղելը, միայն կանոնաւոր բանակ մը կրնար: Ինչ կը վերաբերի քեսապահայութեան՝ ան իր ունեցած մարդկային կարողութիւններով եւ նիւթական կարելիութիւններով ամուր կանգնած էր օրինաւոր բանակի կողքին եւ գործնապէս զօրավիգ էր անոր:

21 ՄԱՐՏ 2014Ի ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

Նախօրեակին

Զանց կ'առնեմ զինուորական գործողութիւններու ներկայացումը: Մնալով ուսումնասիրութեան վերնագրի թելադրած շրջագիծին մէջ, սերտելով ձեռքիս տակ եղած անտիպ նիւթեր, հիմնուելով ազգային մարմիններու հաշուետու մարդոց եւ պատասխանատու անձնաւորութիւններու պատումներուն վրայ, հոս կ'արձանագրեմ հետեւեալը.

21 Մարտին նախորդած օրերուն, տարածայնուած է, թէ Քեսապի վրայ յարձակում տեղի պիտի ունենայ թրքական սահմանէն: Նոյն օրերուն ազգային մարմիններու հաշուետու հսկողութիւն կատարող խմբակները հետեւած են Թուրքիոյ սահմանագիծին վրայ մարդկային կուտակումներուն եւ տեղեակ պահած պետական մարմինները:

- Հինգշաբթի, Մարտ 20ի ուշ երեկոյեան, հայկական կողմի պատասխանատուները իրենց ունեցած յարաբերական կապերու միջոցով իմացած են, որ ա՛յդ գիշեր յարձակում տեղի պիտի ունենայ: Հակառակ անոր որ ատկէ առաջ նման լուրեր սուտ ելած են, քեսապահայութեան ապահովութեան հսկող հայ տղոց պատուիրուած է կազմ ու պատրաստ վիճակի մէջ գտնուիլ եւ խստացնել զգօնութիւնն ու աչալուրջ հսկողութիւնը: Մարտ 20ի գիշեր 21ի առաւօտուն, թրքական սահմանագիծին վրայ անոնք նկատած են մարդկային լուրջ կուտակումներ՝ Քեսապի վերեւի սահմանգիծին վրայ յատկապէս:

Ուրբաթ, 21 Մարտ

Ուրբաթ, կանուխ առաւօտուն, Թուրքիոյ հողերէն Քեսապի վրայ հրթիռակոծումի եւ հրասանդերու տարափը իրողապէս ազդանշան մը եղած է, որ կացութիւնը լուրջ է, եւ ինչ որ կը պատահի Քեսապը իր գիւղերով հրթիռակոծելու դէպք չէ միայն, այլ համընդհանուր յարձակումի մը նախասկիզբը: Զօրացնող այլ փաստ մը եղած է Քեսապի վերեւ տեղի ունեցած պատահական փոխհրացանաձգութիւնը՝ մէկ կողմէ ժողովրդային պաշտպանութեան հայ տղոց փոքր խմբակի մը եւ պետական գաղտնի սպասարկութեան ու Քեսապի *Մուտիր ալ Նահիյէ*ի, միւս կողմէ գրոհայիններու միջեւ: Անոնք նպատակ ունեցած են կտրել Քեսապէն ելքի ճամփաները եւ ժողովուրդը պատանդ պահել:

Հրթիռակոծման եւ հրասանդերու Քեսապի վրայ իյնալու եւ զինուորական առաջին գործողութիւններուն զուգընթաց, քեսապցի պատասխանատուներ անհրաժեշտ նկատած են մանուկներուն ու կիներուն տեղափոխումը: Ամէնէն ուշ, դուրս բերուած են էքիզօլուքցիները, Ուրբաթ յետմիջօրէին:

Հսկող տղաները իրենց դիրքերէն, կապի մէջ եղած են իրենց ընտանիքներուն հետ՝ անոնց պէտք եղած թելադրութիւնները տալով: Քեսապի եւ գիւղերու բնակիչները լուր տուած են այլ գիւղերու իրենց հարազատներուն: Լրատուամիջոցներէն Քեսապի վրայ համընդհանուր յարձակման մասին լսած ըլլալով՝ նոյնիսկ Արաբական Միացեալ Էմիրութենէն, հեռաւոր Քանատայէն հեռաձայնողները իրենց հարազատներուն պատուիրած են առանց ուշանալու դուրս գալ Քեսապէն:

Պատասխանատու քեսապահայեր ընթացող զինուորական իրադարձութիւններուն շուրջ խորհրդակցած են ընելիքներու մասին եւ համախորհուրդ որոշ գործողութիւններ կատարած:

Հսկող տղաները եւ պատասխանատու անձնաւորութիւններ օգնած են բանակայիններուն: Ինչպէս՝ զանոնք լեռնային կածաններէ առաջնորդած, առաջարկներ կատարած, հակառակորդին հաղորդակացութիւնները թարգմանած, տեղէ տեղ բանակայիններ եւ վիրաւորներ փոխադրած եւն.: Հակակշռի տակ առնուած են հիւսիսէն եւ հիւսիս արեւմուքէն Քեսապ մուտք գործելու արահետները եւ գրոհայինները ետ մղուած են անկէ: Նոյնպէս ձախողուած է Վարի Պաղճաղազ գիւղէն Քեսապ-Լաթաքիա տանող միակ ճամփան կտրելու գրոհայիններու մէկ ծրագիրը[4]

Ուրբաթ, ամբողջ սահմանագիծի երկայնքին՝ Քեսապէն Լեղի Ջուր ռազմագիծին վրայ ներխուժման բախումներ արձանագրուած են: Ուրբաթ կէսօրէ առաջ միայն գրաւուած է Քեսապի վերեւ գտնուող սուրիական սահմանակէտը, սակայն կէսօրէ ետք վերգրաւուած է բանակին կողմէ: Գրաւուած է Սեւ Աղբիւրի միայն սահմանակէտը եւ երկու տուն: Բայց ներխուժողները Ուրբաթ օր չեն կրցած Սեւ Աղբիւրի գիծը ճեղքել ու մտնել Քեսապ:

Բանակը բուռն կերպով դիմադրած է: Սակայն Թուրքիոյ հողերէն իր զրահամեքենաներուն ոչնչացումով տկարացած է իր դիմադրական կարողութիւնը:

Քեսապահայ ընտանիքներու շատերու ինքնաշարժ ունենալը մեծապէս արագացուցած է ժողովուրդին դուրս գալը, ինչ որ թեթեւցուցած է հսկող տղոց աշխատանքները՝ աւելի հանգիստ սրտով գետնի վրայ հետեւելու զինուորական իրադարձութիւններուն:

Նպատակայարմար տղամարդիկը ուրբաթ գիշեր մնացած են Քեսապ, ամէն մարդ իր շրջանին մէջ՝ Էսկիւրան, Տիւզաղաճ, Էքիզօլուք, Քարատաշ.... եւ շարունակած են հետեւիլ զինուորական իրադարձութիւններու ընթացքին:

Շաբաթ, 22 Մարտ

Շաբաթ առտու բաւական թիւով ընտանիքներ Լաթաքիայէն վերադարձած են իրենց բնակավայրերը. ոմանք կրցած են երթալ իրենց տուները, ոմանք՝ ոչ: Մինչեւ կէսօր եղած է շատ խաղաղ: Կէսօրուան մօտ մէկ անգամէն բռնկած է ամբողջ սահմանագիծը: Գրոհայինները Քեսապ մտած են սահմանադուռէն-Լեղի Ջուր երկարող գիծէն. Տուզաղաճէն ճեղքած են սուրիական պաշտպանական գիծը եւ վարէն վեր սկսած են բարձրանալ Էքիզօլուք՝ կտրելու համար ճամփան այդ կողմէն:

Այդ վերջին գիծին վրայ, Էքիզօլուքի կողմը, բանակի քաշուելէն ետք, հսկող տղաներ մնացած են դիրքի վրայ՝ յարձակողներուն դիմաց, մինչեւ որ իրենց հեռաձայնով փոխանցուած է, թէ ժողովուրդը արդէն անցած է վտանգի գօտիէն եւ կրնան քաշուիլ:

Ներխուժումը Թուրքիոյ կողմէն ըլլալով՝ յատկապէս սահմանագօտիին մօտիկ գիւղերու (Սեւ Աղբիւր, Էսկիւրան, Տիւզաղաճ) բնակչութիւնը առանց տնտնալու արագօրէն վտանգի գօտիէն դուրս եկած է: Միւս գիւղերու բնակիչները, յատկապէս Էքիզօլուքցիները ունեցած են բաւարար ժամանակ իրենց հետ առնելու կարեւոր ամէն բան, մանաւանդ որ սեփական ինքնաշարժներ ունէին: Բայց քանի որ փախուստի նպատակ չեն ունեցած, այլ միայն վտանգի գօտիէն հեռանալու ու աւելի ապահով վայր տեղափոխուելու եւ մանաւանդ որ բոլոր տղամարդիկը կը մնային գիւղ, չեն մտածած գէթ անհրաժեշտ եւ կարեւորագոյն բաներ իրենց հետ առնել:

Եղած են ընտանիքներ, որոնք իրենց ինքնաշարժներով ուղղակի քշած են Լաթաքիա, բայց շատերը նախ մնացած են Էքիզօլուք, ապա Պաղճաղազ, եւ անկէ վար գտնուող ոչ-հայկական գիւղեր:

Հրթիռակոծումէն աւելի վտանգալից եղած են արձակազէնները:

Հակառակ հսկող տղոց պատասխանատուներու բազմիցս խնդրանքներուն, Քեսապէն դուրս, անոր արեւմուտքի մատոյցներուն տեղակայուած թնդանօթները ոչ մէկ արկ արձակած են ներխուժողներուն ուղղութեամբ:

Միայնակեաց ծերերէն շատեր չեն ուզած դուրս գալ իրենց տուներէն, հակառակ եղած պնդումներուն: Իրենց զաւակներուն հետ ապրող ծերերը, իրենց տնեցիներուն գրեթէ բռնի ստիպումով դուրս եկած են տուներէն: Մտածուած է բոլոր ծերերուն մասին: Ոմանք կարելի չէ եղած դուրս բերել զինուորական գործողութիւններու արագ զարգացումին պատճառով:

Հսկող տղոց արթնամտութեան, արագ կողմնորոշումին եւ գործելուն շնորհիւ է որ ժողովուրդը կրցած է դուրս գալ հակառակորդի աքցանին մէջէն: Պահ մը պատկերացնենք, ի՛նչ կրնար պատահիլ, եթէ հսկող տղաները այդ գիշեր իրենց գիւղերուն պահպանութիւն ըրած չըլլային:

Ազգային պատկան մարմիններ տեղեակ պահած են Լաթաքիոյ համապատասխան մարմինները կացութեան մասին եւ անոնց թելադրած,

որ Քեսապի ժողովուրդը ընդունելու եւ անոնց տեղ յատկացնելու պատրաստութիւն տեսնեն:

Քեսապէն վերջին դուրս ելլողները (բացառութեամբ այն քանի մը քեսապցիներուն, որոնք լեռնային ճամփայով հետիոտն հասած են Պաղճաղազ), եղած են հսկող տղաները իրենց կարգ մը պատասխանատուներով, իրենց հետ ունենալով այն ընտանիքները, որոնք Շաբաթ առտու Քեսապ բարձրացած էին իրենց տուները վերադառնալու մտադրութեամբ: Իսկ Կիրակի առտու Քեսապէն եւ Գարատուրանէն քանի մը պարզ գիւղացի մարդիկ - վերջին մնացողները - հետիոտն դուրս եկած են լեռնային կածաններով՝ բռնելով Լաթաքիոյ ճամփան:

Լաթաքիոյ մէջ ալ շարունակուած են յարաբերական նախկին կապերն ու աշխատանքները՝ Քեսապի հարցով: Այնպէս չէ որ տեղահանութեամբ վերջ գտած է Քեսապի հետ կապուած ամէն բան:

Այդ երկու օրերուն Քեսապի հսկող բոլոր տղաները, առանց բացառութեան, ամբողջական զօրաշարժի մէջ եղած են: Անոնց մէջ յուսաբեկ կամ դասալիք մարդ չէ եղած: Անոնք իրենց դիրքերէն հետեւած են զինուորական իրադարձութիւններուն եւ կողմնորոշուած ըստ անոնց զարգացումներուն:

Ազգային պատասխանատուներ կապի մէջ եղած են Հալէպի հետ ու տեղն ու տեղը փոխանցած, թէ ինչ կը կատարուի Քեսապի մէջ եւ ստացած համապատասխան թելադրութիւններ:

Անշուշտ զինուորական փորձագէտ մասնագէտներու գործն է գնահատականը տալ Մարտ 21-22 զինուորական իրադարձութիւններուն: Թէ ի՞նչ պատահեցաւ այդ երկու օրերուն եւ ինչպէ՞ս պատահեցաւ: Կարելի՞ էր, թէ՞ կարելի չէր առկայ զինուորական հնարաւորութիւններով՝ կասեցնել ներխուժումը:

Ամէն պարագայի, այս ուսումնասիրութեան շրջագիծին մէջ մեզ հետաքրքրողը քեսապահայութիւնն է: Ինչ որ ցոյց կու տան 21-22 Մարտի երկու օրերու վերոնշուած ոչ-ամբողջական փաստերը՝ Քեսապը լքելու նպատակ չէ եղած, եւ ոչ ալ դասալքութեամբ փախուստի դիմելու մտադրութիւն: Հետեւաբար, ոչ մէկ ձեւով կարելի է մեղադրել քեսապահայութիւնը եւ կամ անոր իսկական ներկայացուցիչները՝ դասալքութեան մէջ: Նման մօտեցում կրնան ունենալ միամիտ, ռազմագիտական բաւարար գիտելիքներ չունեցող, զինուորական գործերէ գլուխ չհանող, իրերու եւ իրողութիւններու խորքին անտեղեակ, բայց մանաւանդ սուրիահայութեան որդեգրած քաղաքական կեցուածքին անծանօթ եւ կամ այդ կեցուածքը այս կամ այն դրդումով կամ միտումով չհասկնալ ձեւացնող, չընդունող քաղաքական տհաս մտածողութեան տէր մարդիկ միայն:

21 Մարտը աղէտ է՝ Թուրքիոյ պատճառով Քեսապի հայաթափման արդիւնքով: Ան ցնցեց եւ ոտքի հանեց ամբողջ հայաշխարհը: Նոյն ատեն հերոսական դրուագ է յարձակողներու աքցանէն ժողովուրդին գրեթէ ամբողջութեամբ անվնաս դուրս գալու իրողութեամբ: (Այս մասին հրապարակաւ, եկեղեցիներու խորաններէն արտայայտուեցան տեղահանուած ժողովուրդին իրենց զօրակցութիւնը յայտնելու համար Լաթաքիա ժամանած եւ ժողովուրդին վերադարձէն ետք Քեսապ այցելած թէ՛ կրօնական առաջնորդներ, թէ՛ ազգայիններ, թէ՛ հայրենի եւ թէ՛ սուրիացի պետական դէմքեր, որոնք քաջածանօթ էին Սուրիոյ այլ շրջաններու մէջ անզէն ժողովուրդին վրայ ահաբեկչական նման յարձակումներուն արդիւնքին):

Քեսապցիները հազիւ Լաթաքիա հասած - դեռեւս ցնցումի մէջ եւ արմատախիլ - կը կրկնէին. «Յաղթեցինք: Թուրքին ուզածը չեղաւ»: Զիրար մխիթարելու խօսք չէր ասիկա, այլ թուրքին կողմէ «ջարդուած հայու» պատմական թանձր ու սեւ յիշողութեան հակառակ դրական փաստարկ:

ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ. ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ

Ֆիզիքական երեւոյթներ

Դէպքը ցնցած էր քեսապցիները (ներսը թէ դուրսը): Ոմանց մօտ երեւան եկան կարգ մը ֆիզիքական երեւոյթներ ինչպէս՝ ժամանակի հասկացութեան շփոթ, կեդրոնացումի դժուարութիւն, մարմնի որոշ մասերու մէջ ցաւ եւ կողմնորոշուելու դժուարութիւն: Ասոնք շուտով անհետացան, բացի՝ ժամանակի հասկացութեան շփոթէն, որ շարունակուեցաւ Քեսապ վերադառնալէն ետք ալ: Լաթաքիոյ մէջ համախումբ կեանքը բարերար ազդեցութիւն ունեցաւ, ցնցումին ազդեցութիւնները յաղթահարելու: Խուճապային վիճակի կամ սուր տագնապի ախտանշաններ չերեւացին անոնց մօտ:

Պատմական Յիշողութեան Վերազարթնում՝ Զգայարաններու Ճամփով

Ինչպէս մեր գիտակցութիւնը, այնպէս ալ մեր ջղային համակարգը ունի իր յիշողութիւնը: Անոր մէջ ալ նստած է պատմական յիշողութիւնը: Սահմանամերձ գիւղերու բնակիչներ լսած էին ահաբեկիչներուն *«Ալլահ ու Աքպար»*, «*Ժայինքոն*» («*Կու գանք ձեզի*»՝ սպառնական ոճ) կանչերը: Լսողական զգայարանը ենթագիտակցականէն գիտակացական աշխարհ բերած եւ արթնցուցած էր Ցեղասպանութեան ատեն թուրքին կատարած անխնայ վայրագութիւններուն յիշողութիւնը: Նկատի ունենանք նաեւ որ այդ յիշողութիւնը թարմացած էր Սուրիոյ տարբեր շրջաններու մէջ ահաբեկիչներու կատարած ջարդի ու կոտորածի վայրագութիւններով, որոնք ցոյց կը տրուէին հեռատեսիլի կայաններէն: Քեսապցիները կ'ըսէին. «Արաբներուն այսպէս ընողը, մեզի՞ պիտի չընէ»:

Թուրք վայրագ մարդու պատկերը տակաւին վառ է մեր հաւաքական յիշողութեան մէջ: Շարունակելով հայուն հանդէպ իր բարբարոսական արարքները, սպանելով Հրանդ Տինք, Սեւակ Պալըգճի, թուրքը ի՛նք չի նպաստեր, որ տժգունի իր այդ ժխտական պատկերը, որ Սուրիոյ ճգնաժամին մէջ վերաթարմացաւ նաեւ արաբ սուրիացիին մէջ, այս պարագային Օսմանեան Կայսրութեան պատմական հասարակաց անցեալէն հեռու, վերանորոգ կերպով եղբայրացնելով սուրիացի արաբն ու սուրիաբնակ հայը, որուն ո՛չ գիտակցականին, ո՛չ ալ ենթագիտակցականին մէջ գոյութիւն ունի արաբ վայրագ մարդու կերպար: Ընդհակառակը, հայը արաբը կը բնորոշէ միայն դրական յատկանիշերով: Մենք կերտած ենք այդպիսի արաբի տիպար՝ մշակութային դրսեւորումներով եւ յարատեւող, ամէն առիթի կրկնուող քարոզչական միջոցներով. երախտագիտութեան արժանի տեւական տուրք մը՝ 1915ին Աղէտին դէմ ընդհանրապէս արաբներուն եւ յատկապէս սուրիացի արաբին կողմէ հայութեան մնացորդներուն հանդէպ ցուցաբերած ընդհանրական համակրանքը վաւերացնելով:

Քեսապի մէջ ունէինք երկու սեռէն ալ ծերունազարդ մարդիկ, որոնք տասնամեակներով դուրս չէին եկած Քեսապէն, նոյնիսկ մինչեւ Լաթաքիա գացած չէին: Մարտ 21ին ընդհանրապէս դժուար եղած էր ծերունիները համոզելը՝ զանոնք բերելու տուներէն. «Դուք գացէ՛ք, մենք հոս կը մնանք», «Արաբները մեզմէ ի՞նչ կ'ուզեն, կու գան՝ թող գան» ըսած էին անոնք, երբ իրենց զաւակները կամ հարազատները զանոնք իրենց հետ Լաթաքիա տանելու մասին ըսած էին անոնց: Գրեթէ «բռնի ձեւով» կարելի եղած էր զանոնք դուրս բերել: Բազմաթիւ են այդ մասին փաստերը:

Մարտ 21ին քեսապցիին մէջ կը վերաթարմանար թուրքին վայրագ կերպար մը ըլլալու հաւաքական յիշողութիւնը լսողական ու տեսողական զգայարաններու հաղորդած տեղեկութիւններուն միաւորումով: Ինչ որ Ցեղասպանութեան պատմութեան ճամփով իրեն հասած էր, իրական կեանքի մէջ հեռատեսիլէն ականատեսը կ'ըլլար անոնց կրկնօրինակ մանրատիպ դէպքերուն: Փոխանցուած եւ իրական կեանքէ եկած պատկերներու զուգորդումին ակնարկելով Սեւ Աղբիւր գիւղէն միջին տարիքի կին մը կ'ըսէր. «*Կ'ոռնային ճի՛շտ այնպէս, ինչպէս լսած էի պատկերասփիւռէն. գիտցայ որ եկողները թուրքեր են: Դեռ ականջիս մէջն են անոնց ոռնոցները: Բայց այս անգամ իրենց ուզածը չեղաւ*»:

Առանց Տուն ու Տանիքի Հաւաքական Ընտանիք

Եկեղեցւոյ շրջափակին մէջ ստեղծուած էր «Հոգեւոր Քեսապը»: Անկէ դուրս ապաստանածներուն թիւը աւելի մեծ էր, քան ներս բնակողները: Դրսեցիները կենցաղային ինչ պայմաններու մէջ ալ ըլլային, ներսիններէն աւելի լաւ էին, գէթ կ'ապրէին մէկ տանիքի տակ ընտանեօք, կամ հարազատներու հետ: Սակայն եւ այնպէս եկեղեցւոյ շրջափակը,

քեսապահայութեան պաշտօնական նստավայրն ու հաւաքական կեանքի կեդրոնն ըլլալով, ձգողական ուժի պէս իրեն կը քաշէր տուն ու տանիք կորսնցուցած քեսապցիները:

Կային ոմանք, մեծահասակներ, որոնք Լաթաքիոյ իրենց հանգստաւէտ տուները ձգած՝ եկեղեցւոյ շրջափակի չոր աթոռներուն վրայ ամբողջ օրը կ'անցընէին առանց տրտնջալու: Ոմանք նոյնիսկ կը գիշերէին հասարակաց սրահին մէջ: Երբ այդ մասին իրենց խօսք կ'ըլլար կը պատասխանէին. *«Երբ Հոս կու գանք կը թեթեւնանք». «Ամէն ինչ կորսնցուցինք, այսպէս գոնէ զիրար չկորսնցնենք»:*

Իգական եւ արական սեռերուն յատկացուած էին առանձին կացարաններ. ընտանիքներու ակամայ բաժնուածութիւն. այս երեւոյթին ակնարկելով՝ «*Առանց տանիքի ի՛նչ ընտանիք*», կ'ըսէին ծերերը ու կ'աւելցնէին. «*Աստուած մեր գլխուն վերեւ անպակաս ընէ ազգին տանիքը (կրկնակի իմաստով. տուն եւ հովանի)*»:

Համրանքով միշտ փոքրաթիւ եղած է քեսապցին, բայց բնիկ գերակշիռ տարր եղած է Քեսապի: Ազգակցական խճճուած կապերով ագուցուած՝ ապրումակցումի զգայնութիւնը շատ զօրաւոր է իր մէջ: Իր մօտ ամէն բան հաւաքական է եւ ոչ թէ անհատական: Ան կ'ուրախանայ, կը տխրի, կը մտածէ ու կը գործէ հաւաքաբար՝ իբրեւ մէկ ընտանիք: Ահա թէ ինչու Լաթաքիոյ մէջ փուլ չեկան անտանիք ընտանիքները եւ բոլորը շարունակեցին ապրիլ իբրեւ մէկ մեծ ընտանիք՝ ազգի հովանիին տակ:

Աղէտահար վիճակի եւ կեցութեան տարականոն պայմաններուն մէջ, կազմակերպուած հաւաքական կեանքը էական երաշխիք է ընկերութիւնը առողջ պահելու համար:

Ժողովրդային Իմաստութիւն. Ներդաշնակ Ընկերութիւն

Իբրեւ տեղահանուած հաւաքականութիւն մը դիտարկած անձ փորձաբար կրնամ ըսել որ, ժողովրդային իմաստութիւնը աւելի աւելի աշխուժ կը գործէ տագնապալի կացութիւններու մէջ: Տեղահանութենէն առաջ Քեսապի մէջ կային մատի վրայ համրուող մարդիկ, որոնք գետնի վրայ Սուրիոյ տագնապին խնդրով գաղութի որդեգրած պաշտօնական ուղղութեան չէին հետեւեր, ոչ այնքան սկզբունքային հակադրութեամբ, որքան՝ իրենց անձնական շահերու բերումով:

Քեսապը կազմակերպուած հաւաքական կեանքի խոր արմատներ ու տոկուն աւանդութիւններ ունի: Ընկերութեան փոքրաթիւ ըլլալը, անդամներուն ազգակցական կապերով կապուած ըլլալը դրական տուեալներ եղած են, որ մէջտեղ չգան այնպիսի մարդիկ, որոնք իրենց կեցուածքով կամ գործնուէութեամբ խանգարեն կամ խաթարեն ընկերութեան ներդաշնակութիւնը, պղտորեն ազգային կեանքը: Ընկերութիւնը ինք այդպիսները չէ ընդունած: Եւ եթէ եղած են հատուկենտ այդպիսի մարդիկ, կարելի եղած է զանոնք հակակշռի տակ առնել՝ յօգուտ

Քեսապի հաւաքական շահերուն: Իբրեւ տեղահանուած ընկերութիւն՝ քեսապցիները պահեցին իրենց կազմակերպուած կեանքի աւանդութիւնները աւելի բծախնդրօրէն:

Ժողովուրդը, որ կորսնցուցած էր ամէ՛ն բան, ներքին պատասխանատուներ չփնտռեց իր մէջ: (Գիտէր որ իր տեղահանութեան պատասխանատուն Թուրքիան էր): Նոյնիսկ երես դարձուց անոնցմէ, որոնք փորձեցին նման բան կատարել: Ինքնըստինքեան զատորոշեց եւ իրմէ վանեց խօսքի եւ գործի կեղծ հերոսները, նախանձախնդիր եղաւ իր արժէքային համակարգը անխաթար պահելու:

Քեսապ վերադարձին, մինչեւ հիմա ալ յաճախ կը լսուի. «*Կ'ուզենք այնպէ'ս ապրիլ, ինչպէս Լաթաքիոյ մէջ*»: Եւ երբ կը հարցուի. «*Այսինքն, ինչպէ՞ս*» պատասխանը կ'ըլլայ՝ «*սիրով եւ միաբան*»: Լաթաքիոյ մէջ բազմաթիւ պետական, եկեղեցական, բարեսիրական կազմակերպութիւններու ոչ-հայ պատասխանատուներ, տեսնելով քեսապցիներուն միակամութիւնն ու կազմակերպուածութիւնը, հիացումով ու դրուատիքով կ'արտայայտուէին այդ մասին:

Տեղահանուած կացութեան մէջ Եսի նոյնացումը հաւաքականին հետ զօրացաւ, մարդոց անհատական ժխտական գիծերը զգալապէս տկարացան եւ դրական յատկանիշերը ցցուն ու ծայրայեղ կերպով դրսեւորուեցան:

Ինչ որ Քեսապին եւ քեսապցիին կը վերաբերէր դարձաւ նուիրական:

ԱՂԷՏԻՆ ՅԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԻՄԱՑԱԿԱՆ ԴՐՍԵԽՈՐՈՒՄՆԵՐԷՆ

Ինծի համար հարց էր, թէ քեսապցին (անհատապէս եւ հաւաքաբար) ինչպէ՛ս պիտի յաղթահարէ իր ապրած ցնցումը. պիտի կարենա՞յ յաղթահարել, թէ՞ պիտի խորտակուի: Շուրջբոլորս հարազատներս էին, հայրենակիցներս. ես մտահոգ էի իւրաքանչիւրին համար, ամէ՛նուն համար: Զարմանալիօրէն առաջին օրերէն իսկ, ժողովուրդին մէջ բնազդաբար սկսաւ իյայտ գալ ու գործել վերականգնումի հաւաքական ուժականութիւն մը: Ճիշտ այնպէս, ինչպէս մեր մարմնի դիմադրողական համակարգը կ'աշխուժանայ անկախ մեր կամքէն, գիտակցութենէն եւ կ'աշխատի անթափանցիկ կերպով հիւանդութեան կամ մեր մարմինին վրայ որեւէ տեղ վէրք ունենալու ատեն:

Յուսահատ, ընկճուած մարդիկ չէին շուրջիններս, այլ իրենց վերադարձին հաւատացող, անհամբերութիւն ցուցաբերող եւ ամէնէն աւելի անորոշութիւնը մերժող ժողովուրդ: Փորձառու ծերունիներ կ'ըսէին. «*Վերադարձի օրը կայ, բայց ե՞րբ պիտի գայ*»: «*Դժուար օրերու կեանքը կարճ կ'ըլլայ*» կը լսէի: Այս ասացուածքը գիտէի, որ ստեղծուած էր Քեսապ, Եղեռնէն վերադարձէն ետք, Ամերիկայէն Հայկական Լեգէոնին միացած քեսապցի կամաւորներուն կողմէ, Քեսապի վերականգնումի դժուարին օրերուն: Երեք ամիսներու ընթացքին, ժողովուրդին կողմէ

պատուիրակութիւններուն, պատասխանատու անձնաւորութեանց, պետական պաշտօնատարներու, հոգեւոր առաջնորդներու եւ ազգային ղեկավարներու ուղղուած միակ հարցումը սա էր. «*Ե՞րբ պիտի վերադառնանք»: Այդ «ե՞րբ*»ին պատասխանը ո՛չ ոք ունէր: *«Ուրեմն ինչու կու գան հոս, երբ չեն գիտեր այսքան պարզ հարցումի մը պատասխանը*» կ'ըսէին ոմանք:

Իրենք կը պնդէին. «*Պիտի վերադառնաք. անպայման*»: Պայմանները սակայն կը թելադրէին համբերել, դիմանալ մինչեւ վերադարձի օրը: Այդ պայմաններուն մէջ, ահաւասիկ, ժողովուրդին մէջ գործեց հաւաքական դիմադրողականութեան ներքին ուժական գործիքակազմ (մեքանիզմ) մը:

Եղեռնի Պատմական Փորձառութեան Արտածումը

Եկեղեցւոյ շրջափակէն ներս ապաստանած շատ համեստ ընտանիքներ առիթ ունեցան սուրիացի այլ տեղահանուածներու հետ փորձառութիւն փոխանակելու՝ միասնաբար մասնակցելով սեմինար-դասընթացքի մը՝ Լաթաքիոյ Նահանգի ամառանոցներէն մէկուն մէջ: Անկէ վերադարձին իրենց փորձառութեան մասին յաճախակի կը պատմէին: Տարբեր առիթներով եւ տարբեր բերաններէ պատումներ լսելու ատեն, անդրադարձայ, որ հասարակաց գիծ մը կարմիր թելի նման կ'անցնի բոլոր պատումներուն մէջէն: Բոլոր պատմողներն ալ կը նշէին, թէ իրենց արաբ բախտակիցներուն պատմած են Հայոց Ցեղասպանութեան մասին՝ զանոնք սրտապնդելու համար: «*Մեր տեսածը (Խօսքը 2014 տեղահանութեան մասին է - Շ.Ա.) եւ վիճակը բան մըն ալ չէ անոնց տեսածին եւ ապրածին նայելով*»: «***Անոնց սիրտ տուինք՝ մեր Ցեղասպանութեան մասին պատմելով***»: Իբրեւ սրտապնդիչ օրինակ, Ցեղասպանութեան Ցաւը չէին պատմած, այլ՝ թէ ինչպէս հակառակ Ցեղասպանութեան ենթարկուած ըլլալուն, վերապրած ու վերականգնած ենք:

Կը մտորիմ: Համեստ քեսապցի մարդոց ուրկէ՞ նման դիտանկիւն, երբ մանաւանդ կը գտնուէին տեղահանուած մարդու կացութեան ու հոգեբանութեան մէջ: Եթէ իրենց նախորդները հողին վերադարձած չըլլային՝ պիտի կարենա՞յին այդպէս մտածել, երբ դարձած էին նոր տեղահանութեան մը յիշողութեան կրողները:

Միայն ժամանակի՞ գործօնով պայմանաւորուած է 1915ի Աղէտին յաղթահարումը: Գրաւոր թէ բանաւոր քարոզչական խօսքերուն մէջ մինչեւ հիմա ալ կը շեշտուի ա՛յդ գործօնը. «*Յիսուն տարի պէտք եղաւ, որ յաղթահարենք Ցեղասպանութեան Ցաւը*»: Նմանամիտ շարադասութեամբ անհաշիւ խօսքերու կը հանդիպինք մամուլին մէջ: Ժամանակէն բացի ուրիշ գործօններ (ենթակայական ու առարկայական) չե՞ն եղած, որոնցմով կամ որոնց միջոցով յաղթահարած ըլլանք Աղէտի Խոցը: Կա՛յ, մշակուա՞ծ է, թէ՝ յատուկ եւ ընդհանրական ի՞նչ գործիքակազմ կը գործէ մարդկային

մեծ աղէտները յաղթահարելու ատեն: Գէթ ինձի ծանօթ չէ ա՛յնպիսի գիտական հանրագումար ուսումնասիրութիւն, ուր իմի բերուած ըլլան Ցեղասպանութեան Խոցին յաղթահարման գործօններն ու Վերապրումի ու վերականգնումի մեր փորձառութիւնը: Պէտք է պեղել անոնց օրինակելի դրականութիւնը, տեսականացնել եւ զայն միայն մեզի չվերապահելով, ուրիշներուն իբրեւ օգտակար օրինակ ծառայեցնել:

Եղեռնի Փոխանցուած Փորձառութեան Համեմատութիւնն Ու Զուգորդումը Անձնական Փորձառութեան

Իւրաքանչիւր չափահաս քեսապցի գիտէր, որ իր վիճակին պատասխանատուն Թուրքիան էր, երբ տակաւին, տեղական, հայկական եւ միջազգային քարոզչամեքենան այդ գործօնին վրայ չէր կեդրոնացած:

Լրատուամիջոցներուն հետ անոնք այդ մասին կ'արտայայտուէին համարձակօրէն՝ միշտ զուգահեռ անցընելով 1915ին հետ: Քեսապի նախորդ տեղահանութիւններու յիշողութիւնը վերաթարմացաւ Հայկական Ցեղասպանութեան հաւաքական յիշողութեան հետ տիրաբար միաձուլուած: Նմանատիպ անձնական-հաւաքական նոր փորձառութիւնը համեմատութեան դրուեցաւ նախորդներուն հետ՝ բացայայտ դրական մտածելակերպով, վեր հանելով մտախոհական փոխներազդեցութիւններ անոնց միջեւ:

Անոնք սկսան կեանքի կոչել իրենց նախնիներուն 1915ի փորձառութիւնները՝ դատողական խօսքի միջոցով եւ դրական մտածելակերպով: Կը յիշեմ, Եղեռնէն վերապրողներուն պատումը իրենց փորձառութեան մասին պատմողական-նկարագրական խօսքով էր, յուզականութեամբ յագեցած եւ մանրամասնութիւններով խճողուած:

Ընտանեկան պատմութիւնները, որոնք խամրած էին, սկսան վերյիշուիլ ու պատմուիլ բաղդատական ձեւով: Եղեռնը կը դիտարկուէր, կը պեղուէր Մարտ 21ի դէպքին լոյսին տակ՝ հետեւեալ տրամաբանութեամբ. «*Իմ նախորդներս, որ յաղթահարած են Եղեռնը, որ բացի փեղահանուած վիճակէն ուրիշ ոչ մէկ մանրամասնութեամբ կը նմանէր վիճակիս: Ես ուրեմն շատ աւելի դիւրութեամբ պէտք է կարենամ յաղթահարել այս Աղէտը»:*

Ջղային համակարգով ընկալուած Աղէտին յաղթահարումը ուրեմն կը սկսէր մտածողութենէն: Հետեւելով անոնց պատումներու ներքին տրամաբանութեան՝ կ'եզրակացնէի որ եթէ աղէտահարը նախապէս ենթարկուած է նմանատիպ այլ աղէտի, կամ այս կամ այն ձեւով կրողն է անոր, կայ մտային գործունէութեան ընթացք մը, որ կը ներկայանար հետեւեալ պատկերով.-

- Կորուստը՝ (մեծ կամ փոքր) կորու՛ստ է, բայց երբ նախապէս մեծ կորուստներ ունեցած ենք, փոքրերը աւելի դիւրութեամբ կը յաղթահարենք:

Նոր կորուստները իրենց կոտտացող թարմութեամբ վերափոխուած ձեւով կը վերաթարմացնեն հին կորուստներու յիշողութիւնը, բայց նաեւ ներուժ կը հայթայթեն նոր կորուստի յաղթահարման եւ հին կորուստներու առաւել սպիացման:

• Ազգովին անցած ենք 1915 գեհէնէն եւ վերապրած անկէ ու վերականգնած, այլեւս ոչ մէկ աղէտ մեզ կը տապալէ:

Նման մտածողական ուժականութիւն շատ կարեւոր գործօն է ազգային նոր մարտահրաւէրներ դիմակայելու պարագային:

Այսպիսով, Ցեղասպանութեան (անցեալի իրադարձութեան) պատմական-հաւաքական յիշողութիւնը, դիտուելով դրական տեսանկիւնէ նոր փորձառութեան ընդմէջէն, կը վերածուէր նոր Խոցին սպեղանի-միջոցի: Իսկապէս ալ, Ցեղասպանութեան յիշողութիւնը՝ յիսուն տարի ենթակայական եւ առարկայական պայմաններու փոխներգործութեամբ պայմանաւորուած իբրեւ կոտտացող **Ցաւ** կրելէ ետք, սկսաւ առաջնորդող գործօնի վերածուիլ, երբ յիշողութեան մասին մեր մտածողութիւնը բարեփոխուեցաւ: Ցեղասպանութեան յիշողութիւնը, որ մեր ցաւոտ անցեալէն կու գայ, ներկայիս մեզ կը տանի ապագային՝ ցանկալի ազգային նպատակի ուղղութեամբ՝ հայրենացումին: Որովհետեւ այդ յիշողութիւնը մեր լինելիութենէն անբաժան է:

Եսի Անձկալի Վիճակի Ընդլայնում-Թեթեւացում. Այլասիրութիւնը՝ Միջոց

2014 Յունիսի սկիզբը Նոր Գիւղը եւ Հալէպի հայահոծ շրջանները ահաւոր ռմբակոծումի թիրախ դարձան: Այդ օրերուն պատսպարեալ քեսապցիներուն կողմնացոյցը դարձաւ դէպի Հալէպ, գրեթէ մոռցան իրենց վիճակը: Այդ շրջադարձը ակնյայտ դարձաւ շրջափակին մէջ, կտրուկ ձեւով խօսակցութիւններու հիմնական նիւթը Քեսապի փոխարէն դարձաւ Հալէպը: «*Եթէ Քեսապ ըլլայինք, գոնէ հոն կու գային, հիմա տեղ ալ չունին երթալու*». «*Ի՞նչ նոր լուր կայ*». «*Աստուած խնայէ*». «*Միայն զոհեր չիյնան*». «*Մեր վրայ կէս օր ռումբ թափեցին անտանելի էր, իրենք ինչպէ՞ս կը դիմանան*». «*Նորէն թուրքն է ընողը, արաբը այդպէս բան չ'ըներ*», «*տեսա՞ք թէ մեր տեսածը բան մըն ալ չէ. լայն լայն կ'ուտենք-կը խմենք, ապահով ենք, գրպանիս ալ պարապ չէ*»: Այսպէս, մտածումներու սլաքը ուղղուեցաւ աւելի վատ կացութեան մէջ յայտնուած հայրենակիցին կողմը:

Տեղահանութեամբ իւրաքանչիւր անհատական ԵՍ այս կամ այն չափով անձկալի վիճակ կը պարզէր: Սակայն անձկութիւնը շեշտակի կեդրոնաձիգ ուղղութիւն չունէր, այլ՝ որոշակի կերպով հորիզոնական. «*Ի՞նչ պիտի ըլլանք*»: Բնական երեւոյթ. Ցաւը կը միացնէ, հասարակաց Ցաւը՝ ա՛լ աւելի: Քեսապցիներուն իրարու հանդէպ ցուցաբերած այլասիրութիւնը անմիջական, շօշափելի ու առարկայական էր, իսկ

Հալէպի նկատմամբ՝ մտային, որ կու գար հորիզոնական այլասիրութեան պարագիծը աւելիով ընդարձակելու: Քեսապի ազատագրման լուրը քեսապահայութեան հաղորդելու ընդհանուր ցնծութեան մէջ, պատասխանատուի մը բերնէն կը լսէի. *«Հալէպի հայերը գոնէ հիմա տեղ մը կ'ունենան գալու»*: (Քեսապ վերադառնալէն ետք, իսկապէս ալ, այդ մասին մտածուեցաւ եւ գործնական քայլեր առնուեցան):

Զօրաւոր Ցաւի մը վրայ որքան ներհայեաց ըլլայ մեր մօտեցումը, այնքան աւելի դժուար կ'ըլլայ անոր սպիացումը: Եւ ընդհակառակը, երբ մարդկայնօրէն կը դիտենք, կը զգանք, ԵՍականէ անդին անցնող այլուրութեամբ մը «կը վերապրինք» ուրիշին - հարազատ, բարեկամ, հայրենակից, մարդ - ցաւը, մա'նաւանդ երբ մերինէն աւելի ծանր է, մերը, եթէ նոյնիսկ չենք մոռնար, կը զգանք որ կը թեթեւնայ:

Հայկական Գործօնը՝ Ինքնավստահութեան Զօրացուցիչ

Մեծահասակները «*Save Kesab*»ի մանրամասնութիւններէն անտեղեակ էին. անոնք աւելի 1939ի նախադէպի պատմութիւնը կ'ընէին: Կը մտածէին այսպէս. «Եթէ հայերը, երբ հիմակուան փորձառութիւնը չունէին, վճռորոշ դեր ունեցած են Քեսապը Սուրիոյ սահմաններուն մէջ պահելու, հիմա ալ կրնան բան մը ընել, մեզ ետ վերադարձնելու համար»: «*Save Kesab*»ի ահագնացող թափէն իրենք իսկ կը զարմանային. «*Մենք այսքան բան կ'արժե՞նք միթէ*», «*Մեզի համար չէ այս բոլորը: Քեսապի՛ համար է*», «*Հայութեան համար մենք կեցեր-չկեցեր ենք, ի՛նչ կ'արժենք*»: Մարդկային իրենց կշիռն ու արժէքը, իրենք իսկ նուազ կը գնահատէին Հողէն: Բայց իրենց հնարած այն վարկածով, թէ՝ 1939ը եւ «*Save Kesab*»ը հողի համար է, գոհունակութիւն կը զգային. «Իրենց» Քեսապը բոլոր հայերուն Քեսապն է: Բոլորին մտահոգութեան առարկան է: Իրենք առանձին չեն: Եւ երբ հայերը միասին են՝ ուրեմն *«Լաւ բան մը կ'ըլլայ»*: Հայկական (սեփական) գործօնին հանդէպ վստահութիւնը զօրացուց քեսապցիին ինքնավստահութիւնն ու տոկալու կարողականութիւնը:

Նոր Եզրերու Ստեղծում-Տարածում

Տեղահանութեան երեք ամիսներու ընթացքին, ոչ-մտածուած կերպով, ժողովուրդին հետ ուղղակի շփման ժամանակ, անոր բազմապիսի հարցադրումներուն խտացուած ու բովանդակալից պատասխան իբրեւ եւ անոր մտատանջութիւնները մեղմացնելու, անոր կեցութեան պայմանները տեսականօրէն թեթեւցնելու եւ անոր մէջ վերադարձի յոյսը վառ պահելու թելադրականութեամբ՝ պատահականօրէն մէջտեղ եկան երկու եզրեր՝ **«Երջանիկ Գաղթականութիւն»** (երրորդ տեղահանութիւնը բաղդատութեան դրուելով առաջին երկու տեղահանութիւններուն հետեւած կացութեան) եւ «**Քեսապցիական Բանակում**»:

Բանակում հասկացութիւնը շատ հարազատ է քեսապցիին: Մինչեւ Սուրիոյ տագնապին սկսիլը Քեսապը ո՛չ միայն Սուրիոյ գեղեցիկ ամառանոցներէն մէկն էր, այլ նաեւ Սուրիոյ (եւ Լիբանանի) հայ (նաեւ արաբ) համայնքներու եւ ազգային միութիւններու բանակումի նախասիրած վայրերէն մէկը: Քեսապցիները ամէն ամռան կը սպասէին բանակողները, որոնք յատուկ շէնութիւն կու տային աւանին:

Բանիմաց անձերու մտածումէն եւ բերնէն դուրս եկած այս երկու եզրերը դեղատոմսի նշանակութեամբ, կարգախօսային իմաստ ստացան շուտով եւ լայնօրէն տարածուեցան, մաս կազմեցին քարոզչական բառապաշարին: Դեռ կը շարունակուի անոնց գործածութիւնը, երբ անդրադարձ կը կատարուի տեղահանութեան օրերուն:

Բնութեան Օրինակը՝ Դարմանումի Միջոցներէն

Քեսապցին բնութեան մարդ ըլլալով՝ կատարեալ գիտակցութիւնը ունէր իր վիճակին: Իր կացութիւնը կը նմանցնէր արմատախիլ բոյս մը այլ տեղ տնկելու եւ զայն յատուկ խնամքով վերականգնելու պատկերին: Պատկերաւոր նման գիտակցական մօտեցումը օգնեց հոգեբանական գետնի վրայ քեսապցիին ինքնավերականգման:

Զուարճախօսութիւնը, Սրամտութիւնը, Պարսաւը՝ Բալասան[5]

Գրեթէ համոզուած եմ, որ ասոնք կը ծնին հաւաքական կեանքի պայմաններուն մէջ:

Քեսապցի մարդը հիւմըր կ'ընէ նոյնիսկ թաղման ատեն, երբ մահացողը ծերունի է: Բազմաթիւ այդպիսի առիթներով լսած եմ անոնց պարզ բառերով փիլիսոփայելը՝ կեանքի ու մահուան մասին: Ան բնութեան զաւակ ըլլալով՝ իրապաշտ կենսասէր է: («Նորէն ո՞վ մոռցած է շունչ առնելու» կ'ըսէ, երբ մեռելի զանգ կը լսէ. հիւանդի մը այցելութեան՝ «Չմոռնաս շունչ առնելու». մէկը շատ նեղուած է՝ «Լա՛ւ շունչ առ», իսկ երբ մէկը պիտի թաղէ՝ «պիտի տնկենք» կ'ըսէ՝ հողին մէջ դնելը, թաղելու գաղափարին հետ չի զուգորդեր, այլ տնկելու):

Գոյութենական հարցեր չեն դրուիր, երբ լինելիութիւնը խնդիր է: 1915 գաղթականութիւն տեսած մամիկ-պապիկները իրենց պատումի ընթացքին հիւմըր կ'ընէին, բայց հազուադէպօրէն, եւ ատիկա - կը խորհիմ - Քեսապ վերադառնալէն տասնամեակներ ետք մաս կազմած է իրենց պատումին: Քանի որ իր մարդկային թուաքանակին երեք-չորրորդը զոհ տուած, ցիրուցան եղած քեսապցին ինչպիսի՞ սիրտ պիտի ունենար հիւմըր ընելու:

Լաթաքիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շրջափակին մէջ պատմութիւններ հիւսողը կիներն էին, իսկ տղամարդիկ՝ հիւմըր ու պարսաւ ընողները: Քեսապցի տղամարդը բնութեամբ ջղայնոտ է, զգացականօրէն չափազանց զուսպ, Միերի Դռան նման փակ. ան բնա՛ւ չի

խօսիր իր զգացական ներաշխարհէն եւ զինք փոթորկող ալեբախումներու մասին: Էութեամբ բարի, արտայայտութիւնները՝ կոշտ, երբեմն նոյնիսկ վիրաւորիչ, երբ խօսակիցը տղամարդ է. լեռներու վրայ եւ իր պարտէզներուն մէջ՝ թագաւոր, տան մէջ իշխան ու ծառայ, քեսապցի տղամարդը ունի հիւմըրի զգացողութիւն: Իր սրամտութիւնն ալ կարծր է, պատկերաւոր ու խայթող, ինքնապարսաւի շեշտադրումով, բնութեան տարրերու եւ պատկերներու օգտագործումով:

Ա՛ն էր, որ տեսած էր ներխուժող գրոհայիններու այլանդակ տեսքն ու կռիւը, ա՛ն էր որ մնացած էր անոնց կրակոցներուն տակ, ապրած էր ընկեր կորսնցնելու անդոհանքը, հրթիռակոծումի տարափին տակ ընտանիք տեղափոխած, ա՛ն էր, որ զինեալ գործողութիւններու թոհուբոհին մէջ պարտաւորուած էր սառն կշռադատել ու ընտանիքին, գիւղին եւ ժողովուրդին փրկութեան մասին մտածել: Քեսապէն դուրս եկած էր՝ արժանապատուութեամբ, բաց ճակատով՝ որ ժողովուրդը փրկուած է, ընդվզումով՝ հազար բանի հանդէպ, որ իրմէ կախեալ չէր եղած, հայհոյելով՝ հազար անգամ բոլոր անոնց, որ Քեսապի գլխուն այդ աղէտը պատրաստեցին ու գործադրեցին, զայրանալով՝ ճակատագրին դէմ: Եթէ լռէր՝ կը պայթէր, եթէ խօսէր՝ կը հեղեղէր: Ո՛չ մէկը, ո՛չ միւսը, այլ հիւմըրն ու ինքնապարսաւը եղան բալասանը ներաշխարհի կուտակումները պարպելու:

Հայաստանը՝ Ապաւէն

Քեսապցիներուն աչքը երեք ամիս անդադար յառած մնաց Քեսապին, բայց միաժամանակ ամէնուն մտածողութեան մէջ Հայաստանը ներկայ էր: Քեսապ չվերադառնալու պարագային՝ կա՛ր Հայաստանը՝ իբրեւ փրկութեան լաստ, գոյութեան ու ինքնութեան խարիսխ, եւ իբրեւ վերջնական հանգրուան: Այս մտածումը քեսապցիին մօտ բացառեց գոյութենական հաւաքական անդոհանքը (Քեսապ չվերադառնալու պարագային՝ «*ի՞նչ պիտի ըլլանք*») եւ Քեսապ վերադառնալէ ետք վերականգնման խթան մը հանդիսացաւ: «*Ես ոչ անփուն եմ, ոչ էլ փարագիր*» յաճախակի լսուած երգերէն մէկն էր, միջին տարիքի սերունդի բերնէն:

ՏՈՒՆԴԱՐՁ. ՀՈՂԻՆ ՁՕՐՈՒԹԻՒՆԸ

Հողը՝ Խարիսխ

«*Ամէն հայ*՝ *Հայաստանէն է*» այս մէկը գիտէ քեսապցին, բայց իր պատմական յիշողութիւնը զինք կապուած կը պահէ իր ապրած բնակավայրին՝ Քեսապին հետ: Քեսապը հայրենիքի իմաստ կը զգենու ՀՈՂ ունենալով:

Քեսապցին մեր պատմութեան չէ տուած հերոսամարտ, որմով հպարտանայ: Բայց իբրեւ հաւաքականութիւն կ'առանձնանայ անով, որ

երեք անգամ տեղահանուելէ ու ամէն ինչ կորսնցնելէ ետք, վերադարձած է իր պատմական բնակավայրը ու կը շարունակէ ապրիլ իր **Հողին** վրայ:

Տասնհինգը տեսած ու ապրած քեսապցի սերունդները չեմ գիտեր ինչպէս հիւսած են տունդարձի իրենց պատմութիւնը՝ գաղթականութեան ատեն: Անոնց պատումներուն մէջ ակնարկ չկար այդ մասին: Բայց որ վերադարձած էին՝ ատիկա կը նկատէին իրենց մեծ յաղթութիւնը. անոնք կորուսեալ բնակավայրի **Ցաւ** ու **Կարօտ** չունէին: Իրենց Հաւաքական **Խոցը** դարմանուած էր իրենց **վերադարձով**:

Ընտանեկան անմիջական շրջանակի մէջ, ականատես դարձած եմ քեսապցի, մուսալեռցի եւ բուն արեւմտահայաստանցի հարազատներուս միջեւ ընթացող վէճերուն. մօրենական կողմէ մեծմայրս կարնեցի էր, մօրս հօրաքոյրը՝ քեսապցի, հօրեղբօր կինը՝ մուսալեռցի: Ամէն անգամ որ վէճի բռնուէին Ցեղասպանութեան, տեղահանութեան եւ ներկայի իրենց կեցութեան մասին՝ յաղթական դուրս կու գար հօրաքոյր մեծմայրիկս, իբրեւ զօրաւոր եւ վճռական փաստարկ ներկայացնելով իր հարազատ Հողին վրայ ապրելու իրողութիւնը, միաժամանակ միւսներուն հանդէպ ցուցաբերելով անկեղծ կարեկցանք, որ իրեն պէս բախտաւոր չէին եղած: Որով կ'եզրակացնէի, թէ **Հարազատ Հողը** ունի **Խոցը** բուժող յատկութիւն[6]: Այս համոզումը մէջս կ'ամրապնդուէր անձնական փորձառութեամբ, գործնական ձեւով, կրկին Քեսապի պարագայով:

Հողին անկողոպտելի գանձ ըլլալու գիտակցութիւնն էր, որ քեսապցիին ուժ տուաւ, որ իր նիւթական կորուստներուն վրայ չողբայ թէ՛ Լաթաքիա եղած ատեն, թէ՛ մանաւանդ Քեսապ վերադառնալէ ետք: Երբ լաթաքիա էին՝ «*Միայն վերադառնանք. ուրիշ բան չենք ուզեր*» կ'ըսէին, իսկ վերադառնալէն ետք՝ «*Ողջ ենք, կը բաւէ*»:

ՎԵՐԱԴԱՐՁԻ «ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ» ՄԸ

1909ին եւ 1915ին քեսապցին կորսնցուցած էր ամէն ինչը: Այս անգամ ալ ան այն համոզումը ունէր, որ նոյն պատկերը պիտի տեսնէ, բայց զարմանալիօրէն արցունք չունէր ատոր համար՝ երբ ստոյգ լուրեր կը հասնէին՝ ներխուժողներուն - «այնկողմիններուն» - Քեսապի մէջ կատարած ալան-թալանին մասին, երբ ականատեսներ կը պատմէին, թէ ինչպէս «այս կողմինները» սպառնալով իրենց՝ իրենց աչքերուն առջեւ իրենց սեփականութիւնները կողոպտած են: Նման պատումներ - գրեթէ միշտ նախորդ երկու տեղահանութիւններուն հետ համեմատութեան դրուած - ընդհանրապէս կը վերջնային հետեւեալ նախադասութեամբ. «*Ողջ ենք. հողն ալ չեն կրնար գողնալ ու փանիլ եա*»:

Կասկած չունէին, որ պիտի վերադառնան, բայց անհամբեր էին վերադառնալու խնդրով: Այս առումով, գրաւը կը դնէին հայկական գործօնին եւ պետական բարձրաստիճան անձնաւորութիւններու

հաւաստիացումներուն վրայ, թէ Սուրիոյ ամբողջականութիւնը սակարկելի չէ:

Քեսապցիները մարմինով Լաթաքիա էին, մտքով ու հոգիով՝ Քեսապ: Ասիկա հոգեկան ճեղքուածքի դրսեւորում չէր: Այնպէս չէր որ գիտակցօրէն Լաթաքիա էին, ենթագիտակցօրէն՝ Քեսապ: «*Յերեկը Լաթաքիա ենք, գիշերը՝ Քեսապ*» կ'ըսէին: Չէին անդրադառնար, որ մտածումներով ցերեկ ատեն ալ Քեսապ էին: Որովհետեւ անոնց խօսակցութիւնները Քեսապի մասին էին:

Տղամարդիկը տեսականօրէն խօսակցութիւններու միջոցով կը շարունակէին իրենց պարտէզներու գործերը. երեք ամիս անոնց ժամանակը - բացի կենցաղէն - չտեղափոխուեցաւ Լաթաքիա: Կ'ընդհանրացնէի, ուրեմն, երբ հողի վրայ մարդկային հաւաքական գիտակից գործունէութիւնը կը դադրի՝ հոն ժամանակը կանգ կ'առնէ. կը վերսկսի՝ գործունէութեան վերսկսման հետ: Քեսապ վերադարձիս շատ զօրաւոր կերպով զգացի ասիկա: «Տեղահանութիւնը» մարդ արարածը կամ հաւաքականութիւն մը իր հարազատ բնակավայրէն հանելը չէ միայն, այլ նաեւ զայն իր ժամանակէն կտրելը. ցնցումի ենթարկուածը ժամանակի հասկացութեան շփոթ կ'ունենայ: Քեսապցիներուն այդ շփոթը մնաց մինչեւ վերադարձան Քեսապ (եւ տակաւին կը շարունակուի մեծահասակներուն մօտ): Իրենք գիտակից էին այս իրողութեան: Յունիսի առաջին շաբաթը, խօսակցութեան մը ընթացքին, խօսակիցներէն մէկը երբ խօսակցութեան ատեն շուարեցաւ ամիսը, իր խօսակիցը պատասխանեց. «*Մենք (շատերու անունով խօսելով) շաբթուան օրերը կը շփոթենք, դուն՝ ամիսները: Ինչ կ'ըլլաս կոր եղբա'յր. Խելքի՛ եկուր*»: Տարածք-ժամանակ հասկացութիւններու միջեւ կապակցութեան խախտումը բացայայտ կերպով կ'երեւի տեղահանութեան պարագաներուն: (Միթէ մեզի համար ժամանակը Արեւմտահայաստանի մէջ կանգ չէ՞ առած տեղահանութեամբ. ու պիտի վերսկսի, երբ հոն հաւաքական գիտակից գործունէութիւն ծաւալի):

Այսպէս, քեսապցին Լաթաքիոյ մէջ հիւսեց իր վերադարձի «տեսութիւնը»՝ **Տունդարձի** պարզունակ մտածողութեամբ: Դրական եւ ժխտական դիպաշարերով նախապատրաստութիւնը տեսաւ իրականութիւնը դիմակայելելու: Հաւաքական զրոյցներու ընթացքին վարդագոյն եւ սեւ դիպաշարեր կը հիւսուէին այդ մասին: Թէ՝ ինչպէս ամէն ինչ թալանուած, աւերուած պիտի գտնեն, թէ՝ ինչպէս պիտի վերաշինեն: Հոգեպէս եւ մտապէս իրենք զիրենք նախապատրաստեցին ատոր: Վերադարձին նուազ դժուար եղաւ ընդունիլ իրականութիւնը:

Մարդկային կորուստի մասին նոյնը կարելի չէ ըսել: Մարդը անփոխարինելի արժէք է ու անոր կորուստը անդարմանելի. մինչդեռ բնակավայր-տարածքը՝ կարելի է ետ բերել, այլ խօսքով՝ վերադառնալ

անոր: Կ'ընդունիմ, որ աղէտներու ատեն որքան քիչ ըլլան մարդկային կորուստները, աղէտը աւելի շուտ կը յաղթահարուի:

ՔԱՆԻ ՄԸ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ ԻԲՐԵՒ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ցեղասպանութեան հարցին վրայ յետահայեաց սեւեռումը մեզ կը հասցնէ տեղահանութեամբ հայրենազրկումի վերջակէտին, որ մեր պահանջատիրական յառաջխաղացքին մէջ մեզ առաջնորդելու է դէպի հայրենացում՝ սկսելով իմացական մակարդակէ եւ ընդգրկելով գործունէութեան տարբեր ոլորտներ: Մեր միտքը ո՛ր որ է, մենք կրնա՞նք հոն ըլլալ: Իսկ հակառակ պարագային, նոյնիսկ եթէ կարելիութիւններ ըլլան, մենք հոն չենք կրնար ըլլալ: Մտածողութիւնը՝ բնակավայրի մասին, էական է անոր վերադառնալու համար:

Հայրենացումը ազգային հիմնախնդիր է թէ՛ հայրենաբնակին եւ թէ՛ սփռուած հայութեան համար: Երբ ներկայիս պահանջատիրական մեր պայքարին մէջ շեշտը կը դրուի պահանջատիրութեան իրաւական աշխատանքի եւ հատուցման խնդիրներուն վրայ, համազգային մտածողութիւնը եւ գործունէութիւնը **Հայրենացում**ի ուղղութեամբ կ'ընթանան:

Ազգովին կը հաւատանք որ ազգային պահանջատիրութեան վերջին հանգրուանը հայրենացումն է: Ատոր փորձագիտական մէկ փաստը չնկատե՞նք Քեսապի օրինակը: (Թէկուզ Քեսապը պատմական բնօրրան է եւ ոչ թէ իսկական հայրենիք): Երբ մանաւանդ քեսապցիին փորձառութիւնը եզակի է անո՛վ, որ ան երեք անգամ վերադարձած է իր բնօրրանը: Երբ կայ հողին կենդանի յիշողութիւնը, անոր հետ կապուած մտածողութիւն, հոն կայ վերադառնալու կարելիութիւն՝ այնքան ատեն որ աշխարհաքաղաքական կացութիւնները փոփոխական են, այնքան ատեն որ ուժն ու շահը կ'որոշեն շատ բան, այնքան ատեն որ քաղաքական սակարկութիւնները անպակաս են: Եւ այնքան ատեն որ կան արդարութեան հաւատացողներ եւ անոր համար պայքարողներ. կարեւորը գետնի վրայ ազդեցիկ գործօնի վերածուիլն է:

Հայրենազրկումի Խոցը կը դարմանուի միմիայն հայրենացումով: Մնացեալ բոլոր կացութիւնները մասնակի միջոց-լուծումներ են: Քեսապի պարագայով այս եզրակացութիւնը եթէ օրինաչափութիւն կարելի չէ համարել, օրէնքի ուժ եւ բացարձակ բնոյթ չի կրնար ունենալ, բայց, կը կարծեմ, բացատրողական օրէնք կրնայ նկատուիլ:

Կ'ընդունիմ որ միակ պարագայէ մը տեսութիւններ արտածել կարելի չէ, առանց նմանօրինակ պարագաներու հետ համեմտութեան մէջ դնելու:

Թուրքիոյ դէմ հայութեան արդար պայքարին մէջ, կը կարծեմ թէ Քեսապի 2014ի պարագան տակաւին օգտագործելի տուեալներ կը պարունակէ:

Քեսապի տեղահանութիւնը ապացոյց է, որ Թուրքիա իր հակահայ քաղաքականութեան թիրախ կը դարձնէ նոյնիսկ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմաններէն դուրս համախումբ ապրող հայութիւնը անմիջապէս որ յարմար առիթներ ստեղծուին: Թուրքիոյ վստահիլ չ'ըլլար: Քեսապցիները ասացուածք մը ունին՝ «Երբ թուրքն է դրացիդ՝ մէկ աչքդ բա՛ց քնացիր»: Առիթը ներկայացաւ՝ գորշ գայլը իր գայլութիւնը պիտի ընէ:

Ուժի գործադրութեամբ հաւաքականութիւն մը բռնի իր տեղէն հանելը Ցեղասպանական արարք է: Քեսապի օրինակով Թուրքիա կը շարունակէ իր ցեղասպանական ոճիրը հայութեան դէմ: Այնպէս որ Թուրքիոյ դէմ մեր պահանջատիրական պայքարի քարոզչական մարզին մէջ իբրեւ թարմ օրինակ օգտագործելի տուեալ մըն է Քեսապի պարագան:

Բնական գիտութիւններու օրէնքով, երեք անգամ նո՛յն դէպքին (Տեղահանութիւն) կրկնութիւնը նոյն հեղինակին (Թուրքիա) ձեռամբ, կը դնէ կրկնելիութեան վարկածը: Ի՞նչ երաշխիք կայ, որ չորրորդ անգամ նոյնը կրկնուելու պարագային անոր վերջնական արդիւնքն ալ կ'ըլլայ նախորդ երեքին պէս:

Սուրիոյ տագնապը կը շարունակուի տակաւին, Սուրիա-Թուրքիա քաղաքական յարաբերութիւնները կը մնան լարուած: Թուրքիոյ հետ Սուրիոյ հիւսիսային սահմանի կարգավիճակը նախկինին պէս մնալու պարագային, Քեսապի անվտանգութիւնը կախեալ պիտի մնայ Թուրքիայէն, ինչպէս որ էր նախապէս: Քեսապահայութեան համար հիմնահարց մըն է ասիկա: Քեսապը սուրիական տարածք է, եւ անոր անվտանգութեան երաշխաւորը Սուրիական Պետութիւնն է իր բանակով:

Կասկած չկայ որ, ուշ կամ կանուխ, Սուրիա եւ Թուրքիա պիտի կարգաւորեն իրենց յարաբերութիւնները, բայց թէ ինչպէ՞ս՝ ներկայ հանգրուանին կարելի չէ կանխատեսել: Թուրքիան ցարդ կը մնայ անպատիժ՝ Սուրիոյ ժողովուրդին (ներառեալ Քեսապի) դէմ իր կատարած ոճրագործութիւններուն եւ երկիրը քանդելուն ու աւարելուն:

Սակայն եւ այնպէս, քեսապցին վերադարձած է իր բնօրրանը. ան կրկին կը վերականգնի պատմական իր բնօրրանի հողին վրայ: Էականը ա՛յս է, մնացեալ բոլոր հարցերն ու մարտահրաւէրները երկրորդական են:

ՎԵՐՋԱԲԱՆ

Քեսապի տեղահանութեան պատմութիւնը տակաւին չէ գրուած[7]: Ընդհանրապէս սուրիահայ գաղութի, ներառեալ Քեսապի վերջին տարիներու փորձառութիւնը ծանր է: Սակայն անիկա միայն տագնապի ու աղէտի պատմութիւն չէ, այլ նաեւ քաղաքակրթական, քաղաքական, մարդկային-անհատական ու մա՛նաւանդ հաւաքական կազմակերպուած դիմադրողականութեան օրինակելի պատմութիւն մը: Արժանավայել տոկունութեան, քաղաքական հասունութեան, համազգային

զօրակցութեամբ կազմակերպուած դիմադրական այդ պատմութիւնը ապագային անկասկած կ'ունենայ իր արժանաւոր պատմաբանը:

Հոս արձանագրուածները ընդհանուր այդ պատմութենէն եւ այդ պատմութեան համար քանի մը խիտ ուրուագիծեր են:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] 1909ի Աղէտին եւ 1915 Եղեռնի մասին տե՛ս՝ Յակոբ Չօլաքեան, *Քեսապ, Ա. Հպր.*, Հալէպ, Տպ. Արեւելք, 1995, էջ 89-107:

[2] 1950ականներէն (այդ տասնամեակի սկիզբը Թուրքիոյ եւ Սուրիոյ միջեւ ստորագրուած պայմանագիրի տրամադրութիւններ գործադրութեան դրուելով), սահմանը կը պաշտպանուէր թրքական կողմին հետ համատեղ: Թրքական կողմը յանձնառու էր թոյլ չտալու զինեալ ապօրինի թափանցումներուն, իսկ սուրիական կողմը՝ հսկողութիւնը կ'իրականցնէր միայն ոստիկանատուներու միջոցով: Այդ պատճառով ալ Սուրիան Թուրքիոյ հետ ունեցած Քեսապի սահանին վրայ բանակ չունէր: Գարատուրանի գիւղէն մինչեւ Լեղի Ջուր երկարող սահմանին երկայնքին կային ընդամէնը երեք ոստիկանատուներ՝ յաջորդաբար Գարատուրանի ծովափին, Քեսապի հիւսիսային բարձունքին վրայ եւ Սեւ Աղբիւր: Սահմանադուռը կը գտնուի Տիւզաղաճ Գիւղին մէջ:

[3] Տե՛ս՝ *Ալպոմ Քեսապի Եւ Շրջակայքից*, Հրատ.՝ Քեսապի Ուսումնասիրաց Միութեան Պէյրութի Մասնաճիւղի, Պէյրութ, 1965, էջ 26: Ըստ հոն արձանագրուած թիւերուն 1915էն առաջ Քեսապի բնակչութեան թիւը եղած է 6000: 1919ին վերադարձած է մօտաւորապէս 2200 հոգի:

[4] Քեսապը շրջափակելու գրոհայիններու ծրագրին մասին կայ փաստաթուղթ: Քեսապի ազատագրումէն ետք հոն գտնուած արաբերէն լեզուով եւ պաշտօնական փաստաթուղթին մէջ շարադրուած են հարաւէն եւ հարաւ արեւմուտքէն Քեսապի վրայ յարձակելու ուղղութիւններն ու մասնակցելիք գրոհայիններու թիւը:

[5] Լաթաքիա եղած ատեն բաւական բան հաւաքած եմ. կը յուսամ զանոնք առիթով մը հրապարակել:

[6] Այդ մասին տե՛ս՝ Շողիկ Աշըգեան, «Խաչածեւուող Ջուգահեռներ. Առասպէլէն Մինչեւ Քաղաքականութիւն», *Ազդակ Բացառիկ*, 1996, էջ 18-19:

[7] Քեսապի տեղահանութեան մասին ցարդ լոյս տեսած է մէկ մենագրութիւն՝ Յ. Չօլաքեանի *Քեսապի Երեք Օրերը (21-23 Մարտ 2014)* գրքոյկը (Էդիթ Պրինտ, Երեւան, 2014, 127 էջ), որ սակայն տպաւորապաշտ ակնարկ մըն է՝ գրուած տեղահանութեան դէպքին անմիջական ազդեցութեան տակ: Այդ իսկ պատճառով կը պարունակէ իրականութեան չհամապատասխանող ենթակայական գնահատումներ՝ մարդոց եւ դէպքերու մասին:

From Displacement to Repatriation.
Collective Memory and Personal Experience: the Case of Kesab
(Summary)

Shoghig Ashekian
shogherashekian@yahoo.com

Against the backdrop of the first two deportations from Kesab (1909 and 1915), the paper analyses the third deportation from Kesab in 2014.

Based on observations and analysis of collective memory experiences, exclusively from an Armenian perspective, the paper examines, from diverse angles, the 2014 uprooting and its connections with the Armenian Genocide and the basic issues of the Armenian Cause.

The Kesab case is presented as a case-study of Armenian history, yet, at the same time, as part and parcel of Syrian Armenian history. Accordingly, the conclusions of the paper are deductive reflecting a line of thought from one case to generalities.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԸ. ՎԵՐԱԴԱ՞Ր ՀԱՅՐԵՆԻՔ
(Յիշողութեան Մարդաբանութիւն)[1]

Խորէն Գրիգորեան
xorenbask86@gmail.com

Քննարկման թեման առաջ է եկել 25 խորը կենսագրական հարցազրոյցների արդիւնքում: Հարցապնդուողները 22-60 տարեկան, տարբեր մասնագիտութեամբ, տեղի տարբեր մշակութային եւ եկեղեցական համայնքների ներկայացուցիչներ՝ Սիրիայի Քամիշլի, Հալէպ, Դամասկոս քաղաքներից ՀՀ հաստատուած հայեր են: Նաեւ խմբակային հարցազրոյցների անցկացման փորձ է արուել: Քննարկումների հիմնական նիւթն է եղել Սիրիական Ճգնաժամի տարիներին (2011-15)[2] հայերի ժամանումը Հայաստանի Հանրապետութիւն (ՀՀ) եւ այդ ներգաղթի քննարկումը սեփական տեսանկիւնից: Կարող ենք ասել, որ յստակ պատկերագրւում էր այս մարդկանց մէջ Սիրիայից՝ ՀՀ տեղափոխուելը ընկալել որպէս «գաղթի ճանապարհի շարունակութիւն», որը միտում ունի վեր հանելու Ցեղասպանութիւն ապրածների՝ արդէն 3րդ եւ աւելի սերունդների մօտ, Ցեղասպանութեան եւ դրա հետեւանքով գաղթի ճանապարհ բռնած «ճակատագրի» նորովի ընկալումը:

Այս երեւոյթի վրայ իր արձագանգն են թողել պաշտօնական եւ մամուլի կողմից սոյն տեղափոխութեան վերաբերեալ հնչեցուած մեկնաբանութիւնները: Այսպէս, օգտագործելով «վերադարձ», «գաղթ» եզրոյթները՝ դրանք որպէս բանալի եզրոյթներ մտան ներգաղթեալ սիրիահայերի բառապաշարի մէջ եւ Սիրիական Ճգնաժամի տարիների ՀՀում հաստատուելը «գաղթ», «վերադարձ» ընկալուեց, իսկ անձնական պատմութիւնը՝ որպէս «Ցեղասպանութեան եւ Մեծ Գաղթի» շարունակութիւն:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ուսումնասիրութեան հիմնական նպատակն է եղել առաւել լայն դիտարկման արժանացնել ոչ միայն սիրիահայերի ՀՀ ժամանման հիմնական պատճառները, այլ նաեւ այդ ժամանման ընկալումը՝ Ցեղասպանութեան յիշողութեան հոլովոյթում: Ազգագրական հարցումները կազմակերպուել են շուեցարական «ԿԱՋԱ մարդասիրական հիմնադրամ»ի[3] կողմից փախստականների աջակցութեան ծրագրի մասնակից սիրիահայերի շրջանակներում: Հարցումներ են անցկացուել

նաեւ սիրիահայ այն փախստական հայ ընտանիքների հետ, ովքեր ճգնաժամի սկզբնական շրջանում են ՀՀ եկել: Փորձ է արուել նաեւ սիրիահայերի՝ ՀՀ գաղթի վերաբերեալ միջազգային եւ տեղական մամուլի արձագանգները դիտարկել:

Ուսումնասիրութեան գլխաւոր խնդիրն է դիտարկել թէ ինչպէ՛ս են ներկայացւում Սիրիայից գաղթած եւ ՀՀում ժամանակաւոր կամ մշտական հաստատուած սիրիահայերը: Արդեօ՞ք նրանք ներկայացւում են որպէս «վերագաղթեալներ», «վերադարձողներ» եւ «գաղթականնե՞ր», թէ՞՝ փախստականներ: Սրա հետ մէկտեղ հետաքրքիր է դիտարկել այս «գաղթի»՝ որպէս Ցեղասպանութեան յիշողութեան նոր խթան հանդիսանալը[4]: Որպէս ուսումնասիրութեան մեթոդ ընտրուել է խորը կենսագրական հարցազրոյցները:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀՈԼՈՎՈՅԹՈՒՄ

«Յիշողութեան աշխատանքը» իր մէջ ներառում է մշակութային եւ քաղաքական փորձառութիւն, որը հնարաւոր է դարձնում իմաստաւորել անցեալի նշանակութիւնը ներկայի հոլովոյթում:

Եթէ փորձենք գտնել հայկական ինքնութեան առանձնայատկութիւնները եւ փորձենք հարցման միջոցով հասնել ինքնադիտարկման արդիւնքների, ապա կը տեսնենք[5] որ այդ ինքնադիտարկման մէջ իր մեծ տեղն ունի Ցեղասպանութեան յիշողութիւնը: Այն հանդէս է գալիս ընդհանուր ողբերգական-տրաումատիկ յիշողութեան դիտանկիւնից եւ թէ ո՞վ է հայը եզրոյթ-հարցի շրջանակներում, հետաքրքիր է, որ տարբեր գաղթօճախներում, տարբեր դաստիարակութիւններ ստացած հայեր, թուարկելով հայի յատկանիշները, անպատճառ կը շեշտեն՝ Ցեղասպանութիւն ապրած լինելու փաստը: Ինչպիսի՞ տեղ ունի Ցեղասպանութիւնը հայոց ինքնութեան մէջ: Սա ընդհանուր ողբի-տրաւման է, որով հայերը միաւորւում են մի «ցաւ»ի, մի պատմութեան շուրջ, որը էթնիկ յիշողութեան ակունքներում է գտնւում[6]:

ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՈՍԿՈՐՆԵՐԻ ՎՐԱՅ ՍԿՍՈՒԵՑ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ. ՄԱՄՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆԳ

2013 Դեկտեմբերի 1ին *The Independent*ում լոյս տեսաւ Ռոբերտ Ֆիսկի «Nearly a century after the Armenian genocide, these people are still being slaughtered in Syria» յօդուածը[7], որի առաջին հատուածում հեղինակը յիշում էր իր կողմից երեսնամեայ հնութեան պեղած «20րդ դարի չճանաչուած առաջին ցեղասպանութեան զոհ» հայերի կմախքներն ու

գանկերը: Կապելով սիրիական հակամարտութիւնը եւ այնտեղ հայերի զոհերը Հայոց Ցեղասպանութեան հետ՝ արդէն իսկ սոյն դէպքերի պատմական յիշողութիւնը հանրայնացւում էր, այն էլ օտար հեղինակի կողմից: Այսինքն, սիրիական հակամարտութիւնը սիրիահայերի տեսանկիւնից Ցեղասպանութեան յիշողութեան վերապրում էր դիտարկւում ոչ միայն դրա կրողների՝ հայերի կողմից, այլ նաեւ այլէթնիկ հասարակութիւնների կողմից: Սակայն հետաքրքիր է, որ օտար լրագրողի այսպիսի արձագանգը նաեւ կապուած է այն մարդկանց, որոնց հետ նա հարցազրոյց է անցկացրել: Վերոնշեալ յօդուածում լրագրողը նշում է հայ հոգեւորականի հետ զրոյցը եւ հոգեւորականի խօսքերը, որոնք որոշակի շեշտադրում էին Ցեղասպանութեան յիշողութեան միտումները: Օրինակ յօդուածում Ֆիսկը պատմում է.

> Երէկ ես կապուեցի Դամասկոսի եպիսկոպոս Արմաշ Նալբանդեանի հետ, ով պատմեց ինձ, որ Տէր Զօրի եկեղեցին տուժել է ռմբակոծութիւնից[8]: Եկեղեցու վնասուելուց զատ աւելի կարեւոր է Ցեղասպանութեան յիշողութիւնը, որն իրօք կարող է կործանուել...[9]:

Այստեղ կարելի է տեսնել, որ հոգեւորականը Տէր Զօրի ընկալումն արդէն իսկ տանում է դէպի Հայոց Ցեղասպանութիւն, որից յետոյ յօդուածագիրն ինքն է այն համեմատում Հոլոքոստի հետ եւ անցնում իւրաքանչիւր Ցեղասպանութեան յուշահամալիրի պահպանման պատմութեան կարեւորութեանը: Թերեւս հենց սիրիական պատերազմի դիտանկիւնը տեղափոխւում է Ցեղապանութեան յիշողութիւն:

Մամուլի հետաքրքիր երկրորդ անդրադարձը Ազատութիւն Ռադիօկայանի տեսանիւթերն էին, որոնք անընդհատ կապւում էին Ցեղասպանութեան հետ: Ազատութիւն Ռադիօկայանի լրագրողների հիմնական հարցերը հարիւր տարի առաջ ապրած ողբի-տրաումայի վերյիշումն էր եւ հենց հարցերը նոյն հոլովոյթն ունէին, որն աւելի առասպելական մեկնաբանութիւն էր ստանում սիրիահայերի կողմից: Որպէս օրինակ *«Հայաստան գաղթած սիրիահայ ընտանիքի համար «պատմութիւնը կրկնւում է»*[10] տեսանիւթը պատմում էր սիրիահայ մի ընտանիքի մասին, ովքեր արդէն երկու տարի է բնակւում են ՀՀում: Տեսանիւթը սկսւում է Հայոց Ցեղասպանութեան վերապրածների լուսանկարներով եւ այդ ընտանիքի պապերի (ովքեր եւս հաւանաբար Հայոց Ցեղասպանութեան վերապրողներ են) ընտանեկան լուսանկարների ցուցադրութեամբ: Սոյն տեսանիւթերի կարեւոր կէտերից էին նաեւ Հայոց Ցեղասպանութեան տարիներին հայաթափուած տարածքների վերաբերեալ վերյուշերի նկարագրումը, Ցեղասպանութեան

մասին ոչ-հակիրճ անդրադարձը եւ նոր միայն զրոյցը սիրիահայ փախստականների հետ[11]:

Մամուլի դիտարկումը հետաքրքիր նմանութիւն ունի Սումգայիթեան Դէպքերից յետոյ ՀՀում վերստին Հայոց Ցեղասպանութեան համեմատականի հետ: Սրա մասին Յարութիւն Մարութեանը նկատում է. «*1988թ. Ապրիլի 24-ին Եղեռնի զոհերի յուշահամալիր առանձին անհատներից, բայց աւելի շատ՝ կազմակերպութիւնների անունից բերուած փասնեակ ծաղկեպսակների սգոյ ժապաւէնները վկայում էին, որ դրանք ուղղուած էին ինչպէս 1915թ., այնպէս էլ Սումգայիթի զոհերի յիշատակին…*»[12]: Նոյնատիպ իրավիճակների կարելի էր հանդիպել հիմնականում սիրիահայերի ՀՀ հաստատուելու առաջին երկու տարիներին, երբ Ապրիլի 24ի մամուլի անդրադարձները հիմնականում սիրիահայերի շրջանակներում էր լինում: Օրինակ 2013 Ապրիլի 25ի armlur համացանցային պարբերականը «***Բախտ չունեցայ ուրախ հայի հանդիպել***»[13] խորագրով յօդուածում հարցազրոյցներ էր անցկացրել սիրիահայ փախստականների հետ, որոնք համեմատելի նիւթ էին հանդիսացել Հայոց Ցեղասպանութեան հետ սոյն կայքի համար: Այս նիւթում հետաքրքիր է, որ յօդուածագիրը յօդուածը շարադրում է այսպէս.

> Երէկ հազարաւոր հայաստանցիներ, արցախահայեր, սփիւռքահայեր եւ օտարերկրեայ հիւրեր այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին 98 տարի առաջ Օսմանեան Թուրքիայում ցեղասպանութեան զոհ դարձած աւելի քան մէկուկէս միլիոն հայերի յիշատակին: Երէկ «Ժողովուրդ»ը **Ծիծեռնակաբերդի յուշահամալիրում զրուցեց միքանի սիրիահայերի** հետ…[14]:

Այստեղ որոշակի շեշտադրում ենք տեսնում. այդ շեշտադրումը Հայոց Ցեղասպանութեան յիշողութեան «կենդանի վկաների» դերում տեսնում է սիրիահայերին, որով արդէն իսկ բանասացին ուղղորդում է դէպի սոյն յիշողութեան վերընկալումը կամ սեփական ընկալումներում վերստին դիտարկումը:

Շեշտուած հատուածները հիմնականում՝ **«գաղթեցին այստեղ» «սա մեր տունն ու հողն է»** արտայայտութիւնները եւս, ուղղակի կապ ունէին Հայոց Ցեղասպանութեան յիշողութեան հետ եւ այսկերպ փորձ էր արւում առաւել քան կառուցողական ձեւով անընդհատ համեմատականներ տալ «Հայոց Մեծ Ցեղասպանութեան» եւ «Սիրիահայերի գաղթը Հայաստանի Հանրապետութիւն» երեւոյթների հետ:

ԾԱՌԸ ԱՐՄԱՏԻՑ ՀԱՆԵՑԻՆՔ, ԷՍՏԵՂ ՆՈՐ ԾԱՌ ԿԸ ՏՆԿԵՆՔ...

Յիշողութեան մարդաբանութեան հոլովոյթում սիրիահայերի վերջին հնգամեակի ընթացքում տեղի ունեցած դէպքերը դիտարկւում են հետեւեալ կերպ.-

- Ինչպիսի՞ տրաւումա են ապրել այս համայնքի ներկայացուցիչները եւ ինչպէ՞ս են կարողանում մեկնաբանել նրանք սոյն ողբ-տրաւուման:
- Ինչպէ՞ս են պատկերացնում գաղթը արդէն 100 տարի իրենց հայրենիք կոչուած Սիրիայից եւ ի՞նչ է Հայաստանը իրենց հաւաքական յիշողութեան ամբողջութեան մէջ:
- Ո՞րն է կապը Ցեղասպանութեան յիշողութեան եւ ինչու՞ ենք այս դէպքերը ուղիղ գծով կապում հենց Ցեղասպանութեան յիշողութեան վերապրման:

Սոյն հարցերի պատասխանները գտնելու համար, որպէս մարդաբանութեան մեթոդ օգտագործել եմ խորը կենսագրական հարցազրոյցները, որի ընթացքում հիմնական շեշտը դրուել է ոչ թէ բուն հարցի որոշակի պատասխանների վրայ, այլ այս հարցերի իւրովի ընկալման եւ մեկնաբանման վրայ:

- Ծառ էինք տնկել, մեզի պտուղ էր տուել, ծառը արմատից հանեցինք, էստեղ նոր ծառ կը տնկենք, հունձքի ենք սպասում:
- Միշտ ջերմութիւն կայ, կարօտ կայ: Քիչ մը ազդեցութիւն ունի, փափաք կայ գալու, ինքնութիւն էլ կայ տուն ունենք էստեղ, մեր երկրորդ հայրենիքը Սիրիան է:
- Մեր հացը հոն է, պայմանները վատանան՝ հայրենիքում կը հաւաքուենք:

Սոյն մէջբերումները հարցապնդուողների գրոյթներից են, դեռ նոր էին ինքնաթիռից իջել եւ առաջին մտքերն էր, որ իրենք արտայայտում էին: Ի՞նչ է էստեղ կարեւոր: Այստեղ ուշագրաւ է այն, որ բոլոր երեք մէջբերումներում էլ տեսնում ենք Հայաստանը, որպէս հաւաքական հայրենիքի ընկալում: Որպէս խորհրդանիշներ օգտագործւում են «ծառ», «հաց», «տուն» եզրոյթները:

Իսկ ո՞րն է Ցեղասպանութեան յիշողութեան արտայայտումը գրոյթներում՝ ահա.-

- Իմ ծնողները, պապիկս տատիկս Այնթէպից են եկել, իսկ միւս մասը Եդեսիայէն: Տարբեր տանջանքներով դժուարութիւններով, Ուրֆայի ջարդը ահաւոր եղել է, իսկ Այնթապի ջարդն էլ եղել է, իմ ընտանիքը բեռնաւորուած կարողացել են բերել: Ի՞նչ կը կարողանան բերել, աւտօբուսներ բան չի եղել:

Հարցապնդուողը մեծ դժուարութեամբ հասել էր Լիբանան եւ ապա այնտեղից ինքնաթիռով հասել Երեւան: Իր նախնիների տանջանքները պատմելիս փորձում էր համեմատական անցկացնել իր նոր տրաումայի եւ հաւաքական տրաումայի միջեւ: Փաստօրէն «աւտօբուսը» եզրոյթ էր, որով իր տրաուման փոքրացնում էր պապերի ապրած Ցեղասպանութեան տարիների գաղթին համեմատելով, բայց արդէն իսկ համեմատականը խօսում էր ողբի-տրաումայի վերապրման մասին:

- Սա մեր երկրորդ գաղթն էր...

- Պատմութիւնը կրկնւում է, բայց այս անգամ մենք գաղթել ենք Հայաստան:

Սրանք եւս արտայայտութիւններ են, որոնք ցուցում են Ցեղասպանութեան յիշողութիւնը, որն ինքնութեան մէջ է եւ այդ յիշողութեան արտայայտումը դրսեւորւում է համեմատականի ձեւով. Սիրիական Ճգնաժամի ընթացքում ի յայտ եկած դժուարութիւնները համեմատւում են պապերի վերապրած դժուար օրերի հետ:

Այս բանալի-խօսքերից բացի, հետաքրքիր էր, որ բոլոր հարցազրոյցներում իրենց կենսագրութեան պատմութիւնը սկսւում էր ոչ թէ Սիրիայի այս կամ այն քաղաքի մասին պատումով, այլ սկսում էին պատմել, որ իրենք Արեւմտեան Հայաստանի այս կամ այն քաղաքից են եւ մեծ պապը Հայոց Ցեղասպանութեան տարիներին մազապուրծ հասել է Սիրիա: Փաստօրէն կենսագրականները սկսւում էին, ոչ թէ իրենց մանկութիւնից կամ կեանքի անկիւնադարձային դէպքից՝ ծնունդ, հարսանիք, պաշտօն ստանձնել, համայնավար լինել, այլ հենց Հայոց Ցեղասպանութեան նախօրէից, որն էլ մեծապէս ազդեցութիւն էր թողնում իրենց ներգաղթի ընկալման ու այն ներկայացնելու վրայ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Որպէս վերջաբան փորձենք վերոգրեալ նիւթի քննական վերլուծութեան մէջ հիմնական կէտերի անդրադարձը տալ: Այսպէս, որպէս հիմնակէտեր են.-

- Հայ նահատակների ոսկորների վրայ սկսուեց սիրիական հակամարտութիւնը (Ազատութիւն TVն սիրիահայերի՝ Հայաստան վերադարձի մասին).
- Ցեղասպանութեան յիշողութիւնը եւ «գաղթ»ի վերապրումը սիրիահայոց ընկալումներում:

Առաջին հատուածում, ներկայացնելով միջազգային եւ տեղական՝ հայկական մամուլի արձագանգը սոյն խնդրին, թերեւս, թւում է, թէ բոլոր կէտերով փորձ էր արւում պաշտօնական, եկեղեցական մակարդակով

իրօք համեմատական անցկացնել Հայոց Ցեղասպանութեան եւ Սիրիական Ճգնաժամի տարիներին սիրիահայերի՝ ՀՀ հաստատուելու հետ:

Երկրորդ հատուածում, դաշտային նիւթի քննարկումը ցոյց է տալիս, որ գաղութային ընկալումներում ընդհանրապէս արմատների վերաբերեալ վերյուշը բնական երեւոյթ է եւ միգուցէ այն խաղաղ պայմաններում էլ սոյն թեմային անդրադարձ անի՝ առանց Հայոց Ցեղասպանութեան հետ համեմատականի: Իհարկէ այստեղ կարելի է նշել պաշտօնական եւ մամուլի արձագանգների ազդեցութիւնը անհատական կարծիքների վրայ, սակայն ամէն դէպքում այն փաստը, որ իւրաքանչիւր գաղութահայ իր՝ տուեալ էթնոսին, համայնքին պատկանելութիւնը արտայայտում է վերադարձ արմատներին սկզբունքով, ապա այստեղ կասկածելի է թւում անհատական մակարդակով այս երկու դէպքերի **յստակ համեմատականի՝ Ցեղասպանութիւնից մազապուրծ ու Սիրիական ճգնաժամի տարիներին Հայաստան ներգաթի, ներկայութիւնը:** Որից ելնելով էլ յստակ չի պարզորոշւում արդեօ՞ք ՀՀ ներգաղթեալ սիրիահայերը իրենց համարում են «վերադարձողներ» իսկ այս ներգաղթի պատճառները համեմատում Մեծ Եղեռնի «պատմութեան կրկնութեան հետ»՝ հիմք ընդունելով ընտանեկան, ընկերային, համայնքային յարաբերութիւններում Մեծ Եղեռնի յիշողութեան մեծ դե՞րը, թէ՞ այսկերպ ներգաղթի ներկայացնելը կապուած է հենց պաշտօնական եւ լրատուական տեսակէտների ու քարոզի հետ:

Չբացառելով ողբի յիշողութեան դերն ու դրա փոխակերպումն ու տեղայնացումը մի նոր ողբի իյայտ գալու հետ՝ զգուշօրէն, բայց հիմնաւոր առաջ ենք քաշում այն տեսութիւնը, որ արտաքին (այստեղ նկատի ունենք պաշտօնական տեսակէտն ու մամուլի քարոզչութիւնը) ազդեցութիւնը իր հետքն է թողել Սիրիական Ճգնաժամը Հայոց Մեծ Եղեռնի «շարունակութիւն» ընկալելու վրայ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Յարութիւն Մարութեան, *Յիշողութեան Դերն Ազգային Ինքնութեան Կառուցուածքում*, Երեւան, «Նորավանք» ԳԿՀ, 2006, էջ 6՝

[2] Սոյն յօդուածում անդրադարձը վերաբերում է 2011-2015ի ընթացքում Հայաստան ներգաղթած սիրիահայերին:

[3] http://kasa.am/?page_id=7 (մատչում՝ 16 Հոկտ. 2015):

[4] Բոլոր եզրոյթները, որոնք այս կամ այն կերպ կ'առնչուեն սիրիահայերի տեղաշարժը անուանելու հետ մենք կը վերցնենք չակերտների մէջ, դրանով իսկ խուսափելով արհեստական ուղղորդում ապահովելուց:

[5] Ընկերային Facebook ցանցի միջոցով մէկ հարցի՝ «Ես հայ եմ, որոուհետեւ» պատասխանների գերիշխող մեծամասնութիւնը բնութագրում էր ինքնութեան կարեւոր ցուցիչ՝ Ցեղասպանութիւն ապրած լինելը:

[6] Հարցումների ընթացքում «Ե՞րբ էք առաջին անգամ լսել Հայոց Ցեղասպանութեան մասին» հարցին մեծամասնութեան պատասխանը 5-6 տարեկանն էր, իսկ յաջորդ տարածուած պատասխանը «Մայրիկ» ֆիլմի միջոցով, որը 1980-90ականներին ծնուածների համար համապատասխանում է 5-10 տարեկան հասակը:

[7] http://www.independent.co.uk/voices/comment/nearly-a-century-after-the-armenian-genocide-these-people-are-still-being-slaughtered-in-syria-8975976.html (մատչում՝ 16 Հոկտ. 2015):

[8] Այն տեղի ունեցաւ 21 Սեպտեմբեր 2013ին:

[9] Բնօրինակը՝ http://www.independent.co.uk/voices/comment/nearly-a-century-after-the-armenian-genocide-these-people-are-still-being-slaughtered-in-syria-8975976.html (մատչում՝ 17 Հոկտ. 2015):

[10] Սոյն տեսանիւթը կարող առկայ է http://www.azatutyun.am/content/article/26976585.html (մատչում՝ 16 Հոկտ. 2015):

[11] Մենք փորձում ենք օգտագործման մէջ ներառել «փախստական» եզրոյթը որպէս անկողմնակալ դիրքորոշում, քանի որ «վերադարձ» եւ «գաղթական» եզրոյթները սոյն քննարկման շրջանակներում նոյնացւում են Հայոց Ցեղասպանութեան հետ:

[12] Յարութիւն Մարութեան, *Հայ Ինքնութեան Պատկերագրութիւնը, Ցեղասպանութեան Յիշողութիւնը եւ Ղարաբաղեան Շարժումը*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ. 2009, էջ 129-130:

[13] http://armlur.am/45817/ (մատչում՝ 16 Հոկտ. 2015):

[14] Նոյն:

Genocide Memory and the Syrian Armenians:
Return to the Fatherland (Memory Anthropology)
(Summary)

Khoren Grigorian
xorenbask86@gmail.com

The paper studies Syrian Armenians temporarily or permanently settled in the Republic of Armenia (RA) as once-more refugees and argues that this refugee crisis provides new motivation for establishing a collective memory of the Armenian genocide.

The paper is based on extensive interviews with ten Syrian-Armenian refugees, in which it becomes evident that these refugees see their settlement in RA as a continuation of their refugee identity. Alongside the interviews Syrian Armenian survivors' memoirs have been researched and referred to in order to validate the author's arguments. Thus, a renewed version of perception of oneself as a refugee in the third and fourth generation is registered.

Based on the experience of these Syrian Armenian refugees, the paper describes memory of the Genocide from a human archeological memory perspective.

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ. ԽՆԴԻՐՆԵՐ, ԼՈՒԾՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Թեհմինէ Մարտոյեան
tehminemartoyan@gmail.com

ՄՈՒՏՔ

Սիրիահայ համայնքը կարեւոր դեր է խաղացել եւ շարունակում է խաղալ ազգային արժէքների ստեղծման գործընթացում. այն հայկական մշակոյթի, պատմական յիշողութեան, ազգային ինքնագիտակցութեան կրողն է: Կրթութեան, գիտութեան, գրականութեան, մամուլի եւ այլ բնագաւառներում սիրիահայութեան յաջողութիւններն անգնահատելի են մշակոյթի զարգացման եւ հայապահպանութեան տեսանկիւնից: Սիրիահայ մշակոյթը հայ մշակոյթի անքակտելի մասն է, իսկ սերունդներին փոխանցուած մշակութային ժառանգութիւնը նպաստում է ազգային ինքնագիտակցութեան եւ ոգու պահպանութեանը: Դժբախտաբար, պատմական զարգացման այս ժամանակահատուածում քաղաքական իրադարձութիւնները Սիրիայի Արաբական Հանրապետութիւնում (ՍԱՀ) անբարենպաստ են եւ կործանարար:

Չթերագնահատելով գերտէրութիւնների «մտահոգութիւնները» Սիրիայի ճգնաժամի առնչութեամբ, հարկ է առանձնացնել Հայաստանի Հանրապետութեան համար առաջնային համարուող խնդիրը՝ սիրիահայութեան անվտանգութիւնը:

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Ինչպէ՞ս իրականացաւ սիրիահայերի հայրենադարձութիւնը, ինչպէ՞ս արձագանգեցին ՀՀն եւ ԼՂՀն, կա՞ր արդեօք հասարակութեան մէջ սիրիահայերի ներգրաւման յստակ եւ համակարգուած ծրագիր: Որո՞նք են առկայ խնդիրները, որ այսօր ծառացած են սիրիահայերի առջեւ:

«Հասարակութեան մէջ սիրիահայերի ներգրաւում» ասելով նկատի ունենք սիրիահայութեան եւ միջավայրի փոխյարմարումը, այդ գործընթացում կարեւորելով յատկապէս միջավայրի դերակատարութիւնը: Միջավայրին յարմարուելը կամ միջավայրի յարմարեցումը սիրիահայութեան առաջնահերթ խնդիրներից է:

Հարկ է նշել, որ ՀՀում եւ ԼՂՀում իրականացուեցին տարաբնոյթ միջոցառումներ: Այսպէս, 18 Յուլիս 2012ին Երեւանում «Սեւծովեան Տարածաշրջանի Խաղաղաշինական Ցանց»ի աջակցութեամբ հրաւիրուեց կլոր սեղան-քննարկում, որին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտօնատարներ, միջազգային կառոյցների ներկայացուցիչներ: «Սիրիա. Տարածաշրջանային Համատեքստն ու Հայերի Հարցերը» վերնագրով քննարկման

մասնակիցների արտայայտած կարծիքների համաձայն՝ «*նախ անհրաժեշտ է սիրիահայերի՝ Հայաստան տեղափոխուելու յստակ արտայայտուած ցանկութիւնն ու կամքը, ինչը ո՛չ նախկինում է արտայայտուել, ո՛չ էլ այսօր է լսելի: Երկրորդ՝ անհրաժեշտ է Հայաստանի պատրաստակամութիւնը՝ ընդունելու սիրիահայերին: Երրորդ՝ անհրաժեշտ է մարդասիրական միջամտութեան գործողութիւնների ծրագիր եւ դրա իրականացման ռեսուրսային իրատեսական բազա՝ յատկապէս Սփիւռքի այնպիսի խոշոր համայնքի պարագայում, ինչպիսին Սիրիան է: Ընդ որում, մարդասիրական աջակցութեան ջանքերի մոբիլիզացիան չպէտք է ծանրանայ բացառապէս Արտաքին գործերի եւ Սփիւռքի նախարարութիւնների ու միգրացիոն պետական ծառայութեան ուսերին: Թէպէտ նշուած պետական մարմինները կենտրոնական դեր ունեն աջակցութեան քաղաքականութեան մշակման եւ իրականացման գործում, այդուհանդերձ, անհրաժեշտութեան դէպքում որեւէ պետական մարմին անմասն չպէտք է մնայ. չէ՞ որ աջակցութեան մեխանիզմը գործի դնելու համար անհրաժեշտ են ֆինանսական ռեսուրսներ, կացարաններ եւ հանրային այլ միջոցներ: Այսպէս, ՀՀ Կենտրոնական Բանկը, կառավարութիւնը եւ այլ մարմիններ վարչական տարածքներ ունեն, օրինակ՝ հանգստեան տներ, որոնք անհրաժեշտութեան դէպքում պէտք է պատրաստ լինեն ընդունել եւ սպասարկել սիրիահայ փախստականներին*»[1]:

Սիրիայում քաղաքացիական պատերազմի հետեւանքով - հիմնականում 2012ից - տասնեակ հազարաւոր ընտանիքներ իրենց հանգրուանը Մայր Հայրենիքում գտնելու յոյսով ժամանեցին ՀՀ եւ ԼՂՀ:

ՀՀում սիրիահայերի հաստատման ուղիները տարբեր են եղել. Հալէպ-Երեւան, Պէյրութ-Երեւան չուերթեր, Հալէպ-Երեւան փոխադրակառքերի երթուղի, անհատական մեքենաներով ժամանումներ[2]: Հարկ է նկատել, որ սիրիահայերի հայրենադարձութիւնը[3] տեղի ունեցաւ բաւականին դժուար պայմաններում, հետեւաբար հասարակութեան մէջ նրանց ներգրաւման խնդիրը բարդ է եւ ժամանակատար: Այս հարցում յատկապէս կարեւորւում է Հայրենիքի հոգածութիւնը սիրիահայերի նկատմամբ: Բացի դրանից, հասարակական կազմակերպութիւնները, անհատները եւ ողջ հասարակութիւնը պէտք է միաւորուեն եւ անշահախնդիր նուիրումով աջակցեն սիրիահայերին: Նրանց գործադրած ջանքերը պէտք է նպաստեն, որ սիրիահայերը վերաիմաստաւորեն իրենց կեանքն ու վերստին գտնեն ապագայի հանդէպ կորցրած հաւատը հենց իրենց հայրենիքում, մանաւանդ որ տեղի ունեցած սարսափների արհաւիրքները վերապրած սիրիահայերի շրջանում հայրենիքը լքելու վտանգ կայ:

14 Յունուար 2013ին որոշում ընդունուեց սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական յանձնաժողով ստեղծելու մասին[4]: ՀՀ կառավարութիւնը մէկ այլ որոշում ընդունեց (23

Օգոստոսի 2012՝ n 1106ն) Սիրիայի Արաբական Հանրապետութեան՝ ազգութեամբ հայ քաղաքացիների վարորդական վկայականները փոխանակելու մասին[5]:

Պետութիւնը ՀՀ քաղաքացիների, այդ թւում՝ երկքաղաքացիների, սիրիահայերի համար երաշխաւորում է պետական ուսումնական հաստատութիւններում անվճար ընդհանուր միջնակարգ կրթութիւն, մրցութային կարգով անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագոյն եւ յետբուհական մասնագիտական կրթութիւն[6]:

ՀՀում օտարերկրացիների (սիրիահայերի) իրաւունքների մասին համառօտագրում նշուած է, որ «*իւրաքանչիւր ոք, այդ թւում՝ օտարերկրացին ունի օրէնքով սահմանուած եղանակներով բժշկական օգնութիւն եւ սպասարկում ստանալու իրաւունք: ՀՀում բժշկական օգնութիւն եւ սպասարկում իրականացնողները պարտաւոր են իւրաքանչիւր մարդու (այդ թւում՝ օտարերկրացու) ցուցաբերել անյետաձգելի, առաջին բժշկական օգնութիւն՝ անկախ այդ օգնութեան դիմաց վարձատրութիւնը երաշխաւորող հիմքերի եւ այլ հանգամանքների առկայութիւնից: Սիրիահայերն օգտւում են պոլիկլինիկայի ծառայութիւններից անվճար*»[7]:

2 Հոկտեմբերի 2013ին հրապարակուեց ՀՀ Սփիւռքի Նախարարութեան, ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) եւ Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան համատեղ յայտարարութիւնը Հայաստանի բարձրագոյն ու միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններում սովորող սիրիահայ ուսանողների կրթաթոշակների փոխհատուցման մասին: 2013-14 կրթաշրջանին շուրջ 400 ուսանող օգտուեց համատեղ այս ծրագրից, իսկ 2014-15 կրթաշրջանի համար նոյնքան թուով ուսանող ստացաւ կրթավճարի փոխհատուցում: Ծրագիրը շարունակուելու է նաեւ 2015-16 ուսումնական տարեշրջանին[8]:

Միանգամայն իրաւացի է արաբագէտ Արմէն Պետրոսեանը, երբ նշում է. «*Սիրիահայութեան խնդիրը համայն հայութեան խնդիրն է, որը պէտք է միաւորի աշխարհասփիւռ հայութեանը նրա մի հատուածին համակողմանի աջակցութիւն ցուցաբերելու գործում: Անընդունելի է սիրիահայութեան խնդիրը տարբեր բնոյթի շահարկումների առարկայ դարձնել թէ՛ Հայաստանում եւ թէ՛ նրանից դուրս: Մի բան ակնյայտ է, որ այս հարցում միասնութիւն, համախմբուածութիւն, եւ լուրջ համագործակցութիւն է պահանջւում, եւ դրանում առանցքային դերակատարութիւն պէտք է ունենայ ՀՀն՝ մի կողմից որպէս միջազգային յարաբերութիւնների եւ միջազգային իրաւունքի սուբեկտ, միւս կողմից՝ որպէս բոլոր հայերի Մայր Հայրենիք: Եթէ մինչ այս՝ Հայաստանին, յանձին Սփիւռքի Նախարարութեան, յաջողուել է մշակոյթի, կրթութեան եւ գիտութեան բնագաւառներում բաւականին լուրջ միջոցառումներ*

իրականացնել, ապա այժմ ժամանակն է համախմբուելու եւ ճգնաժամային հարցերում միասնական դիրքորոշում որդեգրելու, գործողութիւնների ռազմավարական ծրագիր մշակելու համար, քանի որ աշխարհի որեւէ պետութիւն ապահովագրուած չէ հակամարտութիւններից, ճգնաժամերից, բնական աղէտներից եւ այլ ֆորսմաժորային իրավիճակներից, եւ նման խնդիրներ կարող են առաջանալ նաեւ այլ երկրներում հաստատուած մեր հայրենակիցների համար, ինչին համարժէք գործողութիւնների ռազմավարութեան ստեղծումն արդէն իսկ ազգային անվտանգութեան հրամայական է: Նման ծրագրերի մշակման գործում պէտք է հաշուի առնուեն Սփիւռքում գործող մարմինների, այն է՝ հայ համայնքների կառավարման համակարգի, եկեղեցական կառոյցների գործունէութեան եւ դերակատարութեան, մշակութային, երիտասարդական միութիւնների դերակատարութեան առանձնայատկութիւնները: Այս հարցը պահանջում է չափազանց լուրջ մօտեցում, նաեւ գիտական ուսումնասիրութիւն, տարբեր ոլորտների մասնագէտների ներգրաւուածութիւն: Անհրաժեշտութեան դէպքում պէտք է համակարգուի համահայկական բարեգործական կառոյցների աշխատանքները՝ մեր հայրենակիցներին նիւթական աջակցութիւն ցուցաբերելու նպատակով: Սիրիահայերին աջակցութեան խնդիրը կարող է լուրջ նախադէպ դառնալ նման իրավիճակներում Հայրենիք-Սփիւռք համագործակցութեան համար»[9]:

Չթերագնահատելով ՀՀ եւ ԼՂՀի՝ պետական մակարդակով իրականացուած միջոցառումները՝ ուղղուած սիրիահայութեան խնդիրների բացայայտմանն ու լուծմանը, այս ուսումնասիրութիւնը պատրաստելիս իրական եւ ամբողջական պատկերը տեսնելու եւ անաչառ ներկայացնելու նպատակով դիմել ենք հարցազրոյցների մեթոդին: Հարցազրոյցներն իրականացուել են 2015ին, հիմնականում Երեւանում, Աբովեանում եւ այլ քաղաքներում բնակուող սիրիահայերի շրջանում: Քսանհինգ սիրիահայի հետ մեր վարած հարցազրոյցները հիմնականում իրականացրել ենք իրենց աշխատավայրերում՝ անդրադառնալով կացութեան կարգավիճակին, աշխատանքային գործունէութեանը, կրթութեան հիմնահարցին, իրենց յուզող խնդիրներին: Որպէս հիմնանիւթ օգտագործել ենք նաև սիրիահայութեան հետ անցկացուած զրոյցները: Հետեւաբար, շատ դրոյթներ եւ տեսակէտներ կարող են եւ չհամընկնել պետական, պաշտօնական վիճակագրական տուեալների հետ:

Սիրիահայութեան շրջանում իրականացուած ամէնատարբեր մասնագիտութիւնների, մտածողութեան, աշխարհայեացքի, հնարաւորութեան, տարիքի տէր մարդկանց հետ ունեցած հարցազրոյցների արդիւնքներն ամփոփելիս սիրիահայութեան խնդիրները պայմանականօրէն բաժանեցինք ըստ հրատապութեան:

Պարզ դարձաւ, որ սիրիահայութեան գերակշիռ մեծամասնութիւնն ունի հետեւեալ հիմնական, կարեւոր եւ կենսական խնդիրները.-

Ա) ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Սփիւռքի Նախարարութեան տուեալներով 2012ից մինչ այսօր աւելի քան 11 հազար սիրիահայ է հաստատուել ՀՀում[10]:

Ինչպէս իրաւացիօրէն նշում է ազգագրագէտ Արսէն Յակոբեանը «*սիրիահայերի՝ դէպի Հայաստան ընտրութիւնը, ՀՀ քաղաքացիութիւն կամ կեցութեան երկարատեւ իրաւունք ձեռք բերելը, ի թիւս այլ գործօնների (հայրենիքի ընկալում եւն.), թելադրուած է եղել նաեւ սիրիական անձնագրերով այլ երկիր, բացառութեամբ հարեւան երկրների (Յորդանան, Լիբանան, Թուրքիա, Իրաք) մեկնելու լուրջ խոչընդոտներով: Հայաստանն ընտրուել է նաեւ այն պատճառով, որ ՀՀ քաղաքացիութիւն/երկքաղաքացիութիւն ստանալը, եւ ՀՀ անձնագիրը թոյլ է տալիս մեկնել նաեւ այլ երկրներ՝ ապահովելով տեղաշարժի ազատութիւն, ինչպէս նաեւ որոշակի իրաւաքաղաքական պաշտպանուածութիւն: Բնականաբար, մի բան է ունենալ այլ երկրներում փաստացի չճանաչուող անձնագիր, այլ՝ միջազգայնօրէն ճանաչուած անձնագիր*»[11]:

Միանգամայն ճիշտ է նկատել Յակոբեանը, որ ՀՀն պէտք է ունենար սիրիահայերի փաստագրման որոշակի համակարգ ու գործիքակազմ - թերեւս նաեւ համապատասխան տուեալների շտեմարան - քանի որ տուեալ պարագայում խնդիրը ոչ թէ ՀՀ սահմանը հատելու սովորական գործընթացի խնդիր է, այլ ըստ էութեան խմբային ներգաղթ՝ *դէ ֆակտո* փախստականական բնութագրով[12]:

ՀՀում հաստատուած սիրիահայերը ներկայացնում են ընկերային տարբեր շերտեր՝ գործարարներ, արհեստաւորներ, բժիշկներ եւն.[13]:

ՀՀում հաստատուած սիրիահայերն ունեն տարբեր իրաւական կարգավիճակներ՝ ՀՀ քաղաքացիներ (երկքաղաքացիներ), փախստականներ եւ ապաստան հայցողներ, ժամանակաւոր կամ մշտական (1, 5, 10 տարի ժամկէտով) կեցութիւն ունեցողներ[14]: Ըստ ՀՀ Սփիւռքի Նախարարութեան տուեալների՝ 2012ին ՀՀ քաղաքացիութիւն ստացել է 5026 սիրիահայ, 2013ին՝ 4150 սիրիահայ, 2014ին՝ 153 սիրիահայ: 2012-14՝ ՀՀ քաղաքացիութիւն է ստացել 10,707 սիրիահայ: 2013-14ի ընթացքում ձեռք են բերել ժամանակաւոր (1 տարի) 220, մշտական (5 տարի) 155, յատուկ կարգավիճակներ (10 տարի) 390 սիրիահայեր[15]:

Թէեւ ՀՀի եւ ԼՂՀի կառավարութիւնները խնդիր են դրել լուծել սիրիահայերին բնակարաններով ապահովելու հարցը, այնուամենայնիւ գործադրուող ջանքերը բաւարար չեն, որպէսզի հարցը գոնէ կիսով չափ լուծում ստանայ: Այսպէս, պաշտօնական տուեալների համաձայն՝ ՀՀ Սփիւռքի Նախարարութեանն ու «Սիրիահայերի Հիմնախնդիրները Համակարգող» ՀԿին դիմել է 911 ընտանիք, 3500 անդամով, ժամանակաւոր կացարանով կամ վարձի փոխհատուցմամբ ապահովելու

խնդրանքով, միեւնոյն ժամանակ 24 ընտանիք բնակւում է անհատ բարերարների բնակարաններում, իսկ 72ը՝ Հայ Կաթողիկէ Եկեղեցու հիւրատանը[16]: ՀՀ կառավարութիւնը 6 Յունիս 2013ին որոշում ընդունեց Աշտարակ քաղաքում «Նոր Հալէպ» թաղամասի կառուցմանն աջակցելու մասին ՍԱՀում տիրող պատերազմական իրավիճակի հետեւանքով ՀՀում բնակուող ՍԱՀ ազգութեամբ հայ քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանն աջակցելու նպատակով[17]:

Այն նախատեսում էր Սփիւռքի կառոյցների ու բարերարների միջոցների հաշուին համապատասխան պայմաններով «Նոր Հալէպ» թաղամասում բնակելի տուն ստանալու ցանկութիւն յայտնած սիրիահայերին ապահովել բնակարաններով: Այս նախաձեռնութիւնը կեանքի չկոչուեց. ծրագիրը մշակելիս հաշուի չէր առնուել այն կարեւոր փաստը, որ սիրիահայերի դրամական միջոցները բաւարար չէին այդ թաղամասում բնակելի տուն ձեռք բերելու համար:

Աւելին, շատ ընտանիքներ, որոնք քիչ թէ շատ հնարաւորութիւն են ունեցել բնակարան ձեռք բերելու, կանգնած են իրենց գոյքը հայրենիք վերադարձնելու խնդրի առաջ: Սիրիահայ Կարապետ Քալոյին ՀՀ կառավարութիւնը չի կարողանում յստակ պատասխանել, թէ ինչ անի, որ հեռւում թողած տան գոյքը Հայաստան տեղափոխի: Կարապետ Քալոյի հիասթափութեան արտայայտութեան մասին է հետեւեալ խոստովանութիւնը. «*Եթէ իմանայինք, որ հայրենիքում պէտք է այսպիսի բիւրոկրատական քաշքշուքների մէջ ընկնենք, պատերազմից կը փախնէինք մէկ ուրիշ երկիր*»... «[Արեւմտեան երկրներ] *Ամէն ինչով իրենց կ'ընդունին՝ տուն, ամսական, բժիշկ, դեղեր: Ամէն ինչով... Բոլոր սուրիացիները կը փախնեն [ՀՀից]: Ինչու՞ կը փախնեն: Երբ որ լաւ ըլլար, ինչու՞ կը փախնին: 150 տուն մեր Ղամիշլիէն հոս փոխադրուան, բոլորը Բելգիա գացին, Հոլանդիա գացին*»[18]:

Մէկ այլ օրինակ է Ալեքսան Սողոմոնեանի յայտարարութիւնը. «*Հալէպը տզուի՝ [եւր] կը գնամ: Հալէպ «բարաքեաթ» կայ, խելք կայ, գործ կայ, փող կայ: Այստեղ աղքատ քաղաք է*»: Սողոմոնեանը, ով մէկուկէս տարի է՝ ինչ Հայաստանում է, իր ընտանիքի ապագան Հայաստանի հետ չի կապում: Համատարած գործազրկութեան պայմաններում սիրիահայերից շատերի պէս նա էլ չի կարողանում կայուն ու բաւարար աշխատավարձով աշխատանք գտնել: Սողոմոնեանն արդէն երրորդ աշխատանքն է փոխում: Նրա ընտանիքում այժմ կինն ու մեծ որդին են աշխատում: Ստացած գումարով հազիւ հասցնում են տան վարձը վճարել ու հացի խնդիրը լուծել[19]:

Անորոշութեան մէջ է նաեւ Փեկի Պապօղլեանի ընտանիքը: Չնայած սիրում են հայրենիքը, բայց դեռ չգիտեն, թէ որտեղ իվերջոյ կը հանգրուանեն: «*Ամէն ինչ կախեալ է գործից: Թէ որ գործ ունենաս,*

հանգիստ կեանք ունենաս, շատ լաւ երկիր է: Իհարկէ, որ տան վարձ ես տալիս՝ կեանքը այստեղ մի քիչ աւելի թանկ է»՝ ասում է նա[20]:

Հարկ է նկատել, որ ինչպէս ՀՀում, այնպէս էլ ԼՂՀում հաստատուած սիրիահայ շատ ընտանիքներ կենցաղային տարրական պայմանների բարելաւման անհրաժեշտութիւն ունեն: Բերձորում, Իշխանաձորում եւ Կովսականում պետական եւ բարեգործական տարբեր աղբիւրներից ստացուած գումարներով բնակարանների վերանորոգման աշխատանքներ են իրականացուել:

ՀԲԸՄի ու Չերչեան Ընտանիք Հիմնադրամի առատաձեռն նուիրատուութեան շնորհիւ գիւղտեխնիկայի աջակցութեան ծրագիր է իրականացւում Քաշաթաղում բնակուող սիրիահայ ընտանիքների համար: ԼՂՀ հարաւարեւմտեան հատուածի Ողջի Գետի ափին գտնուող Կովսականում բնակութիւն հաստատած սիրիահայ ընտանիքներին անհատոյց տրամադրուեց գիւղտեխնիկա: Ձեռք են բերուել 3 Բելառուս ՄՏՅ-82.1 մակնիշի տրակտորներ, 2 սերմնացան, ցաքաններ, պարարտանիւթերի ցրիչներ, թունաքիմիկատների սրսկիչ եւ այլ գիւղտեխնիկա: Շատ սիրիահայեր մեծ խանդավառութեամբ իրականացնում են հողագործական աշխատանքներ՝ նպաստելով նաեւ Քաշաթաղի գիւղատնտեսութեան զարգացմանն ու նրանց ընտանիքների խնդիրների լուծմանը[21]:

Բ) ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐ

Հարցազրոյցների արդիւնքում պարզ դարձաւ, որ խնդիրներն իրականում խորքային են, պահանջում են համակարգուած եւ մանրազնին լուծում: Մատնանշուած խնդիրներն են.- «*հայեցակարգի բացակայութիւն, դաստիարակութիւն, օրէնքներ, ռուսախօսութիւն, կենցաղային եւ ապրելակերպի հետ կապուած դժուարութիւններ, գնաճ, աշխատանքային դժուարութիւններ, յատկապէս արտադրութիւն կազմակերպելը, առեւտուրը, հարկային ու մաքսային օրէնքները, ցածր աշխատավարձեր, Հայաստանի ապագայի նկատմամբ տեղացի ժողովրդի ունեցած բացասական կարծիք, բացակայութիւնը՝ կազմակերպչական մարմնի, որը կը համակարգի այս նոր համայնքի հետ կապուած աշխատաքները, նիւթական, ընկերային ու բարոյական խնդիրներ: Արտագաղթի պատճառները իրենց սեփական ինքնավստահութեան եւ նաեւ երկրի ապագայի նկատմամբ վստահութեան բացակայութիւնն է, ինչպէս նաեւ՝ արագ լաւ կեանք ունենալու ձգտումը*»[22]:

Հարցազրոյցների մասնակցած սիրիահայերի արտայայտած տեսակէտները դասակարգելով եւ համադրելով՝ իրենց խնդիրների վերաբերեալ առանձնացրել ենք երկու մօտեցում.

Ա. Լաւատեսական

Բ. Յոռետեսական

Յոռետեսական մօտեցման ներկայացուցիչների խորին համոզմամբ՝ ոչինչ չի փոխուի այնքան ժամանակ, քանի դեռ երկրում տնտեսութիւնն անկայուն է, բաւարար չափով զարգացած չեն արդիւնաբերութիւնը, զբօսաշրջութիւնը եւն.:

Լաւատեսական մօտեցման ներկայացուցիչները, թէեւ վկայակոչում են բազում խնդիրների առկայութիւնը, այնուամենայնիւ, պատրաստակամութիւն են յայտնում պայքարելու ծառացած դժուարութիւնների դէմ՝ համոզուած լինելով որ բոլոր խնդիրները լուծելի են:

Այս մօտեցումներն իրենց հերթին ունեն լաւ եւ վատ ելքեր:

Այսպէս, յոռետեսական մօտեցումը, փաստօրէն, յանգեցնում է արտագաղթի, որը բացասաբար է ազդում առաջին հերթին սիրիահայերի հոգեբանութեան վրայ այն իմաստով, որ հերթական անգամ հարկադրուած հեռանում են Հայրենիքից: Այն բացասական է ազդում նաեւ սփիւռքահայութեան վրայ, հայապահպանութեան, հայութեան՝ իր ապագայի հանդէպ հաւատքի վրայ, Հայկական Դատի հետապնդման աշխատանքների վրայ, Հայաստանի Հանրապետութեան հանդէպ արտասահմանի հայութեան կապուածութեան վրայ:

Լաւատեսականի պարագայում դրական եւ ցանկալի արդիւնք է գրանցւում: Այսպէս, օրինակ, հասարակութեան գիտակից խաւը կարեւորում է սիրիահայի՝ Հայրենիքում մնալու փաստը. գաղտնիք չէ, որ սիրիահայերը մեծ նպաստ եւ լուսաւորութիւն բերեցին նախ իրենց օրինակելի վարքագծով, ապա՝ իրենց աշխատասիրութեան շնորհիւ զարգացրեցին ամէնատարբեր ոլորտներ՝ արհեստագործութիւն, հողագործութիւն եւն.: Շատ սիրիահայեր ինքնատիպ մշակոյթ են մտցրել գիւղատնտեսութեան մէջ՝ նոր մշակաբոյսեր են բերել ԼՂՀ, ինչպէս, օրինակ, ձիթենին: Շատերն էլ՝ լուրջ ներդրումներ են կատարում ոչ միայն ՀՀում, այլեւ ԼՂՀ հարաւում եւ Ստեփանակերտին յարակից տարածքներում:

Այդուհանդերձ, առկայ խնդիրները շատ են, լուծման հնարաւոր տարբերակներն էլ բաւարար չեն: Սա, թերեւս ամէնադժուար յաղթահարելին է, որը ե՛ւ ՀՀի, ե՛ւ ԼՂՀի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից է: Սակայն դա դեռ չի նշանակում, որ հասարակութիւնն անելիք չունի:

Սիրիահայութեան խնդիրները լուծուած կարող ենք համարել, եթէ իրադարձութեանը պատասխան տալով՝ ստանանք ցանկալի արդիւնք:

Այդ ցանկալի արդիւնքը կարելի է գրանցել բացառապէս եռամիասնութեան ձեւով՝ Հայրենիք, հասարակութիւն, սիրիահայութիւն:

Սիրիահայութեան աջակցութիւնը ոչ միայն Հայրենիքի հոգածութեան, այլեւ ՀՀի իւրաքանչիւր քաղաքացու պարտքն է:

Կայ եւ սիրիահային յուզող ներքին հոգեկան խնդիր: Երեւանում, Ստեփանակերտում կամ Հալէպում ապրող սիրիահայը տագնապ է ապրում ամէնատարբեր դրսեւորումներով: Օրինակ, Երեւանում կամ Աթէնքում հաստատուած սիրիահայը, ունենալով քիչ թէ շատ բարենպաստ պայմաններ, միեւնոյնն է իր հոգու խորքում մեղք եւ դաւաճանութիւն է զգում այսօր Սիրիայում ապրող իր հայրենակցի նկատմամբ: Ինքնին ափսոսանքի զգացումը կարող է իրական քաոս ստեղծել մարդու հոգեկան աշխարհում: Հարցազրոյցների արդիւնքում պարզ դարձաւ, որ այսօր սիրիահային ամէնաշատը սրտացաւ եւ անկեղծ վերաբերմունքն է պակասում:

Բարեբախտաբար սիրիահայութեան առաջ ծառացած խնդիրները լուծելի են: Եթէ իւրաքանչիւր քաղաքացի մտածի, թէ ինչով կարող է օգտակար լինել առնուազն մէկ սիրիահայի՝ լուրջ յաջողութիւններ կը գրանցուեն: Իսկ այդ նպատակին հասնելու ճանապարհին գլխաւոր դերակատարը եւ շարժիչ ուժը հասարակութիւնն է:

«Սիրիայի Ճգնաժամը եւ Հայաստանի Ռազմավարական Խնդիրները» համառօտագրում կարդում ենք. «*Անհրաժեշտ է շարունակել ներքին ռեսուրսների համախմբումն ու հասարակութեան իրազեկումը. հայաստանցին պիտի յստակ գիտակցի սիրիահայերին աջակցելու կարիքն ու մեխանիզմները, իսկ պետական մարմինները պիտի պատրաստուեն դիմակայելու հնարաւոր սցենարներին եւ մշակեն համագործակցութեան ու համակարգման գործուն ուղիներ*»[23]:

Նշենք, որ եթէ նոյնիսկ սիրիահայութիւնն ապահովուի շքեղ բնակարաններով եւ բարձր վարձատրուող աշխատանքով, միեւնոյնն է, դա խնդրի մասնակի լուծում կը լինի: Հասարակութիւնն իր հերթին պէտք է նպաստի սիրիահայութեան հոգեւոր պահանջմունքների բաւարարմանը, հոգեբանօրէն աջակցի եւ անկեղծօրէն ապրումակցի: Սիրիահայութեան վերաբնակեցումը ՀՀում, ԼՂՀում կամ աշխարհի ցանկացած երկիր տեղի է ունենում հարկադրուած տարագրութեան հետեւանքով: Իսկ տարագիր լինելը բոլոր ժամանակներում բաւականին բարդ է եղել: Տարագրի ներաշխարհում իսկական քաոս է տիրում: Դա լաւ են պատկերացրել հին յոյները, երբ յանցագործի համար առաւել սոսկալի պատիժ սահմանել են տարագրութիւնը՝ գերադասելով այն սովորական մահապատժից::

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Թէեւ սիրիահայութեան խնդիրները բազմազան են, իսկ հնարաւոր լուծումները ժամանակատար, այնուամենայնիւ, ուրախութեամբ կարելի է առանձնացնել այն մասնաւոր դէպքերը, երբ Հայաստանում ապրող սիրիահայը նշում է. «*Ուզում եմ իմ հայրենիքում ապրել, որ չծուլուենք. մնացինք, դիմադրեցինք, չգնացինք: Հնարաւոր է՝ արտագաղթողը*

բարեկեցիկ կեանք ունենայ, ես չեմ ուզում, որ իմ Կայծակ որդին կամ Անի դուստրը ստիպուած լինեն փոխել իրենց անունները...»[24]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Համառօտագիր՝ *Սիրիայի Ճգնաժամը Եւ Հայաստանի Ռազմավարական Խնդիրները, Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոն*, (Համառօտագիրը մշակուել է 18 Յուլիս 2012ին կայացած՝ «Սիրիա. Տարածաշրջանային Համատեքստն Ու Հայերի Հարցերը» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտայայտուած կարծիքների հիման վրայ), էջ 3:

[2] Ադսէն Յակոբեան, *Սիրիահայերը Հայաստանում. Հայրենադարձներ, Թէ՞ Փախստականներ (Իրաւական, Մշակութային ու Սոցիալական Ադապտացիայի Հիմնախնդիրներ)*, Երեւան, 2013-2014, էջ 4:

[3] Հայրենադարձութիւնը սահմանւում է որպէս տարագիրների վերադարձը հայրենիք՝ նրանց քաղաքացիութեան վերականգնումով: Հայրենադարձութիւն է նաեւ ռազմագերիների եւ ռազմական գործողութիւնների հետեւանքով իր երկրից հեռացած քաղաքացիական բնակչութեան վերադարձը հայրենիք: Թէեւ սիրիահայերի Հայաստան վերադառնալը հարկադրուած տարագրութիւն էր, այնուամենայնիւ նպատակայարմար ենք գտել օգտագործել «հայրենադարձութիւն» բառեզրը՝ հաշուի առնելով այն, որ սիրիահայերը Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով Սիրիա տարագրուած արեւմտահայութեան ժառանգորդներն են, եւ նրանք իսկապէս վերադարձել են Հայրենիք:

[4] 14 Յունուար 2013ի թիւ 9-Ա ՀՀ վարչապետի որոշում:

[5] ՀՀ Կառավարութեան 23 Օգոստոս 2012ի 1106 որոշումը: ՍԱՀի՝ ազգութեամբ հայ քաղաքացիների՝ 8 Նոյեմբեր 1968ի «Ճանապարհային Երթեւեկութեան Մասին» Վիեննայի համաձայնագրութեամբ եւ դրա յետագայ փոփոխութիւններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացուող պահանջներին չհամապատասխանող ազգային վարորդական վկայականները փոխանակւում են առանց որակաւորման քննութիւններ յանձնելու եւ յատկացւում են ՀՀ ազգային վարորդական վկայականներ՝ մէկ տարի ժամկէտով՝ պայմանով, որ այդ ժամանակահատուածում այդ անձինք յանձնեն որակաւորման քննութիւններ (*Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութիւն, Հայաստանի Հանրապետութիւնում Օտարերկրացիների (Սիրիահայերի) Իրաւունքների Մասին*, Երեւան (ա.տ.), 2012, էջ 1):

[6] ՀՀում սովորող բոլոր օտարերկրացիներն օգտւում են ՀՀ օրէնսդրութեամբ սահմանուած իրաւունքներից ու ազատութիւններից եւ կրում ՀՀ օրէնսդրութեամբ նախատեսուած որոշակի պարտաւորութիւններ (*Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութիւն, Հայաստանի Հանրապետութիւնում Օտարերկրացիների*, էջ 2):

[7] Նոյն, էջ 3:

[8] Սիրիահայութեան օգնութեան ծրագրեր /http://www.agbu.am/am/project-programs-2/mardasirutyun/2013-07-26-10-22-59 :

[9] Ա. Պետրոսեան, «Սիրիահայութեան Հարցը Համայն Հայութեան Խնդիրն է», https://loysarev.wordpress.com/2012/07/07/ :

[10] «Համառօտ Տեղեկանք Սիրիահայերի Հիմնախնդիրների Մասին», ՀՀ Սփիւռքի Նախարարութուն, Մայիս 2014:
[11] Յակոբեան, էջ 5- 6:
[12] Նոյն, էջ 6:
[13] Յակոբեան, էջ 31:
[14] Նոյն, էջ 9:
[15] «Համառօտ Տեղեկանք»:
[16] Նոյն:
[17] ՀՀ կառավարութեան որոշում, 2013 թուականի 6 Յունիսի N 656, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84044 :
[18] http://www.azatutyun.am/content/article/25428035.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook :
[19] http://www.azatutyun.am/content/article/25428035.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook :
[20] http://www.azatutyun.am/content/article/25259275.html :
[21] Սիրիահայութեան օգնութեան ծրագրեր /http://www.agbu.am/am/project-programs-2/mardasirutyun/2013-07-26-10-22-59 :
[22] Հարցազրոյց, Երեւան, 18 Ապրիլ 2015:
[23] «Սիրիայի Ճգնաժամը եւ Հայաստանի Ռազմավարական Խնդիրները», Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոն, համառօտագիր, էջ 3:
[24] Հարցազրոյց, Երեւան, 21 Ապրիլ 2015:

Syrian Armenians in the Republic of Armenian and the Republic of Artsakh: Current Issues and Likely Options for Resolutions

(Summary)

Tehminé Mardoyan
tehminemartoyan@gmail.com

The paper portrays how the repatriation of Syrian Armenians to the Republic of Armenia and the Republic of Artsakh (Karabagh) has been accomplished. It discusses the existence of systematic and clear-cut plans for their incorporation into local society and the basic problems the refugees currently face. In fact their repatriation took place in difficult conditions; thus, their incorporation is complicated and takes time.

The paper argues that care from the fatherland is very important and needs to be ongoing. Consistent care should be given to address the difficulties of those repatriated. As some of the Syrian Armenians are having thoughts of further migration, the paper argues that efforts should be made to enable them to reconstruct their lives and envisage their future in their fatherland. In this regard the paper emphasizes the various contributions that these settlers have brought to Armenian society.

The paper argues that support for the Syrian Armenian settlers has been generally successful. Nonetheless, steps should be taken to alleviate any further difficulties that might arise at any moment.

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԵԼՔԸ (1995-2015)

«Յոյսը երբեք մարդս ամօթով չի ձգեր»
(Հռոմայեցիներու 5.5)
Մարիա Գաբրիէլեան

Հանդիսանալով Հալէպի, Լաթաքիոյ, Քեսապի եւ Ճեզիրէի շրջաններու Հայ Առաքելական Համայնքի թեմական պատասխանատուութիւնն ու տիրութիւնը ստանձնող գլխաւոր կեդրոնը, Բերիոյ Հայոց Թեմը ոչ միայն համայնքի հոգեւոր կեանքի կարգաւորման առաքելութիւնը կատարած է եւ կը շարունակէ, այլեւ համայնքի կազմակերպման եւ բարգաւաճման նպատակով բազմաբնոյթ գործունէութիւն ծաւալած է եւ կը կը ծաւալէ:

Զեկոյցս կը բովանդակէ թեմի կազմակերպական կառոյցի եւ վերջին քսանամեակի ընդհանուր գործունէութեան նկարագիրը:

Բերիոյ Թեմի բրգաձեւ կառոյցը ունի հետեւեալ պատկերը.

Ա. Ազգային Երեսփոխանական Ժողով, որուն 37 անդամները կ'ընտրուին երկամեայ դրութեամբ, լրացուցիչ ընտրութիւններով (տասը տարուան համար): Ան թեմին օրէնսդիր իշխանութիւնն է:

Բ. Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Վարչութիւն, որ երկամեայ ժամանակաշրջանի համար կ'ընտրուի Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ: Ան կը հանդիսանայ գործադիր իշխանութիւնը, որմէ կը ճիւղաւորուին Ուսումնական, Տնտեսական, Կալուածային, Ընկերային Ծառայութեան, Դատաստանական, Թաղական-Հոգաբարձական եւ Կրօնական խորհուրդները: Վերջինս թեմին հոգեւոր առաքելութեան ծաւալումով կը զբաղի:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ՝ 1995-2015

Վերջին քսանամեակին Բերիոյ Հայոց Թեմի գործունէութիւնը կարելի է բաժնել ժամանակագրական հետեւեալ հատուածներուն.- ա) Նախապատերազմեան շրջան 1995-2010, բ) Պատերազմեան շրջան 2011-15.., գ) Յետ պատերազմեան շրջան 20...(վերականգնումի նախատեսումներ):

Ա. ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆ, 1995-2010

Տասնամեակներու ընթացքին Բերիոյ Թեմը հետզհետէ կազմակերպուելով, իր ընթացքը ուղղած է ի մասնաւորի Հալէպի, ուր կը բնակէր թեմին շուրջ 75,000 զաւակներուն մեծամասնութիւնը:

Տնտեսական պայմանները - հեռաւոր թէ մօտաւոր նախագիծերու գործադրման համար - խոչընդոտ չհանդիսանալու մտասեւեռումով, այս շրջանին (1995-2010) զարկ տրուեցաւ թեմին տնտեսական ենթակառոյցի ամրապնդման եւ բարգաւաճման:

1. Տնտեսական Ոլորտ. Տնտեսագէտ թէ գործարար փորձառու անձնաւորութիւններէ բաղկացած տնտեսական եւ կալուածային խորհուրդներ աշխատանքի հրաւիրուեցան եւ իւրաքանչիւրը իր երկամեայ գործունէութեան ընթացքին արդէն իսկ գործող ձեռնարկները բարգաւաճեց եւ նոր նախաձեռնութիւններու հիմը դրաւ: Հայահոծ Նոր Գիւղի շրջանին մէջ ազգապատկան բնակարանային շէնքերու կողքին բարձրացան հայանուն նորերը՝ «Նայիրի», «Արցախ» եւ «Օշական»: Ազգային շէնքերու շարքին հայ ընտանիքներ հաստատուեցան «Կիլիկիա» եւ «Սիս» բնակարանային համալիրներ, որոնց ներքեւ գտնուող աշխատավայրերը հայ երիտասարդ արհեստաւորներու եւ առեւտրականներու համար յարմար գործավայրեր դարձան, իսկ սկզբնայարկերը՝ նոր շրջանաւարտ բժիշկներու թէ երկրաչափներու՝ աշխատանքային կեդրոններ: 2010 Հոկտեմբերին թեմին Ազգային Վարչութեան օրակարգերուն վրայ էին բնակարաններու կառուցման նոր ծրագիրեր:

Տնտեսական մտահոգութիւնը փարատելէ ետք կարելի էր գծագրել մարդակերտումի քարտէսները:

2. **Ուսումնական եւ Կրթական** բնագաւառները Բերիոյ Թեմի օրէնսդիր թէ գործադիր մարմիններու կարեւորագոյն օրակարգերը հանդիսացան:

Թեմին հովանաւորութեան ներքեւ Սուրիոյ մէջ շարունակեց գործել 14 վարժարան: Հալէպի մէջ աշակերտութեան թիւի աստիճանական բարձրացումին հետեւանքով, կարգ մը դպրոցներու դասարանները չէին բաւարարեր անոնց: Կը մտածուէր նոր կառոյցներու մասին…

Այս շրջանին Ազգային Կիւլպենկեան Վարժարանը օժտուեցաւ նոր ու արդիական շէնքով. հողատարածքը տրամադրուած էր համայնքին եւ համայնքը ստանձնեց անոր շինութիւնը:

Վարժարաններու շէնքային կառոյցներու բարելաւման գործերը սկսան ընթացք առնել իւրաքանչիւր վարժարանի հոգաբարձական մարմինին նաեւ Կալուածային եւ Տնտեսական խորհուրդներու սերտողութիւններով:

Մինչեւ 2010՝ շարունակուեցան սերտողութիւնները դպրոցաշինութեան համար յարմար հողատարածքներ գնելու: Աշակերտութեան թիւի աճը՝ հարցին արագ լուծում տալը անհրաժեշտ կը դարձնէր:

Վերջին տարիներուն թեմին դպրոցներէն նոր կառոյցով օժտուեցան Հալէպի Ազգ. Կիւլպենկեան Վարժարանը, Դամասկոսի Ազգ. Միացեալ Վարժարանը եւ Քեսապի Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարանը:

Հողաշերտի գնումէն, համապատասխան սերտողութիւններէն եւ արտօնագիրի ապահովումէն յետոյ, պատերազմին պատճառով Ազգային Հայկազեան Վարժարանի համալիրին շինարարական աշխատանքը հիմնարկէքէն ետք կանգ առաւ:

Հայեցի կրթութեան ու դաստիարակութեան խնդիրներն ու ծրագիրերը ոչ միայն վարժարաններու ներքին մտահոգութիւններն էին, այլեւ՝ թեմին գլխաւոր մարմիններուն: Երկար սերտողութիւններէ, քննարկումներէ եւ

խորհրդաժողովներէ ետք նախակրթարաններն ու Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանը օժտուեցան հայերէն խնամուած դասագիրքերով[1]:

2009ին, լոյս տեսան ազգային մանկապարտէզներու նոր դասագիրքերը՝ մանկավարժարական համապատասխան սկզբունքներով եւ ուղեցոյցներով: Լոյս տեսան նաեւ կրօնի դասագիրքեր՝ Սուրիոյ հայ երեք համայնքներու դպրոցներուն համար:

Հայեցի կրթութեան աշխատանքները քայլ պահեցին ճարտարարուեստի նորարարութիւններուն հետ եւ ազգային վարժարաններուն միջեւ այս մարզէն ներս դրական մրցակցութիւն մը ընթացք առաւ:

Այս աշխատանքներուն մեծապէս կը նպաստէին ՀՀ Կրթութեան Նախարարութեան կողմէ սկզբնապէս երկամեայ դրութեամբ կազմակերպուող հայկական գիտելիքներու ողիմպիականները:

Թեմին հովանաւորութեամբ եւ հոգատարութեամբ տարեկան դրութեամբ ազգային վարժարաններու ուսուցիչներ կը մասնակցէին ՀՀ Կրթութեան Նախարարութեան կազմակերպած ուսուցիչներու վերաորակաւորման դասընթացքներուն: Թեմը իր մասնակցութիւնը կը բերէր նաեւ ՀՀ Կրթութեան Նախարարութեան կազմակերպած Համահայկական Կրթական Խորհրդաժողովներուն:

Թեմին տարածքին, նուազագոյնը տարեկան երկու խորհրդաժողով կամ գիտաժողով կը կազմակերպուէր՝ կրթական եւ ուսումնական մարզերու առաւել բարգաւաճման նպատակով:

Վերջին տարիներուն ազգային վարժարաններու ուսուցիչներուն համար ամառնային արձակուրդի կեցութիւն ապահովուած էր Քեսապի մէջ:

Այս աշխատանքներուն շարունակականութիւն ապահովելը կը պահանջէր համապատասխան մարդուժի ապահովում: Նկատի առնելով մարդուժի պատրաստութեան գերկարեւոր ծրագիրը՝ 2009էն սկսեալ Ազգային Վարչութեան եւ Ազգային Երեսփոխանական Ժողովները զբաղեցան այս հարցով: Այս ծրագիրին համար յառաջացաւ յատուկ մարմին, որ մշակեց համապատասխան ծրագիր: Սկզբնապէս թեմին ծրագիրներուն պահանջած մասնագիտութիւններու մէջ հմտացած երիտասարդ ուժեր պատրաստելու համար գործուղումներ կատարուեցան Սուրիոյ պետական համալսարանները: Հոգացուեցան նպատակամէտ ուսում ստացող սաներու ուսումնառութեան ծախսերը: Նոյն շրջագիծէն ներս ազգային վարժարաններու համալսարանաւարտ ուսուցիչներուն դիւրութիւններ ընծայուեցան՝ կրթական գործի պատրաստուածութեան մագիստրոսի վկայականի տիրացման համար կրթաթոշակի յատկացումներէն օգտուելու: Այս աշխատանքը ընդհատեցաւ 2012ին, Սուրիոյ պատերազմին պատճառով:

Թեմին գործունէութիւնը կը պահանջէր, որ ի գործ դրուած աշխատանքը իր արձագանգը գտնէր **մամուլ**ին մէջ:

Վերջին 20 տարիներուն, Բերիոյ Հայոց Թեմը մամուլի եւ հրատարակչական բնագաւառին մէջ յատկանշական նուաճումներ ար-

ձանագրեց: Յատկապէս՝ վերջին տաս տարիներուն: Եթէ 1975-95 տարիները կարելի է անուանել շինարարական բարգաւաճման շրջան, ապա՝ 1995-2015 շրջանը պէտք է կոչել հրատարակչական բարգաւաճման շրջան, որուն վերջին նուաճումը դեռ համրուած օրեր առաջ Հալէպի մէջ լոյս տեսած *Նարեկ* աղօթամատեանն է:

Այս շրջանին Բերիոյ Թեմի հովանաւորութեամբ Հալէպի մէջ լոյս տեսան.-

ա. Ուխտ Հոգեւոր Մատենաշարի գիրքերը.

բ. Այգ Գրական-Պատմական Մատենաշարի գիրքերը (ցարդ լոյս տեսած են 31 կրօնական, գրական եւ մշակութային գիրքեր).

գ. Մանկական Մատենաշարի գիրքերը (ցարդ լոյս ընծայած է 5 հատոր).

դ. *Տաթեւ Հայագիտական Տարեգիրքը* (սուրիահայ, հայրենի, արտասահմանի հայ թէ օտար բանասէրներու, պատմաբաններու աշխատակցութեամբ):

ե. *Օշական* կիրակնօրեայ լրատուն (2006էն մինչեւ օրս):

զ. *Վտակ*, Ուսումնական Խորհուրդի աշակերտական թերթիկը:

է. *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրքը*:

ը. *Երթ Սուրիահայ Գրողներու Տարեգիրքը*:

թ. *Նոր Կտակարանի* եւ *Սաղմոսագիրքի* տպագրութիւնները:

ժ. Ազգային վարժարաններու եւ Ճեմարանի աշակերտական եւ շրջանաւարտներու պաշտօնաթերթեր (*Ծիլեր*, *Աշխատանք*):

ժա. Զանազան այլ հրատարակութիւններ:

Մամուլի եւ քարոզչութեան բնագաւառին մէջ առանձնապէս պէտք է յիշատակել Բերիոյ Հայոց Թեմի անունով լոյս տեսնող *Գանձասար* ՀՅԴ օրկանը: Ան իբրեւ շարունակութիւն *Օշական* պաշտօնաթերթին 1993էն իվեր լոյս կը տեսնէ որպէս շաբաթաթերթ, կը հանդիսանայ թեմի գործունէութեան հայելին եւ Սուրիոյ հայ կեանքի արձագանգը: *Գանձասարը* նաեւ բեմ կը հանդիսանայ սուրիահայ յօդուածագիրներու տարբեր նիւթերու քննարկումներուն:

Գանձասարը Սուրիոյ 2011ին դաժան պատերազմին շարունակեց անխափան լոյս տեսնել, եւ սուրիահայ համայնքին գործունէութեան, ծրագիրերուն, աշխատանքներուն, նոյնիսկ գոյութեան մասին ապատեղեկանքներու հերքման, սրբագրման եւ ճշտման մէջ մեծ դեր ունեցաւ: Ան իր դիմագրաւած բազմաբնոյթ դժուարութիւններուն մէջ, 23 Ապրիլ 2015ին լոյս ընծայեց Հայոց Ցեղասպանութեան 100ամեակին նուիրուած իր բացառիկը, սուրիահայ գրողներու աշխատակցութեամբ:

3. Քրիստոնէական Դաստիարակութեան Բնագաւառ. Վերջին 20 տարիներուն այս մարզը մեծապէս աշխուժացաւ, ունեցաւ համապատասխան վարչութիւն, իր շուրջ համախմբեց համայնքի երիտասարդութիւն եւ մղեց զանոնք երիտասարդութեան քրիստոնէական

դաստիարակութեան առաքինի սկզբունքներու ընդհանրացման համար միջոցներ որոնելու: Թեմիս Առաջնորդ հօր անմիջական հոգատարութեամբ գործող այս մարմինը սեմինարներ կազմակերպեց, խորհրդաժողովներ հրաւիրեց, դասախօսական շարքեր նախաձեռնեց եւ յաջողեցաւ հայ երիտասարդութիւնը հայ եկեղեցւոյ աղերսել:

Համայնքին ծիրին մէջ, դաստիարակչական եւ մշակութային մեծ նպաստ ունեցաւ անոր գործունէութիւնը, շաբաթական հերթականութեամբ ընթացող Սուրբ Գիրքի սերտողութիւնները, աւետարանական համարներու մեկնութեան հանդիպումները, աստուածաշնչական գիտելիքներու մրցաշարքերու թէ կրօնական բնոյթի դասախօսութիւններու կազմակերպումը:

Այս բնագաւառին մէջ իրենց գործունէութեամբ յատկանշուեցան թեմին կիրակնօրեայ դպրոցները, նոյնիսկ տագնապի ծանր օրերուն:

Համայնքի դաստիարակչական գործին մէջ իր իւրայատուկ տեղը ունեցաւ «Նախամուսնական Ծրագրաւորում» նախագիծը: Ան զբաղեցաւ նշանախօսութեան ընթացքի մէջ գտնուող զոյգերու ամուսնական կեանքի պատրաստութեան գործով, կազմակերպելով ընկերաբանական, բշժկական եւ կենցաղային թեմաներով դասընթացքներ ու տուեալ մարզերու մէջ մասնագէտներու եւ հոգեւոր հայրերու կողմէ զոյգերու հետ առանձին հանդիպումներ:

4. Մշակութային Բնագաւառ. Այս շրջանին իրականացած մշակութային այլ գործունէութիւններէն կարելի է լուսարձակի տակ առնել հետեւեալները.-

Զարկ տրուեցաւ երգչախումբերուն. կազմուեցան «Նարեկ», «Լոյս», «Սաղմոս», «Շողակաթ», «Օրհնութիւն» երգչախումբերը, շարունակեց գործել Ուսումնական Խորհուրդի «Մեսրոպ Մաշտոց» երգչախումբը:

Վերաշխուժացան Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ շրջափակին մէջ գործող «Զարեհեան» Գանձատան աշխատանքները: Գանձատունը՝ իբրեւ մշակութային իւրօրինակ երեւոյթ, կը գործէր Հալէպի մէջ մինչեւ պատերազմին սկիզբը:

Հիմնադրուեցաւ Ազգային Կեդրոնական Գրադարանը, իր աւելի քան 10,000 հայերէն եւ օտարալեզու գիրքերով եւ մամուլի հաւաքածոներով:

Բացուեցաւ «Գ. Եսայեան Մշակութային Հանդիսասրահ»ը, որպէս Հալէպի մեծագոյն եւ գեղեցկագոյն հայկական սրահներէն մէկը, որ կը շարունակէ գործել մինչեւ օրս:

Օշական Գրատունը, որ կը գործէր Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ տարածքին մէջ 1989էն իվեր, առճակատումի թէժ շրջանի մէջ յայտնուելէ ետք փոխադրուեցաւ համեմատաբար աւելի ապահով Ազգային Կիլպենկեան Վարժարան, ուր կը շարունակէ իր աշխատանքը:

Ընթացք առին Տէր Զօրի Նահատակաց Համալիրի, թանգարանի եւ Մարկատէի յուշահամալիրի աշխատանքները[2]:

Կատարուեցան Քեսապի Գարատուրանի ու Քամիշլիի եկեղեցիներու շինարարութիւնները:

Յատուկ ուշադրութեան եւ խնամքի արժանացան թեմին արխիւային աշխատանքները:

Սուրիահայ Գրողներու Համախմբում. Վերջին տասը տարիներուն, առաջնորդ հօր անմիջական հովանաւորութեամբ եւ ներդրումով հետզհետէ առաւել հունաւորուեցաւ Սուրիահայ Գրողներու Համախմբումը, որ մտաւորականութեան նոր երանգ ու մշակութային աշխատանքի նոր հեռանկարներ կը բանար սուրիահայութեան համար: Ան պատերազմի այս տարիներուն - սակաւաթիւ անդամներով - շարունակեց գործել:

Այս համախմբան կը պատկանի *Երթ Տարեգիրքը*:

Առնչակից Այլ Աշխատանքներ. 2010ին յառաջացաւ Սուրիահայ Գործարարներու Համախմբումը, համապատասխան ծրագիր-կանոնագիրով եւ աշխատանքի ապահովման գրասենեակով:

Յարատեւ ջանքերէ ետք 2011ին Սուրիոյ հայ առաքելական համայնքը ունեցաւ իրեն յատուկ «Անձնական Իրաւանց Օրէնք»ը, որ պետական վաւերացում ստացաւ երկրի նախագահին կողմէ, Յունուար 2013ին:

Բ. ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆ, 2011-15

Անկանխատեսելի իրադարձութիւններով յատկանշուած Սուրիոյ պատերազմը՝ 2011ին երկրի հարաւային շրջաններուն մէջ բռնկելէ շուրջ 16 ամիս ետք բոցավառեց Միջին Արեւելքի սփիւռքեան համայնքներուն մէջ իր կազմակերպուածութեամբ, աշխուժութեամբ, բեղուն գործունէութեամբ ու մարդուժի պատրաստութեամբ իւրայատուկ տեղ գրաւող Հալէպ քաղաքն ու շրջակայքը:

Օրհասական պահեր էին հալէպահայութեան համար: Բերիոյ Հայոց Թեմը այդ օրհասական պահուն գրկեց իր ժողովուրդը... թեմական ոչ մէկ խորհուրդ, մարմին, յանձնախումբ դադրեցաւ գործելէ: Կրթական հաստատութիւնները շարունակեցին բանիլ: Մշակութային գործունէութիւնը չդադրեցաւ, հրատարակչական գործը շարունակուեցաւ: Միակ տարբերութիւնը թուապատկերներու եւ վայրերու փոփոխութիւններն էին:

Ապահովական, կենցաղային թէ տնտեսական անտանելի տագնապներուն պատճառով համայնքի զաւակները իրենց հայեացքը կրկին սեւեռեցին գաղթի ճամփաներուն: Ոմանք ներգաղթեցին հայրենիք, ոմանք ժամանակաւոր, ուրիշներ մնայուն գաղթեցին հեռաւոր ափեր: Այսպէս, համայնքին թիւը մեծապէս նուազեցաւ:

Իսկ համայնքային հաստատութիւններու տեղերու փոփոխութիւնը կատարուեցաւ երբ կարգ մը եկեղեցիներ ու դպրոցներ, նաեւ՝ Ազգ. Առաջնորդարանը գտնուելով ճակատումի թէժ շրջաններու մէջ փոխադրուեցան համեմատաբար աւելի ապահով վայրեր: Ձեւը փոխուեցաւ, սակայն

խորքը՝ մնաց նոյնը: Սուրիահայ համայնքը մնաց կենսունակ եւ պատնէշի վրայ՝ իր եկեղեցիներով, դպրոցներով եւ ակումբներով:

Նիւթական պարտաւորութեան կողքին բարոյական պարտաւորութիւն ունէր Բերիոյ Հայոց Թեմը Հալէպէն մեկնիլ չփափաքողներուն հանդէպ: Հարկաւոր էր յորդորել համայնքին զաւակները, ուժ ներշնչել անոնց եւ խօսքով ու գործքով զգացնել թէ թիկունք կը կանգնի անոնց: Այդպէս ալ եղաւ: Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի գրասենեակներուն աշխատանքները բազմապատկուեցան, ճնշող պայմանները սաստկացան, բեռը ծանրացաւ եւ մարդուժը սակաւեցաւ, այդուհանդերձ աշխատանքային թերութիւններ չարձանագրուեցան եւ ոչ միայն Սուրիա մնացողներուն այլեւ մեկնողներուն պահանջքները բաւարարուեցան:

Ներկայիս, Բերիոյ Հայոց Թեմը, նստավայրով եւ շրջաններով, կը շարունակէ իր աշխատանքները իր բոլոր բնագաւառներուն, մանաւանդ ծառայողական բնագաւառին մէջ:

Սուրիոյ ժողովուրդին, ազգային թէ կրօնական փոքրամասնութիւններուն մէջ թիւի առումով փոքր տոկոս կազմող սուրիահայ համայնքը՝ իշխանութեան թէ ընդդիմադիր ուժերու հետաքրքրութեան առարկան էր: Բանական էր այս մօտեցումը, քանի որ բոլորին համար տեսանելի էր այս համայնքին կազմակերպուածութիւնը, օրինապահութիւնը, անվերապահ ծառայութիւններն ու զոհաբերութիւնը: Չորս տարուան ընթացքին պատահած աղիտալի գլխաւոր երկու փորձանքներուն՝ Յունիս 2014ի Նոր Գիւղի եռօրեայ անընդմէջ ռմբակոծման եւ Ապրիլ 2015ի Սիւլէյմանիէի հրթիռակոծման ժամանակ, աղէտեալ շրջաններու բնակիչները, օգնութեան կանչերու արձագանգող կողմերը թէ պաշտօնական պատուիրակութիւնները չթաքցուցին իրենց հիացմունքը իտես Բերիոյ Հայոց Թեմի ժողովրդանուէր ծառայութեան: Այսպէս, Վրացեան Կեդրոնին մէջ նոր կայք հաստատած Ազգային Առաջնորդարանի գրասենեակները՝ 10 Ապրիլի ռմբակոծումին մեծապէս վնասուելէ ետք, Ապրիլ 12ին արդէն վերականգնած էին եւ դիմորդներ կ'ընդունէին:

Սուրիոյ մէջ մէկ տեսակի մեծամասնութիւն չկայ, ո՛չ ալ մէկ տեսակի փոքրամասնութիւն: Այս իմաստով, բազմաթիւ, երբեմն ալ հակասական տուեալներ ու զեկոյցներ կան Սուրիոյ փոքրամասնութիւններու եւ մեծամասնութիւններու թիւին եւ համեմատական պատկերին խնդրով: Հասկնալի է՝ քաղաքական պատճառներ կան թիւերու եւ տուեալներու ճշգրտութեան բացակայութեան մէջ...: Ամէն պարագայի, միջազգային օրէնքին ճշտած փոքրամասնութիւններու տեսակներէն մեկնելով Սուրիոյ փոքրամասնութիւնները կարելի է հետեւեալ խումբերուն բաժնել.-

- Ցեղային առումով, մեծամասնութիւն են արաբները, փոքրամասնութիւն՝ քիւրտերը, ասորիները, թիւրքմէնները, հայերը:
- Կրօնական առումով՝ մեծամասնութիւն կը կազմէ իսլամութիւնը, իսկ փոքրամասնութիւն՝ քրիստոնէութիւնը, եզիտիութիւնը, հրէութիւնը:

- Լեզուական առումով՝ մեծամասնութիւն կը կազմեն արաբախօսները, իսկ փոքրամասնութիւն՝ հայախօսները, քրտախօսները, թրքախօսները, ասորերէն կամ արամէերէն խօսողները:
- Հպատակութեան առումով՝ մեծամասնութիւն կը կազմեն սուրիացիները, փոքրամասնութիւն՝ հայերը որոնք ՀՀ քաղաքացիութիւն ունին, թուրքերը, լիբանանցիները, պաղեստինցիները եւն.:

Միջազգային օրէնքին ճշտած փոքրամասնութիւններու տեսակներէն բացի, փոքրամասնութեան այլ տեսակ մըն ալ կարելի է ճշտել Սուրիոյ պարագային, որ յարանուանական գետնի վրայ կարելի է ներկայացնել: Բնակչութեան մեծամասնութիւնը սիւննի իսլամներ են, իսկ փոքրամասնութիւններ են ալեւի, շիիթ, իսմայիլի, տիւրզի եւ քրիստոնէական յարանուանութիւնները:

Հետաքրքական է, որ սուրիահայութիւնը, միատեսակ փոքրամասնութիւն չէ, այլ կ'ընդգրկէ վերոնշեալ բոլո՛ր տեսակները: Սուրիահայութիւնը նաեւ միաժամանակ ցեղային, կրօնական, լեզուական, ազգային ու յարանուանական փոքրամասնութիւն է:

ՍՈՒՐԻՈՅ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Պատմականօրէն, Սուրիոյ փոքրամասնութիւնները աշխարհագրական խտացուած շրջաններու մէջ ապրած են, յաճախ իրար քով, չտարածուած, իսկ կեդրոնական քաղաքներէն հեռու եւ գիւղական շրաջաններու մէջ՝ այլ հաւաքականութիւններէ անջատ: Օրինակ, քիւրտերը Սուրիոյ հիւսիս եւ հիւսիս-արեւելեան շրջանները կ'ապրին, տիւրզիները՝ հարաւը, ալեւիները՝ արեւմուտքը եւն.:

Այս իրականութիւնը կու գայ հաստատելու թէ Սուրիոյ իւրաքանչիւր շրջան իրեն յատուկ ընկերային դիմագիծ ու ապրելակերպ ունի, որ յատուկ ուշադրութիւն եւ ռազմավարութիւն կը պահանջէ:

1950ականներուն, Սուրիոյ իշխանութիւնները «արաբական գօտի» ծրագրին տակ, փորձած են Սուրիոյ արեւելեան շրջաններու ժողովրդագրական պատկերը փոխել, մեծամասնութեամբ քիւրտերով բնակուած շրջաններու մէջ արաբ պետեւիներ վերաբնակեցնելով:

Մինչեւ սուրիական տագնապի սկիզբը Սուրիոյ փոքրամասնութիւններուն աշխարհագրական բաժանումը գրեթէ անփոփոխ էր, սակայն տագնապին ընթացքին եւ այսօր որոշ փոփոխութիւններ արձանագրուեցան ու կ'արձանագրուին տակաւին, յատկապէս այն շրջաններուն մէջ, որոնք ընդդիմադիր զինեալ կողմերուն տիրապետութեան տակ անցան:

ՍՈՒՐԻՈՅ ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Անցնող տասնամեակներուն հակամարտութիւններ ապրող միջավայրեր երբ հակամարտութենէն խաղաղութեան գործընթացին կը լծուէին՝ անցումային արդարութեան (Transitional Justice) հանգրուանէ մը կ'անցնէին: Անցումային արդարութեան հոլովոյթը երկրէ երկիր, միջավայրէ միջավայր կը տարբերի եւ դժուար է Սուրիոյ անցումային արդարութեան հանգրուանին մասին յստակ պատկերացում ունենալ:

Ամէն պարագայի, Սուրիոյ յետպատերազմեան հանգրուանին կարելի է հետեւեալ զարգացումները կանխանշել.-

Սահմանադրութեան փոփոխութիւն, ընկերութիւններու հաշտեցման գործընթացներ, անցումային կառավարութեան կազմութիւն՝ ներկայ իշխանութիւններուն եւ ընդդիմադիր կողմերու մասնակցութեամբ, համաներում եւ կամ հակառակը պատերազմի ոճրագործներու դատավարութիւններ, նոր ընտրութիւններ, միջազգային կազմակերպութիւններու առաւել ներգրաւուածութիւն, վերակառուցման սկիզբ, գաղթականներու վերադարձ, բանակին՝ քաղաքացիական վայրերէն աստիճանական հեռացում, զոհուածներու-վիրաւորներու եւ անշարժ գոյքերուն հասած վնասներու փոխհատուցում եւն.:

ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՈՐԴԵԳՐՈՒԵԼԻՔ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

2011էն առաջ, Սուրիան յստակ ազգային գաղափառախօսութիւն մը չունեցաւ, որ իր շուրջ համախմբէր Սուրիոյ մէջ բնակող բոլոր ընկերութիւնները: Սուրիան 1946ի ֆրանսական գաղութատիրութենէն ետք եւ անկախութենէն իվեր, իր գաղափարախօսութիւնը փորձեց հիմնական երկու բեւեռներու մէջ կազմաւորել: Առաջինը արաբամէտ գաղափարախօսութիւնն էր, որ հիմնուած է արաբական աշխարհի եւ արաբ ժողովուրդի միասնութեան գաղափարախօսութեան վրայ, իսկ երկրորդը՝ սուրիամէտ գաղափարախօսութիւնն էր, որ հիմնուած էր պատմաաշխարհագրական Սուրիա ըմբռնումին վրայ (այս պարագային Սուրիան կը հասկցուէր իբրեւ Սուրիական Լեւանթը, Պիլատ Ալ Շամը, որ կ'ընդգրկէր ներկայ Սուրիան, Լիբանանը, Պաղեստինը, Յորդանանն ու Իրաքը, նաեւ Կիլիկիան): Անցնող տասնամեակներուն իշխանութիւնները Պաաս Կուսակցութեան որդեգրած գաղափարաբանութեամբ փորձեցին այս երկու բեւեռներուն միջեւ հաւասարակշռութիւն մը գտնել, սակայն արհեստական գաղափարախօսութիւն մը դուրս եկաւ, որովհետեւ, բոլորին համար ընդունելի ու հարազատ չէր անիկա: Սուրիոյ քաղաքացիներէն շատեր, գաղտնօրէն աւելի փարած էին իրենց կրօնական, ցեղային կամ յարանուանական գաղափարախօսութիւններուն ու պատկանելիութեան, քան՝ պետութեան որդեգրած պաշտօնական գաղափարախօսութեան:

Խորքին մէջ, սուրիական տագնապը սկսելէն իվեր, վերոյիշեալ երկու գաղափարախօսութիւններու (կամ անոնց վերամշակուած տարբերակներու) առճակատում կայ Սուրիոյ մէջ: Մէկը իսլամականութեան, միւսը սուրիական-արաբական գաղափարախօսութիւնն է: Այս երկու գաղափարախօսութիւնները դաւանողներն են իրարու հակադիր կողմերը, որոնք իրար դէմ զէնք բարձրացուցած են այսօր:

Ամէն պարագայի, ո՛չ իսլամականութիւնը, ո՛չ ալ արաբականութիւնը կրնան միաւորել Սուրիոյ բազմաբնոյթ ընկերութիւնները: Սուրիոյ մէջ ոչ-արաբ փոքրամասնութիւնները իրենք զիրենք արաբ չեն զգար, հետեւաբար անոնք կը մերժեն արաբականութեան վրայ հիմնուած պետական գաղափարախօսութիւն մը ընդունիլ: Միւս կողմէ, նկատի ունենալով սիւննի եւ շիիթ հատուածներուն միջեւ եղած լարուածութիւնը, ինչպէս նաեւ հաշուի առնելով ո՛չ-իսլամ եւ չափաւոր-իսլամ սուրիացիներուն մտավախութիւնները՝ իսլամական իշխանութեան յառաջացումէն, կարելի է որպէս միաւորող գործօն որդեգրել սուրիական պետական քաղաքացիութեան՝ «սուրիականութիւն» (Syrianism), գաղափարախօսութիւնը, զայն օգտագործելով Սուիրոյ բազմազգ, բազմակրօն, բազմալեզու եւ բազմամշակոյթ ընկերութիւնները հաշտութեան եւ համակեցութեան առաջնորդելու:

Հետեւաբար, սերտելով Սուրիոյ փոքրամասնութիւններուն ունեցած հեռնակարներներն ու պատկերացումները, կարծիքներն ու գաղափարները կարելի է ըսել, թէ Սուրիոյ փոքրամասնութիւններուն մեծ մասը (բացի կարգ մը քրտական խմբաւորումներէ) կը նախընտրէ ունենալ սուրիական քաղաքացիական գաղափարախօսութիւն մը, ուր ամէ՛ն ինչ՝ ուսումնակրթական համակարգէն մինչեւ ներքին ինքնակառավարական մարմիններ հիմնուած ըլլան զուտ քաղաքացիական-ժողովրդավարական սկզբունքներու վրայ:

Ասոնք Սուրիան կ'ուզեն տեսնել որպէս միաւորող տարր, որպէս հովանոց, որուն հովանիին տակ բոլորին արդար ու հաւասար տեղ տրամադրուած ըլլայ:

Սուրիական քաղաքացիական պատկանելիութեան գաղափարախօսութեան որդեգրումը յաջողութեան մեծ հաւանականութիւն ունի, որովհետեւ.-

- Սուրիան երկար տարիներու համակեցութեան պատմական փորձ ունի, Սուրիոյ մէջ տասնամեակներ շարունակ ընկերութիւնները իրենց տարբերութիւններով հանդերձ յաջողած են միասին ապրիլ:
- Սուրիոյ մէջ կրօնական եւ ընկերային ղեկավարները ազդու դերակատարութիւն ունին, իրենց խօսքերն ու գործերը կրնան հաւաքականութիւններուն վրայ ուղղակի ազդեցութիւն ունենալ: Անոնք կրնան ընկերութիւնները համակեցութեան եւ հաշտութեան

առաջնորդել, երբ որդեգրուած պետական գաղափարախօսութիւնը կը յարգէ ու կ'ընդունի բոլորին տարբերութիւններն ու իւրայատկութիւնները:

- Սուրիան միջազգային օրէնքին բարեկամ երկիր է: Ան միջազգային օրէնքին մէջ տեղ գտած սկզբունքներուն, պայմանագրերուն եւ պարտաւորութիւններուն մեծ մասը որդեգրած է (թէկուզ միայն իրաւականօրէն) եւ տեղական օրէնքներուն վրայ գերադաս ըլլալու հանգամանք տուած է անոնց:

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԱՊԱԳԱՅ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Ապագայ Սուրիոյ մէջ փոքրամասնութիւններուն տրամադրուելիք իրաւունքները կարելի է գտնել միջազգային օրէնքին մէջ: Կարելի է յիշել անոնցմէ միայն քանի մը հատը, որ կը դրսեւորուի պայմանագրութիւններու ձեւով, ինչպէս՝ Քաղաքական Եւ Քաղաքացիական Իրաւունքներու Միջազգային Պայմանագիրը, 1993ին հռչակուած Ցեղային, Ազգային, Կրօնական Ու Լեզուական Փոքրամասնութիւններու Միջազգային Յայտարարութիւնը, Բոլոր Տեսակի Խտրականութիւնները Վերացնելու Պայմանագրութիւնը, Մանուկներու Իրաւունքներու Միջազգային Պայմանագիրը, Լեզուական Իրաւունքներու Համաշխարհային Յայտարարութիւնը, Մարդկային Իրաւունքներու Համաշխարհային Յայտարարութիւնը եւն.:

Այս իրաւունքները երաշխաւորելու, ապահովելու եւ պաշտպանելու համար անհրաժեշտ է փոքրամասնութիւններուն պետական եւ իրաւական ճանաչում տալ: Ներկայ Սուրիան պետականօրէն փոքրամասնութիւններու իրաւունքները չի ճանչնար: Սուրիոյ պետական իրաւահամակարգը կը ճանչնայ կրօնական կարգ մը յարանուանութիւններ եւ անոնց որոշ իրաւունքներ կու տայ:

Ոչ միայն Սուրիան, այլեւ շատ պետութիւններ կը խուսափին փոքրամասնութիւններուն օրինական ճանաչում տալէ, քանի մը նկատառումներէ մեկնած: Երբեմն իշխանութիւնները կը կարծեն, թէ փոքրամասնութիւններուն ճանաչում շնորհելը անջատողական քայլերու կրնայ առաջնորդել, ներքին խլրտումներ կրնայ յառաջացնել, պետութեան կայունութիւնը կրնայ վտանգել, անհաւասարութեան առաջնորդել եւն.: Սակայն միջազգային փորձառութիւնը կու գայ հաստատելու, որ այն երկիրներուն մէջ ուր փոքրամասնութիւններու իրաւունքները չեն յարգուած, այդ երկիրներուն մէջ ներքին հակամարտութիւններ ծագելու հաւանականութիւնը շատ աւելի մեծ է, քան հոն՝ ուր ճանչցուած են ու կը յարգուին այդ իրաւունքները:

Փոքրամասնութիւններու առնչուող այլ դրիտարկում մը եւս կը նկատուի Սուրիոյ մէջ, ըստ որուն՝ Սուրիոյ մէջ ընդհանրապէս

փոքրամասնութիւնները չեն ճանչցուած, որովհետեւ բոլոր քաղաքացիները մէ՛կ ու հաւասար են օրէնքի եւ պարտաւորութեան առջեւ: Պէտք է նշել, որ փոքրամասնութիւններուն իրաւունքերը ճանչնալը չի հակասեր բոլոր քաղաքացիներուն օրէնքին եւ պարտաւորութեանց խնդրով համահաւասար ըլլալու սկզբունքին: Որովհետեւ, միշտ չէ որ հաւասարութիւն շնորհելը արդարութեան կ'առաջնորդէ, կամ արդարութիւն կը հաստատէ: Փոքրամասնութիւնները, իրենց դրուածքով յաւելեալ զօրակցութեան եւ իրաւասութիւններու կը կարօտին, որպէսզի իրենք զիրենք գործնականապէս համահաւասար զգան մեծամասնութեան հետ:

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԻՄՆԱՍԻՒՆԵՐԸ

Սուրիահայութիւնը վերջին տասնամեակներուն համեմատաբար խաղաղ ու կայուն կեանք մը ունեցած է Սուրիոյ մէջ, օժտուած ըլլալով որոշ արտօնութիւններով եւ իրաւասութիւններով, սակայն այսօր լուրջ մտահոգութիւններ կը դիմագրաւէ անկայուն ներկայի ու անորոշ ապագայի իմաստով: Միջազգային օրէնքին ճշտած սկզբունքներուն համաձայն, սուրիահայութեան իրաւունքները կարելի է երեք հիմքերու վրայ կառուցել.-

Ա) Ինքնութեան պահպանում.

ֆիզիքական գոյութեան երաշխաւորութիւն, ցեղասպանութենէ, պատերազմական ոճիրներէ եւ ցեղային մաքրագործումներէ հեռու պահուելու կամ չենթարկուելու երաշխիքներ:

Կրօն, լեզու, մշակոյթ եւ կառոյցներ պահպանելու եւ պաշտպանելու երաշխաւորութիւն:

Բ) Հաւասարութեան եւ անխտրականութեան հաստատում.

Պետական բարձրագոյն պաշտօններ ստանձնելու համահաւասար առիթներ: Օրինակ, ներկայ Սուրիոյ սահմանադրութեան համաձայն, երկրին նախագահը պէտք է իսլամ ըլլայ, ինչ որ խտրականութիւն է ոչ-իսլամ քաղաքացիներուն հանդէպ եւ կը հակասէ մարդկային իրաւանց սկզբունքներուն: Այստեղ պէտք է նշել, թէ համահաւասար քաղաքացիի հանգամանքը ո՛չ միայն պաշտօնական բնոյթ պէտք է կրէ, այլ նաեւ գործնական եւ ազդեցիկ դառնայ:

Գ) Սուրիոյ քաղաքական, տնտեսական ու ընկերային կեանքի մէջ գործօն մասնակցութիւն.

Իրաւական միջոցներով՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմիններու, վարչական միաւորներու մէջ հայութեան տեղ տրամադրել: Օրինակ, ընտրական օրէնք ներառել այնպիտի տրամադրութիւններ, որոնք փոքրամասնութիւններուն ներգրաւուածութեան արդար առիթներ կը ստեղծեն: Սուրիահայութեան մշակութային ինքնութիւնը եւ ընկերութեան մէջ ներգրաւուածութիւնը ամրագրելու համար, անհրաժեշտ

է սուրիահայութեան՝ Սուրիոյ հանրային կեանքին մէջ գործնական մասնակցութիւնը ապահովել իր քաղաքական, տնտեսական ու ընկերային ոլորտներով: Իրաւական միջոցներ ու եղանակներ պէտք է որոնել, հաստատելու համար թէ սուրիահայերուն ներգրաւուածութիւնը քաջալերուած, յարգուած, գործադրուած ու հսկուած է, յատկապէս այն շրջաններուն մէջ, ուր սուրիահայութիւնը թուային/մշակութային/պատմական մեծամասնութիւն կամ իւրայատկութիւն մը ունի: Այս ներգրաւուածութիւնը ցուցական ըլլալէ աւելէ, առիթ պէտք է տայ սուրիահայութեան իր դիմագրաւած խնդիրները լուծելու պետաիրաւական արդար համակարգին ծիրին մէջ:

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՏԵՂԸ ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Ձեկոյցի այս բաժինով կարծիքներու եւ տեսակէտերու շարք մը պիտի ներկայացուի, որ կը վերաբերի սուրիահայութեան բոլոր զանգուածներուն, ըլլան անոնք Սուրիոյ մէջ, կամ դուրս:

Սուրիահայութիւնը մինչ օրս, Սուրիոյ մէջ ընդհանրապէս հակազդող ընկերութիւն եղած է: Հետեւաբար, հակազդող ընկերութիւն մը ըլլալէ անցնիլ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ընկերութեան:

Տէր կանգնիլ սուրիահայութեան դարերու վրայ կերտած պատմամշակութային հարստութեան եւ աւանդին:

Համազգային օժանդակութեամբ եւ զօրակցութեամբ շարունակել սուրիահայութեան վերականգնումի աշխատանքները:

Հայոց Ցեղասպանութեան փաստերն ու վկայութիւնները վերացնելու աշխատանքը կասեցնել: Թրքական գործօնին դերակատարութիւնը նուազեցնել:

Սուրիոյ մէջ համակեցութեան ու հաշտութեան նպաստել, սուրիահայութեան խաղաղարարի եւ հաշտարարի դերին զարկ տալ, նպաստել հակամարտող կողմերու տեսակէտերու մօտեցման, ինչպէս նաեւ Սուրիոյ տարբեր ընկերութիւններուն միջեւ սերտ յարաբերութիւններու եւ գործակացութիւն եզրերը առաւել զարգացնել:

Միջազգային ատեաններու եւ կազմակերպութիւններու մօտ նպաստել Սուրիոյ իսկական դիմագիծի ներկայացման, ինչպէս նաեւ օգտագործել միջազգային մարդկային իրաւանց օրէնքներու ընձեռած բոլոր առիթներն ու հնարաւորութիւնները:

Հայաշխարհէն դուրս, օտար աշխարհին հետ մնայուն հաղորդակցութեան մտնել:

Տէր կանգնիլ պատերազմին պատճառով եւ ընթացքին կորսուած բոլոր իրաւունքներուն եւ իրաւական բոլոր միջոցներով օգտուիլ վնասուց հատուցման հնարաւորութիւններէն:

Արեւմտահայ մարդու կերպարը պահպանել:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Զեկոյցը եզրափակելու համար, կ'արժէ մէջբերել Մարթին Լուտըր Քինկի հետեւեալ խօսքը. «*Ընդհանրապէս միշտ, սփեղծագործող ու նուիրուած փոքրամասնութիւնը, աշխարհը աւելի լաւ տեղ դարձուցած են*»: Սուրիահայութիւնը, որպէս գիտակից ու կազմակերպուած փոքրամասնութիւն, Սուրիան աւելի լաւ տեղ դարձնելու կարողութիւնն ու ներուժը ունի:

The Syrian-Armenian Community and the Post-War Syrian State

(Summary)

Kevork Hagopian
kevomayy@hotmail.com

Taking the Syrian minorities' perspectives into consideration, one may argue that neither "Islamism" nor "Arabism" seems likely to unite the diverse communities of Syria. Sectarian tensions among the Muslims; non-Muslim minorities' and Muslim moderates' fears of the emergence of an Islamic state; Kurdish (and other ethnic minorities') concerns about Arabisation are issues that should be taken seriously.

Therefore, the adoption of Syrian state citizenship as a unifying factor may lead the diverse multinational and multi-ethnic communities of Syria to reconcile their disagreements. Bearing in mind the integrating role various ethnic and religious minorities played in building modern Syria, Syrian citizenship can serve as a common denominator and ensure equality and the rule of law to all Syrians without any sort of discrimination.

In this context, the paper highlights the preoccupations of the Syrian Armenian community concerning the current political instability and Syria's ambiguous future. The paper notes a number of matters of principle which, arguably, could guarantee minority rights and their sustainability in the Syrian state. These include protection of Armenian identity; equality and non-discrimination; active participation in political, social and economic life; respect for human rights provisions; minority group rights vis-à-vis historical or cultural places and transnational considerations; measures against marginalization and exclusion in all walks of Syrian socio-political, cultural and economic life.

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Վեր. Դոկտ. Փոլ Հայտոսթեան.- Մեր Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի երրորդ գիտաժողովն է այս, որ կը գումարուի ամէն տարի, Մայիս ամսուան ընթացքին: Այս տարի Սուրիոյ Հայերուն նուիրուած է գիտաժողովը: Կարեւոր սեպեցինք որ այս գիտաժողովին անպայման դուրս գանք զուտ զեկուցաբերներու գիտական շրջանակէն եւ նկատի առնելով որ այսօր Սուրիան կ'ապրի յատուկ տագնապ, ապա կլոր սեղանի մը շուրջ հրաւիրենք եկեղեցական առաջնորդներ, որպէսզի խօսինք այս հարցին մասին նաեւ՝ եկեղեցւոյ դերին, եկեղեցւոյ գործին մասին:

Մեծապէս պատուած կը զգամ եւ Հայկազեան Համալսարանին համար ուրախութիւն է, որ եկեղեցւոյ մեր եղբայրները՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Սրբազանը, Արմաշ Սրբազանը Դամասկոսի Թեմէն, Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի համայնքապետ՝ Վեր. Սելիմեանը, կը մասնակցին այս կլոր սեղանին եւ կը գտնուին մեր մէջ: Վերջին օրերուն, մեր սիրելի եղբայրը Գերապայծառ Միրիաթեանը ստիպուեցաւ հոն մնալ, նոր ծրագիրի յառաջացումով, այլապէս ինք ալ պիտի միանար մեզի այսօր: Մեր հաւաքի ողջոյնները նաեւ իրեն:

Այսօր, կլոր սեղանի այս զրոյցին նիւթը Սուրիոյ Տագնապը եւ Սուրիահայութիւնն է: Նկատի առնելով որ մենք նաեւ կը ներկայացնենք եկեղեցին եւ հոգեւոր ու ազգային գործի մէջ ենք, կարեւոր սեպեցինք որ անդրադառնանք նաեւ հոգեւոր առաջնորդի դերին:

Կլոր սեղանի ձեւաչափը հետեւեալ ընթացքը պիտի ունենայ. ես միքանի հարցումներ պիտի ուղղեմ եւ խնդրեմ որ մեր երեք առաջնորդները տան իրենց պատասխանները: Եթէ հարկ ըլլայ՝ պիտի միջամտեմ, որպէսզի հետաքրքրական կէտ մը աւելի ընդլայնուի, այլապէս պատասխաններէն ետք ձեր հարցումներուն առիթ պիտի տանք:

Միքանի կէտ արձանագրեմ հարցումներուս չանցած:

- Առաջին.- այս գիտաժողովին մէջ այստեղ գտնուողներս հաւանաբար գիտակցեցանք որ մենք որպէս ժողովուրդ շատ աւելի առիթներու պէտք ունինք ոչ-պաշտօնական առումով, այսինքն ոչ-պատրաստուած հարցումներով եւ պատասխաններով, ազատ կերպով զրուցելու, խօսելու, սրտակցելու քան կ'ունենանք եւ մեր սրտին ու մեր մտքին, մեր իրականութիւններուն անդրադառնալու՝ ինչպէս որ կ'ուզենք: Շատ աւելի պէտք ունինք ազատ զրոյցի այս առիթներուն, զրոյցներ որոնց մէջ բոլորս կը մասնակցինք:
- Երկրորդ.- Չեմ կրնար չանդրադառնալ այն իրականութեան որ այսօր վերապատուելին եւ երկու սրբազանները կը գործեն, կ'ապրին եւ կը

ծառայեն Սուրիոյ մէջ: Իրենք չեն խօսիր Սուրիոյ մասին. իրենք կը խօսին Սուրիոյ մէջ: Հսկայ է ասոր տարբերութիւնը: Ես պիտի ըսեմ քաջարի, նուիրուած հոգեւորական առաջնորդներ են անոնք: Բոլորս գիտենք՝ որքան ալ իմաստութիւն ունենան, որքան ալ փորձառութիւն ունենան՝ բաւարար չեն որ մարդ դիմագրաւէ այսօրուան հարցը: Ես ոչ թէ քաջարի պիտի կոչեմ եւ նուիրեալ, բայց ներեցէք որ նաեւ մեր եկեղեցիներու ղեկավարները Սուրիոյ մէջ կոչեմ աննախանձելի վիճակի մէջ: Չեմ կարծեր որ ոեւէ եկեղեցական կամ ազգային առաջնորդ պիտի ուզէր դրուիլ այս կացութեան եւ այս վիճակին մէջ: Ես Պէյրութ նստած ինքզինքս պահ մը իրենց տեղը կը դնեմ. եթէ ժողովուրդին արտայայտուին շատ յստակ կերպով՝ պիտի այպանենք զիրենք, եթէ անյստակ խօսին՝ պիտի այպանենք զիրենք, եթէ ժողովուրդին գաղթը կամ նահատակութիւնը եւ այս կամ այն քայլը առնեն՝ մէկ կամ միւս կողմ անպայման խոցելի կէտ պիտի տայ, եւ այս բնական է. առաջնորդի դեր վերցնողներ պատրաստ պէտք է ըլլան: Ե՛ւ քննադատութեան ե՛ւ վտանգի գին ունի առաջնորդութիւնը յատկապէս այսպիսի կացութեան պարագային: Ես կ'ողջունեմ զիրենք եւ բաւարար խօսքեր չունիմ զօրակցելու եւ զգացումներով ու մեր խորհուրդներով եւ մեր աղօթքերով ըսելու որ որքա՛ն մենք իրենց կողքին ենք՝ ինչ ալ ըլլան պարագաները: Աստուած զիրենք զօրացնէ:

Այժմ կ'անցնիմ առաջին հարցումիս:

Դուք ապրեցաք եւ կ'ապրիք, թերեւս պիտի ապրիք նաեւ տագնապ, ծա՛նր տագնապ, անբացատրելի, տեղ-տեղ անհասկնալի. հաշուենք որ երկար է ճանապարհը եւ դեռ չաւարտեցինք: Դուք հոն էք, կացութիւնը հոն է, եւ կ'ապրիք այս տագնապը ժողովուրդին հետ: Ձեր հոգին խռոված է, ձեր առօրեան ծանր է, անկարելի է որ կարենաք մարդկային առումով լուծումներ գտնել ձեր ժողովուրդի վիճակին: Սա կարելի բան չէ. կը լսենք՝ կարգ մը տեղեր կը խօսիք, ուրիշ տեղեր չէք արտայայտուիր, տեղ մը կրնաք աւելի՛ խօսիլ՝ չէք խօսիր, կամ պէտք չէ՛ խօսիք, ուշադիր պէտք է ըլլաք, բայց ժողովուրդը կը սպասէ որ եկեղեցական ղեկավարները լսէ: Անշուշտ արդեօք միայն եկեղեցականներէ՞ն պէտք է ակնկալել, ժողովուրդը միայն եկեղեցական առաջնորդներէ՞ն պէտք է լսէ, որմէ՞ պէտք է լսէ այսօր մանաւանդ Սուրիոյ մէջ: Սա՛ է դժուարութիւնը նիւթին. կը ջանաք հաւասարակշռութիւնը պահել, որպէսզի արդար ըլլաք զանազան նիւթերու մէջ...: Հարցումս հետեւեալն է.- վստահ եմ արդէն իսկ անցեալ տարիներու ընթացքին դուք՝ որպէս հոգեւորական առաջնորդներ, դասեր քաղեցիք ձեր կեանքին համար, ձեր երկրին, ձեր ժողովուրդին, ձեր վիճակներուն ընդմէջէն եւ դուք գին վճարեցիք՝ տեղ-տեղ զգացական, կազմակերպչական եւն.: Վստահ՝ որ այս դասերուն մէջ զոր քաղեցիք կան նաեւ քրիստոնէական դասեր, կան քաղաքական դասեր, կան ժողովուրդի

կեանքին վերաբերող դասեր, ազգային դասեր: Այս ձեր սորվածներէն, փորձառութենէն՝ թարմ վիճակէն սկսինք. ի՞նչ դասեր կրնաք բաժնեկցիլ ներկաներուն հետ այսօր, ի՞նչ քաղեցիք դուք:

Գերշն. Շահան Ս. Սարգիսեան.- Նախ փառք եւ գոհութիւն Աստուծոյ, որ մեզի այս առիթը տրուեցաւ՝ գտնուիլ Հայկազեան հայկական Համալսարանին մէջ: Առիթը կ'օգտագործենք վստահութեամբ գնահատելու եւ շնորհաւորելու Հայկազեան Համալսարանը իր 60 տարիներու ծառայութեան մէջ, եւ բնականաբար՝ Վեր. Հայտոսթեանը յատկապէս, իր նուիրումին եւ երիտասարդական յանձնառութեան մէջ:

Քաղաքական, ընկերային, բայց նաեւ քրիստոնէական հաւատքի վկայութիւն մըն է մեր տալիքը եւ ազգային առումով հայկական վկայութիւն մըն է: Այդ իմաստով նաեւ մեր գնահատանքը՝ Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին եւ կազմակերպողներուն, յատկապէս՝ Սուրիոյ հայութեան վերաբերող այս գիտական համագումարին համար մեր ուրախութիւնը կը յայտնենք: Թոյլ տրուի նաեւ այս առթիւ ըսել սուրիահայ մտաւորականներուն, որոնք Սուրիայէն դուրս, այստեղ առիթը կ'ունենան վերագտնելու զիրար: Մեր գնահատանքը բոլոր գիտնականներուն, որոնք Լիբանանէն թէ Սփիւռքի զանազան վայրերէն եկած են սուրիահայութեան մասին իրենց տարիներու վաստակը լիարժէք խորքով փոխանցելու համագումարին եւ անոր ճամփով՝ վերընթերցումը կատարելու մեր ապրած ժամանակաշրջանին:

Հարցումին մէջ մտած կ'ըլլանք, երբ կը սկսինք վերընթերցել մեր անցած ժամանակաշրջանը եւ տարածքը: Սուրիահայերը ընդհանրապէս Սուրիոյ մէջ փառաւոր օրեր ապրեցան յետեղեռնեան շրջանին՝ նախ վերապրած ըլլալու իրականութեամբ, երկրորդ՝ վերակազմակերպուած ըլլալու իրողութեամբ, երրորդ՝ իրենց կարողականութիւնը ո՛չ միայն Սուրիոյ, նաեւ Սփիւռքի բոլոր տարածքին մարդուժի արտադրութեան եւ իւրայատուկ մտածելու եղանակ մը դրսեւորած ըլլալու իրականութեամբ:

Այսօրուան Սուրիոյ տագնապին պատճառով սուրիահայութեան քաղած բազմաթիւ դասերուն փորձառութիւնը կարելի չէ սպառել միայն մատնանշելով ա՛յն ինչ որ անհրաժեշտ է մատնանշել՝ բան մը սորվելու համար գալիքին հաշուոյն: Իրականութիւնը ա՛յն է, որ մենք սորվեցանք - դժբախտաբար - տագնապին մէջ՝ *միանալ*: Խաղաղ, հանգստաւէտ պայմաններու մէջ ամէն մարդ իր պատկերացումով - իւրայատկութիւններ միշտ յարգելով - ինքնուրոյն կերպով ապրելու, գործելու, խօսելու հոգեբանութեան մէջ կը գտնուէր: Մարդկային եւ բնական է ատիկա. այլազանութիւնը նաեւ հարստութիւն է այդ իմաստով: Բայց մենք սորվեցանք պարտադրաբար, ինչպէս՝ լիբանանահայ համայնքը Լիբանանի քաղաքացիական պատերազմին, որուն ապրուած ժամանակաշրջանին մէջ ե՛ս ալ ապրեցայ, երբ դաստիարակուեցայ

այստեղ Դպրեվանքէն ներս: Այդ փորձառութիւնն է որ այսօր որոշ իմաստով կ'օգտագործեմ Սուրիոյ մէջ որպէս առաջնորդի: Սուրիոյ պարագային՝ սորվեցանք երբեմն այս ծանր պայմաններուն մէջ միասին ըլլալ, մեր տարակարծութիւնները մէկ կողմ թողուլ, ճանչնալ առաջնահերթութիւնները: Առաջնահերթութիւններ կան, որոնք ազգերու գոյատեւման համար շատ անհրաժեշտ են: Այսօր մեր առաջնահերթութիւնը մեր ժողովուրդի անվտանգութիւնն է:

Միասնական եւ միասնաբար ըլլալը այս կացութեան մէջ կը սորվինք եւ մեզի կը սորվեցնէ որ մենք ունինք նաեւ կարողութիւնը եւ տրամաբանութիւնը, գործողութիւնը եւ կամեցողութիւնը միասնաբար շարունակելու մեր երթը երկրագունդի վրայ, որպէս հայ քրիստոնեայ համայնք, հաւաքականութիւն, ապա նաեւ ազգ:

Վեր. Յարութիւն Սելիմեան.- Ես կ'ողջունեմ ներկաները, միաժամանակ կը շնորհաւորեմ Հայկազեան Համալսարանը եւ Վեր. Հայտոսթեանի ունեցած այս տեսլականը՝ համախմբել սուրիահայութեան նիւթին հետ կապուած յատուկ զեկոյցներ ներկայացնող անհատներ, պատրաստուած մարդեր ե՛ւ Սուրիայէն, ե՛ւ դուրսէն: Փառք կու տամ, որ Տէրը մինչեւ այսօր խնայեց մեզմէ իւրաքանչիւրը եւ մենք այստեղ ներկայ եղանք: Ան մեզի մտածել տուաւ, թէ ինչպէ՛ս եւ ինչպիսի՛ պայմաններու մէջ կրկին անգամ պիտի վերադառնանք Հալէպ:

Գիտնալու ենք ամէնքս, որ Հալէպը այսօր նախանձելի օրեր չ'ապրիր: Ընդհանրապէս Սուրիան նախանձելի օրեր չ'ապրիր, եւ, դժբախտաբար, մեզմէ շատ բան կախեալ չէ այդ առումով: Եթէ մեզմէ կախեալ ըլլար պատերազմը դադրեցնելու որոշումը՝ հաւանաբար այսօր այս գիտաժողովին իսկ կ'առնէինք:

Երբեմն հարցումներ կ'ուղղուին մեզի՝ որպէս համայնքապետեր. այդ հարցումները կրնան ըլլալ շատ պարզ, բայց միայնգամայն բարդ: Օրինակ, թէ՝ արդեօք պատերազմը ի՛նչ բնոյթ կը ստանայ եւ յոյս ունի՞նք, որ պատերազմը շուտով կ'աւարտի· արդեօք մեր ժողովուրդը ի՞նչ պիտի ըլլայ գալիք օրերուն եւն·: Այս հարցերուն պատասխանը մեր քովը չէ:

Յատկապէս անցնող մի քանի տարիներուն ես ինքզինքս դրի մեր ժողովուրդին տառապանքը, տագնապը, երբեմն յուսալքութիւնը, երբեմն յուսախաբուած ըլլալու իրավիճակը տեսնողի վիճակին մէջ: Այս կացութիւնը մեզ դէմ յանդիման կը դնէ կեանքի շատ կարեւոր այնպիսի իրավիճակներու՝ երբ իմաստուն մարդը, դէպի երկինք նայուածք եւ ուղղութիւն ունեցող, աստուածային ներշնչում եւ առաջնորդութիւն սպասելու եւ ստանալու պատրաստ եղող անձը անպայման պիտի տեսնէ թէ Տէրը ի՛նչ պիտի առաջնորդէ:

Երկու նիւթերու շուրջ պիտի խորհրդածեմ: Կ'ուզեմ այստեղ յստակացնել, թէ երբ Սուրիոյ մասին կը խօսինք, պէտք է որ Քեսապը եւ

Քեսապի շրջանը, որպէս Սուրիոյ անբաժան մէկ մասը՝ այո՛, բայց միաժամանակ իբրեւ Կիլիկիոյ հարստութենէն մեզի մնացած շատ պատուական ժառանգ նկատենք: Այն ինչ որ կը պատահի Սուրիոյ մէջ եւ այն ինչ որ կը պատահի Քեսապի մէջ յատկապէս, մեզմէ ամէն մէկուն սիրտը, հոգին շատ տարօրինակ տարբեր զգացողական խաչմերուկներու վրայ կը դնէ: Մեր ժողովուրդի միասնութիւնը - յատկապէս Սուրիոյ այս ճգնաժամային օրերուն - մեզի համար այն ապահով առանցքը եղաւ, որով մենք որպէս մեր կեանքին առաքելութեան մէջ հաւաքաբար դիմագրաւած դժուարութիւններու անձեր՝ հարցերուն շուրջ մէկտեղուեցանք: Երանի մենք այս միասնականութեան դասը վաղուց սորվէինք: Ես սորվեցայ անձնապէս, թէ որքան լա՛ւ պիտի ըլլար, եթէ մեր ժողովուրդը միասնութեան այս երբեմն սուղ գին վճարելիք դասը սորվէր ո՛չ միայն պատերազմի համար, պատերազմի օրերուն ու պատերազմէն դուրս գալու համար, այլեւ մնայուն դասի վերածուէր ան, մնայուն սկզբունքի վերածուէր, ըմբռնողութեան, հասկացողութեան, մեր ամբողջ ազգային ռազմավարութեան մէջ ունենար շատ ուժեղ եւ անխորտակելի բեմահարթակ, եւ ոչ մէկ ատեն ոչ մէկ գործօն կարենար խախտել այդ սկզբունքը:

Հայ ժողովուրդի միասնութիւնը ինծի կը յիշեցնէ Եղիշէ Չարենցի «Ո՛վ Հայ Ժողովուրդ, Քո Միակ Փրկութիւնը Քո Հաւաքական Ուժի Մէջ է» ասոյթը: Մեր ժողովուրդի միասնութիւնը եւ փրկութիւնը մեր հաւաքական ուժին մէջ է. տա՛յ Աստուած, որ մենք այս միասնութեան դասը սորվելէն ետք կարենանք շարունակել նաեւ յետպատերազմական շրջանին:

Երկրորդ դասը հետեւեալն է. մենք շատ անգամ ասպնջական հայրենիքներու մէջ մեր ծաւալած գործունէութիւններուն, մեր ունեցած ապրելաձեւին, մեր հիմնած հաստատութիւններուն նկատմամբ կ'ունենանք այնպիսի կապուածութիւն, որ եկեղեցին, առնչակից հաստատութիւնները ամբողջութեամբ մեզի համար էութենական կարեւորութեամբ օրակարգի վրայ կը դրուին եւ մենք այնքան կառչած կը մնանք մեր հաստատութենական արժէքներուն եւ արժանիքներուն, որ երբեմն զանոնք մէկ ամբողջութիւն կը տեսնենք մեր ունեցուածքներուն եւ ինչքերուն հետ: Եւ միշտ կը մոռնանք որ Հայրենիքէն դուրս չկայ սփիւռքահայ անդրդուելի գաղութ: Ամէնէն ուժեղ, անդրդուելի կարծուած երկիրներուն մէջ կազմակերպուած հայկական գաղութներն անգամ ցնցնուեցան՝ հիմնայատակ ըլլալու աստիճան: Կը նշանակէ մենք պէտք է նաեւ սորվինք այն դասը, որ երբ մենք տարագրուած ենք եւ մեր ակունքներէն հեռացած՝ ուշ կամ կանուխ անպայմա՛ն պիտի վտանգուած ըլլանք՝ տարատեսակ յարձակումներու թիրախ դառնալով:

Գերշն. Արմաշ Ս. Նալպանտեան.- Ես ալ իմ հերթիս կ'ուզեմ խորին շնորհակալութիւնս յայտնել Հայկազեան Համալսարանի այն մտայղացումին եւ կազմակերպական աշխատանքին, որ հաւաքեց մեզ բոլորս այս-

տեղ եւ սփիւռքագիտութեան ուսումնասիրութեան առանցքը դարձուցլ նաեւ մեր սիրելի սուրիահայ գաղութը: Շնորհակալութիւն եւ հարցումին համար:

Երբ հարցումը կ'ուղղուի թէ ի՛նչ դասեր քաղեցինք՝ անմիջապէս մարդուն մտքին մէջ կը վերականգնի դպրոցը, իր ծոյլ կամ աշխատասէր ըլլալը, կը վերականգնին նաեւ մանկական գեղեցիկ յիշատակներ... կու գան նաեւ քաղուած դասերը, որոնք դարձած են մեր ինքնութեան, նկարագրին հիմքը: Սակայն այս դպրոցը որմէ մենք կ'անցնինք այսօր, դառն ու ցաւտ դպրոց մըն է, իր հետ կը բերէ ոչ թէ բան մը սորվելու այլ՝ զգաստացնելու, արթնցնելու դասեր: Առաջինը որ կրնամ ըսել՝ աղօթքի գիտակցութիւնն է որ իբր հոգեւորական իմ կեանքիս առանցքը դարձուցած եմ. կեանքի բերումով, լաւ ապրելու բերումով, հանգիստ ապրելու բերումով աղօթքը դարձուցած եմ պարզապէս իմ կեանքիս յաճախ պարզ պարտականութիւն մը: Այս օրերուն կը գիտակցիմ որ չէ՛, էական կարեւորութիւն ունի իմ կեանքիս մէջ աղօթքը, երբ կը տեսնենք թէ քաղաքական գետնի վրայ մեծ ու փոքր պետութիւններէն, կազմակերպութիւններէ լքուած են Սուրիան ու սուրիահայութիւնը, ուրեմն իմ միակ յենարանս կը մնայ Աստուած եւ աղօթքս: Կը հարցուինք թէ ինչպէ՛ս կրնանք այնտեղ աշխատիլ, գոյատեւել: Իսկապէս չեմ գիտեր, չէի գիտեր մինչեւ այն ատեն երբ մեր հանդիպումներուն ժամանակ մեզի ըսին. «մենք ձեզի համար կ'աղօթենք»: Ա՛յն ատեն զգացի որ ես նաեւ իրենց աղօթքներուն պատասխանով է որ այդ ուժը կ'ունենամ եւ կը գոյատեւեմ: Հիմա անձնական փորձառութեամբ գիտեմ թէ ինչքան կարեւոր է անպատասխան մնալու մէջ, այդ հեռաւորութեան մէջ աղօթելու ուժ գտնելը:

Երկրորդը՝ իբրեւ եկեղեցական իմ կոչումիս գիտակցութիւնն է, երբ այլեւս ամէն բան մէկ կողմ դնելով կը ջանաս հասնիլ ժողովուրդի կարիքին, ցաւին եւ անշուշտ - չեմ ուզեր համեստութիւն ընել կամ ինքնագովել - ինծի ներած կարելիութեանս սահմաններուն չափ հասնիլ օգնութեան, լսել իրենց ցաւը, երբեմն... անպատասխան ձգել: Իմ իրական կոչումիս դա՛սն է որ քաղեցի:

Կ'ուզեմ կրկին միանալ մեր հոգեւոր եղբայրներուն որ միասնականութիւնը այն գեղեցիկ իտէալական կարեւոր ազդակն է մեր կեանքին, զոր յաճախ մոռցած էինք եւ լաւ օրերու լոյսին տակ մէկ կողմ դրած, հիմա իսկապէս ա՛յդ կ'ապրինք: Եւ ատիկա, ոչ միայն իբրեւ նշանաբան, այլեւ՝ իրողապէս, թէկու՛զ ցաւոտ իրականութեան վրայ: Կ'աշխատինք պարզապէս մէկ սիրտ եւ մէկ հոգի ըլլալով եւ ասիկա անդրադարձ կը ձգէ մեր ժողովուրդին վրայ:

Չորրորդ կէտ մը զոր կ'ուզեմ նշել՝ իբրեւ սուրիահայ իմ ինքնագիտակցութիւնս եւ իմ արժէքս հասկնալն է, գնահատելն է, վերագտնելն է ե՛ւ այս օրերուն ե՛ւ յառաջիկայ օրերուն: Արդէն իսկ սուրիահայութեան ստեղծուած

բոլոր արժէքին, մանաւանդ սուրիահայուն ցաւին համահայկական մօտեցումին կամ այս ու այն բնագաւառի քննարկումները որ կը կատարուին՝ տեղի կ'ունենան որպէսզի զանոնք վերարժեւորելով ըլլանք այն արժէքին զաւակը զոր այսօր կը կոչենք սուրիահայութիւն:

Այս դպրոցէն քաղած այս դասերը ինծի ուժ կու տան գործելու, աշխատելու, գոյատեւելու Սուրիոյ մէջ:

Ասոր կողքին անշուշտ պատասխանը շատ շերտեր ունի, անկեղծօրէն սրտէս կը խօսիմ, դասերը նաեւ կու գան սրելու իմ կարողութիւններս, զիս մղելու զգուշաւորութեան, զգօնութեան, պատասխանատու ըլլալով եւ իմ ուսերուս ունենալով գաղութի մը ամբողջ ցաւը եւ իբրեւ առաջնորդ ուշադիր ըլլալու՝ ժամանակի նշանը, ազդանշանը տեսնելու, հասկնալու, գիտակցելու եւ ըստ այնմ ալ գործելու:

Վեր. Դոկտ. Հայտոսթեան.- Շատ շնորհակալ ենք: Ձեր առօրեան, ինչպէս անցնող տարիներուն, այսօր ալ լեցուն է ծանր դժուարութիւններով: Դուք յառաջիկայ օրերուն կը վերադառնաք ձեր եկեղեցիներն ու կեդրոնները, գրասենեակները: Նոյն վիճակն է. կը վերադառնաք այդ դժուարութիւններուն: Այնպէս չէ որ Պէյրութ նստած՝ չէք մտածեր այդ դժուարութիւններուն մասին: Այդ դժուարութիւններուն մասին մենք Պէյրութ կամ այլ տեղեր նստած կը մտածենք՝ քաղաքական, տնտեսական եւ ապահովական նիւթերու մասին, ֆիզիքական առումով ընդհանրապէս, թէ՝ ռմբակոծում եղաւ, մահ եղաւ, գրաւեցին, գործ չկայ... սակայն հոգեւոր ոլորտին մէջ, եկեղեցական կեանքին մէջ գիտէք որ ձեր դիմագրաւելիք դժուարութիւնները - նաեւ ժողովուրդինը - ձեր հովուական դժուարութիւններն են՝ հովուական հոգածութեան, հոգատարութեան դժուարութիւններն են եւ անոնց ընկերային, ընտանեկան կեանքին դժուարութիւններն են: Մենք դուրսէն դիտելով չենք կրնար տեսնել այդ դժուարութիւնները, մենք կը տեսնենք ընդհանուրը եւ ձեզի ալ 'խելք կու տանք'...: Բայց ձեր դժուարութիւնները միայն այդ ընդհանուրները չեն, այլ նաեւ՝ ձեր ժողովուրդինը: Կրնայ ըլլալ որ գաղութը քայքայուած վիճակի մէջ կը գտնէ ինքզինք այսօր, բայց ասի ունի նաեւ հոգեկան հիմք՝ ընտանիքներու, ընկերութեան կեանքին մէջ եւ ասոնք ձեզի համար նաեւ դժուարութիւններ պիտի ըլլան: Ինչո՞վ մտահոգ էք այս դժուարութիւններուն մէջ, ինչպէ՞ս կը տեսնէք այս դժուարութիւնները նաեւ ոչ-պետութիւններու քաղաքականութիւններու մէջ, ինչո՞վ մտահոգ էք, ի՞նչ են ձեր դժուարութիւնները, ժողովուրդի՛ դժուարութիւնները զոր դուք կը դիմագրաւէք:

Շահան Սրբազան.- Նախ վերնագրին առնչութեամբ. երբ տագնապ կ'ըսենք՝ ընդհանրապէս հոգեբանական անդրադարձ կայ մտքին մէջ, եւ՝ տագնապը բացայայտող իրականութիւնը ծածկուած, երբեմն մատի ետեւ պահուըտած կ'ապրինք հաւաքաբար, երբեմն նաեւ՝ անհատաբար ու

ազգովին: Նո՛յն համայնքին զաւակները երբեմն իրենք զիրենք ծածկելով զբաղած են, քան թէ՝ բացայայտելով թէ իրենք ո՛վ են, ի՛նչ են: Տագնապին ընթացքին - ինչպէս ժողովուրդը կ'ըսէ - ամէն մարդ իր բուն գոյնը ցոյց կու տայ. թէ՛ ներսը ապրողները (իրենց ունեցած բոլոր տեսակի թերութիւններով), եւ թէ՛ դուրսը ապրողները: Դուրսը ապրողներ ըսելով նկատի ունիմ ամբողջ ժողովուրդը, մեր ազգը, մեր հաւաքականութիւնները: Կ'ապրինք կացութեան մը մէջ երբ մարդիկ կը զգուշանան եւ - կը կրկնեմ բառը - մատի ետեւ կը պահուըտին ու չեն խօսիր կամ չեն ուզեր խօսիլ: Սակայն, պէ՛տք է որ խօսին, որովհետեւ երբ բժիշկին կ'երթաս եւ չես ըսեր ցաւդ՝ չկայ բժիշկ որ կրնայ բժշկել՝ եթէ դուն իրեն եւ քեզի օգտակար չըլլաս: Հարց մը որ յաճախ կը հարցնեմ եւ մտահոգութիւն է՝ հովուական մտահոգութիւն ըլլալու կողքին, համահայկական առումով մենք պատկերացում ունէի՞նք, ունի՞նք եւ պիտի ունենա՞նք սուրիահայութեան առնչութեամբ: Պատասխանը «ո՛չ» է: Մեղադրական խօսք է: Եթէ գիտաժողով է՝ առարկայական քննարկումներն են որ արժէք ունին: Ես հետեւեցայ գիտաժողովին ընթացքին. բոլոր անոնք որոնք համալսարանական բարձրագոյն կրթութիւն ունին, պատրաստուածութիւն ունին, *մեթոտ* ունին՝ խօսեցան տուեալներու հիմամբ եւ ոչ թէ՝ «կը կարծեմ, կ'ենթադրեմ, կը թուի թէ...»ով: Ա՛յդ է ինչ որ մեզմէ շատերուն յաճախ պակսած է: Գիտնականը կը խօսի տուեալներու հիման վրայ: Մենք կը մատնանշենք՝ ցոյց տալու համար որ այսօր համահայկական պատկերացում գոյութիւն չունի սուրիահայութեան մասին: Եթէ ոեւէ շրջանակի մէջ մէկը ունի՛ պատկերացում, եւ եթէ թաքնուած կամ ծածկուած պատկերացում մըն է ատիկա՝ ապա համազգային նշանակութեամբ ծրագիր չի կրնար ըլլալ:

Անցնիմ հովուական առնչութեան: Ինչպէս ըսուեցաւ, դուրսէն երբեմն արտայայտութիւններ կ'ըլլան: Կը վստահեցնեմ - եւ եթէ մեր ձայնը քիչ մը աւելի հեռուները հասնի՝ ուրախ պիտի ըլլամ - բոլոր տեսակի քննադատութիւնները առանց բացառութեան - ուզենք կամ չուզենք - մեզի համար ընդունելի են՝ բան մը կը սորվինք: Բայց քննադատութեան տարբերակ մը գոյութիւն ունի որ թելադրուած կ'ըլլայ, ինչ որ ծածուկ ծրագրերու, օրակարգերու համար: Մարդիկ կան, իրենց կայքէջին վրայ, դիմատետրին վրայ եւ կամ այլապէս ելոյթներ կ'ունենան: Խելք տալը լաւ բան է: Ես չեմ կարծեր, որ հոս նստողներս ամէնքս գերմարդ ենք. կարողութիւններ՝ ինչքան ալ ունենանք, միշտ ալ բանէ մը, անձէ մը, մէկէ մը բան մը սորվելու պատրաստակամութիւնը պէ՛տք է ունենանք: Եւ մենք սորվեցանք: Երբ կը սկսիս սորվիլ, ընդհանրապէս աւելի լուռ կ'ըլլաս, որովհետեւ սորվող մարդը աղմուկին մէջ չէ որ կը սորվի: Տրամաբանող մարդը, իրատես մարդը, առաջնորդող մարդը պարտաւորութիւն ունի նաեւ սորվելու եւ սորված ատենը ծրագրեր մշակելու: Մեր մշակած բոլոր ծրագրերը չեն որ կը յաջո-

ղին եւ չկարծենք որ նաեւ հօտ ու հովիւ հասկացութիւնը անպայման պիտի առնուի իր դրական պատկերին մէջ, այսինքն՝ առաջնորդը կը թելադրէ միւսներն ալ կը հետեւին: Երբեմն կայ նաեւ բացասականը. մենք եթէ ըսինք՝ «ձախ գացէք», մեծ մաս մը աջ գնաց, եթէ առաջարկեցինք բան մը՝ ներսուրիահայ առումով հալած իւղի պէս չառին մարդիկ: Ինչպէս բոլորիդ ծանօթ է՝ հովուական ծառայութեան մէջ՝ միայն Սուրիահայութեան Վերականգնումի եւ Շտապ Օգնութեան Մարմին մը յառաջացնելով, մեզի մատակարարուած օժանդակութիւններով սուրիահայ կարիքաւորներուն օգտակար ըլլալու ծրագրերը չեն որ համայնք մը կը փրկեն: Աւելի՛ խորունկ տագնապ կայ եւ ատոր համար մենք երբեմն-երբեմն մտածեցինք նոյնիսկ մեկնողին հաշուոյն, ոչ թէ մեկնելէն յետոյ՝ մեկնողին հաշուոյն ինչ է մեր՝ անոնց աջակցութիւնը: Որովհետեւ մինչ ռմբակոծում, քանդում տեղի կ'ունենայ եւ մինչ մարդիկ կը մեկնին՝ կացութենէն վախնալով, մենք չկրցանք յստակ կերպով ճշտել մեր ծրագրերը՝ գալիք օրերուն հաշուոյն: Չորս տարի է՝ Սուրիան, երեք տարի է՝ Հալէպը, երեք ամիս է՝ Քեսապը տագնապի մէջ են: Բայց օրինակ, ո՛չ ոք Քամիշլիի մասին կը խօսի: Վաղը պիտի խօսին որ ան շրջափակուած է՝ ինչպէ՞ս կ'ապրին մարդիկ հոն: Ռմբակոծում չկայ, բայց ինչպէ՞ս կ'ապրին հոն: Կը կարծեմ որ այս գիտաժողովը նաեւ օգտակար եղաւ: Մինչեւ այս պահը լուռ կը հետեւէի, որովհետեւ անհաւատալի սորվելիք բաներ կային անոր մէջ: Այսօր բուռ մը հայեր կան Սուրիոյ մէջ եւ մենք այդ ժողովուրդին հետ պիտի մնանք ու այդ ժողովուրդին համար պիտի աշխատինք: Մեկնողներուն՝ բարի ճանապարհ, մնացողներուն համար ձեր աղօթքներուն զօրակցութեան պէտք ունինք: Մինակ, առանձին, նաեւ խումբով ազգ մը ղեկավարելու խնդիրը այնքան ալ դիւրին, հեշտ բան չէ: Այս տագնապին մէջ՝ հովուական քարոզներ անպակաս եղան, բարոյական դաստիարակչական ծրագրեր անպակաս եղան, բայց մարդիկ այսօր խնդիրը բոլորովին տարբեր ակնոցներով կը դիտեն: Մենք քննադատութիւնները սիրով կ'ընդունինք: Բայց համազգային առումով ծրագիր գոյութիւն չունի եւ եթէ ասիկա կ'անհանգստացնէ մարդիկ՝ թող անհանգստացումը պատճառ ըլլայ՝ մտածելու թէ ի՛նչ կրնան ընել, որպէսզի միասնական, մէկ ծրագիր յառաջացնեն սուրիահայութեան՝ այսօրուընէ սկսեալ գալիք ժամանակներուն համար:

Վեր. Սելիմեան.- Ուրախ եմ որ կը խորհրդակցինք այսպիսի նիւթեր, որովհետեւ անցնող տարիներուն լրատուական աղբիւրներու բաւական նիւթեր զրուցեցինք եւ մեզմէ որոշակի պատասխաններ պահանջուեցան: Բայց մենք մեր ժողովուրդի գիտական մտածողութիւն ունեցող, մշակող այս հաւաքանիին հետ ասկէ առաջ ոչ մէկ ատեն զրոյց ունեցած ենք եւ ոչ ալ հարցադրուած ենք իրենցմէ: Կը կարծեմ որ Սուրիոյ պատերազմի 5րդ տարուան մէջ առաջին անգամ մենք այս բնոյթի նիստի մը մէջ ենք. պէտք

է ըլլանք թափանցիկ, շատ անկեղծ, հարազատ եւ մեր մատին ետեւը չպահուըտինք՝ թէ՛ առաջնորդ, թէ՛ ժողովուրդ:

Նիւթը որ պիտի ներկայացնեմ ինծի համար շատ լուրջ հարց է եւ կ'արժէ քննարկել մեր այս ասպնջական երկիրներուն ծիրով, իբրեւ հայ ժողովուրդ: Նկատի ունիմ մեր հայկական նկարագիրը, քաղաքացիական պարտականութիւնները: Մեր ունեցած ըմբռնումները ի՞նչ մակարդակներու վրայ են, ինչպիսի՞ դաստիարակութեան արդիւնք են: Մենք երկար ատեն հայրենասիրութեան, ազգասիրութեան դասերը ե՛ւ երգերու ե՛ւ ընդհանուր քարոզչական աշխատանքին մէջ անպակաս չձգեցինք: Մեր օրը վէրքոտ էր (պիտի խնդրեմ որ լայն սրտով ընդունինք բոլոր ըսուածները), մենք աչալուրջ հետեւեցանք. բայց ի՛նչ պատահեցաւ եւ ինչպէ՛ս եղաւ որ սուրիական ասպնջական հայրենիքի պատերազմի առաջին իսկ օրերուն, բաւական մեծ թիւով հայորդիներ, նոյնիսկ՝ առաջնորդութեան պատասխանատուութիւններ ստանձնող շարքերուն մէջ, վախի ազդեցութեան վիճակի մատնուելէ առաջ, սկսան մեր շարքերէն բացակայիլ եւ հեռանալ: Հասկնալի է, պատերազմի առաջին օրերուն ռումբի պայթումները, ստեղծուած կենցաղային շարք մը նեղութիւններ կրնային արդէն նեղ կացութիւն յառաջացնել - պարզ է՝ ամէն մարդ վարժուած չէ խիզախութիւններ դրսեւորելու, շատեր կրնան նաեւ իրապէս վախէ բռնուած ըլլալ, հոգեխոց ապրիլ - բայց ինչպէ՞ս բացատրենք որ 70-75,000 հոգի հաշուող գաղութի մը 60,000ը այսօր ասպնջական երկրին մէջ չէ: 10-12,000ը եթէ հայրենադարձութեան առիթ սեպեց սուրիական պատերազմը ու վերադարձաւ հայրենիք եւ եթէ ուրիշ 10-15,000ը եկաւ Պէյրութ, միքանի հազարն ալ Սուրիոյ մէջ տեղափոխուեցաւ 30-40,000 հոգին ու՞ր գացին: Այս վիճակը կրնայ հարցադրումներու մղել մեզ, թէ՝ արդեօք մենք սերունդները ինչպիսի դաստիարակութեան պատրաստեցինք, ու՞ր է մեր քաղաքացիական լիիրաւ պարտականութեան գիտակից հայորդիին վերաբերմունքը ասպնջական հայրենիքին՝ պատերազմի օրերուն: Երբ պատերազմը վրայ հասնի՝ լաւ քաղաքացին նաեւ պարտականութիւն ունի գիտակցաբար այդտե՛ղ մնալու, այդտե՛ղ կենալու: Շատերս Հայաստանը որպէս միջոց օգտագործեցինք դժբախտաբար, եւ Հայաստանի քաղաքացիութիւն ստացանք որպէսզի երթանք ու եւրոպական կարգ մը սահմաններու վրայ մտնենք այլ ծրագիրերու մէջ: Այս պատմութիւնը ընդհանրացած պատմութիւն է: Այս ցաւս ես կ'արտայայտեմ եւ հարց կը դնեմ: Արդեօք ինչպիսի՞, ի՞նչ ակադեմական, ազգային, մշակութային չափորոշիչներու համապատասխան ազգասիրութեան եւ հայրենասիրութեան ծրագիրեր մշակենք եւ ներկայացնենք գալիք սերունդներուն՝ աւելի ապահով, կայուն եւ ասպնջական հայրենիքին կառչած մնալու պատրաստակամ սերունդ ունենալու համար:

Արմաշ Սրբազան.- Լրատուամիջոցներէն, մամուլէն, յայտարարութիւններէն կը խօսուի Սուրիոյ եւ սուրիահայ տագնապին մասին: Կ'ուզեմ

միքանի կէտերու անդրադառնալ՝ տագնապ բառին տակ, ուրիշ ձեւով: Այսօր իրականութիւն մը կայ զոր պէտք է տեսնենք: Այսօր մենք տագնապ մը ունինք, որ գոյութենական տագնապ է. չեմ խօսիր տնտեսական, սահմանային շրջափակումի, աշխատանքային եւ նման տագնապի մասին: Ասոնք կան արդէն: Այսօր մենք Սուրիոյ մէջ ունինք գոյութենական տագնապ: Աւելի յստակ ըսեմ՝ մահ ու կենաց խնդիր ունինք մենք. ոչ թէ սահմանի վրայ, այլ իր տան մէջ նստած եւ ոչ թէ թէժ թաղամասի մէջ նստած, այլ՝ հանգիստ եւ *կանաչ գօտի*ին մէջ նստած, վերնայարկին մէջ, ներքնայարկին մէջ, նկուղին մէջ... գոյութենական տագնապ ունինք եւ ինքնին այս տագնապն ու տագնապին լուծումը շատ դժուար է, մեր ձեռքը չէ, մեզի պարտադրուած տագնապ մըն է: Սակայն այս տագնապը իր հետը կը բերէ ուրիշ դժուարութիւններ, որոնց մենք կ'առերեսուինք եւ ըստ այնմ կը փորձենք լուծումներ, ուղղութիւններ, յղումներ տալ: Ընկերային տագնապի մէջ ենք մենք այսօր Սուրիոյ մէջ: Երբ կ'իմացուի որ օգնութիւն պիտի բաժնուի՝ մեր ժողովուրդի ընկերային նկարագիրը կարծես կը կորսուի. նկարագիր մը յառաջացած է մեր մէջ, որ մերը չէ եւ ասիկա տագնապ մըն է մեզի համար՝ եթէ կ'ուզենք մեր գաղութին ապագան ապահովել: Երկրորդ տագնապը որուն կ'ուզեմ ակնարկել՝ ընտանեկան է. ամէն ընտանիքի տէր, կամ ընտանիքի զաւակ գիտէ որ դժուարութիւններու մէջէն կ'անցնի եւ կը թերանայ իր հանդուրժողականութեան մէջ, նեղութեան մէջ կողք կողքի ըլլալուն մէջ: Հասկնալի է՝ գուցէ մարդկայնօրէն, բայց իսկապէ՛ս տագնապի մէջ են նաեւ մեր ընտանիքները՝ դժուարութիւններուն ընթացքին ընտանեկան միասնութիւնը պահելու:

Ինքնութեան խնդիր ունինք իբրեւ սուրիական հայրենիքի, ասպնջական հայրենիքի քաղաքացիական պարտականութեան եւ իրաւունքներուն եւ՝ մեզի համար պապենական հայրենիքի հասկացողութեան միջեւ: Այն ինչ որ մենք գովերգած էինք, այն ինչ որ մեր օրօրոցային դաստիարակութեամբ երազային եւ յետոյ իրական հայրենիքի մէջ մեր ինքնութիւնը դրոշմած էինք՝ այսօր կը տեսնենք շատ աժան: Մեր պապերուն երազը՝ ունենալ անկախ Հայաստան եւ քաղաքացիութիւն, այսօր դարձած է շատերուն համար պարզապէս թուղթ մը, որպէսզի կարողանայ Սուրիայէն ոչ թէ երթալ Հայաստան - ինչպէս ըսաւ վերապատուելին - այլ պարզապէս՝ ուրիշ երկիրներ: Անհատին ազգային իրաւունքն է Հայաստանի քաղաքացի ըլլալը: Բայց այդքան աժան պէտք չէ մօտենանք այդ երազին: Ուրիշ երեւոյթ մըն ալ կայ որուն մէջ մեծ աւանդ ունինք մենք իբրեւ առաջնորդներ, նաեւ՝ Շտապ Օգնութեան Մարմինը, մեր ցաւը իրար հետ միատեղելու եւ խորհրդակցելու: Այդ տագնապը անտարբերութեան տագնապն է: Կը յիշեմ առաջին օրերուն, երբ վիճակը թէժ էր Դամասկոսի մէջ, բայց դեռ Հալէպ կրնայինք երթալ-գալ եւ բոլորը կ'ըսէին թէ Սուրիան չի խորտակուիր ու Հալէպի մէջ հանգիստ են: Յետոյ շրջան մը եղաւ - ինչպէս սրբա-

զանը ըսաւ - Քամիշլիի մասին չի խօսուիր. մարդիկ շրջափակման մէջ են, Հոմսի մասին չի խօսուիր, Տարաայի մասին չի խօսուիր...: Ո՛չ թէ որովհետեւ ոչ թէ չենք գիտեր, այլ՝ անտարբերութեան տագնապ կ'ապրինք: Ամէն մէկս իր ցաւին մէջ միւսը ոչ թէ մոռնալու, այլ 'անտարբերուելու' մէջ է: Եւ այստեղ է՝ իբրեւ առաջնորդի եւ իբրեւ հա՛մաառաջնորդական մեր խումբին ներդրումը. մենք այս տագնապէն զերծ մնալու եւ իսկապէս իրարու զօրակցելու, կարեկցանքի մօտեցումով հասնելու եւ ժողովուրդին այդ զօրակցութեան օրինակը դառնալու ներդրումը պարտինք ունենալ:

Վեր. Դոկտ. Հայտոսթեան.- Կ'ուզեմ անդրադարձ կատարել լսածներուս: Քանի մը անգամ լսեցի, թերեւս նաեւ կարդացիք՝ երբ մարդիկ ըսին թէ «այս առաջնորդները համայնքներուն, ժողովուրդին կ'ըսեն որ իր տեղը պէտք է մնայ, Սուրիա պէտք է մնայ, որպէսզի իրենց փառքը, դիրքը չկորսնցնեն: Որովհետեւ եթէ համայնքը պարպուի՝ համայնք, եկեղեցի կոչուող հաստատութիւնը կը տկարանայ: Ուրեմն, ժողովուրդին ըսենք որ հոս մնայ, որպէսզի մենք իբր հաստատութենական ինքնութիւն, եկեղեցի եւ համայնք նաեւ զօրաւոր մնանք»:

Շահան Սրբազան.- Բոլորդ ինձմէ լաւ գիտէք internally displaced բառակապակցութիւնը: ՄԱԿի ծանօթ մէկ արտայատութիւնն է: Ես անձամբ այդ վիճակին մէջ եմ, առաջնորդարանէն դուրս եմ, բնակարանէս դուրս եմ, կ'ապրիմ կացութեան մը մէջ, որ շատ ցանկալի կացութիւն մը չէ: Թէ՝ ո՛վ ի՛նչ կ'արտայայտուի փառք ու պատիւ մասին... ո՛չ ես հիմնադրած եմ Բերիոյ Հայոց Թեմը եւ սուրիահայ համայնքը, ո՛չ ինձմով պայմանաւորուած սկիզբ կ'առնէ ու կ'աւարտի, ո՛չ ալ ինձմէ յետոյ պիտի վերջանայ:

Հաւանաբար ձեզմէ շատեր հարցումներ ունենան եւ հաւանաբար իրենց փնտռած պատասխանները մեզմէ չառնեն, որովհետեւ մեր մտածածները շատ տարբեր կրնան ըլլալ ձեր մտածածէն եւ հաւանաբար երբեմն նոյն բաները կը մտածենք, բայց տարբեր ձեւերով կ'արտայայտուինք: Այսինքն, մենք այսօրուան կացութեան մէջ զարմանալի - paradox ըլլալու աստիճան - որպէս ղեկավարներ, որպէս առաջնորդներ, նաեւ իմ եղբայրներուս եւ միութիւններու ներկայացուցիչներու անունով կ'ըսեմ՝ մենք յուսահատած վիճակի մէջ չենք բացարձակապէս: Եթէ լաւատեսութիւն չունենայինք՝ նախ մենք ելած պէտք էր ըլլայինք: Լաւատեսութիւնը մեր քրիստոնէական դաստիարակութեան ու բարոյականութեան հիմքը կը կազմէ: Մենք այդպէս մկրտուած ենք, այդպէս դաստիարակուած ենք, եւ հակառակ որ տագնապը մեզ կ'ընկճէ (բնական բան է. եթէ չընկճէր՝ անզգամ վերաբերմունք ցուցաբերած պիտի ըլլայինք): Մենք զգայուն ենք կացութեան նկատմամբ, բայց չենք յուսահատած եւ ես իմ այս լաւատեսութիւնս յայտարարելու, քարոզելու իրաւունքը ունիմ՝ ինծի տրուած ազգային իշխանութեամբ, եկեղեցական ձեռնադրութեամբ եւ առաջնորդական

պաշտօնով: Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովին քիչ մը խիստ ոճով խօսեցայ: Մէկը դուրսէն ձայն ուզեց եւ ըսաւ. «վերջաւորութեան, սրբազան, գիտէ՞ք՝ բոլորը դուրս պիտի ելլեն դուք պիտի մնաք»: Ըսի՝ «շնորհակալութիւն կը յայտնեմ»:

Վեր. Դոկտ. Հայտոսթեան.- Սրբազան, իմ միտքս հետեւեալ հարցումը կայ. դուք հոն էք որովհետեւ չէ՞ք յուսահատած, թէ՞ հոն էք՝ նաեւ որովհետեւ ժողովուրդը առաջնորդի, հոգեւորական առաջնորդի կարիքն ունենալու գիտակցական կոչումը կ'ապրիք. այս երկուքին հաւասարակշռութիւնը ի՞նչ է ձեզի:

Շահան Սրբազան.- Մեզի հարցուցին քաղաքական իմաստով. «դուք վարչակարգին հե՞տն էք, թէ՞ ընդդիմութեան»: Ըսի՝ «մենք երրորդ տարբերակն ենք»:

Վեր. Սելիմեան.- Բայց եթէ մեզի կը հարցուի թէ՝ մնալու՞ են, թէ՞ հեռանալու, մեր պատասխանը այն է թէ՝ «ինչ որ կը վայելէ սուրիացի քաղաքացիին՝ ա՛յդ պէտք է ընենք»: Իսկ սուրիացի քաղաքացիի պարտականութիւնները՝ իրաւունքներուն հետ միասին, զուգահեռ կ'ընթանան եւ հայավայել չէ որ մենք երկրի մը բարիքները վայելենք եւ այդտե՛ղ մնալու պարտականութիւնը, տոկալու՛, ժողովուրդին հետ ընդհանուր կեցուածք պահպանելու, օրհասական ժամանակը երբ գայ՝ մենք հեռանանք: Շատ կարեւոր է որ մենք Սուրիան որեւէ ատեն ո՛չ պանդոկի պէս օգտագործենք, ո՛չ ալ այն մօտեցումով թէ՝ երբ մայրդ գեղեցիկ է, երիտասարդ է, իրմով կը հպարտանաս եւ կը ներկայացնես մարդոց: Իսկ երբ տկարանայ ու ծերանայ տունը չես պահեր զինք ու կ'ամչնաս: Մենք չենք կրնար այսպիսի վերաբերմունք ունենալ: Դժբախտաբար մենք ունեցանք այնպիսի պատրաստուածութիւն, որ Սուրիոյ հետ չկրցանք մեր ամբողջական էութենական խառնուածքը, մեր փիլիսոփայութիւնը, մեր ազգասիրութեան չափորոշիչները նաեւ համապատասխանեցնել սուրիացի ժողովուրդին հետ:

Եթէ պանդոկի մէջ ծառայութիւն մը լաւ չեն ըներ՝ պանդոկը կը փոխես, բայց երբ քու տունիդ մէջ բան փճանայ՝ տունդ չես փոխեր, կը նորոգես: Սուրիան այսօր փճացաւ՝ միասի՛ն պիտի նորոգենք:

Արմաշ Սրբազան.- Շատ դժուար է պատմական, իրական այդ պատասխանատուութիւնը ուսիս առնել եւ ըսել՝ «ժողովուրդ, պիտի մնա՛նք»: Նմանապէս ըսել՝ «ժողովուրդ, պիտի ելլե՛նք»: Օրուայ հոլովոյթին հետեւող-անցնող ցաւալի, քիչ մը մխիթարական, քիչ մը շինիչ, քիչ մը յուսահատական պայմաններուն բերումով կրնայ ըլլալ արտայայտութիւններ ունեցած եմ ես, կրնամ անձամբ իմ մասիս խօսելով, ըսել՝ օրեր եղած են երբ ըսած եմ՝ «մնանք, կառչած մնանք» եւ օրեր եղած են երբ լուռ մնացած եմ: Յամենայնդէպս, Հալէպի մեր եղբայրներուն, որոնց վիճակը շատ աւելի դժուար է, կրնամ հետեւեալ փորձառութիւնը փոխանցել. երբ կ'ապրիս

վիճակի մը մէջ եւ անմիջապէս աչքիդ առջեւ կը տեսնես եկեղեցիիդ, դպրոցիդ ռմբակոծումը եւ դպրոցիդ մէջէն փոքր երեխաներու մահը, երբ լեզուդ կը չորնայ՝ իրենց թաղման արարողութեան խօսք մը խօսելու, ընտանիքին պատասխան մը տալու, կը հարցնես՝ «իմ փառքս ո՛ւր է այնտեղ որ ես իմ ժողովուրդս պիտի պահեմ որ այդ փառքը վայելեմ»: Ան որ այս ձեւի հարցադրումներ կը կատարէ՝ կը նշանակէ մեր ցաւին յարգալից մօտեցում չունի: Կրնայ ըլլալ որ ինք ցաւի մէջ է, բայց չի՛ հասկնար այն ցաւէն որ կ'ապրի ժողովուրդը: Իմ միտքս հետեւեալն է. մեր քաղաճ դասերէն մէկը այն է որ իսկապէ՛ս արժէք մըն ենք մենք իբրեւ սուրիահայ. կրնա՞ս թափել՝ չե՛ս կրնար. ինչ ալ արժէք ստեղծած ես՝ այդ ես: Եթէ կը պարտադրուին ելլելու՝ այդ ուրիշ հարց: Ուրեմն ինծի կը մնայ յիշեցնել մերիններուն ա՛յն արժէքին մասին որ մենք կանք. եթէ իրենք պիտի մնան՝ ուրեմն իմ պարտականութիւնս է հասնիլ իրենց օգնութեան, մխիթարութեան, հովուական ծառայութեան՝ աղօթքով, խնամքով, իրենց հետ ըլլալով, իրենց հետ խնդալով, լալով: Իսկ եթէ պահը կու գայ եւ իրենց ընտանեկան անհատական որոշումին, իրենց վտանգին, իրենց մտահոգութեան հետեւանքով կը փափաքին ելլել դուրս՝ այն ատեն մեզի կը մնայ տալ մեր օրհնութիւնը եւ ըսել՝ «Աստուած հետդ ըլլայ, բայց չմոռնաս Սուրիան»:

Վեր. Սելիմեան.- Լրացուցիչ միտք մը՝ որպէսզի սխալ չհասկցուիմ: Աստուած մի՛ արասցէ, եթէ անբաղձալի աղէտ մը պատահելու նշանները տեսնենք՝ մենք հերոսութիւն պիտի չսեպենք ժողովուրդը այդտեղ պահել եւ չարաշուք մթնոլորտի մը եւ վիճակի մը դատապարտած ըլլալ: Բնականաբար, կը տեղափոխենք մեր ժողովուրդը եւ իրեն հետ կ'ելլենք եթէ ստիպողութիւն ըլլայ: Մենք հոն ենք՝ ժողովուրդին համար, այսինքն եթէ ելլել մը ըլլայ՝ վերջին ելլողը կ'ըլլանք: Ա՛յս կ'ուզէի յստակացնել:

Արմաշ Սրբազան.- Դարձեալ, գործնական գետնի վրայ ըսեմ՝ արժէքներ կան որ չեն յայտարարուիր: Բայց հիմա, ժամանակը անցնելէն ետք կրնամ ըսել իբրեւ խոստովանութիւն: Երկու տարի առաջ յանկարծ յայտնաբերեցին քիմիական ինչ-որ կեդրոններ... ու յանկարծ յայտնուեցան ամերիկեան եւ կամ այլ ուժերու նաւեր, որոնք պիտի ռմբակոծէին Սուրիան, մանաւանդ՝ Դամասկոսը: Դժբախտաբար, միասնաբար խորհրդակցելով տեսանք որ Հալէպէն փախուստի ճամփայ մը կարելի չէ: Այն ժամանակ ալ, նորէն, մենք չստիպեցինք մեր ժողովուրդը որ մնայ... մեր 'փառքին' համար: Գիտնալով որ պիտի ռմբակոծեն այսպէս-կոչուած քիմիական կեդրոնները՝ ինկանք աջ ու ձախ, մեր մեծերուն, մեր գործընկերներուն՝ մինչեւ Լիբանան տեղեր փնտռելու, որպէսզի յանկարծ եթէ աղէտը պատահի՝ ի՛նչ միջոցներով մենք կրնանք մեր ժողովուրդը հասցնել աւելի ապահով վայր, քոյր գաղութ, քոյր ընկերութիւն: Յամենայնդէպս, այս մտահոգութեան, այս տագնապին մէջ ինկա՛նք մենք: Ուստի, օրուան մարտահրաւէրը օրուան խնդիրը հետը կը բերէ եւ ըստ այնմ ալ ի վերջոյ ժողո-

վուրդին կը մնայ իր որոշումը կատարել՝ իր ցաւին մէջ: Մեզի կը մնայ յարգել որոշումը եւ ըստ այնմ ալ տալ մեր օրհնութիւնը եւ մեր հովուական ծառայութիւնը:

Վեր. Դոկտ. Հայտոսթեան.- Այս հարցումս կը վերաբերի այն ընտանիքներուն որոնք արդէն դուրս եկած են. Լիբանանի, Հայաստանի մէջ են կամ՝ այլուր, ձե՛ր հօտն է, բայց դուք իրենց չէք կրնար հասնիլ մեծամասնութեամբ: Թերեւս իրենց մտքին վրայ ալ չէ որ դուք տակաւին իրենց հոգեւոր առաջնորդն էք, որովհետեւ իրենք գացին ոչ-համայնքային դրութեան մը մէջ մտան: Ձեր հօտին 40,000ը որ Սուրիայէն դուրս ելած է՝ հօտ է առանց հովիւի. դուք ժողովուրդէն առաջ գիտէք ասոնց վտանգները. ի՞նչ կը նշանակէ ասիկա, ի՞նչպիսի խախտումներ, ի՞նչպիսի կորուստներ, ինչե՞ր կը պատահին... ո՞վ պիտի հովուէ զիրենք: Արդեօք կորսնցուցա՞ծ ենք այս ընտանիքները ... դուք կորսնցուցի՞ք 40,000 հաշուող հօտ մը որ պէտք ունի եկեղեցւոյ, պէտք ունի հովուական հոգատարութեան, քաջալերութեան, Աստուածաշունչին, աղօթքին, մկրտութեան, կեանքի վերջաւորութեան թաղման եւն.: Ո՞վ պիտի հովուէ այդ ժողովուրդը: Թէ՞ պիտի սեպենք որ կորսնցուցինք:

Շահան Սրբազան.- Ես կ'ուզեմ խորհրդածութիւնը ընդարձակել բոլորիս հետ: Քիչ առաջ ակնարկեցի որ համահայկական պատկերացում, ծրագիր չկայ: Հիմա առանց ըսածս հակասելու հետեւեալները մատնանշեմ. տագնապը յառաջացուց ինքնաճանաչման տարօրինակ միջավայր եւ առիթ, որոնցմէ մէկը մեր ժողովուրդին կազմակերպուած ըլլալն է: Մենք որքան ալ չհաւնինք եւ չգնահատենք՝ մեր ժողովուրդը կազմակերպուած է: Իրականութիւն եւ իրողութիւն է այս: Ցեղասպանութեամբ Սփիւռք մը յառաջացաւ: Ցեղասպանութեան տարիներուն եւ անոր որպէս հետեւանք՝ անէծք մըն էր, որ վերածուեցաւ օրհնութեան: Այլապէս՝ մենք արդէն բնաջնջուած պէտք էր ըլլայինք: Անէծքը համատարած օրհնութեան վերածուեցաւ. այսօրուան հասկացողութեամբ աշխարհի բոլոր վայրերուն մէջ, անծանօթ վայրերու մէջ անգամ հայեր կան: Ու՛ր որ հայ մը հասնի՝ ես կը կարծեմ առաջին հերթին անտէր անտիրական չի մնար: Մեր եւ ձեր չափանիշերը՝ Սուրիոյ հայութեան եւ լիբանանահայութեան մտայնութիւնները իրարու շատ մօտիկ ըլլալով հանդերձ շատ տարբեր են: Ատով հանդերձ երբ սուրիահայերը եկան Լիբանան, կամ այլ երկիր գացին, կամ Սուրիոյ մէջ տեղափոխուեցան, ելան Քեսապէն, իջան Լաթաքիա՝ անտէր-անտիրական չմնացին: ՄԱԿի գաղթականաց պաշտօնէութիւնը, պետութիւնը, պետութիւնները՝ Լիբանան գտնուող սուրիացի բոլոր գաղթականներուն կը հասնի՞ն իրենց բոլոր պիւտճէներով եւ կարողութիւններով: «Ո՛չ» է պատասխանը: Անոր համար կը կարծեմ քիչ մը լաւատես պէտք է ըլլալ:

Այսինքն, երբ մենք աշխարհացրիւ հայութիւն ունինք, կարելիութիւնը ունինք վերակազմակերպուելու, որ մեր յատկանիշերէն մէկն է:

Մինչեւ այն ատեն որ միքանի հոգի էին Քանատա մեկնողները՝ քիչ մը գանգատելով կը խօսէին. «կ'ուզենք քով քովի ըլլանք, զօրաւոր ըլլանք»: Ըսեմ որ սուրիահայեր որոնք գացին Քանատա նոր արիւն մղեցին Քանատայի հայութեան մէջ: Կը հաւատամ որ չենք կորսնցուցած մեր կազմակերպուածութիւնը: Իդէպ՝ այնպէս ինչպէս կը նկարագրուի երբեմն՝ ճիշտ չէ, տեղեկութեանց պակաս կայ. այն թեմերուն, շրջաններուն մէջ ուր մեր ժողովուրդի զաւակները գացին եւ ներկայացան համայնքային կառոյցներուն, կազմակերպութեանց, միութեանց, եկեղեցիներուն՝ դուռը իրենց երեսին չգոցուեցաւ: Նոյնը՝ Լիբանանի պարագային. սուրիահայերը որ եկան՝ բոլոր դպրոցները բացուեցան, բոլոր կարելիութիւնները տրուեցան: Բայց միշտ դժգոհութիւն կայ, մի՛շտ, մնայու՛ն: Անգամ ե՛ս որպէս առաջնորդ օր մը բեմէն ամէնէն զօրեղ ձայնովս բողոքս ներկայացուցի որ մեր ժողովուրդի զաւակները ուր ալ երթան՝ գաղթականի հոգիով եւ հոգեբանութեամբ պէտք չէ՛ մօտենան: Ճիշտ է՝ մենք գաղթական ենք պապենականօրէն, իրողապէս, բայց գաղթական չենք երբ մեր համայնքներէն ներս կը մտնենք: Օրինակ Հայաստանի մէջ, ես բնական գտայ երբ տեսայ որ մեր համայնքի զաւակներէն ոմանք Աւետարանական Եկեղեցի կ'երթային. Տեսայ առաքելականներ, որոնք Աւետարանական Եկեղեցիին մօտիկ բարեկամներ ունենալով՝ միասնաբար գացին եւ նաեւ հովուական օժանդակութիւն ստացան: Երբեմն բան մը ունեցան, հոգատարութիւն մը ունեցան: Լիբանանի մէջ նոյնն էր: Հայաստանի մէջ Հալէպէն մեկնած սարկաւագներէն մէկը, նաեւ՝ հալէպահայ համայնքէն զանազան անձեր Հայաստան ներգաղթած կամ տեղաւորուած՝ հիմա Սուրբ Էջմիածին են, ուրիշներ՝ Երեւանի առաջնորդական փոխանորդութեան մէջ են: Նորէն կը կրկնեմ՝ 40,000ին կամ 60,000ին կրնա՞նք բոլորին անմիջական օգտակարութիւն ցուցաբերել՝ «ոչ»: Բայց յուսահատական աչքով չնայինք երբ կ'երթան եւ երբ համայնքներ գոյութիւն ունին այլուր՝ այդ համայնքին խառնուելով կը նորոգեն, կենսունակ կը դարձնեն համայնքը: Նոյնը չէ՞ր ատենին. Հայաստանի պատմական հողերէն, Կիլիկիայէն հայեր եկան Հալէպ. հիւրընկալուեցան միմիայն արաբ ասպնջական ժողովուրդի՞ն կողմէ, թէ՞՝ արդէն իսկ գոյութիւն ունեցող Սուրիոյ մեր հայ համայնքին կողմէ եւս: Ա՛յս իրողութիւնն է որ կը կրկնուի եւ բնականաբար, երբ քանդում կայ, աւերածութիւն կայ, քայքայուելու վախ կայ՝ մենք դարմանելու մասին պիտի մտածենք: Եւ ես կը կարծեմ՝ կրնանք դարմանել այս մեծ կորուստները, աւելի աղէտալի վիճակի չմատնելու համար:

Վեր. Սելիմեան.- Հարցումը շատ տեղին է եւ էական: Եթէ մեր ժողովուրդին երկու-երրորդը արդէն մեր շուրջը չէ, ինչպիսի՞ հովուական հոգածութիւն պիտի ցուցաբերենք անոնց նկատմամբ: Շատեր յանձնարարագի-

րեր պահանջեցին եկեղեցիէն եւ տուինք: Անոնք գացին եւ իրենց նոր երկիրներուն մէջ՝ ուր եկեղեցիներ կան եւն. ներկայացուցին, համապատասխան հոգածութիւն ստացան շնորհիւ մեր սփիւռքեան հայկական կուսակցութիւններուն եւ եկեղեցիներուն: Ժողովուրդին այն խաւը որ գնաց հոն ուր մենք ներկայութիւն ենք՝ բնականաբար ներծծուեցան այդ երկրին, այդ կազմակերպութեանց: Հաւանաբար հարցումը այն մարդոց մասին է որոնք գացին հոն ուր ո՛չ հայկական եկեղեցի կայ, ո՛չ հայկական ակումբ, ո՛չ ալ կուսակցութիւն: Ի՞նչ պիտի ըլլայ անոնց յետոն: Թերեւս պէտք է, համաձայնաբար օր մը, տեղ մը - եւ շատ ուշանալու չենք - անոնց միջեւ կայք մը սկսինք՝ «Գտնենք Զիրար» անունով, երեք համայնքներու հովանաւորութեամբ ու կարենանք մեկնարկել պաշտօնապէս եւ սփռել, share ընել facebookի միջոցով: Եւ գտնենք զիրար այդ կայքով, իրենց տեղեկութիւնները հաւաքենք եւ տեսնենք թէ որքա՛ն ընտանիք, որքա՛ն անհատ համախմբուած է, ինչպիսի՛ հովուական ծառայութիւն կարելի է տրամադրել՝ դրացի երկրի մը, քաղաքի մը քահանային միջոցով ...: Պէտք է մեր յաջորդ հանգրուանի մտահոգութեան եւ առաքելութեան մաս կազմէ նաեւ այս հոգածութիւնը:

Արմաշ Սրբազան.- Շատ լաւ հարցում է: Ես կ'ուզեմ հետեւեալը ըսել. հովուական մեր ծառայութիւնը ինքնին անծայրածիր, անսահման ծառայութիւն մը չէ, իվերջոյ այստեղ մենք նստած ենք իբրեւ առաջնորդ Հալէպի, Դամասկոսի: Այսինքն ամէն առաջնորդի աշխարհագրական սահմանափակում կայ: Այս իսկ պատճառով կ'ուզեմ շեշտել սրբազան հօր ըսածը որ պայման չէ՝ եթէ սուրիահայը հասաւ Հայաստան եւ կը նուազինք, պայման չէ՝ եթէ սուրիահայը հասաւ Քանատա եւ մենք կը նուազինք, որովհետեւ՝ մեր զաւակն է: Պայմա՛ն է եւ պարտադի՛ր՝ գտնել տեղի մեր եկեղեցիները, առաջնորդութիւնները եւ ըսել՝ «ահաւասիկ մեր զաւակներէն, այսօր ձեր գաղութի անդամ են, ձեր եկեղեցւոյ անդամ են, նոյն հոգատարութիւնը կը սպասենք որ դուք ցուցաբերէք իրենց»: Եւ պէտք է տարբերակել՝ այսինքն աշխատանքային գետնի վրայ մենք ունինք իսկապէ՛ս գաղթական, կամ իրենց տուներէն, բնակարաններէն, քաղաքներէն ելած ժողովուրդ՝ Սուրիոյ մէջ եւ Սուրիայէն դուրս: Սուրիայէն դուրս պէտք է իւրաքանչիւր եկեղեցի, մեր առաջնորդարանները, մեր թելադրանքով հետեւին այս սուրիահայերուն: Ինչ կը վերաբերի Սուրիոյ ներքին տեղաշարժերուն, օրինակ Մաշթա Հըլուն ուր հայ չկար, միայն ամառները կ'երթային մէկ-երկու շաբաթ, այսօր երբ կը կարծէի որ Հոմսէն հոն գացած պիտի ըլլայ 30-40 հայ ընտանիք, յանկարծ 120 ընտանիք հաշուեցի: Նոյնը Թարթուսի մէջ. նոր կազմակերպուածութիւն մը կայ, այսինքն այդ հովուական, կազմակերպական աշխատանքը կը կատարուի: Ես պատասխանատու եմ Դամասկոսի սահմանին, ինքը Հալէպի Առաջնորդարանի սահմանին եւն. եւն.: Այստեղ նաեւ համաեկեղեցական համահայկական մեր ուժերը պէտք են:

Նոր երեւոյթ մը կայ մեր իրականութեան մէջ միւս գաղութներուն բաղդատմամբ. գաղութէն կը հեռանան անոնք՝ որոնք նիւթական, բարեկամական, անցագրային կարելիութիւն ունին: Սուրիոյ պարագային նոր իրականութիւն մը ունինք. օրինակի համար, Քանատայի կամ այլ շրջաններու մեր ազգային մարմինները, կազմակերպութիւնները յանկարծ սուրիահայերը ուրիշ երկիր տանելու դրութիւն կը ստեղծեն: Այսինքն, այսօր խաւ մը ունինք Սուրիոյ մէջ, որ կարելիութիւն չունի տեղաշարժելու, բայց կարելիութիւն կը ստանայ հեռանալու: Ասոնց ալ հետեւիլ պէտք է, որպէսզի երբ կ'երթան նոր ափեր՝ այնտեղ իրենց հետեւին: Իվերջոյ կարեւոր է որ հեռացողը լուր տայ մեզի, մինչ մարդիկ մտավախութեան կամ մտահոգութեան մէջ՝ լուր չեն տար, յետոյ կ'իմանանք եւ կը հետեւինք:

Բայց ամէնէն կարեւորը իվերջոյ պատասխանատուութիւնն է իւրաքանչիւր անհատի. Յովհաննու Աւետարանին 15րդ գլուխը կ'ըսէ. «Խաղողին հատիկը եթէ իր ողկոյզին կառչած չմնայ իր սնունդը չի կրնար առնել եւ կը չորնայ ու իր բարդամութիւնը, համը, գեղեցկութիւնը կը կորսնցնէ»: Այսինքն եթէ հալէպցին, սուրիացին ելլէ Սուրիայէն, այս կամ այն բերումով հասնի քանատական ափեր եւ հեռու մնայ տեղի հայկական իրականութենէն եւ եկեղեցիէն, ինքնին արդէն հեռու կը մնայ սննդարար այդ ողկոյզէն: Ուրեմն իւրաքանչիւրի պատասխանատուութիւնն է - եւ այստեղ ես կը վստահիմ մեր ժողովուրդի աւանդապահ նկարագրին - որ անմիջապէս մխրճուի տեղական հայ նոր իրականութեան կեանքին:

Շահան Սրբազան.- Նոյն հարցումին շարունակութիւնը, որովհետեւ Արմաշ սրբազան ակնարկեց, մենք Սուրիոյ մէջ նաեւ վերակազմակերպման աշխատանք կը տանինք: Ընդհանրապէս բոլորս գիտենք՝ այսօր ուր են կռիւները, փորձանքները: Աւելի յարաբերաբար նպաստաւոր տարածքներու մէջ արդէն նոր կազմեր յառաջացուցինք, ինչպէս՝ Սուրիոյ ծովափի շրջանը. Քեսապ-Լաթաքիա-Թարթուս-Պանիաս-Սաֆիթա-Մաշթալ Հըլու գիծը տարբեր է հիմա. նոր վարչական եւ հովուական իմաստով նոր ձեւ պիտի ստանայ ասիկա: Երկրորդ՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ այսօր ունինք «Հալէպ» Բարեսիրական Միութիւն մը. բան մը կը նշանակէ չէ՞: Ամերիկայի մէջ, Քալիֆորնիոյ մէջ՝ Հալէպէն մեկնած մեր երիտասարդները կամ ընտանիքները արդէն յառաջացուցած են «Հալէպ» անունով ընկերային բարեկամական մտերմական, այսպէս-կոչուած վերջին գաղթածներու հաւաքականութիւն մը: Վերակազմակերպման աշխատանքին մէջ պայման չէ որ սպասենք որ ուրիշներ գան ու ըսեն՝ «մենք կ'ուզենք ձեզ կազմակերպել»: Գաղթածները ու՞ր դաստիարակուեցան՝ մեր եկեղեցիներուն, միութիւններուն, կառոյցներուն մէջ ...: Շուէտի մէջ օրինակ, յատկապէս Ճեզիրէի շրջանէն մեկնած մեր ազգակիցները քով-քովի եկան, յառաջացուցին իրենց յատուկ միութիւն մը եւ նիւթական աջակցութիւն ղրկեցին Քամիշլի: Ինչպէ՞ս ըրին: Որովհետեւ կարողացան անմիջապէս կազմա-

կերպուիլ: Կ'ուզեմ այս կազմակերպելու գաղափարը շեշտել եւ կը հաւատամ որ մենք հակառակ մեր նիւթաբարոյական, յատկապէս պատմական արժէք ունեցող ամբողջ սուրիահայ մեր ժառանգութեան հասած հարուածին եւ վնասներուն, մենք ունինք տակաւին կարելիութիւնները այդ վնասները նուազագոյնի իջեցնելու:

Վեր. Դոկտ. Հայտոսթեան.- Վերջին հարցումս՝ արտաքին աշխարհը: Հայերս ընդհանրապէս եւ միջազգային կազմակերպութիւններ այնպէս սեպեցին որ ինչ որ կրցան՝ ըրին անցեալ 4 տարիներուն: Լիբանանահայութիւնը ըսաւ որ՝ «մեր վիճակը արդէն լաւ չէ՝ ինչ որ կրնանք՝ ըրինք»: Միւսը՝ նոյնպէս, Հայաստանի պետութիւնը, նախարարութիւնները եւն. ինչ որ կրնան՝ ըրին եւ գիտենք որ ժողովուրդը որքան որ ստացաւ շնորհակալ էր, բայց նաեւ գիտենք որ բաւարար չէր այլեւայլ պատճառներով: Ձեր ձայնը բաւական լսուեցաւ - ձեր մտքերը եւս, թերեւս՝ ոչ այս մանրամասնութեամբ եւ ո՛չ միասին այս ձեւով, այստեսակ ժողովուրդի առջեւ: Սակայն որքան ալ ձեր ձայնը լսուած ըլլայ, որքան ալ մարդիկ իրենց ջանքը թափած ըլլան՝ սուրիահայութեան համար ի՞նչ յաւելեալ պատգամ ունիք այսօր տալիք, որ թերեւս մինչեւ հիմա առիթը չունեցաք կամ ունեցաք եւ պիտի ուզէք անպայման կրկնել եւ կեդրոնանալ անոր վրայ, զայն ուղղել տարբեր խումբերու՝ Աստուծոյ, ՄԱԿին, ինծի, ներկաներուն կամ միւսերուն...:

Շահան Սրբազան.- Նախ առիթը պարզապէս օգտագործեմ ըսելու սփիւռքահայ մեր ժողովուրդին յատկապէս, որ իրենց նիւթաբարոյական աջակցութիւնները վաւերականօրէն ստացանք զանազան ճամփաներով՝ բացայայտ եւ յստակ ուղիներով, որպէս Սուրիահայութեան Շտապ Օգնութեան Եւ Վերականգնումի Մարմին՝ համայնքապետերու եւ կազմակերպութեանց բոլորի մասնակցութեամբ եւ ցարդ իրենց ըրածին համար շնորհակալութիւն կը յայտնենք: Դժուար է՝ մտնենք թուաբանական հաշիւներու թնճուկին մէջ, որմէ դուրս չենք կրնար ելլել: Կասկածէ վեր է սակայն, որ անբաւարար է եղածը՝ այնքան ատեն որ Սուրիոյ մէջ սուրիահայեր կան եւ կ'ապրին պատերազմական վտանգաւոր գօտիի մէջ:

Երկու բան շատ շատ կարեւոր է որ կատարուի: Առաջին՝ ամէն իմաստով զօրակցութիւնը չթուլցնել եւ չտկարացնել, եւ երկրորդ՝ եթէ Աստուած մի՛ արասցէ՝ աւելի՛ բարդանայ վիճակը՝ գտնել նաեւ ելքերը, որովհետեւ ելքը ընդհանրապէս Աստուածաշնչական հասկացութեամբ կը սկսինք Հին Կտակարանէն. ապա նաեւ՝ երբ Յիսուս կը խօսէր այլակերպութեան լեռան վրայ իր ելքի մասին. ելքը փրկութեան միջոց որպէս՝ բոլորին անմիջական մասնակցութեամբ: Պզտիկ դիտողութեամբ պիտի աւարտեմ. պիտի ուզէի միշտ դրականով աւարտել թէեւ: Բոլոր անոնք որոնք կը շարունակեն տակաւին ջայլամի քաղաքականութեամբ՝ կը հասկնան ինչ կ'անցնի-կը

դառնայ եւ իրենց ուզածը կը փորձեն պարտադրել սուրիաբնակ սուրիահայերուն՝ թող նուազագոյնը քիչ մը լուռ մնան:

Վեր. Սելիմեան.- Կ'ուզեմ նաեւ շնորհակալ ըլլալ բոլոր այն կողմերուն որոնք նաեւ իրենց աղօթքներով մասնակցեցան մեզի հետ. բազմաթիւ աղօթքի ջոկատներ կազմակերպուած են աշխարհի տարբեր եկեղեցիներու մէջ՝ Սուրիոյ խաղաղութեան եւ աշխարհի խաղաղութեան համար - ես կը հաւատամ աղօթքի այդ ուժերուն: Մենք շնորհակալ ենք այսօր Հայկազեանի այս բեմէն բոլոր անոնց, որոնք մեր հարցը Աստուծոյ կը բարձրացնեն: Երկրորդ՝ անոնք, որոնք ընդհանուր մարդկային տեղափոխումներու, մարդկային ընկերութիւններու ժողովրդագրութեան կը հետեւին՝ կը տեսնեն որ ոչ մէկ ատեն գաղութ մը մնայուն ժողովրդագրութիւն ունեցած է: Ժողովրդագրական այս փոփոխութեան ատեն, հասարակութեան մէջ միշտ պիտի մնան խումբ մը մարդեր, որոնք կառչած մնալ պիտի ուզեն իրենց վայրին, այս պարագային՝ սուրիական ասպնջական հայրենիքին: Անոնք որոնք դուրս ելած են՝ պիտի խնդրեմ որ քննադատական պատգամներ չուղարկեն այս մարդոց: Եթէ պիտի չօգնենք՝ գոնէ չքննադատենք: Երրորդ եւ վերջին՝ պիտի ուզեմ որ մենք հաւատանք որ մենք ոչ միայն շտապ օգնութեան պիտի հասնինք սուրիացիներուն, այլ նաեւ պիտի օգնենք վերականգնումի ծրագիրերուն: Պատերազմը պիտի վերջանայ, վերականգնումի հանգրուանը պիտի սկսի: Այն ատեն ամէնքս միասին, ուրախութեամբ վերականգնման ծրագիրերուն պիտի օժանդակենք:

Արմաշ Սրբազան.- Սպասելիքներ ունինք մենք մեր հարազատներէն, բարեկամներէն հետեւեալ իմաստով. զօրակցութեան կարիքը ունէինք, այսօր ունինք, վաղն ալ պիտի ունենանք. ցաւի մէջէն կ'անցնինք, զօրակցութեան կարիքը ունինք եւ ես կ'ուզեմ - կամ կը փափաքիմ - այս բեմէն ինչէ այն որ չծուլանանք սուրիահայութեան օժանդակութեան անունին տակ եւ չզլանանք մեր զօրակցութեան: Ինչքան ալ մարդկային համեստութեամբ նիւթականի մասին պիտի չխօսիմ, բայց անո՛ր ալ կարիքը ունինք: Մենք մեր ժողովուրդին հասնելու կարիքը ունինք եւ ինչպէս արդէն ըսուեցաւ ի պատիւ սուրիահայերուն՝ իսկապէս միասնական ուժերով ստեղծուեցաւ Սուրիահայ Շտապ Օգնութեան Մարմինը, այստեղ կրկին անգամ միասնականութեան այդ ոգին շեշտելով ըսուեցաւ թէ բոլոր օժանդակութիւնները մէկտեղ պէտք է հաւաքուին եւ ըստ սուրիահայուն ցաւին, կարիքին, այդ օժանդակութիւնը հասնի այստեղ կամ այնտեղ Սուրիոյ մէջ: Այս ձեւով մեզի առիթը կը տրուի թափանցիկ ըլլալու մեր բոլոր աշխատանքներուն, մեր բոլոր ծառայութեանց մէջ: Կրկին անգամ կ'ուզեմ երկրորդել, երրորդել, չորրորդել՝ շնորհակալութիւնը այն բոլոր մեր հայրենակիցներուն որոնք այս կամ այն ձեւով իրենց օգնութեան, օժանդակութեան ձեռքը երկարեցին եւ դեռ կը սպասենք որպէսզի իրենց պարտականութիւնը կատարեն: Եւ կրկին անգամ ըսեմ՝ աղօթքը շատ կարեւոր է. շարունակենք ա-

ղօթել: Չեմ ուզեր երկրորդել վերապատուելին, միայն ըսեմ որ յարգանքով մօտենանք սուրիահայուն ցաւին, անձնական հարց մը չընդհանրացնենք եւ մեծ թնճուկ չսարքենք, ընդհանրական կարեւոր հարցերը մատի ետեւ չպահենք: Դուք ձեր հանգիստ պայմաններուն բերումով եթէ ունիք ընկեր մը, հարազատ մը, բարեկամ մը Սուրիայէն դուրս կամ Սուրիայէն ներս՝ վերցուցէք հեռաձայնը, մէյ մը հարցուցէք՝ «ինչպէս ես»: Պէտք ունինք այս մօտիկութեան, այս ջերմութեան որը տագնապի պատճառով այսօր մեր երկրին մէջ կը դժուարանայ: Ձեր անմիջական զօրակցութեան, ձեր այսպիսի հոգատարութեան պէտք ունի այսօր սուրիահայութիւնը: Կատարեցէք այդ եւ՝ շնորհակալութիւն:

Վեր. Դոկտ. Հայտոսթեան.- Սրբազան, այս ձեր վերջին կէտին առնչութեամբ՝ հիւանդանոցներու մէջ վիճակագրութիւն մը կատարուած է մեծ թիւով հիւանդներու եւ գտնուած, որ հիւանդին ամէնէն ծանր ճնշումը իր հիւանդութիւնը չէ. մեծ մասը իրենց սրտին վրայ ճնշում ունէին որովհետեւ այցելու չունէին: Այս պատգամն է որ դուք կու տաք:

Հարցումներ՝

Պրն. Քիւրքճեան.- Իրականութեան մէջ այն ինչ որ ըրինք անհրաժեշտ էր այսինքն microstudy կամ microanalysis ըրինք Հալէպի հայ գաղութին համար: Շատ բարի, ես կ'ուզէի առ ի գիտութիւն ինծի, որպէսզի կողմնորոշուիմ, հարցնել. միւս քրիստոնեայ համայնքներուն վիճակը ի՞նչ է:

Արմաշ Սրբազան.- Հիմնական ցաւն ու պատկերը նոյնն է, բայց որոշ տեղեկագրական տուեալներ տալու համար ըսեմ, որ Սուրիոյ բնակչութիւնը մօտաւորապէս 24 միլիոն է, որուն 1,4-500,000ը քրիստոնեաներ են՝ 7-8 տոկոսը բնակչութեան: Ըստ միւս համայնքներու հաղորդած տուեալներուն, մօտաւորապէս 500,000 քրիստոնեաներ իրենց բնակարաններէն դուրս են՝ նոյն քաղաքին մէջ տեղահանուած, Սուրիոյ մէկ քաղաքէն ուրիշը տեղափոխուած եւ կամ երկրէն դուրս ելած: Իրենք ալ նոր յառաջացող գաղութներու իրենց անդամներուն, հօտին ետեւէն հոգածու ըլլալու աշխատանքի մէջ են: Ասոր կողքին, չեմ գիտեր ինչքան ճշգրիտ է՝ 70ի հասնող կամ դժբախտաբար թերեւս ալ աւելի՝ եկեղեցիներ վնասուած են: Որոշ եկեղեցիներ կործանած, որոշ եկեղեցիներ միայն ռմբակոծուած, կիսով աւերուած են: Իրենց քով ալ գուցէ թիւով շատ են, բայց դժուարութեան պարագաները նոյնն են:

Դոկտ. Ճեպէճեան.- Նախ եւ առաջ կ'ուզեմ ըսել որ մենք ձեզի հետ ենք մեր աղօթքներով, բարոյական աջակցութեամբ եւ հեռաձայններով: Շատ հետաքրքրական էր որ այսօրուան կլոր սեղանը սկսանք սուրիական տագնապով եւ անցանք համահայկական մտահոգութիւններու, ինչպէս Շահան սրբազանը ատիկա շատ զօրաւոր կերպով նշեց. համահայկական ծրագիր ունի՞նք սուրիահայ գաղութին տագնապին ընդմէջէն, այսօր՝

յատկապէս Ցեղասպանութեան 100ամեակի սեմէն անդին, համահայկական ռազմավարութիւնը, անոր կարիքը կը նշմարուի. արդեօք ինչպիսի՛ համահայկական ռազմավարութիւն պէտք է մշակենք, արդեօք սուրիական տագնապը մեզ ա՛լ աւելիով կը խթանէ՞:

Շահան Սրբազան.- Հոս գտնուող գիտնական անձնաւորութիւններ եւ անոնք, որոնք համայնքներու կազմութեան ձեւի բնօրինակներու մասին կը խօսէին ըսեմ՝ տագնապի մէջ *մուրէլը* ինծի համար լիբանանահայ համայնքն էր: Հիմա սուրիահայութեան իրավիճակը մեր թերութիւններով, առաւելութիւններով՝ համահայկական իմաստով պատկերի մը կարելի՞ է վերածել եւ գալիք տագնապներուն օգտագործել՝ ատիկա գիտնականներուն, մասնագէտներուն, վերլուծաբաններուն գործն է եւ ես միայն այսքանով կը բաւարարուիմ որովհետեւ «ո՛չ» ըսելու խնդիր չկայ, բայց եթէ «այո՛» ըսես՝ պէտք է վերլուծես:

ՀԲԸՄ Հալէպի Ապաստանարան-Աշխատանոցի Պատսպարեալներու Վիճակագրական Ցուցակ (1 Փետրուար 1920-20 Օգոստոս 1921)[1]

#	Անուն	Հայրնուն	Մականուն	Տրք.	Ծննդվյր.	Թրքա-նուն	Ուրկէ գալը	Երբ գալը	Ընդհանուր ծանօթութիւններ
1	Հայ-կանուշ	Գասպար	Մահտեսեան[2]	27	Սեբաստիա	---	Համայի որբանոց	Օգ. 919	Գաղթականութենէն առաջ, Շիրին անուն հայու մը հետ ամուսնացած, որ մեռած է, զաւակ ունեցած, բայց մեռած: 15/7/1920ին վերադարձած Համա Լեւոն Սաաթճեանի քով: Ցնր. 1921ին՝ գորգագործութեան վարպետ, խալի գործել սկսած: 27/5/1921ին իր ամուսնոյն ազգականներուն քով մեկնած:
2	Նուրի-ցա	Գրիգոր	Քիրիշեան	20	Սեբաստիա	Ֆաթմա	Հալէպի Թէլ Ղրայ գիւղ	Օգ. 919	Ամուսնացած Մուհամմէտ Չաուշի հետ, միակ զաւակ մը ունեցած, որ մեռած է: Սպասուհի մեկնած ատամնաբուժ Իսկենտէր Չիլակոբեանի տուն, 5/6/1920ին: Ցնր. 1921ին ֆրանկախտաւոր, կը դարմանուի:
3	Արշա-լոյս	Թորոս	Նարպէկեան	20	Տարենտէ	---	Համա	Սպտ. 919	Համա հօրեղբօր քով մեկնած 14/6/1920ին:
4	Սողոմէ	Ոսկեհան	Անտոնեան	24/22	Սեբաստիա	Մերիէմ	Համայի որբանոց	Սպտ. 919	Կոյս աղջիկ: Ցնր. 1921ին՝ գորգագործութեան վարպետ, խալի գործել սկսած
5	Փարիզ	Պօղոս	Երանոսեան	26	Սեբաստիա	---	Ռէսուլ Այն	Նոյ. 919	Հայ ամուսնոյն անունն է Գրիգոր Վարդանեան, որմէ ունեցած զաւակը գաղթականութեան կորսնցուցած. թուրք ամուսինը՝ Ալի Րիզա, էտիրնեցի: Ցնր. 1921ին՝ գորգագործութեան վարպետ, սրտի հիւանդ, շատ չի կրնար աշխատիլ
6	Մարի-ամ	Թորոս	Ճելէրեան	18	Չմշկածագ	Զէյնէպ	Ուրֆա	Նոյ. 919	Քիւրտ ամուսինը՝ Մեճիտ, էրզրումցի: Զաւակ ունեցած, բայց թողած: Փտր. 26ին Հալէպի արաբ որբանոցը ուսուցչուհի եղող քրոջ քով գացած: Մայիս 1920ին սպասուհի մեկնած Հալէպի Րեժիի պաշտօնեայ մարաշցի Արսէն Մոմճեանի տուն: 27/6/1920ին հիւանդանալով Ապաստանարան վերադարձած, իսկ 10 Յլ. մեկնած է Ամերիկա՝ ազգականներուն մօտ:
7	Արուս-եակ	Յարութիւն	Յարութիւնեան	22	Խարբերդ	---	Պերեճիկ	Օգ. 919	24/4/1920ին, ամերիկաբնակ խարբերդցի երիտասարդի մը իբր նշանած Ամերիկա մեկնած:
8	Ազնիւ	Աւագ	Գոսեան	22-26	Սեբաստիա	Մերիէմ	Պերեճիկ	Ցնր. 920	Հայ ամուսինին՝ Տրիփուն Նորարեւեանին ողջ ըլլալը կը կարծուի: Անկէ ունեցած զաւակները մեռած են: Թուրք ամուսինը՝ պերեճիկցի Մուսթաֆա Չաուշ: Ցղի է, Փտր. 1921ին զաւակ ունեցած եւ մեռած, անցագիր կը հանէ՝ Պոլիս ազգականներուն քով երթալու: 7 Փտր.ին Պոլիս եղբօր քով մեկնած

9	Նազիկ	Թորոս	Սարըեան	30	Պրուսա	---	Պրուսա	Նոյ. 919	Ամուսինն է Հաճի Գալուստ Զատիկեան: Զաւակը Տէր Զօր՝ Շետատիէ կորսուած: Զաւակը փնտռելու համար Պրուսայէն եկած Հալէպ, մեկնած Տէր Զօր, 6/5/1920ին
10	Լուսիա	Յովհաննէս	Տէր Ղազարեան	25	Ուրֆա	Զեքիյէ	Ապու Ճապպուր, Ամերիկեան Որբանոց	Օգ. 919	Հապէշի-թուրքի ամուսնացած Րաքքայի մէջ: Զաւակ չունի: Փտր. 1921ին խոհարարուհի, որեւէ մէկը չունի, Ուրֆայի մէջ ազգականներ ունի:
11	Վարդուհի	Յովհաննէս	Տէր Ղազարեան	20	Ուրֆա	Ֆաթմա	Ապու ճապպուր	Օգ. 919	Թուրք Ահմէտի մը ամուսնացած Րաքքա: Զաւակ ունեցած ու մեռած: 8/7/1920ին մեկնած է իբրեւ սպասուհի:
12	Խաթուն	Յարութիւն	Ինճոյեան	18	Ուրֆա	Անշէ	Ուրֆա	Սպտ. 919	Ամուսնացած Ուրֆա, Ահմմէտ թուրքի մը: Զաւակը ծնելէ ետք 23/5/1920ին մեկնած մօրեղբօր՝ Գրիգոր Մաչիկեանի քով, Հալէպ:
13	Խորէն	Յակոբ	Մեյխանեճեան	13	Ուրֆա	Մեճիտ	Թըլ Աֆար	Նոյ. 919	Ապօ անուն արաբի քով եղած: 10/7/1920ին ղրկուած Շիրաճեան որբանոցը
14	Նեճիպէ	Հաճի Արթին	Քելլէրեան	24	Այնթապ	---	Ատանա	Օգ. 919	Ամուսնութիւնը եղած է գաղթականութեան ատեն: Ամուսինը՝ Տիգրան Իզմիրլեան, մեռած Թոփրաք Քալէ: Հերեանի կարգադրութեամբ Փտր. 29ին մեկնած Պէյրութ
15	Կիւլենիա	Սիրական	Փախլիեան	15	Ատափազար	Ամոնա	Շորաքլը	Օգ. 919	Ամերիկեան Կարմիր Խաչէն եկած, ամուրի: Փտր. 1921ին աչքի ցաւ ունի, կը դարմանուի
16	Սրբուհի	Մարտիրոս	Տէր Մարտիրոսեան	33	Ակն (Տագ)	Մերիէմ	Եունիէ (Ենի Եափան)	Դկտ. 919	Ամուսնացած Արաշօ քիւրտի հետ: Յղի էր եւ 21 Մրտ.ին ծնաւ ու չորս օր ետք մեռաւ: 10/7/1920ին սպասուհի մեկնած Տքթ. Մուշեանի քով:
17	Եսթէր	Յովհաննէս	Գազանճեան (Պիւաչոյեան)	35	Սեւերէկ	Զեքիյէ	Սեւերէկ	Օգ. 919	Սեւերէկցի Սէյիտ Ահմէտի ամուսնացած: Տղայ մը ունեցած՝ որ մեռած է: Հայ ամուսինէն 3 զաւակ ունեցած, որոնցմէ մէկը կորսուած, միւս երկուքը քովը: Մրտ. 20էն՝ հալէպաբնակ Յարութիւն Եիրիկեանի տունը սպասուհի:
18	Թագուհի	Սարգիս	Պիւաչոյեան	15	Սեւերէկ	Հետիյէ	Սեւերէկ	Օգ. 919	Ամուրի, 4/4//1920ին մօր միջնորդութեամբ իբրեւ սպասուհի մեկնած քրիստոնեայ ընտանիքի մը քով:
19	Անդրանիկ	Սարգիս	Պիւաչոյեան	8	Սեւերէկ	Հիւսէյին	Սեւերէկ	Օգ. 919	21/4/1920ին մօր քով մեկնած:
20	Իսկուհի	Սարգիս	Շիշմանեան	12	Աշոտ	Մերիէմ	Հալէպ, սպասուհութիւն	Նոյ. 919	Ինք եւ քոյրը Կարմիր Խաչի համար բացուած որբանոցը փակուելով Ապաստանարան եկած: 5/7/1920էն Տքթ. Տէր Ղեւոնդեանի տունը

									սպասուհի: 25/7/1920ին որբանոց ղրկուած:
21	Թրվանտա	Սարգիս	Շիշմանեան	8	Աշոտ	Նիմէթ	Հալէպ, Ամերիկեան Կ. Խաչ	Նոյ. 919	Ինք եւ քոյրը Կարմիր Խաչի համար բացուած որբանոցը փակուելով Ապաստանարան եկած: 5/7/1920էն Տքթ. Տէր Ղեւոնդեանի տունը սպասուհի: 25/7/1920ին որբանոց ղրկուած:
22	Վարդանուշ	Յարութիւն	Վերանոսեան	20	Բաղէշ	Ղազէլ	Նիսիպին	Նոյ. 919	Պոլսեցի Շեւքէթ Զապթիյէ թուրքին ամուսնացած: Զաւակ չէ ունեցած: 15/5/1920ին մեկնած փաստաբան Լեւոն Թամզարեանի տունը՝ սպասուհի: 6/11/11920ին սպասուհութենէ դարձած՝ իր ծառայած տեղը անբարոյ ըլլալնուն: Փտր. 1921ին ձեռագործի աշակերտ, որեւէ մէկը չունի: 7 Փտր. 1921էն սպասուհի Ա. Մազլումեանի միջոցով:
23	Սիրանուշ	Յովհաննէս	Զատիկեան	26	Իզմիթ	Զեքիյէ	Հալէպ, Սոքաթաղ	Փտր. 920	Հայ ամուսինն է Արթին Մելքոնեան: Երկու զաւակներն ալ մեռած: Հալէպցի թուրք ամուսին Հասանէն զաւակ չէ ունեցած: 29/4/1920էն հալէպաբնակ, երկաթուղիի պաշտօնեայ Պօղոս Դաւիթեանի տան սպասուհի:
24	Մարիամ	Գրիգոր	Թութլեան	20	Պեհեսնի	---	Ատանա	Յնր. 920	Մումպուճ, Շէյխ Ահմէտի հետ ամուսնացած: Այժմ յղի. 15/3//1920ին զաւակ ունեցած: Փտր. 1921ին բուրդ մանել գիտէ, հետը 7 ամսու զաւակ մ'ունի, անով կը զբաղի:
25	Սարա	Խաչատուր	Տէրտէրեան	23	Խարբերդ, Շիրօ	Ֆերիտէ	Ուրֆա	Յնր. 919	Սպասուհի է եղեր: Ամուսնացած, Փտր. 1921ին բուրդ մանող, ֆրանկախտաւոր կը դարմանուի: 31/3/1921ին կը մեկնի Ամերիկա՝ իրեններուն քով:
26	Դեղձանիկ	Չի գիտեր	Փաստրմաճեան	8	Կարին	----	Մուսուլ	Մրտ. 919	Այս աղջիկը միայն իր անունը գիտէ. Փաստրմաճեան ըլլալը ազգականներէն եւ երկրացիներէն հաստատուած: Մուսուլ, Մուհամմէտ աղայի քովն է եղեր: 25/7/1920ին որբանոց ղրկուած:
27	Հայկուհի	Չի գիտեր	Հայկազեան	7	չի գիտեր	---	---	Մրտ. 919	Բան չի յիշեր անցեալէն: Այս ալ բոլորովին իր ինքնութիւնը մոռցած ըլլալով անունը Ապաստ. տեսչուհին դրած: 25/7/1920ին որբանոց ղրկուած:
28	Էլմաս	Նշան	Նիզամեան	27	Սեբաստիա	---	Հալէպ	Ապր. 919	Պեհաէտտին անուն թուրքի մը հետ ամուսնացած: 2 տարեկան աղջիկ մը ունի: 8/2/1920ին եկեղեցիէն իր զաւակով փախած. զինք գտնել անկարելի եղած է:
29	Աննա	Պօղոս	Պէրպէրեան	35	Արաբկիր		Ուրֆա, որբանոց	Ապր. 919	14/9/1920ին Ամերիկա մեկնած:
30	Մարիամ	Կարապետ	Տէրտէրեան	9	Խարբերդ, Շիրօ	Ատիլէ	Բաքքա	Մրտ. 919	20/5/1920ին որդեգիր եղած է հայ ընտանիքի մը քով:
31	Մարիամ	Գէորգ	Պոռճակեան	16/17	Կիւրին	Մերիէմ	Տէր Զօր	1/12/919	Տէր Զօրի մէջ թուրք Ապուտին ամուսնացած: 5/12/1920ին ամուսնացած կիւրինցի երիտասարդի մը հետ:

32	Վարդենի	Մանուկ	Տիրացուեան	22	Կիւրին	---	Համայի որբանոց	Նոյ. 919	Ամուրի: Փտր. 1921ին ձեռագործ կ'ընէ որեւէ մէկը չունի:
33	Հռիփսիմէ	Աւետիս	Տէյիրմենճեան	32	Կարին	---	Սուրուճ, Ուրֆա	Յնր. 920	Ամուսնացած, Փտր. 1921ին բուրդ մանող է, որեւէ մէկը չունի:
34	Փայլաճու	Գէորգ	Կեֆէրեան	32	Եոզղատ	Մարի	Տէր Զօր	Նոյ. 1919	Հայ ամուսնոյն անունն է Արմենակ Կեֆէրեան: 4 Զաւակներէն միայն մէկը գտած: 26/3/1926ին Շիրաճեանի որբանոցի սաներուն իբրեւ մայրիկ գացած: Հալէպի հայկական որբանոցը գացած իբր վարժուհի փոքրիկներու:
35	Սարա	Աւագ	---	5 ամս.	Տէր Զօր	---	---		Մօր անունը Եղիսաբէթ Խաչերեան: Տաճիկ հօր անունը Աւատ: Մայրը հիւանդանալով 2/1/1920ին մեռած, Ապաստ. ձգելով իր տաճիկ ամուսինէն ունեցած զաւակը: 20/7/1920ին մեռած:
36	Զուարթ	Յակոբ	Այճեան	20	Պոլիս/Էրզրում	---	Պոլսէն՝ եղբօր քով	22/2/920	Հալէպցի, թուրք Պուրսալը Զատէ Ապտիւրրահմանի հետ ամուսնացած եւ ամուսնական խնդրի վերաբերեալ կարգադրութիւններու համար կրկին հոս եկած: Պոլիսէն հոս եկած իր թուրք ամուսնոյն քով ունեցած գոհարեղէնները առնելու նպատակաւ, որ քաղաքականութեան փոխուելով չէ կրցած գանձել: Փտր. 1921ին ձեռագործի վարպետ: 5/4/1921ին Պոլիս՝ եղբօր քով ղրկուած Միութեանս ծախքով:
37	Անտոն	Չի գիտեր	Չի գիտեր	5	անյայտ	---	---	11/3/920	Ասորիի քով որդեգիր էր. կինը մեռնելուն մէջտեղ մնացած է եւ յանձնուած առաջնորդարան: Դրացիներ զինքը բերած են մեզ Առաջն. Հօր յանձնարարականով ընդունուած: 9/7/1920ին յանձնուած հօր:
38	Մարիամ	Գալուստ	Ալճուգեան	17	Աշոտ	---	Համա	2/3/920	Համայի մէջ արաբի մը տունը 4 տարի ծառայութիւն ըրած: 29/5/1920էն S. Ալթունեանի վիրաբուժ Պ. Դանիէլի տունը սպասուհի տրուած:
39	Կիւլխաթըր	Պօղոս	Աշըգեան	30	Կեսարիա	---	Հալէպ, Պետ. հիւանդանոց ղրկուած	7/3/920	4 ամիս առաջ Ուրֆա եղբօրը քով գացած ատեն արկածով մը ոտքը կտրած եւ 4 ամիս տեղւոյս հիւանդանոցը մնացած: Ճամփան բացուելուն կը սպասէ: Դարմանուելէ ետք որեւէ նեցուկ չունենալով Պատսպարան ընդունուած: Փտր. 1921ին, կոտրած ոտքը միշտ կը ցաւի երբ ծանր աշխատանք ընէ, ձեռագործ կրնայ ընել:
40	Զարուհի	Ամուսինը՝ Սարգիս	Պահարեան	45	Այնթապ	---	Պէյրութ	29/3/920	Այնթապէն Պէյրութի կողմերը գացած փնտռելու իր կորսուած թոռը: Չէ գտած: Ճամփան բացուելուն Այնթապ պիտի վերադառնայ: 8/7/1920ին մեկնած իր ազգականներուն: Երկու զաւակ ունի. մէկը քովը, միւսը կորսուած:

41	Հռիփսիմէ	Ամուսինը՝ Սարգիս	Պահարեան	30/28	Այնթապ	---	Պէյրութ	29/3/920	Ամուսնացած Մահսերէճեանի հետ: Վերինին աղջիկն է: Մօրը հետ ելած է. իր զաւակը կորսնցուցած է: Իր զաւակին տեղը իմացած ըլլալով Յնս. 1920ին Պէյրութ անոր դատը հետապնդելու համար ղրկուած:
42	Մարի	Յակոբ	Տէյիրմէնճեան	25	Սեւերէկ	---	Ուրֆա	30/3/920	Ուրֆացի Ահմէտի հետ ամուսնացած: Հայ ամուսինը՝ Աբրահամ Պահարեան, մեռած: Զաւակ չունի: 11/5/1920ին դարձեալ սպասուհի:
43	Նորածին աղջիկ[3]	Շէյխ Ահմէտ Մումպուճէն	Մարիամ Թութլեան	16 օր.	Հալէպ	---	---	ծն. 15/3/920	Ապաստանարանի պատսպարեալներէն Մարիամ Թութլեանի զաւակը: Մայրը հիւանդ կը դարմանուի. 28/3/1921ին կը մեռնի:
44	Նորածին աղջիկ	Ուրֆացի Ահմէտ Շեֆիք	Խաթուն Ինճոյեան	13 օր.	Հալէպ	---	---	ծն.20/3/918	Պատսպարանի մէջ յղի ընդունուած կիներէն միոյն զաւակը: 23/5/1920ին մեկնած մօր հետ: Մայր ու նորածին առողջ են:
45	Նորածին աղջիկ	քիւրտ Արաշօ, ենի դեատանցի	Սրբուհի Տէր Մարտիրոսեան	5 օր.	Հալէպ	---	---	21/3/920	Պատսպարանի մէջ յղի ընդունուած կիներէն միոյն զաւակը: Մարտ 26ին, միայն 5 օր ապրած եւ մեռած:
46	Աննա	Յակոբ	Գազանճեան	25	Խարբերդի Ճերմէկ գիւղ	Մերիէմ	Հալէպ, Պապ էլ Նասր թաղ	4/4/920	Ամուսնացած Յովհաննէսի հետ, որ գաղթականութեան մեռած է: 4 տարի իվեր Հալէպ Տքթ. Սահիտ պէյի քով իբրեւ սպասուհի մնացած, ապա փախած Ապստանարան: 20/5/1920ին Ամերիկա հօրեղբօր քով մեկնած:
47	Ազգանուշ	Պետրոս	Պալեան	19	Տէօրթ Եոլ	---	Տէօրթ Եոլ	7/4/920	Բռնագաղթի սկիզբը եկած եւ 4 տարի սպասուհի եղած, ոչ-ամուսնացեալ: Տ. Եոլ մայր մը, 2 փոքր եղբայր, եւ 2 քոյր ունի: 11/4/1920ին, Ապաստ.ին միջոցաւ մօր եւ եղբօր քով ղրկուած՝ Տէօրթ Եոլ:
48	Փերուզ	Գէորգ	Գույումճեան	22	Սամսոն	---	Պոլիս	15/4/920	Եկած՝ մօրաքոյրը փնտռելու: Բռնագաղթին ամուսանացած պերեճիկցի Մուսթաֆայի, զաւակ ունեցած, քովը ձգած: Տէր Հօր յանձնարարութեամբ ընդունուած: Իր մայրը փնտռելու եկած ըլլալը կը խօսուի: Փտր. 1921ին ձեռագործի վարպետ, մօտաւորապէս նշանուած, Ամերիկա պիտի մեկնի: 20/2/1921ին նշանուած եւ Ամերիկա մեկնած:
49	Մանչ մը	Պերեճիկցի Մուսթաֆա Չաուշ	Մայրանուն՝ Ազնիւ Գոսեան	15 օր.	Հալէպ	---	Հալէպ	15/4/920	17/5/1920ին, աչքերու եւ ուղեղի հիւանդութիւն ունենալով մեռած: Մայրը ապաստանարանն է արդէն:
50	Ազատուհի	Յովհաննէս	Կատարեան	21	Ուրֆա	Նայիմէ		20/4/920	Գաղթականութեան էտիրնեցի հարիւրապետ Խալիլ էֆենտիի ամուսնացած. 6 ամիսէ իվեր Քոմիսէր Սուպհիի քով սպասուհի եղած, ուր

									վերջին օրերը զինք ծեծելուն՝ փախած Ապաստանարան: 11 Նոյ.ին մեկնած Պոլիս մօրաքրոջ քով:
51	Մարթա	Դաւիթ	Փափազեան	19	Պրուսա	Շա'լէ	Յ. Պարսամեանէն ղրկուած	1/5/920	8 ամիս առաջ Տէր Զօրէն եկած եւ սպասուհի՝ Քոմիսէր Սուպհիի քով, աչքի հիւանդութեամբ Ապաստանարան եկած: 13/5/1920ին Յակոբ Պարսամեանի տուն մեկնած սպասուհի: Գաղթականութեան ամուսնացած Ռեչչոյի:
52	Մաննիկ	Կարապետ	Իկիտխանեան	18	Էրզրում	Չունի	Ամերիկ. Կ. Խաչ	1/5/920	Գաղթականութեան՝ Նիսիպին Գերմանական Հիւանդանոց իբր հիւանդապահուհի 4 տարի մնացած եւ 8 ամիսէ իվեր Կ. Խաչի մէջ աշխատելով այժմ գործէ ըլլալուն եկած է: 13/7/1920ին Տքթ. Ալթունեանի քով հիւանդապահուհի մեկնած:
53	Ֆերիտէ	Յեսու	Թաշճեան	28	Ուրֆա	---	Իսկենտերուն, մօրեղբօր քովէն եկած	25/5/920	Ամուսնացած թուրքի: Ուրֆա, ծնողաց քով երթալու համար եկած: Մինչ ճամբաներու բացումը Ապաստանարան մնալ որոշած: 13/7/1920ին Պէյրութ եղբօրը քով մեկնած: Հայ ամուսինէն հետը զաւակ մը ունի:
54	Վարդանուշ	---	Թաշճեան	6	Ուրֆա	---	Իսկենտերուն, մօրեղբօր քովէն եկած	25/5/920	Վերոյիշեալը իր մայրն ըլլալով միասին եկած: 13/7/1920ին Պէյրութ մօրեղբօր քով մեկնած:
55	Զապէլ	Չի գիտեր	Չի գիտեր	14	Չի գիտեր	---	Վիրաբուժ Պ. Դանիէլի տունէն	30/5/920	Գաղթականութեան՝ տեղս թուրքի մը քովէն առնուած եւ վիրաբուժ Դանիէլի տուն զետեղուած: Այժմ անոր թաքստոցը գիտնալով թուրքերը զինք փնտռելուն՝ Ապաստանարան եկած: Ապաստանարանի միջոցաւ 2/6/1920ին տեարք Մսրլեան եղբարց քով ղրկուած: 12 Սեպտ.ին վերադարձած ըլլալով Հոկտեմբեր 10ին Իսկենտէրուն մեկնած է պանք. տնօրէնի հետ:
56	Նազելի	Յարութիւն	Տէյիրմենճեան	25	Տարենտէ	---	Ս. Պապիկեանի տունէն	30/5/920	Գաղթականութենէն առաջ ամուսանացած, 1 զաւակ ունեցած, մեռած է: Հիւանդանալով եկած: 13/7/1920ին կրկին սպասուհի ղրկուած:
57	Տուտու	Գէորգ	Փապուճեան	20	Այնթապ	Էմինէ	Պաղտատ, հայրենակիցի մը տունէն	4/6/920	Ամուսնացած Մուսային հետ: Այնթապ երթալու մտադրութեամբ Պաղտատէն եկած եւ ճամփու բացումին կը սպասէ: 1 Յուլիս 1920ին մեկնած Այնթապ, եղբօր քով:
58	Զմրուտ	Մկրտիչ-Արթին	Պետրոսեան	25-23	Աշոտ	Ֆաթմա	Սպասուհի	26/6/920	Ոտքերը եւ սրունքները ուռած ըլլալուն ՝ աշխատելու անկարող, եկած է Ապաստանարան: Կոյս աղջիկ, Փտր. 1921ին Քրոշէի օյան գիտէ, առողջ է 19/6/1921ին Էլիաս Աուէտին տունը սպասուհի ղրկուած:
59	Ազատու	Չի գիտեր	---	8	---	---	Արաբ	7/7/	12/7/1920ին փախչելով Առաջնորդարան եկած: Թուրք ընտանիքի մը

	հի/Զա րուհի						ընտանիքէ	920	քովէն փախցուած եւ Տէր Հօր յանձնարարականով Պատսպարան ընդունուած են երկու քոյր միասին: 25/7/1920ին որբանոց ղրկուած:
60	Շաքէ	Չի գիտեր	---	7			Արաբ ընտանիքէ	7/7/ 920	Առաջնորդարանէն եկած: 25/7/1920ին մահմետական ծնողքին յանձնուած:
61	Սիրա նուշ	Մինաս	Պուչաքճեան	26	Ուրֆա	Խայրիէ	Խանճի Մեհմէտ Նաթըքի տուն, Մուհամմէտ Նուրիտտին	13/7/ 920	Գաղթականութենէն առաջ Դանիէլ Թաշճեանի ամուսնացած, 1 զաւակ ունեցած, որ մեռած է: Առաջնորդ հօր յանձնարարականով ընդունուած մինչեւ իրեն յարմար տեղ մը գտնուի: Փախած ու Ապաստանարան հասած 14/7/1920ին: Հոկտ. 6ին սպասուհութեան մեկնած:
62	Մարիամ	Յովսէփ	Չի գիտեր	10	Մըարրա				15/7/1920ին Սէր Թապիպ Թեւֆիք Պէյի քովէն փախած ու ապաստանած:
63	Էլիզա	Չի գիտեր-Յակոբճան	Եումուրթաճեան	10	Այնթապ		Սպասուհութիւն Ֆրանսական որբանոց	Նոյ. 920	28/7/1920ին փախած ու ապաստանած: Աղջիկ, Փտր. 1921ին դպրոց կ'երթայ. որբանոցը դեռ որոշ վիճակ մը չունենալուն դպրոց կը ղրկենք մինչեւ նոր կարգադրութիւն:
64	Եղիսաբէթ	Մկրտիչ	Թոքաճեան	13	Կարին	Նեֆօ	Մերտին	Նոյ. 920	Մարտինցի Խոճա էլ Խաթիպի քովէն փախած Ապասանարան: Փտր. 1921ին դպրոց կ'երթայ. որբանոցը դեռ որոշ վիճակ մը չունենալուն դպրոց կը ղրկենք մինչեւ նոր կարգադրութիւն:
65	Արմէնուհի	Գրիգոր	Գրիգորեան	25	Վան	Րոզա	Հալէպ, պետ. հիւանդանոց		Առաջնորդարանէն ղրկուած: 25/8/1920ին սպասուհի մեկնած: 20/9/1920ին առանձին տուն վարձած:
66	Վարդանուշ	Թորոս	Ծառուկեան	40	Կիւրին	---	Այնթապ		Առաջնորդարանէն ղրկուած:
67	Մարիամ	Կարապետ	Տեւելեան	17	Այնթապ	Մերիէմ	Տէր Զօր		Թուրք ամուսնոյն ձեռքէն առնուած: 12/9/1920ին սպասուհի մեկնած:
68	Լուսիա	Կիրակոս	Տէյիրմենճեան	22	Տիգրամն ակերտ		Հալէպցի իսլամի մը տուն		Թուրք ամուսնոյն ձեռքէն առնուած: Հոկտեմբեր 3ին սպասուհի մեկնած:
69	Նուէրիկ	Յովհաննէս	Տատանեան	29	Ատափազար	Ֆաթմա		7/9/ 920	1/12/1920ին փախած թուրք ամուսնոյն քով:
70	Ովսաննա	Մանուկ	Գազէզեան	18-22	Մարաշ	---	Սպասուհութենէ եկած	Սեպտ. 920	Ամուսնացած հայու: Փտր. 1921ին բուրդ մանել գիտէ, իր 3 ամսեկան զաւակով կը զբաղի:
71	Քրիստինէ	Սուքիաս	Գիզիրեան	24	Կիւրին	---	Այնթապ		24/9/1920ին սպասուհի մեկնած:
72	Սրբուհի/	Թորոս	Քեհէեան	19	Կիւրին	---	Այնթապ	Նոյ.	Կոսյս աղջիկ: Փտր. 1921ին գորգի աշակերտ էր, ֆրանկախտաւոր:

	Սոֆիա							920	
73	Մար գրիտ	Թորոս	Քեհէեան	20	Կիւրին	---	Այնթապ	Նոյ. 920	Կոյս աղջիկ: Փտր. 1921ին ձեռագործ գիտէ, ոտքը ուռեցք ունի, շատ ծանր գործերու չի կրնար աշխատիլ:
74	Մարիցա	Մարգար	Պալըքճեան	40	Սվազ	---	Սպասուհութե-նէ եկած	Յնս. 920	Նախապէս ամուսնացած. ամուսինը եւ զաւակները սպաննուած: Փտր. 1921ին Խալիի օգնող, մանող, սանրող: Որեւէ մէկը չունի: Եթէ կրնայ անցագիր առնել Երուսաղէմ իր ազգականին պիտի երթայ:
75	Էլմաստ	Պետրոս	Չինարեան	20	Սվազ, Ղաւրազ	---	Այնթապ		31/9/1920ին իր փեսային յանձնուած:
76	Զապէլ	Գէորգ	Սեֆէրեան	22	Կարին-Հասան Քալա	Ֆաթմա	Նիզիպ	Նոյ. 920	Ամուսնացած թուրքի: Փտր. 1921ին բուրդ մանել գիտէ, հետը՝ աղջիկ զաւակ մ'ունի 1 տարեկան:
77	Ազատուհի	Նիզիպցի Հիւսէյին թուրք	Մայրը Զապէլ Սեֆէրեան	2	Պիրեճիկ	---			
78	Մարիամ	Կիրակոս	Կիրակոսեան	24	Խարբերդի գիւղերէն				
79	Աննիկ	Նիկողոս	Դաւիթեան	15	Պիլեճիկ		Սպասուհու-թենէ	Հկտ. 920	Աղջիկ, Փտր. 1921ին որբանոցը դեռ որոշ վիճակ մը չունենալուն զինք դպրոց կը ղրկենք մինչեւ նոր կարգադրութիւն:
80	Տիրուհի	Կարապետ	Տոտոյեան	22-25-21	Պրուսա, Ենիճէ գիւղ	Սաա-տէթ	Գուպպէ Խան	1/10/ 920	Ամուսնացած, իր զաւակը Պատսպարանին մէջ մեռած: Փտր. 1921ին ձեռագործ կրնայ ընել, աչքը կը ցաւի, հիւանդոտ: 28/8/1921ին Ֆրանսական Քոյրերու Դարմանատունը ծառայութեան մեկնած Մասնաժողովի գիտակցութեամբ:
81	Գրիգոր	Մուսուլցի Եուսուֆ Զիա թուրքը	Մայրը՝ Տիրուհի Տոտոյեան	2	Մուսուլ	Մուհամմէտ քեազիմ			10/8/1920ին եկած Մարտինի Ամերիկեան Որբանոցէն: 10/11/1920ին հիւանդութեամբ մեռած:
82	Խանըմ	Յակոբ	Պօղոսեան	35/ 30	Խար բերդ	չունի			3/8/1920ին եկած Մարտինի Ամերիկեան Որբանոցէն: 25/11/1920ին Ամերիկա մեկնած ամուսնոյն քով:
83	Վահան	Ասատուր	Պօղոսեան	12	Խար բերդ	չունի			3/8/1920ին եկած Մարտինի Ամերիկեան Որբանոցէն: Մօր հետ Ամերիկա մեկնած:
84	Սաթե	Երանոս	Հայրապետ	14	Տիգրա	Սանիյէ	Մումպոճ	Հկտ.	Փտր. 1921ին աղջիկ է, դպրոց կ'երթայ, մօտաւորապէս Ամերիկա պիտի

	նիկ		եան		նակերտ			920	երթայ: 16 Փտր.ին Ամերիկա մեկնած:
85	Վարդանուշ	Ներսէս	Ոսկերիչեան	17	Ատըեման	Զեքիյէ	Սպասուհութենէ դադրած		Առաջնորդարանին կողմէ ղրկուած: 28 Հկտ.ին սպասուհի մեկնած:
86	Վարդանուշ	Պօղոս	Կակառեան	19	Իզմիտի Արսլան Պէյ Գիւղէն	Ֆերիտէ	Հալէպի Օտէմէ Մեթրիի քովէն		Առաջնորդարանին կողմէ ղրկուած
87	Վալանթին	Յակոբճան	Պոյաճեան	22	Պրուսա	Սապիհա	Հալէպի Ապտիւլ Քատիր Հոճայի տուն	Նոյ. 920	Առաջնորդարանին կողմէ ղրկուած: Ամուսնացած, Փտր. 1921ին ձեռագործի կարի վարպետ, Պոլիս իր ազգականներուն պիտի գրուի որպէսզի քովերնին երթայ:
88	Եղիսաբէթ	Կարապետ	Պեօրքի-Պեօյիւքեան	20	Հասան պէյլի	Զեքիյէ	Պիլալ Պէյի քովէն		Առաջնորդարանին կողմէ ղրկուած:
89	Տիգրանուհի	Օհան	Թիւթիւնճեան	40	Ամասիա	Մերիէմ		1/11/920	Քեմփէն ղրկուած, իր անբարոյ վարքին համար:
90	Մարի	Յարութիւն	Աշճեան	13	Ուրֆա	Թրքանուն չունի	սպասուհութենէ	19/11/920	Սպասուհի քրոջ քովէն: Առաջնորդարանին կողմէ ղրկուած իր անբարոյ վարքին համար: Փտր. 1921ին դպրոց կ'երթայ. որբանոցը դեռ որոշ վիճակ մը չունենալուն դպրոց կը ղրկենք մինչեւ նոր կարգադրութիւն: 27/7/1921ին Ամերիկա եղբօր քով մեկնած:
91	Սիրանուշ[4]	Յովսէփ	Տեմիրճեան	14	Կէյվէ	Այիլը		21/11/920-2/2/921	Ճիլպիր Ահմէտ Աղայի քովէն, հայ ազգայիններու կողմէ: 10/12/1920ին փախած սուրիանիներու քով: Մարոնիթներու քովէ դարձած: Ամուսնացած է: Փտր. 1921ին բուրդ մանել գիտէ, մօտաւորապէս պիտի ամուսնանայ: 4/3/1921ին ամուսնացած սասունցիի մը հետ:
92	Աղաւնի	Պօղոս	Պալտոտուգեան	24	Պրուսա	Ֆաթմա	Տէր Զօր, պաղտատցի իսլամէ	21/11/920	Ամուսնացած թուրքի, հետը 2 տարեկան աղջիկ մ'ունի: Առաջնորդարանին կողմէ ղրկուած իր զաւակով միասին: Փտր. 1921ին ձեռագործ կրնայ ընել, հետը պզտիկ մ'ունի:
93	Լեթա ֆէթ	Ալայէ Էմինի ԱպտիւլՐահման	Մօր մականունը Պալտոտագեան է	3	Տէր Զօր	Լեթա-ֆէթ		21/11/920	Մօրը՝ Աղաւնիին հետ եկած:
94	Հայկ	Յովհաննէս	Գազազեան	15	Հալէպ	Նորա-	Մարաշցի		

		(Աշոտի)		օրական		ծին	Ովսաննա Գազազեանէ		
95	Եւգինէ	Միսաք	Սէթեան	20	Անկիւրի		Պապուլ Ներապ	Յնր.-Փտր. 921	Ամուսնացած արաբի, Փտր. 1921ին ձեռագործ կրնայ ընել, հիւանդութենէ նոր ելած, տկար:
96	Սիրա նուշ	Մկրտիչ	Թերզեան	10-8	Գանկալ	Նետիմէ		5/12/920	Հանրատունէն, փոլիսներու կողմէ, Տէր հօր կողմէ ղրկուած: Փտր. 1921ին դպրոց կ'երթայ. որբանոցը դեռ որոշ վիճակ մը չունենալուն դպրոց կը ղրկենք մինչեւ նոր կարգադրութիւն: 28/2/1921ին փախած:
97	Էլիզա	Յովսէփ	Մինասեան	21	Այնթապ	Մաքպուլէ		6/12/920	Փոլիսներու կողմէ բռնուած, Տէր հօր կողմէն ղրկուած իր անբարոյ վարքին համար: 28/12/1920ին փախած:
98	Հաճի Լուսա բեր	Գէորգ	Էմանեան	23	Այնթապ	Նատիլէ	Գաղթ. Խանէն, քեմփ	14/12/920	Տէր հօր կողմէն ղրկուած իր անբարոյ վարքին համար: Ամուսնացած է: Փտր. 1921ին ֆրանկախտաւոր է կը դարմանուի:
99	Տիգրա նուհի	Թագուոր	Չամուրճեան	22	Ատափա զար	Մերիէմ	Գաղթ. Խանէն, Պիննի	26/12/920	Տէր հօր կողմէն ղրկուած իր անբարոյ վարքին համար: Ամուսնացած թուրքի: Փտր. 1921ին բուրդ սանրել գիտէ, որեւէ մէկը չունի: 22/3/1921ին սպասուհի մեկնած Սելիմ Նեպքիի տունը խնամակալութեան հրամանով:
100	Մարիամ	Նիկողոս	Խըճըրեան	30/28	Էսքիշե հիր		Պաղտատ ամուսնացած հոս եկած	28/12/920	Այստեղ իր ամուսնոյն առաջին կինը մէջտեղ ելլելուն Տէր հօր կողմէ ղրկուած: Փտր. 1921ին բուրդ մանող: 19/5/1921ին Գաղթ. Քեմփը ղրկուած:
101	Արաքսի	Մանուկ	Պոլեան	17	Մարաշ		Ատանա	Յնր. 921	Ամուսնացած: Փտր. 1921ին հայ կամաւորուհի, Ատանայի կամաւորական գունդին մասնակցած:
102	Հայկա նուշ	Սարգիս	Զոթեան	10	Սեբաստիա		Հալէպ, թուրքի տուն	Յնր. 921	Փտր. 1921ին գուլպայ կը հիւսէ:
103	Վարուհի	Մարտիրոս	Իփսիւրէնեան	20	Սիւրիհիսար		Հայտար Աղայի տունէն	Յնր. 921	Աղջիկ, Փտր. 1921ին խալի կը գործէ, որեւէ մէկը չունի:
104	Ֆլորի տա	Ակոբ	Պէրպէրեան	15	Ատափա զար		Հայտար Աղայի տունէն	Յնր. 921	Աղջիկ, Փտր. 1921ին գործ չի գործեր, որեւէ մէկը չունի:
105	Հռիփսի մէ	Մելքիսէթէք	Տապաղեան	25-28	Կեսարիա		Օթէլէն	1/2/921	Ամուսնացած, Փտր. 1921ին խալի գործել գիտէ, իր քոյրը իսլամներու քովէն փնտռելու եւ ազատելու եկած է: Տէր հօր կողմէն ղրկուած: 11/3/1921ին մեկնած իրեններուն մօտ:
106	Հրանդու	Յակոբ	Քիւփէլեան	22	Կեսար	Նուրիէ	Քիլիս	Յնր. 921	Կոյր է, Փտր. 1921ին գործողութիւն պիտի ըլլայ իր աչքերը բանալու

	հի				իա				համար: 1/4/1921ին դարձեալ կը մտնէ Ապաստանարան (ըստ երեւոյթին գործողութիւնը ապարդիւն եղած է):
107	Իսկեն տէր	Յակոբ	Արուշեան	3	Քիլիս		Քիլիս	Յնր. 921	Կոյր է, Փտր. 1921ին գործողութիւն պիտի ըլլայ իր աչքերը բանալու համար:
108	Հռիփսի մէ	Հաճինազար	Խտրլարեան	14	Պերեճիկ		Հանրատուն	13/2/921	Մօր քովէն բերուած: 16 Փտր. սպասուհի մեկնած Լեւոն պէյի տունը:
109	Էլմաս	Յակոբ	Չի գիտեր	16	Իզմիթ	Սեմիէ		16/2/921	Իսլամներու քովէն առնուած:
110	Վիքթոր իա	Յակոբ	Թանկուկեան	24	Մար զուան		Իտլիպ	17/2/921	Թուրքերու քովէն եկած:
111	Փենզա	Արթին	Խտրլարեան	26	Պերեճիկ		Հանրատունէն	21/2/921	26/2/1921ին իր ազգականներուն միջոցաւ տան մէջ տեղաւորուած:
112	Անդրա նիկ	Աբրահամ	Չափխանեան	1	Պերեճիկ			21/2/921	Մօր՝ Փենզայի հետ եկած: 26/2/1921ին իր ազգականներուն միջոցաւ տան մէջ տեղաւորուած, մօր հետ:
113	Վարդու հի	Դաւիթ	Խաչատուր եան	40	Կարին	չունի		2/3/921	Կոյր, Ազգ. Միութիւնը ղրկած է:
114	Սոֆիա	Չի գիտեր	Նալպանտ եան	14	Պալըքե սիր	Սոֆիկ		16/3/921	Առաջնորդարանէն մեզի ղրկուած՝ զինք անբարոյ վիճակէ ազատելու: 23/3/1921ին մօրաքրոջ յանձնուած մասնաւոր յանձնարարութեամբ:
115	Լուսա բեր	Մամաս	Ստամպուլեան	13	Խար բերդ	Ալիս		18/3/921	Տէր հօր կողմէ ղրկուած քրոջ քով՝ Ամերիկա ղրկելու համար: 27/3/1921ին եկեղեցիէն փախած:
116	Զարուհի	Յովհաննէս	Հեթէպեան	20	Պարտի զակ	Խատիճէ		21/3/921	Պոլիս հօրեղբօր քով ղրկուելու համար:
117	Շնորհիկ	Ոսկիհան	Գարեգձգող եան	16	Սեբաստ իա	Էմինէ		2/4/921	Իր անբարոյ վարուց համար մասնաւոր դիմումով ընդունուած: 17/5/1921ին Ամերիկա ազգականներուն մօտ գացած:
118	Մարիամ	Ստեփան	Ագգարտաշ եան	22	Կիւրին	Զեհիտէ		6/4/921	Թուրքի քովէն փախած, ֆրանկախտաւոր: 27/4/1921ին բաղնիքէն փախած իրեն եկած տեղը՝ ես իսլամ եմ պոռալով:
119	Տուտու	Գէորգ	Պարտաք ճեան	25	Այնթապ	Ճեմիլէ		6/4/921	Թուրքի քովէ եկած իր նորածին զաւակով միասին: 20/4/1921ին Առաջնորդարանին կողմէ եղած մասնաւոր կարգադրութեամբ յանձնուած Այնթապի Հայրենակցական Միութեան:
120	Մարիամ	Խաչատուր	Գասապեան	35	Սեբաստ իա			7/4/921	Հիւանդացած, սպասուհութենէ դարձած: 22/5/1921ին սպասուհի մեկնած:
121	Նարպէյ	Յովհաննէս	Փեփէեան	16[5]	Ամասիա	Ապտիւլի		16/4/921	Արաբներուն քովէն փախած՝ Պոլիս իրեններուն քով ղրկուելու համար:

						ետի			4/6/1921ին Պոլիս հօրաքրոջ մեկնած (Միութեանս սնտուկէն մինչ Պէյրութի ծախքը տալով):
122	Պետրոս	Արթին	Յարութիւն եան	14	Հասան պէյլի	Պետր		30/4/921	Էնեզէներուն քովէն փախած. որբանոց պիտի ղրկուի: 15/6/19621ին Հայկ. որբանոց ղրկուած:
123	Ատէլին	Մատթէոս	Այվազեան	25	Պրուսա	Ատիլէ	Մումպուճ	3/5/921	Փախած իր թուրք ամուսինէն
124	Յովհան նէս	Միսաք	Ադամեան	13	Նիյտէ		Տէօրթ Եոլի որբանոց	7/5/921	Տքթ. Ալթունեանի քով շրթունքը շինել տալու համար:
125	Մարի	Գրիգոր	Միտերճեան	20	Քիլիս	Սանիէ		20/5/921	Օթէլէն առնուած, թուրք Հիքմէթ պէյի քովէն փախցուած:
126	Եւգինէ-Եւնիկէ	Յակոբ	Էլիպէօյիւքեան - Ալիպէօյիւքեան	16	Կեսար իա			22/5/921	Ատամնաբուժ Bauerի քովէն փախած. հոն գողութիւն մ'ըրած ըլլալուն՝ մասնաւոր հսկողութեան տակ առնուած: 6/6/1921ին տանիքէն փախած:
Յուլիս 1921ին Տէր Զօրէն եկողներու անուանացանկը									
127	Մարի	Կարուճ	Պեքմէզեան	11	Այնթապ		Հալէպի հանրատուն	1/7/921	Հանրատունը գտնուող մօրը պէս չապականելու համար Առաջնորդարանէն ղրկուած:
128	Ալթուն	Յովհաննէս	Տեմիրճեան	20	Ատանա		Քիլիսի որբանոց	3/7/921	Թուրքի քովէն առնուած ու հոս ղրկուած՝
129	Բերոքի	Պօղոս	Շաղուկեան	28	Քղի		Տէր Զօր	7/7/921	Նախապէս Մարտինի Ամերիկեան որբանոցն է եղած՝
130	Զապէլ	Միսաք	Փոստոյեան	22	Քղի		Տէր Զօր	7/7/921	Նախապէս Մարտինի Ամերիկեան որբանոցն է եղած՝
131	Մարիամ	Միսաք	Փոստոյեան	18	Քղի		Հալէպ, յետոյ Տէր Զօր	7/7/921	Նախապէս Մարտինի Ամերիկեան որբանոցն է եղած: Ամուսնացած չէ:
132	Զուարթ	Մարտիկ	Փոստոյեան	18	Քղի		Հալէպ, յետոյ Տէր Զօր	7/7/921	Նախապէս Մարտինի Ամերիկեան որբանոցն է եղած: Ամուսնացած չէ:
133	Նազիկ	Գրիկոր	Սաաթչեան	16	Քղի		Հալէպ, յետոյ Տէր Զօր	7/7/921	Նախապէս Մարտինի Ամերիկեան որբանոցն է եղած: Ամուսնացած է:
134	Խառ վարդ	Գրիկոր	Սաաթչեան	22	Քղի		Հալէպ, յետոյ Տէր Զօր	7/7/921	Նախապէս Մարտինի Ամերիկեան որբանոցն է եղած: Նախապէս ամուսնացած:
135	Խաթուն	Գրիգոր	Աւետիսեան	28	Քղի		Հալէպ, յետոյ Տէր Զօր	7/7/921	Նախապէս Մարտինի Ամերիկեան որբանոցն է եղած: Նախապէս ամուսնացած:
136	Վերգին	Մարգար	Գոհարեան	16	Քեմախ		Մարտին	7/7/921	Ամուսնացած չէ:
137	Ովսան	Ասատուր	Գարաճեան	22	Քեմախ		Մարտին	7/7/921	Ամուսնացած չէ:

	նա								
138	Փուփուլ	Միսաք	Սարաճեան	22	Քեմախ		Մարտին	7/7/921	Ամուսնացած չէ:
139	Սիրա նուշ	Մարտիրոս	Ճիկէրեան	27	Երզնկա		Մարտինէն Տէր Զօր	7/7/921	Ամուսնացած է:
140	Համես տուհի	Արթին	Երամեան	13	Գուբպեչե նէկ-Կէյվէ		Տէր Զօրի անապատ	7/7/921	Ամուսնացած չէ, ինք փախած է: 21/8/1921ին Մասնաժողովին գիտակցութեամբ մօրաքրոջ յանձնուած:
141	Ազնիւ	Գրիգոր	Տիգրանեան	21	Գընճը լար		Տէր Զօր	7/7/921	Թուրք ամուսինը ձգած եկած. զաւակ չունի: 27/7/1921ին սպասուհի մեկնած Տիկ. Ագնէս Շատարեւեանի տունը:
142	Արաքսի	Հաճի	Գալայճեան	21	Կէօքսիւն		Տէր Զօր	7/7/921	Թուրք ամուսինը ձգած եկած:
143	Հաճի Սուլթան	Մարտիրոս	Նաճարեան	25	Խար բերդ		Տէր Զօր	7/7/921	Թէ՛ թուրք եւ թէ՛ հայու հետ ամուսնացած. իր նախորդ հայ ամուսինէն ողջ զաւակ մ'ունի: 4/8/1921ին սպասուհի ղրկուած Մասնաժողովին կողմէ, տեղացի Ճըրճի Էֆենտիի տունը:
144	Նոյեմ զար	Մելքոն	Չիւնկիւշեան	24	Կեսար իա		Տէր Զօր	7/7/921	Արաբ ամուսինէն երկու զաւակ ունի, հետն են:
145	Արշակ	Արաբ մը	Չիւնկիւշեան	4	Տէր Զօր	Րեշատ		7/7/921	Մօր՝ Նոյեմզարի հետ եկած:
146	Արշալոյս	Արաբ մը	Չիւնկիւշեան	2	Տէր Զօր	Նահմէ		7/7/921	Մօր՝ Նոյեմզարի հետ եկած:
147	Թագու հի	ՀաճիՏիգրան	Գոզանլեան	18	Կեսար իա			7/7/921	Արաբ ամուսինէն աղջիկ մ'ունի, միասին եկած են: 26/8/1921ին Ատանա եղբօր քով ղրկուած անձնական ծախքովը:
148	Սաթե նիկ	(Արաբ մը)	Գոզանլեան	1-4	Տէր Զօր	Այիշէ		7/7/921	Մօր՝ Թագուհիին հետ եկած: 26 Օգ.ին մօր հետ մեկնած:
149	Մուրատ	Նաում	Նաումեան	8-10	Մերտին			7/7/921	Հայ կաթոլիկ մը, որ որբանոց պիտի ղրկուի: 27/7/1921ին Հայկ. Որբանոց ղրկուած:
Վերադարձ բնականոն ցանկին									
150	Սէյտէ	Յակոբ	Պետիկեան	18	Այնթապ		Քիլիս	21/7/921	Քիլիսի մասնաժողովէն ղրկուած դարմանումի համար: 2/8/1921ին Ֆրանկախտի հիւանդութեան պատճառաւ Հայկական որբանոցի մասնաւոր բաժինը ղրկուած:
151	Մարիամ	Պետրոս	Մուղամեան	22	Կիւրին		Քիլիս	21/7/921	Քիլիսի մասնաժողովէն ղրկուած դարմանումի համար, ճաքարի գործող է:
152	Լուսիա	Նազար	Նազարէթեան	25	Այնթապ		Տէր Զօր	26/7/921	Առաջն. Փոխանորդին կողմէ ղրկուած: 20/8/1921ին Մասնաժողովին հրամանով Ֆրանս. Քոյրերու դարմանատունը ծառայութեան ղրկուած:
153	Մանու	Տիգրան	Չի գիտեր	20	Եալովա			27/7/921	Էնէզէներէն փախած, Եալովայի Ա. Միութենէն ղրկուած:

	շակ								
154	Միհրան	Կարապետ	Գազանճեան	7	Տիգրան ակերտ		Հալէպի հանրատուն	1/8/921	Առաջնորդարանին միջոցաւ հանրատունէն մօր ձեռքէն առնուած եւ Ապաստանարան ղրկուած:
155	Մարի	Յովհաննէս	Չիլինկիրեան	15	Գեսապ			11/8/921	Սպասուհութենէ, Առաջնորդարանին կողմէ բերուած, անոր ծառայած տան անյարմարութեան պատճառով: 31/8/1921ին Թադէոս Կոկիկեանի տունը սպասուհի մեկնած Մասնաժողովի գիտակցութեամբ:
156	Նազելի	Արթին	Սարըմանուկեան	15	Պրուսա			11/8/921	Սպասուհութենէ, պատուոյն սպառնացուած ըլլալուն, փոլիսներու կողմէ Առաջնորդարանին յանձնուած, դատ ունի:
157	Սիրա նուշ	Տիգրան	Մախաթեան	17	Սեբաստիա			20/8/921	Փողոցը մնացած, ուղեղի հիւանդութիւն ունի, գորգագործ է:
158	Փեփրոն	Դաւիթ	Աւանեան	22	Էւերէկ		Տէր Զօր	20/8/921	Եգիպտոս՝ իրեններուն քով պիտի երթայ երբ անցագիրը պատրաստուի:
159	Լուսիա	Յովհաննէս	Գսաճըգեան	18	Մարաշ			20/8/921	Հալէպի թուրքերուն քովէն, Առաջնորդարանին կողմէ ղրկուած, ամուսնացած չէ:

[1] Այս փաստաթուղթը համադրումն է զանազան նման վերամշակուած ու իրար ամբողջացնող աղիւսակներու, որոնք մասամբ տպուած են ՀԲԸՄի ատենի մամուլին մէջ: Այս մէկը կը կրէ ստորագրութիւնը Մասնաճիւղի ատենադպիր Ա. Պապիկեանի, վերնագրուած է «Անուանացանկ Հ.Բ.Ը. Միութ. Հալէպի Ապաստ.-Աշխատանոցի»:

[2] Աւելի ետք այս ազգանունը կը փոխարինուի Քերքեհէրեան-Գրգեհէրեանով:

[3] Որուն անունը կը դնեն Հայկուհի:

[4] Այս անունը երկու անգամ մուտքագրուած է: Երբեմն, նորեկներու եւ մեկնողներու տեղեկագրերու թուագրումի անճշտութիւն կայ՝ թէ՛ թիւի ցատկումներ եւ թէ թիւի կրկնումներ:

[5] Աւելի ետք տարիքը 1 նշուած է:

Սուրիոյ Մէջ 1945-46 Կրթաշրջանին Գործող Հայկական Վարժարաններու Ցանկը՝ Ըստ Տեղի

Քեսապ՝ Ազգգային Սահակեան Երկսեռ Վարժարան
ՀԲԸՄի Նպաստընկալ Վարժարան
Ուսումնասիրաց Միութեան Միացեալ-Ուսումնասիրաց Միջնակարգ Վարժարան
Հայ Աւետ. Նահատակաց Միջնակարգ Վարժարան
Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան Մանչերու Վարժարան
Պատրիարքական Աղջկանց Վարժարան Անարատ Յղութեան Հայ Քոյրերու

Գարատուրան՝ ՀԲԸՄի Ազգային Մեսրոպեան Նպաստընկալ Վարժարան (Կեդրոնական Թաղ)
ՀԲԸՄի Ազգային Նուպարեան Նպաստընկալ Վարժարան (Ծովու Թաղ)
ՀԲԸՄի Նպաստընկալ Մանկապարտէզ (Թիթիզեան Թաղ)
Ուսումնասիրաց Միութեան Միացեալ Վարժարան
Հայ Աւետարանական Նահատակաց Վարժարան
Հայ Կաթ. Ժողովրդապետութեան Վարժարան

Պաշորտ՝ ՀԲԸՄի Մեսրոպեան Նպաստընկալ Վարժարան

Սեւ Աղբիւր՝ ՀԲԸՄի Նպաստընկալ Ազգային Վարժարան

Չինարճըք՝ ՀԲԸՄի Ազգ. Նպաստընկալ Վարժարան
Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան Վարժարան

Քէօրքիւնէ՝ Հայ Աւետարանական Վարժարան

Էքիզօլուք՝ Հայ Աւետարանական Վարժարան

Վերի Պաղճաղազ՝ Հայ Աւետարանական Վարժարան
Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան Վարժարան

Վարի Պաղճաղազ՝ Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան Վարժարան

Լաթաքիա՝ Ազգ. Թարգմանչաց Վարժարան

Արամօ՝ Ազգ. Վարժարան

Ղնեմիէ՝ Ազգ. Վարժարան

Թարթուս՝ Ազգ. Նուպարեան Վարժարան

Եագուպիէ՝ Ազգ. Վերածնունդ Վարժարան

Ճսըր Շուղուր՝ Ազգ. Վարժարան

Ընկըզիկ՝ Ազգ. Վարժարան

Ազէզ՝ Ազգ. Սահակեան Վարժարան
Հայ Աւետարանական Վարժարան

Աֆրին՝ Ազգ. Արամեան Վարժարան

Մէյտան Էքպէզ՝ Ազգ. Վարժարան

Ճարապլուս՝ Ազգ. Հայկազեան Վարժարան

ՀԲԸՄի Նպաստընկալ Ազգ. Վարդանեան Վարժարան
Հայ Աւետարանական Վարժարան
Հայ Կաթողիկէ Վարժարաններ[1]
Արաբ Փունար՝ Ազգ. Խրիմեան Վարժարան
Հայ Կաթողիկէ Վարժարան
Մումպուճ՝ Ազգ. Վարժարան
Պապ՝ Ազգ. Վարժարան
Թէլ Ապիատ՝ Ազգ. Խորէնեան Վարժարան
Այն Արուս՝ Ազգ. Նուպարեան Վարժարան
Թինա՝ Ազգ. Վարժարան
Րաքքա՝ Ազգ. Նուպարեան Վարժարան
Տէր Զօր՝ Ազգ. Հռիփսիմեանց Վարժարան
Հայ Կաթողիկէ Վարժարաններ
Ռասուլ Այն՝ Ազգ. Մեսրոպեան Վարժարան
Այն Տիւար՝ Ազգ. Սահակեան Վարժարան
Տերպէսիէ՝ Ազգ. Վարժարան
Հայ Կաթողիկէ Սրբուհի Թերեզա Վարժարաններ
Ամուտա՝ Ազգ. Վարժարան
Հայ Կաթողիկէ Վարժարան
Տերիք Մալքիէ՝ Ազգ.Մեսրոպեան Վարժարան
Վանիկ (Ուանըգէ)՝ Ազգ. Վարժարան
Ամրի՝ Ազգ. Վարժարան
Հելքօ՝ Հայ Կաթողիկէ Վարժարան
Ազգ. Վարժարան
Թարթափ՝ Ազգ. Վարժարան
Թէլ Քէօչէք՝ Ազգ. Վարժարան
Հասիչէ՝ Ազգ. Մեսրոպեան Վարժարան
Հայ Կաթողիկէ Վարդանեան Վարժարան
Թէլ Պրաք՝ Ազգ. Վարժարան
Քամիշլի՝ Ազգ. Վարժարան
Հայ Կաթողիկէ Ս. Յովսէփ Վարժարաններ
Ութուըթիէ (Վուտվուտ)՝ Ազգ. Վարժարան
Տպպանա՝ Ազգ. Վարժարան
Ապու Ճելալ՝ Ազգ. Վարժարան
Ճուխա՝ Ազգ. Վարժարան
Մլուքսարա՝ Ազգ. Վարժարան
Ճնետիէ Մեծ՝ Ազգ. Վարժարան
Տայօ՝ Ազգ. Վարժարան
Հիմօ՝ Ազգ. Վարժարան
Գզըլճա՝ Ազգ. Վարժարան
Համա՝ Ազգ. Գազանճեան Վարժարան

Սելամիէ՝ Ազգ. Մարկոսեան Վարժարան
Հոմս՝ Ազգ. Սահակեան Վարժարան եւ՝
Հայ Աւետարանական Վարժարան
Դամասկոս, Պապ Շարքի՝ Սրբոց Թարգմանչաց Վարժարան
Սուֆանիէ՝ Ազգ. Բաբկէնեանց Մանկապարտէզ
Միտէն՝ Ազգ. Մանկապարտէզ
Սալիհիէ՝ Ազգ.Սահակեան Վարժարան եւ՝
Միացեալ Վարժարան
Պապ Թուման՝ Միացեալ Վարժարան,
Հայ Կաթողիկէ Պատրիարքական Երկսեռ Վարժարան եւ՝
Հայ Աւետարանական Էմմանուէլ Երկսեռ Վարժարան
Քունէյթրա՝ Ազգ. Նուպարեան Վարժարան
Տրաա՝ Ազգ. Վարժարան
Սուէյտա՝ Ազգ. Վարժարան
Հալէպ, Ճտէյտէ՝ Ազգ. Հայկազեան Մանչերու Վարժարան
Հարըթ Պուլղոր՝ Ազգ. Հայկազեան Աղջկանց Վարժարան եւ՝
Ազգ. Կիւլպէնկեան Վարժարան
Սալիպէ՝ Ազգ. Հայկազեան Մանկապարտէզ
Հարըթ Սիս՝ Կիլիկեան Միութեան Կիլիկեան Վարժարաններ
Սոքաք Արպային՝ Կրթասիրաց Միութեան Կրթասիրաց
Վարժարաններ
Ներկայիս Պերլինի մէջ կը վարէ *Յուշամատեան* հետազօտական ծրագիրը, որ կը միտի վերակառուցել օսմանեան հայերու կեանքը: Միաժամանակ դասախօս է Պուտափեշթի Peter Pazmany Catholic Universityի Հայագիտական Ամբիոնին:

Արմենակ Թոքմաճեան ծնած է Երեւան: Մագիստրական աստիճանի տիրացած է Ֆինլանտայի Թեմփերէ Համալսարանէն՝ քաղաքական գիտութիւններու մէջ: Իբրեւ գիտահետազօտող աշխատած է Թեմփերէ, ապա եւ՝ Ալանտ Կղզիներու Խաղաղութեան Հետազօտման Հիմնարկներուն մէջ: 2013ի ամառը գործած է ՄԱԿի Գաղթականներու Կոմիտէի կից մարմնին մէջ, իբրեւ Հալէպի Տագնապի դաշտային վերակացու: Ներկայիս իբրեւ գիտահետազօտող կ'աշխատի Պուտափեշթի European Central Universityի Հակամարտութեան, Բանակցութեան եւ Վերականգնումի Կեդրոնին մէջ:

Հեղինակն է գիտական ուսումնասիրութիւններու՝ "Can Nagorno-Karabakh Be Part of Azerbaijan?" (2013), "Syrian Armenians: Back to Syria?" (2013), "Conflict Transformation in Syria" (2014), "Hezbollah's Military Intervention in Syria: Political Choice or Religious Obligation?" (2014), "Militarization of the Syrian Revolution: Was this the Wrong Choice" (2015):

Դոկտոր Արթուր Իսրայէլեան 2007ին պաշտպանած է դոկտորական՝ Դամասկոսի Համալսարանին մէջ: Գիտական քարտուղարն է ԵՊՀ Միջազգային Յարաբերութիւններու Բաժանմունքին (2017):

2008էն դասախօս է ԵՊՀ Արեւելագիտութեան, իսկ 2009էն՝ Միջազգային Յարաբերութիւններու բաժանմունքներուն մէջ: 2015 Յունիսէն կը ղեկավարէ ԵՊՀ Չինարէն Լեզուի Եւ Մշակոյթի Կենտրոնը:

Հեղինակն է գիտական յօդուածներու եւ *Դիւանագիտական Եւ Քաղաքական Տերմինների Հայերէն-Արաբերէն Բառարան*ին:

2009ին պարգեւատրուած է «Արաբերէն Լեզու Եւ Մշակոյթ» եւ 2011ին՝ Եգիպտոսի մօտ ՀՀ դեսպանատան «Հայ-Եգիպտական 15ամեայ Դիւանագիտութիւն Եւ Բարեկամութիւն» յուշամետալներով, իսկ 2014ին՝ ԵՊՀ Ռեկտորի շնորհակալագրով:

Վեր. Դոկտ. Ճոն Խանճեան ծնած է Հալէպ: 1963ին վկայուած է Near East School of Theologyէն, դոկտորականով՝ Claremont Graduate Universityէն (1974):

1971-76՝ դասաւանդած է NESTի, 1978-88՝ Kansas Wesleyan Universityի մէջ. 1987-1995՝ եղած է Կրթական Տեսուչը Armenian American International Collegeին (նաեւ՝ 2003-2007, 2010-2017՝ այլ պաշտօններով), 1995-2002՝ եղած է նախագահը Հայկազեան Համալսարանին, 2007-2010՝ փրովոսթը՝ Երեւանի Evangelical Theological Academy of Armeniaի:

Հեղինակն է ուսումնասիրութիւններու, նաեւ՝ *History of the Armenian Missionary Association of America* գիրքին (անգլերէն եւ հայերէն):

Եուսէֆ Խաշօ ծնած է Լաթաքիա: 2015ին աւարտած է Լաթաքիոյ Թըշրին Համալսարանը: Ներկայիս աստուածաբանութիւն կ'ուսանի Near East School of Theologyի մէջ: 2011էն իվեր լծուած է իր ընտանիքի պատմութեան ուսումնասիրութեան: Այս ուսումնասիրութիւնը կրնայ օգնել քարտիսագրելու այն ուղիներէն մին, զոր որդեգրած են Հայոց Ցեղասպանութենէն առաջ Սուրիա-Լիբանան հաստատուած հայ ընտանիքներ՝ համարկուելու տեղական միջավայրին, ինքնութիւն պահպանելու եւ վերաձեւումներու ենթարկելու զայն:

Դոկտ. Թեհմինէ Մարտոյեան ծնած է Երեւան: 2007ին Գիտութիւններու Թեկնածուականը պաշտպանած է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Հիմնարկի Իրանագիտութեան Բաժինին մէջ:

2006-09՝ դասաւանդած է Գլաձոր Համալսարանի, 2009-10՝ Երեւանի Բաց Համալսարանի մէջ: 2010-14՝ պաշտօնավարած է ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտը: 2012էն դասախօս է Աւետիք Մկրտչեանի Անուան Տնտեսաիրաւագիտական Համալսարանին

մէջ: 2015 Յունուարէն նախագահն է Լազարեան Ինստիտուտ Գիտակրթական Հասարակական Կազմակերպութեան:

Հեղինակն է *Կարմէլեանների Տարեգրութիւնը՝ Որպէս Իրանի 17-18րդ Դարերի Պատմագիտական Աղբիւր* (2011) գիրքին, թարգմանած է յոյն ցեղասպանագէտ Թէոֆանիս Մալկիդիսի *Յոյների Ցեղասպանութիւնը. Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս* աշխատութիւնը (2014):

Հայկանուշ Մեսրոպեան ծնած է Կիրովական (այժմ Վանաձոր): 1975ին աւարտած է ԵՊՀ Բանասիրութեան Հայոց Լեզուի եւ Գրականութեան Բաժանմունքը, 1995-1997՝ էջմիածնի Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնը: 1978էն իվեր կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի Անուան Լեզուի Հիմնարկը: Արեւմտահայերէնի վիճակին շուրջ դաշտային ուսումնասիրութիւններ կատարած է Սուրիա եւ Թուրքիա:

Հեղինակն է *Գարեգին Ա. Կաթողիկոսի Երկերի Բառարան* (2000), *Գրական Լեզու Եւ Բարբառ* (2008), *Ածականական Հոմանիշները Հայերէնի Բարբառներում* (2009), *Կրօնաեկեղեցական Բառապաշարը Հայերէնի Բարբառներում* (2016) գիրքերուն: Հրատարակած է *Ընտրանի Ասոյթների եւ Պատգամների* (1999), *Հայաստանեայց Եկեղեցին Կեանքի Ճանապարհ* (2000) գիրքերը:

Միհրան Մինասեան ծնած է Հալէպ: Աւարտած է Հալէպի Ազգային Քարէն Եփփէ ճեմարանը: Արժանացած է Սուրիոյ Մշակոյթի Նախարարութեան «Սամի Ալտրուպի»ի թարգմանչական Ա. մրցանակին: Անդամ է Սուրիոյ Արաբ Գրողներու եւ Հայաստանի Գրողներու միութեանց:

Պետրոս Արք. Միրիաթեանի համահեղինակութեամբ հրատարակած է *Հալէպցիներու Ապստամբութիւնը Օսմանցի Կուսակալ Խորշիտ Փաշայի Դէմ (1819-1820) - Աբրահամ Արք. Քիւփէլեանի Օրագրութիւնը* արաբերէն հատորը (2008): Հեղինակ է գիտական յօդուածներու նուիրուած՝ հայ հնատիպ գիրքին, հայ պարբերական մամուլի մատենագիտութեան, հայերէն ձեռագիրերուն, Հայոց Ցեղասպանութեան պատմութեան, հայ լուսանկարչութեան եւն.:

2012էն կը պաշտօնավարէ Մատենադարանին եւ ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտին մէջ:

Յակոբ Միքայէլեան ծնած է Հալէպ: Վկայուած է Դամասկոսի Համալսարանի Անգլերէն Լեզուի Եւ Գրականութեան Բաժինէն, նաեւ՝ Նիւ Ճըրզիի Համալսարանէն: 2002-04՝ իբրեւ տնօրէն պաշտօնավարած է Հալէպի ՀԲԸՄ Լ.Ն.-Գ.Կ. Վարժարանին մէջ, 2004-14՝ ստանձնած է նոյն վարժարանի Հայկական Բաժնի ընդհանուր պատասխանատուութիւնը:

Ունեցած է երկարամեայ թատերական վաստակ, վարչական գործունէութիւն՝ մինչեւ Հայաստան տեղափոխուիլը 2014ին:

Արաբերէն թարգմանած է Վարդան Այգեկցիի *Աղուէսագիրքը* (1989): Հեղինակն է *Տիկնիկը* (1998), *Փինոքիօ, Քիթի Մը Օրագրէն* (2004), *Բաց Պատուհան* (2006), *Անաւարտ Համանուագ* (2007), *Աշնանային Մենանուագ* (2012) հատորներուն: Անդամ է Սուրիահայ Գրողներու Համախմբումին եւ Հայաստանի Գրողներու Միութեան:

Արժանացած է ՀՀ Սփիւռքի Նախարարութեան «Պատուոյ Գիրի»ն:

Դոկտ. Խաչիկ Մուրատեան ծնած է Պէյրութ: Աւարտած է Հայկազեան Համալսարանը: Դոկտորականը պաշտպանած է Քլարք Համալսարանի Ողջակիզումի եւ Ցեղասպանագիտութեան Սթրասլըր Կեդրոնին մէջ: Դասախօս Նիւ Եորք քաղաքի Քոլումպիա Համալսարանի Միջին Արեւելքի, Հարաւային Ասիոյ եւ Ափրիկէի Ուսումնասիրութեանց (MESAAS) Կեդրոնին մէջ: 2014էն դասաւանդած է Րաթկըրզ, Քալիֆորնիոյ Նահանգային (Ֆրեզնօ), Ուորսեսթըր Նահանգային համալսարաններուն մէջ: Խմբագիրն է *Armenian Review*ի:

Հեղինակ է ցեղասպանութեան, զանգուածային բրտութեան նուիրուած գիտական յօդուածներու:

Գէորգ Յակոբճեան Միջազգային Օրէնքի մագիստրականը ստացած է Լոնտոնի Համալսարանի School of Oriental and African Studiesէն: Ներկայիս միջազգային օրէնքի դոկտորականի թեկնածու է Վիեննայի Համալսարանի Իրաւագիտութեան բաժնին մէջ:

Աշխատակից է ՄԱԿի Մարդկային Իրաւանց Փոքրամասնութիւններու Իրաւանց Բաժանմունքին, անդամ է Արդարութեան եւ Մարդկային Իրաւանց Հայկական Իրաւական Կեդրոնի Տնօրէն Խորհուրդին, Երիտասարադ Իրաւաբաններու Միջազգային Կազմակերպութեան, նաեւ՝ Միջազգային Իրաւաբաններու Միութեան:

Փրոֆեսոր Վահրամ Շեմմասեան վկայուած է University of California, Los Angelesէն, պաշտպանելով “The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915” դոկտորականը: Տնօրէնն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնին: Հեղինակ է *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History, 1919-1939* (2015) հատորին: Պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի Նախարարութեան Ուիլիըմ Սարոյեան շքանշանով՝ Սփիւռքի մէջ հայագիտութեան եւ հայ մշակոյթին զարգացման իր բերած նպաստին համար: Արժանացած է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան

Թանգարան-Ինստիտուտի Ֆրանց Վերֆէլ պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատութիւններուն:

Անի Ոսկանեան ծնած է Երեւան: Մագիստրականը ստացած է ԵՊՀ Արեւելագիտութեան Բաժանմունքի Թուրքագիտութեան Բաժինէն:

2007-14՝ պաշտօնավարած է ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտին մէջ, իբրեւ գիտաշխատող: 2015ին լծուած է Հայոց Ցեղասպանութեան վերապրածներու եւ ականատեսներու թուայնացուած վաւերապատումներու տեղադրումին եւ ժամանակի մամուլի նիւթերով 1915 օրացոյցի ստեղծումի http://armeniangenocide100.org/ կայքէջի մէջ: 2015-17՝ աշխատած է ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտութեան Հիմնարկին մէջ, 2017էն՝ Երեւան Քաղաքի Պատմութեան Թանգարանը:

Հեղինակ է գիտական յօդուածներու, եւ *Ադանայի Նահանգի Հայերի Տնտեսական Վիճակը. 1909թ. Ունեզրկում* (2017) հատորին:

Դոկտ. Յակոբ Չօլաքեան ծնած է Գարատուրան, Սուրիա: Աւարտած է ԵՊՀ Բանասիրութեան Բաժանմունքը, 2002ին ստացած է Պատմական Գիտութիւններու Թեկնածուի կոչում: 2014էն ՀՀ ԳԱԱ Ազգագրութեան եւ Հնագիտութեան եւ՝ Հրաչեայ Աճառեանի Անուան Լեզուի հիմնարկներու աւագ գիտաշխատող է, դասախօս՝ ԵՊՀի:

Հեղինակ է գիտական յօդուածներու, նաեւ՝ *Հալէպահայ Պարբերական Մամուլի Համառօտ Նկարագրութիւն* (1978), *Քեսապի Ժողովրդական Երգարուեստը* (1980), *Քեսապի Բարբառը* (1986, 2010), *Քեսապ* (1995-2004, Բ. տիպ.՝ 2015), *Ցամքած Աղբիւրը Նորէն Կը Բխի* (1981), *Միջ-Գաւառական Անեքթոտներ* (1988, 2005), *Արցախեան Ինքնաճանաչման Բանաստեղծութիւնը* (1990), *Հայերէնի Դասագիրքս* (1990-1994), *Անդաստան* (2009-2014), *Քարէն Եփփէ Հայ Գողգոթային Եւ Վերածնունդին Հետ* (2001), *Անտիոքի Մերձակայ Ռուճի Հովիտի Հայերը, Պատմա-Ազգագրական Ուսումնասիրութիւն* (2006), *Քեսապի Երեք Օրերը. 21-23 Մարտ 2014* (2014, անգլ.՝ 2015), *Աւանդական Ուղղագրութիւն, Կանոնակարգ Եւ Խնդիրներ* (2016), *Արեւմտահայերէնի Քերականութիւն, Կանոնակարգ Եւ Խնդիրներ* (2017), *Յիսնամեակ Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի 1947-1997*, *Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան Վարժարանի 1927-2007*, *Ոսկեմատեան Քուէյթի Ազգային Վարժարանի 1961-2011*, *Տարեգրութիւն Հալէպի Հայ Աւետարանական Բեթէլ Վարժարանի, 1923-2013* (2016) գիրքերուն:

Վերապատուելի Յարութիւն Սելիմեան ծնած է Հալէպ: 2001ին մագիստրականով վկայուած է McCormick Theological Seminaryէն:

Եղած է հովիւը Քեսապի Հայ Աւետ. Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ: 1992ին ստանձնած է Հալէպի Հայ Աւետ. Բեթէլ Եկեղեցիին հովուութիւնը. վարած վարչական պատասխանատու պաշտօններ՝ Հալէպի եւ Սուրիոյ հայ եւ աւետարանական միջավայրին մէջ: 2004էն համայնքապետն է Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքին:

Արժանացած է ՀՀ Պատուոյ Անձնագիրի, Հալէպ Քաղաքի պատուակալ քաղաքացիութեան, «Ֆրիտիոֆ Նանսէն Հիմնադրամի»ի ոսկեայ յուշամետալին, «Մխիթար Գօշ» ՀՀ պետական ոսկէ մետալին, Սուրիոյ Հանրապետութեան Խորհրդարանի պաշտօնական յուշանուէրին, Գերմանիոյ Տրեզտէն քաղաքի «Swords into Plowshares» խաղաղութեան մրցանակին:

Դոկտ. Անդրանիկ Տագէսեան ծնած է Պէյրութ: Դոկտորականը պաշտպանած է Ուէյլզի Համալսարանին մէջ: Պատասխանատու Քարտուղարն է *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին (1993), անդամ է *Հայագիտական Հարցեր* Հանդէսի խմբագրակազմին (2014): Տնօրէնն է Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին (2011), միաժամանակ դասախօս՝ Հայկազեան Համալսարանին մէջ:

Խմբագրած է *Հաճնոյ Հերոսամարտի 90Ամեակի Գիտաժողովի Նիւթեր Եւ Վաւերաթուղթեր Ու Փաստաթուղթեր* (2013), *Հայկական Անդրսահմանային Տարածականութիւնը Եւ Արդի Հաղորդակցական Միջոցները, Գիտաժողովի Նիւթեր (15-17 Մայիս 2013)* (2014), *Հարիւրամեակ Հայոց Ցեղասպանութեան. Հետեւանքներ Եւ Յառաջադրանքներ, Գիտաժողովի Նիւթեր (31 Յունուար-1 Փետրուար 2015)* (2015), *Լիբանանի Հայերը (Բ.) Գիտաժողովի Նիւթեր (14-16 Մայիս 2014)* (2017). աշխատասիրած է *Բարսեղ Կանաչեան (1885-1967). Կեանքի Մը Երաժշտացումը* (2017), Դոկտ. Արմէն Իւրնէշլեանի հետ պատրաստած է *Լիբանանահայ Գիրքը 1894-2012, Մատենագրական Յանկ* (2013) հատորները: Հեղինակն է *Պատմութիւն ՌԱԿ Լիբանանի Շրջանակի, 1922-1937* (1993), *Վահան Պէտիէեան. Երաժիշտ-Մանկավարժը* (2004), *Լիբանանի Հայօճախը, Գիրք Ա., Համարկումին Խաչուղիները (1920-2005)* (2015) գիրքերուն:

Փրոֆեսոր Թալին Տէր Մինասեան դասախօս է Փարիզի Institut National des Langues et Civilisations Orientales (INaLCO)ի մէջ, ուր կը դասաւանդէ Ռուսիոյ եւ Կովկասի պատմութիւն: Անոր ուսումնասիրութիւնները կը վերաբերին միջազգային յարաբերութիւններուն, Սովետ. Միութեան արտաքին քաղաքականութեան եւ Միջին Արեւելքի փոքրամասնութեանց դերկատարութեան: Հեղինակն է *Colporteurs du Komintern, l'Union Soviétique et les Minorités au Moyen-Orient* (1997), *Erevan, la Construction*

d'une Capitale à l'Époque Soviétique (2007) եւ՝ *Most Secret Agent of Empire, Reginald Teague-Jones Master Spy of the Great Game* (2014) հատորներուն:

Փրոֆեսոր Սիմոն Փայասլեան վարիչն է Պոստոնի Համալսարանի Չարլզ Ք. եւ Էլիզապէթ Մ. Քենոսեանի Անուան Ժամանակակից Հայոց Պատմութեան Եւ Գրականութեան Ամբիոնին: 1992ին, Ուէյն Համալսարանէն ստացած է Քաղաքական Գիտութիւններու դոկտորական վկայական, իսկ 2003ին Եու. Սի. Էլ. Էյ.էն՝ երկրորդ դոկտորականը՝ Հայոց Պատմութեան մարզին մէջ:

Հեղինակ է շարք մը գիրքերու, ինչպէս՝ *The Political Economy of Human Rights in Armenia: Authoritarianism and Democracy in a Former Soviet Republic* (2011), *The History of Armenia: From the Origins to the Present* (2007); *United States Policy toward the Armenian Question and the Armenian Genocide* (2005); *The Armenian Genocide, 1915-1923: A Handbook for Students and Teachers* (2001); *U.S. Foreign Economic and Military Aid: The Reagan and Bush Administrations* (1996); *International Political Economy: Conflict and Cooperation in the Global System* (համահեղինակութեամբ Ֆրետերիք Փիրսընի) (1999): Ունի նաեւ ուսումնասիրութիւններ, ինչպէս՝ "Diasporan Subalternities: The Armenian Community in Syria," "Imagining Armenia": Փրոֆ. Րիչըրտ Յովհաննէսեանի հետ խմբագրած է *Armenian Constantinople* (2010) եւ *Armenian Cilicia* (2008) հատորները:

Սօսէ Փիլաւճեան ծնած է Հալէպ: Բարձրագոյն կրթութիւնը ստացած է Երեւանի Խաչատուր Աբովեանի Անուան Պետական Մանկավարժական Համալսարանի Լրագրութեան Բաժանմունքէն:

Հայոց լեզու եւ գրականութիւն դասաւանդած է Հալէպի Ազգային Սահակեան Վարժարանը եւ Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանը, Զմմառեան Միաբանութեան Դպրեվանքի Հալէպի մասնաճիւղը: 2009էն հայագիտական նիւթեր կը դասաւանդէ Զմմառեան Միաբանութեան Երանելի Իգնատիոս Մալոյեան Դպրեվանքի ժառանգաւորներուն եւ Ս. Միքայէլ Ընծայարանի նորընծաներուն: Խմբագիրն է Դպրեվանքի *Կանչ Հրեշտակապետին* տարեգիրքին: Խմբագրած է դպրեվանքի շէնքի 50ամեայ յոբելեանին նուիրուած *Յուշամատեան*ը:

2012ին արժանացած է ՀՀ Սփիւռքի Նախարարութեան եւ Համաշխարհային Հայկական Քոնկրէսի «Մայրենիի Պաշտպան»ի մրցանակին, 2014ին՝ ՀՀ Սփիւռքի Նախարարութեան «Մայրենիի Դեսպան» շքանշանին:

Դոկտ. Յասմիկ Քելուկեան-Պարան դասախօս է Քալիֆորնիոյ Նահանգային Նորթրիճ Համալսարանի Արդի եւ Դասական Լեզուներու եւ Գրականութեան Բաժանմունքի Հայագիտութեան դասընթացքներու

Ծրագիրին: Մանկավարժութեան եւ մանկավարժութեան հոգեբանութեան դոկտորականի վկայականը ստացած է University of Southern Californiaէն, պաշտպանելով «Բարձրագոյն Ուսման Ղեկավար Դիրքերու վրայ Գտնուող Հայ Կիներու Աշխատանք-Ընտանիք Հաւասարակշռումին Մէջ Էթնիք Մշակոյթին Դերը» նիւթը: Վարած է պաշտօններ հանրային եւ կրթական զանազան հոգաբարձական մարմիններու մէջ:

Վարդի Քէշիշեան մագիստրականով վկայուած է Երեւանի Պետական Մանկավարժական Համալսարանի Բանասիրական Բաժնէն:

1993-2001՝ պաշտօնավարած է Հալէպի Վ. Ճեպէճեան Գրադարանը, մաս կազմած *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրքի* եւ *Երթ Տարեգիրքի* խմբագրակազմերուն: Եղած է վարիչ-տնօրէնը Գ. Կիլպենկեան Հիմնարկի Հալէպի Հայագիտական Կեդրոնին: 2011էն կը պաշտօնավարէ Մատենադարանին մէջ:

Հեղինակ է գիտական յօդուածներու, *Հալէպի Հայկական Գաղթօճախի Հասարակական-Մշակութային Կազմակերպութիւնները (1846-1915)* (2001), *Գոյապատում* (2002), *Յուշամատեան ՀԲԸՄի Սարեան Ակադեմիայի Յիսնամեակի* (2007) գիրքերուն: Հրատարակած է Ներսէս Դանիէլեանի *Կաթիլ Մը Ջուր Այրած Սիրտերու* (2010), Թէոդիկի *Տիպ Ու Տառ* (2012), Արշակ Ալպօյաճեանի *Տպագրութեան Արուեստը Եւ Հայք* (2013) եւ *Յուշամատեան Հայ Աւետարանական Էմմանուէլ Եկեղեցւոյ* (2015) գիրքերը:

Փրոֆեսոր Հիտեմիցու Քուրոքի դասախօս է Թոքիոյի Համալսարանի Արտասահմանեան Ուսումնասիրութեանց հիմնարկին: Աշխատած է Դամասկոսի «Պատմական Աղբիւրներու Կեդրոն»ը եւ 2006էն՝ Պէյրութի Միջին Արեւելքի Հետազօտութեան Ճափոնական Կեդրոնը:

Հեղինակն է “Account Books of Oppression and Bargaining: The Struggle for Justice and Profit in Ottoman Aleppo, 1784-90”, “The 1850 Aleppo Disturbance Reconsidered”, “*Zimmi*s in Mid-Nineteenth Century Aleppo: An Analysis of *Cizye Defteri*s”, “The Orthodox-Catholic Clash in Aleppo in 1818” յօդուածներուն, խմբագիրը՝ *Human Mobility and Multiethnic Coexistence in Middle Eastern Urban Societies: Tehran, Aleppo, Istanbul, and Beirut* (2015); *The Influence of Human Mobility in Muslim Societies* (2003) եւ ճափոներէն *The Sixty-Four Chapters for Syria and Lebanon* (2013) գիրքերուն:

Անի Փիշենկճեան ծնած է Հալէպ: 2004ին ԵՊՀէն վկայուած է Պատմական Գիտութիւններու Թեկնածուի աստիճանով («Սուրիոյ Հայ Համայնքը 1946-1971» նիւթով):

Ներկայիս կը պաշտօնավարէ Էջմիածինի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանին եւ Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցին մէջ, նաեւ՝ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի Սփիւռքի եւ Գաղթօճաներու Բաժինը:

Հեղինակն է գիտական յօդուածներու, *Յուշամատեան Սուրիահայ Օգնութեան Խաչի 1919-2009* (2010), *Գրական Արեւմտահայերէնի Պատմութեան Ուսումնասիրութիւն* (համահեղինակ, 2016), *Սուրիոյ Հայ Համայնքի Պատմութիւնը 1946-1970 թթ.* (մամուլի տակ) հատորներուն:

Հիմնական Տեղեկութիւններ Սուրիոյ Մասին

Սուրիան Միջագետքէն ետք երկրագունդի երկրորդ հնագոյն քաղաքակրթութիւնը ունեցող տարածքն է:

Սուրիոյ տարբեր շրջաններ, տարբեր դարաշրջաններու տարբեր ժողովուրդներով բնակեցուած են եւ ունեցած տարբեր զարգացումներ: Հիւսիս-արեւմտեան շրջանը քաղաքակրթական, տնտեսական թէ ռազմական շփումներ ունեցած եւ ազդեցութիւններ կրած է Փոքր Ասիոյ հարաւ-արեւելեան ժողովուրդներէն, մինչ հիւսիս-կեդրոնականը՝ Միջագետքի սումէրներէն, Ասորեստանէն, աքքադներէն, Փոքր Ասիոյ Հուրրիներէն: Հուրրիները հիւսիսային Սուրիա հաստատուեցան Ք.ա. 21րդ դարուն, սեմական ժողովուրդներ՝ Ք.ա. 14րդ դարուն, դար մը ետք՝ փիւնիկեցիք, ապա՝ հնդեւրոպացիք...:

Սուրիան կռուախնձոր դարձաւ սահմանակից կայսրութիւններու. հիթիթներ՝ հիւսիս-արեւմուտքէն, միտանիներ՝ հիւսիսէն, եգիպտացիք՝ հարաւէն, Բաբելոնը՝ հարաւ-արեւելքէն: Աքեմէնեան Կայսրութիւնը գրաւեց երկիրը Ք.ա. 539ին: Մեծն Աղեքսանդրի գրաւումով (Ք.ա. 330), երկիրը կոչուեցաւ Սուրիա: Ք.ա. 83ին զայն գրաւեց Մեծն Տիգրանը, ապա՝ հռոմէացիք (3րդ դարէն՝ բիւզանդացիք):

Ք.ա. 1800ին ծաղկեցաւ Ուկարիթը. Ք.ե. 2րդ դարուն՝ Փալմիրան: Ք. ա. 10րդ դարէն արամէերէնը դարձաւ ընդհանրական լեզուն: Այնուհետեւ, մետաքսի ճամփուն վրայ գտնուող Սուրիոյ քաղաքակրթական կացութիւնը մնաց անփոփոխ մինչեւ 640:

Աբբասեան խալիֆայութիւնը իրեն մայրաքաղաք հռչակեց Դամասկոսը 650ականներուն: 1098-1189՝ երկրին արեւմտեան շրջաններ գրաւեցին խաչակիրները, ապա՝ սելճուքները, Սալահէտտինի Էյյուպեան Հարստութիւնը: Հալէպը անցաւ մոնկոլ, ապա՝ մեմլուքներու, 1400ին՝ Լենկթիմուրի տիրապետութեան:

1516-1917 Սուրիան անցաւ օսմանեան տիրապետութեան: Յաղթելով 1920ին Ֆայսալ Ա.ի թագաւորութեան՝ Ֆրանսա հաստատեց իր իշխանութիւնը Սուրիոյ մէջ. 1944ին հռչակուեցաւ անկախութիւնը:

Անկախութեան առաջին հանգրուանը նշանաւորուեցաւ պետական հարուածներով: 1958-61 Սուրիան մաս կազմեց Արաբական Միացեալ Հանրապետութեան: Պաաս Կուսակցութեան 1963ի պետական հարուածով, մանաւանդ Հաֆէզ Ասատի իշխանութեան շրջանին (1970-2000), երկիրը ունեցաւ կայուն զարգացման հանգրուան, բացի՝ 1976ի ու 1982ի իսլամականներու խլրտումներէն:

Երկիրը դիմագրաւեց միջպետական տագնապներ՝ 1939ին ֆրանսացիներուն կողմէ Ալեքսանտրէթի Սանճաքին Թուրքիոյ կցումը, 1948ի Պաղեստինի եւ 1967ի ու 1973ի արաբ-իսրայէլեան պատերազմները,

Կոլանի բարձունքներուն գրաւումը՝ Իսրայէլի կողմէ, 1970ին պաղեստինեայորդանանեան, 1975-89՝ Լիբանանի, եւ իրաքեան տագնապները, Իրան-Իրաք եւ Ծոցի պատերազմները: Ասոնք պատճառ դարձան գաղթականական մեծ ներհոսքի:

2011ին սկսած պատերազմը խլեց առնուազն 400,000 սպանեալ, պատճառ դարձաւ շուրջ 9 միլիոն գաղթականութեան, տնտեսութիւնը կծկուեցաւ 35%-50%, տապալեցաւ զբօսաշրջական ճարտարարուեստը, դրամանիշը կորսնցուց իր արժէքին շուրջ 80%ը:

1864ին օսմանեան թանզիմաթով՝ Հալէպի, Զօրի, Պէյրութի եւ Դամասկոսի վիլայէթներու (ապա նաեւ՝ Լեռնալիբանանի ու Երուսաղէմի) մասնատուած Սուրիան, կեդրոնաձիգ, միասնական պետութիւն դարձաւ կորսնցնելով այդ տարածքներէն մասեր:

Ան օժտուած է նախագահական համակարգով, միապալատ խորհրդարանով, կառավարութեամբ, դատաիրաւական եւ գործադիր իշխանութեամբ: Նախագահը իշխող Պաաս Կուսակցութեան գլխաւորն է, Ազգային Յառաջդիմական Ճակատին ղեկավարը, զինեալ ուժերուն գերագոյն հրամանատարը: Բանակը կը հաշուէ 400,000 զինուոր, քաղաքացիներուն զինուորական ծառայութիւնը պարտադիր է: Երկրին տնտեսութիւնը պետական տնօրինութիւն ունի: Ազգային համախառն արտադրութեան 20%ը կը յառաջանայ երկրագործութենէն, քարիւղը կը կազմէ արտածումներուն 40%ը:

Սուրիոյ բնակչութիւնը տեղաբնիկ է: Կան արաբներ, արեւելեան քրիստոնէութեան պատկանող զանազան ազգութիւններ, քիւրտեր (10%), թիւրքմէններ (4-5%), ասորիներ (3-4%), չերքէզներ (1.5%), հայեր եւն.: Ասոնց շուրջ 71%ը սիւննի է, 15%ը՝ շիի, 10%ը՝ քրիստոնեայ (շուրջ 2,5 միլիոն) եւ 3%ը՝ տիւրզի: Պետական լեզուն արաբերէնն է, տարբեր խմբաւորումներ կը խօսին նաեւ քրտերէն, թիւրքմէնական բարբառ, արամէերէն, հայերէն եւն.:

Կրթութիւնը պարտադիր է 6-12 տարեկաններուն համար: 1967էն իվեր կրթական համակարգը ունի պետական տնօրինութիւն: Այրերուն 90.7%ը եւ կիներուն 82.2%ը գրաճանաչ են: Միջին երկարակեցութիւնը այրերուն համար 74.2, կիներուն՝ 77.3 է:

Սուրիական սփիւռքը տարածուած է աշխարհի չորս ծագերուն:

Համառօտ Ուրուագիծ Սուրիոյ Հայօճախին

Սուրիոյ հայօճախը նախաեղեռնեան արմատներ ունի. Կիլիկեան Հայկական Պետութեան շրջանէն սկսեալ Հալէպի, Լաթաքիոյ եւ շրջակայքին ու Դամասկոսի մէջ կազմաւորուած հայկական համայնքներ գոյացած են: Հալէպը եւ Քեսապը կը հանդիսանան Սփիւռքի անընդհատաբար հայաբնակ հնագոյն հայօճախները:

ԺԴ.-ԺԹ դարերուն, մանաւանդ 1600ականներէն Հալէպը կը դառնայ հայ մշակոյթի եւ առեւտուրի կարեւոր կեդրոն: Մեծ կ'ըլլայ Հալէպ հաստատուած հայ առեւտրականներու դերը՝ երկրին տնտեսութիւնը միջազգային տնտեսական շուկաներուն առնչելու գործին մէջ: ԺԹ. դարավերջին սուրիահայ դէմքեր կը մասնակցին արաբական զարթօնքին եւ մշակոյթի վերելքին:

1440ականներէն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմ հանդիսացած Հալէպի մէջ կային նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատկանող կալուածներ: Նման կալուածներ եւ դէպի Երուսաղէմ հայ ուխտագնացներու կայաններ կային նաեւ Լաթաքիոյ եւ Դամասկոսի մէջ, որոնք աւելի վաղ կազմուած թեմեր էին: ԺԷ. դարէն կը սկսի յառաջանալ հայ կաթողիկէ հաւաքականութիւն-եկեղեցին, որ կը ճիւղաւորուի դէպի Լեռնալիբանան՝ ԺԸ. դարասկիզբին: 1850ականներէն կը սկսի ձեւաւորուիլ հայ աւետարանական համայնք մը, մանաւանդ Քեսապի շրջանին մէջ:

1909ին՝ Կիլիկիոյ կոտորածի շրջանին, Լաթաքիոյ շրջակայքի հայութիւնը կ'ենթարկուի բռնութիւններու: Եղեռնին՝ Լաթաքիոյ շրջակայքի հայութիւնը կ'աքսորուի, հալէպահայութիւնը կ'ենթարկուի հալածանքներու: Արեւմտեան Հայաստանէն, Կիլիկիայէն ու արեւմտեան Փոքր Ասիայէն արմատախլուած հայութեան հաւաքավայրը կը դառնայ Հալէպ, ուրկէ անոնք կ'աքսորուին սուրիական անապատները: Հալէպ, Մեսքենէ, Պապ, Քաթմա, Մումպուճ, Րաքքա, Ապու Հարար, Րաս Ուլ Այն կը դառնան տեղահանուած հայութեան գաղթավայրերը, ուր կը կատարուին ջարդեր: Ա. Աշխարհամարտի Ձինադադարին, հայութեան վերապրող խլեակներու կեդրոնավայր, ծննդավայր վերադարձի գլխաւոր կայան կը դառնայ դաշնակից ուժերու կողմէ գրաւուած Հալէպը, ուր կը հիմնուին նաեւ նպաստամատոյցի, որբանոցներու, ապաստանարաններու, հիւանդանոցներու հայ թէ օտար փրկարար կեդրոններ:

Մուսթաֆա Քեմալի նախաձեռնած միլլի շարժումին, ինչպէս նաեւ Անքարայի մէջ կնքուած Թուրք-Ֆրանսական Համաձայնութեան (20 Հոկտ. 1921)՝ հետեւանքով երբ Ֆրանսա թուրքերուն կը յանձնէ Կիլիկիան, ծայր կ'առնէ բնօրրան վերադարձած հայութեան կրկնաքսորը: Կիլիկեհայութիւնը, արեւմտահայ մնացորդացը, Կիլիկիայէն հարաւ-արեւելք գտնուող հայաբնակ շրջաններու՝ Մարաշի, Այնթապի, Ուրֆայի, Քիլիսի եւ շրջակայքի հայութիւնը

կ'ապաստանի Ալեքսանտրէթի Սանճաք եւ Հալէպ, ուրկէ կը տարածուի դէպի սուրիական հիւսիս-արեւելք, նաեւ հարաւ՝ դէպի Լիբանան, ուր ծովու ճամփով ապաստան գտած էին արդէն մեծաթիւ հայեր: Թուրքիոյ Հանրապետութենէն 1920ականներու աւարտին եւ 1930ականներու սկիզբին դէպի Սուրիա հայկական ներհոսքը կ'ուղղորդուի մանաւանդ հիւսիս-արեւելեան Սուրիա, իսկ 1939ի սուրիական Ալեքսանտրէթի Թուրքիոյ կցումով տեղաբնիկ հայութեան մէկ մասը Լաթաքիոյ վրայով կ'անցնի Լիբանան:

Այնուհետեւ, նախկին Օսմանեան Կայսրութեան արեւելեան նահանգներէն դէպի Սուրիա կ'արձանագրուի հայկական աննկատ ներհոսք: Մեծաթիւ սուրիահայերու 1946-47ի (32,240 հոգի՝ Սուրիա Լիբանանէն) Խորհրդային Հայաստան ներգաղթը յարաբերական աւարտի կը բերէ սուրիահայութեան տեղաշարժերը, թէեւ չի դադրիր 1920ականներու կէսերէն ծայր առած արտահոսքը, որուն մէջ ակնառու ներկայութիւն են մշակոյթի, գրականութեան, երաժշտութեան եւ գեղանկարչութեան երիտասարդ դէմքեր:

Յաջորդող տասնամեակներուն գաղթահայութեան եւ նախաեղեռնեան հալէպահայութեան մերումի գործընթացէն կը յառաջանայ ձեւափոխուած հալէպահայութիւն մը, Սփիւռքի այլ հայօճախներէն տարբեր դիմագիծերով, աւելի աւանդական եւ տոհմիկ:

Հալէպի շուրջ, անկէ հիւսիս-արեւելք թէ Դամասկոս հաստատուած հայ գաղթականները 1920ականներու երկրորդ կէսէն կը սկսին վերակազմուիլ, անոնցմէ կը յառաջանան հայկական թաղամասեր: Սունկի արագութեամբ կը ծնին մեծաթիւ փոքր հայավայրեր, ուր սկիզբ կը դրուի դպրոցաշինութեան եւ եկեղեցաշինութեան: Շինարարական այս թափը, հայավայրերու կազմակերպումը կը վերադասաւորուի՝ Խ. Հայաստան ներգաղթին հետեւանքով ծայրամասային հայավայրերու մեծ մասին վերացումով եւ մնացորդացին Հալէպ ու շրջանային կեդրոններ (Ճեզիրէ, Տէր Զօր, Արաբ Փունար, Ճարապլուս, Րաքքա, Հոմս, Լաթաքիա եւն.) մէկտեղումով: Այս կեդրոնավայրերը՝ 1950-80ականներու (դէպի Լիբանան, Արեւմուտք եւ Աւստրալիա) արտահոսքին հետեւանքով տակաւ կը նուազին ու 1980ականներու վերջաւորութեան Սուրիոյ հայաբնակ գլխաւոր կեդրոններ կը մնան Հալէպը, Դամասկոսը, Քեսապը (որ վերոյիշեալ գործընթացին մաս չի կազմեր), Ճեզիրէն, Լաթաքիան: Փոքրաթիւ ընտանիքներ կը շարունակեն գոյատեւել այլ քաղաքներու եւ աւաններու մէջ:

Հալէպի մէջ, 1920-1950ականներուն կը կազմուին եւ կը ճիւղաւորուին հայրենակցական ու մշակութային միութիւններ: Կը ձեւաւորուին երգչախումբեր, թատերախումբեր, մամուլի եւ պարբերականներու ցանց, որոնք կ'ունենան ընդհատումներ[1]: Սուրիահայութիւնը եւս կ'ազդուի հայ իրականութիւնը ալեկոծած տագնապներէն, մանաւանդ եկեղեցական տագնապէն: 1950-60ականներու արտահոսքը առաւել թափ կու տայ

Լիբանանի հայօճախին ծաղկումին եւ կ'աշխուժացնէ սփիւռքահայ զանազան հայօճախներու կեանքը:

1950ականներէն՝ դպրոցական ցանցը կ'ունենայ յառաջացում-տարածում-որակաւորում-կծկում-որակաւորում գործընթաց մը: 1950ականներու աւարտ-2010 շրջանին աւելի քան 800 սուրիահայ երիտասարդներ կ'աւարտեն Հայաստանի բարձրագոյն կրթարանները եւ նոր թարմութիւն կը բերեն հայօճախի գրեթէ բոլոր բնագաւառներուն: 1970ականներուն՝ պարբերականները լոյս կը տեսնեն իբրեւ տեղայնական-հաստատութենական, կրօնական լրատուներ, մինչեւ 1990ականներ, երբ կանոնաւոր պարբերականութիւն կ'ունենայ *Գանձասարը*: 1920-30ականներուն դադրած պարբերական գրական-բանասիրական պարբերաթերթեր կը վերածլին:

1980-90ականներուն կը ծաւալի Սուրիոյ զանազան եղեռնավայրերուն մէջ Հայոց Ցեղասպանութեան յուշարձաններու կառուցումը, որով Տէր Զօրը, Մարկատէն, Րաս Ուլ Այնը, Հալէպը եւն. կը դառնան Հայոց Ցեղասպանութեան ուխտավայրեր:

1990ականներէն սուրիահայ կենսագործունէութիւնը կը դառնայ Հալէպ-Քեսապ-Դամասկոս-Ճեզիրէ-Լաթաքիա առանցքին շուրջ՝ Հալէպ կեդրոնավայրով:

Հայօճախը կարեւոր դեր կ'ունենայ պետականակերտումին մէջ. իբրեւ նորաստեղծ Սուրիոյ լիիրաւ քաղաքացիներ, հայերը իրենց ներկայացուցիչները կ'ունենան Սուրիոյ առաջին իսկ խորհրդարանին մէջ, կը մասնակցին բանակի, վարչակառավարման համակարգին մշակումին, մանաւանդ մեծ կ'ըլլայ իրենց դերը երկրին տնտեսութեան, երկրագործութեան բարելաւման, շինարարարական, ճանապարհաշինական, ջրամատակարարման եւ ելեկտարական համակարգերու հաստատումին եւ զարգացումին մէջ: Պետական յատակագծումի քաղաքականութեամբ զարգացող երկրին տնտեսութեան մէջ սուրիահայերը կարեւոր իրագործումներ կը կատարեն ծանր, մանաւանդ՝ միջին եւ թեթեւ ճարտարարուեստի, հիւսուածեղէնի, մետաղամշակութեան, մեքենաշինութեան, կաշեգործութեան, արհեստներու, կահոյքի, զբօսաշրջութեան, գիտութեան, երաժշտութեան, գրականութեան, լուսանկարչութեան մարզաշխարհի մէջ, մեծապէս նպաստելով երկրին ընդհանուր վերելքին ու բարգաւաճումին:

1980-2010՝ աննախընթաց մշակութային-տնտեսական վերելք ապրած սուրիահայութեան դրական խոշորագոյն գործօն կը դառնայ Հայաստանի Հանրապետութեան անկախացումը:

2005էն Միջին Արեւելքի մէջ ալեկոծող ու տակաւ թափ առնող իրադարձութիւններուն հետեւանքները փորձանաւոր տագնապներու կ'առաջնորդեն հայօճախը՝ ամբողջ երկիրը ընդգրկած ներքին

անկայունութեան բարդացումով: Հայօճախը կը մնայ պետականութեան կողքին, կու տայ զոհեր, մշակութատնտեսական մեծ կորուստներ, տասնեակ-հազարաւորներ կ'ապաստանին Լիբանան եւ Հայաստանի Հանրապետութիւն, ուրիշներ կ'արտագաղթեն մանաւանդ Քանատա եւ Արեւմուտք:

Սուրիոյ տակաւին շարունակուող անապահով ու անկայուն կացութիւնը հարցականներու տակ կը պահէ նախապատերազմեան զօրաւոր սուրիահայութեան մը վերականգնումի օրակարգը, կը տկարացնէ արեւմտահայերէնի միջինարեւելեան բնօրրանը եւ կ'ազդէ Սփիւռքի հայկական դիմագիծի տոհմիկ կողմերուն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Արձանագրուած են պարագաներ երբ բրիտանական եւ ֆրանսական գրաւող իշխանութիւններու քաղաքականութիւնը հայոց դէմ գրգռած է տեղաբնիկ արաբները: Նոյնպէս արձանագրուած են պարագաներ, երբ քաղաքական նկատառումներով պետական իշխանութիւններու՝ էթնիք, կրօնական թէ ծայրայեղական փոքրամասնութիւններու հանդէպ որդեգրած քաղաքականութիւնը բացասական հետեւանքներ ունեցած է սուրիահայութեան համար:

ՀԱՄԱՌՕՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«1946 – 1948ԹԹ Հայրենադարձութիւնը Եւ Դրա Դասերը. Հայրենադարձութեան Հիմնախնդիրն Այսօր» Համահայկական Գիտաժողով, Զեկուցումների Ժողովածու, Երեւան, Լիմուշ Հրատ., 2009:

Հուրի Ազէզեան, *Պատմող Ու Շնչող Հայաբոյր Հալէպը (Հալէպի Ազգ. Իշխանութեան Շինարարական Գործունէութիւնը)*, Հալէպ, 1992:

Ալպում Բռնագաղթի Հայ Կարաւաններու Երթուղիներուն՝ 1915-ին Սուրիոյ Տարածքին, խմբ.՝ Ռոպերտ Ճեպէճեան, Հալէպ, 1994:

Սեւան Ասատուրեան-Մանճիկեան, *Քեսապ...2014 Տեղահանութիւն Եւ Վերադարձ*, Հալէպ, Տպ. Արեւելք, 2017:

Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, *Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն Մինչեւ Մեր Օրերը),* Անթիլիաս-Լիբանան, Տպարան Դպրեվանուց Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1939:

Ներսէս Արեղայ Բախտիկեան, *Յուշամատեան ՀՄԸՄ-ի. 1918-1958*, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 1958:

Սերգէյ Գասպարեան, *Սփիւռքահայ Գաղթօճախներն Այսօր. Մշակութային Կեանք Ուրուագիծ*, Երեւան, Հայպետհրատ, 1962:

Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, Ա.-Է. Գիրքեր, Հալէպ-Պէյրութ-Հալէպ, 1975-2002:

Լութֆիկ Եիրիքեան, Դամասկահայ Ամէնուն Տարեգիրքը, Ա. Տարի, Դամասկոս, Տպ. Եիրիքեան, 1957:

Բիւզանդ Եղիայեան, *Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ. 1914 - 1972*, Անթիլիաս, 1975:

Գալեմքեարեաններ. Անթաք-Դամասկոս-Հալէպ, կազմ.՝ Հրազդան Թոքմաճեան, Հալէպ 2016:

Երթ. Սուրիահայ Տարեգիրք, 1-6, Հալէպ, 2005-2012:

Ալպէր Թէմիրեան, *Քեսապ (1909-1946), Պատկերազարդ*, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1956:

Թորոս Թորանեան, *Ակնարկ Սուրիահայ Թատերական Պատմութեան Եւ Դերասան Բարսեղ Աբովեանի Յուշերը*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1973:

Թորոս Թորանեան, *Սուրիահայութիւնը Եւ...Հայաստանի Երկրաշարժը*, Պէյրութ, Տպ. Հայ Տիպ Քոմփիւկրաֆ-Թեքնոփրէս, 1990:

Յովհաննէս Թոփուզեան, *Միրիայի Եւ Լիբանանի Հայկական Գաղթօճախների Պատմութիւն 1841-1946*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1986:

Հրազդան Թոքմաճեան, *Անթաքի Ազեղնագործութիւն, Ա.-Բ. հատոր*, Հալէպ-Երեւան, 2015:

Հրազդան Թոքմաճեան, *Մարաշի Ազեղնագործութիւն,* Հալէպ, 2010:

Վեր. Տիգրան Խրլոբեան, *Ոսկեմատեան Մերձ. Արեւելքի Հայ Աւետ. Միութեան. Նուիրուած Հայաստանեայց Աւետ. Եկեղեցւոյ Հաստատութեան Ա. Հարիւրամեակին. 1846-1946 Ա.-Բ. Հատորներ*, Պէյրութ, 1950-51:

Հայ Սփիւռք Հանրագիտարան, գլխ. խմբ.՝ Արամ Սարգսեան, Երեւան, Հայկական Հանրագիտարան Հրատ., 2003:

Սարգիս Ղազարեան, *Հայկական Փոքր Գաղութներ՝ Ազէզ, Ափրին, Արաբ-Բունար*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1965:

Ռոպէր Ճեպէճեան, *Ալպում Հալէպի Հայ Գաղթականներու Հիւղաւանին (1922-1936)*, Հալէպ, Տպ. Օֆսէթ Էլ Պարք, 1986:
Ռոպէր Ճեպէճեան, *Հալէպի Մեծանուն Բժշկապետ Ա. Ալթունեան Եւ Իր Գործը*, Հալէպ, 1969:
Նարինէ Մարգարեան, *Հայոց Ցեղասպանութեան Հետեւանքով Միրիայում Հաստատուած Հայ Տարագիրների Կարգավիճակը Եւ Հայ-Արաբական Փոխյարաբերութիւնները (1915-1923թթ.)*, Երեւան, Տպ. Կոլլաժ, 2013:
Մեսրոպեան Վարժարանի Պատմութիւն. Յոբելինական Հրատ. 65ամեակ, կազմ.՝ Թորոս Թորանեան, Պէյրութ, 1988:
Լալա Միսկարեան-Մինասեան, *Սուրիական Օրագրութիւն*, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 2016:
Յուշամատեան Գերմանիկ-Վասպուրականի Եւ Մարաշի Հայրենակցական Միութեան, կազմ.՝ Տիգրան Կիւլիւզեան, Հալէպ, 1992:
Յուշամատեան Դամասկոսի Հայ Կաթողիկէ Միութեան 50-ամեակի (1944-1994), Դամասկոս, 1994:
Յուշամատեան Կիլիկեան Կրթական Հաստատութեան, 1921-1996, խմբ.՝ Ռուբէն Տիրարեան, Հալէպ, 1996:
Յուշամատեան ՀԲԸՄ-ի Լ. Նաճարեան Գ. Կիւլպենկեան Երկր. Վարժարանի Հիմնադրութեան 25-Ամեակին (1954-1979), Հալէպ, 1979:
Յուշամատեան Մուսա Լերան, խմբ.՝ Մարտիրիս Գուշակճեան, Պօղոս Մատուռեան, Պէյրութ, Տպ. Ատլաս, 1988:
Յարութիւն Յ. Նազարեան, *Եղեռնէն Վերապրողի Յուշեր,* խմբ.՝ Թորոս Թորանեան, Հալէպ, 2009:
Ոսկեմատեան ՀԲԸՄ-ՀԵԸ 50-ամեակի (1931-1981), Հալէպ, 1982:
Ե. Ոսկերիչեան, *Սուրիական Ալպում, Գ. Տարի*, Հալէպ, Տպ. Արարա, 1929:
Եղիշէ. Արք. Չիլինկիրեան, *Նկարագրութիւնք Երուսաղէմի, Հալէպի, Դամասկոսի Գաղթականական Եւ Վանական Ջանազան Դիպաց Եւ Անցքերու 1914-1818*, Աղեքսանդրիա, Տպ. Ա. Ստեփանեան, 1927:
Յակոբ Չօլաքեան, *Անտիոքի Մերձակայ Ռունի Հովիտի Հայերը, Պատմա-Ազգագրական Ուսումնասիրութիւն*, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 2006:
Յակոբ Չօլաքեան, *Հալէպահայ Պարբերական Մամուլի Համառօտ Նկարագրութիւն*, 1978:
Յակոբ Չօլաքեան, *Յիսնամեակ Քարէն Եփիփ Ազգային Ճեմարանի 1947-1997*, Հալէպ, 1997:
Յակոբ Չօլաքեան, *Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան Վարժարանի 1927-2007*:
Յակոբ Չօլաքեան, *Տարեգրութիւն Հալէպի Հայ Առեւտրականական Բեթէլ Վարժարանի, 1923-2013*, Հալէպ, 2016:
Յակոբ Չօլաքեան, *Քարէն Եփիփ Հայ Գողգոթային Եւ Վերածնունդին Հետ*, Հալէպ, Տպ. Արեւելք, 2001:
Յակոբ Չօլաքեան, *Քեսապ, Ա.-Գ. հատորներ*, Հալէպ, 1995-2004:
Յակոբ Չօլաքեան, *Քեսապի Բարբառը*, Հալէպ, 1986, 2010:
Յակոբ Չօլաքեան, *Քեսապի Ժողովրդական Երգարուեստը*, Հալէպ, Տպ. Շարք, 1980:
Սարգիս Պալապանեան (Պալապան Խոճա), *Կեանքիս Տաք Ու Պաղ Օրերը (Այնթապ-Քեսապ-Հալէպ)*, Հալէպ, Տպ. Շարք, 1983:
Հայկ Պալեան, *Սուրիահայ Տարեգիրք, Ա. Տարի*, Պէյրութ, Ազդակ, 1929:

Ալիշան Պայրամեան, *Ակեքսանտրէթի Սանճագի Հարցը Եւ Միջազգային Դիւանագիտութիւնը (1918-1939)*, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 1992:
Պատմութիւն Հալէպի «Օթէլ Պարոն»ի Եւ Արմէն Մազումեանի (Պարոն) Նամականին, խմբ. Թորոս Թորանեան, Պէյրութ, 1987:
Ղեւոնդ Պետրոսեան, *Որբին Գիրքը. Յիշատակներ Մերձ. Արեւելքի Նպաստամատոյց Ընկերութեան Գործունէութենէն. Սուրիա, Լիբանան Եւ Պաղեստինի Շրջան, 1915-1930*, Պէյրութ, Տպ. Ազատ, 1932:
Գ.Հ. Սաֆարեան, Ռ.Մ. Պօղոսեան, Լ.Ա. Ղազանչեան, *Սիրիահայերի Արդի Իրաւաւսոցիալական Հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետութիւնում*, Երեւան, 2016:
Սիրել Եւ Ծառայել (Լեւոն Լեւոնեան Մշակը Եւ Իր Հունձքը), խմբ.՝ Լեւոն Վարդան, Պէյրութ, Տպ. Սեւան, 1960:
Սիրիահայերը Հայաստանում. Ինտեգրման Ուղիները, խմբ.՝ Ռ. Կարապետեան, Ս. Բարսեղեան, «Հայաստանի Եւ Սփիւռքի Էթնոսոցիոլոգիական Ուսումնասիրութիւններ» 9, Երեւան, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն Հրատ., 2015:
Արտաւազդ Արք. Սիւրմէեան, *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն Մանկունք Եկեղեցւոյ Եւ Մասնաւորաց*, Երուսաղէմ, 1935:
Արտաւազդ Արք. Սիւրմէեան, *Պատմութիւն Հալէպի Հայոց*, Ա.-Գ. Հտր., Հալէպ-Պէյրութ-Փարիզ, 1940-1950:
Արտաւազդ Արք. Սիւրմէեան, *Պատմութիւն Հալէպի Ազգային Գերեզմանատանց Եւ Արձանագիր Հայերէն Տապանաքարերու*, Հալէպ, Տպ. Տէր Սահակեան, 1935:
Արտաւազդ վարդապետ [Սիւրմէեան], *Տաթեւ. Կրօնական Տարեցոյց. Գրական, Բանասիրական, Գեղարուեստական, Ա.-Զ. Տարի*, 1925-30, Կ.Պոլիս-Հալէպ:
Սուրիա Վէ Լիբանանտաքի Էրմէնի Ինճիլի Քիլիսէլէր Իթթիհատընուն Սէնէվի Ինթիմար Ռափօրլար Վէ Գարարլար, [հայատառ թրքերէն], Հալէպ, Գոլէճ Մաթպասը, 1931:
Սուրհահայ Տարեցոյց, 1924, Ա. Տարի, պատր.՝ Մ. Աճէմեան, Մ. Սիսեռեան, Ե. Ոսկերիչեան, Գահիրէ, Տպ. Զ. Պէրպէրեան, 1924:
Սուրհահայ Տարեցոյց. Բ. Տարի, պատր.՝ Մ. Աճէմեան, Մ. Սիսեռեան, Ե. Ոսկերիչեան, Գահիրէ, Տպ. Հալէպ, Տպ. Արաքս, 1925:
Տեղեկագիր Հալէպի Հայկ. Որբանոցի, [վերհրտ.], Հալէպ, Տպ. Ոսկետառ, 2012:
Տեղեկագիր Եւ Հաշուեկշիռ Գաղթ. Խնամատարութեան Կեդր. Յանձնախումբի. 1929 Դեկտ. - 1932 Մեպտ., Հալէպ, 1932:
Վարդան Եպս. Տէմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց, Ա. Հատոր*, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 1980:
Հ. Եփրեմ Տէր Ղազարեան, *Յուշամատեան՝ Հալէպի Միսիթարեան Վարժարանի 50-ամեակ (1936-1986)*, Վենետիկ, 1988:
Գրիգոր Տունկեան, *Նիւթեր Լաթաքիոյ Եւ Շրջակայքի Հայ Ազգաբնակչութեան Պատմութեան*, Հալէպ, 1983:
Վարդի Քէշիշեան, *Հալէպի Հայկական Գաղթօճախի Հասարակական-Մշակութային Կազմակերպութիւնները (1846-1915)*, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 2001:
Վարդի Քէշիշեան, *Յուշամատեան ՀԲԸՄի Սարեան Ակադեմիայի Յիսնամեակի*, 2007:
Վարդի Քէշիշեան, *Յուշամատեան Հայ Աւետարանական Էմմանուէլ Մայր Եկեղեցւոյ*, Հալէպ, Տպ. Ոսկետառ, 2015:

Վեր. Եղիա Քասունի, *Լուսաշաւիղ. Պատմութեան Հայ Աւետարանական Շարժման 1846-1946*, Պէյրութ, 1947:
Անի Փիշենկճեան, *Յուշամատեան Սուրիահայ Օգնութեան Խաչի 1919-2009*, Հալէպ, Տպ. Արեւելք, 2010:
Անի Փիշենկճեան, *Սուրիոյ Հայ Համայնքի Պատմութիւնը 1946-1970 թթ.*, Երեւան, ՀՀ ԳԱ Հրատ., մամուլի տակ:
Armenian Communities of the Mediterranean: Musa Dagh--Dort Yol--Kessab, Richard Hovannisian (ed.), Mazda Publishers, Costa Mesa, California, 2016.
Pere Pierre Atamian, *Histoire de la Communauté Arménienne Catholique de Damas (1763-1963)*, Beyrouth, 1964:
Centennial Book of Aintab Seminary 1860 - Aleppo College for Girls 1960, Beirut.
Thomas Greenshields, "The Settelment of Armenian Refugees in Syria and Lebanon (1915-1939)", (Ph.D. Dissertation, Univerity of Durham), 1979.
R.G. Hovhannisian, "The Ebb and Flow of the Armenian Minority in the Arab Middle East", *Middle East Journal*, 28(1), 1974, 19-32.
Raymond Kevorkian, Lévon Nordiguian, Vahé Tachjian (eds.), *Les Arméniens 1917-1939: La Quête d'un Refuge*, Presses De l'Université Saint-Joseph, Beyrouth, 2007.
F. Macler, *Les Arméniens en Syrie et en Palestine*, Marseille, 1919:
Nicola Migliorino, *(Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-Cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis*, New York, Berghahn Books, 2008.
Avedis Sanjian, *The Armenian Communities in Syria under Ottoman Dominion*, Cambridge, Massachusets, Harvard University Press, 1965.
Vahram Shemmassian, *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History, 1919-1939*, Beirut, Haigazian University Press, 2015:
Vahé Tachjian, *Daily Life in the Abyss: Genocide Diaries, 1915-1918*, Berghahn Books, NY/London, 2017.
Vahé Tachdjian, *La France en Cilicie et en Haute-Mésopotamie: Aux Confins de la Turquie, de la Syrie et de l'Irak, 1919-1933*, 2004.
Taline Ter-Minassian, *Colporteurs du Komintern, l'Union Soviétique et les Minorités au Moyen-Orient, Paris,* 1997:

سركيس بورنزسيان, *ارمن دمشق*, منشورات الهيئة العامة السورية للكتاب, دمشق, 2016.
ارشاك بولاديان, *صفحات من تاريخ العلاقات الارمنية العربية*, الشارقة, 2004.
نورا اريسيان, *غوائل الأرمن في الفكر السوري*, 2002.
نورا اريسيان, *أصداء الإبادة الأرمنية في الصحافة السورية 1877-1930*, *2005*.
نورا اريسيان, *النواب الأرمن في المجالس النيابية السورية 1928-2011*, 2010.
ثورة الحلبيين على الوالي خورشيد باشا العثماني (1819-1820). يوميات المطران ابراهام كوبيليان, حلب, 2008.
وجيه الخيمي, "الارمن في الاقليم السوري" اطروحة جامعية, جامعة دمشق, 1958-1959.
فارطان ديرونيان, *ذاكرة أرمنية: صور من مخيم لاجئي حلب, 1922-1936*, مطابع جامعة القديس يوسف, بيروت, 2010.
محمد كرد علي, *خطط الشام*, دمشق.

«Սուրիոյ Հայերը» Գիտաժողովը Աւարտեց Իր Աշխատանքները



Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի կազմակերպած «Սուրիոյ Հայերը» գիտաժողովը յաջողութեամբ աւարտեց իր աշխատանքները:

Արդարեւ, Կիրակի՝ 24 Մայիս 2015ի երեկոյեան պաշտօնական բացման հանդիսութիւնը եւ յաջորդող երաժշտական խտասալիկի շնորհանդէսը, Երկուշաբթի՝ 25 Մայիսէն Չորեքշաբթի՝ 27 Մայիս երկարող գիտաժողովի նիստերը, կլոր սեղանը, գիրքի շնորհանդէսը եւ կից ցուցահանդէսը՝ Հայկազեան Համալսարանին կողմէ հրամցուած գիտական-մշակութային տօնահանդէսի վերածուեցան:

Կիրակի, 24 Մայիս 2015ի երեկոյեան պաշտօնական հանդիսութեան բացումը կատարեց Կեդրոնի տնօրէն Դոկտ. Անդրանիկ Տագէսեան: Օրուան հիւր դասախօսն էր Պոստոնի Համալսարանէն, փրոֆեսոր Սիմոն Փայասլեան: Ընթերցուեցաւ Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժնի Տնօրէն Դոկտ. Ռազմիկ Փանոսեանի ողջոյնի գիրը: Հանդիսութիւնը աւարտեցաւ Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր.-Դոկտ. Փօլ Հայտօսթեանի փակման խօսքով:

Պաշտօնական բացման հանդիսութեան յաջորդեց հալէպահայ յօրինող Շողակ Աբարդեան-Սելիմեանի երաժշտական խտասալիկին շնորհանդէսը՝ հեղինակուհիին եւ երաժշտախումբի հրապարակային ելոյթով:

Թէ՛ բացման հանդիսութիւնը եւ թէ՛ խտասալիկի շնորհանդէսը շողարձակեցին ջերմ մթնոլորտ մը ու ներկաները պարուրեցին Հալէպի եւ ընդհանրապէս Սուրիոյ ժողովուրդին կրած տառապանքներուն հանդէպ առաւել ողոքող տրամադրութիւններով:

Երկուշաբթի, 25 Մայիսի առաւօտեան ժամը 8.30ին սկիզբ առին գիտաժողովի նիստերը: Կայացան ութ նիստեր, որոնց ընթացքին եղան 33 զեկոյցներ՝ փորձագէտներէ ու մասնագէտներէ, որոնք եկած էին Ճափոնէն, Մ. Նահանգներէն, Ֆրանսայէն, Գերմանիայէն, Հայաստանի Հանրապետութենէն, Հալէպէն, Քեսապէն եւ Պէյրութէն:

Ի տարբերութիւն Մայիս 2014ի գիտաժողովին, այս գիտաժողովը աւելի հարուստ էր ընդհանուր առմամբ: Զեկոյցները թիւով աւելի՛ էին, նիւթերը՝ աւելի ընդգրկուն եւ կը վերաբերէին սուրիահայութեան զանազան ոլորտներուն: Այդուհանդերձ կային բնագաւառներ որոնց չանդրադարձան զեկուցումները: Չիրականացաւ նաեւ այնթապցի, հալէպահայ Գալէմքեարեաններու պղնձագործութեան նուիրուած դասախօսութիւնը, կամքէ անկախ պատճառներով:

Զեկոյցները կը զանազանուէին թէ՛ մեթոտոլոժիով եւ թէ՛ յառաջացման եղանակով: Անոնցմէ ոմանք դաշտային հետազօտութեան, ուրիշներ բանասիրական ուսումնասիրութեան, կամ արխիւային պրպտումներու եւ կամ փաստաթուղթերու վերլուծութեան վրայ հիմնուած էին:

Ազատ, անմիջական, երկար եւ խորունկ քննարկումներու եւ վերլուծումներու ընդմէջէն լուսարձակի տակ առնուեցան սփիւռքահայութեան կեանքին մէջ սուրիահայութեան խաղացած պատմական դերն եւ ունեցած տեղը: Ընդհանրական արժեւորում կատարուեցաւ սուրիահայութեան նշանակութեան՝ հայ իրականութեան մէջ առհասարակ եւ հայրենիքի դերակատարութեան:

Գիտաժողովի ընթացքին անդրադարձ եղաւ հաստատութենական թէ անձնական արխիւներու առնչութեամբ անհրաժեշտ աշխատանքներ տանելու հարցին, նիւթերը՝ արաբ գիտական միտքին հասանելի դարձնելուն, սուրիահայ կեանքի այլ երեսակներուն եւն.:



Գիտաժողովի ամբողջ տեւողութեան զեկուցաբերներուն կողքին ներկայ եղան Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշն. Շահան Արք. Սարգիսեան, Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան եւ Դամասկոսի Հայոց Առաքելական Թեմի Առաջնորդ Գերշն. Արմաշ Եպս. Նալպանտեան: Ներկայ եղան նաեւ մեծաթիւ ունկնդիրներ, ինչ որ կ'արտացոլացնէ նման գիտաժողովներու հանդէպ յառաջացած հետաքրքրութիւնը, որ սկսած է գիտական հետաքրքրութեան վերածուիլ մանաւանդ երիտասարդ համալսարանականներու եւ համալսարանաւարտներու մօտ: Ակնկալելի է, որ յառաջիկային լիբանահայ համալսարանաւարտներ զեկոյցներ ներկայացնեն, խտացնելով շարքերը Միջին Արեւելքի մէջ հայկական նիւթերով հետաքրքրուող ուսումնասէր արհեստավարժ մասնագէտներու եւ փորձագէտներու:



Գիտաժողովը մէկտեղում մը եղաւ սուրիաբնակ, նախկին սուրիահայ եւ ընդհանրապէս սուրիահայութեամբ եւ Սփիւռքի ուսումնասիրութեամբ զբաղող փորձագէտներու, հետազօտողներու, մտաւորականներու եւ հետաքրքրուողներու, ուր շաղախուեցան նոր մտածումներ, հաստատուեցան նոր ծանօթութիւններ եւ յարաբերութիւններ, որոնք վստահ ենք պիտի ծառայեն սփիւռքագիտութեան զարգացման:

Լիբանահայութենէն ետք, սուրիահայութեան եւ յառաջիկային Յորդանանի ու Իրաքի հայութեան վրայ բեւեռուող այս լուսարձակները անուղղակիօրէն կը մղեն առնչուող հայութիւնը որ պատմութիւնը, դէպքերն ու զարգացումները շրջանի համապատկերով, Միջին Արեւելքի անդրսահմանային ելակէտերէ դիտէ եւ ընկալէ:

Ճիշտ է որ այս գիտաժողովը չէր միտեր վերլուծել Սուրիոյ եւ սուրիահայութեան ներկայ տագնապը, այդուհանդերձ - սուրիահայ անցեալի վերլուծումներու լոյսին տակ յառաջացած յստակատեսութեամբ - ներկաներէն իւրաքանչիւրը անձամբ՝ բնական մղումով եւ ինքնաբերաբար, խորաչափեց սուրիահայութեան ներկան եւ կատարեց ապագայի մտորումներ:

Բարերար Տիար Երջօ Սամուէլեանի նուիրատուութեամբ կեանքի կոչուած Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը շնորհակալ է Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժնին, որ նիւթական կարեւոր աջակցութեամբ մը գնահատեց գիտաժողովը: Կեդրոնը շնորհակալութեան խօսք ունի նաեւ Տէյւիտ եւ Թինա Սիկըլ ամոլին՝ իրենց նիւթական օժանդակութեան համար: Կեդրոնը շնորհակալ է բոլոր մասնակիցներուն՝ զեկուցողներուն, որոնք իրենց ելոյթներով հարստացուցին գիտաժողովը, ինչպէս նաեւ՝ ունկնդիր հասարակութեան, որ յատուկ մթնոլորտ յառաջացուց եւ աւելի ծաւալուն դարձուց գիտաժողովին անմիջական արդիւնքները:



Երկուշաբթի, 25 Մայիս 2015ի երեկոյեան ժամը 7.30ին, տեղի ունեցաւ «Սուրիոյ Տագնապը Եւ Սուրիահայութիւնը» նիւթով կլոր սեղան: Մասնակցութեամբ Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշն. Շահան Արք. Սարգիսեանի, Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանի եւ Դամասկոսի Հայոց Առաքելական Թեմի Առաջնորդ Գերշն. Արմաշ Եպս. Նալպանտեանի կայացած այս հանդիպումը յատուկ ուշադրութեան առարկան դարձաւ Լիբանան հաստատուած սուրիահայերու, սրտցաւ լիբանահայերու եւ պատկան պատասխանատուներու: Վեր.-Դոկտ. Հայտօսթեանի վարած այս հանդիպումը եղաւ բացառիկ՝ իր անմիջականութեամբ, թափանցիկութեամբ, մարդկային երեսակներու եւ ապրումներու իր դրսեւորումներով, արծարծուած նիւթերու խտութեամբ եւ խորութեամբ:

Գիտաժողովի նիստերու երկրորդ օրուան աւարտէն ետք, երեկոյեան ժամը 6.30ին տեղի ունեցաւ նախկին հալէպահայ Կիրակոս Գույումճեանի գիրքերուն շնորհանդէսը: Գիտաժողովի աւարտին Հայ Աւետարանական «Արմիս» երգչախումբը հրամցուց «Մթնշաղէն Դէպի Արշալոյս» երաժշտական համերգը, մասնակցութեամբ մեցo սոփրանo Աննա Մայիլեանի (դաշնակի ընկ.՝ Էլէն Կիրակոսեան), խմբավարութեամբ Վեր. Ներսէս Պալապանեանի (դաշնակի ընկ.՝ Սեւան Պալապանեան):

Գիտաժողովի ամբողջ տեւողութեան ցուցադրուած մնացին Սուրիա տպուած, Սուրիոյ եւ հայութեան վերաբերեալ եւ հայ գրականութենէն թարգմանուած շուրջ 30 գիրքեր, որոնք ճաշակ մը կու տային սուրիահայ թարգմանական ճիգին: Ցուցադրուած էին նաեւ լուսանկարիչ Վարդան Տէրունեանի Հալէպի գաղթակայանին վերաբերող 1920-30ականներու նկարներ, ինչպէս եւ Հալէպի եւ Այնթապի հայ պղնձագործներու ստեղծագործութիւններէն նմուշներ:

Հայկազեան Համալսարանի
Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն